Հարգելի՛ ընթերցող.

ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտը, չհետապնդելով որևէ եկամուտ, իր կայքերում ներկայացնելով հայագիտական հրատարակություններ, նպատակ ունի հանրությանն ավելի հասանելի դարձնել այդ ուսումնասիրությունները:

Մենք շնորհակալություն ենք հայտնում հայագիտական աշխատասիրությունների հեղինակներին, հրատարակիչներին:

*Մեր կոնտակտները՝*

*Պաշտոնական կայք՝* **http://www.armin.am**

*էլ. փոստ՝* **info@armin.am**

ՌՈՒՍ ԴԱՍԱԿԱՆՆԵՐԻ ԳՐԱԴԱՐԱՆ

БИБЛИОТЕКА РУССКОЙ КЛАССИКИ

АЛЕКСАНДР ГЕРЦЕН

# Былое и думы

ПЕРЕВОД

АРУТЮНА ФЕЛЕКЯНА

ИЗДАТЕЛЬСТВО «СОВЕТАКАН ГРОХ», ЕРЕВАН — 1981

ԱԼԵՔՍԱՆԴՐ ԳԵՐՑԵՆ

# Անցյալը եվ մտքեր

ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆԸ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՖԵԼԵՔՅԱՆԻ

«ՍՈՎԵՏԱԿԱՆ ԳՐՈՂ» ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ, ԵՐԵՎԱՆ — 1981

ԳԵՐՑԵՆ, Ա. Ի.

Գ 541 Եղելություն և խոհեր, գիրք առաջին /Ռուս. թարգմ. Հ. Ֆելեքյան.— Եր.։ Սովետ. գրող, 1981, 496 էջ։

Ա. Ի. Գերցենի «Եղելություն և խոհերը» համաշխարհային մեծուարային գրականության գլուխգործոցներից է, 19-րդ դարի 30—60-ական թթ. ռուսական ու եվրոպական սոցիալ-քաղաքական կյանքի հանրագիտարանը։ Այստեղ յուրովի միաձուլվել և ինքնատիպ ամբողջություն են կազմել ժանրային ամենատարբեր ձևերը՝ հուշագրություն և պատմական խրոնիկա, օրագիր և նամակ, գեղարվեստական ակնարկ և հրապարակախոսություն, դիմանկար և նովելատիպ արձակ։ «Եղելություն և խոհերը» թարգմանված է աշխարհի բազմաթիվ լեզուներով։ Հայերեն առաջին անգամ հրատարակվել է 1952—53 թթ.՝ Հ. Թուրշյանի թարգմանությամբ։ Այժմ ներկայացվում է այդ երկի նոր թարգմանությունը։

4702010100 (79)
705 (01) 81 81 «Տ» Գ1.
ԳՄԴ 84. 01

© «Սովետական գրող» հրատարակչություն, թարգմանված է հայերեն, 1981

Ն. Գ. ՕԳԱՐՅՈՎԻՆ*

Այս գրքում ամենից շատ խոսվում է երկու անձանց մասին: Մեկն արդեն չկա.* դու դեռ կաս, և դրա համար էլ, բարեկա՛մս, գիրքն այս իրավամբ պատկանում է քեզ:

Իսկանդեր
1-ը հուլիսի, 1860։
Eagle's Nest. Bournemouth

Բարեկամներիցս շատերն ինձ խորհուրդ էին տալիս ձեռնարկել «Եղելություն և խոհերի» ամբողջական հրատարակությունը, և դա դժվար չէ, համենայն դեպս՝ առաջին երկու մասերի համար։ Նրանք ասում են, սակայն, թե «Պոլյարնայա զվեզդայում» զետեղված կտորները հատվածական են, միասնականությունից զուրկ, ընդհատվում են պատահականորեն, երբեմն առաջ են վազում, երբեմն էլ՝ ետ մնում։ Ես զգում եմ, որ դա ճշմարիտ է, բայց շտկել չեմ կարող։ Լրացումներ անելը, գլուխները ժամանակագրական կարգի բերելը դժվար բան չէ, սակայն ամեն ինչ վերաձուլել, d'un jet[1], ես հանձն չեմ առնում։

«Եղելություն և խոհերը» միանգամից չի գրվել. որոշ գլուխների գրության միջև տարիներ են ընկած։ Դրա համար էլ ամեն ինչի վրա մնացել է իր ժամանակի ու տարբեր տրամադրությունների երանգը. ես չէի ուզի ջնջել այդ երանգը։

Սա ոչ այնքան հուշագրություն է, որքան՝ խոստովանանք, որի շուրջ, որի առիթով հավաքվել են աստ ու անդ տպավորված հիշողություններ եղելությունից, աստ ու անդ սևեռված մտքեր՝ խոհերից: Այնուամենայնիվ, այդ կից շինությունների, վերնակառույցների, թևաշենքերի ամբողջու-

[1] միանգամից (ֆրանս.):

թյան մեջ միասնություն կա, համենայն դեպս, ինձ այդպես է թվում։

Այս գրառումներն առաջին փորձը չեն։ Մոտ քսանհինգ տարեկան էի, երբ սկսեցի հուշերի պես ինչ-որ բան գրել։ Այսպես է եղել. Վյատկայից տեղափոխված լինելով Վլադիմիր՝ ես շատ էի ձանձրանում։ Կանգառը Մոսկվայի մոտ գրգռում, վիրավորում էր ինձ. ես այն մարդու վիճակում էի, որը վերջին կայարանում նստել-մնացել է առանց ձիերի։

Ըստ էության դա երևի «ամենամաքուր, ամենալրջմիտ շրջանն էր վերջացող պատանեկության»[1]։ Ձանձրույթս էլ էր այն ժամանակ լուսավոր ու խնդուն, ինչպես երեխաներն են ձանձրանում տոնի կամ ծննդյան տարելիցի նախօրեին։ Ամեն օր գալիս էին նամակներ՝ գրված մանր տառերով*, ես հպարտ ու երջանիկ էի այդ նամակներով, ես դրանցով էի մեծանում։ Այնուամենայնիվ, բաժանումը տանջում էր, և ես չգիտեի ինչով զբաղվեի, որ ավելի շուտ պրծներ եղած-չեղածը շուտ ամսվա այդ նավիտենությունը... Ես անսացի ինձ տրված խորհրդին և ազատ ժամանակ սկսեցի գրի առնել հիշողություններս Կրուտիցիից ու Վյատկայից։ Երեք տետրակ գրված էր... Հետո անցյալը սուզվեց ներկայի լույսի մեջ։

1840 թվականին Բելինսկին կարդաց դրանք, հավանեց և երկու տետրակ (առաջինն ու երրորդը) տպեց «Ժամանակակիցներին զապիսկիում», մնացածը հիմա էլ պիտի ինչ-որ տեղ ընկած լինի մեր մոսկովյան տանը, եթե կպչան չի դարձել։

Անցավ տասնինգ տարի[2], «ես ապրում էի Լոնդոնի խուլ ծայրամասերից մեկում, Պրիմրոզ-Հիլի մոտերքում, հեռավությամբ, մշուշով ու իմ կամքով ողջ աշխարհից կտրված։

Լոնդոնում ես ոչ մի մտերիմ չունեի։ Կային մարդիկ, որոնց ես էի հարգում, որոնք հարգում էին ինձ, բայց մտերիմ ոչ ոք չկար։ Բոլոր մոտեցողները, հեռացողները, հանդիպողները տարված էին միմիայն ընդհանուր շահերով, հանուր մարդկության գործերով, համենայն դեպս՝ ողջ մի ժողովրդի գործերով. նրանց ծանոթությունները, այսպես ասած՝ անանձնական էին։ Ամիսներ էին անցնում՝ և ոչ մի բառ այն մասին, ինչից ուզում էիր խոսել։

... Այնինչ այդ ժամանակ ես նոր-նոր սկսել էի ուշքի գալ, ապաքինվել մի շարք սոսկալի իրադարձություններից, դժբախտություններից, սխալմունքներից հետո։ Կյանքիս վերջին տարիների պատմությունը գնալով ավելի պարզ էր պատկերանում ինձ, և ես սարսափով տեսնում էի, որ ոչ մի մարդ, ինձնից բացի, չգիտե այդ պատմությունը, և որ իմ մահով կմեռնի իսկությունը։

Ես վճռեցի գրել. բայց մի հիշողությունն արթնացնում էր հարյուրավոր ուրիշ հիշողություններ. հարություն էր առնում ողջ անցած-գնացածը, կես-մոռացվածը՝ մատաղ հասակի երազանքները, պատանեկան հույսերը, երիտասարդության անվեհերությունը, բանտն ու աքսորը,— այդ վաղահաս դժբախտությունները, որոնք ոչ մի դառնություն չեն թողել հոգուս մեջ, անցել են գարնան ամպրոպի նման, իրենց հարվածներով թարմացնելով ու ամրացնելով ջահել կյանքս։

Այս անգամ ես ժամանակ շահելու համար չէի գրում. շտապելու հարկ չկար։

Երբ ձեռնարկում էի նոր աշխատանքս, ես բոլորովին չէի հիշում «Մի երիտասարդի հիշատակարանի»* գոյությունը, և մի անգամ այն պատահմամբ աչքիս ընկավ British Museum'e[1]-ում, ռուսական հանդեսները թերթելիս։ Պատվիրեցի արտագրել ու նորից կարդացի։ Տարօրինակ էր այդ «Հիշատակարանի» հարուցած զգացումը. ես այնպես շոշափելի տեսա, թե ինչքա՜ն եմ ծերացել այդ տասնհինգ տարվա մեջ, որ առաջին պահ ցնցվեցի։ Ես այն ժամանակ դեռևս խաղ էի անում կյանքի և բուն երջանկության հետ, երբեմն թե անապատ էր այդ երջանկությունը։ «Մի երիտասարդի հիշատակարանի» տրամադրությունն այնքան վարդագույն էր, որ ես ոչինչ չէի կարող վերցնել դրանից. այն պատկանում է ջահել օրերին և պիտի մնա՝ ինչպես որ կա։ Նրա վա-

---

1 Տե՛ս «Բանտ և աքսոր» (ծանոթ.՝ Ա. Ի. Գերցենի)։

2 «Բանտ և աքսորի» նախաբանը՝ գրված 1854 թվականի մայիսին (ծանոթ.՝ Ա. Ի. Գերցենի)։



1 Բրիտանական թանգարան (անգլ.)։

ղորդյան լույսը չի պատշաճում մայրամուտի իմ գրվածքին։ Ճշմարիտ շատ բան կա այնտեղ, բայց շատ են նաև խեն-թությունները. ավելին, նրա վրա, ինձ համար ակներև, մնացել է Հայների հետքը, որին ես հափշտակությամբ կարդում էի Վյատկայում։ «Եղելություն և խոհերի» վրա երևում են կյանքի հետքերը. ուրիշ ոչ մի հետք չես տեսնի։

Աշխատությունս դանդաղ էր հառաջանում... Շատ ժամանակ է հարկավոր, որպեսզի որոշ եղելություններ պարզվեն ու ջինջ խոհ դառնան, անսփոփելի, թախծոտ, բայց և հասկացվելուց հետո խաղաղեցնող մի խոհ։ Առանց դրա կարող է լինել անկեղծություն, բայց ճշմարտություն լինել չի կարող։

Փորձերիցս մի քանիսը չհաջողվեցին. ես մի կողմ դրի դրանք։ Վերջապես, այս ամռանը, պատանեկության ընկերներիցս մեկի* համար իմ վերջին տետրակները վերընթերցելիս, ես ինքս ճանաչեցի ծանոթ դիմագծեր և գրելը դադարեցրի... Աշխատությունս ավարտվա՛ծ էր։

Շատ հնարավոր է, որ ես չափից դուրս գերագնահատել եմ այն, և որ հազիվ նշմարվող սույն ակնարկներում սոսկ միայն ինձ համար է այդքան շատ բան պահված, թերևս ես շատ ավելին եմ կարդում, քան գրված է. ասվածը մեջս երազներ է հարուցանում, դառնում է հիերոգլիֆ, որի բանալին ես ունեմ։ Թերևս միայն ես եմ լսում, թե ինչպես այդ տողերի տակ բաբախում են հոգիները... Թերևս... բայց դրանից գիրքն այս չի դադարում ինձ համար թանկ լինելուց։ Նա երկար ժամանակ փոխարինել է և՛ մարդկանց, և՛ կրուստներիս։ Եկավ նաև նրանի՛ց բաժանվելու ժամանակը։

Անձնական ամեն բան արագ տերևաթափ է լինում. պիտի հնազանդվել այդ աղքատացմանը։ Դա հուսահատություն չէ, ծերություն չէ, ոչ էլ սառնություն ու անտարբերություն. ալեհեր պատանեկություն է դա, ապաքինման կերպերից մեկը կամ, ավելի ճիշտ, ապաքինման բուն ընթացքը։ Որոշ վերքերի մարդկայնորեն դիմանալ կարելի է միայն ա՛յդ հանապարհով։

Վանականի մեջ, ինչ տարիքի էլ որ նա լինի, մշտապես առկա է և՛ զառամյալը, և՛ պարմանին։ Թաղելով ամենայն անձնականը, նա վերադառնում է պատանեկություն։ Նա



թեթևանում է, դառնում անհոգ... երբեմն չափից դուրս անհոգ... Արդարև, մարդ երբեմն ունայն, որբ է զգում իրեն՝ անանձնական համընդհանրությունների, պատմության տարերքների ու դրանց մակերեսով ամպի ստվերների պես սահող ապագայի պատկերների արանքում։ Բայց ի՞նչ փույթ։ Մարդիկ կուզենային պահպանել ամեն բան՝ և՛ վարդը, և՛ ձյունը, նրանք կուզենային, որ խաղողի հասուն ողկույզների կողքին ծփային մայիսյան ծաղիկները։ Վանականները տրտունջքի պահերին ապավինում էին աղոթքին։ Մենք աղոթք չունենք. մենք ունենք աշխատանք։ Աշխատանքը— ահա՛ մեր աղոթքը։ Գուցե թե նույնը լինի պտուղը մեկի և մյուսի, բայց սույն պահին ես ա՛յդ չեմ ասում։

Այո՛, կյանքում առկա է շրջադարձ ռիթմի, մեղեդու կրկնողության տենչը. ո՞վ չգիտե, թե ինչպես ծերությունը մոտ է մանկությանը։ Լա՛վ նայեցեք, և դուք կտեսնեք, որ իր ծաղկե ու փշե պսակներով, իր օրոցքներով ու դագաղներով եռուն կյանքի երկու ափերին հաճախ կրկնվում են գլխավորի մեջ իրար նման ժամանակներ։ Ինչ որ պատանեկությունը դեռևս չուներ՝ արդեն կորունչալ է. ինչ որ պատանեկությունը երազել է առանց անձնական շահի՝ հայտնվում է ամպերի միջից ու հրացոլքի՝ առավել լուսավոր, առավել հանգիստ և նույնպես զերծ անձնական շահից։

... Երբ ես խորհում եմ, որ մենք երկուսով այժմ, հիսունին մոտ, կանգնած ենք ռուսական ազատ խոսքի անդրանիկ դազգահի առաջ, ինձ թվում է, թե մեր մանկական Գրյուտլին* Վորոբյովյան լեռներում եղել է ոչ թե երեսունհերեք, այլ շատ-շատ՝ երեք տարի առաջ։

Կյա՜նք... Մարդկային կյանքեր, ժողովուրդներ, հեղափոխություններ, ամենասիրված գլուխներ եկել, փոխվել ու անցել են Վորոբյովյան լեռների և Պրիմրոզ-Հիլի արանքում։ Իրադարձությունների անողոք հողմը արդեն համարյա սրբել է նրանց հետքը։ Չորս կողմն ամեն ինչ փոխվել է. թեմզան է հոսում Մոսկվա գետի տեղ, և օտար մի ցեղ է մեր շուրջը... և մեզ համար այլևս ճամփա չկա դեպի հայրենիք... 13 և 14 տարեկան երկու տղաների երազանքն է միայն փրկվել-մնացել։

Թող, ուրեմն, «Եղելություն և խոհերը» փակեն անձ-

նական կյանքի հաշիվը և նրա խորագիրը դառնան։ Մնացյալ խոսքերը՝ հանուն գործի, մնացյալ ուժերը՝ հանուն պայքարի։

*Մեր դաշինքը մնաց միշտ այդպիսին*...
*Մենակ կանցնենք դարձյալ մենք մեր ախուր ուղին՝*
*Վսեմ ճշմարտություն անդուլ ավետելով,*
*Եվ իզձեր ու մարդիկ քող անցնեն մեր մատով*[1]։

[1] Չափածո թարգմանությունները վերցված են «Ելելություն և խոհերի» 1952 թվականի հայերեն հրատարակությունից։

# ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

## ՄԱՆԿԱՍԵՆՅԱԿ ԵՎ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

(1812—1834)

*Երբ մենք մտովին, հուշերի ճամփով*
*Քայլում ենք դեպի կյանքը մեր անցյալ,*
*Հառնում են նախկին հուրգեր հոգեթով,*
*Նույն հուրն է վառվում մեր հոգում դարձյալ,*
*Ապրում ենք մենք նույն վշտով ու խինդով,*
*Համակում է մեզ նույն տագնապը խոր,*
*Փոթորկվում է մեր սիրտը նույն տենդով,*
*Եվ հառաչեր ենք ուզում նորից նոր։*

Ն. Օգարյով (*«Հումոր»*)

### ԳԼՈՒԽ I

Իմ դայակը և La grande armée[1]. Մոսկվայի ճրդենը։ Հայրս՝ Նապոլեոնի մոտ։ Գեներալ Իլովայսկին։ Ուղևորություն ֆրանսիական գերիների հետ։ Հայրենասիրություն։ Կ. Կարեն։ Կայսածիկ ընդհանուր կառավարումը։ Խաժանություն։ Սենատոր։

...— *Վերա Արտամոնովնա**, *մի անգամ էլ պատմեցեք, էլի՛, թե ինչպես ֆրանսիացիները Մոսկվա եկան,— ասում էի ես, ճմլկոտելով մահճակալիս մեջ՝ շրջափարված քաթանով, որ դուրս չընկնեմ, և փաթաթվելով մկդական վերմակով։*

— *Է՛, ի՛նչ մի պատմելու բան է որ, արդեն քանի՛ անգամ լսել եք, համ էլ քնելու ժամն է, ավելի լավ է քնեք, որ վաղը շուտ վեր կենաք,— սովորաբար պատասխանում էր պառավը, որը նույնքան ուզում էր կրկնել իր սիրած պատմությունը, ինչքան որ ես էի ուզում լսել։*

— *Մի՛ քիչ պատմեցեք, էլի՛, գե՛հ, ո՞նց իմացաք, ինչի՞ց սկսվեց։*

[1] *մեծ բանակը* (Ֆրանս.)։

— Էդպես էլ սկսվեց։ Դե, ձեր հայրը*, գիտեք, էլի՛, ամեն բան քնացնում է. պատրաստվում, հա պատրաստվում էր ու լա՛վ էլ պատրաստվեց։ Բոլորն ասում էին՝ գնալու ժամանակն է, սպասելու բան չկա, քաղաքում համարյա մարդ չի մնացել։ Չէ՛, էլի Պավել Իվանովիչի հետ խոսակցում են, թե ոնց միասին ճամփա ընկնեն, մեկ սա պատրաստ չէ, մեկ՝ մյուսը։ Վերջիվերջո մենք իրերը կապոտեցինք, ու կառքն էլ պատրաստ էր. պարոնները հացի նստեցին, մեկ էլ մեր խոհարարը գույնը-մույնը գցած ճաշատուն է մտնում ու զեկուցում. «Թշնամին Դրագոմիլյան ուղեկալ մտավ»։ Բոլորիս լեղին ջուր կտրեց։ Խաչի զորությո՛ւնը մեզ պահապան։ Ամեն ինչ իրար խառնվեց։ Մենք դեռ իրարանցման մեջ էինք, դեռ ախ ու վախ էինք անում՝ տեսնենք փողոցով դրագուններ[1] են անցնում՝ էսպես սաղավարտով ու ձիու պոչերն էլ տակից կախ։ Բոլոր ուղեկալները փակեցին, ու ձեր հայրիկն էդպես փորձանքի մեջ ընկավ, դուք էլ հետը։ Ծծմայր Դարյան էն ժամանակ դեռ կուրծք էր տալիս ձեզ. էնպես լղար-մղար էիք, էնպես թո՛ւյլ։

Եվ ես հպարտությամբ ժպտում էի՝ գոհ, որ մասնակցել եմ պատերազմին։

— Սկզբում դեռ մի՛ կերպ յոլա էինք գնում, այսինքն՝ առաջին օրերը։ Էսպես, պատահում էր՝ ներս էին մտնում երկու-երեք զինվոր ու ձեռքերով հասկացնում՝ խմելու բան չկա՞։ Մի-մի թաս հրամցնում ենք նրանց, ինչպես կարգն է, նրանք թողնում-գնում են ու դեռ պատվի էլ են առնում։ Մեկ էլ, հենց որ հրդեհներն սկսվեցին ու գնալով շատացան՝ էնպիսի՛ մի խառնակություն ընկավ, սկսվեց ալան-թալանն ու սարսափը։ Մենք էն ժամանակ ապրում էինք իշխանատներ* մոտ՝ բակի շինության մեջ. տունը վառվել էր։ Պավել Իվանովիչն[2] էլ ասաց. «Գնանք ինձ մոտ. իմ տունը քարից է, բակի խորքում, հիմնավոր պատեր ունի»։ Մենք էլ

[1] դրագուն — ցարական և արտասահմանյան մի քանի երկրների բանակներում որոշ հեծյալ զորամասերի զինվոր կամ սպա։

[2] Գոլոխվաստով— փոքր մորաքրոջս ամուսինը (ծանոթ.՝ Ա. Ի. Գերցենի)։



գնացինք՝ պարոններն էլ, ծառաներս էլ, բոլորս միասին. էդտեղ ջոկողություն չկար։ Դուրս ենք գալիս Տվերյան բուլվար՝ արդեն ծառերն էլ են վառվում։ Վերջապես, հասանք Գոլոխվաստովների տունը, իսկ սա ո՞նց է բոցով բռնվել, բոլոր պատուհաններից կրակ է թափվում։ Պավել Իվանովիչը քար կտրեց՝ աչքերին չի հավատում։ Տան հետևն էլ մի մեծ այգի կար, մենք էնտեղ վազեցինք, էստեղ, մտածում ենք, ողջ կմնանք. տխուր-տրտում նստեցինք նստարաններին, մեկ էլ որտեղից-որտեղ թունդ հարբած զինվորների մի խումբ լույս ընկավ, մեկը վրա քշեց Պավել Իվանովիչին, որ ճամփորդական քուրքը հանի. ծերուկը չի տալիս, զինվորը թուրը քաշեց ու ա՛ռ հա նրա երեսին. էդպես էլ մինչև մեռնելը սպին մնաց։ Մյուսները վրա տվին մեզ, մի զինվոր ձեզ խլեց ծծմոր ձեռքից, բարուրը քանդեց՝ հո մեջը փող կամ ադամանդ չկա՞, տեսավ բան չկա, կատաղածը դիտմամբ պատառ-պատառ արեց բարուրը ու շպրտեց։ Հիշո՞ւմ եք մեր Պլատոնին, որին զինվորության տվին. նա շատ էր սիրում խմել, էդ օրն էլ քեֆը լափ-լավ էր, թուրը կապած ման էր գալիս։ Թշնամու գալուց մի օր առաջ կոմս Ռոստոպչինը* զինանոցում բոլորին ամեն տեսակ զենք էր բաժանում, նա էլ իր համար մի թուր էր ճարել։ Իրիկվա դեմ դրագունը ձի հեծած բակ մտավ։ Ախոռի մոտ. մի ձի էր կապած, դրագունն ուզում էր. ձին տանել, մեկ էլ Պլատոնը թափով վրա նետվեց ու սանձափոկից կախ ընկնելով՝ ասաց. «Ձին մերն է, քեզ չե՞մ տա»։ Դրագունը վախեցրեց նրան ատրճանակով, բայց, երևում է, մեջը փամփուշտ չկար։ Աղան ինքը տեսավ ու գոռաց. «Ձին թո՛ղ, քո գործը չի»։ Բայց ո՞ւմ ես ասում։ Պլատոնը թուրը քաշեց ու էնպես հասցրեց դրագունի գլխին, որ սա օրորվեց, Պլատոնը՝ տո՛ւր թե կտաս։ Դե՛, մտածում ենք, հիմի որ՝ մեր մահը եկավ. հենց որ նրա ընկերները տեսնեն՝ տեղնուտեղը վերջներս կտան։ Իսկ Պլատոնը, հենց որ դրագունը գետին գլորվեց, ոտքերից բռնած քարշ տվեց շաղախատաշտի մեջ գցեց խեղճին, իսկ սա դեռ ողջ էր։ Նրա ձին կանգնել է, տեղից չի շարժվում, ոտքերով հողն է ծեծում, ասես հասկանում է։ Մերոնք ձիուն փակեցին ախոռի մեջ, էնտեղ էլ, երևի, վառվեց։ Մենք բոլորովս արագ հեռացանք բակից, հրդեհն էլ

գնալով ավելի զարհուրելի էր դառնում. տանջված ու սոված՝ հրդեհից փրկված ինչ-որ տուն մտանք ու փուլեցինք հանգստանալու։ Մի ժամ էլ չէր անցել՝ մերոնք փողոցից գոռում են. «Դո՜ւրս եկեք, դո՜ւրս եկեք, կրա՜կը, կրա՜կը»։ Էդ ժամանակ ես բիլիարդի վրայից քաթանի մի կտոր պոկեցի ու ձեզ մեջը փաթաթեցի, որ գիշերվա քամուց պաշտպանեմ։ Էդպես հասանք Տվերյան հրապարակ։ Էստեղ ֆրանսիացիները հանգցնում էին հրդեհը, քանի որ նրանց մեծավորն ապրում էր նահանգապետի տանը։ Մենք էնպես, հենց փողոցում էլ նստոտեցինք, չորս կողմը պահակներ են ման գալիս, ուրիշ մարդիկ, ձիավորներ։ Իսկ դուք էլ գոռում-ճղում եք ձեզ, ծծմոր կաթը քաշվել էր, ոչ մեկի մոտ մի կտոր հաց չկար։ Էդ ժամանակ մեզ հետ էր Նատալյա Կոնստանտինովնան*, դե՛, տղամարդ աղջիկ էր. տեսավ, որ անկյունում զինվորներն ինչ-որ բան են ուտում, ձեզ առավ և ուղիղ մոտները գնաց. ցույց է տալիս, իբրև թե՝ տեսնեք, պատիկը մանժե[1]։ Նրանք սկզբում թարս նայեցին աղջկան, ու հետո էլ ասում են՝ «Ալե, ալե[2]», իսկ նա սկսեց հայհոյել նրանց՝ տո՛ անիծվածներ, տո՛ ձեր էսը, տո՛ ձեր էնը։ Զինվորները բան չհասկացան, բայց փոթկացրին ու ջրի մեջ թրջած հաց տվին ձեզ համար, բոքոնի մի կտոր կոզ էլ նրան տվին։ Առավոտ կանուխ մի սպա մոտեցավ ու բոլոր տղամարդկանց հավաքեց, ձեր հայրիկին էլ հետները, մենակ կանանց թողեց ու մեկ էլ վիրավոր Պավել Իվանովիչին, և նրանց տարավ շրջակայքի տները հանգցնելու. էդպես էլ մինչև իրիկուն մենակ մնացինք. նստել ենք ու հա՜ լաց ենք լինում։ Իրիկվա մութին գալիս է աղան, հետն էլ՝ մի սպա...

Թույլ տվեք փոխարինեմ պատմվին և ինքս շարունակեմ նրա պատմությունը։ Քանդմայորի[3] իր պարտականությունը վերջացնելուց հետո հայրս Ատրաատնի վանքի մոտ հանդիպեց իտալական մի հնծեղավաշտի. մոտեցավ հրամանատարին և իտալերեն պատմեց, թե ինչ վիճակի մեջ է իր ընտանիքը։ Իտալացին, լսելով la sua dolce favella[4], խոստացավ խոսել հերցոգ Տրևիզիացու* հետ և նախապես ժամապահ կարգել՝ կանխելու համար Գոլոխվաստովի այգում կատարվածի նման վայրենի տեսարանները։ Այդպիսի հրաման տալով՝ նա սպային ուղարկեց հորս հետ։ Լսելով, որ ամբողջ խումբը երկրորդ օրն է բան չի կերել, սպան բոլորին տարավ քանդված մի խանութ. ծաղկաթեյն ու լիքանանյան սուրճը թափված էին հատակին՝ մեծ քանակով արմավի, չորացրած թուզի ու նուշի հետ։ Մերոնք գրպանները լիքը լցրեցին. քաղցրավենիքի պակաս չկար։ Ժամապահը շատ օգտակար եղավ. զինվորների խմբերը մի տասն անգամ անհանգստացրին Տվերյան հրապարակի անկյունում, քոչվայրում տեղավորված կանանց ու ծառաների դժբախտ կույտին, բայց նրա հրամանով իսկույն հեռացան։

Մորտյեն հիշեց, որ ինքը Փարիզից ճանաչում էր հորս և զեկուցեց Նապոլեոնին։ Նապոլեոնը կարգադրեց հաջորդ առավոտյան նրան ներկայացնել իրեն։ Բրոնզե կոճակներով որսորդական կապույտ հին կիսաֆրակը հագին, առանց կեղծամի, մի քանի օր չմաքրված ճտքավոր կոշիկներով, կեղտոտ սպիտակեղենով ու անթրաշ մորուքով՝ հայրս, պատշաճության կանոնների և խստագույն վարվելակարգի այդ երկրպագուն, Կրեմլի պալատի գահադահլիճ ներկայացավ ֆրանսիացոց կայսեր կանչով։

Նրանց խոսակցությունը, որի մասին ես շատ անգամներ եմ լսել, բավական ճշմարիտ վերարտադրված է բարոն Ֆենի պատմության և Միխայլովսկի-Դանիլևսկու պատմության մեջ*։

Սովորական ֆրազներից, կցկտուր խոսքերից ու լակոնիկ դիտողություններից հետո,— որոնց շուրջ երեսունհինգ տարի խոր իմաստ էին վերագրում՝ քանի դեռ գլխի չէին ընկել, որ դրանց իմաստը շատ հաճախ սնամեջ էր,— Նապոլեոնը հրդեհի համար հայհոյեց Ռոստոպչինին, ասում էր, թե դա բարբարոսություն է, ինչպես միշտ՝ հավաստում էր իր անսասան սերը խաղաղության հանդեպ, ջանում համոզել, թե իր կռիվը Անգլիայի հետ է և ոչ թե Ռուսաստանի, պաշտպանում էր, որ պահակություն է կարգել Կրթատան ու Ուսպենսկի տաճարի առջև, բողոքում էր Ալեքսանդրից, ասում, որ նա

[1] ուտել (ֆրանս. manger-ից)։
[2] հեռացիր (ֆրանս. aller-ից)։
[3] հրդեհաշեջի։
[4] Մայրենի քաղցր բարբառը (իտալ.)։

վատ շրջապատ ունի, որ իր խաղաղ հակումները հայտնի չեն կայսեր։

Հայրս ասաց, որ հաշտություն առաջարկելը ավելի շուտ հաղթողի գործն է։

— Ես ինչ որ կարող էի՝ արեցի, մարդ ուղարկեցի Կուտուզովի մոտ, նա ոչ մի բանակցության մեջ չի ուզում մտնել և իմ առաջարկությունները չի հայտնում թագավորին։ Պատերազմ են ուզում՝ մեղքն ի՞մը չէ, նրանք կստանա՛ն այդ պատերազմը։

Այդ ողջ կատակերգությունից հետո հայրս Մոսկվայից դուրս գալու անցաթուղթ խնդրեց նրանից։

— Ես կարգադրել եմ ոչ մեկին անցաթուղթ չտալ։ Ինչո՞ւ եք գնում, ինչի՞ց եք վախենում։ Ես կարգադրել եմ բաց անել շուկաները։

Ֆրանսիացիների կայսրն այդ պահին կարծես մոռացել էր, որ բացված շուկաներից բացի՝ չէր խանգարի ունենալ ծածկված տանիք և որ Տվերյան հրապարակում հակառակորդի զինվորների մեջ ապրելը շատ էլ հաճելի բան չէ։

Հայրս ակնարկեց նրան այս մասին։ Նապոլեոնը մտածեց ու հանկարծ հարցրեց.

— Հանձն կառնե՞ք ինձանից նամակ տանել կայսեր։ Այս պայմանով ես կկարգադրեմ անցաթուղթ տալ ձեզ ու բոլոր ձերոնց։

— Ես կընդունեի ձերդ մեծության առաջարկը,— ասաց հայրս,— բայց դժվարանում եմ երաշխիք տալ

— Ազնիվ խոսք տալի՞ս եք, որ բոլոր միջոցները գործադրեք նամակն անձամբ տեղ հասցնելու։

— Je m'engage sur mon honneur, Sire[1].

— Այդքանը բավակա՛ն է։ Ես մարդ կուղարկեմ ձեր ետևից։ Արդյոք որևէ բանի կարիք չունե՞ք։

— Ընտանիքիս համար մի ծածկ լինի, քանի դեռ այստեղ եմ, ուրիշ ոչինչ։

— Հերցոգ Տրևիզիացին կանի՝ ինչ որ կարող է։

Մորտյեն իրոք սենյակ տվեց գեներալ-նահանգապետի շենքում* և կարգադրեց ուտելիքով սահմանել մեզ, նրա սեղանապետը նույնիսկ գինի ուղարկեց։ Այդպես անցավ մի քանի օր, որից հետո առավոտյան ժամը չորսին Մորտյեն հորս ետևից համհարզ ուղարկեց՝ նրան կրեմլ տանելու։

Հրդեհն այդ օրերին հասել էր ահավոր չափերի. շիկացած օդը, ծխից թափանցիկությունը կորցրած, տապի պատճառով անտանելի էր դարձել։ Նապոլեոնը հագնված էր և մտահոգ, ջղայնացած քայլում էր սենյակում, նա սկսում էր զգալ, որ իր խանձված դափնիները շուտով կցրտահարվեն և որ այստեղից պրծնելը հանաք բան չէ, ինչպես Եգիպտոսում էր։ Պատերազմի ծրագիրը անհեթեթ էր, դա գիտեին բոլորը, բացի Նապոլեոնից,— Նեյն ու Նարբոնը, Բերտյեն* և սովորական սպաները. բոլոր առարկություններին նա պատասխանում էր մոգական մի բառով՝ «Մոսկվա՛»։ Մոսկվայում գլխի ընկավ նաև ինքը։

Երբ հայրս ներս մտավ, Նապոլեոնը սեղանից վերցրեց կնքված նամակը, մեկնեց նրան ու հրաժեշտ տալով՝ ասաց. «Ես վստահում եմ ձեր ազնիվ խոսքին»։ Մարրին գրված էր. „A mon frère l'Empereur Alexandre"[1].

Հորս տրված անցագիրը մինչև հիմա էլ մնում է. այն ստորագրել է հերցոգ Տրևիզիացին, վավերացրել է Մոսկվայի ոստիկանապետ Լեսեպսը*։

Մի քանի կողմնակի մարդիկ, իմանալով անցաթղթի մասին, միացան մեզ, խնդրելով հորս՝ իրենց էլ վերցնել մեզ, որպես ծառաներ կամ ազգականներ։ Հիվանդ ծերունուն, մորս* և ստնտուիս գծակառք տվին, մյուսները գնում էին ոտքով։ Մի քանի հեծյալ ուլաններ[2] ուղեկցում էին մեզ մինչև ռուսական վերջապահ զորամասը, որի երևալուն պես՝ բարի ճանապարհ մաղթեցին մեզ ու ետ դարձան։ Մի բոպե անց կազակները շրջապատեցին տարօրինակ եկվորներին ու տարան վերջապահ զորքի գլխավոր կայան։ Այստեղ հրամանատարություն էին անում Վինցենգերոդեն և Իլովայսկի 4-րդը։

Վինցենգերոդեն, իմանալով նամակի մասին, հորս ասաց,

---

1 Երդվում եմ պատվով, տե՛ր (ֆրանս.)։



1 Իմ եղբայր կայսր Ալեքսանդրին (ֆրանս.)։

2 ուլան— նիզակակիր թեթև հեծելազորային։



2 — Նոթագրություն և խմբագիր

որ երկու գրագունների հետ նրան անհապաղ կուղարկի Պետերբուրգ՝ թագավորի մոտ։

— Ձերո՞նց ինչ անենք,— հարցրեց կազակային գեներալ Իլովայսկին,— այստեղ մնալն անհնար է, այստեղ նրանք կրակի տակ կլինեն, համ էլ մոտ օրերս կարող է լուրջ ընդհարում տեղի ունենալ։

Հայրս խնդրեց, եթե հնարավոր է, մեզ հասցնել իր յարոսլավլյան կալվածքը, հետո էլ ասելով, թե մոտը ոչ մի կոպեկ չկա։

— Հաշիվը հետո կանենք,— ասաց Իլովայսկին,— հոգ մի արեք, ես խոսք եմ տալիս, որ նրանց կուղարկեմ։

Հորս զինվորական սուրհանդակակառքով տարան այն ժամանակվա ջախապատ ճանապարհով։ Մեզ համար Իլովայսկին մի հին սայլ ճարեց և ֆրանսիական գերիների խմբի հետ, կազակների պաշտպանության ներքո, ուղարկեց մինչև մոտակա քաղաքը։ Նա մեզ ձիավարձ տվեց մինչև Յարոսլավլ և առհասարակ արեց ինչ որ կարող էր՝ պատերազմի ժամանակվա իրարանցման ու տագնապի մեջ։

Այսպիսին է եղել իմ առաջին ճանապարհորդությունը Ռուսաստանում։ Երկրորդը՝ առանց ֆրանսիացի ուլանների էր, առանց ուրալյան կազակների ու ռազմագերիների. ես մենակ էի, կողքիս նստած էր հարբած ժանդարմը։

Հորս թերին ուղիղ Արակչեևի* մոտ և պահեցին նրա տանը։ Կոմսը հարցրեց նամակից, հայրս ասաց, որ փնքը ազնիվ խոսք է տվել՝ նամակը անձամբ հանձնելու Կոմսը խստացավ հարցում անել թագավորին և հաջորդ օրը գրավոր հայտնեց, թե թագավորն իրեն հանձնարարել է վերցնել նամակը՝ անհապաղ ներկայացնելու համար։ Նամակն ստանալու մասին նա ստացական տվեց (դա էլ է պահպանվում)։ Մի ամսի չափ հորս բանտարկված մնաց Արակչեևի տանը։ Ոչ մեկին չէին թողնում նրա մոտ։ Միայն Ս. Ս. Շիշկովն* էր գալիս՝ թագավորի հրամանով հարցուփորձ անելու հրդեհից, հակառակորդի ներխուժման և նապոլեոնի հետ ունեցած տեսակցության մանրամասնություններից. հայրս Պետերբուրգ եկած առաջին ականատեսն էր։ Վերջապես Արակչեևը հորս հայտնեց, որ կայսրը հրամայել է ազատ արձակել նրան՝ չմեղադրելով



հանցավորին։ Հրամանատարությունից անցագիր վերցնելու համար, որը ներելի էր՝ իր կացության ծայրահեղության պատճառով։ Ազատելով նրան, Արակչեևը հրամայեց անհապաղ հեռանալ Պետերբուրգից, չտեսնվելով ոչ որի հետ, չացի մեծ եղբորից, որը հրաժեշտի թույլտվություն ուներ։

Գիշերվա կողմը հասնելով յարոսլավլյան փոքրիկ մի գյուղ, հայրս մեզ գտավ գյուղացու խրճիթում (այդ գյուղում կալվածատիրական տուն չկար). ես քնած էի պատուհանի տակի նստարանին, պատուհանը վատ էր փակված, ձյունը, ճեղքից թափանցելով, ծածկել էր նստարանի մի մասն ու պատուհանի գոգը։

Ամենքը խոր հուզմունքի մեջ էին, հատկապես մայրս։ Հորս գալուց մի քանի օր առաջ, առավոտյան, տանուտերը և մի քանի սպասավոր աճապարանքով մտան այն խրճիթը, որտեղ մայրս էր ապրում, ձեռքերով ինչ-որ նշաններ անելով և պահանջելով, որ նա հետևի իրենց։ Մայրս այդ ժամանակ ռուսերեն ոչ մի բառ չգիտեր, նա սոսկ հասկացավ, որ խոսքը Պավել Իվանովիչին է վերաբերում։ Նա չգիտեր ի՞նչ է պատահել, մտքովն անցնում է, թե նրան սպանել են կամ ուզում են սպանել, և հետո էլ՝ իրեն սպանել։ Նա ինձ գիրկն առավ ու կիսամեռ, ամբողջ մարմնով դողալով գնաց տանուտերի հետևից։ Գոլոխվաստովն զբաղեցնում էր մի ուրիշ խրճիթ. նրանք նեղս են մտնում. ծերուկն իրոք որ մեռած-ընկած էր սեղանի մոտ, ուր ուզեցել էր սափրվել։ Կաթվածի ուժեղ հարվածը ակնթարթորեն կտրել էր նրա կյանքի թելը։

Կարելի է պատկերացնել մորս վիճակը (այն ժամանակ նա տասնյոթ տարեկան էր). մորուքավոր, շոտ տված քուրքերը հագին, լրիվ անծանոթ լեզվով խոսող կիսավայրենի այդ մարդկանց շրջապատում, նեղ, ծխախեղդ խրճիթում, այն էլ 1812 թվականի սաստիկ ցուրտ նոյեմբեր ամսին։ Նրա միակ նեցուկը Գոլոխվաստովն էր. նրա մահից հետո մայրս գիշեր-ցերեկ լաց էր լինում։ Իսկ այդ վայրենիները սրտանց, ջերմագին, իրենց ողջ պարզամտությամբ խղճում էին նրան, և տանուտերը մի քանի անգամ որդուն քաղաք ուղարկեց՝

նրա համար չամիչ, շաքարահաց, խնձոր ու օղաբլիթ բերելու։

Տասնհինգ տարի անց տանուտերը դեռ կենդանի էր և երբեմն գալիս էր Մոսկվա՝ ճերմակած ու ճաղատ։ Մայրս նրան հյուրասիրում էր սովորաբար թեյով և նրա հետ վերհիշում 1812 թվականի ձմեռը՝ թե ինչպես ինքը վախենում էր նրանից և թե ինչպես իրենք, մեկը մյուսին չհասկանալով, պավել Իվանովիչի թաղման հոգսն էին քաշում։ Ծերուկը դեռ շարունակում էր, այն ժամանակվա պես, մորս Լուիզայի փոխարեն Յուլիզա Իվանովնա ասել և պատմում էր, թե ինչպես ես իսկի չէի վախենում իր մորուքից ու հաճույքով գիրկն էի գնում։

Յարոսլավլի նահանգից մենք տեղափոխվեցինք Տվերի նահանգ և, վերջապես, մի տարուց հետո եկանք Մոսկվա։ Այդ միջոցին Շվեդիայից վերադարձավ հորեղբայրս*, որը Վեստֆալիայում դեսպանորդ էր եղել և հետո ինչ-որ պատճառով Բերնադոտի* մոտ էր գնացել։ Նա բնակվեց մեզ հետ նույն տանը։

Ես դեռ երազի պես հիշում եմ հրդեհի հետքերը, որ մնացել էին մինչև 20-ական թվականների սկիզբը. վառված մեծ տներ՝ առանց փեղկերի, առանց տանիքի, փլված պատ՝ր, ցանկապատված ամայի տեղեր՝ վառարանների ու ծխնելույզների մնացորդներով։

Մոսկվայի հրդեհի, Բորոդինոյի ճակատամարտի, Բերեզինայի, Փարիզի գրավման պատմությունները եղել են իմ օրորոցային երգերը, իմ մանկական հեքիաթները, իմ «Իլիականն» ու «Ոդիսականը»։ Մայրս և մեր սպասավորները, հայրս ու Վերա Արտամոնովնան շարունակ անդրադառնում էին այդ ահեղ ժամանակվա, որը հենց վերջերս այդքան մոտիկից ու այդպես դաժան հարվածել էր նրանց։ Հետո վերադարձող գեներալներն ու սպաները սկսեցին Մոսկվա այցելել։ Իզմայլովյան գնդի հորս հին պաշտոնակիցները, այժմ՝ հենց նոր ավարտված արյունահեղ կռվի փառքով պսակված մասնակիցները, հաճախ էին լինում մեր տանը։ Նրանք հանգստանում էին իրենց գործերից ու քաջած նեղություններից՝ պատմելով դրանք։ Պետերբուրգյան շրջանի իրո՛ք ամենափայլուն ժամանակն էր դա. ուժի գիտակցումը նոր կենսահյութ էր ներարկում, գործերն ու հոգսերը, թվում էր, հետաձգված էին վաղվան, լի օրերի, այժմ ուզում էին վայելել հաղթանակի բերկրանքը։



Այստեղ պատերազմի մասին ես շատ ավելին լսեցի, քան Վերա Արտամոնովնայից։ Ես շատ էի սիրում կոմս Միլորադովիչի* պատմությունները, նա խոսում էր չափազանց կենդանի, կտրուկ դիմախաղով, բարձր ծիծաղելով, և շատ անգամ եմ ես քուն մտել այդ պատմությունները լսելով՝ նրա ետևի բազմոցին։

Այդպիսի իրադրության մեջ ես, իհարկե, մոլի հայրենասեր էի և պատրաստվում էի գունդ մտնել. բայց ազգայնության բացառիկ զգացմունքը երբեք լավ բանի չի հասցնում։ Ահա ինչ բերեց գլխիս այդ զգացմունքը. ի թիվս այլոց, մեր տանը լինում էր կոմս Կենսոնան*— ֆրանսիացի վտարանդին և ռուսական ծառայության գեներալ-լեյտենանտը։ Լինելով մոլի ռոյալիստ[1] նա մասնակցել էր այն հայտնի տոնահանդեսին, որի ժամանակ թագավորական օպրիչնիկները կոխկռտել էին ժողովրդական գլխարկանշանը և որտեղ Մարիա-Անտուանետան բաժակ էր բարձրացրել հանուն հեղափոխության կործանման։ Կոմս Կենսոնան՝ նիհար, վայելչակազմ, բարձրահասակ ու ալեհեր ծերուկը, բարեկրթության և նրբաբազեղ վարվեցողության մի տիպար էր։ Փարիզում նրան սպասում էր պերի[2] կոչումը, նա արդեն գնացել էր շնորհավորելու Լյուդովիկոս XVIII-ին՝ շահած տեղի առթիվ և Ռուսաստան էր վերադարձել կալվածքը վաճառելու համար։ Հակառակի պես, ի դժբախտություն իմ, ռուսական բոլոր բանակների գեներալներից այդ ամենաքաղաքավարին իմ ներկայությամբ սկսեց խոսել պատերազմից։

— Ուրեմն դուք մեր դե՞մ էիք կռվում,— միամտորեն հարց տվի ես նրան։

— Non, mon petit, non, j'étais dans l'armée russe[3].

— Ո՞նց թե,— ասացի ես,— դուք ֆրանսիացի եք և մե՞ր բանակում եք եղել, չի՞ կարող պատահել։

1 ռոյալիստ (ֆրանս. roi— թագավոր բառից) — թագավորական իշխանության կողմնակից։

2 պեր— բարձրագույն ազնվական տիտղոս Ֆրանսիայում։

3 Ո՛չ, աղավնյակս, ո՛չ, ես ռուսական բանակում էի (ֆրանս.)։

Հայրս սաստող հայացք նետեց վրաս և կոծկեց խոսակցությունը։ Կոմսը հերոսաբար շտկեց վիճակը. դառնալով Հորս, նա ասաց, որ «այսպիսի ճայրենասիրական զգացմունքներն իրեն դուր են գալիս»։ Հորս դրանք դուր չեկան, և նա հախից ելավ կոմսի գնալուց հետո։ «Ա՜յ թե ինչ է նշանակում խելքին զոռ տալով խոսել այն բաների մասին, որոնք ոչ հասկանում ես, ոչ էլ կարող ես հասկանալ, կոմսը իր թագավորին հավատարիմ լինելուց էր ծառայում մեր կայսեր»։ Իրոք, ես դա չէի հասկանում։

Հայրս շուրջ տասներկու տարի անց էր կացրել արտասահմանում, նրա եղբայրը՝ ավելի երկար. նրանք ուզում էին արտասահմանյան ձևով մի կյանք ստեղծել՝ առանց մեծ ծախսերի և պահպանելով ռուսական բոլոր հարմարությունները։ Կյանքը հունի մեջ չէր ընկնում. արդյոք իրե՞նք չէին կարողանում գործը կարգավորել, թե՞ կալվածատիրական խառնվածքն օտարերկրյա սովորույթներից ավելի զորեղ էր։ Տնտեսությունն ընդհանուր էր, կալվածքը՝ չբաժանված, ծառաների բազմությունն զբաղեցնում էր ստորին հարկը, անկարգության բոլոր պայմաններն, ուրեմն, առկա էին։

Ինձ պահում էին երկու դայակ, մեկը՝ ռուս, մյուսը՝ գերմանուհի։ Վերա Արտամոնովնան ու m-me Պրովոն շատ բարի կանայք էին, բայց ինձ համար ձանձրալի էր նայել, թե ինչպես նրանք ամբողջ օրը գուլպա էին գործում ու փըշոտ խոսքեր փոխանակում, դրա համար էլ ամեն մի հարմար առիթով ծլկում էի Սենատորի (նախկին դեսպանորդի) հարկաբաժինը, միակ բարեկամիս՝ նրա սենեկապետ Կալոյի մոտ։

Ավելի բարի, ավելի հեզահամբույր, ավելի մեղմ մարդու ես քիչ եմ հանդիպել։ Ռուսաստանում մեն-մենակ մնացած, բոլոր յուրայիններից կտրված, ռուսերենի մեջ շատ անվարժ՝ նա կանացի քնքշանքով կապված էր ինձ հետ։ Ես ժամերով մնում էի նրա սենյակում, գլուխը տանում, տանջում էի նրան, չարաճճիություն անում. այդ բոլորը նա տանում էր բարեհոգի ժպիտով, սովարաթղթից ամեն տեսակի հրաշալիքներ էր սարքում ինձ համար, փայտից զանազան զիզի-բիզի բաներ էր տաշում (փոխարենը ես էլ ինչպե՞ս



էի սիրում նրան)։ Երեկոները նա գրադարանից ինձ համար պատկերազարդ գրքեր էր բերում վերև՝ Գմելինի և Պալասի ճանապարհորդությունը*, մնկ էլ՝ հաստ մի գիրք՝ «Աշխարհի մարդիկ»*, որն այնքան շատ էր դուրս եկել և այնքան թերթեցի՝ մինչև որ կաշեպատ կազմն անգամ չդիմացավ։ Կալոն ժամերով ցույց էր տալիս ինձ նույն պատկերները, հազար անգամ կրկնելով նույն բացատրությունները։

Իմ ծննդյան տոնի և անվանակոչությանս նախօրեին Կալոն փակվում էր իր սենյակում, այնտեղից մուրճի և այլ գործիքների զանազան ձայներ էին լսվում։ Հաճախ նա, ամեն անգամ բանալիով կողպելով իր դուռը, արագ քայլքով անցնում էր միջանցքով՝ մեկ սոսնձի ամանը ձեռքին, մեկ թղթով փաթաթած ինչ-որ առարկաներ տանելով։ Պատկերացրեք, ուրեմն՝ ո՞նց էի ուզում իմանալ, թե ի՞նչ է պատրաստում նա. ծառա տղաներին ուղարկում էի գաղտնիքն իմանալու, բայց Կալոն աչալուրջ էր։ Մի անգամ սանդուղքին փոքրիկ մի անցք բաց արինք ուղիղ նրա սենյակի վրա, բայց դա էլ չօգնեց, երևում էին պատուհանի վերին մասն ու Ֆրիդրիխ II-ի* հսկա քթով, մեծ աստղով ու սմքած ուրուրի տեսքով դիմանկարը։ Մի երկու օր առաջ աղմուկը դադարում էր, բացվում էր սենյակի դուռը. այնտեղ ամեն ինչ նույնն էր, միայն դես ու դեն թափված էին ոսկեզօծ ու գույնզգույն թղթի կտորտանքներ։ Ես հետաքրքրությունից վառվում, կարմրում էի, բայց Կալոն, շատ լուրջ տեսքով, չէր շոշափում այդ նուրբ խնդիրը։

Տառապելով սպասում էի մինչև հանդիսավոր օրը. առավոտյան ժամը հինգին արդեն արթուն էի լինում ու մտածում Կալոյի պատրաստությունների մասին. ժամը ութին մոտ գալիս էր նա ինքը՝ սպիտակ փողկապով, սպիտակ բաճկոնով, կապույտ ֆրակով ու դատարկ ձեռքերով։ «Ե՞րբ կվերջանա այս բոլորը, տեսնես հո չի՞ փչացրել»։ Ժամանակն էլ էր գնում, սովորական նվերներն էլ էին գալիս, Ելիզավետա Ալեքսեևնա Գոլոխվաստովայի սպասավորն էլ էր արդեն եկել՝ շքեղ խաղալիքը անձեռոցիկի մեջ կապած, Սենատորն էլ արդեն ինչ-որ հրաշալիքներ էր բերել, բայց սյուրպրիզի անհանգիստ սպասումը պղտորում էր խնդությունս։

Հանկարծ, ասես պատահմամբ, ճաշից կամ թեյից հետո, դայակս ինձ ասում էր.

— Մի բոպեով ներքև իջեք, մեկը ձեզ է հարցնում։

«Է՞դ է որ կա»,— մտածում էի ես ու ցած իջնում՝ ձեռքերիս հենված սահելով աստիճանի բազրիքով։ Դահլիճի դռներն աղմուկով բացվում են, հնչում է երաժշտությունը, հանկարծակի բոցավառվում է իմ անվան ու ազգանվան սկզբնատառերով ցուցանակը, ծառա տղաները, թուրքի շորեր հագած, կոնֆետներ են մատուցում ինձ, հետո տիկնիկային կատակերգություն կամ տնային հրավառություն է տեղի ունենում։ Կալոն քրտինքի մեջ կորել է, ձեռ ու ոտ է ընկել, ամեն ինչ ինքն է շարժման մեջ դնում և խանդավառված է ինձնից ոչ պակաս։

Ի՞նչ նվեր կարող է համեմատվել այդպիսի տոնախմբության հետ՝ անհայտությունից ծնված խոնջա՞նք, բազմաթիվ մոմե՞ր, փայլուն թիթեղազարդե՞ր ու վառոդի հո՞տ,— ես երբեք էլ իրը չեմ սիրել, սեփականության և ընչաքաղցության պալարը* ոչ մի տարիքում իմ մեջ զարգացած չի եղել։ Մի բան էր, գուցե, պակասում՝ ընկերը, բայց ես ողջ մանկությունս անց եմ կացրել մենակության մեջ և ուրեմն այդ կողմից երես առած չէի։

Հայրս իրենց երկուսից մեծ մի եղբայր էլ ուներ*, որից ինքն ու Սենատորը բացահայտորեն հեռացել էին։ Չնայած դրան՝ նրանք կալվածքը միասին էին կառավարում, այսինքն՝ քանդում էին համատեղ։ Խռովության պայմաններում եռակի կառավարման անկարգությունը դառնում էր աղաղակող.

1 Հայրս ինձնից տասը տարով մեծ մի որդի էլ ուներ։ Ես միջտ էլ սիրել եմ նրան, բայց նա չէր կարող ինձ ընկեր լինել։ Տասներկուսից մինչև երեսուն տարեկանը նա անց է կացրել վիրաբույժների դանակի տակ։ Արտակարգ արիությամբ տարած մի շարք խոշտանգումներից հետո, որոնք նրա ողջ կյանքը վերածեցին իրար հաջորդող վիրահատությունների մի շարանի, բժիշկները հիվանդությունը համարեցին անբուժելի։ Առողջությունը քայքայված էր, հանգամանքներն ու բնավորությունը նպաստել էին նրա կյանքի վերջնական խորտակմանը։ Այն էջերը, ուր պատմում եմ նրա մենակյաց, տխուր կյանքի մասին, ես բաց եմ թողել, չեմ ուզում տպագրել առանց իր համաձայնության (ծանոթ.՝ Ա. Ի. Գերցենի)։



Երկու եղբայրներն ամեն բան անում էին ի հեճուկս մեծի, սա էլ նրանց էր հակառակվում։ Տանուտերերն ու գյուղացիները գլուխները կորցրել էին. մեկը սայլ է ուզում, մյուսը՝ խոտ, երրորդը՝ ցախ, ամեն մեկը հրամայում է, ամեն մեկն ուղարկում է իր հավատարմատարներին։ Ավագ եղբայրը տանուտեր է նշանակում՝ կրտսերները մի ամսից փոխում են նրան ինչ-որ փուչ մի պատրվակով և նշանակում մի ուրիշի, որին մեծ եղբայրը չի ընդունում։ Ու հետն էլ, սովորաբար՝ բամբասանքներ, խոսք տանել-բերել, լրտեսներ, հովանավորյալներ, և այդ ամենից տուժում էին խեղճ գյուղացիները, որոնք ոչ արդար դատ ու դատաստան էին գտնում, ոչ էլ պաշտպանություն, որոնց տարբեր կողմեր էին քաշքշում, ծանրաբեռնում էին կրկնակի աշխատանքով ու քմահաճ պահանջների խառնափնթորով։

Եղբայրների գժտության առաջին հետևանքը, որ հարված հասցրեց նրանց, եղավ այն, որ նրանք տանուլ տվին կոմս Դևիերների հետ ունեցած մեծ դատավեճը, չնայած իրավացի կողմն իրենք էին։ Ունենալով նույն նպատակը՝ նրանք երբեք չէին կարողանում համաձայնության գալ գործելակերպի հարցում։ Հակառակ կողմը, բնականաբար, օգտվեց դրանից։ Մեծ ու հիանալի կալվածքի կորստից բացի, սենատը եղբայրներից յուրաքանչյուրի նկատմամբ վճիռ կայացրեց՝ երեսուն հազարական ռուբլի թղթադրամ վճարել դատարանական ծախսերի ու վնասների դիմաց։ Այս դասը բաց արեց նրանց աչքերը, և նրանք որոշեցին բաժանվել։ Նախապատրաստական պարզաբանումները տևեցին շուրջ մի տարի, կալվածքը կիսվեց երեք բավական հավասար մասերի. թե որ մասը ում կընկնի՝ որոշելու էր վիճակահանությունը։ Սենատորն ու հայրս բանակցելու և հաշտվելու նպատակով գնացին եղբոր մոտ, որին մի քանի տարի է չէին տեսել, հետո լուր տարածվեց, թե նա մեզ մոտ է գալու՝ գործը վերջացնելու համար։ Մեծ եղբոր ժամանելու լուրը սարսափ ու անհանգստություն գցեց մեր տան մեջ։

Դա մեկն էր այն ինքնատիպ-այլանդակ էակներից, որոնք կարող էին գոյություն ունենալ միայն ինքնատիպ-այլանդակ ռուսական կյանքում։ Նա բնությունից օժտված մարդ էր և ամբողջ կյանքում հաճախ հանցագործության հասնող

անհեթեթություններ էր անում։ Բավական լավ կրթություն էր ստացել ֆրանսիական ձևով, շատ կարդացած էր և մինչև կյանքի վերջը ժամանակն անց էր կացնում ցոփության ու անմիտ պարապության մեջ։ Նա ծառայությունն սկսել էր նույնպես Իզմայլովյան գնդում, Պոտյոմկինի մոտ համհարզի պես մի բան էր եղել, ապա ծառայել էր ինչ-որ ներկայացուցչությունում և, Պետերբուրգ վերադառնալով՝ ավագ դատախազ կարգվել սինոդում։ Ոչ դիվանագիտական, ոչ էլ վանական միջավայրը չէր կարողացել զսպել նրա անսանձ բնավորությունը։ Վարդապետների հետ կռվելու համար նա հանվել էր պաշտոնից, գեներալ-նահանգապետի մոտ տեղի ունեցած հանդիսավոր ճաշկերույթի ժամանակ ինչ-որ պարոնի ապտակել ուզելո՞ւ, թե՞ հենց ապտակելու համար նրան արգելվել էր մուտքը Պետերբուրգ։ Մեկնել էր իր տամբովյան կալվածքը. այստեղ մուժիկները քիչ էր մնացել սպանեին նրան՝ կնամոլության ու վայրագության համար. նա իր կառապանին ու ձիերին էր պարտական իր կյանքով։

Դրանից հետո նա բնակություն էր հաստատել Մոսկվայում։ Բոլոր հարազատներից ու բոլոր օտարներից լքված՝ մեն-մենակ ապրում էր Տվերյան բուլվարի իր մեծ տանը, նեղում էր ծառաներին ու կողոպտում մուժիկներին։ Նա պահում էր մի մեծ գրադարան և ճորտատիրական ամբողջ մի հարեմ, թե՛ մեկը և թե՛ մյուսը փակի տակ էր դրել։ Ջունեալով որեէ զբաղմունք և քողարկելով պարզամտության հասնող ահավոր ինքնասիրությունը՝ դատարկ զվարճության համար հավաքում էր ավելորդ իրեր և ձեռնարկում է՛լ ավելի ավելորդ դատավեճեր, որոնք վարում էր կրքոտությամբ։ Ամատիների ջութակի* համար նրա հրահրած դատավարությունը երեսուն տարի տևեց ու վերջացավ նրանով, որ ի՛նքը շահեց ջութակը։ Արտակարգ ջանքեր գործադրելուց հետո նա իրենով արեց կից տների ընդհանուր պատը, որի տերը դառնալուց ոչինչ չէր շահում։ Պաշտոնաթող եղած ժամանակ նա, հետևելով թերթերին, իր նախկին պաշտոնակիցների առաջքաշմանը հավասարվելու համար գնում էր նրանց տրված շքանշաններից ու շարում սեղանին՝ իբրև



տխուր հիշեցում այն բանի, թե ինչերո՞վ-ինչերո՞վ կարող էր զարդարված լինել ինքը։

Եղբայրներն ու քույրերը վախենում էին նրանից և ոչ մի հարաբերություն չէին ունենում հետը, մեր ծառաները շրջանցում էին նրա տունը, որպեսզի նրան չհանդիպեն և տեսնելիս սփրթնում էին, կանայք սարսափում էին նրա լկտի հետապնդումներից, սպասավորներն աղոթում էին, որ նրան բաժին չընկնեն։

Եվ հենց այս ահավոր մարդը մեզ մոտ պիտի գար։ Ամբողջ տունը առավոտից անսովոր հուզմունքի մեջ էր։ Նախկինում ոչ մի անգամ չէի տեսել այդ առասպելական «եղբայր-ոսոխին», թեև ծնվել էի նրա տանը, որտեղ հայրս ապրում էր օտարությունից գալուց հետո։ Ես շատ էի ուզում նրան տեսնել ու հետն էլ վախենում էի, չգիտեմ ինչից, բայց շատ էի վախենում։

Նրանից մոտ երկու ժամ առաջ եկան հորս ավագ զարմիկը, երկու մոտիկ ծանոթներ և բարի, հաստլիկ ու նորաթուխ մի պաշտոնյա, որը վարում էր գործերը։ Բոլորը նստել էին սպասողական լուռ վիճակում, մեկ էլ ներս մտավ մատուցողը և մի տեսակ անբնական ձայնով զեկուցեց.

— Եղբայրը բարեհաճեց ժամանել։

— Ներս հրավիրիր,— ասաց Սենատորը նկատելի հուզմունքով, հայրս սկսեց քթախոտ քաշել, զարմիկը շտկեց փողկապը, պաշտոնյան խեղդվելով հազաց։ Ինձ հրամայեցին գնալ վերև. ես մնացի մյուս սենյակում՝ ամբողջ մարմնով դողալով։

Հանդարտ ու հանդիսավոր առաջ էր շարժվում «եղբայրը», Սենատորն ու հայրս ընդառաջ գնացին նրան։ Նա հետը բերում էր մի սրբապատկեր՝ երկու ձեռքով կրծքի առաջ բռնած, ինչպես անում են հարսանիքներին ու թաղումներին, և ծորուն ձայնով, մի քիչ քթի մեջ, եղբայրներին դիմեց հետևյալ խոսքերով.

— Այս սրբապատկերով մեր ծնողը իր մահից առաջ օրհնեց ինձ, պատվիրելով ինձ և հանգուցյալ եղբայր Պյոտրին՝ հոգ տանել ձեր մասին և իր փոխարեն հայրություն անել ձեզ... Թթե հանգուցյալ ծնողը մեր իմանար ձեր վարմունքը ավագ եղբոր հանդեպ...

— Էհ, mon cher frère[1],— նկատեց Հայրս իր սերտած անվրդով ձայնով,— դուք լավ էլ կատարեցիք ծնողի վերջին կամքը։ Ավելի լավ կլիներ մոռանայիք ձեզ ու մեզ համար էլ ծանր այդ հիշեցումները։

— Ո՞նց, ի՞նչ,— գոռաց բարեպաշտ եղբայրը,— դուք ինձ դրա՞ համար եք կանչել...,— և այնպես շպրտեց սրբապատկերը, որ արծաթե շրջանակը զրնգաց։ Էստեղ Սենատորն էլ գոռաց՝ ավելի ահավոր ձայնով։ Ես ինձ զգեցի վերին հարկը և հասցրեցի միայն տեսնել, որ պաշտոնյան ու զարմիկը, ինձնից ոչ պակաս վախեցած, ծլկեցին պատշգամբ։

Թե ի՞նչ և ինչպե՞ս եղավ՝ չեմ կարողանում պատմել. սարսափած մարդիկ կուչ եկան անկյուններում, ոչ ոք չէր հասկանում, թե ինչ է տեղի ունենում, ոչ Սենատորը, ոչ էլ Հայրս երբեք իմ ներկայությամբ չէին խոսում այդ տեսարանից։ Աղմուկը կամաց-կամաց հանդարտվեց, և կալվածքի բաժանը կատարվեց չեմ հիշում ա՞յդ, թե՞ հաջորդ օրը։

Հորս բաժին ընկավ Վասիլևսկոյեն, մերձմոսկովյան մեծ կալվածքը Ռուզայի գավառում։ Հաջորդ տարի մենք ամբողջ ամառն անցկացրինք այնտեղ. այդ ընթացքում Սենատորն իր համար տուն գնեց Արբատում. մենք մենակ վերադարձանք դատարկված ու անշունչ մեր մեծ բնակարանը։ Դրանից հետո շուտով Հայրս էլ տուն գնեց Ստարայա Կոնյուշեննայա փողոցում։

Սենատորի հետ գնաց-կորավ նախ Կալոն և ապա՝ մեր տան ողջ կենդանի շունը։ Միայն նա էր խանգարում, որ Հորս մաղձոտ բնավորությունը դառնար իշխող, հիմա Հայրս լրիվ ազատություն տվեց իրեն։ Նոր տունը տխուր տուն էր, հիշեցնում էր բանտ կամ հիվանդանոց. ներքևի հարկը կամարակապ էր, հաստ պատերը բերդի հրակնատի տեսք էին տալիս պատուհաններին. տան շուրջբոլորը անհարկի մեծության բակ էր։

Ըստ էության, զարմանք հարուցողն ավելի շուտ այն էր, թե ինչպե՞ս կարող էր Սենատորը մի հարկի տակ այդքան

[1] սիրելի եղբայր (ֆրանս.)։



երկար ապրել Հորս հետ, քան այն, որ նրանք բաժանվեցին։ Ես հազվադեպ եմ տեսել իրար ավելի հակապատկեր երկու մարդ, ինչպիսին նրանք էին։

Սենատորը բնույթով բարի և հաճույքներով տարվող մարդ էր։ Ողջ կյանքն անց էր կացրել ջահերով լուսավորված աշխարհում, պաշտոնական-դիվանագիտական և արքունի-ծառայական աշխարհում, չկռահելով, որ կա ուրիշ, ավելի լուրջ մի աշխարհ, թեպետև 1789-ից մինչև 1815 թվականի բոլոր իրադարձությունները ոչ միայն անցել էին նրա մոտով, այլև առնչվել էին նրան։ Կոմս Վորոնցովը* նրան ուղարկել էր լորդ Գրենվիլի* մոտ՝ իմանալու, թե ինչ է ձեռնարկում եգիպտական բանակը լքած գեներալ Բոնապարտը։ Նա Փարիզում էր Նապոլեոնի թագադրության ժամանակ։ 1811 թվականին Նապոլեոնը հրամայել էր բռնել ու բանտարկել նրան Կասելում, ուր դեսպան էր «ցար Երյոմայի* մոտ», ինչպես Հայրս էր արտահայտվում սրտնեղած պահերին։ Մի խոսքով՝ նա ներկա էր եղել վերջին ժամանակների բոլոր խոշոր իրադարձություններին, բայց մի տեսակ տարօրինակ ներկայությամբ, ո՛չ հարկ եղածին պես։

Լինելով Իզմայլովյան գնդի լեյբ-գվարդիայի կապիտան, նա գտնվում էր Լոնդոնի դեսպանությունում։ Պավելը, ցուցակների մեջ տեսնելով այդ՝ նրան հրամայեց անհապաղ գալ Պետերբուրգ։ Դիվանագետ-զինվորն առաջին իսկ նավով ճամփա ընկավ և ներկայացավ պահակախմբի հերթափոխին։

— Ուզում ես մնա՞լ Լոնդոնում,— խզված ձայնով հարցրեց Պավելը։

— Եթե Ձերդ մեծությանը հաճո կլինի թույլատրել ինձ,— պատասխանեց դեսպանությունում պաշտոնավարող կապիտանը։

— Ետ դարձիր՝ առանց ժամանակ կորցնելու,— խզված ձայնով ասաց Պավելը, և նա մեկնեց՝ նույնիսկ չտեսնվելով Մոսկվայում ապրող հարազատների հետ։

Մինչ դիվանագիտական վեճերը լուծվում էին սվիններով ու արկերով, նա դեսպանորդ էր և դիվանագիտական իր

Հաստոցրնթացն ավարտեց Վիեննայի կոնգրեսի՝ բոլոր գիվանագիտությունների այդ պայծառ տոնահանդեսի ժամանակ։ Վերադառնալով Ռուսաստան, նա իսկական կամերգերի[1] պաշտոն ստացավ Մոսկվայում, որտեղ արքունիք չկար։ Օրենքներից և ռուսական դատավարությունից - անտեղյակ՝ նա Սենատ ընկավ, դարձավ խնամակալական խորհրդի անդամ, Մարիինյան հիվանդանոցի տնօրեն, Ալեքսանդրյան ինստիտուտի տնօրենի, և ամեն բան կատարում էր բուռն եռանդով, որը դժվար թե պետքական էր, կամակորությամբ, որը վնաս էր բերում, ազնվությամբ, որը ոչ ոք չէր նկատում։

Նա երբեք տանը չէր լինում։ Նա օրը երկու քառյակ ստողջ ձի էր հալից գցում. մեկն՝ առավոտը, մեկը՝ ճաշից հետո։ Քացի Սենատից, որը երբեք մատհան չէր անում, խնամակալական խորհրդից, ուր լինում էր շաբաթը երկու անգամ, հիվանդանոցից ու ինստիտուտից բացի՝ նա բաց չէր թողնում ֆրանսիական գրեթե ոչ մի ներկայացում և շաբաթը երեք անգամ գնում էր Անգլիական ակումբ։ Նա ժամանակ չուներ ձանձրանալու, միշտ զբաղված էր, ցրված, միշտ ինչ-որ տեղ էր գնում, և նրա կյանքը փափուկ անիվներով թեթև ատհում էր բարդ ու խճճված աղխաթեի վրայով։

Դրա համար էլ նա մինչև յոթանասունհինգ տարեկանը ստողջ էր երիտասարդի պես, ներկա էր բոլոր մեծ տոնահանդեսներին ու ճաշկերույթներին, բոլոր հանդիսավոր հավաքներին ու տարեկան ժողովներին, ինչպիսին էլ որ դրանք լինեին՝ գյուղատնտեսական, թե բժշկական, հրդեհասպահովագրման ընկերության, թե բնախույզների ընկերության... և դրանից զատ, ու թերևս հենց դրա շնորհիվ էլ, մինչև ծեր հասակը պահպանեց մարդկային սրտի մի մասնիկը ու մի որոշ ջերմություն։

Չի կարելի պատկերացնել միշտ շարժման մեջ եղող, կենսուրախ, հազվադեպ ատն եկող Սենատորին ավելի հակադիր մի մարդու, քան իմ հայրն էր, որը համարյա երբեք դուրս չէր գալիս բակից, ատում էր ողջ պաշտոնական աշխարհը, միշտ քմահաճ էր ու դժգոհ։ Մենք էլ ութ ձի ունեինք (շատ վատորակ), բայց մեր ախոռը կարծես բարեգործական հաստատություն լիներ՝ քնձոտ ձիերի համար. հայրս դրանք պահում էր մասամբ պատշաճությունից ելնելով, մասամբ էլ հանուն այն բանի, որ երկու կառապաններն ու երկու ֆորեյտորները, «Մոսկովսկիե վեդոմոստիթ» ետևից գնալուց և կառատան ու հարևան բակի արանքում հաջողությամբ իրենց սարքած աքլորակռիվներից բացի, որևէ զբաղմունք ունենային։

Հայրս գրեթե ամենևին չէր ծառայել. ստավծավախ ու բարեպաշտ հորաքրոջ տանը՝ ֆրանսիացի դաստիարակի ձեռքի տակ կրթվելուց հետո, տասնվեց տարեկանում ընդունվել էր Իզմայլովյան գունդ՝ որպես սերժանտ, ծառայել. մինչև Պամելի գահակալությունը և պաշտոնաթող եղել գվարդիայի կապիտանի աստիճանով։ 1801 թվականին նա գնաց արտասահման և երկրից երկիր թափառելով ապրեց մինչև 1811 թվականի վերջը։ Նա վերադարձավ մորս հետ՝ իմ ծննդից երեք ամիս առաջ և Մոսկվայի հրդեհից հետո մի տարի ապրելով - տվերյան կալվածքում, տեղափոխվեց Մոսկվա, ջանալով հնարավորին չափ առավել անհաղորդ ու ձանձրալի կյանք վարել։ Նորբոր կենսալիությունը նրան խանգարում էր։

Սենատորի տեղափոխվելուց հետո տան մեջ ամեն ինչ գնալով ավելի մաղյ տեսք էր ընդունում։ Պատերը, կահույքը, ծառաները,— ամեն բան դժգոհ, խոժոռ հայացք ուներ։ Ինքնին հասկանալի է, որ բոլորից ավելի դժգոհը ինքը՝ հայրս էր։ Արհեստական լռությունը, շշուկը, սպասավորների զգույշ քայլքը արտահայտություն էին ոչ թե ուշադրության, այլ՝ ընկճվածության ու վախի։ Սենյակներում ամեն ինչ անշարժ էր, հինգ-վեց տարի նույն գրքերն ընկած էին նույն տեղում, նույն էջանշաններով։ Հորս ննջարանում ու առանձնասենյակում տարիներով չէր տեղաշարժվում կահույքը, չէին բացվում պատուհանները։ Գյուղ գնալիս իր սենյակի բանալին նա պահում էր գրպանում, որպեսզի առանց իրեն խելքներին չփչեր լվանալ հատակը կամ մաքրել պատերը։

[1] կամերգեր — պալատական պատվավոր կոչում։

## ԳԼՈՒԽ II

Դայակների խոսակցությունը և գեներալների զրույցը: Կեղծ վիճակ: Ռուս էնցիկլոպեդիստները: Զանձրույթ: Սպասուհիների կացարանը և նախասենյակը: Երկու գերմանացիներ: Ուսումնառություն և ընթերցանություն: Կատեխիզիս և Ավետարան:

Մինչև տասը տարեկանս ես ոչ մի տարօրինակ, առանձնահատուկ բան չէի նշմարում իմ վիճակի մեջ. բնական ու պարզ էր թվում, որ ապրում եմ հորս տանը, որ նրա հարկաբաժնում ինձ վայելուչ եմ պահում, որ մայրս ունի իր հարկաբաժինը, որտեղ սրտիս ուզածի չափ գոռում ու շարություն եմ անում։ Սենատորը երես էր տալիս ինձ և խաղալիքներ էր նվիրում, կալոն ման էր ածում ձեռքերի վրա, Վերա Արտամոնովնան հագցնում էր շորերս, պառկեցնում էր քնելու և լողացնում էր տաշտակի մեջ, m-me Պրովոն զբոսանքի էր տանում և հետս խոսում գերմաներեն. ամեն բան ընթանում էր իր կարգով, մինչդեռ ես սկսեցի մտորել-խորհել։

Հպանցիկ դիտողությունները, անզգույշ ասված խոսքերը սկսեցին գրավել ուշադրությունս։ Պառավ Պրովոն և բոլոր սպասավորները մորս համար հոգի էին տալիս, հորիցս վախենում էին ու իսկի չէին սիրում։ Նրանց մեջ երբեմն ծագած ընտանեկան տեսարանները հաճախակի խոսակցության նյութ էին դառնում m-me Պրովոյի և Վերա Արտամոնովնայի համար, որոնք միշտ մորս կողմն էին բռնում։

Մայրս անախորժություններ, իրոք, շատ էր ունենում։ Լինելով արտասովոր բարի, բայց ամուր կամքից զուրկ կին, նա լրիվ հորս ճնշման տակ էր և, ինչպես միշտ վիճակվում է թույլ բնավորություններին, հուսահատ դիմադրություն էր ցույց տալիս մանրուքներում ու աննշան բաներում։ Դժբախտաբար, հենց այդ ժանրուքներում էլ հայրս համարյա միշտ իրավացի էր լինում, և բանն ավարտվում էր նրա հաղթությամբ։

— Ճիշտն ասած,— ասում էր, օրինակ, m-me Պրովոն,— եթե տիրուհու տեղը ես լինեի, հենց կվերկենայի ու կգնայի



Շտուտգարտ. ինչ՞վ ուրախանաս՝ անվերջ քմահաճույքներ ու անախորժություններ, մահացու տաղտուկ։

— Իհա՛րկե,— ավելացնում էր Վերա Արտամոնովնան,— բայց ահա թե ով է ձեռն ու ոտը կապում,— և նա գուլպայի շյուղերով ցույց էր տալիս ինձ։— Հե՞տը վերցնի, բայց ո՞ւր տանի, ինչո՞ւ տանի։ Մենակ թողնի էստե՞ղ, էս կարգուկանոնի մեջ՝ օտարն էլ չի անի էդ բանը։

Առհասարակ երեխաներն ավելի խորաթափանց են, քան կարծում ենք, նրանք շուտ են ցրվում, մի պահ մոռանում են այն, ինչն իրենց զարմանք է պատճառել, բայց համառորեն անդրադառնում են դրան, հատկապես այն ամենին, ինչը խորհրդավոր է Ղամ սարսափելի, և զարմանալի հաստատակամությամբ ու հնարամտորեն հասու են լինում իսկությանը։

Մի անգամ, ուշադրությունս լարելով, ես մի քանի շաբաթում իմացա մորս հետ հորս հանդիպման բոլոր մանրամասնությունները՝ թե մայրս ինչպես համարձակվեց թողնել ծնողների տունը, ոնց նրան թաքցրին Կասելի ռուսական դեսպանատանը՝ Սենատորի մոտ, և ինչպես նա տղամարդու հագուստով անցավ սահմանը. այս բոլորը ես իմացա՝ ոչ մի անգամ ոչ մեկին ոչ մի հարց չտալով։

Այս հայտնությունների առաջին արդյունքը եղավ հորիցս իմ հեռանալը՝ այն տեսարանների պատճառով, որոնց մասին խոսեցի։ Ես առաջ էլ էի պկանատես լինում դրանց, բայց ինձ թվում էր, թե կարգն այդ է։ Ես սովոր էի, որ մեր տանը ամենքը, այդ թվում և Սենատորը, վախենում էին հորիցս, որ նա բոլորին դիտողություն էր անում, և դա տարօրինակ չէի համարում։ Այժմ սկսեցի ամեն բան այլ կերպ ըմբռնել. և այն միտքը, թե այդ ամենի մեջ ես էլ իմ մեղքն ունեմ, երբեմն մռայլ ու ծանր ամպերով էր պատում իմ լուսավոր մանկական երևակայությունը։

Այդ ժամանակվանից մեջս արմատավորվող երկրորդ միտքն այն էր, թե ես ավելի քիչ կախում ունեմ հորիցս, քան երեխաներն առհասարակ։ Իմ իսկ հորինած այդ ինքնատիպությունն ինձ դուր էր գալիս։

Երկու թե երեք տարի անց մի երեկո հորս մոտ էին գնդի իր երկու ընկերները՝ Օրենբուրգի գեներալ-նահանգապետ

Գ. Կ. Էսսենը՝ և Թեոդորաքիայի նախկին փոխարքա Ա. Ն. Բախմետևը՝, մի գեներալ, որը Բորոդինոյում կորցրել էր ոտքը։ Իմ սենյակը կից էր այն գահլիճին, ուր նրանք հավաքվեցին։ Հայրս, ի միջի այլոց, նրանց ասաց, որ ինքը խոսել է իշխան Ցուսուպովի հետ՝ ինձ ծառայության վերցնելու մասին։

— Ժամանակ չպետք է կորցնել,— ավելացրեց նա,— ինքներդ գիտեք, որ մի բանի հասնելու համար նա պիտի երկար ծառայի։

— Է՛, ախպերս, էդ ինչո՞ւ ես ուզում նրան գրագիր դարձնել,— բարեսրտորեն ասաց Էսսենը։— Այդ գործն ինձ հանձնաբարիր, ես նրան կգրանցեմ Ուրալի կազակների զորամասում, սպա կդարձնենք, կարևորը դա է, հետո ինքն իրեն առաջ կգնա, ինչպես մենք բոլորս։

Հայրս չէր համաձայնում, ասում էր, որ հիասթափվել է ամեն տեսակ զինվորական ծառայությունից, որ հույս ունի ժամանակի ընթացքում ինձ տեղավորել որևէ դեսպանությունում, մի տաք երկրում, ուր ինքն էլ կուզենար գնալ՝ ավարտելու իր կյանքը։

Բախմետևը, որ քիչ էր մասնակցում զրույցին, հենակներով տեղից ելնելով՝ ասաց.

— Ինձ թվում է, որ դուք պիտի լավ մտածեք Պյոտր Կիրիլովիչի տված խորհրդի մասին։ Օրենբուրգ չեք ուզում՝ կարելի է այստեղ էլ զինվոր գրանցել։ Մենք հին ընկերներ ենք, և ես սովոր եմ ձեզ հետ անկեղծ խոսելու. քաղաքացիական ծառայությամբ, համալսարանով դուք ոչ ձեր երիտասարդին բարիք կանեք, ոչ էլ օգուտ կտաք հասարակությանը։ Նա ակնհայտորեն կեղծ վիճակում է, միայն զինվորական ծառայությունը կարող է մեկեն հառաջընթացի դուռ բացել նրա առջև ու ճիշտ հունի մեջ դնել։ Մինչև վաշտի հրամանատար դառնալը նրա մեջ կմարեն բոլոր վտանգավոր մտքերը։ Զինվորական կարգապահությունը մեծ դպրոց է, մնացածը կախված է իրենից։ Դուք ասում եք, որ նա ընդունակություններ ունի, բայց մի՞թե միայն հիմարներն են զինվորական ծառայության մտնում։ Բա մենք ու դո՞ւք, բա մեր ողջ շրջապա՞տը։ Դուք կարող եք միայն առարկել, թե



նա պիտի ավելի երկար ծառայի, մինչև հասնի սպայի աստիճանին. հենց այստեղ էլ մենք ձեզ կօգնենք։

Արժեր, որ m-me Պրովոն ու Վերա Արտամոնովնան իրենց կարծիքն ասեին այդ խոսակցության մասին։ Այդ ժամանակ ես արդեն տասներեք տարեկան էի՞, նման դասերը, որ ատենուվրա էին անում հոգիս, որ շաբաթներով, ամիսներով կշռադատվում էին կատարյալ մենության մեջ, իրենց պատուղն էին տալիս։ Այդ խոսակցության հետևանքով ես, որ առաջ բոլոր երեխաների նման երազում էի զինվորական ծառայության ու համազգեստի մասին, որ քիչ էր մնում լաց լինեի, թե ինչու հայրս ուզում է ինձ քաղաքացիական ծառայող դարձնել, հանկարծ պաղեցի զինվորական ծառայության հանդեպ ու թեև ոչ միանգամից, բայց քիչ-քիչ հիմնովին արմատախիլ արեցի ծոպերիզավոր ուսադիրների, ուսակապերի, անդրավարտիքի գունաժապավենների նկատմամբ իմ տածած սերն ու քնքշանքը։ Զինվորական համազգեստի հանդեպ մարած կիրքս, ի միջի այլոց, մի անգամ էլ պոռթկաց։ Մեր ազգականը, որ Մոսկվայում ուսանում էր պանսիոնում և մեկ-մեկ տոներին այցելում էր մեզ, ընդունվեց ուլաններ Յամբուրգի գունդը։ 1825 թվականին նա, յունկեր դարձած, Մոսկվա եկավ և մի քանի օր մնաց մեր տանը։ Սիրտս թունդ առավ՝ երբ նրան տեսա ժապավենների ու քուղերի մեջ, թուրը կախած, առաստանով կապած քառանկյունի գլխարկը թեք դրած։ Նա ցածրահասակ էր, մոտ տասնյոթ տարեկան։ Հաջորդ օրը առավոտյան հագա նրա համազգեստը, թուրը կապեցի, գլխարկը դրի ու նայեցի հայելու մեջ. աստվա՞ծ իմ, ինչքա՞ն լավն էի թվում ինքս իմ աչքին՝ եղրաքուղերով նեղլիկ կապույտ համազգեստի մեջ։ Բա զարդապիտակնե՞րը, ծոպագնդի՞կը, փամփուշտապայուսա՞կը... ի՞նչ էին դրանց համեմատությամբ բրդե բաճկոնս, որ հագնում էի տան մեջ, չինական կտորից կարած դեղին շալվարս։

Ազգականիս այցելությունը քիչ էր մնում խարխլեր գեներալական խոսքի ներգործությունը, բայց շուտով հանգամանքները նորից ու վերջնականապես միտքս շեղեցին զինվորական համազգեստից։

«Կեղծ վիճակին» վերաբերող մտորումներիս ներքին եզ-

բակացությունը բավականին նման էր երկու դայակներիս խոսակցություններից արած հետևությանս։ Ես ինձ ավելի ազատ էի զգում հասարակությունից, որին ամենևին չգիտեի, զգում էի, որ ըստ էության ինքս իմ սեփական ուժերի ապավինությանն եմ թողնված և մի քիչ երեխայական ամբարտավանությամբ մտածում էի, որ Ալեքսեյ Նիկոլաևիչին ու իր ընկերներին ցույց կտամ, թե ով եմ ես։

Այս բոլորից հետո պատկերացրեք, թե որքան հոգեմաշ ու միապաղաղ էր անցնում ժամանակս հայրական տան տարօրինակ աբբայության մեջ։ Ոչ խրախուսանքի էի արժանանում, ոչ էլ զվարճություններ ունեի. հայրս համարյա միշտ դժգոհ էր ինձանից, նա ինձ երես էր տալիս սոսկ մինչև տասը տարեկանս, ընկերներ չունեի, ուսուցիչներս գալիս ու գնում էին, և ճանապարհելով նրանց՝ ես թաքուն վազում էի բակ՝ ապասավոր երեխաների հետ խաղալու, որ խստագույնս արգելված էր։ Մնացած ժամանակ թափառում էի մութ, ցերեկները՝ փակված պատուհաններով, երեկոները՝ հազիվ լուսավորվող մեծ սենյակներում, ոչինչ չանելով կամ ձեռքս ընկածը կարդալով։

Նախասենյակն ու սպասուհիների կացարանը միակ կենդանի բավականությունս էին։ Այստեղ ես լիակատար ազատության մեջ էի. ես ոմանց կողմն էի բռնում՝ ընդդեմ մյուսների, մոտիկներիս հետ քննում-դատում էի նրանց գործերը, գիտեի նրանց բոլոր գաղտնիքները և հյուրասենյակում երբեք բերանիցս չէի թռցնում նախասենյակի գաղտնիքները։

Այս հանգամանքին անկարելի է չանդրադառնալ։ Ասենք, ես ամենևին էլ չեմ խուսափում շեղումներից ու դիպվածներից. այդպես է ընթանում ամեն մի զրույց, այդպես է ընթանում բուն կյանքը։

Երեխաներն ընդհանրապես սիրում են ծառաներին։ Ծնողները, հատկապես Ռուսաստանում, արգելում են մերձենալ նրանց հետ։ Երեխաները չեն լսում ծնողներին, որովհետև հյուրասենյակում ձանձրալի է, իսկ սպասուհիների կացարանում՝ ուրախ։ Այս, ինչպես և հազարավոր այլ դեպքերում ծնողները չգիտեն ի՞նչ են անում։ Ես ոչ մի կերպ չեմ կարողանում պատկերացնել, որ մեր նախասենյակը երեխաների համար ավելի վնասակար լիներ, քան մեր «թեյասրահը» կամ «բազմոցասրահը»։ Նախասենյակում երեխաներն ընդօրինակում են կոպիտ արտահայտություններ ու վատ վարվելաձև. դա ճշմարիտ է, բայց հյուրասենյակում էլ նրանք յուրացնում են կոպիտ մտքեր ու վատ զգացմունքներ։

Անբարոյականը հենց հեռու մնալու հրամանն է այն մարդկանցից, որոնց հետ երեխաներն անընդհատ շփման մեջ են։

Մեզանում շատ են դատողություններ անում ծառաների, հատկապես ճորտ ծառաների խորին այլասերվածության մասին։ Նրանք, իրոք, աչքի չեն ընկնում վարքագծի օրինակելի խստությամբ, նրանց բարոյական անկումը երևում է արդեն իսկ նրանից, որ չափազանց շատ բանի են դիմանում, շատ հազվադեպ են վրդովվում ու հակառակում։ Բայց բանն այդ չէ։ Ես կուզենայի իմանալ՝ այդ ո՞ր դասն է Ռուսաստանում նրանցից պակաս այլասերված։ Արդյոք ազնվականությո՞ւնը կամ պաշտոնյանե՞րը, թերևս հոգևորականությո՞ւնը։

Ինչո՞ւ եք ծիծաղում։

Գուցե միայն գյուղացիները ինչ-որ հիմքեր գտնեն...

Տարբերությունը ազնվականների և ճորտ սպասավորների միջև նույնքան քիչ է, որքան նրանց անվան զանազանությունը[1]։ Ես, առանձնապես 1848 թվականի աղետներից հետո, ատում եմ դեմագոգիկ շողոքորթությունը ամբոխին, բայց արիստոկրատական զրպարտությունը ժողովրդի հասցեին ավելի՛ եմ ատում։ Ծառաներին ու ստրուկներին ներկայացնելով իբրև անառակ գազաններ, պլանտատորները թող են փչում ուրիշների աչքին և խեղդում իրենց խղճի ձայնը։ Մենք հազվադեպ ենք խուժանից լավը, բայց արտահայտվում ենք ավելի մեղմ ձևերով, ավելի ճարպկորեն ենք թաքցնում եսասիրությունն ու կրքերը։ Մեր ձգտումներն այդպես կոպիտ ու այդքան բացահայտ չեն՝ հեշտ բավարարվելու շնորհիվ և դրանք չզսպելու սովորությունից, մենք պարզապես ավելի հարուստ ենք, ավելի կուշտ և դրա հետևանքով՝ ավելի խստապահանջ։ Երբ կոմս Ալմավիվան

1 Բնագրում բառախաղ է՝ между дворянами и дворовыми.

Սեիլյան սափրիչին թվարկեց այն հատկանիշները, որ ինքը պահանջում էր ծառայից, Ֆիգարոն հոգոց հանելով նկատեց. «Եթե ծառան պիտի այդ բոլոր արժանիքներն ունենա՝ շա՞տ պարոններ կճարվեն, որ պիտանի լինեն ծառա դառնալու»։

Այլասերվածությունը Ռուսաստանում ընդհանուր առմամբ խորը չէ, ավելի շատ վայրի է ու լկտի, աղմկալի ու կոպիտ, խառնիխուռն է և անամոթ, քան թե խորը։ Հոգևորականությունը, տանը փակված, հարբում է ու խժռում վաճառականության հետ։ Ազնվականությունը հարբում է բացեիբաց, օր ու գիշեր թուղթ է խաղում, դնգստում է ծառաներին, անառակություն է անում սպասուհիների հետ, վատ է վարում իր գործերը և ավելի վատ՝ ընտանեկան կյանքը։ Գաշտոնյաները նույնն են անում, բայց ավելի կեղտոտ ձևերով և դեռ քծնում էլ են պետերին ու մանր գողություններ անում։ Ազնվականները, ճիշտն ասած՝ ավելի քիչ են գողանում, նրանք աշկարա վերցնում են ուրիշներինը, ըստ որում, տեղն ընկած տեղը՝ հե՞րն էլ անիծում։

Բոլոր այս քնքուշ թուլություններն ավելի կոպիտ տեսքով հանդիպում են տասնչորսերորդ դասից* դուրս գտնվող չինովնիկների մեջ։ այն ազնվականների շրջանում, որոնք ոչ թե թագավորական են, այլ կալվածատիրական։ Բայց թե նրանք, որպես դաս, ինչո՞վ են մյուսներից վատ՝ կա չգիտեմ։

Տնտեսելով ոչ միայն մեր ու Սենատորի տան ճորտ սպասավորներին, այլև մեզ մտերիմ երկու-երեք տների ծառաներին վերաբերող քսանհինգ տարվա հիշողություններս, ես ոչ մի առանձնապես արատավոր բան չեմ մտաբերում նրանց վարքագծի մեջ։ Կարելի է, գուցե, խոսել մանր գողություններից... Բայց այստեղ իրավիճակն այնպես է խառնել հասկացողությունները, որ դժվար է դատել. մարդ-սեփականությունը հաշվի չի առնում իր ընկերներին և տնավարի է վերաբերվում աղայի ունեցվածքին։ Արդարացի կլիներ բացառել ինչ-ինչ ժամիշխանների, ֆավորիտների, խանումաղախինների, լուր տանող-բերողների։ Բայց նախ՝ դրանք բացառություններ են,— ախոռի կլեյնմիխելներ*, մառանի բենկենդորֆներ*, քրջոտ Գերեկուսիխինաներ*, բոբիկ Գոմ-



պադուրներ*,— և, բացի դրանից, հենց նրանք են բոլորից լավ պահում իրենց։ Հարբում են միայն գիշերները և շորերը գրավ չեն դնում գինետանը։

Այլոց միամիտ անառակությունը մի դավաթ գինու և մի շիշ գարեջրի, ուրախ զրույցի ու ծխամորճի շուրջն է դառնում, տնից ինքնագլուխ բացակայելու, երբեմն ծեծկռտուքի հասնող խոսքակռվի, անմարդկային ու անհնարին բաներ պահանջող աղաների հանդեպ մանր խորամանկություններ բանեցնելու մեջ է։ Հասկանալի է, որ մի կողմից՝ որևէ դաստիարակության, մյուս կողմից՝ ստրկության պայմաններում գեղջկական պարզության բացակայությունը անհամար այլանդակություններ ու աղավաղումներ է մտցրել նրանց վարքուբարքի մեջ, բայց այդ ամենով հանդերձ նրանք, Ամերիկայի նեգրերի նման, կիսով չափ երեխա են մնացել. ամեն մի չնչին բանով. ուրախանում են, ամեն մի չնչին բանից՝ վշտանում. սահմանափակ են նրանց ձգտումները և ավելի շուտ միամիտ ու մարդկային, քան ախտավոր։

Գինի և թեյ, գինետուն և պանդոկ— ահա՛ ռուս ծառայի երկու մշտական կրքերը. դրանց խաթեր է նա գողություն անում, դրանց խաթեր է նա աղքատ, դրանց պատճառով է նա տանում հալածանք ու պատիժ և լքում շքավորության մատնված ընտանիքը։ Չկա առավել հեշտ բան, քան դատապարտել հարբեցողությունը հայր Մեսյուի* ողջախոհ հարբածության բարձունքից և թեյի սեղանի շուրջ նստած զարմանալ, թե ինչո՛ւ են սպասավորները պանդոկ գնում թեյ խմելու և ոչ թե տանը խմում, չնայած որ տանն ավելի էժան է։

Գինին շշմեցնում է մարդուն, ինքնամոռացության հնարավորություն տալիս, արհեստական ուրախություն պատճառում, գրգռում է նրան. այդ բժժանքն ու գրգռումն այնքան ավելի շատ են դուր գալիս, ինչքան մարդ ավելի քիչ է զարգացած և ինչքան ավելի շատ է ստիպված անձուկ ու դատարկ կյանք վարելու։ Հավերժ նախատրահում՝ ապրելու, մշտական շքավորության, ստրկության, առուծախի դատապարտված ծառան էլ ի՞նչ անի, որ չխմի։ Նա խմում է շափից դուրս՝ հենց որ կարողանում է, որովհետև չի կարող խմել ցանկացած օրը. այս բանը դեռ տասնհինգ տարի

առաջ Սենկովսկին է նշել «Բիբլիոտեկա դլյա չտենիայի» մեջ։ Իտալիայում և հարավային Ֆրանսիայում հարբեցողներ չկան, որովհետև գինին առատ է։ Անգլիացի գործավորի կատաղի հարբեցողությունը նույն կերպ է բացատրվում։ Այդ մարդիկ ընկճվել են քաղցի ու թշվառության դեմ մղվող անելանելի, անհավասար պայքարում։ Ինչ ճիգ ու ջանք էլ թափեցին՝ ամենուրեք դեմ առան կապարե արգելքի, դաժան հակահարվածի, որը նրանց նետեց հասարակական կյանքի մռայլ հատակը, դատապարտեց մարմնի հետ խելքն էլ մաշող հավիտենական աննպատակ աշխատանքի։ Ի՞նչ մի զարմանալու բան է, որ վեց օր լծակ, անիվ, ղսպանակ, պտուտակ լինելուց հետո՝ մարդ շաբաթ երեկոյան կատաղի դուրս է պրծնում մանուֆակտուրային գործունեության տաժանավայրից ու կես ժամում թունդ հարբում է, մանավանդ որ՝ նրա հյուծվածությունը շատ էլ դիմացկուն չէ։ Լավ կլիներ, որ բարոյախոսներն էլ իրենց համար խմեին Irish կամ Scotch whisky[1] և լռեին, թե չէ նրանց այդ անմարդկային մարդասիրությունը մի օր սարսափելի պատասխան կստանա։

Պանդոկում թեյ խմելը ծառայի համար այլ իմաստ ունի։ Տանը թեյը թեյ չի. տանը ամեն բան նրան հիշեցնում է, որ ինքը ծառա է, տանը իրենը ծառաների կեղտոտ կացարանն է, ինքնաեռը ի՞նքը պիտի գնի. տանն ունեցածը կոթը պոկված բաժակ է, և ամեն րոպե աղան կարող է զանգը տալ։ Պանդոկում ինքը ազատ մարդ է, ինքը պարոն է, իր համար սեղան է գցված, լամպեր են վառված, իր համար է սպասավորը սկուտեղը ձեռքին վազվզում, բաժակները փայլում են, թեյնիկը փայլում է, ինքը հրամայում է՝ իրեն լսում են. ինքը հրճվում է և ուրախ-ուրախ խավիար կամ խորիզով կարկանդակ է բերել տալիս թեյի համար։

Այս ամենի մեջ ավելի շատ մանկական պարզամտություն կա, քան որևէ անբարոյականություն։ Տպավորությունները նրանց համակում են արագ, բայց արմատներ չեն նետում. նրանց միտքը մշտապես զբաղված է կամ, ավելի ճիշտ, տարված է պատահական բաներով, չնչին

[1] Իռլանդական կամ շոտլանդական օղի (անգլ.)։



ցանկություններով, դատարկ նպատակներով։ Մանկական հավատը ամեն մի հրաշքի հանդեպ՝ վախկոտ է դարձնում հասուն տղամարդուն, և նույն այդ մանկական հավատը մխիթարում է նրան ամենածանր պահերին։ Ես ապշահար ներկա եմ եղել հորս ծառաներից մի երկուսի մահվան. ահա թե որտեղ կարելի էր գաղափար կազմել պարզամիտ անհոգության մասին, որի մեջ անցել էր նրանց կյանքը, համոզվել, որ նրանց խղճի վրա բոլորովին էլ մեծ մեղքեր չեն ծանրացել, իսկ որևէ բան էլ թե պատահել էր՝ «տեր հայրն» արդեն թողություն էր տվել։

Երեխաների և ծառաների այս նմանության վրա էլ հիմնված է նրանց փոխադարձ հրապուրանքը։ Երեխաներն ատում են մեծահասակների արիստոկրատիան և նրանց բարեհաճ-ներողամիտ վերաբերմունքը, քանզի խելացի են և հասկանում են, որ նրանց համար իրենք երեխա են, իսկ ծառաների համար՝ մարդ-արարած։ Դրա համար էլ նրանք շատ ավելի սիրում են թուղթ ու լոտո խաղալ աղախինների, քան թե հյուրերի հետ։ Հյուրերը խաղում են նրանց խաթեր՝ իբրև ողորմություն, զիջումներ են անում, բորբոքում են նրանց ու քեֆն ուզած պահին խաղը կիսատ թողնում. աղախինները խաղում են սովորաբար որքան իրենց, այնքան էլ երեխաների համար, և դրանով խաղը հետաքրքիր է դառնում։

Աղախինները շատ են կապված երեխաներին, և դա բոլորովին էլ ստրկական կապվածություն չէ, դա թույլ մարդկանց և ճասարակ մարդկանց փոխադարձ սեր է։

Հնում, ինչպես հիմա Թուրքիայում է, կալվածատերերի ու ճորտ սպասավորների միջև նահապետական, տոհմական սեր էր լինում։ Այսօր Ռուսիայում այլևս չկան իրենց տերերի տոհմին ու ցեղին նվիրյալ ջերմեռանդ ծառաներ։ Եվ դա հասկանալի է։ Կալվածատերը առանց հավատքի է բանեցնում իր իշխանությունը, չի մտածում, թե Քրիստոսի Ահեղ դատաստանին պատասխան պիտի տա իր ծառաների համար և օգտվում է այդ իշխանությունից՝ հօգուտ իրեն։ Ծառան առանց հավատքի է ենթարկվում և բռնությունը տանում է ոչ թե որպես աստծո պատիժ, ոչ թե իբրև փոր-

ձություն, այլ պարզապես այն պատճառով, որովհետև ինքն անպաշտպան է. ուժի առաջ մարդն անզոր է։

Դեռ երիտասարդությանս օրերին ես գիտեի երկու-երեք նմուշ ստրկության այդ ֆանատիկոսներից, որոնց մասին ախ քաշելով են խոսում ութսունամյա կալվածատերերը, պատմելով նրանց անխոնջ ծառայությունից, նրանց անհուն ջերմեռանդությունից և մոռանալով ավելացնել, թե իրենց հայրերն ու հենց իրենք ինչով են հատուցել այդպիսի անձնազոհության դիմաց։

Սենատորի գյուղերից մեկում ապրում էր իր «ծառայությունն ավարտած», այսինքն՝ իր մի կտոր հացն ուտեցող զառամյալ Անդրեյ Ստեպանովը։

Նա Սենատորի և հորս սպասավորն է եղել գվարդիայում նրանց ծառայելու ժամանակ. բարի, ազնիվ ու զգոն մի մարդ, որ նայելով երիտասարդ պարոնների աչքերին, նրանց իսկ ասելով՝ կոահել է իր տերերի կամքը, և դա, կարծում եմ, հեշտ բան չի եղել։ Հետո նա կառավարել է մերձմոսկովյան կալվածքը։ Սկզբում 1812 թվականի պատերազմի պատճառով ամեն մի հաղորդակցությունից կտրված, հետո՝ վառված գյուղի մոխրակույտի մեջ մենակ ու անփող՝ նա սովից չմեռնելու համար ինչ-որ գերաններ ծախեց։ Վերադառնալով Ռուսաստան, Սենատորն սկսեց կարգավորել իր կալվածքը և, ի վերջո, հասավ գերաններին։ Որպես պատիժ նա Ստեպանովին հանեց պաշտոնից և ուղարկեց գյուղ։ Ընտանիքով ծանրաբեռնված ծերունին դատապարտվեց աղքատության։ Պատահել է, որ անցնելիս մի երկու օրով կանգ ենք առել այն գյուղում, որտեղ ապրում էր Անդրեյ Ստեպանովը։ Կաթվածահար, զառամյալ ծերուկը հենակներին կոթնած ամեն անգամ գալիս էր հորս խոնարհվելու և մի քիչ հետը խոսելու։

Խոսքի մեջ նրա նվիրվածությունն ու հեզությունը, դրժբախտ տեսքը, դեղնաճերմակ մազափնջերը ճաղատ գլխի երկու կողմերին՝ հուզում էին ինձ։

— Լսել եմ, տե՛ր իմ, որ ձեր եղբայրը բարեհաճել է կավալերիայի ժապավեն էլ ստանալ։ Ծեր եմ, տե՛ր իմ, շուտով հոգիս կավանդեմ, իսկ տեր աստվածը ինձ չարժանացրեց տեսնելու ձեր եղբորը կավալերիայի նշանով, գոնե մի՞



անգամ մեռնելուց առաջ մոտիկից տեսնեի նրան ժապավենով ու շքանշաններով։

Ես նայում էի ծերուկին. նրա դեմքը հույժ մանկական անկեղծություն ուներ. նրա կռացած մարմինը, ցավագնորեն ծռմռված դեմքը, հանգած աչքերը, նվաղ ձայնը,— ամեն բան վստահություն էր ներշնչում. նա չէր ստում, նա չէր շողոքորթում, նա իսկապես ուզում էր մահվանից առաջ տեսնել «ժապավենով ու շքանշաններով» այն մարդուն, որը տասնհինգ տարվա մեջ չկարողացավ ներել եղած-չեղածը մի քանի գերանը։ Ո՞վ է սա՝ սո՞ւրբ, թե՞ խենթ։ Եվ մի՞թե հենց խենթերը չեն սրբության հասնում։

Նոր սերունդը այդ կռապաշտությունը չունի, և եթե պատահում է, որ մարդիկ չեն ուզում ազատագրվել՝ պարզապես ծուլությունից և նյութական հաշվենկատությունից է։ Սա, ինչ խոսք, ավելի մեծ, բայց արդեն վերացող այլասերվածություն է. եթե նրանք ուզում էլ են մի բան տեսնել տերերի վզին, ապա՝ ոչ Վլադիմիրյան ժապավեն։

Ի դեպ, այստեղ ասեմ մեր ծառաների վիճակի մասին՝ առհասարակ։

Ոչ Սենատորը, ոչ էլ հայրս առանձնապես չէին նեղում ծառաներին, այսինքն՝ չէին նեղում նրանց ֆիզիկապես։ Սենատորը բռնկուն էր, անհամբեր և հենց այդ պատճառով էլ՝ հաճախ կոպիտ ու անարդարացի. բայց նրանց հետ այնքան քիչ էր շփվում և այնքան քիչ էր զբաղվում նրանցով, որ երկուստեք իրար համարյա չգիտեին։ Հայրս զգվացնում էր նրանց իր կամակորություններով, ոչ մի հայացք, ոչ մի խոսք, ոչ մի շարժմունք չէր վրիպում նրա աչքից, և նա անվերջ դաս էր տալիս. ռուս մարդու համար դա հաճախ ավելի վատ է, քան ծեծն ու հայհոյանքը։

Մարմնական պատիժը մեր տանը գրեթե ընդունված չէր. և այն մի երկու դեպքը, երբ Սենատորն ու հայրս դիմել էին «թաղային ոստիկանատան» զազրելի միջոցին, այնքան արտասովոր էին, որ սպասավորները ամիսներով խոսում էին այդ մասին. և հետո՝ այդ պատիժները հետևվանք էին զգալի զանցանքների։

Ծառաներին ավելի հաճախ զինվորության էին տալիս. այդ պատիժը ահուդողի մեջ էր գցում բոլոր ջահելներին.

անտեր-անտիրական՝ նրանք կուզենային ավելի շուտ ճորտ մնալ, քան թե քսան տարի ծառայության լուծը քաշել։ Այդ տեսարանները խիստ ազդում էին վրաս... Կալվածատիրոջ կանչով երկու ոստիկան-զինվոր էին գալիս, նրանք գողեգող, հանկարծակի, անակնկալ որսում էին նախատեսված մարդուն. տանուտերը այդ պահին սովորաբար հայտարարում էր, թե աղան դեռ երեկվանից է հրամայել ներկայացնել նրան հավաքատեղ, և սա, թեև լացը գալիս էր, ձևացնում էր, թե հեշ վեշն էլ չէ, կանայք լաց էին լինում, բոլորը նվերներ էին տալիս, ես էլ էի տալիս ինչ որ կարող էի, այսինքն՝ մի քսան կոպեկանոց, վզին կապելու մի թաշկինակ։

Հիշում եմ նաև, թե ինչպես հայրս, ժողոված հողատուրքը վատնելու համար, հրամայեց խուզել տանուտերերից մեկի միրուքը։ Ես ոչինչ չէի հասկանում այդ պատժից, բայց ինձ ապշեցրեց մոտ վաթսունամյա ծերունու տեսքը. նա հոնկուր-հոնկուր լալիս էր, խոնարհվում մինչև գետին և խնդրում էր, հողատուրքից բացի, հարյուր ռուբլով էլ տուգանել իրեն, միայն թե փրկել անպատվությունից։

Երբ Սենատորն ապրում էր մեզ մոտ, մենք միասին ունեինք երեսուն տղամարդ և համարյա այդքան էլ կին ծառա. ամուսնացած կանայք, ի միջի այլոց, ոչ մի ծառայություն չէին կատարում, նրանք իրենց տնտեսությամբ էին զբաղվում, ծառայության մեջ էին հինգ-վեց աղախին և լվացարարուհիները, որոնք վերև չէին բարձրանում։ Դրանց պիտի ավելացնել այն տղաներին ու աղջիկներին, որոնց սովորեցնում էին ծառայության, այսինքն՝ անբանության, ծուլության, խաբեության ու հացողի գործածելուն։

Ռուսաստանի այն ժամանակվա կյանքը բնութագրելու համար, կարծում եմ, ավելորդ չի լինի մի քանի խոսքով ասել, թե սպասավորներին ինչպես էին պահում։ Սկզբում նրանց ամսական հինգ ռուբլի թղթադրամ էին տալիս ուտելիքի համար, հետո՝ վեց։ Կանանց՝ մի ռուբլի պակաս, երեխաներին՝ տասը տարեկանից՝ դրա կեսը։ Նրանք իրար մեջ խմբեր էին կազմում և փողի պակասությունից չէին գանգատվում. դա վկայում է, որ ուտելիքը շատ էժան էր։ Ամենաշատ ռոճիկը տարեկան հարյուր ռուբլի էր թղթադրամով, մյուսներն ստանում էին դրա կեսը, ոմանք՝ տասներեկան երեսուն ռուբլի։ Մինչև տասնութ տարեկանը. տղաներն ռոճիկ չէին ստանում։ Ռոճիկից բացի սպասավորներին տալիս էին զգեստ, շինել, շապիկ, սավան, վերմակ, սրբիչ, պարուսինե ներքնակ։ Ռոճիկ չստացող տղաներին փող էին տալիս՝ բարոյական ու ֆիզիկական մաքրություն պահպանելու, այսինքն՝ բաղնիքի և եկեղեցում ապաշխարելու համար։ Բոլորը հաշված՝ ծառան նստում էր մի երեք հարյուր ռուբլի թղթադրամով։ Եթե սրան հավելենք դեղորայքի, բժշկի ծախսը և արժեքը այն ուտելիքի, որ երբեմն բերում էին գյուղից և չգիտեին ինչ անել՝ դարձյալ երեք հարյուր հիսուն ռուբլուց չի անցնի։ Դա մեկ **Բառորդն** է Փարիզում կամ Լոնդոնում ծառայի վրա կատարված ծախսի։

Պլանտատորները սովորաբար հաշվարկի մեջ են մտցնում ստրկության ապահովագրական պարգև-հավելումը, այսինքն՝ ծառայի կնոջը, երեխաներին կալվածատիրոջ հաշվին պահելը և ծերության տարիներին ինչ-որ մի տեղ գյուղում նրան տրված մի փշուր հացը։ Իհարկե, դա պետք է հաշվի առնել. բայց ապահովագրական հավելապարգևը մեծապես նվազում է մարմնական պատիժների երկյուղի հավելապարգևի, նրանց կացությունը և է՛լ ավելի վատթար ապրուստը փոխելու անհնարինության պատճառով։

Ես բավականաչափ տեսել-համոզվել եմ, թե ճորտային վիճակի ահավոր գիտակցումը ինչպես է խորտակում, թունավորում ծառաների կյանքը, ինչպես ճմլում, թմրեցնում է նրանց հոգին։ Գեղջուկները, հատկապես բահրատուրները, ավելի քիչ են զգում անձնական կախվածությունը, նրանք մի տեսակ կարողանում են չհավատալ իրենց լիակատար ստրկությանը։ Բայց առավոտից իրիկուն նախասենյակի կեղտոտ թախտին նստածները կամ ափսեն ձեռքներին սեղանի քով կանգնածները կասկածելու բան չունեն։

Ինչ խոսք, կան մարդիկ, որոնք սպասավորների սենյակում ապրում են ինչպես ձուկը ծովում, մարդիկ, որոնց հոգին չի արթնացել, որոնք հավեսով ու յուրօրինակ արվեստով են կատարում իրենց պաշտոնը։

Այս տեսակետից մեզ մոտ արտակարգ հետաքրքիր մեկը կար՝ մեր հին սպասավոր Բակայը։ Մարզիկի կազմված-

քով, բարձրահասակ, խոշոր ու լուրջ-լուրջ դիմագծերով, գեղագույն խորիմաստություն արտահայտող տեսքով այդ մարդն ապրեց մինչև խոր ծերություն, երևակայելով, թե սպասավորի դիրքը մեկն է ամենակարևորներից։

Հարգարժան այդ ծերուկը լինում էր միշտ բարկացած կամ խմած, կամ՝ հա՛մ խմած, հա՛մ էլ բարկացած՝ միաժամանակ։ Իր պաշտոնը նա կատարում էր ինչ-որ բարձրագույն մի տեսանկյունից և հանդիսավոր կարևորություն էր տալիս դրան. նա կարողանում էր առանձնահատուկ մի աղմուկով ու իրարանցումով իջեցնել ծածկակառքի սանդղակը և շրխկացնում էր դռնակները հրացանի կրակոցից ուժեղ։ Խոժոռ ու ձիգ կանգնում էր ետնամասին, և ամեն անգամ, երբ փոսի վրայով անցնելիս կառքը թափ էր տալիս նրան՝ թավ ու դժգոհ ձայնով կառապանին գոռում էր՝ «Կամա՛ց», չնայած որ արդեն փոսից հինգ քայլ հեռու էին լինում։

Կառքի ետևին երթևեկելուց բացի, նրա հիմնական գործը, որ ինքն էր կամավոր հանձնարարել իրեն՝ սպասավոր մանչուկներին ծառայասենյակի արիստոկրատական վարվելակերպը սովորեցնելն էր։ Երբ նա խմած չէր՝ գործը մի կերպ յոլա էր տանում, բայց երբ գլուխը տաք էր լինում՝ դառնում էր չափազանց բծախնդիր ու բռնակալ։ Ես երբեմն պաշտպան էի կանգնում իմ մտերիմներին, բայց իմ հեղինակությունը քիչ էր ազդում Բակայի հռոմեական բնավորության վրա. նա բաց էր անում դահլիճի դուռն ու ասում.

— Սա ձեր տեղը չէ, բարեհաճեցեք գնալ, թե չէ՝ զոռով դուրս կտանեմ։

Նա ոչ մի շարժում, ոչ մի բառ բաց չէր թողնում՝ հայհոյում էր տղաներին. հաճախ խոսքերին ավելացնում էր մի ապտակ կամ «շոյում գլուխը», այսինքն՝ մի տեսակ խոյանմանկորեն ու հնարքով երկու մատով ճլտատացնում գլխին։

Երբ նա, վերջապես, քշում էր տղաներին ու մենակ էր մնում, հալածանքը շուռ էր տալիս իր միակ ընկերոջ՝ Մակբեթի՝ նյուֆաունդլենդյան մեծ շան վրա, որին ինքը կերակրում, սիրում, սանրում ու խնամում էր։ Երկու-երեք բոպե մենակ մնալով, նա իջնում էր բակ և հրավիրում Մակբեթին իր կողքը՝ թախտին նստելու. և սկսում էր հետը զրուցել.



— Հիմարի՛ մեկը, ի՞նչ ես նստել բակում, էս ցրտին, տաք սենյակը թողած։ Հայվանի՛ մեկը։ Ի՞նչ ես աչքերդ չռել, հը՞, բան չես ասո՞ւմ։

Սրան սովորաբար հետևում էր ապտակը։ Մակբեթը երբեմն գոռոում էր իր բարեբարի վրա. այդ ժամանակ Բակայը հանդիմանում էր նրան, բայց առանց փաղաքշանքի ու զիջումների։

— Ճիշտ որ, ինչքան էլ պահես՝ շունը շուն էլ կմնա, սեպերը բաց կանի ու չի էլ մտածի՝ ո՞ւմ վրա... Ես չլինեի՝ լվերը կերել էին։

Եվ իր ընկերոջ երախտամոռությունից վիրավորված՝ նա զայրույթով քաշում էր քթախոտն ու մատներին մնացածը գցում Մակբեթի քիթը. սա փռշտում էր, անշնորհք-անշնորհք սրբում թաթով քիթն ընկած ծխախոտը և խոր վրդովմունքով իջնելով թախտից՝ ճանկռոտում էր դուռը։ Բակայը, «սրիկայի մե՛կը» ասելով, բաց էր անում դուռը և քացի տալիս։ Էստեղ սովորաբար վերադառնում էին տղաները, և նա սկսում էր «շոյել գլուխները»։

Մակբեթից առաջ մենք Բերտա անունով որսորդական մի շուն ունեինք. սա լուրջ հիվանդացավ, Բակայը նրան իր անկողնու մեջ առավ ու երկու-երեք շաբաթ խնամեց։ Մի առավոտ կանուխ, մտնում եմ սպասավորների կացարանը։ Բակայը ինչ-որ բան է ուզում ասել ինձ, բայց ձայնը դուրս չի գալիս, ու արցունքի խոշոր կաթիլը գլորվում է աչքն ի վար՝ շունը մեռել էր. ահա մարդկային սիրտն ուսումնասիրելու ևս մի փաստ։ Ես բնավ չեմ կարծում, թե նա երեխաներին էլ ատելիս լիներ. խստաբարո մի բնավորություն էր դա, որ զորացել էր հացոլիով և անգիտակցորեն ներքաշվել ծառայասենյակի պոեզիայի մեջ։

Բայց ստրկության այդ դիլետանտների կողքին՝ նահատակների, անհույս տառապյալների ինչպիսի՜ մռայլ կերպարանքներ են տխուր գալիս-անցնում հիշողությանս միջով։

Սենատորը անսովոր տաղանդի տեր, աշխատասեր, լրջմիտ մի խոհարար ուներ. նա հառաջադիմում էր իր գործի մեջ. Սենատորն ինքն էր ջանում, որ նրան ընդունեին թագա-

վորի խոհանոցը, ուր այն ժամանակ ֆրանսիացի մի հռչակավոր խոհարար կար։ Այնտեղ ուսանելով՝ նա տեղավորվեց Անգլիական ակումբում, հարստացավ, ամուսնացավ, աղայի պես էր ապրում, բայց ճորտության թոկը չէր թողնում նրան ոչ հանգիստ քնել, ոչ էլ իր դիրքը վայելել։

Սիրտ անելով և Իվերսկայա վանքում մաղթանք կատարելով, Ալեքսեյը եկավ Սենատորի մոտ ու խնդրեց ազատ արձակել իրեն հինգ հազար ռուբլով։ Սենատորը հպարտանում էր իր խոհարարով ճիշտ այնպես, ինչպես հպարտանում էր իր նկարչով, դրա համար էլ փողը չվերցրեց և խոհարարին ասաց, որ նրան ձրի ազատ կարձակի իր մահից հետո։

Խոհարարը շանթահար եղավ. համակվեց տխրությամբ, դեմքը փոխվեց, սկսեց սպիտակել և... ռուս մարդ էր՝ իրեն խմելու տվեց։ Իր գործն սկսեց անել անփույթ, Անգլիական ակումբը վտարեց նրան։ Ծառայության վարձվեց իշխանուհի Տրուբեցկայայի մոտ։ Իշխանուհին նրա հոգին հանում էր մանր կծծիություններով։ Մի անգամ, ծայր աստիճան նրանից վիրավորված՝ պերճախոսությամբ արտահայտվել սիրող Ալեքսեյը լուրջ տեսքով, քթի մեջ խոսելով նրան ասաց.

— Ի՞նչ պղտոր հոգի է բնակվում ձեր պայծառափայլ մարմնի մեջ։

Իշխանուհին կատաղեց, վռնդեց խոհարարին և, ինչպես վայել է ռուս ազնվական տիկնոջը, գանգատ գրեց Սենատորին։ Սենատորը բան էլ չէր անի, բայց որպես կիրթ ասպետ, կանչեց խոհարարին, մի լավ հայհոյեց ու հրամայեց գնալ ներողություն խնդրել իշխանուհուց։

Խոհարարն իշխանուհու մոտ չգնաց, գնաց գինետուն։ Մի տարվա մեջ նա ամբողջ կարողությունը մսխեց՝ փրկագնման համար հավաքած դրամագլխից մինչև վերջին գոգնոցը։ Կինը նրա հետ կռվե՞ց, կռվե՞ց ու թողեց գնաց հեռու մի տեղ՝ դայակություն անելու։ Երկար ժամանակ Ալեքսեյից ոչ մի լուր չկար։ Մի օր էլ ոստիկանությունը բերեց նրան՝ քնձռոտված, վայրենացած. նրան գտել էին փողոցում. ապրելու տեղ չուներ, գինետնից գինետուն էր թափառում։ Ոստիկանությունը պահանջում էր, որ կալվածատերը աչքը վրան պահի։ Սենատորի համար ցավալի էր, գուցեև խիղճը



տանջեց. բավականին մեղմ ընդունեց նրան և սենյակ հատկացրեց։ Ալեքսեյը շարունակում էր խմել, հարբած՝ աղմկում էր ու երևակայում, թե ոտանավորներ է հորինում. իրոք, նա զուրկ չէր ինչ-որ անկանոն ֆանտազիայից։ Մենք այդ ժամանակ Վասիլևսկոյեում էինք։ Սենատորը, չիմանալով ինչ անել խոհարարին՝ այնտեղ ուղարկեց, ենթադրելով, թե հայրս կհամոզի նրան։ Բայց նա արդեն կորած մարդ էր։ Եվ ես մոտիկից տեսա, թե ինչպիսի՞ խտացած ատելություն ու չարություն կա ճորտ մարդու սրտում՝ տերերի դեմ. նա խոսում էր ատամները կրճտացնելով և մի շարժուձևով, որը, մանավանդ եթե խոհարարի շարժուձև է, կարող էր վտանգավոր լինել։ Իմ ներկայությամբ նա չէր վախենում լեզվին ազատություն տալուց. սիրում էր ինձ և հաճախ, տնավարի ուսիս խփելով, ասում էր. «Ազնիվ ճյուղ՝ փչացա՞ծ ծառի»։

Սենատորի մահից հետո հայրս անմիջապես ազատագիր տվեց նրան. բայց արդեն ուշ էր, և դա պարզապես նշանակում էր պրծնել նրանից. նա այդպես էլ գնաց-կորավ։

Նրա կողքին չեմ կարող չհիշել ճորտության մի այլ զոհի։ Սենատորը գրագրի պես մեկն ուներ՝ մոտ երեսունհինգ տարեկան մի սպասավոր։ 1813 թվականին մեռած մեծ հորեղբայրս, գյուղական հիվանդանոց կառուցելու նկատառումով, մանուկ հասակում նրան ուղարկել էր մի ծանոթ բժշկի մոտ՝ բուժակություն սովորելու։ Բժիշկը նրա համար բժշկավիրաբուժական ակադեմիայի դասախոսություններին հաճախելու թույլտվություն հաջողեցրեց, երիտասարդն ընդունակ էր, սովորեց լատիներենը, գերմաներենը և քչից-շատից բուժում էր։ Մոտ քսանհինգ տարեկանում նա սիրահարվեց մի սպայի աղջկա, թաքցրեց իր վիճակը և ամուսնացավ հնար։ Սուտը չէր կարող երկար տևել. կալվածատիրոջ մահից հետո կինը սարսափով իմացավ, որ իրենք ճորտ են։ Սենատորը՝ նրա նոր տերը, ամենևին չէր նեղում նրանց, նույնիսկ սիրում էր երիտասարդ Տոլոչանովին, բայց ամուսնու և կնոջ գժտությունը շարունակվում էր. կինը չէր կարողանում նեղրել, որ նա իրեն խաբել էր, և փախավ ուրիշի հետ։ Տոլոչանովը, հավանորեն, շատ էր սիրում նրան. այդ ժամանակվանից նա ընկավ ցնորվածության հասնող մտատանջու-

թյան մեջ, գիշերները խմում-հարբում էր և, սեփական մի-ջոցներ չունենալով, ծախսում տիրոջ փողերը. երբ տեսավ, որ այլևս հնարավոր չէ ծայրը ծայրին հասցնել՝ 1821 թվականի դեկտեմբերի 31-ին իրեն թունավորեց։

Սենատորը տանը չէր. Տոլոշանովը իմ ներկայությամբ մտավ հորս սենյակը, ասաց, որ եկել է նրան հրաժեշտ տալու և խնդրում է Սենատորին հաղորդել, որ պակասող փողերը ինքն է ծախսել։

— Դու հարբած ես,— ասաց նրան հայրս,— գնա քնիր։

— Ես ջուտով կգնամ երկար քնելու,— ասաց բժիշկը,— միայն թե խնդրում եմ ինձ շարությամբ չհիշեք։

Տոլոշանովի հանգիստ տեսքը վախեցրեց հորս, և նա, ավելի սևեռուն նայելով, հարցրեց.

— Քեզ ի՞նչ եղավ, զառանցո՞ւմ ես։

— Բա՞ն չկա, ես միայն մի բաժակ մկնդեղ եմ խմել։

Մարդ ուղարկեցին բժշկի ետևից, ոտիկանատուն, փրկելու դեղ տվին, կաթ տվին... երբ տվեց տիրոջը խառնել՝ զսպում էր իրեն ու ասում.

— Տե՛ղդ մնա, տե՛ղդ, ես քեզ դրա համար չեմ կուլ տվել։

Հետո, երբ թույնն սկսեց ավելի ուժեղ ազդել, ես լսում էի նրա անքացն ու տանջալից ձայնը, որ կրկնում էր.

— Վառո՛ւմ է, վառո՛ւմ։ Կրա՛կ է։

Ինչ-որ մեկը նրան խորհուրդ տվեց քահանա կանչել. չէր ուզում և ասում էր Կալոյին, որ հանգիստ կյանք չի կարող լինել, որ ինքը էդիսն անատոմիա գիտի։ Գիշերվա տասներկուսին մոտ նա բուժակին դեմանեբեն հարցրեց ժամը, հետո ասաց՝ «էս էլ նոր տարին, շնորհավորում եմ ձեզ, ու մեռավ։

Առավոտյան ես նեռվեցի տան կոպաշենքը, որ իրրև բաղնիք էր ծառայում. Տոլոշանովին տարել էին այնտեղ. նրա մարմինը գրված էր սեղանին այն տեսքով, ինչպես մնալիր էր. ֆրակով, առանց փողկապի, կուրծքը բաց. գիմազծերը սաստիկ ազավաղվել և արդեն սևացել էին։ Դա տասներեքերորդ դիակն էր, որ ես տեսնում էի. համարյա ուշաթափ՝ դուրս եկա։ Ոչ խաղալիքները, ոչ նկարները, որ նվեր էի ստացել նոր տարվա առթիվ, չէին ափոփում ինձ. աչքիս առաջ անա-



ցած Տոլոշանովն էր, և ես լսում էի նրա ձայնը՝ «Վառո՛ւմ է, կրա՛կ է»։

Ի ամփոփումն այս տխուր նյութի՝ կասեմ միայն մի բան. ծառաների սենյակը ոչ մի իսկապես վատ ազդեցություն չի գործել ինձ վրա։ Ընդհակառակը, վաղ հասակիցս մեջս անհաղթահարելի ատելություն է բորբոքել ամեն մի ստրկության և ամեն մի կամայականության հանդեպ։ Պատահում էր, երբ դեռ երեխա էի, Վերա Արտամոնովնան, որևէ շարության համար ցանկանալով խիստ նեղացնել ինձ, ասում էր. «Դեռ համբերեք, կմեծանաք ու հենց էնպիսի ազա կդառնաք, ինչպիսին ուրիշներն են»։ Դա ահավոր վիրավորում էր ինձ։ Պառավը կարող է գոհ լինել՝ համենայն դեպս, էնպիսին, ինչպիսին ուրիշներն են, ես չդարձա։

Ծառաների սենյակից և աղախինների կացարանից բացի ես մի հաճելի ժամանց էլ ունեի, և այստեղ, համենայն դեպս, արգելքներ չկային։ Ես ընթերցանությունը սիրում էի նույնքան, որքան որ չէի սիրում սովորելը։ Առհասարակ, անկանոն ընթերցանության կիրքը լուրջ ուսումնառության հիմնական խոչընդոտներից մեկն էր։ Ես, օրինակ, առաջ և հետո էլ, տանել չէի կարողանում լեզուների տեսական ուսումնասիրումը, բայց շատ արագ սովորում էի մի կերպ հասկանալ ու հաղիվհազ խոսել, և դրանով էլ բավարարվում էի, քանի որ այդքանը բավական էր ընթերցելու համար։

Հայրս ու Սենատորը ունեին անցյալ հարյուրամյակի ֆրանսիական գրքերից բաղկացած բավականին մեծ մի գրադարան։ Գրքերը կույտ-կույտ թափված էին Սենատորի գրասենյակում։ Բանտարան ներքին հարկի խոնավ, անբնակելի սենյակում։ Բանտարկյալ մոտ էր, ինձ թույլատրվում էր ուզածս չափ գրքերն ուզել այդ գրական շտեմարանները, և ես անվերջ կարդում ու կարդում էի։ Հայրս դրա մեջ երբեմն օգուտ էր տեսնում. նախ՝ ես ավելի շուտ կսովորեմ ֆրանսերեն և հետո՝ զբաղված կլինեմ, այսինքն՝ հանգիստ նստած կլինեմ, այն էլ՝ իմ սենյակում։ Ասենք, բոլոր գրքերը չէր, որ ես ցույց էի տալիս կամ սեղանին դնում, որոշ գրքեր թաքցրած էի զգեստապահարանում։

Իսկ ի՞նչ էի կարդում, ինքնին հասկանալի է՝ վեպեր ու

կատակերգություններ։ Ես կարդացի ֆրանսիական «Ռեպերտուարի»* և ռուսական «Թեատրի»* շուրջ հիսուն հատոր, յուրաքանչյուրում՝ երեք, չորս պիես։ Ֆրանսիական վեպերից բացի, մոտ մոտ կային Լաֆոնտենի* վեպերը, Կոցեբուի* կատակերգությունները, ես դրանք մի քանի անգամ էի կարդում։ Չեմ կարող ասել, թե վեպերը մեծ ազդեցություն էին ունենում վրաս. բոլոր տղաների նման ես ագահաբար կլանում էի բոլոր երկիմաստ կամ մի փոքր խճճված տեսարանները, բայց դրանք ինձ առանձնապես չէին գրավում։ Վրաս շատ ավելի ուժեղ ազդեց մի պիես, որը ես սիրում էի խելագարորեն, մի քսան անգամ կարդացել էի, ըստ որում՝ «Թեատրի» ռուսերեն թարգմանությամբ — «Ֆիգարոյի ամուսնությունը»։ Ես սիրահարված էի Քերուբիմին ու կոմսուհուն և դրանից զատ՝ ինքս էլ մի Քերուբիմ էի. կարդալիս սիրտս նվաղում էր, և, ոչ մի հաշիվ չտալով ինձ, ես ապրում էի ինչ-որ նոր մի զգացում։ Որքա՜ն արբեցուցիչ էր թվում ինձ այն տեսարանը, որտեղ մանկլավիկին ճնշոց շորեր են հագցնում. ես սաստիկ ցանկանում էի ծոցումս պահել որևէ մեկի ժապավենը և թաքուն համբուրել։ Իրականում այդ ժամանակ ես հեռու էի կանանց ամեն մի հասարակությունից։

Հիշում եմ միայն, թե ինչպես երբեմն, կիրակի օրերին, պանսիոնից մեզ այցելում էին Ռ-ի երկու դուստրերը։ Փոքրը, մոտ տասնվեց տարեկան, զարմանահրաշ գեղեցկություն ուներ։ Երբ նա սենյակ էր մտնում, ես շփոթվում էի, երբեք չէի համարձակվում խոսել հետը, այլ գողունի նայում էի նրա սքանչելի սև աչքերին, թուխ խոպոպներին։ Երբեք, ոչ մեկին ես ոչինչ չեմ ասել այդ մասին, և սիրո անդրանիկ հեքը անցավ՝ աննկատ մնալով բոլորից, նույնիսկ նրանից։

Տարիներ անց, երբ հանդիպում էի նրան, սիրտս թունդ էր առնում, և ես հիշում էի, թե ինչպես տասներկու տարեկան հասակումս աղոթում էի նրա գեղեցկության առաջ։

Մոռացա ասել, որ «Վերթերը» գրեթե «Ֆիգարոյի ամուսնության» չափ հրապուրում էր ինձ. վեպի կեսը չէի հասկանում ու բաց էի թողնում՝ շտապելով արագ հասնել սարսափելի ավարտին. այդժամ խելագարի պես լաց էի լինում։ 1839 թվականին պատահմամբ ձեռքս ընկավ «Վերթերը»։



վլադիմիրում էր. Ես կնոջս պատմեցի, թե ինչպես տղա ժամանակս լաց եմ եղել և սկսեցի նրա համար կարդալ վերջին նամակները... և երբ հասա նույն տեղը՝ արցունքները հոսեցին աչքերիցս, ու ես ստիպված էի կանգ առնել։

Չեմ կարող ասել, թե մինչ տասնչորս տարեկան դառնալս հայրս առանձնապես նեղում էր ինձ, պարզապես մեր տան ամբողջ մթնոլորտը ծանր էր աշխույժով լի մանկան համար։ Ֆիզիկական առողջության նկատմամբ համառ ու անօգուտ հոգատարությունը՝ բարոյականի հանդեպ լիակատար անտարբերության կողքին՝ սաստիկ զզվեցնում էր. նախազգուշացումներ մրսելուց, վնասակար ուտելիքից, իրարանցում՝ չնչին հարբուխի, հազի դեպքում։ Զմռանը ես շաբաթներով նստում էի տանը, իսկ երբ թույլ էր տրվում կառքով զբոսնել՝ պարտադիր էին տաք, երկարաճիտ կոշիկները, վզնոցները և այլն։ Տանը միշտ անտանելի շոգ էր վառարաններից։ Այդ ամենը ինձ կդարձներ տկար ու փափկասուն մի երեխա, եթե ես մորիցս ժառանգած չլինեի անկուն առողջություն։ Նա ինքը ամենևին համաձայն չէր այդ սովորույթներին և իր հարկաբաժնում թույլ էր տալիս ինձ անելու այն ամենը, ինչ արգելված էր հորս հարկաբաժնում։

Ուսումնառությունս վատ էր ընթանում՝ առանց մրցակցության, առանց խրախուսանքի ու քաջալերման. անկանոնությամբ և հսկողությունից դուրս՝ ես պարապում էի անփույթ և մտածում բուն գործը փոխարինել հիշողությամբ ու կենդանի հնարամտությամբ։ Հասկանալի է, որ ուսուցիչներին էլ ոչ ոք չէր հետևում. մի անգամ պայմանավորվելով գնի վերաբերյալ,— միայն թե գային ժամանակին ու իրենց ժամը լրացնեին,— նրանք կարող էին երկարաձգել տարիները, ոչ մի հաշիվ չտալով արածի մասին։

Այն ժամանակվա իմ ուսումնառության ամենատարօրինակ դիպվածներից մեկը ինձ արտասանության դասեր տալու համար ֆրանսիացի դերասան Դալեսի հրավիրումն էր։

— Հիմա դրան ուշադրություն չեն դարձնում,— ասում էր ինձ հայրս,— մինչդեռ, խնդրե՜մ, եղբայրս Ալեքսանդրը. Նա վեց ամիս կանոնավոր, ամեն երեկո, Օֆրենի* հետ կար-

դում էր le récit de Théramène[1] և էլի չէր կարողանում հասնել նրա ուզած կատարելությանը։

Եվ ես սկսեցի արտասանություն սովորել։

— Ի՞նչ կա որ, monsieur Dalès[2],— մի անգամ հարցրեց հայրս նրան,— դուք, կարծում եմ, պարի դասեր էլ կարող եք տալ։

Դալեսը, վաթսունն անց գեր մի ծերուկ, իր արժանիքների խորին գիտակցությամբ, բայց նաև համեստության ոչ պակաս խորին զգացումով պատասխանեց, որ «ինքը չի կարող դատել իր շնորհների մասին, բայց հաճախ է բալետի պարերի վերաբերյալ խորհուրդներ տվել Գրանդ օպերայում»։

— Ես այդպես էլ կարծում էի,— նկատեց հայրս՝ հրամցնելով նրան քթախոտի բաց տուփը, մի բան, որ նա երբեք չէր անի ռուս կամ գերմանացի ուսուցչին։— Ես շատ կուզենայի, որ դուք կարողանայիք le dégourdir un peu[3], արտասանությունից հետո մի քիչ պարեիք հետը։

— Monsieur le comte peut disposer de moi[4].

Եվ հայրս, որ անչափ սիրում էր Փարիզը, սկսեց վերհիշել օպերայի ճեմասրահը 1810 թվականին, Ժորժի* երիտասարդությունը, Մարսի* ծերությունը և հարցուփորձ արեց սրճարաններից ու թատրոններից։

Հիմա պատկերացրեք իմ փոքր սենյակը, ձմռան տխուր երեկոն, սառած պատուհանները, որոնց վրայով թել-թել վազում են գոլորշու շիթերը, երկու ճարպամոմ՝ սեղանին և մեր tête-à-tête[5]. Դալեսը բեմում էլի բավականին բնական էր խոսում, բայց դասերի ժամանակ, արտասանելիս, իր պարտքն էր համարում առավելագույնս հեռանալ բնականությունից։ Նա Ռասինին կարդում էր մի տեսակ երգելով, ոտանավորի յուրաքանչյուր դադարին անում էր այնպիսի բաժուկ, ինչպիսին անգլիացիներն են անում ծծրակին, և ոտանավորը նմանվում էր կոտրված ձեռնափայտի։

Այդ միջոցին նա ջուրն ընկած և լողալ չիմացող մարդու

[1] Թերամենի պատմությունը (ֆրանս.)։
[2] պարոն Դալես (ֆրանս.)։
[3] նրան դարձնել ավելի անկաշկանդ (ֆրանս.)։
[4] Կոմսը կարող է տնօրինել ինձ (ֆրանս.)։
[5] դեմ առ դեմ խոսակցությունը (ֆրանս.)։



շարժում էր անում ձեռքով։ Յուրաքանչյուր բանաստողը ստիպում էր նչկնել մի քանի անգամ և շարունակ տարուբերում էր գլուխը։

— Չեղավ, իսկի չեղավ։ Attention! „Je crains Dieu, cher Abner, այստեղ դադար է,— նա փակում էր աչքերը, թեթև շարժում գլուխը և, քնքշորեն ձեռքով ետ մղելով ալիքները, ավելացնում էր.— et n'ai point d'autre crainte[1]".

Ապա «աստծուց բացի ոչ մի բանից չվախեցող» ծերուկը նայում էր ժամացույցին, փակում էր վեպը ու վերցնում աթոռը. դա իմ դասն էր։

Այսքանից հետո զարմանալի չէ, որ ես երբեք չեմ պարել։

Այս դասերը երկար չշարունակվեցին և մի երկու շաբաթից շատ ողբերգական վերջ ունեցան։

Սենատորի հետ ֆրանսիական թատրոնում էի. նախերգանքը նվագեցին, նվագեցին մի անգամ, երկու անգամ վարագույրը չէր բարձրանում. առաջին շարքերը, ցանկանալով ցույց տալ, թե իրենք գիտեն իրենց Փարիզը, սկսեցին աղմկել, ինչպես որ այնտեղ աղմկում են հետևի շարքերը։ Առաջաբեմ դուրս եկավ ինչ-որ ռեժիսոր, աջ խոնարհվեց, ձախ խոնարհվեց, գլուխ տվեց ու ասաց.

— Մենք հայցում ենք հասարակության ողջ ներողամտությունը, ահավոր, ահավոր դժբախտություն պատահեց մեզ. մեր ընկերոջը՝ Դալեսին,— և արցունքները իսկապես խեղդեցին ռեժիսորի ձայնը,— գտել են իր սենյակում շմոլից մեռած։

Ահա այսպիսի զորեղ միջոցով փրկեց ինձ ռուսական ծուխնումուխը արտասանությունից, մենախոսություններից ու կարմիր փայտից տաշած քառոտանի իմ դամայի հետ մենապարերից։

Մոտ տասներկու տարեկանում ես կանանց ձեռքից փոխադրվեցի տղամարդկանց ձեռքը։ Մոտավորապես այդ ժամանակ հայրս ինձ համար գերմանացի սպասավոր բերելու երկու անհաջող փորձ արեց։

Երեխաներին սպասավորող գերմանացին ոչ տնային

[1] Ուշադրությո՛ւն, «ես վախենում եմ աստծուց, Թանկագին Աբներ... և ուրիշ ոչ մի բանից չեմ վախենում» (ֆրանս.)։

դաստիարակ է, ոչ էլ «խնամող քեռի», դա առանձնահատուկ մի մասնագիտություն է։ Նա չի սովորեցնում երեխաներին և չի հագցնում, այլ հետևում է, որ նրանք սովորեն ու հագնված լինեն, հոգում է նրանց առողջության մասին, նրանց հետ զբոսանքի է գնում և սրտի ուզածը դուրս տալիս ոչ այլ կերպ՝ քան գերմաններեն։ Եթե տանը դաստիարակ կա՝ գերմանացին նրան հնազանդվում է, եթե «խնամող քեռի» կա՝ սա է հնազանդվում գերմանացուն։ Հրավիրվող ուսուցիչները, որոնք շնախատեսված պատճառներով ուշ են գալիս և իրենց կամքից անկախ հանգամանքների բերումով շատ շուտ են գնում, սիրաշահում են գերմանացուն, և նա, իր ողջ անգրագիտությամբ հանդերձ, սկսում է իրեն գիտուն համարել։ Դաստիարակները գերմանացուն բանեցնում են. գնումների, բազմապիսի հանձնարարությունների համար, բայց իրենց խնամել թույլատրում են միայն ֆիզիկական լուրջ պակասություններ ունենալու և այլ հոգածուների իսպառ բացակայության դեպքում։ Սաները տասնչորս տարեկանից ծնողներից թաքուն գնում են գերմանացու սենյակը ծխելու, նա այդ բանը հանդուրժում է, որովհետև իրեն ուժեղ օժանդակ միջոցներ են անհրաժեշտ, որ պահվի տանը։ Իսկապես էլ, մեծ մասամբ հենց այդ ժամանակ է, որ երեխաների գերմանացուն շնորհակալություն են հայտնում, ժամացույց նվիրում ու ճամփու դնում. եթե հոգնել է երեխաների հետ փողոցներում թափառելուց ու նրանց հարբուխ ընկնելու և հագուստը կեղտոտելու համար դիտողություններ ստանալուց՝ երեխաների գերմանացին դառնում է պարզապես գերմանացի, փոքրիկ մի կրպակ է բացում, սաթե ծխամորճներ, օծանելիք, գլանակներ է ծախում նախկին սաներին և այլ տեսակի գաղտնի ծառայություններ անում նրանց[1]։

Ինձ սպասավորող առաջին գերմանացին Շլեզիայից էր, Ցոկիշ անունով. ըստ իս՝ այդ ազգանունն իսկ հերիք էր, որ նրան չվերցնեին։ Բարձրահասակ, ճաղատ մի տղամարդ էր նա, աչքի էր ընկնում արտառոց փնթիությամբ և պարծենում

1 Երգեհոնահար և երաժշտության դասատու Ի. Ի. էկը, որի մասին խոսվում է «Մի երթասարդի հիշատակարանից» մեջ, տալիս էր միայն երաժշտության դասեր՝ չունենալով ոչ մի ազդեցություն (ծանոթ.՝ Ա. Ի. Գերցենի)։



էր իր գյուղատնտեսական դիտելիքներով. կարծում եմ, որ հայրս հենց դրա համար էլ վերցրել էր նրան։ Ես զվվանքով էի նայում շլեզիացի հսկային և հանդուրժում էի նրան սոսկ այն բանի համար, որ Դևիչիե դաշտում և Պրեսնյայի լճակներում զբոսնելիս նա ինձ պատմում էր անպարկեշտ անեկդոտներ, որոնք ես փոխանցում էի ծառաների կացարանին։ Նա մի տարի էլ չմնաց, ինչ-որ ստորություն էր արել գյուղում, այգեպանն ուղեցել էր նրան գերանդիով սպանել, և հայրս վռնդեց գերմանացուն։

Նրա տեղը եկավ բրաունշվեյգ-վոլֆենբյուտելյան զինվոր (հավանաբար՝ փախստական) Ֆյոդոր Կարլովիչը, որն աչքի էր ընկնում գեղեցիկ ձեռագրով ու անհուն բթամտությամբ։ Նա արդեն ծառայել էր երեխաներին երկու տան մեջ և որոշ հմտություն ուներ այսինքն՝ տնային դասատիարակի տեսք էր ընդունում, ըստ որում ֆրանսերեն խոսում էր «շի» առոգանությամբ, հակադարձ շեշտով[1]։

Ես ոչ մի հարգանք չունեի նրա նկատմամբ և ամեն րոպե թունավորում էի նրա կյանքը, հատկապես այն ժամանակվանից, երբ համոզվեցի, որ չնայած իմ բոլոր ջանքերին, նա չի կարողանում հասկանալ երկու բան՝ տասնորդական կոտորակները և երից կանոնը։ Տղաների հոգում, առհասարակ, անողոք և նույնիսկ դաժան շատ բան կա. ես մոլեգին հետապնդում էի խեղճ վոլֆենբյուտելյան եգերին[2] մաթեմատիկական համեմատություններով. դա ինձ այնքան էր զվարճացնում, որ ես հանդիսավորությամբ հայտնեցի հորս, որ Ֆյոդոր Կարլովիչը հիմար է, թեև նման բաներից շատ քիչ էի խոսում հորս հետ։

Ընդսմին, Ֆյոդոր Կարլովիչը ինձ մոտ պարծեցել էր, թե ինքը նոր կապույտ ֆրակ ունի՝ ոսկե կոճակներով, և իրոք մի անգամ ես նրան տեսա ֆրակը հագին ինչ-որ հարսանիքի գնալիս. ֆրակը նրա վրա լայն էր, բայց ոսկե կոճակներ ուներ։ Նրան ծառայող տղան ինձ թաքուն ասաց, որ այդ

1 Անգլիացիները գերմանացիներից վատ են խոսում ֆրանսերեն, բայց նրանք սոսկ աղավաղում են լեզուն, գերմանացիները գոռհկացնում են (ծանոթ.՝ Ա. Ի. Գերցենի)։

2 եգեր — հրաձգային հատուկ գնդի զինվոր։

Ֆրակը նա փոխ է վերցրել կոմեդիկայի խառնուքի իր ծանոթ գործակատարից։ Ես անխղճորեն կպա թշվառականից՝ ո՞ւր է կապույտ ֆրակը։

— Ձեր տանը ցեց շատ կա, ֆրակը պահ եմ տվել իմ ծանոթ դերձակին։

— Որտե՞ղ է ապրում այդ դերձակը։

— Ինչերի՞գ է պետք։

— Ասի ինչո՞ւ չեք ասում։

— Հարկավոր չէ խառնվել ուրիշի գործերին։

— Դե լա՛վ, բայց մի շաբաթից իմ անվանակոչության տոնն է, ուրախացրեք ինձ՝ այդ օրվա համար դերձակից վերցրեք կապույտ ֆրակը։

— Ձէ՛, չեմ վերցնի, դուք արժանի չեք, որովհետև դուք «իմպերտինենտ»[1] եք։

Եվ ես մատով սպառնացի նրան։

Ու ասես վերջին հարվածը տանալու համար լիներ՝ Ժյուզոր Կորլովիչը մի օր Բուշոյի՝ ֆրանսիացի ուսուցչի ներքոյությամբ պարծեցավ, թե ինքը, նորաթուխ մի զինվոր, մատնացույց է Վաթերլոոյի՝ ճակատամարտին, թե գերմանացիները մի լավ շարդ տվեցին ֆրանսիացիներին։ Բուշոն սոսկ մի հայացք գցեց նրա վրա ու այնպես ուժեղ քաշեց քթաթոռը, որ նապոլեոնին հաղթողը մի փոքր շփոթվեց։ Բուշոն հեռացավ՝ բարկացած հենվելով իր ոստոտ ձեռնափայտին, և երբեք նրան այլ կերպ չէր անվանում, քան le soldat de Villain-ton[2]. Այն ժամանակ ես դեռ չգիտեի, որ այդ բառախաղը Բերանժերենն է և քեֆս գալիս էր Բուշոյի հեռաքիցը։

Ի վերջո, Բյուրերի՝ ընկերը հոս հետ ջոջվեց ու թաղեց մեզ տուն. դրանից հետո հայրս այլևս ինձ չէր նեղում պերմանացիներով։

Բրատինչվեցի-վոլիներյուտնյան ռազմիկի օրոք ես երբեմն գնում էի ինչ-որ տպանների մոտ, որոնց տանը, նույնպես «գերմանացու» պաշտոնով, ապրում էր նրա բարեկամը, և որոնց հետ ես հեռավոր զբոսանքներ էի կատարում. նրանից հետո ես նորից լրիվ մենակության մեջ մնացի. ձանձրանում էի, չանում էի դուրս պրծնել մենակությունից ու ելք չէի գտնում։ Հնարավորություն չունենալով դեմ գնալու հորս կամքին, ես գուցեև ընկճվեի իմ այդ վիճակից, եթե շուտով նոր մտավոր աշխատանքը և երկու հանդիպումներ, որոնց մասին կպատմեմ հաջորդ գլխում, չփրկեին ինձ։ Ես համոզված եմ, որ ոչ մի անգամ հորս մտքով չէր անցել, թե ինչ կյանքով է ստիպում ինձ ապրելու, այլապես նա չէր մերժի իմ ամենաանմեղ ցանկությունները, ամենաբնական խնդրանքները։

Մեկ-մեկ նա ինձ Սենատորի հետ ֆրանսիական թատրոն էր թողնում. դա գերագույն հաճույք էր ինձ համար։ Ես ներկայացումների մոլի սիրահար էի, բայց այդ բավականությունը նույնպես որքան խնդություն, նույնքան էլ գառնություն էր բերում ինձ։ Սենատորն իմ եռեսից գալիս էր ներկայացման կեսից հետո և, միշտ որևէ տեղ հրավիրված լինելով՝ շավարտված ետ տանում։ Թատրոնը Արբատյան դարպասների մոտ էր, Ապրակսինի տանը, մենք ապրում էինք Ստարայա Կոնյուշեննայա փողոցում, այսինքն՝ շատ մոտիկ, բայց հայրս խստիվ արգելել էր վերադառնալ առանց Սենատորի։

Մոտ տասնհինգ տարեկան էի, երբ հայրս հրավիրեց քահանային ինձ աստվածաբանության դասեր տալու, Բանզի դա հարկավոր էր համալսարան ընդունվելու համար։ Կատեխիզիսը ձեռքս ընկավ Վոլտերից հետո։ Ոչ մի տեղ դաստիարակության գործում կրոնն այնպիսի համեստ դեր չի խաղում, ինչպես Ռուսաստանում, և դա, իհարկե, գերագույն բախտավորություն է։ Կրոնի դասերի համար միշտ էլ կեղծիքներ են վճարում, ըստ որում, նույն այդ քահանան, եթե նաև լատիներենի գաս է տալիս, դրա համար ավելի շատ է վերցնում, քան կատեխիզիսի։

Հայրս կրոնը բարեկիրթ մարդու համար անհրաժեշտ բաների թվին էր դասում. նա ասում էր, որ Սուրբ գրքին պետք է հավատալ՝ առանց դատողություններ անելու, քանզի խելքն այստեղ անզոր է, և բոլոր իմաստասիրությունները սոսկ

---

[1] լատիներ. — (ֆրանս. impertinent-ից).

[2] վատ քարի տեր զինվոր (ֆրանս.) — ֆրանսերեն արտասանությամբ հնչում է նույն՝ կերպ, ինչպես արտասանվում է «վիլլեթոնի» գիրքը անգլերեն։

մթագնում են նյութը, ասում էր, որ պետք է կատարել ծեսերը այն կրոնի, որին պատկանում ես ծնունդով, բայց չընկնելով ավելորդ աստվածամոլության գիրկը, մի բան, որը սազական է պառավ կանանց, իսկ տղամարդկանց չի պատշաճում։ Նա ինքը հավատո՞ւմ էր, արդյոք։ Կարծում եմ, մի քիչ հավատում էր՝ սովորության համաձայն, վայելչությունից ելնելով և ի դեպս։ Ի միջի այլոց, ինքն անձամբ եկեղեցական ոչ մի կարգ չէր կատարում՝ պաշտպանվելով քայքայված առողջությամբ։ Նա գրեթե երբեք չէր ընդունում քահանային կամ էլ խնդրում էր, որ երգի դատարկ դահլիճում, ուղարկելով նրան կապույտ մի թղթադրամ։ Զմռանը նա արդարանում էր, ասելով, թե քահանան ու սարկավագն իրենց հետ այնքան ցուրտ են ներս բերում, որ ինքն ամեն անգամ մրսում-հիվանդանում է։ Գյուղում նա եկեղեցի գնում էր և ընդունում էր քահանային, բայց դա անում էր ավելի շուտ աշխարհիկ-տնօրենական, քան թե բարեպաշտական նպատակներով։

Մայրս լութերական էր, ուրեմն և մի աստիճան ավելի կրոնասեր. նա ամիսը մեկ կամ երկու անգամ, կիրակի օրը, գնում էր իր եկեղեցին, կամ ինչպես Բակալն էր համառորեն անվանում՝ «իր կիրխան», և պարապությունից ես էլ հետն էի գնում։ Այնտեղ ես սովորեցի գերմանացի պաստորների, նրանց բեմասացության ու ճամարտակությունների տնազն անել համարյա դերասանական վարպետությամբ,— մի շնորհք, որ պահպանեցի մինչև չափահաս դառնալս։

Ամեն տարի հայրս ինձ ստիպում էր ապաշխարել։ Ես վախենում էի խոստովանությունից, և առհասարակ եկեղեցական mise en scène[1]-ը ցնցում ու վախեցնում էր ինձ. խսկական երկյուղածությամբ էի վերաբերվում ես հաղորդությանը. բայց այդ չեմ անվանի կրոնական զգացմունք, դա այն վախն էր, որից ծնվում է ամենայն անըմբռնելին, խորհրդավորը, առանձնապես երբ դրան հաղորդում են լուրջ հանդիսավորություն. այդպիսի ներգործություն ունենում են վհուկությունը, կախարդանքը։ Ջատկի ավագ շաբաթ օրը, առավոտյան ժամերգությունից հետո, ապաշխարանք առնելով և մի կուշտ կարմիր ձու, պասքա ու կուլիչ[1] ուտելով՝ ոչ տարին այլևս չէի մտածում կրոնի մասին։

Բայց ավետարանը կարդում էի շատ ու սիրով՝ սլավոնական և լութերյան թարգմանությամբ։ Ընթերցում էի առանց որևէ օգնության, ամեն բան չէր, որ հասկանում էի, բայց անկեղծ ու խորին հարգանք էի տածում կարդացածիս հանդեպ։ Պատանեկությանս օրերին ես հաճախ հրապուրվում էի վոլտերականությամբ, սիրում էի հեգնանքն ու ծաղրը, բայց չեմ հիշում, որ երբևէ ավետարանը ձեռքս առած լինեմ սառնության զգացումով. այդպես է եղել ողջ կյանքիս ընթացքում. բոլոր հասակներիս, տարբեր իրադարձությունների ժամանակ ես վերադարձել եմ ավետարանին, և ամեն անգամ նրա բովանդակությունը խաղաղություն ու մեղմություն է առաքել հոգուս։

Երբ քահանան սկսեց դաս տալ ինձ, զարմացած էր մնացել ոչ միայն ավետարանի իմ ընդհանուր իմացությունից, այլև այն բանից, որ ես տեքստերը բառացի էի մեջբերում։ «Բայց տեր աստվածը,— ասում էր նա,— բացելով միտքդ, դեռ չի բացել սիրտդ»։ Եվ իմ աստվածաբանը, ուսերը թոթվելով, զարմանում էր իմ «երկվության» վրա, բայց և գոհ էր ինձնից, մտածելով, որ ես կկարողանամ քննություն բռնել Տերնովսկու առաջ։

Շուտով իմ հոգին տոգորվեց մի այլ կրոնով։

## ԳԼՈՒԽ III

Ալեքսանդր I-ի մահը և դեկտեմբերի 14-ը։ Բարոյական զարթոնք։ Տեռորիստ Բուշոն։ Կորշեցի զարմուհիս։

Զմռան մի առավոտ, ոչ սովորական ժամին, եկավ Սենատորը. մտահոգված, արագ քայլերով նա գնաց հորս առանձնասենյակը և, ձեռքով նշան անելով, որ ես մնամ դահլիճում, դուռը կողպեց։

Բարեբախտաբար, ստիպված չեղա երկար գլուխ ջարդել՝ կռահելու, թե ինչ է եղել։ Նախասենյակի դուռը մի փոքր

---

1 արարողություն (ֆրանս.)։



1 գլանաձև թխվածք։

բացվեց, և գայլի մորթու մուշտակով կիսածածկ, կարմրակ մի դեմք շշուկով կանչեց ինձ. դա Սենատորի սպասյակն էր. ես նետվեցի դեպի դուռը։

— Չե՞ք լսել,— հարցրեց նա։

— Ի՞նչը։

— Թագավորը մեռել է Տագանրոգում։

Այդ նորությունը ցնցեց ինձ. առաջներում ես երբեք չէի մտածել նրա մահվան հնարավորության մասին. ես մանկուց սովորել էի մեծապես հարգել Ալեքսանդրին և տխուր վերհիշում էի, թե դրանից քիչ առաջ ինչպես տեսել էի նրան Մոսկվայում։ Զբոսանքի պահին մենք հանդիպեցինք նրան.Տվերյան ուղեփակոցի մոտ, երկու-երեք գեներալների հետ դանդաղ գնում էր ձի հեծած, վերադառնալով Խոդինկայից, որտեղ զինավարժություններ էին տեղի ունենում։ Դեմքը բարեհամբույր էր, դիմագծերը՝ մեղմ ու կլորավուն, դեմքի արտահայտությունը՝ հոգնած ու թախծոտ։ Երբ նա հավասարվեց մեզ՝ ես հանեցի գլխարկս ու վեր բարձրացրի, նա ժպտալով գլխով արեց ինձ։ Ինչքա՞ն տարբեր էր նա Նիկոլայից, որը միշտ նմանվում էր կնդած ու լպրծուն բեղավոր մեդուզայի։ Փողոցում, պալատում, իր երեխաների ու մինիստրների, համհարզների ու պալատական օրիորդների վրա Նիկոլայն անվերջ ստուգում էր, թե իր հայացքն ունի՞, արդյոք, բոժոժավոր օձի՝ արյունը երակներում սառեցնելու հատկություն[1]։ Եթե Ալեքսանդրի արտաքին հեզությունը մի դիմակ էր՝ այդպիսի երեսպաշտությունն ավելի լավ չէ՞, արդյոք, քան ինքնիշխանության լկտի անկեղծությունը։

... Մինչ գլխումս եփ էին գալիս խառն մտքերը և կրպակներում ծախում էին Կոնստանտին կայսեր նկարները, մինչ

[1] Պատմում են, որ մի անգամ Նիկոլայն իր ընտանիքում, այսինքն՝ պաղտնի ասաֆեանության երկու-երեք պետերի, երկու-երեք պալատական օրիորդների ու գեներալների ներկայությամբ, իր հայացքը փորձեց Մարիա Նիկոլաևնայի վրա։ Նա նման է հորը, և նրա հայացքը իրո՞ք հիշեցնում է հոր սոսկալի նայվածքը։ Դուստրը արիաբար դիմացավ հոր հայացքին։ Հայրը սփրթնեց, այտերը դողացին, աչքերն ավելի կատաղի գարձան. աղջիկը նույն հայացքով պատասխանեց։ Շքեղապատում բոլորը սփրթնեցին ու դողացին. պալատական օրիորդներն ու գեներալները, «Դոն-Ժուանում» Բայրոնի պատկերածի նման՝ քար կտրեցին աչքերի այդ հանիրայլան-ցարական մենամարտից (ծանոթ.՝ Ա. Ի. Գերցենի)։



բաժանվում էին երդման ծանուցագրերն ու բարի մարդիկ շտապում էի երդում տալու՝ լուր տարածվեց, թե թագաժառանգը հրաժարվել է գահից։

Դրանից հետո Սենատորի նույն սպասյակը,— որ քաղաքական նորությունների մեծ սիրահար էր և այդ նորությունները հավաքում էր սենատորների բոլոր նախասրահներից ու ատյաններից, ուր շրջում էր առավոտից իրիկուն, չխղճալով ձիերին, որոնք ճաշից հետո էին փոխվում,— հայտնեց ինձ, որ Պետերբուրգում խռովություն է տեղի ունեցել և Գալերնայա փողոցում «թոփ են կրակել»։

Հաջորդ օրը երեկոյան մեր տուն եկավ ոստիկանական գեներալ կոմս Կոմարովսկին. նա պատմեց Իսահակի հրապարակում կազմված կարեի[1], գվարդիական հեծելազորի Հարձակման, կոմս Միլորադովիչի մահվան մասին։

Այդ ժամանակ էլ սկսվեցին ձերբակալությունները. «այսինչին բռնել են», «այնինչին կալանավորել են», «այսինչին բերել են գյուղից». վախեցած ծնողները դողում էին զավակների համար։ Մայլ ամպերը պատում էին երկինքը։

Ալեքսանդրի թագավորության օրոք քաղաքական հալածանքները հազվադեպ էին։ Ճիշտ է, նա աքսորեց Պուշկինին՝ բանաստեղծությունների համար և Լաբզինին՝ այն պատճառով, որ սա, լինելով Գեղարվեստների ակադեմիայի կոնֆերենց-քարտուղարը, առաջարկել էր Ակադեմիայի անդամ ընտրել կառապան Իլյա Բայկովին[2], սակայն սիստեմատիկ հետապնդում չկար։ Գաղտնի ոստիկանությունը

[1] կարե — զորքի քառանկյան գտնվելատեղ։ Դեկաբրիստներն այդպես էին կանգնեցրել իրենց զորամասերը։

[2] Ակադեմիայի պրեզիդենտը պատվավոր անդամ էր առաջարկել Արակչեևին։ Լաբզինը հարցրել էր, թե որո՞նք են կոմսի ծառայությունները արվեստներին։ Պրեզիդենտը շփոթվել էր և պատասխանել, թե Արակչեևը «թագավորի ամենամոտ մարդն է»։ «Եթե դա բավարար հիմք է,— նկատել էր քարտուղարը,— ապա ես առաջարկում եմ կառապան Իլյա Բայկովին. նա ոչ միայն մոտիկ է թագավորին, այլև նրա առաջն է նստում»։ Լաբզինը նաև միայն մոտիկ էր և «Սիոնների վեստնիկի» հրատարակիչը. Ալեքսանդրն ինքն էլ միստիկ էր և «Սիոնների վեստնիկի» հրատարակիչը։ Ալեքսանդրն ինքն էլ միստիկ էր, բայց Գոլիցինի՝ մինիստրության անկումից հետո նույնիսկ միստիկ էր, բայց Գոլիցինի՝ մինիստրության անկումից հետո Արակչեևի գատասատանին հանձնեց իր նախկին «եղբայրներին ի Քրիստոս և գաղտնախորհուրդ մարդկանց»։ Լաբզինին աքսորեցին Սիմբիրսկ (ծանոթ.՝ Ա. Ի. Գերցենի)։

դեռևս չէր վերաճել ոստիկանների ինքնակալ կորպուսի, այլ կազմված էր մի գրասենյակից, որի պետն էր հին վոլտերական, Ժուիի նման սրախոս ու շաղակրատ և կատակարան դը Սանգլենը*։ Նիկոլայի օրոք դը Սանգլենն ինքն ընկավ ոստիկանության հսկողության տակ և համարվում էր լիբերալ՝ մնալով նույնը, ինչպիսին որ էր. հենց միայն սրանով կարելի է հեշտությամբ չափել թագավորությունների տարբերությունը։

Նիկոլային մինչև գահակալումը բոլորովին չէին ճանաչում. Ալեքսանդրի օրոք նա ոչ մի կշիռ չուներ և ոչ մեկի ուշադրությունը չէր գրավում։ Այժմ բոլորը, վրա տված՝ նրա մասին էին հարցուփորձ անում։ Միայն գվարդիական սպաները կարող էին պատասխան տալ. նրանք Նիկոլային ատում էին սառն դաժանության, մանր բծախնդրության, հիշաչարության համար։ Քաղաքում տարածված առաջին անեկդոտներից մեկը ավելի քան հաստատում էր գվարդիականների կարծիքը։ Պատմում էին, թե մի անգամ զինավարժության ժամանակ մեծ իշխանն այնքան էր իրեն կորցրել, որ ուզեցել էր ճանկել սպայի օձիքը։ Սպան նրան պատասխանել էր. «Ձե՛րդ մեծություն, իմ ձեռքին թուր կա»։ Նիկոլայը ետ էր քաշվել, ձայն չէր հանել, բայց այդ պատասխանը չէր մոռացել։ Դեկտեմբերի 14-ից հետո նա երկու անգամ հետաքրքրվել էր, թե այդ սպան գործին խառնված չէ՞ր արդյոք։ Բարեբախտաբար նա խառնված չէր[1]։

1 Սպան, եթե չեմ սխալվում՝ Կոմս Սամոյլովը, պաշտոնաթող եղավ և հանգիստ ապրում էր Մոսկվայում։ Նիկոլայը թատրոնում ճանաչեց նրան. նրան թվաց, թե Սամոյլովը մի տեսակ նրբաճաշակ-ինքնատիպ է հագնված և բարձրագույն ցանկություն հայտնեց, որ նման հագուստը ծաղրի ենթարկվի բեմից։ Տնօրեն և հայրենասեր Զագորսկին* դերասաններից մեկին հանձնարարեց որևէ վոդևիլում պատկերել Սամոյլովին։ Լուրը տարածվեց քաղաքով մեկ։ Երբ ներկայացումն ավարտվեց, իրական Սամոյլովը մտավ տնօրենի օթյակը և թույլտվություն խնդրեց՝ մի քանի խոսք ասելու իր երկվորյակին։ Տնօրենը երկյուղեց, բայց և այնպես, վախենալով ականդալից, կանչեց խեղկատակին։ «Դուք հոյակապ պատկերեցիք ինձ,— ասաց նրան կոմսը,— բայց լիակատար նմանության համար ձեզ մի բան էր պակասում՝ այս ազամանդը, որը ես միշտ կրում եմ. թույլ տվեք այն հանձնել ձեզ. դուք դա կկրեք, երբ ձեզ նորից հրամայվի պատկերել ինձ»։ Դրանից հետո Սամոյլովը հանգիստ գնաց իր տեղը։ Տափակ կատակը նույնպիսի հիմար վախճան ունեցավ,



Ակնհայտորեն փոխվում էր հասարակության վարքագիծը. բարոյական արագ անկումը տխուր ապացույց էր այն բանի, թե ռուս արիստոկրատների մեջ որքա՞ն քիչ էր զարգացած անձնական արժանապատվության զգացումը։ Ոչ ոք (կանանցից բացի) չէր համարձակվում կարեկցանք արտահայտել, մի ջերմ խոսք ասել հարազատների, բարեկամների մասին, որոնց ձեռքը դեռ երեկ սեղմում էին, բայց որոնք մի գիշերվա մեջ ձերբակալվել էին։ Ընդհակառակը, ի հայտ եկան ստրկության վայրի ֆանատիկոսներ, ոմանք ստորությունից, մյուսները, ավելի՛ վատ՝ անշահախնդրորեն։

Լոկ կանայք չէին մասնակցում այդ ամոթալի հրաժարիմքին մերձավորներից... Ե՛վ խաչի մոտ կանգնած էին միայն կանայք, և՛ արյունոտ գիլիոտինի մոտ հայտնվում է մեկ կանայք, Դեմուլենը*, հեղափոխության այդ Օֆելյան, որ թափառում է կացնի շուրջը՝ սպասելով իր ժամին, մեկ Ժ. Սանդը*, որ կարեկցանքի ու բարեկամության ձեռք է մեկնում կատինարան հանված ֆանատիկոս պատանուն՝ Ալիբոյին*։

Դաժանակրության աքսորվածների կանայք զրկվում էին բոլոր քաղաքացիական իրավունքներից, հրաժարվում հասարակությունից, հասարակական դիրքից ու գնում իրենց ողջ կյանքն անցկացնելու ազատազրկության մեջ՝ Արևելյան Սիբիրի ահավոր կլիմայի պայմաններում և տեղի ոստիկանության է՛լ ավելի ահավոր ճնշման ներքո։ Քույրերը, որ իրավունք չունեին գնալու, հեռանում էին արքունիքից, շարունակում պահում էին սիրո կենդանի զգացմունքը տառապյալների հանդեպ. բայց այդ զգացմունքը չկար տղամարդկանց մեջ, սարսափը խժռել էր այդ զգացմունքը նրանց սրտերից, ոչ ոք չէր համարձակվում ծպտուն հանել դժբախտների մասին։

Շոշափելով այս թեման, չեմ կարող մի քանի խոսք չասել այդ հերոսական պատմություններից մեկի մասին, որը շատ քիչ է հայտնի։

Իվաշևների հնամյա տանն ապրում էր ֆրանսիացի մի ջահել դաստիարակչուհի։ Իվաշևի միակ որդին* ուզում էր

Մեչպիսին Զագոսկին* խնդրեր հայտարարելը և մյուս օգոստոսյան թեքեսոլիկությունները (ծանոթ.՝ Ա. Ի. Գերցենի)։

ամուսնանալ նրա հետ։ Այդ բանը գժվեցրեց նրա ողջ ազգատոհմին. էլ աղմուկ-աղաղակ, էլ արցունքներ, աղաչանք-պաղատանք։ Ֆրանսուհին չուներ Ջերնովի նման մի եղբայր, որը Նովոսիլցևին սպանեց մենամարտում*, և ինքն էլ զոհվեց նրա ձեռքով. աղջիկն համոզեցին թողնել Պետերբուրգը, տղային՝ առժամանակ հետաձգել իր մտադրությունը։ Իվաշևը մեկն էր եռանդուն դավադիրներից. նրան դատապարտեցին ցմահ տաժանակրության։ Այս mèsalliance[1]-ից հարազատները չկարողացան փրկել նրան։ Հենց որ սոսկալի լուրը հասավ Փարիզ՝ դեռահաս աղջիկն, սա ուղևորվեց Պետերբուրգ և թույլտվություն խնդրեց մեկնելու Իրկուտսկի նահանգ՝ իր փեսացու Իվաշևի մոտ։ Բենկենդորֆը փորձեց ետ պահել նրան այդ հանցավոր մտադրությունից. չհաջողվեց, և նա զեկուցեց Նիկոլային։ Նիկոլայը հանձնարարեց բացատրել աղջիկն տաժանակրության աքսորված իրենց ամուսիններին՝ շղթայաձևած կանանց վիճակը, ավելացնելով, որ թագավորը նրան չի արգելում, բայց նա պիտի իմանա, որ եթե հավատարմությունից ելնելով իրենց ամուսինների հետ գնացող կանայք արժանի են որոշ ներողամտության, ապա ինքը, գիտակցաբար ամուսնանալով հանցագործի հետ, այդ բանի ամենաչնչին իրավունքն անգամ չունի.

Աղջիկն ու Նիկոլայը իրենց խոսքի տերը եղան. նա ուղևորվեց Սիբիր, իսկ Նիկոլայը ոչնչով չթեթևացրեց նրա վիճակը։

*Անողոք էր ցարը, բայց արդարացի։*

Ամբոցում թույլտվության մասին ոչինչ չգիտեին, և խեղճ աղջիկը. հասնելով այնտեղ, մինչև պետերբուրգցիներին ու տեղեկանային՝ պիտի սպասեր ամեն տեսակի նախկին հանցագործներով բնակեցված մի վայրում, զուրկ Իվաշևի մասին ինչ-որ բան իմանալու և իրենից նրան լուր տալու որևէ միջոցից։

Քիչ-քիչ աղջիկը ծանոթացավ իր նոր ընկերներին։ Նրանց մեջ կար աքսորված մի ավազակ. նա աշխատում էր ամբոցում. աղջիկը պատմեց նրան իր պատմությունը։ Հաջորդ

1 անհավասար ամուսնություն (ֆրանս.)։



որը ավազակը նրան մի երկտող բերեց Իվաշևից։ Մի օր հետո ավազակն առաջարկեց իր ծառայությունը՝ լուր բերել Իվաշևից և տանել աղջկա երկտողերը։ Նա առավոտից իրիկուն պարտավոր էր աշխատել ամրոցում. երբ վրա էր հասնում գիշերը, նա, չնայելով ոչ բուք-բորանին, ոչ էլ իր հոգնածությանը, վերցնում-բերում էր Իվաշևի նամակը և լուսաբացին վերադառնում իր աշխատանքին[1]։

Վերջապես եկավ թույլտվությունը, նրանց պսակեցին։ Մի քանի տարի անց տաժանակրությունը փոխարինվեց աքսորաբնակեցմամբ։ Նրանց վիճակը որոշ չափով բարելավվեց, բայց ուժերն արդեն սպառված էին. կինը առաջինը զոհվեց, բայց ուժերն արդեն սպառված էին. կինը առաջինը զոհվեց, գնաց կրած տառապանքներին. նա թոշնեց, ինչպես պիտի թոշներ տաք երկրների ծաղիկը սիբիրյան ձյան վրա։ Իվաշևը կնոջից հետո երկար չապրեց. նա մեռավ ուղիղ մի տարի անց, բայց այն ժամանակ էլ արդեն նա այս աշխարհում չէր. նրա նամակները (որ ցնցել էին Երրորդ բաժանմունքը) մի անհուն թախծի, սուրբ համբառնումի, մռայլ պոեզիայի դրոշմ ունեին. եթե կուզեք՝ նրանից հետո Իվաշևը չէր էլ ապրում, այլ հանդարտ ու հանդիսավոր մահանում էր։

Այս «վաթքագրությունը» չի ավարտվում նրանց մահով։ Տղայի աքսորումից հետո Իվաշևի հայրն իր կալվածքը հանձնեց ապօրինի որդուն, խնդրելով շմոռանալ թշվառ եղբորը և օգնել նրան։ Իվաշևներից մնացին երկու երեխա, երկու անանուն մանկիկներ, երկու ապագա կանտոնիստներ[2], Սիբիրի աքսորաբնակներ՝ անօգնական, անիրավունք, անհայր ու անմայր։ Իվաշևի եղբայրը երեխաներին իր մոտ վերցրեց

1 Իվաշևներին լավ ճանաչողները հետագայում ինձ ասում էին, որ իրենք կասկածում են ավազակի հետ կապված պատմությանը, և որ երեխաների վերադարձից ու եղբոր մասնակցությունից խոսելիս չի կարելի չվերհիշել Իվաշևի քույրերի ազնիվ վարմունքը։ Գործի մանրամասնությունները ես լսել եմ Յազիկովայից, որը գնացել էր Սիբիր՝ եղբոր (Իվաշևի) մոտ։ Բայց արդյո՞ք նա է պատմել ավազակի մասին՝ չեմ հիշում։ Չե՞ն շփոթել արդյոք Իվաշևային իշխանուհի Տրուբեցկայայի հետ, որը անծանոթ մի հերձվածողի միջոցով նամակներ ու դրամ էր ուղարկում իշխան Օբոլենսկուն։ Պահպանվե՞լ են, արդյոք, Իվաշևի նամակները։ Կարծում ենք, որ մենք այդ նամակների տնօրինության իրավունքն ունենք (ծանոթ.՝ Ա. Ի. Գերցենի)։

2 ծննդյան օրից զինապարտ։

նելու թույլտվություն հայցեց Նիկոլայից. Նիկոլայը թույլ տվեց։ Մի քանի տարի անց նա սիրտ արեց մի բան էլ խնդրել՝ վերադարձնել երեխաներին հոր ազգանունը. այդ էլ հաջողվեց։

Խռովության, դատաստանի վերաբերյալ պատմությունները, Մոսկվայում տիրող սարսափը սաստիկ ցնցեցին ինձ. իմ առաջ բացվում էր մի նոր աշխարհ, որը գնալով ավելի ու ավելի դառնում էր կենտրոնը իմ ողջ բարոյական գոյության։ Չգիտեմ ինչպես ստացվեց, բայց քիչ կամ շատ աղոտ ըմբռնելով, թե ինչ է տեղի ունենում, զգում էի, որ ես այն կողմի հետ չեմ, որտեղ թնդանոթն է ու հաղթությունը, բանտն է ու շղթան։ Պեստելի և իր ընկերների մահապատիժը լրիվ արթնացրեց հոգիս մանկական քնից։

Բոլորն ակնկալում էին դատապարտվածների վիճակի մեղմացում. թագադրության ժամանակը մոտենում էր։ Նույնիսկ հայրս, չնայած իր զգուշավորությանն ու թերահավատությանը, ասում էր, որ մահվան դատավճիռն ի կատար չի ածվի, որ այդ բոլորն արվում է մտքերը սաստելու համար։ Բայց նա, ինչպես և բոլորը, վատ գիտեր պատանի միապետին։ Նիկոլայը դուրս եկավ Պետերբուրգից և, չմտնելով Մոսկվա, կանգ առավ Պետրոսի պալատում... Մոսկվացիները չէին հավատում իրենց աչքերին, երբ «Մոսկովսկիե վեդոմոստիում» կարդացին հուլիսի 14-ի ահավոր լուրը։

Ռուս ժողովուրդը մահապատիժներից ետ էր վարժվել. Եկատերինա II-ի փոխարեն մահապատժի ենթարկված Միրովիչից* հետո, Պուգաչովից ու իր ընկերներից հետո մահապատիժներ չէին եղել. մարդիկ մեռնում էին մտրակի տակ, զինվորներին, մինչև մեռնեն, քշում էին շարքի միջով (օրենքին հակառակ), բայց մահապատիժ de jure[1] գոյություն չուներ։ Պատմում են, որ Պավելի օրոք Դոնում կազակների ինչ-որ մասնակի խռովություն է եղել, որին խառն էին երկու սպա։ Պավելը հրամայել է նրանց դատել ռազմական դատարանով և լիակատար իշխանություն է տվել հետմանին, թե՞ գեներալին։ Դատարանը նրանց դատապարտել է մահվան, բայց ոչ ոք չի համարձակվել հաստատել դատավճիռը. հետմանը գործը ներկայացրել է թագավորին։ «Նրանք բոլորն էլ կնիկ են,— ասել է Պավելը,— նրանք ուզում են մահապատիժն ինձ վրա բարդել, շա՜տ շնորհակալ եմ»,— և մահապատիժը փոխարինել է տաժանակրությամբ։

Նիկոլայը մահապատիժը մեր քրեական օրենսդրության մեջ մտցրեց սկզբում ապօրինաբար, իսկ հետո գրանցեց իր օրենսգրքում։

Ահավոր լուրն ստանալուց մի օր հետո մաղթանք կատարվեց Կրեմլում[1]։ Տոնելով մահապատիժը, Նիկոլայը կատարեց իր հանդիսավոր մուտքը Մոսկվա։ Այստեղ ես տեսնում էի նրան առաջին անգամ. նա ձիով գնում էր կառքի կողքից, որի մեջ նստած էին այրի կայսրուհին և երիտասարդ կայսրուհին։ Նիկոլայը գեղեցիկ էր, բայց այդ գեղեցկությունից սառնություն էր փչում. չկա մի ուրիշ դեմք, որ այդքան անողոք մերկացներ մարդու բնավորությունը, որքան նրա դեմքը։ Մեկեն ետ մղվող ճակատը, գանգի հաշվին աճած ներքին ծնոտը արտահայտում էին անհողդողդ կամք և նվազ միտք, ավելի դաժանություն, քան զգայականություն։ Բայց գլխավորը աչքերն էին՝ զուրկ որևէ ջերմությունից, որևէ բարեգթությունից. ցո՜ւրտ աչքեր։ Ես չեմ հավատում, որ նա երբևէ կրքոտ սիրած լինի որևէ կնոջ, ինչպես

[1] իրավական տեսակետից (լատ.)։



[1] «Նիկոլայի հաղթանակը հնգի դեմ Մոսկվայում տոնեցին մաղթանք կատարելով։ Կրեմլի մեջ միտրոպոլիտ Ֆիլարետը շնորհակալություն էր հղում առ աստված՝ սպանությունների համար։ Ցարի ողջ փերդաստանը աղոթում էր, նրա կողքին՝ սենատը, մինիստրները, իսկ չորս բոլորը, հակայական տարածության վրա, գվարդիայի խիտ խմբերն էին՝ ծնկաչոք, պխարաց, և նույնպես աղոթում էին։ Կրեմլի բարձունքներից որոտում էին թնդանոթները։

Կախաղանները երբեք չէին արժանացել այդպիսի հանդիսության, Նիկոլայը հասկացա՜վ հաղթանակի կարևորությունը։

Ես՝ տասնչորս տարեկան մի տղա, ամբոխի մեջ կորած, ներկա էի այդ մաղթանքին, և այստեղ, արնահոտ աղոթքով պղծված խորանի առաջ երդվում էի լուծել մահապատժի ենթարկվածների վրեժը և ինձ դատապարտում էի պայքարելու այդ գահի դեմ, այդ զոհասեղանի դեմ, այդ թնդանոթների դեմ։ Ես վրեժը չլուծեցի. գվարդիան և գահը, զոհասեղանն ու թնդանոթները՝ ամեն բան մնաց. բայց երեսուն տարի անց ես կանգնած եմ նույն գրոշի ներքո, որը ոչ մի անգամ չլքեցի» («Պոլյարնայա զվեզդա», 1855 թ.) (ծանոթ. Ա. Ի. Գերցենի)։

Պավելը՝ Լոպուխինային, ինչպես Ալեքսանդրը՝ բոլոր կանանց, բացի իր կնոջից. նա «բարեհաճ էր նրանց նկատմամբ», ո՞չ ավելին։

Վատիկանում կա մի նոր պատկերասրահ, որտեղ, կարծեմ, Պիոս VII-ը հավաքել է Հռոմից և արվարձաններից պեղված մեծ թվով արձաններ, կիսանդրիներ, արձանիկներ։ Հռոմի անկման ողջ պատմությունն այստեղ արտահայտված է հոնքերով, ճակատներով, շրթունքներով. Օգոստոսի դուստրերից մինչև Պոպեան՝ տիկինները հասցրեցին դառնալ թեթևաբարո կանայք, և թեթևաբարո կնոջ այդ կերպարը հաղթում է ու հարատևում. արական տիպը, այսպես ասած՝ գերազանցելով ինքն իրեն, Հանձինս Անտինոոսի ու Հերմաֆրոդիտի՝ երկփեղկվում է. մի կողմից՝ մարմնական ու բարոյական անկում, անառակությամբ ու որկրամոլությամբ, արյունով ու աշխարհի ամենայն ինչով ապականված դիմագծեր, անխոհ ու մանր, ինչպես հետերա Հելիոգաբալոսինը, և կամ կախ ընկած թշերով, ինչպես Գալբայինը. վերջին տիպը հրաշալիորեն մարմնավորվեց նեապոլիտանական թագավորի մեջ։ Բայց կա նաև մյուսը՝ զորավարների տիպը, որոնց մեջ մեռել է ամենայն քաղաքացիականը, ամենայն մարդկայինը և մնացել է սոսկ մի կիրք՝ հրամայելու կիրքը. միտքը՝ նեղլիկ, սիրտ բոլորովին չկա. դրանք իշխանատենչության քրմերն են. նրանց դիմագծերում նշմարվում է ուժ և դաժան կամք։ Այդպիսին են զվարդիական ու զորաբանակային կայսրերը, որոնց խառվարար լեգեոնները ժամապահ էին կարգում կայսրության գլխին։ Հենց դրանց մեջ ես գտա բաղում գլուխներ, որոնք հիշեցնում էին բեղ չունեցած ժամանակվա Նիկոլային։ Ես հատկանում եմ այդ մոդալ ու աննկուն պահակների անհրաժեշտությունը կատաղության մեջ մեռնողի կողքին, բայց փթթողի, պատանու ինչի՞ն են պետք դրանք։

Թեև ես-օր ու գիշեր տարված էի քաղաքական անուրջներով, իմ ըմբռնումները չէին հատկանշվում առանձնակի խորաթափանցությամբ. դրանք այնքան խառնիխուռն էին, որ ես երևակայում էի, թե իրոք պետերբուրգյան խառվությունը, ի միջի այլոց, նպատակ ուներ գահ բարձրացնելու թագաժառանգին*, սահմանափակելով նրա իշխանությունը։



Այստեղից էլ՝ մի ամբողջ տարվա երկրպագություն այդ հիմարի մեկին։ Այն ժամանակ նա ժողովրդի մեջ Նիկոլայից ավելի անուն ուներ. չեմ հասկանում ինչու, բայց զանգվածները, որոնց ոչ մի բարիք չէր արել, և զինվորները, որոնց միայն վնաս էր հասցրել, սիրում էին նրան։ Ես լավ հիշում եմ, թե ինչպես թագադրության ժամանակ նա քայլում էր գունատ Նիկոլայի կողքից, բաց դեղնավուն, խռիվ հոնքերը կիտած, լիտվական գվարդիականի դեղին օձիքով համազգեստը հագին, կուզ եկած և ուսերը մինչև ականջները վեր քաշած։ Իբրև կնքահայր՝ Նիկոլային պսակելով Ռուսաստանի հետ, նա գնաց լրիվ գրգռելու Վարշավան։ Մինչև 1830 թվականի նոյեմբերի 29-ը* նրա մասին չէին խոսում։

Գեղեցիկ չէր իմ հերոսը, նման կերպարանք Վատիկանում էլ չես ճարի։ Այդ տիպը ես գատչինյան կկոչեի, եթե տեսած չլինեի սարդինական թագավորին։

Ինքնին հասկանալի է, որ մենակությունն ինձ այժմ առաջվանից ավելի էր տանջում. ես ուզում էի որևէ մեկին հաղորդել իմ մտքերն ու երազանքները, ստուգել դրանք, լսել դրանց հաստատումը. ես չափազանց հպարտ էի իմ «շարագործ» լինելու գիտակցությամբ՝ որպեսզի լռեի այդ մասին կամ խոսեի պատահական մեկի հետ։

Առաջինը ռուսերենի ուսուցչին ընտրեցի։

Ի. Ե. Պրոտոպոպովը լի էր այն ազնիվ ու անորոշ լիբերալիզմով, որը հաճախ առաջին ճերմակ մազի, ամուսնության ու պաշտոնի հետ անցնում է, բայց, այնուամենայնիվ, ազնվացնում է մարդուն։ Իվան Եվդոկիմովիչը հուզված էր և գնալիս գրկեց ինձ՝ ասելով. «Տա՛ աստված, որ այդ զգացմունքները ձեր մեջ հասունանան ու ամրապնդվեն»։ Նրա համակրությունը անհուն բերկրանք պարգևեց ինձ։ Դրանից հետո նա սկսեց ինձ բերել մանր ձեռագրով արտագրված և խիստ մաշված փոքրիկ տետրեր՝ Պուշկինի «Ներքող ազատության», «Դաշույն», Ռիլեևի «Խոհեր» բանաստեղծությունների։ Ես թաքուն արտագրում էի դրանք*... (իսկ այժմ բացահայտ տպագրում եմ)։

Հասկանալի է, որ ընթերցանությանս նյութն էլ փոխվեց. ամենից առաջ՝ քաղաքականություն, իսկ գլխավորը՝ հեղափոխության պատմություն. ես այն գիտեի սոսկ m-me Պրո-

վոյի պատմածներով։ Նկուղի գրադարանում ձեռքս ընկավ ռոյալիստի գրած ինքնուրույն թվականների մի պատմություն։ Այնքա՜ն աշառու գիրք էր, որ նույնիսկ ես՝ տասնչորս տարեկանս, չհավատացի դրան։ Ներուկ Բուշոյից հարևանցիորեն լսել էի, որ հեղափոխության ժամանակ նա Փարիզում էր եղել. շատ էի ուզում հարցուփորձ անել նրան. բայց Բուշոն խիստ ու խոժոռ մարդ էր՝ մեծ քթով ու ակնոցով. նա երբեք ավելորդ զրույցներ չէր ունենում հետս. խոնարհում էր բայերը, թելադրում օրինակները, փնովում ինձ ու գնում՝ հենվելով ոստոտ հաստ ձեռնափայտին։

— Ինչի՞ համար մահապատժի ենթարկեցին Լյուդովիկոս XVI-ին,— դասի կեսին հարցրեցի նրան։

Ճերմակած մի հոնքը իջեցնելով ու վեր քաշելով մյուսը, ծերուկը նայեց ինձ, ակնոցը, սաղավարտի երեսկալի նման, բարձրացրեց ճակատին, հանեց մեծ կապույտ թաշկինակը և քիթը սրբելով, նշանակալից ասաց.

— Parce qu'il a été traître à la patrie[1].

— Եթե դուք դատավորների մեջ լինեիք՝ դատավճիռը կստորագրեի՞ք։

— Երկո՛ւ ձեռքով։

Այդ դասը հազար սուբժոնկտիվ[2] արժեր, այդքանն ինձ հերիք էր. պարզ էր՝ թագավորին տեղին էին մահապատժի ենթարկել։

Ներուկ Բուշոն չէր սիրում ինձ և փուչ չարաճճի էր համարում այն բանի համար, որ ես վատ էի պատրաստում դասերս. հաճախ նա ասում էր. «Ձեզանից բան դուրս չի գա», բայց երբ նկատեց իմ համակրանքը դեպի règicides[3]-ի իր գաղափարները, նրա զայրույթը փոխվեց բարյացակամության, ներում էր սխալներս և պատմում դիպվածներ 93 թվականից, պատմում էր, թե ինչպես հեռացավ Ֆրանսիայից, երբ «անբարոյականներն ու աճպարարները» գրության տերը դարձան։ Դասը նա ավարտում էր նույն նշանակալից լրջությամբ, չէր ժպտում, բայց արդեն ներողամտությամբ ասում էր.

[1] Որովհետև նա դավաճանեց հայրենիքին (ֆրանս.)։
[2] ըղձական եղանակ (ֆրանս.)։
[3] ցարասպան (ֆրանս.)։



— Ճիշտն ասած, ես կարծում էի, թե ձեզանից բան դուրս չի գա, բայց ձեր ազնիվ զգացմունքները կփրկեն ձեզ։

Մանկավարժական այս խրախուսանքներին ու համակրանքներին շուտով գումարվեց ավելի ջերմ և ինձ վրա ուժեղ ազդեցություն ունեցող մի համակրություն։

Տվերի նահանգի փոքր մի քաղաքում ապրում էր ավագ հորեղբորս աղջիկ-թոռը*։ Ես նրան գիտեի վաղ մանկությունից, բայց հազվադեպ էինք տեսնվում. տարին մի անգամ իր մորաքրոջ հետ նա հյուր էր գալիս մեզ Մոսկվա՝ ծննդյան տոներին կամ բարեկենդանին։ Այնուհանդերձ մենք մտերմացանք։ Նա մոտ հինգ տարով ինձնից մեծ էր, բայց այնքան կարճլիկ էր ու մանկատեսք, որ կարելի էր դեռ ինձ հասակակից համարել։ Ես սիրեցի նրան առանձնապես այն բանի համար, որ նա առաջինն սկսեց մարդու տեղ դնել ինձ, այսինքն՝ անվերջ չէր զարմանում, թե մեծացել եմ, չէր հարցնում, թե ի՞նչ եմ սովորում և արդյոք լա՞վ եմ սովորում, չե՞մ ուզում, արդյոք, մտնել զինվորական ծառայության և ո՞ր գունդն եմ ուզում գնալ,— այլ այնպես էր խոսում հետս, ինչպես մարդիկ առհասարակ խոսում են իրար հետ, չհրաժարվելով, սակայն, վարժապետի կեցվածքից, որը աղջիկները սիրում են պահպանել իրենցից մի քանի տարով փոքր տղաների նկատմամբ։

Մենք 1824 թվականից նամակագրության մեջ էինք, և շատ էլ գրում էինք, բայց նամակը էլի նույն գրիչն է ու թուղթը, նույն գրասեղանը՝ թանաքի լաքաներով ու գրչաթուղթը, նույն գրասեղանը՝ հատով փորագրած պատկերներով. ես ուզում էի տեսնել նրան, խոսել հետը նոր գաղափարներից. ահա ինչու կարելի է պատկերացնել, թե ի՞նչ ցնծությամբ ես իմացա, որ զարմուհիս փետրվարին (1826) պիտի գա ու մի քանի ամիս մեր հյուրը լինի։ Սեղանիս վրա ես խաղել էի մինչև նրա ժամանումը մնացած օրերի թիվը և ջնջում էի անցածները, երբեմն դիտմամբ մի երեք օր բաց թողնելով, որպեսզի վայելեի միանգամից ավելի շատ ջնջելու բավականությունը. այնուամենայնիվ, ժամանակը շատ էր երկարում. հետո ժամկետն էլ անցավ, նոր ժամկետ նշանակվեց ու այդ էլ անցավ, ինչպես միշտ լինում է։

Մի երեկո Իվան Եվդոկիմովիչի հետ նստած էինք իմ

դատաստենյակում, և Իվան Եվդոկիմովիչը սովորականի պես պոչ կոցնելով ամեն մի նախադասության, խոսում էր «հեկզամեորից», ձայնի ելևէջով ու ձեռքի շարժումով ուժգին շարդելով-վանկատելով գենդիչյան «Իլիականի»՝ ամեն մի բանաստեղծ, երբ հանկարծ բակում ձյունը ճռճռաց անսովոր, ոչ այնպես, ինչպես քաղաքային սահնակներն անցնելիս. զանգակը զնգզնգում էր մարող ձայնով, խոսակցություն՝ բակում... Միանգամից կարմրատակեցի, էլ ինչի՞ս էր պետք «Պելիսածին Աքիլլեսի» շարդված-վանկատված ցասումը. ես թուա նախասենյակ, իսկ մուշտակների, շալերի ու շարֆերի մեջ փաթաթված, գլխարկը դրած ու բրդոտ սպիտակ երկարաճիտ կոշիկներ հագած, սառնամանիքից, թե՞ հրճվանքից կաս-կարմիր կտրած տվերյան զարմուհիս նետվեց համբուրելու ինձ։

Իրենց վաղ պատանեկությունը, այդ օրերի տխրություններն ու ուրախությունները մարդիկ սովորաբար վերհիշում են մի քիչ ներողամիտ ժպիտով, կարծես ուզում են, սեթևեթելով, «խելքից պատուհասի» Սոֆյա Պավլովնայի նման ասել. «Երեխայությո՛ւն է». ոնց որ թե հետո ավելի լավն են դարձել, ավելի բուռն կամ ավելի շատ են զգում։ Երեխաները մի երեք տարուց ամաչում են իրենց խաղալիքներից. կորչե՛ն խաղալիքները, նրանք ուզում են մե՛ծ լինել, այնպես արագ հասակ են առնում, փոխվում, այդ բանը նրանք նկատում են բաճկոնից ու դասագրքերի էջերից, և, թվում է, շափահասները կարող էին հասկանալ, որ «երեխայությունը», պատանության երկու-երեք տարիների հետ միասին՝ կյանքի ամենալիարյուն, ամենանուրբ, ամենամթ, այն էլ գուցե ամենակարևոր մասն է, որն աննկատելի կանխորոշում է ողջ ապագան։

Քանի դեռ մարդ արագ քայլերով է առաջ գնում, առանց կանգ առնելու, վարանելու, քանի դեռ դեմ չի առել խորխորատի կամ վիզը չի կոտրել՝ կարծում է, թե կյանքը առջևում է, անցյալին վերևից է նայում և չի կարողանում գնահատել ներկան։ Բայց երբ փորձը տրորում է գարունքվա ծաղիկներն ու պաղեցնում ամռան շառագույնը, երբ նա գլխի է ընկնում, որ բուն կյանքն անցավ ու միայն նրա շարունակությունը մնաց ապրելու, այդ ժամանակ այլ կերպ է



կերաղառնում պատանեկության լուսավոր, ջերմ, չքնաղ հիշողություններին։

Բնությունը իր հավերժական հնարամտություններով ու մտահաման հնարանքներով մարդուն տալիս է ջահելություն, բայց հասուն մարդուն դարձնում է իրենը, ներքաշում, խճճում է նրան հասարակական ու ընտանեկան հարաբերությունների հյուսվածքի մեջ, որոնք երբեք քառորդով կախված չեն մարդուց. մարդը, հասկանալի է, իր գործողություններին անձնական բնույթ է տալիս, սակայն նա շատ ավելի քիչ է պատկանում ինքն իրեն, նվաղած է անհատի քնարական տարրը, և դրանից էլ թե՛ զգացմունքները, թե՛ վայելքը գնալով ավելի են թուլանում, բացի խելքից ու կամքից։

Զարմուհուս կյանքի ուղին վարդերով չէր պատած։ Մանուկ հասակից զրկվել էր մորից։ Հայրը մոլի թուղթ խաղանուկ հասակից զրկվել էր մորից։ Հայրը մոլի թուղթ խաղացող էր և բոլոր ի ծնե խաղամոլների նման՝ տասն անգամ աղքատացել էր, տասն անգամ հարստացել և վերջում, այնուամենայնիվ, լրիվ սնանկացել։ Իր ունեցվածքի les beaux restes[1] նա հատկացրեց ձիաբուծարանին, դրա վրա սնեռելով իր ողջ ուշքն ու կիրքը։ Նրա որդին, ուլանական յունկերը, զարմուհուս միակ եղբայրը, որ շատ բարի պատանի էր, ուղիղ դեպի կործանում էր գնում. տասնինը տարեկանում նա արդեն հորից ավելի մոլի խաղացող էր։

Հիսունին մոտ, հայրը, առանց որևէ անհրաժեշտության, ամուսնացավ Սմոլնի վանքի՝ կուսության մեջ պառաված ծի սանուհու հետ։ Ես դեռ չէի հանդիպել պետերբուրգյան այդպիսի մի իսկական, կատարյալ սանուհու։ Նա եղել էր ամենառաջավոր սանուհիներից մեկը և հետո վարժուհի դարձել վանքում. նիհար, շիկահեր, կարճատես՝ նրա արտաքինի մեջ իսկ արդեն խրատական ու հորդորող ինչ-որ բան կար։ Թնավ էլ հիմար չլինելով, նա խոսքի մեջ համակվում էր սառն ոգևորությամբ, արտահայտվում էր առաքինության ու նվիրումի մասին պատրաստի ֆրազներով, անգիր գիտեր ժամանակագրությունն ու աշխարհագրությունը, զգվելիության աստիճանի ճիշտ խոսում էր ֆրանսերեն և իր մեջ

1 մնացորդները (ֆրանս.)։

թաքցնում չինծու, ճիզվիտական համեստության հասնող մի ինքնասիրություն։ «Դեղին շալավոր սեմինարիստների»՝ այս ընդհանուր հատկանիշներից բացի, նա ուներ զուտ նեայական կամ սմոլնիական գծեր։ Նա երկինք էր հառում արցունքով լի աչքերը՝ երբ խոսում էր իրենց համայն մոր (կայսրուհի Մարիա Ֆեոդորովնայի) այցելություններից, սիրահարված էր Ալեքսանդր կայսրին և, հիշում եմ, մի մեդալիոն, թե՞ մատանի էր կրում՝ մեջը Ելիզավետա կայսրուհու նամակից մի հատված. „Il a repris son sourire de bienveillance“[1].

Պատկերացրեք կուռ մի trio, կազմված խազամոլ և ձիերի, գնչուների, քեֆ ու աղմուկի, ձիարշավի ու մրցավազքի սիրահար հորից, լիակատար անկախության մեջ դաստիարակված, տանը սրտի ուզածն անելու վարժված աղջկանից և պառաված վարժուհուց հանկարծ երիտասարդ ամուսնու վերածված ուսյալ կույսից։ Իհարկե, նա չէր սիրում խորթ աղջկան, խորթ աղջիկն էլ, իհարկե, նրան չէր սիրում։ Առհասարակ, երեսունհինգ տարեկան կանանց և տասնյոթամյա աղջիկների միջև մեծ ընկերություն լինում է այն ժամանակ, երբ առաջինները անձնազոհաբար որոշում են սեռ չունենալ։

Ինձ դույզն իսկ զարմանք չի պատճառում խորթ աղջիկների և խորթ մայրերի սովորական թշնամությունը, դա բնական է, դա բարոյական է։ Մոր տեղը զբաղեցնող նոր անձը երեխաների մեջ նողկանք է հարուցում։ Երկրորդ ամուսնությունը մի երկրորդ հուզարկավորություն է նրանց համար։ Այդ զգացմունքի մեջ վառ արտահայտվում է մանկական սերը, որ շշնջում է որբի ականջին. «Քո հոր կինը իսկի էլ քո մայրը չէ»։ Քրիստոնեությունն սկզբում հասկանում էր, որ ամուսնության իր տարածած ըմբռնումով, հոգու անմահության իր քարոզած հասկացողությամբ՝ երկրորդ ամուսնությունը առհասարակ անհեթեթություն է. բայց անվերջ վիշումներ անելով երկրային կյանքին, եկեղեցին խորամանկելու մեջ չափից ավելի ջանաց ու դեմ առավ կյանքի անողոք տրամաբանությանը՝ մանկան պարզ սրտին, որը գործնականորեն ապստամբում է հոր ընկերուհուն իր մայրը համարելու բարեպաշտական անհեթեթության դեմ։

Կինն էլ, իր հերթին, պսակվելուց հետո պատրաստի ընտանիք, երեխաներ գտնելով, անհարմար վիճակի մեջ է ընկնում. ինքը նրանց հետ անելիք չունի, ինքը պիտի զուտ այնպիսի զգացմունքներ դրսևորի, որ չի կարող ունենալ, ինքը պիտի իրեն և ուրիշներին համոզի, որ օտար երեխաներին իր երեխաների չափ սիրում է։

Ուրեմն և՝ փոխադարձաբար իրար չսիրելու մեջ ես բոլորովին չեմ մեղադրում ոչ վանքի մենուհուն, ոչ էլ զարմուհուս, բայց հասկանում եմ, թե կարգապահությանն անսովոր չահել աղջիկն ինչպե՞ս էր ազատության ձգտում ծնողական տնից դուրս՝ որտեղ էլ լինի։ Ծերացող հայրը գնալով ավելի էր հնազանդվում յուր ուսյալ կնոջը, ուլանը՝ եղբայրը, գնալով իրեն ավելի անպատշաճ էր պահում, մի խոսքով՝ տանը դժվար էր, և նա, վերջապես, խորթ մորը համոզեց թույլ տալ իրեն՝ մի քանի ամսով, գուցեև մի տարով, մեր տանը մնալ։

Ժամանելու հաջորդ օրը զարմուհիս տակնուվրա արեց պարապմունքներիս ողջ կարգը, բացի դասերից. ինքնակամորեն նշանակեց ընդհանուր ընթերցանության ժամեր, խորհուրդ չտվեց վեպեր կարդալ, այլ հանձնարարեց Սեգյուրի* ընդհանուր պատմությունը և Անաքրասիսի* ճանապարհորդությունը։ Ստոիկյան տեսակետից ելնելով՝ նա ընդդիմանում էր փաթաթած թուփունը թաքուն ծխելու իմ ուժեղ հակումներին (այն ժամանակ դեռևս գլանակ չկար)։ Առհասարակ նա սիրում էր գլխիս խրատ կարդալ. խրատները չէի կատարում, բայց գոնե հանգիստ լսում էի։ Բարեբախտաբար, նա հմտություն չուներ և մոռանալով իր իսկ կարգադրությունները՝ հնագիտական վեպի փոխարեն հետս միասին Ցշոկեի* վիպակներն էր կարդում և տպասավոր տղային թաքուն ուղարկում էր ձմռանը՝ աղանձ ու ձեթով պատրաստած սիսեռի կիսել, իսկ ամռանը՝ հաղարջ ու մոշ գնելու։

Կարծում եմ, որ զարմուհիս ինձ վրա թողել է շատ լավ ազդեցություն. նրա հետ միասին պատանեկությանս մենախուցը մտավ տաք մի շիթ, որը ջերմացրեց, գուցեև պահ-

[1] «Նրա շուրթերին նորի՞ց երևաց բարեհաճ ժպիտը» (Ֆրանս.)։

պանեց նոր-նոր փթթող զգացմունքներս, որոնք կարող էին լրիվ ճզմվել հորս հեգնանքի տակ։ Ես սովորեցի լինել ուշադիր, մի խոսքից տխրել, հոգալ ընկերոջս մասին, սիրել, ես սովորեցի խոսել զգացմունքներից։ Նա սատարեց իմ քաղաքական ձգտումները, արտասովոր գալիք, փառք գուշակեց ինձ համար, և ես մանկական ինքնասիրությամբ հավատում էի նրան, թե ապագա «Բրուտոսն եմ կամ Ֆաբրիցիուսը»*»։

Նա միայն ինձ էր վստահել Ալեքսանդրյան հուսարական գնդի՝ սև թիկնոցով ու սև համազգեստով սպաներից մեկի հանդեպ տածած սիրո գաղտնիքը. դա իսկական գաղտնիք էր, քանզի ինքը՝ հուսարն էլ, ղեկավարելով իր էսկադրոնը, երբեք չէր կասկածում, թե իր համար ի՞նչ մաքուր մի կրակ էր թրթռում տասնութամյա աղջկա կրծքի տակ։ Զգիտեմ, նախանձո՞ւմ էի, արդյոք, հուսարի բախտին,— երևի մի քիչ,— բայց հպարտ էի, որ զարմուհիս ընտրել է ինձ իր հավատարմատարը, և երևակայում էի (Վերթերի նման), թե դա մեկն է այն ողբերգական կրքերից, որ ունենալու է ինքնասպանությամբ, թույնով ու դաշույնով ուղեկցվող վեհ մի լուծում. նույնիսկ մտքովս անցնում էր հուսարի մոտ գնալ և ամեն ինչ պատմել։

Զարմուհիս Կորչևայից փետրագնդակներ էր բերել, մեկի մեջ քորոց էր խրված, և նա երբեք ուրիշ փետրագնդակով չէր խաղում, ու ամեն անգամ, երբ այդ մեկը իմ կամ ուրիշի ձեռքն էր ընկնում՝ ետ էր վերցնում, ասելով, թե ինքը շատ է վարժվել դրան։ Espiègleries[1]-ի դեմ, որը միշտ էլ իմ շար գայթակղիչն է եղել, ինձ դրդեց փոխել քորոցի տեղը, այսինքն՝ այն խրել ուրիշ փետրագնդակի մեջ։ Կատակս լիովին հաջողվեց, զարմուհիս շարունակ վերցնում էր այն փետրագնդակը, որի մեջ քորոցն էր։ Մի երկու շաբաթ անց ես նրան ասացի իսկությունը. դեմքը այլայլվեց, աչքերը լցվեցին, և նա իր սենյակը քաշվեց։ Ես վախեցած էի, դժբախտ, ու մի կես ժամ սպասելով՝ գնացի մոտը. սենյակը կողպ էր, խնդրեցի դուռը բանալ, զարմուհիս ներս չէր թողնում, ասում էր, որ ինքը հիվանդ է, որ ես իր բարեկամը չեմ, անհոգի մի տղա եմ։ Ես երկտող գրեցի նրան, պաղատեցի ներել ինձ. թեյից հետո մենք հաշտվեցինք, ես համբուրեցի նրա ձեռքը, նա գրկեց ինձ ու բացատրեց գործի ողջ կարևորությունը։ Մի տարի առաջ հուսարը ճաշել էր նրանց տանը ու ճաշից հետո իր հետ փետրագնդակ խաղացել։ Նրա փետրագնդակն էլ հենց նշան էր արված։ Խիղճս տանջում էր, ես մտածում էի, որ իսկական սրբապղծություն եմ արել։

Զարմուհիս մնաց մինչև հոկտեմբեր ամիսը։ Հայրը ետ էր կանչում նրան և խոստանում մի տարի հետո թողնել դալու մեզ մոտ՝ Վասիլևսկոյե։ Մենք սարսափով էինք սպասում բաժանմանը. և ահա աշնան մի օր կառքը եկավ նրա եռակից. նրա աղախինը տարավ տեղավորելու զամբյուղներն ու տուփերը, մեր ծառաները մի ամբողջ շաբաթվա զանազան ճամփապաշար դրին, հավաքվել էին շքամուտքի առաջ ու հրաժեշտ էին տալիս։ Մենք պինդ գրկախառնվեցինք. նա լաց էր լինում, ես էլ էի լալիս. կառքը փողոց դուրս եկավ, ծալեց դեպի նրբանցքը հենց այն տեղից, որտեղ աղանձ ու սխտոր կխսել էին ծախում, ու անհետացավ. ես մի քիչ քայլեցի բակում. մի տեսակ սարսռում էի ու վատ էի, հետո իմ սենյակը գնացի՝ այդտեղ էլ կարծես դատարկ էր ու ցուրտ, սկսեցի Իվան Եվդոկիմովիչի տված դասը սովորել, բայց մտքիս մեջ կառքն էր. տեսնես հիմա ուր հասավ, ուղեկալն անցա՞վ, թե չէ։

Ինձ մի՛ բան էր մխիթարում. գալիք հունիսին Վասիլևսկոյեում միասի՛ն կլինենք։

Գյուղում լինելն ինձ համար հարության ժամանակ էր, ես մոլեգին սիրում էի գյուղական կյանքը։ Անտառներ, դաշտեր ու անհուն ազատություն. այս ամենը այնքա՞ն նոր էր ինձ՝ բամբակի մեջ, քարե պատերի ետևում մեծացածիս համար, որը առանց հարցնելու և առանց սպասավորի ուղեկցության ոչ մի պատրվակով սիրտ չէր անում դուրս գալ դարպասից...

«Այս տարի մենք Վասիլևսկոյե գնալո՞ւ ենք, թե ոչ». այս հարցը գարնանից խիստ զբաղեցնում էր ինձ։ Ամեն անգամ հայրս ասում էր, թե այս տարի ինքը շուտ է գնալու, թե ինքն ուզում է տեսնել՝ ինչպես է բացվում տերեւը,

[1] շարաճճիություն (ֆրանս.)։

բայց երբեք չէր կարողանում հուլիսից շուտ ճամփա ելնել։ Երբեմն էլ այնքան էր ուշացնում, որ մենք բոլորովին չէինք գնում։ Ամեն ձմեռ նա գրում էր գյուղ, որ տունը պատրաստեն ու տաքացնեն, սակայն դա ավելի շատ նուրբ քաղաքականության նկատառումներով էր արվում, քան թե լրջորեն. արվում էր, որ տանուտերն ու տեղի պաշտոնյան, վախենալով մոտալուտ ժամանումից, ավելի ուշադիր հետևեին տնտեսությանը։

- Կարծես թե գնում ենք։ Հայրս Սենատորին ասում էր, թե ինքը շատ կուզենար հանգստանալ գյուղում, թե տնտեսությունն իր հսկողության կարիքն ունի, բայց էլի շաբաթներ էին անցնում։

Քիչ-քիչ մեր գնալն ավելի հավանական էր դառնում, սկսում էին ուղարկել պաշարը. շաքար, թեյ, զանազան ձավարեղեն, գինի, բայց նորից գործը կանգ էր առնում. և, վերջապես, հրաման տանուտերին՝ այսինչ օրը գյուղացիներից այսքան ձի ուղարկել. ուրեմն գնո՞ւմ ենք, գնո՞ւմ։

Այն ժամանակ ես չէի մտածում, թե գյուղացիների համար ի՞նչ ծանր բան է աշխատանքի եռուն պահին չորս կամ հինգ օրվա կորուստը, սրտանց ուրախանում էի և շտապում գաղավորել տետրերս ու գրքերս։ Ձիերը բերում էին, ներքին բավականությամբ ես լսում էի նրանց ծամելն ու փռնչոցը բակում և լրջորեն մասնակցում էի կառապանների իրարանցմանը, մարդկանց վեճերին, թե ով որտեղ պիտի նստի, ով որտեղ պիտի դնի իր ունեցած-չունեցածը. ծառաների սենյակում մինչև լույս վառվում էր ճրագը, և բոլորը կապում էին իրենց, տեղից-տեղ քարշ տալիս պարկերն ու տոպրակները, հագնում ճամփորդական շորեր (անցնելիքն ընդամենը մի ութսո՞ւն վերստ ճանապարհ էր)։ Բոլորից շատ գբրգրված էր լինում հորս սենեկապետը, նա զգում էր դասավորվելու ողջ կարևորությունը, կատաղած դեն էր նետում այն ամենը, ինչ ուրիշներն էին դնում, սրտնեղությունից գլխի մազերն էր փետում և անողոք էր։

Հաջորդ օրը հայրս բնավ էլ վաղ չէր վեր կենում, թվում էր, թե նույնիսկ սովորականից ավելի ուշ էր աթթանում, նույն դանդաղությամբ խմում էր սուրճը և, վերջապես, ժամը տասնմեկին մոտ հրամայում լծել ձիերը։ Ջորստեղակաղի կառքի ետևից, որին լծված էին սպիտակ վեց ձիեր, գնում էին երեք, երբեմն էլ չորս սայլակառք՝ քառաձիվ, կիսակառքը, ֆուրգոնը կամ սրա փոխարեն՝ երկու քարշասայլ. դրանք բոլորն էլ լցված էին ծառաներով ու իրերով։ Ճնայած նախօրոք ուղարկված սայլախմբին, նորերն էլ լեփ-լեցուն էին, այնպես որ՝ ոչ ոք չէր կարողանում հարմար նստել։

Կես ճանապարհին, ճաշելու և ձիերին կեր տալու համար, մենք կանգ էինք առնում Պերխուշկովո մեծ գյուղում, որի անունը մտել է Նապոլեոնի տեղեկագրերի մեջ։ Այդ գյուղը պատկանում էր այն «ավագ եղբոր» որդուն, որի մասին խոսել ենք բաժանության առիթով։ Աղայի բարձիթողի արված տունը հարթ, անհրապույր դաշտերով շրջապատված մեծ ճանապարհի վրա էր, բայց քաղաքային նեղվածքից հետո այդ փոշոտ հեռաստանն էլ շատ էր դուր գալիս ինձ։ Տանձմոված հատակն ու սանդուղքի աստիճանները ճռճռում էին, քայլերն ու ձայները ուժեղ էին հնչում, պատերն ասես էին, քայլերն ու ձայները ուժեղ էին հնչում, պատերն ասես էին, դարձանքով արձագանքում էին։ Նախկին տիրոջ թանգարմանքով արձագանքում էին։ Նախկին տիրոջ թանգարանից բերված հին կահույքն իր դարն էր ապրում այս աքսորավայրում, ես հետաքրքրությամբ անցնում էի մի սենյակից մյուսը, վերև էի բարձրանում, ներքև իջնում, գնում խոհանոց։ Այնտեղ մեր խոհարարը, դժգոհ ու հեգնալից տնքով, հապճեպ պատրաստում էր ճանապարհաճաշը։ Խոհանոցում սովորականի պես նստած էր կալվածքի կառավարիչը՝ գլխին ուռուցք ունեցող ալեհեր մի ծերուկ, խոհարարը, դառնալով նրան, քննադատում էր սալաքարն ու օջախը, կառավարիչը լսում էր ու մեկ-մեկ կարճ ու կարգով պատասխանում. «Հա՛, հենց էդպես է, որ կա»։ և տխուր նայում էր այդ ողջ իրարանցմանը, մտածելով՝ ա՞ՐՐ պիտի արանք գնան՝ պրծնենք։

Ճաշը մատուցվում էր թիթեղից կամ ինչ-որ խառնուրդից պատրաստված անգլիական հատուկ սպասքով, որը գնված էր ad hoc[1]։ Այդ ընթացքում ձիերն արդեն լծված էին լինում, նախասենյակում ու սրահում հավաքվում էին պալատական դիմավորումների ու ճանապարհումների սիրա-

1 ովյալ առիթով (լատ.)։

հարները՝ գյուղի հաց ու շրի հույսին մնացած ծառաներ, մի երեսուն տարի առաջ սիրունիկ աղախիններ եղած պառավներ,— աղայական տների այդ ամբողջ մորեխակույտը, որ առանց սեփական մեղքի, խժռում էր գյուղացու վաստակը, ինչպես իսկական մորեխը։ Նրանց հետ գալիս էին բաց, հաբգագույն մազերով երեխաները. բոբիկ ու կեղտոտ՝ նրանք համառորեն առաջ էին խցկվում, պառավները համառորեն նրանց ետ էին քաշում. երեխաները բղավում-ճղավում էին, պառավները սաստում էին նրանց, ամեն առիթով բռնացնում էին ինձ ու ամեն տարի զարմանում, որ այդքան մեծացել եմ։ Հայրս մի քանի խոսք էր փոխանակում նրանց հետ. ոմանք մոտենում էին համբուրելու ձեռքը, որը նա երբեք չէր տալիս, մյուսները գլուխ էին խոնարհում,— և մենք մեկնում էինք։

Իշխան Գոլիցինի* Վյազեմսկ կալվածքից մի քանի վերստ այս կողմ, անտառի փեշին, ձի նստած մեր գալուն էր սպասում Վասիլևսկոյեի տանտուտերը և ուղեկցում միջգյուղյա ճանապարհով։ Գյուղում, աղայի տան մոտ, դեպի ուր տանում էր լորենու երկար ծառուղին, մեզ դիմավորում էին քահանան, նրա կինը, տիրացուները, ծառաները, մի քանի գյուղացի ու գիժ Գրոնկան. միայն նա ուներ մարդկային արժանապատվության զգացում, չէր հանում կեղտոտ շլյապան, ժպտում էր քիչ հեռու կանգնած ու տռիկ տալիս՝ հենց որ քաղաքացիներից մեկն ու մեկն ուզում էր մոտենալ իրեն։

Ես քիչ եմ տեսել Վասիլևսկոյեից ավելի երբաշեղ մի վայր։ Յուսուպովի Կունցևոն և Արխանգելսկոյեն կամ Սավվայի վանքի դիմացի Լոպուխինի կալվածքն՝ խմացողին բավական է ասել, որ Վասիլևսկոյեն ընկած է նույն ափի շարունակության վրա՝ Սավվայի վանքից մոտ երեսուն վերստ հեռու։ Թեքության վրա գյուղն է, եկեղեցին ու ազայի հին տունը։ Մյուս կողմում սարն է ու փոքր մի գյուղ։ այնտեղ հայրս նոր տուն շինեց։ Տնից բացվող տեսարանն ընդգրկում էր շրջակա ասանհինգ վերստը. օրորվելով՝ անվերջ սփռվում էր արտերի ծովը, ասա ու անդ երևում էին զանազան դաստակերտներ ու սպիտակ եկեղեցիներով գյուղեր, գույնզգույն անտառները կիսաբոլոր շրջանակ էին կազմել, և



այդ բոլորի միջով ձգվում էր Մոսկվա գետի կապույտ ժապավենը։ Առավոտ կանուխ ես բաց էի անում վերնահարկի իմ սենյակի պատուհանը և նայում էի, ու լսում էի, ու շնչում էի։

Այս բոլորով հանդերձ, ափսոսս գալիս էր հին քարե տունը. նրանից էր գուցե, որ առաջին անգամ ես այդ տանը տունը. նրանից էր գուցե, որ առաջին անգամ ես այդ տանը հանդիպեցի գյուղին. ես այնպե՞ս սիրում էի դեպի այդ տունը տանող երկար, ստվերոտ ծառուղին ու մերձակա վայրիացած այգին. տունը քանդվում էր, և նախասրահի մի ճեղքվածքում աճել էր բարակ, ուղղաձիգ կեչին։ Դեպի ձախ՝ գետի երկայնքով ձգվում էր ուռենու ծառուղին, որից այն կողմ, ընդհուպ մինչև գետը, եղեգնուտն էր ու ճերմակ ավազը. այդ ավազի վրա ու այդ եղեգնուտում, պատահել է, խաղացել եմ ամբողջ առավոտը, երբ տասնմեկ-տասներկու տարեկան էի։ Տան առաջ համարյա միշտ նստած էր լինում կուշ եկած ծեր այգեպանը, դաղձի ջուր էր թորում, հատապտուղներ եփում ու թաքուն ամեն տեսակ բանջարեղեն ուտեցնում ինձ։ Այգում բազում ագռավներ կային. նրանց բները ծածկում էին ծառերի կատարները, ագռավները պտտվում էին դրանց շուրջն ու կռկռում. մեկ-մեկ, առանձնապես երեկոյան կողմերը, նրանք վեր էին թռչում հարյուրներով, աղմկելով ու բնից հանելով մյուսներին. երբեմն մեկն ու մեկը արագորեն ծառից ծառ կթռչեր, և ամենուր խաղաղություն կիջներ... Իսկ գիշերը հեռվում ինչ-որ տեղ մերթ մանկան պես լաց էր լինում, մերթ բարձրաձայն քրքջում էր բուն... Ես վախենում էի այդ վայրի, լալաձայն հառաչ ձայներից, բայց էլի գնում էի լսելու այդ ձայները։

Ամեն տարի կամ գոնե երկու տարին մեկ մենք գնում էինք Վասիլևսկոյե։ Վերադառնալիս ես պատշգամբի կողքի պատին նշում էի հասակս և, երբ նորից էինք գալիս՝ անմիջապես գնում էի տեսնելու, թե ինչքան եմ ավելացել։ Բայց գյուղը ինձ համար միայն ֆիզիկական աճիս չափանիշը չէր. պարբերական վերադարձը միևնույն իրականությանը ակնհայտ վկայում էր ներքին զարգացմանս տարբերությունը։ Ուրիշ գրքեր էի բերում, ուրիշ բաներ էին զբաղեցնում ինձ։ 1823-ին ես դեռ կատարյալ երեխա էի, մոտինս մանկական գրքեր էին, դրանք էլ չէի կարդում, այլ ամենից շատ զբաղ-

վում էի նապաստակով ու սկյուռիկով, որոնք ապրում էին իմ սենյակին կից խորդանոցում։ Հիմնական հաճույքներից մեկն այն էր, որ հայրս թույլ էր տալիս ամեն երեկո մի անգամ կրակել ֆալկոնետից[1], ըստ որում, ինքնին հասկանալի է, որ ամբողջ ծառայախումբն զբաղվում էր դրանով, և հիսնամյա ալեհեր մարդիկ էլ ինձ նման զվարճանում էին։ 1827-ին ես հետս բերեցի Պլուտարքոս ու Շիլլերառավոտը վաղ գնում էի անտառ, թավուտը, հնարավորին չափ հեռու մի տեղ, պառկում ծառի տակ ու, երևակայելով, թե բոհեմական անտառներում եմ, ինքս ինձ համար բարձրաձայն կարդում էի. բայց դրանից ոչ պակաս ինձ դեռևս հրապուրում էր այն ամբարտակը, որ ես սարքում էի ծառատողաներից մեկի օգնությամբ առվակի վրա և օրը տասն անգամ վազում էի ստուգելու և նորոգելու։ 1829 և 30 թվականներին ես փիլիսոփայական հոդված էի գրում Շիլլերի «Վալենշտայնի» մասին, և նախկին խաղերից միայն ֆալկոնետն էր պահպանել իր ուժը։

Ի դեպ, հրաձգությունից բացի, մի այլ հաճույք էլ կար, որ դարձավ իմ անփոփոխ կիրքը— գյուղական երեկոները. դրանք հիմա էլ, այն ժամանակվա պես, ինձ համար բարեպաշտության, անդորրության ու պոեզիայի պահեր են։ Իմ կյանքի վերջին անչար-լուսավոր բոպեներից մեկը նույնպես ինձ հիշեցնում է գյուղի երեկոն։ Հանդիսավոր, վառվռուն արևն իջնում էր դեպի հուր-օվկիանոսը, լուծվում նրա մեջ... Հանկարծ թանձր ծիրանին փոխվեց կապույտ մութի, ամեն ինչ շղարշվեց ծխագույն գոլորշիով. Իտալիայում մթնշաղն արագ է սկսվում։ Մենք հեծանք շորիները. Ֆրասկատիից Հռոմ գնալիս* պիտի անցնեինք փոքրիկ մի գյուղով. տեղտեղ արդեն վառվում էին ճրագները, շորս կողմը խաղաղ էր, շորիների սմբակները, քարին առնելով, զիլ տկտկում էին. Ապենիններից փչում էր թարմ, մի քիչ խոնավ քամի։ Գյուղի ծայրին, որմնախորշի մեջ, կանգնած էր փոքր մի տիրամայր, նրա առաջ վառվում էր լապտերը, աշխատանքից եկող գեղջկուհիները, սպիտակ գլխաշորով, ծնկի իջան ու աղոթք երգեցին, մոտից անցնող աղքատ պիֆերարները[1] միացան նրանց. ես խորապես ցնցված, խորապես հուզված էի։ Մենք իրար ֆայեցինք... ու դանդաղ գնացինք դեպի պանդոկ, որտեղ մեզ էր սպասում կառքը։ Տուն գնալիս ես պատմում էի վասիլևսկոյեի երեկոների մասին։ Բայց ո՞նց պատմես։

Այգու ծառերը
Կանգնած էին լուռ։ Բլուրից բլուր
Ձգվում էր գյուղի ցանկապարիսպը,
Եվ տուն էր դառնում հոտը՝
Թախծոտ ու հանդարտ։

(«Հոմար»)

... Հովիվը թափահարում է երկար մտրակն ու նվագում կեչեկեղև սրինգը. տուն դարձող հոտի բառաչ, մայուն. դոփյուն՝ կամուրջի վրա, շունը հաչոցով քշում-բերում է մոլորված ոչխարին, և սա փախչում է մի տեսակ տոնիկ տալով. իսկ այստեղ՝ դաշտից վերադարձող գեղջկուհիների երգեր, որ գնալով ավելի ու ավելի են մոտենում. բայց կածանը ոլորվում է աջ, և հնչյունները նորից հեռանում են։ Դարպասները ճռռացնելով իրենց կովն ու ոչխարը դիմավորելու են ելնում տղա ու աղջիկ. աշխատանքը վերջացել է։ Երեխաները խաղում են փողոցում, գետի ափին, և գետի վրա ու վերջալույսի մեջ զիլ ու զուլալ հնչում է նրանց ձայնը. օդին խառնվում է մարագների խանձահոտը, շաղն սկսում է քիչ-քիչ ծխի պես սփռվել դաշտով մեկ, անտառի քամին ձայնում է այնպես, ասես տերևները եռ են գալիս, իսկ այստեղ փայլակը դողալով, մարող, թրթռուն լազուրով է լուսավորում շրջապատը, և Վերա Արտամոնովնան, ինձ գտնելով լորենու տակ, ավելի շուտ փնթփնթալով, քան թե բարկացած՝ ասում է.

— Էս ի՞նչ բան է, ոչ մի տեղ ձեզ գտնել չի լինում, թեյն էլ վաղուց պատրաստ է, ամենքն էլ հավաքվել են, իսկ ես հա՛ ձեզ եմ փնտրում, ոտքերս հոգնեցին, վազվզելու տարիքս անցել է. համ էլ թաց խոտին պառկե՞լ որն է... ա՛յ, վաղը հարբուխ կընկնեք, հաստա՛տ կընկնեք։

— Դե լա՛վ, լա՛վ,— ծիծաղելով ասում էի ես պառա-

[1] փոքր արամաչափի հին թնդանոթ։

[1] որինգ նվագող երաժիշտներ (իտ. pifferaro-ից)։

վին,— հարբուխ էլ չեմ ընկնի, թեյ էլ չեմ ուզում, բայց դուք ինձ համար թաքուն կաթնասեր պահեք,- լավից, ամենաերեսի քաշածը։

— Իսկը որ՝ ի՞նչ պտուղ եք դուք, ձեզ վրա բարկանալ էլ չի լինում... Համո՞վ բալա եք։ Սերը առանց ձեր խնդրանքի էլ արդեն պատրաստել եմ։ Էս էլ կայծակը... Լավ է, հաց կլինի։

Ու թռչկոտելով, շվշվացնելով՝ գնում էի տուն։

1832 թվականից հետո մենք այլևս Վասիլևսկոյե չգնացինք։ Աքսորում եղածս ժամանակ հայրս ծախեց այն։ 1843 թվականին մենք ապրում էինք մերձմոսկովյան մյուս ամառանոցում, Զվենիգորոդի նահանգում, Վասիլևսկոյեից մոտ քսան վերստ հեռու։ Էլ ո՞նց չգնայինք մեր հին օջախին տեսության։ Եվ ահա մենք գնում ենք միջգյուղյա նույն ճամփով. մեր առջև բացվում են ծանոթ փշատերև անտառն ու կաղնուտով պատած սարը, իսկ սա գետի ծանծաղուտն է, այն ծանծաղուտը, որ քսան տարի առաջ հիացնում էր ինձ. ջուրը ցայտում է, խշրտում են մանր քարերը, կառապանները գոռգոռում են, ձիերը զոռ են տալիս... Ահա և գյուղը, քահանայի տունը. գորշ կապան հագած նստում էր նա այստեղ, փոքրիկ թախտին, պարզաբիրտ, բարի, շիկահեր, հավերժ քրտինքի մեջ, միշտ ինչ-որ բան ուտելիս ու անվերջ զկուտցից տանջվելով։ Սա էլ, ահա, գրասենյակը, որտեղ գյուղական պաշտոնյա Վասիլի Եպիֆանովը, որ միշտ խմած էր լինում, իր հաշվետվություններն էր գրում թղթին կոտրած, գրիչը ամենածայրից բռնած, միջնամատը պինդ տակը ծալած։ Քահանան մեռել է, Վասիլի Եպիֆանովը ուրիշ գյուղում է հաշվետվություններ գրում ու խմում։ Մենք կանգ առանք տանուտերի դռանը, կինն էր տանը, մարդը գաշտ էր գնացել։

Ինչ-որ օտարոտի բան էր տեղի ունեցել այստեղ այս տարվա մեջ. մեր տան փոխարեն տարի վրա կանգնած էր ուրիշ մի տուն, որի կողքին նոր այգի էր գցված։ Եկեղեցու և գերեզմանոցի մոտով վերադառնալիս մենք հանդիպեցինք այլանդակ մի արարածի, որ քարշ էր գալիս համարյա չորեքթաթ. նա ինչ-որ բան էր ցույց տալիս ինձ. մոտեցա. կուզիկ ու կաթվածահար, կիսացնդած մի պառավ



էր, որ ապրում էր մուրալով և բանում էր նախկին քահանայի բանջարանոցում. արդեն այն ժամանակ նա մի յոթանասուն տարեկան կլիներ, և հենց նրան էլ մահը շրջանցել էր։ Նա ճանաչեց ինձ. լաց եղավ, գլուխը տարուբերում էր ու ասում. «է՛հ, դու էլ էդ ո՞նց ես ծերացել. քեզ մենակ քայլվածքիցդ ճանաչեցի, իսկ ես, ես, է՛հ, էլ մի ասի»։

Երբ ետ էինք գալիս, հեռվից դաշտի մեջ տեսա տանուտերին. նույն մեր ժամանակվա տանուտերն էր. սկզբում չճանաչեց ինձ, բայց երբ անցնում էինք մոտով, ասես գլխի ընկնելով, գլխարկը հանեց ու խոր գլուխ տվեց։ Երբ մի քիչ էլ հեռացանք, ես ետ նայեցի. տանուտեր Գրիգորի Գորսկին դեռ կանգնած էր նույն տեղում ու նայում էր մեր ետևից. նրա բարձրահասակ, մորուքավոր, արտերի միջից խոնարհվող կերպարանքը, առաջվա պես, հրաժեշտ էր տալիս մեզ օտարացած Վասիլևսկոյեից։

## ԳԼՈՒԽ IV

### Նիկը և Վորոբյովյան լեռները

*Այնժամ գրիր, թե խշշոցս այստեղ (Վորոբյովյան լեռներում) հասունացավ մեր կյանքի, այսինքն՝ իմ ու քո կյանքի պատմությունը։*

1833 թվականի նամակ*

Մի երեք տարի առաջ այն ժամանակվանից, որի մասին պատմում եմ, մենք զբոսնում էինք Մոսկվա գետի ափին՝ Լուժնիկիում, այսինքն՝ Վորոբյովյան լեռների մյուս կողմում։ Հենց գետի մոտ հանդիպեցինք մեզ ծանոթ ֆրանսիացի դաստիարակին. միայն շապիկով էր, խիստ վախեցած, գոռում էր. «խեղդվո՞ւմ է, խեղդվո՞ւմ է»։ Բայց նախքան մեր բարեկամը կհասցներ հանել շապիկը կամ հագնել շալվարը, ուրալյան մի կազակ Վորոբյովյան լեռներից վազելով իջավ, ուրիշը նետվեց, չքացավ ու մի րոպե հետո հայտնվեց թուլակազմ մի մարդու հետ, որի գլուխն ու ձեռքերը քամուն կախած շորի պես թափահարվում էին։ Կազակը նրան պառկեցրեց ափին, ասելով՝ «Կսաղանա, պիտի ետ բերել»։

Հավաքված մարդիկ մոտ հիսուն ռուբլի ի մի բերին ու առաջարկեցին կազակին։ Կազակն առանց նազուտուզի, պարզամտորեն ասաց. «Էսպիսի բանի համար փող առնելը մեղք է, համ էլ համարյա չեմ շարշարվել, տե՛ս, է՛, ոնց որ կատու լինի։ Իսկն ասած,— ավելացրեց նա,— մենք՝ չունևոր մարդիկս, ողորմություն չենք ուզում, դե բայց որ տալիս են՝ ինչի՞ չառնես, խոնարհաբար շնորհակալ ենք»։ Ապա, փողը թաշկինակի մեջ կապելով, գնաց սար՝ ձիերն արածեցնելու։ Հայրս հարցրեց նրա անունը և հաջորդ օրը կատարվածի մասին գրեց Էսսենին։ Էսսենը նրան ուրյադնիկ կարգեց։ Մի քանի ամսից մեզ մոտ եկավ այդ կազակը ու նրա հետ՝ օծանելիք ցանած, ծաղկատար դեմքով, ճաղատ, խուճուճ, խարտյաշ կեղծամով մի գերմանացի։ Խեղդվոզն էր, եկել էր կազակի համար շնորհակալություն հայտնելու։ Այդ ժամանակվանից նա սկսեց այցելել մեզ։

Կարլ Իվանովիչ Զոնենբերգն այդ ժամանակ ավարտում էր ինչ-որ երկու թեթևսոլիկների դաստիարակության գերմանական բաժինը, հետո ծառայության անցավ սիմբիրսկցի մի կալվածատիրոջ տանը, այստեղից էլ՝ հորս հեռավոր ազգականի* մոտ։ Այն տղան, որի ֆիզիկական առողջությունն ու գերմաներենի առոգանությունը վստահված էր նրան, և որին Զոնենբերգն անվանում էր Նիկ, դուր էր գալիս ինձ. նրա մեջ բարի, հեզահամբույր ու խոհուն ինչ-որ բան կար. նա ամենևին չէր նմանվում ինձ հանդիպած մյուս տղաներին. այդուհանդերձ, մենք մտերմանում էինք դժվարությամբ. նա լռակյաց էր, մտասույզ, ես աշխույժ էի, բայց վախենում էի նրան ձանձրացնելուց։

Մոտավորապես այն ժամանակ, երբ տվերցի զարմուհիս գնաց Կորչևա, մահացավ Նիկի տատիկը. մորից նա զրկվել էր վաղ մանկությանը։ Նրանց տանը իրարանցում էր, և Զոնենբերգը, որ անելու բան չուներ, նույնպես ձեռուտ էր ընկել ու ցույց էր տալիս, թե հալից ընկել է. նա Նիկին առավոտից մեզ մոտ բերեց ու խնդրեց, որ ամբողջ օրը մեր տանը պահենք։ Նիկը տխուր էր, վախեցած. հավանաբար, սիրում էր տատիկին։ Նա այնպե՞ս բանաստեղծորեն վերհիշեց նրան հետագայում.



Վառվում են շողերն արևամուտի,
Որ ասես լինի հրե մի կածան,
Եվ ես հիշում եմ հուզմունքով սրտի
Հիսավուրց ծեսը մեր ավանդական,
Երբ ամեն անգամ կիրակնամուտին
Մեր տունն էր գալիս ծերուկ քահանան
Եվ աղոթում էր դպիրի հետ իր՝
Սրբապատկերի առաջ ծնրադիր։

Հիշում եմ, ինչպես տատս պառաված
Կանգնում էր, հենված բազկաթոռներին,
Եվ աղոթքներ էր մրմնջում տարված՝
Իր տերողորմյան դողդոջուն ձեռքին։
Սպասավորները շեմքին հավաքված՝
Ունկն էին դնում այդ աղոթքներին,
Երկրպագում լուռ ու արտասվալից,
Երկար կյանք ու բախտ խնդրում արարչից։

Եվ վերջալույսն էր վառվում այդ պահին
Լուսամուտներում...
Բուրվառի կապույտ ծուխն էր վեր հյուսվում
Եվ քուլա-քուլա փռվում դահլիճում։
Շուրջը տիրում էր այնպիսի անդորր,
Որ դպիրների ձայնն էր լոկ լսվում.
Եվ հոգուս խորքում մի խորհրդավոր
Ու մի անանուն բաղձանք էր ծնվում։
Ես այդ պահերին լռության մեջ խոր
Զգում էի, որ թախիծն է ձուլվում
Մանկական անմեղ իմ երազներին,
Եվ ինչ-որ տենչ է այրում իմ հոգին։

(«Հումոր»)

... Մի քիչ նստելուց հետո ես առաջարկեցի Շիլլեր կարդալ։ Ինձ զարմացնում էր մեր ճաշակների նմանությունը. անգիր նա անհամեմատ ավելի շատ գիտեր, քան ես, և գիտեր հենց այն տեղերը, որ շատ էին դուր գալիս ինձ։ Մենք գիրքը ծալեցինք և սկսեցինք, այսպես ասած՝ մեկս մյուսիս մեջ համակրանք որոնել։

Դաշույնը թևքում՝ «քաղաքը բռնակալից ազատելու» գնացող Մյորոսից*, Կյուսնախտի կածանում Ֆոգտին սպասող Վիլհելմ Տելից* դեկտեմբերի 14-ին ու Նիկոլային անց-

նելը հեշտ էր։ Այս մտքերն ու այս նմանեցումները խորթ չէին Նիկին, Պուշկինի ու Ռիլեևի անտիպ բանաստեղծությունները նրան էլ էին հայտնի. ապշեցուցիչ էր տարբերությունը այն փուչ տղաների համեմատությամբ, որոնց երբեմն ես հանդիպում էի։

Ոչ վաղուց, Պրեսնյայի լճակներում զբոսնելիս, իմ բուշոյական տեռորիզմով համակված՝ ես հասակակիցներից մեկին բացատրում էի Լյուդովիկոս XVI-ի մահապատժի արդարացիությունը։

— Լա՜վ,— նկատեց պատանի իշխան Օ.-ն,— բայց չէ՞ որ նա աստծո՜ւ օծյալն էր։

Ես ափսոսանքով նայեցի նրան, դադարեցի նրան սիրելուց և հետո ոչ մի անգամ չցանկացա գնալ նրանց մոտ։

Իմ և Նիկի միջև այդպիսի սահմանազատումներ չկային, նրա սիրտն էլ բաբախում էր այնպես, ինչպես իմը, նա էլ էր հեռացել մոայլ պահպանողական ափից, արժեր ավելի համերաշխ պոկվել. և մենք, համարյա առաջին իսկ օրը, վճռեցինք գործել հօգուտ թագաժառանգ Կոնստանտինի։

Սկզբում մենք տևական զրույցներ քիչ էինք ունենում։ Կարլ Իվանովիչը, աշնան ճանճի պես, խանգարում էր և իր ներկայությամբ փչացնում ամեն մի խոսակցություն, ամեն ինչի մեջ խառնվում էր՝ ոչինչ չհասկանալով, դիտողություններ անում, շտկում Նիգի վերնաշապկի օձիքը, տուն էր շտապում, մի խոսքով՝ շատ զզվելի էր։ Մի ամիս հետո մենք երկու օր էլ չէինք համբերում առանց տեսնվելու կամ առանց իրար նամակ գրելու. իմ պոռթկուն խառնվածքով ես գնալով ավելի էի կապվում Նիկի հետ, նա մեղմ ու խոր սիրում էր ինձ։

Մեր բարեկամությունը սկզբից ևեթ լուրջ բնույթ պիտի ընդուներ։ Ես չեմ հիշում, որ մեր զբաղմունքի մեջ առաջինը շարաճճիությունները լինեին, հատկապես՝ երբ մենակ էինք մնում։ Պարզ է, որ տեղներս նստած չէինք մնում, տարիքն իրենն անում էր. հոհոում էինք, հիմարություններ անում, ջղայնացնում Զոնենբերգին և մեր բակում նետ ու աղեղ խաղում, բայց այդ բոլորի հիմքը շատ էր հեռու դատարկ ընկերությունից. տարիքների հավասարությունից, «քիմիական» ազդակցությունից բացի, մեզ կապում էր



մեր ընդհանուր կրոնը։ Աշխարհում ոչ մի բան այնպես չի մաքրում, ազնվացնում պատանեկան տարիքը, չի պահպանում այն, ինչպես ուժեղ բորբոքված համամարդկային շահը։ Հանձինս մեզ՝ մենք հարգում էինք մեր ապագան, մենք մեկս մեկու նայում էինք իբրև ընտրյալ, նախախնամված էակների։

Նիկի հետ հաճախ գնում էինք քաղաքից դուրս, մենք մեր սիրած վայրերն ունեինք՝ Վորոբովյան լեռները, դրագոմիլյան ուղեկալից այն կողմ ընկած դաշտերը։ Նա Զոնենբերգի հետ առավոտյան ժամը վեցին կամ յոթին գալիս էր իմ հետևից, և եթե քնած էի լինում՝ ավազ ու մանր քարեր էր նետում պատուհանիս։ Ես ժպտալով արթնանում էի և շտապում դուրս։

Այս կանուխ զբոսանքները սովորություն էր դարձրել անխոնջ Կարլ Իվանովիչը։

Զոնենբերգը Օգարյովի կալվածատիրական-նահապետական դաստիարակության մեջ կատարում է Բիրոնի* դերը։ Նրա հայտնվելուց հետո ծերուկ գայակի ազդեցությունը մի քիչ դարձավ. սպասավորների դժգոհ վերնախավը ճարահատյալ լռում էր՝ հասկանալով, որ չի կարող աղայի հետ սեղան նստող անիծյալ գերմանացու հախից գալ։ Զոնենբերգը կտրուկ փոխեց նախկին կարգուկանոնը. սպասավոր գայակը նույնիսկ արտասվեց, երբ իմացավ, որ այդ «գերմանը» երիտասարդ պարոնին խանութներ է տարել, որ սա իմը գնի պատրաստի երկարաճիտ կոշիկներ։ Զոնենբերգի հեզաշրջումը, Պետրոս I-ի հեզաշրջման նման, ամենախաղաղ գործերի մեջ էլ հատկանշվում էր իր ռազմական բնույթով։ Արանից չի հեռանում, թե Կարլ Իվանովիչի նվաղ ուսերին երբևէ էրֆերդավոր ուսադիրներ են եղել, բայց բնությունն այնպես է ստեղծել գերմանացուն, որ եթե սա բանասիրության կամ առավոտաքանության պատճառով չի հասնում թափթփվածության ու sans gêne[1], ապա ինչքան էլ քաղաքացիական մարդ լինի, այնուամենայնիվ, մնում է գինվորական։ Դրա համար էլ ՀԵՆՑ Կարլ Իվանովիչը սիրում էր կիպ հագուստ՝ կոճկված ու պրկված, դրա համար էլ

1 անպատշաճության (ֆրանս.)։

հենց նա խստով պահպանում էր սեփական կանոնները և, վճռելով վեր կենալ առավոտյան ժամը վեցին, Նիկին ուղիղ հանում էր հինգն անց 59 րոպեին, բայց ոչ երբեք՝ վեցն անց մեկ, ու դուրս էր գալիս նրա հետ մաքուր օդի։

Վորոբյովյան լեռները, որոնց ստորոտում խեղդվելու էր Կարլ Իվանովիչը, շուտով դարձան մեր «սրբազան բլուրները»։

Մի անգամ ճաշից հետո հայրս պատրաստվում էր դուրս գալ քաղաքից։ Օգարյովը մեր տանն էր, հայրս նրան էլ հրավիրեց՝ Զոնենբերգի հետ։ Այդ ուղևորությունները հանաք բան չէին։ Մինչև ուղեկալ հարկ էր լինում մի ժամ կամ ավելի գնալ «Իոխիմի սարքած» չորստեղանոց կառքով, որը տասնհինգամյա, թեկուզ հանգիստ, ծառայության ընթացքում այլանդակվելու չափ հնացել էր և առաջվա նման պաշարողական հրասանդից ծանր էր։ Տարբեր հասակի ու տարբեր գույնի չորս ձիերը, որ պարապ մնալուց ծուլացել ու փոր էին գցել, քառորդ ժամ հետո կորչում էին քրտինքի ու փրփուրի մեջ. կառապան Ավդեյին արգելված էր ձիերին այդ վիճակին հասցնել, և նա ստիպված էր հանգիստ քշել։ Ինչքան էլ շոգ լիներ՝ պատուհանները սովորաբար փակված էին. և այդ բոլորին գումարած հորս մշտական ճնշող հսկողությունն ու Կարլ Իվանովիչի անհանգիստ պրպտող, փութագար հսկողությունը. բայց մենք հաճույքով տանում էինք այդ ամենը, միայն թե միասին լինեինք։

Լուծնիկիում մակույկով անցանք Մոսկվա գետը հենց նույն տեղից, որտեղ կազակը շրից հանեց Կարլ Իվանովիչին։ Հայրս, ինչպես միշտ, գնում էր մռայլ ու կռացած, կողքից մանրիկ քայլում էր Կարլ Իվանովիչը՝ զրաղեցնելով նրան բամբասանքով ու շաղակրատանքով։ Մենք առաջ անցանք նրանցից և, ահագին հեռանալով, վազեցինք-հասանք Վորոբյովյան լեռներում Վիտբերգի* տաճարի հիմնադրավայրը։

Հևալով ու կարմրատակած, քրտինքներս սրբելով՝ կանգնել էինք մենք այնտեղ։ Արևը մայր էր մտնում, գրմբեթները պսպղում էին, լեռան տակ, անծայր տարածքում փռվել էր քաղաքը, թարմ քամի էր փչում. մենք կանգնեցինք, կանգնեցինք, հենվեցինք իրար ու, հանկարծ գրկախառնվելով, ամբողջ Մոսկվայի առաջ երդվեցինք մեր կյանքը զոհաբերել մեր ընտրած պայքարին։

Այս տեսարանը կարող է շատ չինծու, շատ թատերական թվալ, այնինչ քսանվեց տարի անց վերհիշելով՝ ես արտասվելու չափ հուզվում եմ. սրբորեն անկեղծ էր այդ տեսարանը, դրա ապացույցը մեր ողջ կյանքը եղավ։ Բայց, իրոք, միևնույն բախտի հարվածին են արժանանում այս վայրում կապված բոլոր ուխտերը։ Ալեքսանդրը նույնպես անկեղծ էր, երբ դնում էր տաճարի առաջին քարը, որը վերջինը եղավ, ինչպես, ընդսմին սխալվելով, ասել է Իոսիֆ II-ը* Նովոռոսիայում ինչ-որ քաղաքի հիմնադրման ժամանակ։

Մենք չգիտեինք ողջ ուժը այն բանի, ինչի հետ կռվի էինք բռնվում, բայց մարտն ընդունեցինք։ Այդ ուժը շատ բան ինկեց մեր մեջ, բայց մեզ կործանողը նա չէր, և մենք անձնատուր չեղանք նրան, չնայած իր բոլոր հարվածներին։ Նրանից մնացած սպիները պատվաբեր են. Հակոբի դուրս ընկած ոտքը նշան էր այն բանի, որ նա գիշերը կռվել էր աստծու հետ։*

Այդ օրվանից Վորոբյովյան լեռները մեզ համար ուխտավայր դարձան, և մենք տարին մի կամ երկու անգամ գնում էինք այնտեղ, ու միշտ՝ մենակ։ Այնտեղ, հինգ տարի անց, Օգարյովը, երկչոտ ու ամաչկոտ, հարցնում էր ինձ՝ հավատո՞ւմ եմ, արդյոք, իր բանաստեղծական տաղանդին, և հետո (1833) իր գյուղից ինձ գրում էր. «Մեկնեցի ես, ու խորություն իջավ վրաս, մի տխրություն, որ երբևէ չեմ ունեցել։ Ով մեղքը Վորոբյովյան լեռներինն է։ Հոգուս խորքում ես երկար պահում էի հիացմունքներս. ամոթխածությունը կամ էլ, չգիտեմ, ինչ-որ ուրիշ մի բան խանգարում էր ինձ արտահայտել դրանք, բայց Վորոբյովյան լեռներում այդ բերկրանքը ծանրացած չէր մենակությամբ, դու այն կիսում էիր ինձ հետ, և այդ պահերը անմոռաց են, դրանք, որպես անցած երջանկության վերհուշներ, հետապնդում էին ինձ իմ ճանապարհին, իսկ շուրջս ես միայն անտառ էի տեսնում. ամեն ինչ այնպես լո՞ւրթ էր ու կապույտ, իսկ հոգուս մեջ՝ մո՞ւթ ու խավար։

Դրիր,— վերջացնում էր նա,— թե ինչպես այստեղ (Վո-

ռոբյովյան լեռներում) հասունացավ մեր կյանքի, այսինքն՝ իմ ու քո կյանքի պատմությունը»։

Անցավ ևս հինգ տարի, ես հեռու էի Վորոբյովյան լեռներից, բայց իմ կոզքին խոժոռ ու տխուր կանգնած էր այդ լեռների Պրոմեթևսը՝ Ա. Լ. Վիտբերգը։ 1842-ին, վերջնականապես Մոսկվա վերադառնալով, ես նորից եղա Վորոբյովյան լեռներում. մենք նորից կանգնած էինք տաճարի հիմնադրավայրում, դիտում էինք նույն տեսարանը և դարձյալ երկուսով, բայց հետինս Նիկը չէր*։

1827-ից մենք անբաժան էինք։ Այդ ժամանակվա յուրաքանչյուր վերհուշի մեջ, լինի մասնակի, թե ընդհանրական, ամենուրեք առաջինը նա է՝ իր պատանեկան դիմագծերով, իմ հանդեպ տածած իր սիրով։ Շուտ երևաց, որ նա ընտրյալ է. դա քչերին է բաժին ընկնում. դժբախտությո՞ւն էր այդ, թե բարեբախտություն՝ չգիտեմ, բայց ստուգապես պոկում էր նրան ամբոխից։ Հետո հոր տանը երկար ժամանակ պահպանվում էր այդ տարիների (1827—28 թվականներ) Օգարյովի յուղաներկ մեծ դիմանկարը։ Հետագայում ես հաճախ էի կանգնում այդ դիմանկարի առաջ ու երկար նայում։ Նա պատկերված է վերնաշապկի օձիքը ետ գցած. նկարիչը հրաշալի ոսկեցել է ճոխ շագանակագույն մազերը, անկանոն դիմագծերի պարմանիական չկայունացած գեղեցկությունն ու թխավուն երանգը։ Կտավի վրա նշմարվում էր ուժեղ միտք կանխագուշակող խոհականությունը. անբացատրելի թախիծ ու արտակարգ հեզություն էր ցայտում մոխրագույն, խոշոր աչքերից, ազդարարելով մեծ հոգու գալիք հասունացումը. այդպիսին էլ նա դարձավ։ Այդ դիմանկարը, որ ես նվեր էի ստացել, վերցրել է օտար մի կին*. թերևս այս տողերը նրա աչքովն ընկնեն, ու նա վերադարձնի դիմանկարը։

Ես չգիտեմ ինչու են առաջին սիրո հուշերը գերադասում պատանեկան ընկերության հուշերից։ Այն պատճառով է առաջին սերն այդքան անուշաբույր, քանզի անգիտանում է սեռերի տարբերությունը, քանզի այդ սերը բուռն ընկերություն է։ Պատանիների ընկերությունը, իր հերթին, օժտված է սիրո բուռն ջերմությամբ, ունի սիրո ողջ երևույթը. իրենց զգացմունքներին խոսքով անդրադառնալու նույն ամոթխած



նրբությունը, նույն թերահավատությունն իրենց նկատմամբ, անվերապահ նվիրվածությունը, բաժանման նույն տանջող կարոտը և բացառիկության նույն խանդոտ փափագը։

Ես Նիկին վաղուց էի սիրում, և սիրում էի կրքոտ, բայց սիրտ չէի անում նրան «ընկեր» անվանել, և երբ նա ամուսնալ ապրում էր Կունցևոյում, նամակիս վերջում ես նրան գրում էի. «Ձեր ընկերն եմ, թե ոչ՝ դեռ չգիտեմ»։ Առաջինը նա սկսեց ինձ նամակ գրել դու-ով և անվանեց ինձ իր Աղաթոնը*՝ ըստ Կարամզինի, իսկ ես նրան իմ Ռաֆայիլ* էի կոչում՝ ըստ Շիլլերի[1]։

Խնդրե՞մ, ժպտացե՛ք, միայն թե՝ հեզ, բարեհոգի ժպիտով, այնպես, ինչպես ժպտում են իրենց տասնհինգ տարեկան հասակի մասին մտորելիս։ Կամ ավելի լավ չէ՞ մի պահ մտածեք՝ «Արդյո՞ք այդպիսին եմ եղել ես մատաղ հասակում»*, և փա՜ռք տաք բախտին, եթե ունեցել եք պատանեկություն (օտոկ ջահել լինելը դրա համար քիչ է), և երեքս փառք տաք, եթե ընկեր եք ունեցել այդ ժամանակ։

Այն օրերի լեզուն մեզ թվում է բոնապրոսիկ, գրքային, մենք ետ ենք վարժվել նրա անկայուն խանդավառությունից, աններդաշնակ ոգևորությունից, որ հանկարծ փոխվում էր մերթ նվաղուն քնքշության, մերթ մանկական ծիծաղի։ Այդ լեզուն ծիծաղելի կլիներ երեսնամյա մարդու շուրթերին, ինչպես նշանավոր «Bettina will schlafen»[2]-ը, բայց իր ժամանակի համար այդ պատանեկան լեզուն, այդ jargon de la puberté[3]-ը, հոգեբանական ձայնի այդ փոփոխությունը շատ անկեղծ բաներ են, նույնիսկ գրքային երանգը բնական է տեսական գիտության և գործնական անգիտության այդ տարիքի համար։

Շիլլերը մնաց մեր սիրելին[4], նրա դրամաների գործող

[1] «Philosophische Briefe» [«Փիլիսոփայական նամակներ»] (ծանոթ.՝ Ն. Ի. Գերցենի)։

[2] Բետինան ուզում է քնել (գերմ.)։

[3] առնականացման ժարգոն (ֆրանս.)։

[4] Շիլլերի պոեզիան չի դադարել ինձ վրա ազդելուց. մի քանի ամիս առաջ ես որդուս համար կարդում էի «Վալենշտայնը»՝ վիթխարի այդ առանձնագործությունը։ Նա, ով կորցնում է Շիլլերով հրապուրվելու կարողու-

անձինք մեզ համար իրական անձնավորություններ էին, մենք նրանց քննում, սիրում ու ատում էինք ոչ թե իբրև պատմական ստեղծագործություններ, այլ որպես կենդանի մարդիկ։ Դեռ ավելին՝ նրանց մեջ ինքներս մեզ էինք տեսնում։ Մի քիչ անհանգստացած այն բանից, որ Նիկը շափից շատ է սիրում Ֆիեսկոյին, ես նրան գրում էի, թե «ամեն մի Ֆիեսկոյի ետևում յուրովի մի Վերինա կա։ Իմ իդեալը Կարլ Մորրն էր, բայց ես շուտով դավաճանեցի նրան ու դարձա մարկիզ Գոզա։ Ես հարյուր հնար էի մտմտում, թե Նիկոլայի հետ ինչպե՞ս պիտի խոսեմ, և նա ինչպե՞ս հետո ինձ պիտի ուղարկի հանքերը, մահապատժի ենթարկի։ Տարօրինա՞կ բան. գրեթե բոլոր մեր երազանքները վերջանում էին Սիբիրով կամ մահապատժով և համարյա երբեք չէին ավարտվում հաղթանակով. մի՞թե երևակայության ռուսական կերպն է դա, թե՞ հինգ կախաղաններով ու տաժանակիր աշխատանքով հատկանշվող Պետերբուրգի անդրադարձումն է մատաղ սերնդի վրա։

Ա՛յ, այդպե՛ս, Օգարյո՛վ, մենք ձեռք ձեռքի տված կյանք էինք մտնում։ Մենք քայլում էինք անվախ ու հպարտ, շռայլորեն արձագանքում ամեն մի կոչի, անկեղծորեն տրվում ամեն մի հրապուրանքի։ Ուղին, որ մենք ընտրեցինք, հեշտ չէր։ մենք երբեք չլքեցինք այդ ուղին. վիրավոր ու կոտրված՝ գնում էինք մենք, և ոչ ոք առաջ չէր անցնում մեզանից։ Ես հասա... ոչ թե նպատակիս, այլ մինչև այն տեղը, որ ճանապարհը իջնում է լեռնվար, որ ակամա փնտրում եմ քո ձեռքը, որ միասին իջնենք, որ սեղմեմ քո ձեռքը և ախուր ժպտալով ասեմ. «Անա և վե՛րջ»։

Իսկ առայժմ տաղտկալի պարապությանս մեջ, որին գատապարտվել եմ իրադարձությունների բերումով, նոր գործի համար իմ մեջ չգտնելով ոչ ուժ, ոչ էլ թարմություն, գրի եմ առնում մեր հիշողությունները։ Շատ բան, որ այնպես սերտորեն շաղկապում էր մեզ, անցել է այս էջերին, ես քեզ եմ նվիրում այդ էջերը։ Քեզ համար դրանք ունեն երկակի

թյունը՝ կա՛մ ծեր է, կա՛մ մանրախնդիր, գարձել է անզգա կամ մոռացել է իրեն։ Իսկ ի՞նչ ասես այն վաղահաս altkluge Burschen [երիտասարդ ծերունիների] մասին, որոնք տասնյոթ տարեկանում այնպես լա՞վ գիտեն Շիլլերի բերդերը... (ծանոթ.՝ Ա. Ի. Գերցենի)։



իմաստ. իմաստը այն տապանաքարերի, որոնց վրա մենք հանդիպում ենք ծանոթ անունների[1]։

... Իսկ տարօրինակ չէ՞, արդյոք, մտածել, որ եթե Զոննենբերգը լողալ իմանար կամ այն ժամանակ խեղդվեր Մոսկվա գետում, եթե նրան դուրս հաներ ոչ թե ուրալյան կազակը, այլ ինչ-որ ապշերոնյան մի հետևակային՝ ես չէի հանդիպի Նիկին, կամ էլ դրանից հետո, ասենք, կարող էինք չինե՞լ մեր հին տան այն սենյակում, ուր իրար հետ թաքուն ծխելով, այդպես խորը թափանցում էինք մեկս մյուսի կյանքի մեջ և մեկս մյուսից ուժ առնում»

Նա չմոռացավ այդ տունը՝ մեր «հին տունը»։

Հին տուն, հին բարեկամ, վերջապես
Քեզ տեսա՝ ամայի ու ավեր,
Անցյալին հարություն տվի ես,
Նայեցի քեզ վշտով կարեվեր։

Կեղտակուր, խուլ բակն էր իմ առջև,
Ջրհորը նեխած ու մամռապատ,
Չէր շրշում այգում ոչ մի տերև.
Հող էին դառնում ճյուղ ու սաղարթ։

Խարխլվել էր տունը հիմնովին,
Թափվել էր պատերի ծեփն արդեն,
Երկնքից զորշ ամպն էր վշտագին
Նայում տանն ու լալիս դառնորեն։

Ներս մտա։ Նույնն էր տանն ամեն ինչ.
Նույն ծերուկն էր դժգոհ քրթմնջում.
Մեզ նրա խոսքերը խորթ էին՝
Կոշտ լեզուն ահ էր մեզ ներշնչում։

Երկուսով սենյակում այս փոքրիկ
Ապրել ենք մտովին ու հոգով.
Ի՜նչ խոհեր են ծնվել երբանիկ
Հարկի տակ այս անշուք ու անթով։

Այստեղ լույսն էր ցոլում աստղերի,
Պատերին մենք թողել ենք խոսքեր,
Որ պայծառ հուշն են այն օրերի,
Երբ եռում էր շահել կյանքը մեր։

[1] Գրված է 1853 թվականին (ծանոթ.՝ Ա. Ի. Գերցենի)։

Այսուհետ էր մեր անցյալ խինդն անհոգ,
Դաշինքը մեր անկեղծ ու մաքուր...
Հիմա սարգն է զատան հյուսում լոկ
Այս լքված, ամայի սենյակում։

Եվ հանկարծ սոսկացիս։ Ինձ թվաց
Շերիմներ են չորս դիս։ Վշտահեծ
Կանչեցի, ձայն տվի սարսափած.
Սակայն ոչ մի մեռյալ չհառնեց։

## ● ԳԼՈՒԽ V

**Ցնցիչ կյանքի մանրամասները։ XVIII դարի մարդիկ Ռուսաստանում։ Մեր տան մի օրը։ Հյուրեր և habitués[1]։ Զոնենբերգը։ Սենեկապետը և այլք։**

*Մեր տան անտանելի տաղտուկը տարեցտարի մեծանում էր։ Եթե համալսարանական դասընթացը մոդենալին չլիներ, եթե չլիներին նոր բարեկամությունը, քաղաքական հրապուրանքն ու աշխույժ բնավորությունս՝ ես կա՛մ կփախչեի, կա՛մ էլ կկործանվեի։*

*Հայրս հազվադեպ էր լավ տրամադրություն ունենում, նա մշտապես դժգոհ էր ամեն բանից։ Մեծ խելքի տեր, մեծ դիտողականություն ունեցող մարդ լինելով՝ նա տեսել, լսել ու հիշում էր շատ-շատ բան.* accompli[2] *բարձրաշխարհիկ մարդ՝ նա կարող էր ճարտակարգ սիրալիր ու հետաքրքիր լինել, բայց չէր ուզում ու գնալով ավելի ու ավելի էր քմահաճորեն ինքն իրեն օտարացնում ամենքից։*

*Դժվար է ասել, թե հատկապես ի՞նչն էր այդքան դառնություն ու մաղձ ներարկել նրա արյան մեջ։ Նրա կյանքում ամենևին չէին եղել մոլորություններ, մեծ վշտերի, սխալների ու կորուստների ժամանակաշրջաններ։ Ես երբեք չէի կարողանում լրիվ ըմբռնել, թե որտեղից էին ծագել նրա հոգին համակող չար ծաղրանքն ու բորբոքվածությունը, կասկածոտ օտարացումը մարդկանցից։ և նրա կյանքն ուտող սրտնեղությունը։ Արդյո՞ք նա հետը գերեզման տարավ ինչ-որ հիշողություն, որ չէր վստահել ոչ մեկին, թե՞ դա պարզապես հետևանք էր այն աստիճան հակոտնյա երկու երևույթների, ինչպիսիք էին՝ տասնութերորդ դարն ու ռուսական կյանքը, որոնց միջնորդը քմահաճ զարգացմանը սասթիկ նպաստող երրորդ երևույթն էր՝ կալվածատիրական անբանությունը։*

*Անցած հարյուրամյակը Արևմուտքում, հատկապես Ֆրանսիայում, ծնեց զարմանալի ամբակուռ մարդիկ՝ ռեֆորմացիայի բոլոր թուլություններով, Սպարտայի ու Հռոմի բոլոր զորություններով հանդերձ։ Այդ Ֆոբլազներն* ու Ռեբուլները* միասին լայն բաց արին հեղափոխության դռները և հապճեպորեն իրար հրմշտելով՝ առաջի՛նը ներս խուժեցին այնտեղ, որպեսզի դուրս գան գիլիոտինի «պատուհան»։ Մեր դարն այլևս չի ծնում այդպիսի ամբողջական, ուժեղ խառնվածքներ. անցյալ հարյուրամյակը, ընդհակառակը, նրանց կյանքի էր կոչել ամենուր, նույնիսկ այնտեղ, ուր նրանք պետք չէին, ուր նրանց զարգացումը չէր կարող հանգեցնել ոչ այլ բանի, քան այլանդակության։ Ռուսաստանում Արևմտյան այս զորեղ հովերի ազդեցությանը ենթարկված մարդիկ չդարձան պատմական անհատներ, այլ՝ ինքնատիպ մարդիկ։ Օտարերկրացիներ՝ տանը, օտարերկրացիներ՝ այլոց երկրներում, Ռուսաստանի համար՝ արևմտյան նախապաշարմունքներով, Արևմուտքի համար՝ ռուսական սովորություններով փչացած՝ նրանք մի խելացի անպետքություն էին և կորչում էին արհեստական կյանքի, զգայական հաճույքների ու անտանելի եսասիրության մեջ։*

*Մոսկվայում այս ոլորտի առաջին շարքում էր փայլուն, մտքի ու հարստության տեր ռուս մեծատոհմիկ, եվրոպական* grand seigneur[1] *և թաթարական իշխան Ն. Բ. Յուսուպովը*։ Նրա շուրջը պտտվում էր ալեհեր կնամոլների ու* esprits forts[2] *ողջ մի համաստեղություն, այդ բոլոր Մասալսկիները*, Սանտիները* ու* tutti guenti[3]։ *Նրանք բոլորն էլ բավական զարգացած ու կրթված մարդիկ էին.*

---

[1] մշտական այցելուներ (ֆրանս.)։
[2] կատարյալ (ֆրանս.)։



[1] մեծ աղա (ֆրանս.)։
[2] ազատախոհների (ֆրանս.)։
[3] ամեն տեսակ ուրիշներ (իտ.)։

անգործության մատնված՝ նրանք նետվել էին վայելքների ետևից, հոգում էին իրենց մասին, տարված էին իրենց խնամքով, բարեհոգորեն թողություն էին տալիս իրենց բոլոր մեղքերին, պլատոնական մոլության էին հասցնում ուտեստեղենի իրենց նուրբ ճաշակը և կանանց հանդեպ իրենց սերը հանգեցնում մի տեսակ քաղցրավենիքի որկրամոլության։

Մեր սկեպտիկ և էպիկուրական Ցուսուպովը, Վոլտերի ու Բոմարշեի, Դիդրոյի և Կաստիի* բարեկամը օժտված էր իսկական գեղարվեստական ճաշակով։ Համոզվելու համար բավական է մի անգամ լինել Արխանգելսկոյեում, նայել նրա պատկերասրահները, եթե նրա ժառանգորդը դեռևս մասամաս չի ծախել դրանք։ Նա շքեղորեն հանգչում էր ութսունամյա հասակում՝ շրջապատված մարմարյա, նկարած ու կենդանի գեղեցկությամբ։ Նրա քաղաքամերձ տանը հետը ղրուցել է Պուշկինը, որը հիասքանչ ուղերձ է նվիրել նրան, և նկարներ է արել Գոնզագան*, որին Ցուսուպովը հատկացրել էր իր թատրոնը։

Իր դաստիարակությամբ, գվարդիական ծառայությամբ, կյանքով ու կապերով հայրս պատկանում էր նույն այդ շրջանին, բայց ոչ իր բնավորությունը, ոչ էլ առողջությունը թույլ չէին տալիս, որ մինչև յոթանասուն տարեկանը թեթևսոլիկ կյանք վարեր, և նա ընկավ հակառակ ծայրահեղության մեջ։ Նա ուզում էր մենակյաց կյանք ստեղծել իր համար, այդ կյանքում նրան սպասում էր մահացու ձանձրույթը, առավել ևս, որ այդ կյանքը նա ցանկանում էր ստեղծել միայն իր համար։ Ամուր կամքը վերածվում էր համառ կամակորության, անզբաղ ուժերը փչացնում, ծանր էին դարձնում բնավորությունը։

Երբ նա դաստիարակվում էր, եվրոպական քաղաքակրթությունը դեռևս այնքան նոր էր, որ կրթված լինել՝ նշանակում էր նվազագույն ռուս լինել։ Մինչև կյանքի վերջը նա ֆրանսերեն գրում էր ավելի ազատ ու ճիշտ, քան ռուսերեն, նա à la letre[1] չէր կարդում ոչ մի ռուսերեն գիրք, նույնիսկ Աստվածաշունչը։ Ի դեպ, Աստվածաշունչը նա ուրիշ լեզուներով էլ չէր կարդացել, լսելով ու կցտկուր գիտեր, թե ընդհանուր առմամբ ինչի մասին է խոսվում Սուրբ գրքում և զլացել էր անձամբ թերթել։ Ճիշտ է, նա հարգում էր Թերժավինին ու Կռիլովին. Դերժավինին՝ այն բանի համար, որ սա ներբող էր գրել իր մորեղբոր՝ իշխան Մեշչերսկու մահվան առթիվ, Կռիլովին՝ որովհետև նրա հետ Ն. Ն. Բախմետևի մենամարտի մարտավկան էր եղել։ Մի անգամ հայրս ձեռնամուխ եղավ ընթերցելու Կարամզինի «Ռուսական պետության պատմությունը», իմանալով, որ Ալեքսանդր կայսրը կարդացել է այդ գիրքը, բայց մի կողմ դրեց, քամահրանքով ասելով. «Անվերջ Իզյասլավիչներ ու Օլեգովիչներ. ո՞ւմ է դա հետաքրքիր»։

Մարդկանց նա արհամարհում էր անկեղծորեն, բացահայտ, արհամարհում էր բոլորին։ Ոչ մի դեպքում ոչ մեկի վրա հույս չէր դնում, և ես չեմ հիշում, որ նշանակալից խնդրանքով դիմած լիներ որևէ մեկին։ Նա ինքն էլ ոչ մեկի համար ոչինչ չէր անում։ Կողմնակի մարդկանց հետ հարաբերություն ունենալիս նա պահանջում էր մի՛ բան՝ քաղաքավարության կանոնների պահպանում. les, apparences, les convenances[1] նրա բարոյական կրոնն էին։ Շատ բան նա ներում էր կամ, ավելի ճիշտ՝ մատների արանքով էր նայում, բայց վարվելաձևի ու քաղաքավարության կանոնների խախտումները համբերությունից հանում էին նրան, և այդ դեպքում նա դառնում էր բոլորովին անզուսպ, զուրկ կար ժամանակ վրդովվում էի այդ անարդարությունից, բայց, ի վերջո, հասկացա. հայրս նախապես համոզված էր, որ ամեն մարդ ընդունակ է ուզածդ վատ բանի, և եթե չի էլ անում՝ ուրեմն կա՛մ դրա հարկը չունի, կա՛մ էլ առիթը չի ներկայանում. իսկ վարվելաձևը խախտելու մեջ նա տեսնում էր անձնական վիրավորանք, անհարգալից վերաբերմունք իր նկատմամբ կամ «քաղքենիական դաստիարակության», որը, նրա կարծիքով, վտարում էր մարդուն ամեն մի մարդկային հասարակությունից։

«Մարդկային հոգին,— ասում էր նա,— մութ գաղտնիք

[1] բառացիորեն (ֆրանս.)։



[1] արտաքինը, քաղաքավարությունը (ֆրանս.)։

է, և ով գիտե, թե ում հոգում ինչ կա. ես ինքս այնքան շատ գործեր ունեմ, որ իմ բանը չէ ուրիշներով զբաղվելը և դեռ նրանց դիտավորությունները քննելն ու դատելը. բայց վատ դաստիարակված մարդու հետ նույն սենյակում լինել ես չեմ կարող, նա վիրավորում է ինձ, գրգռում. իսկ առհասարակ կյանքում նա կարող է լինել ամենաբարի մարդը, դրա համար տեղ կունենա դրախտում, բայց նա ինձ հարկավոր չէ։ Կյանքում ամենից ավելի կարևորը, վերամբարձ խելքից ու ամեն մի գիտելիքից էլ կարևորը esprit de conduite[1]-ն է. ամենուրեք իրեն չկորցնել, ոչ մի տեղ առաջ չխցկվել, բոլորի հետ լինել արտակարգ քաղաքավարի և ոչ մեկի հետ ընտանեվարի չլինել»։

Հայրս չէր սիրում ոչ մի abandon[2], ոչ մի բացարտություն, նա այդ ամենն անվանում էր ընտանեվարություն, ինչպես և ամեն մի զգացմունք՝ սենտիմենտալություն։ Նա իրեն միշտ այդ բոլոր մանրուքներից վեր կանգնած էր ձևացնում. ինչի՞ համար, ի՞նչ նպատակով, ո՞րն էր այն բարձրագույն շահը, որին զոհաբերվում էր սիրտը՝ ես չգիտեմ։ Եվ ո՞ւմ համար էր մարդկանց այդքան անկեղծորեն արհամարհող, նրանց այդքան լավ ճանաչող այդ հպարտ ծերուկը խաղում անվրդով դատավորի իր դերը. կնո՞ջ համար, որի կամքը ինքը կոտրել էր, թեև սա երբեմն հակաճառում էր նրան, հիվանդի՞ համար, որը մշտապես պառկած էր վիրաբույժի դանակի տակ, տղայի՞ համար, որի կայտառությունը անհնազանդության էր վերածել ինքը, տասնյակ սպասավորների՞ համար, որոնց մարդ չէր հաշվում։

Եվ ինչքա՜ն ուժ, համբերություն է ծախսվել դրա վրա, ինչքան համառություն, և ի՜նչ զարմանալի հարազատությամբ է խաղացվել այդ դերը մինչև վերջ, չնայած ո՛չ տարիքին, ո՛չ հիվանդությանը։ Ճիշտ որ՝ մարդկային հոգին մութ գաղտնիք է։

Հետագայում, երբ ինձ ձերբակալեցին և ապա, երբ աքսոր էին ուղարկում, ես տեսա, որ ծերուկի սիրտն ավելի շատ էր հակված սիրո ու նուրբ քնքշության, քան կարծում

[1] իրեն պահել կարողանալ (ֆրանս.)։
[2] անզգայություն (ֆրանս.)։



էիր։ Ես երբեք շնորհակալ չեղա նրան դրա համար, քանզի չգիտեի ինչպես կընդուներ իմ շնորհակալությունը։

Իհարկե, նա երջանիկ չէր. միշտ զգաստ, ամենքից ղժգոհ՝ նա սրտնեղությամբ տեսնում էր բոլոր տնեցիների մեջ իր հարուցած անբարյացակամ զգացմունքները. նա տեսնում էր, թե ինչպես դեմքերից անհետանում էր ժպիտը, ինչպես խոսքը կիսատ էր մնում՝ երբ ինքը ներս էր մտնում. նա ծաղրանքով, սրտնեղելով էր խոսում այդ մասին, բայց չէր անում ոչ մի զիջողություն և մեծագույն հաստատակամությամբ գնում էր իր ճանապարհով։ Սառն, խոցող, արհամարհանքով լի ծաղրն ու հեգնանքը այն զենքն էին, որին նա տիրապետում էր վարպետորեն. այդ զենքը նա հավասարապես կիրառում էր և՛ մեր դեմ, և՛ ընդդեմ ծառաների։ Վաղ պատանեկության տարիներին շատ բան կարելի է ավելի հեշտ տանել, քան խայթոցները, և մինչև բանտ ընկնելս ես, իսկապես էլ, զտարանում էի հորիցս ու փոքրիկ մի պատերազմ մղում նրա դեմ՝ միանալով ծառաներին ու սպասավորներին։

Ի հավելումն այս բոլորի, նա հավատացրել էր իրեն, թե ինքը վտանգավոր հիվանդություն ունի, և շարունակ բուժվում էր. տնային բուժակից բացի նրան այցելում էին երկու կամ երեք բժիշկ, և տարին առնվազն երեք կոնսիլիում էր հրավիրում։ Հյուրերը, տեսնելով նրա մշտական անբարեհաճությունը և լսելով միայն գանգատներ ամենևին էլ ոչ այնքան վատ առողջությունից՝ պակասում էին։ Նա զայրանում էր դրանից, բայց ոչ մի մարդու չկշտամբեց, չհրավիրեց։ Ահավոր ճանձրույթ էր տիրում տանը, հատկապես ձմռան անծայր երեկոներին. երկու լամպ լուսավորում էին սենյակների ամբողջ շարքը, կռացած ու ձեռքերը մեջքին, մահուդե կամ նուրբ թաղիքե ճտքավոր կոշիկներով, թավշյա գլխարկով ու սպիտակ գառան մորթուց կիսամուշտակը հագին, ետ ու առաջ էր անում ծերուկը՝ առանց մի բառ ասելու, երկու-երեք շագանակագույն շների ուղեկցությամբ։

Մելամաղձոտության հետ նրա մեջ աճում էր խնայողական վերաբերմունքը չնչին առարկաների հանդեպ։ Իր համար էլ, գյուղացիների համար էլ նա վատ էր կառավարում

իր կալվածքը։ Տանուտերերը և missi dominici[1] թալանում էին աղային և գեղջուկներին, բայց հո՛ աչքի առաջ եղած ամեն բան ենթարկված էր կրկնակի հսկողության. տնտեսվում էին մոմերը և թույլ vin de Graves[2]-ը փոխարինվում էր Ղրիմի թթու գինով, այն ժամանակ, երբ գյուղերից մեկում ողջ անտառն էին քամուն տալիս, իսկ մյուսում նրա վրա ծախում էին իր իսկ վարսակը։ Նրա մոտ կային արտոնյալ գողեր. այն գյուղացին, որին նա Մոսկվայում դարձրել էր հարկահավաք և որին ամեն ամառ ուղարկում էր տանուտիրոջը, բանջարանոցը, անտառն ու աշխատանքներն ստուգելու, մի տասը տարի հետո տուն առավ։ Ես մանկուց ատում էի այդ անպորտֆել մինիստրին. մի անգամ նա իմ ներկայությամբ բակում ծեծում էր մի ծեր գյուղացու. կատաղությունից ես ճանկեցի նրա մորուքը և քիչ մնաց ուշագնաց լինեի։ Այդ ժամանակվանից մինչև իր մահը՝ 1845 թվականը, չէի կարողանում անտարբեր նայել նրան։ Ես մի քանի անգամ հորս ասել եմ.

— Իսկ որտեղի՞ց է Շկունը ճարել տուն գնելու փողը։

— Ա՜յ թե ի՜նչ է նշանակում չխմել,— պատասխանում էր ծերուկը,— նա մի կաթիլ գինի էլ բերանը չի առնում։

Ամեն տարի բարեկենդանից առաջ Պենզայի գյուղացիները Կերենսկի մերձակայքից բերում էին բնատուրֆ։ Մի երկու շաբաթ քարշ գալով՝ ճանապարհ էր կտրում խոզի մսեղիքով, խոճկորներով, սագերով, հավերով, ձավարով, աշորայով, ձվերով, յուղով ու, վերջապես, քաթանով բեռնված խեղճ սայլախումբը։ Կերենսկի գեղջուկների ժամանումը տոն էր բոլոր սպասավորների համար, նրանք կողոպտում էին գեղջուկներին, ամեն քայլափոխի խաբում հաշվի մեջ, ըստ որում՝ առանց դույզն իսկ իրավունքի։ Կառապանները նրանցից վարձ էին առնում ջրհորի ջրի համար, թույլ չտալով անվճար ջրելու ձիերը, կնիկները՝ խրճիթում տաքանալու համար, ծառայատան արիստոկրատներին նրանք պիտի փեշքեշ տային. որին՝ մի խոճկոր ու երեսսրբիչ, որին՝ սագ ու յուղ։ Աղայի բակում նրանց գտնվելու ողջ ընթացքում սպասավորները մեծ կերուխումի մեջ էին. եփում էին համեմունքներով մսապուր, խոճկորներ էին տապակում, և ծառաների սենյակում մշտապես նստած էր լինում սոխի, վառված ճարպի ու արդեն կոնծած հացողու հոտը։ Բակայը վերջին երկու օրը ծառաների սենյակ չէր մտնում և կիսատպատառ էր հագնվում, հին ծառայաշինելը վրան գցած, առանց ժիլետի ու բաճկոնի, նստում էր խոհանոցի գավթում։ Նիկիտա Անդրեևիչը* նկատելիորեն նիհարում էր, դառնում ավելի թուխ ու ծեր։ Հայրս բավական հանգիստ էր տանում այդ ամենը, հասկանալով, որ դա անհրաժեշտ է և դրա առաջն առնելը՝ անկարելի։

Սառած մսեղիքն ընդունելուց հետո,— և այստեղ ամենանշանակալիցն այն էր, որ այս զավեշտը կրկնվում էր ամեն տարի,— հայրս կանչում էր խոհարար Սպիրիդոնին և ուղարկում Օխոտնի ռյադ ու Սմոլենսկյան շուկա՝ գներն իմանալու։ Խոհարարը վերադառնում էր և շլսված գներ էր ասում՝ եղածի կեսից էլ պակաս։ Հայրս ասում էր, թե նա տխմարի մեկն է և մարդ էր ուղարկում Շկունի կամ Սլեպուշկինի ետևից։ Սլեպուշկինը Իլինսկի դարպասների մոտ մրգի առևտուր էր անում։ Թե սա և թե մյուսը գտնում էին, որ խոհարարի գները սարսափելի ցածր են, տեղեկանում էին ու ավելի բարձր գներ էլ ասում։ Ի վերջո՝ Սլեպուշկինն առաջարկում էր թոմարի իրեն վաճառել թե՛ ձուն, թե՛ խոճկորները, թե՛ յուղն ու աշորան, որպեսզի «Ձեր առողջությանը, տե՛ր իմ, վնաս չհասնի»։ Ինքնին հասկանալի է, որ նա խոհարարի գնից մի քիչ բարձր գին էր տալիս։ Հայրս համաձայնվում էր, Սլեպուշկինը հորս մաղարիչ էր անում նարինջներով ու քաղցրաբլիթներով, իսկ խոհարարին՝ երկու հարյուրանոցով։

Այդ Սլեպուշկինը հորս աչքն էր մտել և հաճախ նրանից փող էր պարտք անում. նա այս տեղ էլ ինքնատիպ էր, հենց այն պատճառով, որ խորապես ուսումնասիրել էր ծերուկիս բնավորությունը։

Պատահում էր, երկու ամսով մի հինգ հարյուր ռուբլի էր խնդրում և ժամկետից մի օր առաջ հայտնվում էր նա-

[1] տիրոջ գործավարները (լատ.)։
[2] սպիտակ գինու տեսակ (ֆրանս.)։

խասենյակում՝ սեղանի վրա մի կուլիշ[1], կուլիշի վրա էլ՝ հինգ հարյուր ռուբլի։ Հայրս վերցնում էր փողը, Սլեպուշկինը խոր գլուխ էր տալիս և ուզում էր համբուրել ձեռքը, օրը աղան չէր մեկնում։ Բայց մի երեք օր անց Սլեպուշկինը նորից էր գալիս պարտք խնդրելու, էս անգամ՝ հազար հինգ հարյուր ռուբլի։ Հայրս տալիս էր, և Սլեպուշկինը նորից ժամանակին վերադարձնում էր։ Հայրս նրան օրինակ էր բերում, իսկ սա մի շաբաթ անց մեծացնում էր խաղագումարը և այդպիսով իր գործառնությունների համար ունենում էր տարեկան մի հինգ հազար ռուբլի՝ առձեռն, ոչ մեծ տոկոսով՝ երկու-երեք կուլիշ, մի քանի ֆունտ խուրմա ու ընկույզ և մի հարյուր նարինջ ու Ղրիմի խնձոր։

Վերջում հիշատակեմ, թե ինչպես Նովոսելյեում կորավ մի քանի հարյուր դեսյատին շինափայտի անտառ։ Քառասնական թվականներին Մ. Ֆ. Օրլովը*, որին այն ժամանակ հիշում եմ, կոմսուհի Աննա Ալեքսեևնան* դրամագլուխ էր տվել իր երեխաների համար կալվածք գնելու, սկսեց սակարկել Սենատորից հորս բաժին հասած տվերյան կալվածքի շուրջ։ Գնի վերաբերյալ համաձայնության եկան, և գործը վերջացած էր թվում։ Օրլովը գնաց կալվածքը նայելու և նայելուց հետո հորս գրեց, թե նա հատակագծի վրա իրեն անտառ է ցույց տվել, բայց անտառ բնավ էլ չկա։

— Ա՜յ քեզ խելքի կոթոր,— ասում էր հայրս,— կոնսպիրացիայի մեջ էլ է եղել, գիրք էլ է գրել des finaces[2], բայց հենց որ բանը գործին հասավ, պարզվեց, որ դատարկ մարդ է... Նեկկերնե՞ր։ Իսկ ես, ա՜յ, կխնդրեմ, որ Գրիգորի Իվանովիչը՝ գնա, նա կոնսպիրատոր չէ, բայց ազնիվ մարդ է ու գործը գիտի։

Գրիգորի Իվանովիչն էլ գնաց Նովոսելյե ու լուր բերեց, թե անտառը չկա, կա սոսկ անտառի դեկորացիա, այնպես, որ ոչ աղայի տնից, ոչ էլ մեծ ճանապարհից հատած տեղերը չեն նշմարվում։ Բաժանությունից հետո Սենատորը ամենաքիչը հինգ անգամ եղել էր Նովոսելյեում, և ամեն ինչ այրպես ծածկադմփոց արած էլ մնացել էր։

Մեր նիստուկացի մասին լրիվ պատկերացում տալու համար նկարագրեմ մի լրիվ օր՝ սկսած առավոտվանից։ Ամենասպանիչ բաներից մեկը հենց միօրինակությունն էր, մեր կյանքն անցնում էր ընթացքը դանդաղեցված անգլիական ժամացույցի պես՝ հանդարտ, ճշգրիտ ու բարձրաձայն հիշեցնելով ամեն մի վայրկյանը։

Առավոտյան ժամը տասին սենեկապանը, որը նստում էր ննջարանին՝ կից սենյակում, վերա Արտամոնովնային՝ իմ էքս-դայակին տեղեկացնում էր, որ աղան վեր է կենում։ Սա գնում էր սուրճ պատրաստելու, որը աղան խմում էր մենակը, իր՝ առանձնասենյակում։ Տանն ամեն բան այլ կերպարանք էր առնում, ծառաներն սկսում էին մաքրել սենյակները, համենայն դեպս այնպիսի տեսք էին ընդունում, թե ինչ-որ բան են անում։ Սպասավորների կացարանը, որ մինչ այդ դատարկ էր, լցվում էր, նույնիսկ նյուֆաունդլենդյան մեծ շունը՝ Մակբեթը, նստում էր վառարանի առաջ՝ ու անթարթ նայում կրակին։

Սուրճ խմելիս ծերուկը կարդում էր «Մոսկովսկիե վեդոմոստին» և «Journal de st. Peterbourg»-ը։ չի խանգարի ասել, որ կարգադրված էր «Մոսկովսկիե վեդոմոստին» տաքացնել, որպեսզի էշերի խոնավությունից ձեռքերը չպաղեն, և որ հայրս քաղաքական նորությունները տեղեկանում էր ֆրանսերեն տեքստից, ռուսերենը համարձակով անհասկանալի։ Մի ժամանակ ինչ-որ տեղից նա ձեռք էր բերում համբուրգյան լրագիր, բայց չէր կարողանում հաշտվել, որ գերմանացիները տպագրում են գերմաներեն տառերով, ամեն անգամ ցույց էր տալիս ինձ ֆրանսիական ու գերմանական տպագրության տարբերությունը և ասում, որ այդ պաճուճազարդ, պչալավոր գոթական տառերից տեսողությունը թուլանում է։ Ապա նա ստանում էր «Journal de Francfort», իսկ հետագայում սահմանափակվում էր հայրենական լրագրերով։

Ավարտելով ընթերցանությունը, նա նկատում էր, որ Կարլ Իվանովիչ Զոնենբերգն արդեն իր սենյակում է։ Ծերը նիկը տասնհինգ տարեկան էր, Կարլ Իվանովիչը քիչ մնաց

---

1 գլանաձև կաթնահունց քաղցր հաց, ըստ ուղղափառների սովորության՝ թխում են զատկի տոնին։

2 Ֆինանսների մասին (ֆրանս.)։

կրպակ բացեր, բայց չունենալով ոչ ապրանք ու ոչ էլ գնորդ և մի կերպ հավաքած դրամը վատնելով այդ շահավետ առևտրի վրա, ձեռք քաշեց կրպակից՝ ստանալով «Ռևելյան նեգոցիանտ» պատվավոր տիտղոսը։ Այդ ժամանակ նա քառասունն անց էր և այդ համակրելի տարիքում անհոգ թռչնակի կամ տասնչորսամյա մանչուկի կյանք էր վարում, այսինքն՝ չգիտեր, թե վաղը որտեղ պիտի քնի և ինչ պիտի ուտի։ Նա օգտվում էր հորս որոշ բարեհաճությունից. հիմա մենք կտեսնենք, թե դա ինչ է նշանակում։

1830 թվականին հայրս մեր տան մոտերքում գնեց ավելի մեծ, ավելի լավ ու պարտեզով մի ուրիշ տուն, որը պատկանում էր կոմսուհի Ռոստոպչինային՝ նշանավոր Ֆեոդոր Վասիլևիչի կնոջը։ Մենք տեղափոխվեցինք այնտեղ։ Դրանից հետո նա գնեց երրորդ տունը, որն արդեն բոլորովին ավելորդ էր, բայց կից էր նախորդին։ Այդ երկու տներն էլ դատարկ էին, վարձով չէին տրվում՝ զգուշանալով հրդեհից (տներն ապահովագրված էին) և այն անհանգստությունից, որ կարող էին պատճառել կենվորները, ավելին՝ դրանք չէին էլ նորոգվում, այնպես որ՝ ավերվելու ամենաճիշտ ճանապարհին էին։ Թույլ էր տրված, որ տներից մեկում ապրի անապաստան Կարլ Իվանովիչը, այն պայմանով, որ իրիկվա ժամը տասից հետո դարպասը բաց չանի (դյուրի՞ն պահանջ, քանի որ դարպասը երբեք չէր էլ փակվում), վառելափայտը գնի և ոչ թե վերցնի տան պաշարից (նա իրոք փայտը գնում էր... մեր կառապանից) և հորս համար հատուկ հանձնարարություններ կատարի, այսինքն՝ առավոտները ներկայանա հարցնելու՝ չկա՞ արդյոք որևէ կարգադրություն, ներկա լինի ճաշին, և երեկոները, երբ ոչ ոք չի լինում, գա ու զբաղեցնի պատմություններով ու նորություններով։

Թվում է, որքան էլ հասարակ էր Կարլ Իվանովիչի պաշտոնը, հայրս կարողանում էր այնքան դառնություն հավելել դրան, որ անփող, անխելք, կարճահասակ, չեչոտ ու օտարական մարդու գլխին թափվող բոլոր աղետներին ընտելացած իմ խեղճ ուղեղին ի զորու չէր երկար դիմանալու։ Տարին, երկու տարին մեկ խորապես վիրավորված Կարլ Իվանովիչը հայտարարում էր, որ «դա միանգամայն անտանելի է», հավաքում էր իրերը, առնում ու փոխանակում



էր կասկածելի պիտանիության ու տարակուսելի որակի զանազան առարկաներ և ուղևորվում Կովկաս։ Զախորդությունները սովորաբար հետապնդում էին անողոքությամբ. մե՛կ նրա յաբուն էր սատկում Դոնի կազակների երկրի մոտերքում,— նա իր ձիով էր գնում Թիֆլիս ու Ռեդուտ-Կալե,— մե՛կ բեռի կեսն էին գողանում, մե՛կ ջարդվում էր երկանիվ սայլակառքը,— ըստ որում ոչ մեկի կողմից չգնահատված ֆրանսիական օծանելիքը էլբրուսի ստորոտում թափվում էր կոտրված անիվի վրա,— մե՛կ որևէ բան էր կորցնում, ու երբ ոչինչ չէր մնում կորցնելու՝ կորցնում էր իր անձնագիրը։ Սովորաբար մի տասը ամիս անց Կարլ Իվանովիչը, ավելի ծերացած, ավելի ճմրթված, ավելի թըշվառ, ատամներն ու մազերը ավելի նոսրացած, լվի ու փայտոշիլի պարսկական դեղափոշու, խունացած թարմալամի[1], ժանգոտած չերքեզական դաշույնների · պաշարով՝ հլու-հնազանդ ներկայանում էր հորս ու նորից բնակություն հաստատում դատարկ տան մեջ՝ հանձնարարությունները կատարելու և վառարանը իր փայտով վառելու նույն պայմաններով։

Նկատելով Կարլ Իվանովիչին, հայրս իսկույն փոքր ռազմական գործողություններ էր սկսում նրա դեմ։ Կարլ Իվանովիչը հարցնում էր նրա որպիսությունը, ծերուկը գլխով շնորհակալություն էր հայտնում և ապա, մի թեթև մտածելուց հետո, հարցնում էր, օրինակ՝

— Օծանելիքը որտեղի՞ց եք գնում։

Ի դեպ՝ պիտի ասել, որ Կարլ Իվանովիչը, մահկանացուներից ամենաանճոռնին, ահավոր կնամոլ էր, իրեն Լովլաս՞ էր համարում, հագնվում · էր հավակնոտ ու գանգրացրած խարտյաշ-ոսկեգույն կեղծամ էր դնում։ Այս ամենը, անշուշտ, հայրս վաղուց կշռադատել էր ու գնահատել։

— Բուխսից, Կուզնեցկի կամուրջ...— կցկտուր պատասխանում էր Կարլ Իվանովիչը մի քիչ խայթված և ոտը ոտի առաջ էր դնում, ինչպես իրեն պաշտպանելու պատրաստ մարդը։

— Ի՞նչ են ասում այս բուրմունքին։

[1] մետաքսե կամ կիսամետաքս կտոր, որից խալաթ էին կարում։

— Նախատ-ֆիոլեն[1],— պատասխանում էր Կարլ Իվանովիչը։

— Գուք խաբված եք, violette[2]-ը նուրբ հոտ ունի, c'est un parfum[3], իսկ սա մի տեսակ թունդ է, նողկալի, դիակները դրա նման մի բանով են զմռսում։ Ջղերս ինչքա՞ն են թուլացել, նույնիսկ սիրտս սկսեց խառնել, ասեք թող ինձ գդեկոլոն տան։

Կարլ Իվանովիչն ինքն էր նետվում սրվակը բերելու։

— Չէ՛, չէ՛, ասեք թող ուրիշ մեկը գա, թե չէ դուք ավելի կմոտենաք ինձ՝ ես կվատանամ, ուշքս կանցնի։

Կարլ Իվանովիչը, որ հուսով էր, թե իր օծանելիքը ներգործություն կունենա աղախինների կացարանում, խորապես վշտանում էր։

Սենյակում օդեկոլոն շաղ տալուց հետո հայրս մտմտալով հանձնարարություններ էր հնարում՝ գնել ֆրանսիական ծխախոտ, անգլիական աղ, թերթերի հայտարարությամբ վաճառքի հանված կառքը (նա ոչինչ չէր գնում)։ Կարլ Իվանովիչը, բավականությամբ խոնարհվելով և հոգով գոհացած, որ գլուխը պրծացրեց, հեռանում էր մինչև ճաշի ժամը։

Կարլ Իվանովիչից հետո ներկայանում էր խոհարարը. ինչ էլ որ նա գներ, ինչ ծախսացուցակ էլ ներկայացներ՝ հայրս չափից դուրս թանկ էր համարում։

— Պահո՞, էս ի՞նչ թանկություն է, էդ ի՞նչ բան է, գյուղից ապրանք չի՞ գալիս, ի՞նչ է։

— Հենց էդպես էլ է,— պատասխանում էր խոհարարը,— ախր, ճամփեքը շատ վատն են։

— Դե որ էդպես է, մինչև ճամփեքը կարգի գցեն՝ մենք էլ քեզ հետ գնումներ քիչ կանենք։

Դրանից հետո նա նստում էր իր գրասեղանի առջև, պատասխան թղթեր ու կարգադրություններ գրում գյուղերը, ի մի էր բերում հաշվարկները, արանքում խրատում էր ինձ, ընդունում բժշկին և, ամենագլխավորը՝ կռվում իր սենեկապանի հետ։ Սա առաջին խնամարկյալն էր ամբողջ տան մեջ։ Ցածրահասակ, սանգվինիկ, դյուրաբորբոք ու զայրացկոտ այդ մարդն ասես դիտմամբ ստեղծված էր, որ բարկացնի հորս և նրա խրատաբանությունը հարուցի։ Նրանց միջև ամեն օր կրկնվող տեսարանները կարող էին ուզածդ կատակերգության նյութ դառնալ, մինչդեռ այդ բոլորը կատարվում էր միանգամայն լրջորեն։ Հայրս լավ գիտեր, որ այդ մարդն իրեն պետք է և հաճախ հանդուրժում էր նրա չափն անցնող պատասխանները, բայց ձեռք չէր քաշում նրան դաստիարակելուց, չնայած երեսունհինգ տարվա ապարդյուն ջանքերին։ Իր հերթին՝ սենեկապանը չէր դիմանա այդ կյանքին, եթե չունենար իր հաճույքը. մեծ մասամբ նա ճաշին լինում էր մի քիչ կոնծած։ Հայրս նկատում էր դա և բավարարվում թեթև ակնարկումներով, օրինակ, խորհուրդ էր տալիս մի կտոր սև հաց ու աղ դնել բերանը, որ օդու հոտը չգա։ Նիկիտա Անդրեևիչը սովորություն ուներ խմած ժամանակ սկուտեղը մատուցելիս յուրովի ոտքերը շրխկացնելով գլուխ տալ։ Հենց որ հայրս նկատում էր այդ, նրա համար որևէ հանձնարարություն էր հնարում, օրինակ՝ ուղարկում էր «սափրիչ Անտոնից հարցնելու՝ հո չի՞ փոխել քնակարանը», և գառնալով ինձ ֆրանսերեն ավելացնում էր.

— Ես գիտեմ, որ նա չի տեղափոխվել, բայց սա խմած է, սուպի ամանը կգցի-կկոտրի, սփոռցին կթափի ու ինձ լեղաճաք կանի։ Թող գնա թարմանա, le grand air-ն[1] օգնում է։

Սենեկապանը նման «խաղերի» ժամանակ սովորաբար ինչ-որ պատասխան տալիս էր, բայց երբ բան չէր գտնում երեսին ասելու, դուրս գնալիս մոթմոթում էր քթի տակ։ Աղան էլ նույն հանգիստ ձայնով ետ էր կանչում՝ նրան ու հարցնում, թե բա՞ն ասաց։

— Ես բան էլ չասացի։

— Բա ո՞ւմ հետ ես խոսում, ոչ այստեղ, ոչ էլ մյուս սենյակում ինձնից ու քեզնից բացի մարդ չկա։

— Ինքս ինձ հետ։

— Դա շատ վատանգավոր է, դրանից էլ սկսվում է խելագնորությունը։

---

1 Գիշերային մանուշակ (գերմ. Nachtviole-ից)։

2 մանուշակ (ֆրանս.)։

3 դա անուշաբույր է (ֆրանս.)։

1 թարմ օդ (ֆրանս.)։

Սենեկապանը կատաղած գնում էր ննջարանի կողքի իր սենյակը. այնտեղ նա կարդում էր «Մոսկովսկիե վեդոմոստին» և ծախու կեղծամների համար մաղեր հյուսում։ Երևի սիրտը հովացնելու համար՝ կատաղած քթախոտ էր քաշում. թութո՞ւն էր, արդյոք, թունդ, թե՞ քթի նյարդերն էին թուլացած, ինչ որ է՝ հետևանքն այն էր լինում, որ նա համարյա միշտ վեց-յոթ անգամ փռշտում էր։

Աղան զանգը տալիս էր։ Սենեկապանը գցում էր ձեռքի մազափունջը և ներս էր մտնում։

— Դո՞ւ ես փռշտացողը։

— Ես եմ։

— Առողջությո՛ւն։— Ու ձեռքով նշան էր անում, որ սենեկապանը հեռանա։

Բարեկենդանի վերջին օրը բոլոր սպասավորները, հին սովորության համաձայն, երեկոյան գալիս էին աղայից թողություն հայցելու. այդ հանդիսավոր պահերին հայրս դահլիճ էր մտնում սենեկապանի ուղեկցությամբ։ Այստեղ նա ձևացնում էր, թե բոլորին չէ, որ ճանաչում է։

— Այն ի՞նչ պատկառելի ծերուկ է կանգնած այնտեղ, անկլունում,— հարցնում էր նա սենեկապանին։

— Կառապան Դանիլոն է,— սերտած պատասխանում էր սենեկապանը, գիտենալով հանդերձ, որ այդ բոլորը սոսկ թատերային մի ներկայացում է։

— Ասացե՛ք, Պանդրեմ, ո՞նց է փոխվել։ Ճիշտն ասած, կարծում եմ, որ մարդիկ գինու երեսից են այդպես ծերանում. նա ի՞նչ գործի է։

— Փայտ է քարշ տալիս վառարանի մեջ։

Ծերուկի դեմքը անտանելի ցավ էր արտահայտում։

— Երեսուն տարվա մեջ խոսել չսովորեցիր, էլի՛... Քա՞րշ է տալիս. ինչպե՞ս թե՝ փայտ է քարշ տալիս, փայտը կրում են, ոչ թե քարշ են տալիս։ Դե՛, Դանիլո, փա՞ռք աստծո, տերը արժանի համարեց մի անգամ էլ քեզ տեսնելու։ Թողություն եմ տալիս այս տարվա քո բոլոր մեղքերին՝ թե՛ անհաշիվ ծախսած վարսակի համար, թե՛ ձիերը մաքուր չպահելուդ համար, և դու էլ ինձ ներիր։ Շարունակիր փայտ քարշ տալ, քանի դեռ ուժ ունես, պասը ծկսվի՝ գինի քիչ



գործածիր, մեր տարիքում վնասակար է, համ էլ մեղք բան է։

Նման ձևով նա անցկացնում էր ընդհանուր ստուգատես։

Մենք ճաշում էինք ժամը չորսին։ Ճաշը երկար էր տևում և լինում էր շատ ձանձրալի։ Սպիրիդոնը գերազանց խոհարար էր, բայց մի կողմից հորս, մյուս կողմից իր սեփական խնայողությունը ճաշը դարձնում էր բավական աղքատիկ, չնայած կերակրատեսակները շատ էին։ Հորս կողքին դրված էր լինում կարմիր կավե մի պնակ, որի մեջ նա իր ձեռքով զանազան կտորներ էր դնում շների համար. դեռ ավելին՝ շներին կերակրում էր իր պատառաքաղով, որ խիստ վիրավորում էր ծառաներին, ուրեմն և ինձ։ Ինչո՞ւ— դժվար է ասել...

Հյուրեր առհասարակ քիչ էին գալիս, ճաշելու՝ ավելի քիչ։ Բոլոր մեր տուն եկողներից հիշում եմ միայն մի մարդու՝ Ն. Ն. Բախմետևին, որի այցելությունը ճաշին երբեմն ցրում էր հորս կնճիռները։ Ն. Ն. Բախմետևը,— կաղ գեներալի եղբայրը և ինքն էլ գեներալ, բայց վաղուց պաշտոնաթող,— հորս հետ բարեկամ էր դեռևս Իզմայլովյան գնդում ծառայելու ժամանակվանից։ Նրանք միասին քեֆեր էին անում Եկատերինայի օրոք, Պավելի ժամանակ երկուսով էլ զինվորական դատարան էին ընկել. Բախմետևն այն բանի համար, որ ինչ-որ մեկի հետ մենամարտել էր, հայրս՝ մարտավկա լինելու համար։ Հետո մեկը գնացել էր օտար ափեր՝ Իրրև տուրիստ, մյուսը՝ Ուֆա՝ որպես նահանգապետ։ Նրանց մեջ նմանություն չկար։ Բախմետևը լիքը-լիքը, առողջ ու գեղեցիկ ծերուկ էր, և՛ լավ ուտել էր սիրում, և՛ մի քիչ խմել, սիրում էր աշխույժ զրույցներ և շատ ուրիշ բաներ։ Նա պարծենում էր, որ ժամանակին ուտում էր հարյուրի չափ փռի կարկանդակ և կարողանում էր վաթսունին մոտ տարիքում անպատիժ օգտագործել շուրջ մի դյուժին հընդկացորենի յուղալի բլիթ։ Ես մի քանի անգամ ներկա եմ եղել այդ փորձերին։

Բախմետևը հորս վրա ազդեցության ինչ-որ նշույլ ունի կամ գոնե զսպում էր նրան։ Երբ Բախմետևը նկատում էր, որ հայրս չափից դուրս անտրամադիր է, դնում էր գլխարկը և, զինվորական ձևով ոտքերը շրխկացնելով, ասում.

— Ցտեսությո՛ւն, այսօր դու տկար ես ու հիմարացած։ Ես ուզում էի մնալ ճաշի. բայց սեղանի շուրջ թթված դեմք տանել չեմ կարող։ Գեհորսամեր դիներ[1]...

Իսկ հայրս, ի պարզաբանումն, ասում էր ինձ.

— Impressario![2], որքա՜ն դեռևս աշխույժ է Ն. Ն.-ն։ Փա՜ռք աստծու, առողջ մարդ է, նա չի կարող հասկանալ ինձ-պեսին՝ բազմաշարշար Հոբին։ քսան աստիճան սառնամանիք է, բայց նա թռչում է սահնակով, հեշ վեջն էլ չի... Իսկ ես ամեն առավոտ փառք եմ տալիս արարչին, որ արթնացել եմ կենդանի, որ դեռ շնչում եմ։ Օ՞ֆ, օ՛ֆ, օ՛ֆ, զուր չէ, որ առածն ասում է՝ կուշտը սովածին մանր է բրդում։

Առավել զիջողամտություն չէր կարելի սպասել նրանից։ Երբեմն տալիս էինք ընտանեկան ճաշկերույթներ, որոնց ներկա էին լինում Սենատորը, Գոլոխվաստովները և ուրիշներ, և այդ ճաշկերույթները ոչ բավականության համար էին տրվում և ոչ էլ հենց այնպես, այլ հիմքում տնտեսական-քաղաքական խոր նկատառումներ ունեին։ Այսպես՝ փետրվարի 20-ին, Լև Կատանսկու տոնին, այսինքն՝ Սենատորի անվանակոչության օրը ճաշկերույթը մե՛ր տանն էր լինում, իսկ հունիսի 24-ին, այսինքն Իվանի տոնին՝ Սենատորի տանը, և այս հանգամանքը, եղբայրական սիրո բարոյական օրինակ լինելուց բացի, թե՛ մեկին, թե՛ մյուսին ազատում էր սեփական տանը ավելի մեծ ճաշկերույթ տալու հոգսից։

Եվ հետո՝ կային զանազան habitués։ Ներկայանում էր, ex officio[3], Կարլ Իվանովիչ Ջոնենբերգը, որը, հենց ճաշից առաջ տանը մի բաժակ օղի գլած ու մի կտոր ռենկլյան մանրաձուկ կերած լինելով՝ հրաժարվում էր ինչ-որ հատուկ տնական օղու փոքրիկ ըմպանակից. երբեմն գալիս էր Ֆրանսիացի վերջին իմ ուսուցիչը, լպիրշ մռութով բամբասկոտ, կծծի ծերուկը։ Monsieur Thiriè-ն այնքան հաճախ էր սխալվում՝ գարեջրի փոխարեն բաժակի մեջ գինի

[1] խոնարհ ծառան (գերմ. gehorsamer Diener-ից)։
[2] այսպես՝ նախատենքով նշանակությամբ (իտալ.)։
[3] ըստ պարտականության (լատ.)։



լցնելով ու ներողություն խնդրելով խմում, որ Կայրս քիչ անց նրան ասում էր.

— Ձեր աջ կողմում դրված է vin de Graves, նորից լցնալվեք,— և Տիրյեն լիքը պողունց քթախոտը լայն ու մի կողմ ցցված քիթը խոթելիս թափում էր ափսեի մեջ։

Ի թիվս այս այցելուների՝ կար վերին աստիճանի կոմիկական մի անձնավորություն։ Հագին միշտ նեղ ու կարճ ֆրակ ու ժիլետ, որը մինչև այնտեղն էր հասնում, որտեղից սկսվում է հիմիկվա ժիլետը, բարալիկ ձեռնափայտով, փոքրիկ, ճաղատ այդ բիձուկը իր ողջ կեցվածքով մարմնավորում էր քսան տարի առաջվանը, 1830-ին՝ 1810 թվականը, իսկ 1840-ին՝ 1820-ը։ Դմիտրի Իվանովիչ Պիմենովը, որ պետական խորհրդականի աստիճան ուներ, Շերեմետևի անկելանոցի պետերից էր և միաժամանակ զբաղվում էր գրականությամբ։ Բնությունից ժլատորեն օժտված և Կարամզինի սենտիմենտալ ֆրազներով, Մարմոնտելով* և Մարիվոյով* դաստիարակված Պիմենովը կարող էր լինել Շալիկովի և Վ. Պանաևի միջնեկ եղբայրը։ Այդ հարգարժան փաղանգի Վոլտերը Ալեքսանդրի ժամանակվա գաղտնի ոստիկանության պետ Յակով Իվանովիչ դը Սանգլենն էր, հույժ ներշնչող երիտասարդ անդամը՝ Պիմեն Արապովը։ Նրանք բոլորը հարում էին ընդհանուր նահապետ Իվան Իվանովիչ Դմիտրիևին. նա մրցակիցներ չուներ, բայց կար Վասիլի Լվովիչ Պուշկինը։ Պիմենովը ամեն երեքշաբթի ներկայանում էր ծերունազարդ Դմիտրիևին, Սադովայայի նրատունը՝ ոճի գեղեցկության և նոր լեզվի ապականվածության շուրջ դատողություններ անելու*։ Դմիտրի Իվանովիչն ինքը գայթակղված էր հայրենի բանասիրության սայթաքումներով. սկզբում նա հրատարակեց «Հերցոգ դը Լարոշֆուկոյի* մտքերը», ապա՝ «Կանացի գեղեցկության և հմայքի մասին» տրակտատը։ Այդ տրակտատից, որը տասնվեց տարեկանից հետո ձեռքս չեմ առել, ես հիշում եմ սոսկ այնպիսի երկարապատում համեմատություններ, ինչպես Պլուտարքոսն է համեմատում հերոսներին՝ խարտյաշներին սևահերների հետ։ «Թեև խարտյաշ կինն այսպիսինն է, այսպիսինն ու այսպիսինը, սակայն, փոխարենը, սևահեր կինն էլ այսպիսինն է, այսպիսինն ու այսպիսինը...»։

Պիմենովի գլխավոր առանձնահատկությունը ոչ թե այն էր, որ նա մի ժամանակ հրատարակել էր գրքույկներ, որոնք երբեք ոչ ոք չէր կարդացել, այլ այն, որ երբ սկսում էր քրքջալ՝ չէր կարողանում իրեն զսպել, և ծիծաղը վերածվում էր կապույտ հազի նոպայի՝ ճայթյուններով ու խուլ որոտմունքով։ Նա այդ գիտեր և դրա համար էլ որևէ ծիծաղաշարժ բան կանխազգալիս կամաց-կամաց իր միջոցներն էր ձեռնարկում՝ հանում էր թաշկինակը, նայում էր ժամացույցին, կոճկում էր ֆրակը, երկու ձեռքով ծածկում էր դեմքը և, երբ վրա էր հասնում ճգնաժամը՝ տեղից վեր էր կենում, շուռ գալիս պատի կողմը, հենվում պատին ու կես ժամ, մի քիչ էլ ավելի տանջվում էր, ապա հանկարծահաս նոպայից հոգնած, կարմրատակած, ճաղատ գլխի քրտինքը սրբելով՝ նստում էր, բայց դեռ երկար ժամանակ չէր հանդարտվում։

Պարզ է, որ հայրս բոլորովին բանի տեղ չէր դնում նրան. նա հեզ, բարի, անճարակ, գրող ու խեղճ մարդ էր, ուրեմն և բոլոր առումներով արտոնակարգից դուրս էր։ Բայց հայրս լավ էր նկատել նրա ջղաձիգ ծիծաղամոլությունը։ Դրա համար էլ նրան ստիպում էր ծիծաղել այնքան, մինչև մնացած բոլորն էլ, նրանից ազդվելով, սկսում էին մի տեսակ անբնական հոհոալ։ Այնժամ ծաղրահանդեսի մեղավորը, թեթև ժպտալով, նայում էր մեզ, ինչպես մարդ դիտում է թուլաների գզվռտոցը։

Հայրս երբեմն ահավոր խաղեր էր խաղում կանացի գեղեցկությունն ու հմայքը գնահատող թշվառականի գլխին։

— Ինժեներ-գնդապետ այսինչը,— զեկուցում էր ծառան։

— Ներս խնդրիր,— ասում էր հայրս և, դառնալով Պիմենովին, ավելացնում.— Դմիտրի Իվանովիչ, խնդրում եմ նրա ներկայությամբ զգույշ լինեք. նա դեմքի չարաբաստիկ ջղակծկում ունի, երբ խոսում է՝ մի տեսակ արտառոց ձևով կակազում է, ոնց որ խրոնիկական զկրտոց ունենա,— այդ ասելով նա միանգամայն ճշգրտորեն պատկերում էր գնդապետին։— Ես գիտեմ, դուք ծիծաղկոտ մարդ եք, խնդրում եմ ձեզ զսպեք։

Այդքանը բավական էր. ինժեների երկրորդ խոսքի վրա Պիմենովը հանում էր թաշկինակը, ձեռքերը ափ անում ու... վեր էր ցատկում։



Ինժեները զարմանքով նայում էր, իսկ հայրս ամենայն հանգստությամբ ասում էր ինձ.

— Ի՞նչ պատահեց Դմիտրի Իվանովիչին։ Il est malade[1]. դա ջղակծկում է. ասա, թող շուտ մի բաժակ սառը ջուր տան, օդեկոլոն էլ բեր։

Նման դեպքերում Պիմենովը ճանկում էր գլխարկը և մինչև Արբատյան դարպասներ հոհոում՝ կանգ առնելով խաչմերուկներում ու հենվելով լապտերասյուներին։

Նա մի քանի տարի շարունակ երկու շաբաթը մեկ ճաշում էր մեր տանը, և թե՛ նրա ճշտապահությունը, թե՛ անճշտապահությունը, եթե մեջ էր տալիս, բարկացնում էին հորս, և հայրս նրան նեղում էր։ Իսկ բարի Պիմենովը, այնուամենայնիվ, ոտքով Կարմիր դարպասներից Ստարայա Կոնյուշեննայա էր գնում-գալիս այնքան ժամանակ, մինչև որ մեռավ, ըստ որում՝ բնավ էլ ոչ ծիծաղաշարժ մահով։ Միայնակ, ամուրի ծերուկը տեսական հիվանդությունից հետո հանգչող աչքերով տեսնում էր, թե ինչպես իր տնտեսուհին տանում էր իր ունեցած-չունեցածը, շորերը, նույնիսկ անկողնու սպիտակեղենը՝ լրիվ առանց խնամքի թողնելով իրեն։

Բայց ճաշի իսկական souffre-douleur[2]-ները զանազան պառավներն էին՝ իշխանուհի Մ. Ա. Խովանսկայայի (իմ հորաքրոջ) հաշվին ապրող ընչազուրկ ու թափառական ձրիակերները։ Նրանք երբեմն տոներին մեզ մոտ էին գալիս ամբողջ օրով՝ թարմանալու, մասամբ էլ այն բանի համար, որ տեղեկանան, թե մեր տանը ինչն ինչոց է, թե գժտություն չի՞ ընկել արդյոք պարոնների մեջ, արդյոք չե՞ն կռվել խոհարարն ու իր կինը, իմացե՞լ է, արդյոք, աղան, որ Պալաշան կամ Ուլյաշան պատճառավոր են։ Հարկ է նշել, որ այդ այրիները, դեռ օրիորդության օրոք, քառասուն, հիսուն տարի առաջ, ապավինել էին իշխանուհու և իշխանադուստր Մեշչերսկայայի տանը և հորս այդ ժամանակվանից գիտեին, երիտասարդական թափառումների ու պա-

1 Նա հիվանդ է (ֆրանս.)։

2 թավության նոխազ (ֆրանս.)։

ռավտկան թափառաշրջիկությունն արանքում նրանք մի քանի տարի զզվուտվել էին ամուսինների հետ, ետ պահել նրանց հարբեցողությունից, անդամալուծության օրերին խնամել ու գերեզման ուղեկցել։ Ոմանք, մի բոլուկ երեխեքն հետները, ինչ-որ կայազորային սպայի հետ քարշ էին եկել Թեսարաբիայում, մյուսները տարիներով դատի մեջ եղել ամուսինների հետ, և կյանքի այդ բոլոր փոթութիւնները նրանց վրա թողել էին ողբասացության ու գավառական քաղաքների հետքեր, ներարկել երկյուղ՝ այս աշխարհի հզորների հանդեպ, նվաստացման զգացում ու մի տեսակ բթամիտ մոլեռանդություն։

Նրանց հետ տեղի էին ունենում զարմանալի տեսարաններ։

— Քեզ ի՞նչ է եղել, Աննա Յակիմովնա, բան չես ուտում, հիվա՞նդ ես, ի՞նչ է,— հարցնում էր հայրս։

Մաշված ու խանկռած դեմքով, կուզ եկած պառավը՝ Կրեմենչուգի ինչ-որ վերակացուի այրին, որից շարունակ յախուի սուր հոտ էր փչում, կուզ ու ձիգ գալով պատասխանում էր.

— Ներեցե՛ք, տե՛ր իմ, Իվան Ալեքսեևիչ, ճշմարիտն ասած, խղճի դեմ բան է, հին սովորություն է, հի՛, հի՛, հի՛, հիմա պաս է։

— Է՛հ, բա՞ն ասիր դու էլ, աստծուն ես քծնում, էլի՛։ Գիրծն էն չէ, սիրելիս, որ բերանն է մտնում, այլ բերանից դուրս եկածն է։ Էս ուտես, թե էն՝ մեկ է, բայց, ա՛յ բերանից դուրս եկածի՞ն պետք է հետևես... ասեկոսեներին, էն էլ մերձավորիդ մասին։ Լավ կլիներ էսպիսի օրերին տանը ճաշեիր. թե չէ տեսար՝ թուրք էլ եկավ՝ նրան էլ փլա՞վ է պետք, հո էստեղ հերբերգ[1] չէ à la carte[2]։

Վախեցած պառավը, որը մտքում դրել էր վերջում մի քիչ էլ ձավար ու ալյուր ուզել, վրա էր տալիս կվասին ու սալաթին, ձևացնելով, թե կուշտ ուտում է։

Բայց ուշագրավն այն է, որ հենց նա կամ նրանցից մեկն

[1] պանդոկ (գերմ. Herberge-ից)։
[2] այստեղ՝ ըստ ճաշացուցակի (ֆրանս.)։



ու մեկը պասին ուտիսվա կերակուր էր դնում բերանը, հայրս (որ երբեք պաս չէր պահում), տրտմորեն տարուբերելով գլուխը, ասում էր.

— Աննա Յակիմովնա, գուցե թե չարժեր մնացած վերջին մի քանի տարիներին փոխել նախնյաց կարգը։ Ես մեղք գործում, ուտիսվա կերակուրներ եմ ուտում՝ բազում հիվանդությունների պատճառով, իսկ դու, այդ տարիքի՞դ... փա՞ռք աստծու, ամբողջ կյանքում պասը պահել ես և հանկարծ... ի՞նչ օրինակ ես տալիս նրանց։

Նա ցույց էր տալիս աղախիններին։ Ու խեղճ պառավը նրանց վրա էր ընկնում կվասին ու սալաթին։

Այս տեսարանները խիստ վրդովում էին ինձ. ես երբեմն հանդգնում էի մեջ ընկնել և հիշեցնել նրա հակառակ կարծիքը։ Այդժամ հայրս մի փոքր բարձրանում էր տեղից, ծոպիկից բռնելով հանում թավշյա գլխարկը և օդում պահելով՝ շնորհակալություն էր հայտնում ինձ՝ դասի համար ու խնդրում ներել իր մոռացկոտությունը, և ապա ասում էր պառավին.

— Ահավո՞ր դար է։ Էլ ի՞նչ մեծ բան է պասին քո ուտիսվա կերակուր ուտելը, երբ որ երեխաները սովորեցնո՞ւմ են ծնողներին։ Ո՞ւր ենք գնում։ Մտածելն անգամ սարսափելի է։ Ես ու դու, բարեբախտաբար, չենք տեսնի։

Ճաշից հետո հայրս ժամուկես պառկում էր հանգստանալու։ Սպասավորներն իսկույն ցրվում էին գարեջրատներն ու պանդոկները։ Ժամը յոթին պատրաստում էին թեյը. այդ ժամանակ երբեմն մեկն ու մեկը գալիս էր, ամենից հաճախ՝ Սենատորը. դա մեր հանգստի ժամն էր։ Սենատորը սովորաբար զանազան նորություններ էր բերում ու ոգևորված պատմում։ Հայրս, նրան լսելիս, կատարյալ անուշադրություն էր դրսևորում. մինչ Սենատորը վստահ էր, որ ծիծաղից պիտի կոտորի՝ հայրս դեմքին լուրջ արտահայտություն էր տալիս, և եթե նա որևէ ապշեցուցիչ բան էր պատմում, խնդրում էր կրկնել, կարծես չէր լսել, թե ինչն ինչոց է։

Սենատորի հոգին ավելի շատ էր դուրս գալիս, երբ նա հակաճառում էր էլ համամիտ չէր լինում կրտսեր եղբորը, մի բան, որ, ի միջի այլոց, շատ հազվադեպ էր պատահում,

իսկ երբեմն առանց հակաճառության էլ էր իր հախն ստանում, երբ հորս քեֆը հատկապես տեղը չէր լինում։ Այդ տրագիկոմիկական տեսարաններում ամենածիծաղելին Սենատորի բնական դյուրաբորբոքությունն էր ու հորս շինծու, արհեստական սառնությունը։

— Դե՛, դու այսօր հիվանդ ես,— չհամբերելով ասում էր Սենատորը, ճանկում էր գլխարկն ու դուրս թռչում։

Մի անգամ, սրտնեղած, նա չէր կարողանում դուռը բաց անել և ինչքան ուժ ուներ՝ քացով խփեց, ասելով. «էս ի՞նչ անիծյալ դռներ են»։

Հայրս հանգիստ մոտեցավ, հակառակ կողմի վրա բացեց դուռը և շատ ցածր ձայնով նկատեց.

— Դուռն այս իր դերը կատարում է, այն բացվում է դեպի դուրս, իսկ դուք ուզում եք դեպի ներս բացել ու բարկանում եք։

Ըստ որում, ավելորդ չի լինի նկատել, որ Սենատորը հորիցս երկու տարով մեծ էր և ասում էր նրան դու, իսկ հայրս, իբրև կոտսեր եղբայր՝ դուք։

Սենատորի գնալուց հետո հայրս անցնում էր իր ննջարանը, ամեն անգամ հարցնում, թե դարպասը փակվա՞ծ է, դրական պատասխան էր ստանում, որոշ կասկածանք հայտնում և ոչինչ չէր անում հավաստիանալու համար։ Ապա սկսվում էր լվացումների, թրջոցների, դեղերի տևական պատմությունը. սենեկապանը անկողնու մոտի փոքրիկ սեղանին պատրաստում էր զանազան բաների՝ սրվակների, լամպերի, տուփիկների մի ողջ զինանոց։ Ներուկը սովորաբար մի ժամի չափ կարդում էր Բուրյեննի՝, Mémorial de S-te Hélène»-ն և առհասարակ զանազան «Նոթեր»։ Վրա էր հասնում գիշերը։

Այդպիսին թողի ես մեր տունը 1834-ին, այդպիսին տեսա 1840-ին և ամեն ինչ այդպես էլ շարունակվեց մինչև հորս մահը՝ 1846 թվականը։

Երեսուն տարեկանում, աքսորից վերադառնալով, ես հասկացա, որ շատ բաներում հայրս իրավացի էր, որ նա, դժբախտաբար, ահավոր չափով լավ էր ճանաչում մարդկանց։ Բայց ի՞մ մեղքն էր, արդյոք, որ նա բուն ճշմարտությունն էլ այդպես վրդովեցուցիչ ձևով էր քարոզում պատանեկան սրտիս։ Փչացած մարդկանց շրջանում երկար տարիներ ապրելուց հիասթափված միտքը նրան en garde[1] էր դարձրել բոլորի հանդեպ, իսկ անտարբեր սիրտը հաշտության պահանջ չէր զգում. այդպես էլ նա թշնամական հարաբերության մեջ մնաց աշխարհում ամենքի հետ։

1839-ին, առավել ևս 1842-ին ես նրան գտա թուլացած ու արդեն իրոք հիվանդ. Սենատորը մեռել էր, նրա շուրջը դատարկությունն ավելի էր մեծացել, նույնիսկ սենեկապանը ուրիշ էր, բայց նա ինքը նույնն էր, լոկ ֆիզիկական ուժերն էին դավաճանել, նույն չար միտքը, նույն հիշողությունը, նա դարձյալ նեղում էր բոլորին չնչին բաների համար, և անդավաճան Զոնենբերգը իր նախկին ապաստանն ուներ հին տանը ու հանձնարարություններ էր կատարում։

Միայն այդ ժամանակ ես գնահատեցի այդ կյանքի ողջ տաղտկությունը. կոտրված սրտով ես դիտում էի շոր ու ցամաք, խստաշունչ, քարքարոտ ամայության մեջ նվաղող միայնակ, լքված այդ գոյության տխուր իմաստը, ամայություն, որ նա ինքն էր ստեղծել իր շուրջը, բայց որը փոխելը իրենից չէր կախված. նա գիտեր այդ, տեսնում էր մոտեցող մահը և, հաղթահարելով թուլությունն ու զառամությունը, խանդոտ ու համառորեն տեղի չէր տալիս։ Ես անհունորեն խղճում էի ծերուկին, բայց ոչինչ անել չէի կարողանում՝ նա անմատչելի էր։

... Ես երբեմն հուշիկ անցնում էի նրա առանձնասենյակի մոտով, երբ նա կոշտ ու անհարմար խոր բազկաթոռի մեջ նստած, իր շնիկներով շրջապատված, մեն-մենակ խաղում էր երեքամյա տղայիս հետ։ Թվում էր, թե ծերունու կծկված ու փայտացած ջղերը երեխայի ներկայությունից բացվում էին, և նա, մեռնող ձեռքը կպցնելով օրորոցին, ուժ էր առնում՝ հանգստանալով մշտական տագնապից, պայքարից ու սրտնեղությունից։

[1] զգոն (ֆրանս.)։

## ԳԼԱԽ VI

Արեմի էքսպեդիցիան։ Մոսկվայի համալսարանը։ Քիմիկոսը։ Մենի։ Մալովյան պատմությունը։ Խալերան։ Ֆիլարետը։ Սուճգուրովի գործը։ Վ. Գասեկը։ Գեներալ Լեսովսկին։

*Հե՜յ գուք, տարիներ ազատ խոհերի,*
*Ներշնչումների, հույսերի պայծառ։*
*Ո՞ւր է աղմուկը այն խնջույքների,*
*Ցիծաղը անմաղձ, շանցը խանգավառ։*

(«Հումոր»)

Ջնայած կաղ գեներալի՝ չարագույժ մարգարեությանը, հայրս, այնուամենայնիվ, ինձ ծառայության տեղավորեց իշխան Ն. Բ. Յուսուպովի մոտ, Կրեմլի էքսպեդիցիայում։ Ես մի թուղթ ստորագրեցի, դրանով էլ գործն ավարտվեց. ծառայությունից ես այլևս ոչինչ տեղյակ չեղա. միայն մի երեք տարի անց Յուսուպովը պալատական ճարտարապետին,— որը միշտ գոռում էր այնպես՝ ասես կանգնած լիներ հինգերորդ հարկի փայտամածների վրա ու այնտեղից ինչ-որ բան էր հրամայում նկուղում աշխատողներին,— ուղարկեց ինձ հայտնելու, որ ես ստացել եմ սպայական առաջին աստիճանը։ Անցողակի նկատենք, որ այդ բոլոր հրաշքները հարկավոր չէին. ծառայությամբ ձեռք բերվող աստիճաններին ես միանգամից հասու եղա՝ հանձնելով թեկնածուի քննությունը. ինչ-որ երկու-երեք տարվա ավագության համար չարժեր չարչարվել։ Այնինչ, այդ կարծեցյալ ծառայությունը քիչ մնաց խանգարեր համալսարան ընդունվելուս։ Տեսնելով, որ ես հաշվառված եմ Կրեմլի էքսպեդիցիայի գրասենյակում, խորհուրդը ինձ զրկեց քննություն հանձնելու իրավունքից։

Ծառայողների համար գործում էին ետճաշյա հատուկ դասընթացներ, որոնք խիստ սահմանափակ էին և այսպես կոչված «կոմիտեական քննությունների» իրավունք էին տալիս։ Բոլոր փոգավոր անբանները, ոչինչ չսովորած աղայորդիները, ամենքը, ովքեր չէին ուզում զինվորական ծառայություն կատարել և ամաչարում էին ասեսորի աստիճան ստանալ՝ կոմիտեական քննություններ էին տալիս. դա ծեր պրոֆեսորներին շնորհ արված ոսկու հանքի նման մի բան էր, որը նրանց privatissime[1] քսան ռուբլի էր տալիս յուրաքանչյուր դասի համար։

Իմ կյանքը գիտության այդ կավդյան կիրճերով՝ սկսելը ամենևին չէր ներդաշնակում իմ համոզմունքներին։ Ես հորս կտրականապես ասացի, որ երբեք ուրիշ միջոց չգտնի՝ հրաժարական կտամ։

Հայրս բարկանում էր, ասում, որ իմ կամակորությունները ես խանգարում եմ իրեն՝ դասավորելու իմ կարիերան, հշտամբում էր ուսուցիչներիս, որոնք գլուխս էին մտցրել այդ անհեթեթությունը, բայց տեսնելով, որ այդ ամենը շատ քիչ է հուզում ինձ, որոշեց գնալ Յուսուպովի մոտ։

Յուսուպովը հարցը լուծեց մի ակնթարթում՝ մասամբ աղայավարի, մասամբ էլ թաթարական ձևով։ Նա կանչեց քարտուղարին ու կարգադրեց երեք տարով արձակուրդ ձևակերպել։ Քարտուղարը տեղում տրորվեց, տրորվեց ու վախվորած զեկուցեց, որ առանց բարձրագույն թույլտվության չի կարելի չորս ամսից ավելի արձակուրդ տալ։

— Ի՞նչ հիմարություն, եղբա՛յր,— ասաց իշխանը ներքան,— ի՞նչ ես դժվարանում, արձակուրդ չի կարելի՝ դի՞։ դու էլ գրիր, որ ես գործուղում եմ նրան գիտություններին մեջ կատարելագործվելու՝ համալսարանական դասընթացը լսելու։

Քարտուղարը գրեց, և արդեն հաջորդ օրը ես նստած էի ֆիզիկամաթեմատիկական բարձրագույն ամֆիթատրոնում։

Ռուսական կրթության պատմության մեջ և վերջին երկու սերունդների կյանքում Մոսկվայի համալսարանն ու Ցարսկոյե Սելոյի լիցեյը նշանավոր դեր են խաղում։

Մոսկվայի համալսարանի նշանակությունը Մոսկվայի հետ մնկտեղ մեծացավ 1812 թվականից հետո։ Պետերբուրգ կայսեր կողմից ցարական մայրաքաղաք լինելուց շնորհազրկված Մոսկվան Նապոլեոն կայսրը (որքան որ կամեր, կրկնակի էլ՝ ակամա) վերածեց ռուս ժողովրդի մայրաքաղաքի։ Մոսկվայի հետ իր տրյուսակցական կապը ժողովուրդը հասկացավ այն ցավի զգացմամբ, որ պատճառեց թշնամու գրաքից Մոսկվայի գրավումը քարը։ Այդ ժամա-

1 ամենամասնավոր կարգով (լատ.)։

նակվանից նոր դարաշրջան սկսվեց Մոսկվայի համար. համալսարանը գնալով ավելի էր դառնում ռուսական կրթության կենտրոնը։ Նրա զարգացման համար զուգորդված էին բոլոր պայմանները՝ պատմական նշանակությունը, աշխարհագրական դիրքը և ցարի բացակայությունը։

Մտքի խիստ բորբոքված գործունեությունը Պետերբուրգում Ալավելից հետո մոայլ ինքնամփոփվեց դեկտեմբերի 14-ով։ Հայտնվեց Նիկոլայը՝ հինգ կախաղանով, տաժանակրությամբ, ճերմակ գոտիով ու երկնագույն Բենկենդորֆով*։

Ամեն ինչ գնաց դեպի ետ, արյունը սիրտը լցվեց, արտաքինից թաքցված գործունեությունը ներքուստ ծածուկ եռ էր գալիս։ Մոսկվայի համալսարանը դիմացավ և առաջինն սկսեց ուրվագծվել համընդհանուր մշուշի միջից։ Պոլեժաևի* պատմությունից հետո թագավորն ատում էր համալսարանը։ Նա Ա. Պիսարևին*՝ «Կալուգայի երեկոների» գեներալ-մայորին, խնամակալ կարգեց այստեղ, կարգադրեց համազգեստային սերթուկ հագցնել ուսանողներին, կարգադրեց նրանց՝ սուսեր կրել, հետո սուսեր կրելն արգելեց, զինվորության տվեց Պոլեժաևին՝ ոտանավորների, Կոստենեցկուն ու նրա ընկերներին՝ արձակ գրվածքների համար, ուշնշացրեց Կրիտսկիներին*՝ կիսանդրու համար, մեզ աքսոր ուղարկեց՝ սեն-սիմոնիզմի* համար, իշխան Սերգեյ Միխայլովիչ Գոլիցինին* խնամակալ կարգեց և այլևս չզբաղվեց «այլասերվածության այդ բույնով», լիցեյի ու իրավագիտության դպրոցի դասընթացն ավարտած երիտասարդներին բարեպաշտորեն խորհուրդ տալով համալսարան չընդունվել։

Գոլիցինը զարմանալի մարդ էր, նա երկար չէր կարողանում ընտելանալ այն անկարգությանը, որ երբ պրոֆեսորը հիվանդ է՝ դասախոսությունը չի կայանում. նա կարծում էր, թե ըստ ճերթականության հաջորդը պետք է փոխարիներ նրան, այնպես որ՝ տեր Տերնովսկին ստիպված պիտի լիներ երբեմն կլինիկայում դասախոսություն կարդալ կանացի հիվանդությունների վերաբերյալ, իսկ մանկաբարձ Ռիխտերը՝ մեկնաբանել անսերմ բեղմնավորումը։

Բայց, չնայած դրան, աճում էր շնորհազրկված համալսարանի ազդեցությունը. ինչպես ընդհանուր ամբարի մեջ՝ բոլոր կողմերից, բոլոր խավերից այստեղ էին լցվում Ռուսաստանի երիտասարդ ուժերը. նրա դահլիճներում նրանք մաքրվում էին ընտանեկան օջախից իրենց հետ բերած նախապաշարմունքներից, հասնում էին միևնույն մակարդակին, եղբայրանում իրար հետ ու նորից արտահոսում Ռուսաստանի բոլոր կողմերը, բոլոր խավերի մեջ։

Մինչև 1848 թվականը մեր համալսարանների կառուցվածքը միանգամայն դեմոկրատական էր։ Նրանց դռները բաց էին ամեն մեկի առաջ, ով կարողանում էր հաջող քննություն հանձնել և ոչ ճորտ էր, ոչ գյուղացի, ոչ էլ վտարված իր համայնքից։ Նիկոլայն աղավաղեց այդ ամենը. նա սահմանափակեց ուսանողների ընդունելությունը, ավելացրեց իրենց հաշվին ապրողների ուսման վարձը և թույլատրեց վարձից ազատվել միայն չքավոր ազնվականներին։ Սրանք բոլորը պատկանում են այն անմիտ միջոցառումների շարքին, որոնք կանհետանան ռուսական անիվի մեջ ընկած այդ խոչընդոտի վերջին շնչի հետ՝ անձնագրային, կրոնական անհանդուրժողականության և այլ օրենքներով հանդերձ[1]։

1 Ի դեպ՝ «հա «անմոռանալի» Նիկոլայի հայրական միջոցներից ևս մեկը։ Կրթարաններն ու հասարակական խնամակալության վարչությունները եկատերինյան ժամանակաշրջանի լավագույն հուշարձաններից են։ Կապիտալի շրջանառությունից փոխատվական բանկերի ստացած տոկոսներով հիվանդանոցներ, անկելանոցներ ու որբանոցներ հիմնելու միտքն իսկ հոյակապորեն խելամիտ բան է։

Այդ հաստատությունները հիմնավորվեցին, գրավատներն ու գերատեսչությունները հարստանում էին, որբանոցներն ու բարեգործական հիմնարկները ծաղկում էին այնքանով, որքան թույլ էր տալիս պաշտոնյաների համատարած գողությունը։ Որբանոց բերվող երեխաները մասամբ մնում էին այստեղ, մասամբ բաժանվում գեղջկուհիներին՝ գյուղում. վերջինները մնում էին գյուղացիներ, առաջինները դաստիարակվում էին հենց որբանոցում։ Սրանցից առավել ընդունակներին առանձնացնում էին ուսումը գիմնազիայում շարունակելու համար, պակաս ընդունակներին տալիս էին արհեստներ սովորելու կամ տեխնոլոգիական ինստիտուտ էին ուղարկում։ Նույն կերպ էլ վարվում էին աղջիկների հետ. ոմանց ասեղնագործություն էին սովորեցնում, մյուսներին՝ գայլակություն և, վերջապես, ամենաընդունակները դպրոցական կամ տնային դաստիարակուհիներ էին դառնում։ Ամեն բան լավ էր ընթանում։ Բայց Նիկոլայն այդ հաստատությանն էլ սոսկալի հարված հասցրեց։ Պատմում են, որ մի՛ անգամ կայսրուհին իր մերձավորներից մեկի տանը հանդիպելով նրա երեխաների դաստիարակուհուն, զրուցում է հետը և

Վերից ու վարից, հարավից և հյուսիսից եկած խայտաբղետ երիտասարդությունը արագորեն միաձուլվում-դառնում էր ընկերակցության հավաք մի զանգված։ Հասարակական տարբերությունները մեզանում չունեին այն վիրավորական ներգործությունը, որ հանդիպում ենք անգլիական դպրոցներում ու զորանոցներում. անգլիական համալսարանների մասին չեմ խոսում. դրանք գոյություն ունեն բացառապես արիստոկրատիայի և հարուստների համար։ Եթե մեր ուսանողի մտքովն անցներ պարծենալ իր ազնվական ծագումով կամ հարստությամբ՝ կնզովվեր, ընկերները նրա հոգին կհանեին։

Ուսանողներին բաժանող արտաքին տարբերությունները, որոնք խորը չէին, գալիս էին այլ ակունքներից։ Այսպես, օրինակ, այգու մյուս կողմում գտնվող բժշկական բաժանմունքն այնպես մոտ չէր մեզ հետ, ինչպես այլ ֆակուլտետներ։ Բացի այդ, այնտեղ մեծ մասը սեմինարիստներ ու գերմանացիներ էին։ Գերմանացիներն իրենց մի քիչ հեռու էին պահում և շատ էին համակված արևմտաքաղքենիական ոգով։ Դժբախտ սեմինարիստների ողջ կրթությունը, նրանց բոլոր ըմբռնումները միանգամայն այլ էին, քան մերը, մենք խոսում էինք տարբեր լեզուներով. մեծացած վանական բռնապետության լծի ներքո, իրենց ճարտասանությամբ և աստվածաբանությամբ բթացած՝ նրանք նախանձում էին մեր համարձակությանը, մենք վրդովվում էինք նրանց քրիստոնեական հնազանդությունից[1]։

Ես ընդունվեցի ֆիզիկամաթեմատիկական բաժանմունքը, չնայած երբևէ ո՛չ մեծ ընդունակություններ, ոչ էլ մեծ սեր եմ ունեցել մաթեմատիկայի հանդեպ։ Նիկի հետ մենք մաթեմատիկան սովորել էինք մի ուսուցչից, որին սիրում էինք իր անեկդոտների, իր համով պատմությունների համար. իր ողջ հրապուրանքով հանդերձ՝ նա դժվար թե կարողացած լիներ հատուկ սեր բորբոքել իր գիտության հանդեպ։ Մաթեմատիկան նա գիտեր ընդհուպ մինչև կոնաձև հատվածները, այսինքն՝ ճիշտ այնքան, որքան հարկավոր էր գիմնազիստներին համալսարանի նախապատրաստելու համար. իսկական փիլիսոփա լինելով, նա երբեք չհետաքրքրվեց մաթեմատիկայի «համալսարանական բաժիններով»։ Բան որում, հատկապես ուշագրավ է, որ նա ընդամենը հենց մի գիրք էր կարդացել և շարունակ, շուրջ տասը տարի, այդ գիրքն էր կարդում. դա Ֆրանկյորի դասընթացն էր. բայց բնավորությամբ ժուժկալ լինելով և շռայլություն չսիրելով՝ նա որոշված էջից այն կողմ չէր անցնում։

Ես ֆիզիկամաթեմատիկական ֆակուլտետն ընտրեցի, որովհետև բնական գիտություններն այնտեղ էին դասավանդվում, իսկ դրանց հանդեպ հենց այդ ժամանակ բուռն սեր էր առաջացել մեջս։

Ինձ այդ պարապմունքներին մղեց բավական տարօրինակ մի հանդիպում։

Կալվածքի 1822 թվականի նշանավոր բաժանքից հետո, որի մասին պատմել եմ, «մեծ եղբայրը» տարելու տեղափոխվեց Պետերբուրգ։ Երկար ժամանակ նրա մասին ոչինչ չէինք լսել. մեկ էլ լուր տարածվեց, թե ամուսնացել է։ Նա վաթսունն անց էր այդ ժամանակ, և ամենքն էլ գիտեին, որ չափահաս որդուց բացի ուներ նաև ուրիշ երեխաներ։ Հենց ավագ տղայի մոր հետ էլ նա ամուսնացել էր. «նորա-

---

շատ գոհ մնալով նրանից, հարցնում, թե որտե՞ղ է դաստիարակվել. սա պատասխանում է, որ ինքը «որբանոցի սանուհիներից է»։ Ամեն ոք կկարծի, թե դրա համար կայսրուհին շնորհակալություն հայտնեց ղեկավարությանը։ Ո՞չ, դա ոտիք տվեց նրան խորհելու ընկեցիկ երեխաներին այդպիսի դաստիարակություն տալու անպատշաճության մասին։

Մի քանի ամսից Նիկոլայը որբանոցների բարձր դասարաններին ավագ-սպայական ինստիտուտի կոչում շնորհեց, այսինքն՝ այլևս թույլ չտվեց այդ դասարաններում սաներ պահել և նրանց փոխարինեց ավագ սպաների երեխաներով։ Նա նույնիսկ մտածեց առավել արմատական միջոց՝ թույլ չտվեց նահանգական բարեգործական հաստատություններում ընդունել նորածին երեխաներին։ Այս խելամիտ միջոցառման լավագույն մեկնաբանությունը տրված է արդարադատության մինիստրի հաշվետվության մեջ, «Մանկասպանություն» հատվածում (ծանոթ.՝ Ա. Ի. Գերցենի)։



1 Այս առումով հայկական առաջադիմություն է կատարվել. վերջին ժամանակներում հոգևոր ակադեմիաների և նույնիսկ սեմինարիաների մասին բոլոր լսածներս այդ են հավաստում։ Ինքնին հասկանալի է, որ այդ բանի մեղավորը ոչ թե հոգևոր վարչությունն է, այլ սովորողների ոգին (ծանոթ.՝ Ա. Ի. Գերցենի)։

Կարսն» էլ հիսունն անց էր։ Այդ ամուսնությամբ «մեծ եղբայրը», ինչպես ասում են՝ «օրինավորեց» իր տղային։ Բայց ինչո՞ւ ոչ բոլոր երեխաներին։ Դժվար կլիներ ասել, թե ինչու, եթե հայտնի չլիներ այն գլխավոր նպատակը, որի համար նա անում էր այդ ամենը. նա մի՞ բան էր ուզում՝ ազատել իր եղբայրներին ժառանգությունից և լիովին հասնում էր դրան՝ «որդուն օրինավորելով». 1824 թվականի հայտնի ջրհեղեղի ժամանակ ծերուկը ծածկակառքում լրիվ ջուր էր դառել։ նա մրսեց, անկողին ընկավ ու 1825 թվականի սկզբին մեռավ։

Որդու մասին տարօրինակ լուրեր էին պտտվում. ասում էին, որ նա մարդամոտ չի, ոչ մեկի հետ չի շփվում, միշտ մենակը նստած քիմիայով է զբաղվում, կյանքն անց է կացնում մանրադիտակի առաջ, կարդում է նույնիսկ ճաշի ժամանակ և ատում է կանանց հասարակությունը։ «Խելքից պատուհաստում» նրա՞ մասին է ասված.

Նա քիմիկոս է, նա բուսաբան է,
Իշխան Ֆյոդորը, մեր ազգականը,
Նա խուսափում է բոլոր կանանցից,
Նույնիսկ ինձանից։

Հորեղբայրները, որոնք հոր վրա ունեցած ատելությունը նրա վրա էին կրճատացնում, այլ կերպ չէին կոչում նրան, քան «Քիմիկոս», պարսավական իմաստ դնելով այդ բառի մեջ ու ենթադրելով, թե քիմիան բնավ էլ չի կարող կարգին մարդու զբաղմունք լինել։

Հայրը մահվանից առաջ շատ էր նեղել որդուն. նա ոչ միայն վիրավորում էր նրան հայրական ալեհեր այլասերվածության տեսարանով, լիո՛ այլասերվածության, այլև պարզապես խանգարում էր նրան իր հարեմի համար։ Քիմիկոսը մի անգամ ուզում էր այս կեղտոտ կյանքից ազատվել լաբորատորիայով. նրան պատահաբար փրկեց ընկերը, որի հետ քիմիայով էր զբաղվում։ Հայրը սաստիկ վախեցավ և մահվանից առաջ ավելի հաշտ գտնվեց որդու հետ։

Հոր մահից հետո Քիմիկոսը ազատ արձակեց դժբախտ հարճերին, նրանով շատ պակասեցրեց գյուղացիների վրա հոր դրած ծանր հարկատուրքը, գիշեր ապարանքները և ձրի եռ



ամիս զինակոչի անդորրագրերը, որոնք ծերուկը ծախում էր գյուղացիներին՝ զինվորության ուղարկելով ճորտ սպասավորներին։

Մոտ տարիուկես անց նա եկավ Մոսկվա, ես ուզում էի նրան տեսնել, ես սիրում էի նրան գյուղացիների համար և նրա հորեղբայրների անարդար անբարյացակամության համար։

Մի առավոտ հորս ներկայացավ ոսկեզօծ ակնոցով, մեծ գրքով, կիսաթափ մազերով, քիմիական ռեակցիաներից այրված մատներով միջահասակ մի մարդ։ Հայրս նրան դիմավորեց սառն, փշոտ. զարմիկն էլ պակաս չեկավ նրա հանդեպ. ուժերը չափելով՝ նրանք, արտաքուստ անտարբեր, սկսեցին խոսել կողմնակի բաներից ու բաժանվեցին քաղաքավարի, բայց միմյանց հանդեպ թաքուն չարությամբ։ Հայրս տեսավ, որ մարտիկը իրեն չի զիջի։

Նրանք հետագայում երբեք իրար հետ մոտիկություն չարին։ Քիմիկոսը շատ հազվադեպ էր այցելում հորեղբայրներին։ վերջին անգամ հորս հետ նա տեսնվեց Սենատորի մահից հետո. եկել էր հորից մի երեսուն հազար ռուբլի պարտք խնդրելու՝ հող գնելու համար։ Հայրս չտվեց, Քիմիկոսը շղայնացավ ու, տրորելով գիրքը, ժպտալով նրան ասաց. «էստեղ վախենալու բան չկա, իմ կալվածքը ոռոմանական է, ես փոքն առնում եմ այն բարելավելու համար, ես երեխաներ չունեմ, և մենք մեկս մյուսից հետո ժառանգորդներ ենք»։ Ցոթանասունհինգամյա ծերունին երբեք չնեղեց եղբորորդու այդ արարքը։

Ես սկսեցի ժամանակ առ ժամանակ այցելել նրան։ Նա ապրում էր խիստ յուրակերպ. Տվերյան բուլվարի իր մեծ տանը գրազեցնում էր փոքրիկ մի սենյակ, մի սենյակ էլ՝ լաբորատորիայի համար։ Նրա պառավ մայրն ապրում էր միջանցքի այն կողմում, մյուս փոքրիկ սենյակում, մնացածը բարձիթողի էր արված ու մնում էր ճիշտ նույն վիճակում, ինչպիսին եղել էր նրա հոր Պետերբուրգ մեկնած ժամանակ։ Սևացած մոմակալները, տարօրինակ կահույքը, ամեն տեսակի հազվագյուտ իրերը, պատի ժամացույցը, որ իբր Պետրոս Առաջինն էր գնել Ամստերդամում, բազկաթոռները, որ իբր Ստանիսլավ Լեշչինսկու տնից էին, առանց

նկարների շրջանակները, պատի կողմ շրջված նկարները,— այս բոլորը խառնիխուռն լցրել էին երեք մեծ դահլիճները, որոնք ոչ տաքացվում էին, ոչ էլ լուսավորվում։ Նախասրահում սպասավորները սովորաբար զավզակություն էին անում ու ծխում (նո՛ւյն նախասրահում, որտեղ առաջ հազիվ էին սիրտ անում շնչել ու աղոթել)։ Ծառան վառում էր մոմը և ուղեկցում այդ զինապալատի միջով, ամեն անգամ ասելով, որ թիկնոցը հանել պետք չէ, որ դահլիճները շատ ցուրտ են։ Փոշու թանձր շերտը ծածկել էր պղտավոր ու զարմանակերպ իրերը, որոնք արտացոլվում ու մռայլ լույսով տարուբերվում էին քմահաճակ հայելիների մեջ, փաթեթումից մնացած ծղոտը, թղթի ու պարանի կտորտանքի հետ, հանգիստ թափված էր դես ու դեն։

Մենյակների այդ շարքը, ի վերջո, հասնում էր գորգապատ դռանը, որը տանում էր դեպի ամենանելի տաքացրած առանձնասենյակը։ Այստեղ, սկյուռի մորթուց կեղտոտ խալաթը հագին, նստում-մնում էր Քիմիկոսը՝ գրքերի մեջ կորած, սրվակներով, թորանոթներով, հալոցամաններով, գործիքներով շրջափակված։ Այդ առանձնասենյակում, ուր ամբողջ իշխում էր Շեալյեի մանրադիտակը, ուր քլորի հոտ էր ընկել և որտեղ մի քանի տարվա ընթացքում ահավոր, սոսկալի բաներ էին կատարվում,— այդ առանձնասենյակում ծնվել եմ ես։ Ծտար երկրներից վերադառնալով, հայրս, մինչև եղբորս հետ գժտվելը, մի քանի ամիս մնաց նրա տանը, և հենց այդ տանն էլ 1817 թվականին ծնվեց իմ կինը։ Մի երկու տարի անց Քիմիկոսը ծախեց իր տունը, և ինձ վերստին վիճակվեց լինել այնտեղ, Սվերբեևի* երեկույթներին, վիճաբանել պանսլավիզմի* մասին ու բարկանալ Խոմյակովի* վրա, որին ոչ մի բան երբեք չէր ջղայնացնում։ Սենյակները վերափոխված էին, բայց շքամուտքը, գավիթը, աստիճանները, նախասենյակը՝ ամեն ինչ մնացել էր, մնացել էր նաև փոքրիկ առանձնասենյակը։

Քիմիկոսի կենցաղն է՛լ ավելի հասարակ էր, հատկապես, երբ ամուսնը նրա մայրը մեկնում էր Մերձմոսկովյան հանգստավայրը, խոհարարն էլ հեռը։ Նրա սենեկապանը հայտնվում էր ժամը չորսի կողմերը, սրճամանը ձեռքին, մի քիչ թանձր մնացուր էր լցնում մեջը և, օգտվելով քիմիա-



ական հալոցքից, դնում էր կրակին՝ ամեն տեսակ թույների բեկողքը։ Հետո պանդոկից մի կտոր թռչնամիս ու հաց էր բերում. դա էլ նրա ամբողջ ճաշն էր։ Երբ ճաշն ավարտվում էր, սենեկապանը լվանում էր սրճամանը, և սա ձեռք էր բերում իր բնական իրավունքները։ Երեկոյան նորից հայտնվում էր սենեկապանը, բազմոցի վրայից վերցնում հորից ժառանգություն մնացած վագրի մորթին, գրքերի կույտը, փռում էր սավանը, բերում բարձերն ու վերմակը, և առանձնասենյակը նույն հեշտությամբ փոխարկվում էր ննջարանի, ինչպես որ խոհանոց ու ճաշասենյակ էր դառնում։

Մեր ծանոթության հենց սկզբից Քիմիկոսը տեսավ, որ ես լրջորեն պարապում եմ և սկսեց համոզել, որ ձեռ քաշեմ «դատարկ» զբաղմունքներից՝ գրականությամբ ու «վտանգավոր, բայց բոլորովին անօգուտ» քաղաքականությամբ պարապելուց և ձեռնամուխ լինեմ բնական գիտությունների ուսումնասիրմանը։ Նա ինձ տվեց երկրաբանական հեղաշրջումների վերաբերյալ Կյուվիեի ճառը և դը Կանդոլի բույսերի օրգանոգրաֆիան։ Տեսնելով, որ ընթերցանությունն օգնում է գործին, ինձ առաջարկեց իր հոյակապ հավաքածուները, գործիքները, հերբարիումները և անգամ իր զեկավարությունը։ Իր ասպարեզում նա շատ հետաքրքիր մարդ էր, արտակարգ գիտուն, սրամիտ և նույնիսկ սիրալիր. բայց դրա համար հարկ չկար կապկից այս կողմ սիրալիր. բայց դրա համար հարկ չկար կապկից այս կողմ։ Նա ամեն բան հանցնել. քարից մինչև օրանգուտանը եղած ամեն բան հետաքրքրում էր նրան. մնացածին գժկամությամբ էր ձեռնամուխ լինում, հատկապես փիլիսոփայությանը, որը համարում էր դատարկաբանություն։ Նա ոչ պահպանողական էր, ոչ էլ հետամնաց մարդ, նա պարզապես չէր հավատում մարդկանց, այսինքն՝ հավատում էր, որ եսասիրությունն է բոլոր արարքների բացառիկ սկզբնաղբյուրը, և գտնում, որ այն զսպողը լոկ ոմանց անխելքությունն է, ոմանց էլ՝ տգիտությունը։

Ինձ վրդովում էր նրա մատերիալիզմը։ Մեր հայրերի մակերեսային ու վախվորած վոլտերականությունը բնավ նման չէր Քիմիկոսի մատերիալիզմին*։ Նրա մոտեցումը հանգիստ էր, հետևողական, ավարտուն. այն հիշեցնում էր Լալանդի* պատասխանը Նապոլեոնին։ «Կանտն ընդու-

նում է աստծո հիպոթեզը»,— ասել էր նրան Բոնապարտը։ «Sire[1],— առարկել էր աստղաբաշխը,— իմ պարապմունքներին երբեք չեմ ունեցել այդ հիպոթեզի կարիքը»։

Քիմիկոսի աթեիզմը գուրս էր գալիս աստվածաբանական ոլորտներից։ Նա Ժոֆրուա Սենտ-Իլերին* համարում էր միստիկ, իսկ Օկենին** պարզապես խանգարված։ Բնափիլիսոփաների երկերը նա փակել էր նույն արհամարհանքով, ինչպես հայրս՝ Կարամզինի «Պատմությունը»։ «Իրենք են հորինել սկզբնապատճառները՝ հոգևոր ուժերը ու հետո էլ զարմանում են, որ դրանք ո՛չ հայտնաբերել է լինում, ո՛չ էլ ճանաչել»։ Սա իմ հայրն էր՝ այլ հրատարակությամբ, այլ դարում և այլ կերպ դաստիարակված։

Նրա տեսակետն է՛լ ավելի տխուր էր դառնում բոլոր կենսական հարցերում։ Նա գտնում էր, որ բարու և չարի համար մարդը նույնքան քիչ է պատասխանատու, որքան գազանը, որ ամեն ինչ կազմակերպման, հանգամանքների և ընդհանրապես ներվային համակարգի կառուցվածքի մեջ է, մի համակարգ, որից ավելի շատ բան են ուզում, քան նա ի վիճակի է տալու։ Ընտանեկան կյանքը նա չէր սիրում, սարսափով էր խոսում ամուսնությունից և պարզամտորեն խոստովանում, որ ինքը երեսուն տարի ապրել է՝ չսիրելով ոչ մի կնոջ։ Այնուամենայնիվ, այդ սառած մարդու մեջ դեռևս մնացել էր տաք մի շիթ, որ դրսևորվում էր պառավ մորնկատմամբ նրա վերաբերմունքի մեջ։ Նրանք միասին շատ էին տառապել հոր ձեռքից, աղետները սերտորեն միաձուլել էին նրանց։ Մոր միայնակ ու հիվանդոտ ծերությունը նա, կարողացածին չափ, սրտառուչ շրջապատել էր ջերմությամբ և ուշադրությամբ։

Իր տեսությունները, բացի քիմիականից, նա երբեք չէր քարոզում, դրանք արտահայտվում էին պատահաբար, իմ հրահրումով։ Նա նույնիսկ չուզենալով էր պատասխանում իմ ռոմանտիկական ու փիլիսոփայական առարկումներին։ Նրա պատասխանները լինում էին հակիրճ, նա դրանք տալիս էր ժպտալով և այնպիսի փափկանկատությամբ, որով մեծ, քավթառ գամփռն է խաղում շնիկի հետ, թույլ տալով,

[1] Տե՛ր իմ (ֆրանս.)։



որ սա քաշքշի իրեն և միայն թեթև վանելով թաթով։ Հենց դա էր, որ գրգռում էր ինձ, և ես անխոնջ վերսկսում էի á la charge[1], ըստ որում, չշահելով ոչ մի թիզ հող։ Հետագայում, այսինքն՝ տասներկու տարի անց, ես բազմիցս մտածում էի Քիմիկոսին, ինչպես որ հորս հանդիմանություններն էի մտաբերում. անշուշտ, այն ամենի մեջ, ինչին ես առարկում էի, նա երեք քառորդով իրավացի էր։ Բայց չէ՞ որ ե՛ս էլ էի իրավացի։ Կան ճշմարտություններ,— այդ մասին մենք արդեն խոսել ենք,— որոնք, ինչպես քաղաքական իրավունքները, որոշակի տարիքից շուտ չեն ընկալվում։

Քիմիկոսի ազդեցությունն ինձ ստիպեց ընտրել ֆիզիկամաթեմատիկական բաժանմունքը. գուցե ավելի լավ կլիներ բժշկական բաժանմունք ընդունվել, բայց մեծ դժբախտություն չէ, որ ես սկզբում մի քիչ սովորեցի, ապա հիմնավորապես մոռացա դիֆերենցիալ ու ինտեգրալ հաշվումները։

Առանց բնական գիտությունների՝ ժամանակակից մարդու համար փրկություն չկա. առանց այդ առողջ անդի, առանց միտքը փաստերով խստորեն դատարակելու, առանց մեզ շրջապատող կյանքի հետ այդ մերձավորության, առանց դրա անկախությանը անձնատուր լինելու՝ հոգումդ ինչ-որ տեղ վանականի մի խուց է մնում՝ միստիկական սաղմով, որը կարող է պղտոր ջրի պես ողողել ողջ բանականությունդ։

Դասընթացս ավարտվելուց առաջ Քիմիկոսը մեկնեց Պետերբուրգ, և ես մինչև վայտակայից վերադառնալս նրա հետ չտեսնվեցի։ Ամուսնանալուցս մի քանի ամիս անց, համարյա թաքուն, մի քանի օրով գնացի մերձմոսկովյան մեր ունը, որտեղ այն ժամանակ ապրում էր հայրս։ Այդ ուղևորության նպատակը հորս հետ վերջնականապես հաշտվելն էր. նա դեռևս շարունակում էր բարկանալ վրաս՝ ամուսնանալուս համար։

Ճանապարհին կանգ առա Պերխուշկովոյում, այնտեղ, ուր մենք շատ անգամներ էինք իջևանել։ Քիմիկոսն ապասում էր ինձ և նույնիսկ ճաշ ու երկու շիշ շամպայն էր պատ-

[1] Հարձակումը (ֆրանս.)։

բաստել։ Ջորս, թե՞ հինգ տարում նա չէր փոխվել, նույնն էր, միայն մի քիչ ծերացել էր։ Ճաշից առաջ միանգամայն լրջորեն ինձ հարցրեց.

— Խնդրում եմ անկեղծորեն ասեք, ինչպե՞ս եք գնահատում դուք ընտանեկան կյանքը, ամուսնությունը. լա՞վ բան է, արդյոք, թե՞ այնքան էլ չէ։

Ես ծիծաղեցի։

— Ինչպիսի՞ խիզախություն ձեր կողմից,— շարունակեց նա,— ես զարմանում եմ ձեզ վրա. նորմալ վիճակում մարդ երբեք չի համարձակվի նման սարսափելի քայլ անել։ Ինձ առաջարկեցին երկու-երեք շատ լավ թեկնածու, բայց հենց որ պատկերացնում եմ, որ սենյակումս պիտի տնօրինություն անի կինը, ամեն բան իր ուզածով պիտի դասավորի, երեկ, արգելի ծխելու իմ թուքը (նա նեժինյան արմբուխք էր ծխում), աղմուկ բարձրացնի, շփոթ առաջացնի՝ այնպիսի վախ է իշխում վրաս, փորձում եմ մնալ մենակության մեջ։

— Ես ձեզ մո՞տ մնամ գիշերելու, թե՞ գնամ Պոկրովսկոյե,— ճաշից հետո հարցրեցի նրան։

— Իմ տանը տեղի պակասություն չկա,— պատասխանեց նա,— փայց ձեզ համար, կտր�ում եմ, ավելի լավ կլինի՝ գնաք։ Ժամը տասի մոտերքը կհասնեք ձեր հայրիկի մոտ։ Դուք հո գիտեք, որ նա գեռևս բարկացած է ձեզ վրա. դե՛, գիշերը, քնից առաջ, սովորաբար ծերերի ջղերը գրգռված, թուլացած են լինում, նա ձեզ, հավատացեք, շատ ավելի լավ կընդունի, քան թե վաղը. առավոտը դուք նրան կգտնեք ճակատագրական ելքով պատրաստած։

— Ա՜հ, հա՜, հա՜, հա՜,— անց տվեցաց, որ Ֆիզիոլոգիայի ու մետաֆիզիկայի իմ նո՞ւյն ասուպիկն ես,— պատասխանեց ծիծաղելով առաջի նրան,— ձեր դիտողությունն ինձ հիշեցրեց այն երանելի ժամանակները, երբ ես, Ֆաուստի վագների նման, գալիս էի ձանձրացնելու ձեզ իմ իդեալիզմով և արտանգած լսելու ձեր սիրափեցնող բարոյականը։

— Գրասենյակ հետո դուք բավականին կյանք տեսել եք՝ իմանալու համար, որ մարդկային բոլոր գործերը խախտում ունեն պարզապես ջղերից և քիմիական բաղադրությունից,— պատասխանեց նա՝ նույնպես ծիծաղելով։



Հետո մենք մի տեսակ հեռացանք իրարից. հավանաբար երկուսս էլ իրավացի չէինք... Այնուամենայնիվ, 1846-ին նա ինձ նամակ գրեց։ Այդ ժամանակ, «Ո՞վ է մեղավորը»-ի առաջին մասի հրապարակումից հետո, ես սկսում էի դառնալ մոդայիկ։ Քիմիկոսը գրում էր, թե ինքը տխրությամբ տեսնում է, որ ես դատարկ բաների վրա եմ ծախսում իմ տաղանդը։ «Ես ձեզ հետ հաշտվեցի «Նամակներ բնության ուսումնասիրության վերաբերյալ» գրվածքի համար. դրա մեջ ես ըմբռնեցի (ինչքան որ մարդկային միտքը կարող է ըմբռնել) գերմանական փիլիսոփայությունը, էլ՝ ինչո՞ւ, լուրջ գործը շարունակելու փոխարեն, դուք հեքիաթներ եք գրում»։ Ես նրան պատասխանեցի բարեկամական մի քանի տողով, և դրանով էլ վերջացան մեր հարաբերությունները։

Եթե այս տողերը Քիմիկոսի աչքովն ընկնեն, կխնդրեմ, որ նա դրանք կարդա անկողին մտնելիս, երբ ջղերը թուլացած են, և համոզված եմ, որ այդ ժամանակ նա կների իմ բարեկամական շաղակրատությունը, մանավանդ որ՝ ես լուրջ ու բարի հիշողություն եմ պահպանում նրա մասին։

Այսպես, ուրեմն՝ ծնողներիս տան ճգնավորությունս վերջապես պրծավ։ Ես au large[1] մեջ էի. մեր փոքր սենյակում միայնակ մնալու փոխարեն, միայն Օգարյովի հետ սուսիկ ու կիսաթաքուն հանդիպումների տեղակ՝ լոթ հարյուր շնչից բաղկացած աղմկահույզ մի ընտանիք շրջապատեց ինձ։ Այդ ընտանիքին ես երկու շաբաթում ավելի շատ ընտելացա, քան ծնողներիս տանը՝ ծնունդյանս օրից ի վեր։

Բայց ծնողական տունն ինձ հետապնդում էր նույնիսկ համալսարանում՝ հանձին սպասյակի, որին հայրս հրամայեցնում՝ հանձին ինձ, որտեղ էլ գնում, մյել էր ուղեկցել ինձ, առանձնապես՝ երբ ոտքով էի գնում։ Մի ամբողջ կիսամյակ ես չանում էի գլուխս ազատել ուղեկցողից և մի կերպ օրինականացրի ուզածս։ Ասում եմ՝ օրինականացրի, որովհետև Պյոտր Ֆյոդորովիչը, իմ սենեկապանը, որի վրա դրված էր այդ պաշտոնը, շատ շուտով հասկացավ, որ նախ՝ ինձ համար հաճելի չէ ուղեկցվող լի-

1 ազատության (ֆրանս.)։

նել, և երկրորդ՝ հենց իր համար էլ առավել հաճելի է զա-
նազան զվարճավայրերում, քան թե ֆիզիկամաթեմատիկա-
կան ֆակուլտետի նախասրահում լինելը, որտեղ բոլոր բա-
վականություններն ամփոփվում էին երկու պահակների հետ
զրուցելու և փոխադարձաբար իրար ու իրենք իրենց ծխա-
խոտ հրամցնելու մեջ։

Ինչի՞ համար էին հետս ուղեկցող դնում։ Մի՞թե Պյոտրը,
որ ջահել հասակից օրերով հարբեցողությամբ էր պարա-
պում, որևէ բանում կարող էր արգելք լինել ինձ։ Կարծում
եմ, որ այդպիսի բան հորս մտքովն անգամ չէր անցնում,
սակայն իր հանգստության համար նա անիրական միջոց-
ներ էր ձեռք առնում, անիրական, բայց, այնուամենայնիվ,
միջոցներ, ինչպես որ մարդիկ, չհավատալով հանդերձ՝ ծոմ
են պահում։ Այդ հատկանիշը մեր հինավուրց կալվածատի-
րական դաստիարակության հատկանիշն է։ Մինչև յոթ տա-
րեկան դառնալս հրամայված էր ձեռքիցս բռնած ուղեկցել
ինձ ներքին աստիճանով, որը մի քիչ բարձր էր. մինչև
տասնմեկ տարեկանս ինձ տաշտակի մեջ լողացնում էր
վերա Արտամոնովնան. ուրեմն շատ պատճառաբանված էր,
որ ինձ՝ ուսանողիս հետ ծառա էին դնում և մինչև քսանմեկ
տարեկանս ինձ չէր թույլատրված տուն վերադառնալ ժամը
տասն անց կեսից ուշ։ Ես գործնականորեն ազատություն
ստացա և ոտքերիս վրա կանգնեցի աքսորում. եթե ինձ չաք-
սորեին, հավանաբար, նույն ռեժիմը կշարունակվեր մինչև
քսանհինգ... երեսունհինգ տարեկանս։

Ինչպես մենակության մեջ դաստիարակված աշխույժ
տղաների մեծ մասը, ես էլ այնպիսի անկեղծությամբ ու
պոռթկումով էի ամեն մեկի վզովն ընկնում, այնպիսի խե-
լահեղ անզգուշությամբ էի պրոպագանդ անում և այնպես
սրտաբաց էի ամենքին սիրում, որ չէի կարող չհարուցել
գրեթե նույն տարիքի պատանիներից բաղկացած լսարանի
ջերմ վերաբերմունքը (այդ ժամանակ տասնյոթիս մեջ էի)։

Բոլորի հետ հարգալից լինելու և ոչ մեկի հետ մոտիկու-
թյուն չանելու, ոչ ոքի հավատ չընծայելու իմաստուն կա-
նոնները նույնքան էին նպաստում այդ մերձեցումներին,
որքան անկապտելի այն մտորումը, որով համակված՝ մենք
համալսարան էինք ընդունվել,— այստեղ կիրականանան



մեր երազանքները, այստեղ մենք կնետենք սերմեր, կդնենք
միության հիմքը։

Մենք համոզված էինք, որ այս լսարաններից կծնվի այն
փաղանգը, որը կգնա Պեստելի ու Ռիլեևի հետևից, և որ
մենք այդ փափագի մեջ կլինենք։

Հիանալի էր մեր կուրսի երիտասարդությունը։ Հենց այդ
ժամանակ էր, որ մեր մեջ գնալով ավելի ու ավելի էին արթ-
ննանում տեսական ձգտումներ։ Հավասարապես անհետա-
նում էին սեմինարական ուսումնավարժությունն ու շլյախ-
տայական ծուլությունը, դեռևս չփոխարինվելով գերմանա-
կան ուտիլիտարիզմով, որը, առատ բերք ստանալու համար,
պարարտացնում էր մտքերը գիտությամբ, ինչպես դաշ-
տերն են պարարտացնում գոմաղբով։ Ուսանողների մեծ մի
շրջան արդեն գիտությունը չէր համարում անհրաժեշտ,
բայց ձանձրալի մի սայլուղի, որով ավելի շուտ են հաս-
նում կոլեգիական ասեսորի աստիճանի։ Սագող խնդիրներն
ամենևին չէին վերաբերում աստիճանակարգին։

Մյուս կողմից, գիտական հետաքրքրությունը դեռևս չէր
հասցրել այլասերվել-վերածվել դոկտրինարիզմի. գիտությու-
նը հեռու չէր պահում չորսբոլորը տառապող կյանքին միջա-
մտելուց։ Կյանքի նկատմամբ այդ կարեկցանքը արտակարգ
բարձրացնում էր ուսանողների քաղաքացիական բարոյա-
կանությունը։ Մենք և մեր ընկերները լսարանում բացեի-
բաց խոսում էինք մտքներովս անցած ամեն բանի մասին.
արգելված բանաստեղծությունների տետրերը ձեռքից ձեռք
էին անցնում, արգելված գրքերն ընթերցվում էին ու մեկնա-
բանվում, և այդ բոլորով հանդերձ ես չեմ հիշում լսարանից
արված ոչ մի մատնություն, ոչ մի դավաճանություն։ Կային
վեհերոտ երիտասարդներ, որ խույս էին տալիս, մի կողմ
քաշվում, բայց նրանք էլ էին լռում[1]։

Փուչ տղայի մեկը, որին մայրը ճիպոտի սպառնալիքի
տակ հարցուփորձ էր արել մալովյան պատմության* մասին,
ինչ-որ բաներ նրան ասել էր։ Գորովալից մայրիկը,— արիս-

* Այդ ժամանակ լսարաններին առընթեր լինային իմ Պյոտր Ֆյոդորովիչ-գերը կատարող տեսուչներ ու վերատեսուչներ (ծանոթ.՝ Ա. Ի. Գերցենի)։

տակրատուսի և իշխանուհի,— վազեց ռեկտորի մոտ և հայտնեց որդու մատնությունը՝ ի ապացույց նրա զղջման։ Մենք խմացանք այդ բանը և այնքան տանջեցինք նրան, որ դասընթացը չավարտած գնաց մեզանից։

Այդ պատմությունը, որի համար ես էլ պատժախուց նստեցի, պատմվելու արժանի բան է։

Մալովը հիմար, կոպիտ ու անկիրթ պրոֆեսոր էր քաղաքական բաժանմունքում։ Ուսանողներն արհամարհում էին նրան, վրան ծիծաղում։

— Քանի՞ պրոֆեսոր կա ձեր բաժանմունքում,— մի անգամ հարցրեց հոգաբարձուն քաղաքական լսարանի ուսանողներից մեկին։

— Մալովին հանած՝ ինը,— պատասխանեց ուսանողը։

Այդ պրոֆեսորն էլ, ահա, որին հարկավոր էր հանել, որպեսզի ինը մնար, սկսեց ավելի ու ավելի անպատկառ վերաբերվել ուսանողներին. ուսանողները որոշեցին նրան քշել լսարանից։ Խոսքերը մեկ անելով՝ նրանք երկու պատվիրակ ուղարկեցին մեր բաժանմունք, հրավիրելով ինձ՝ գալ-հանել օգնական զորքով։ Ես տեղնուտեղը Մալովի դեմ կռվի կոչ արձակեցի, մի քանի հոգի եկան հետս. երբ մենք քաղաքական լսարան հասանք, Մալովն այնտեղ էր և տեսավ մեզ։

Բոլոր ուսանողների դեմքին էլ նույն վախը կար. չլինի՞ թե նա այսօր ոչ մի կոպիտ դիտողություն չանի։ Վախն այդ շնչառով անցավ։ Լեփ-լեցուն լսարանն անհանգիստ էր և խուլ, լսելիքած զվվում էր։ Մալովն ինչ-որ դիտողություն արեց, քաղաքացին ընկավ։

— Գուք ձեր մտքերը, ձիերի պես, ոտքերով եք արտահայտում։— նկատեց Մալովը, որ, հավանաբար, երևակայում էր, թե ձիերը քառատրոփով ու վարգելով են մտածում... և փոքրիկը բարձրացավ՝ սուլոց, աղմուկ-աղաղակ. «Դո՞ւրս, դո՛ւրս, pereat![1]»։ Քաթանի պես սփրթնած Մալովը աղմուկը զսպելու հուսահատ փորձ արեց, բայց չկարողացավ. ուսանողները թռան նստարաններին։ Մալովը սուսուփուս իջավ ամբիոնից և, կուչ եկած, գնաց դեպի դուռը, լսարանն էլ՝ ետևից, նրան ուղեկցեցին համալսարանի բակով մինչև փողոց ու ետևից շպրտեցին կրկնակոշիկները։ Վերջին հանգամանքը կարևոր էր, փողոցում գործը բոլորովին այլ բնույթ ստացավ. բայց մի՞թե աշխարհում կան 17—18 տարեկան պատանիներ, որոնց դա մտահոգում է։

Համալսարանական խորհուրդը վախեցավ և հոգաբարձուին համոզեց գործն ավարտված համարել ու այդ նպատակով մեղավորներին կամ հենց այնպես՝ որևէ մեկին պատժախուց նստեցնել։ Դա խելամիտ քայլ էր։ Ճատ հավանական էր, որ հակառակ դեպքում թագավորը կարող էր ֆլիգել-ադյուտանտ ուղարկել, որը խաչ սատանալու համար այդ գործից դավադրություն, ապստամբություն, խռովություն կտարբեր և կառաջարկեր բոլորին քշել տնժանակրություն, իսկ թագավորը կներեր ու զինվորության կուղարկեր։ Ենթադրելով, որ արատը պատժված է և բարոյականությունը հաստատակել է, թագավորը սահմանափակվեց նրանով, որ ի վերուստ բարեհաճեց վավերացնել ուսանողների կամքը և պրոֆեսորին պաշտոնանկ արեց։ Մենք Մալովին քշեցինք մինչև համալսարանի դուռը, իսկ նա դռնից դուրս վռնդեցինք։ Vae victis[1], Նիկոլայն էլ հետևերը, բայց այս անգամ մենք չէ, որ պիտի մեղադրեինք նրան։

Եվ այսպես՝ գործ բացվեց։ Հաջորդ օրը ճաշից հետո քաղաք գալով մոտս եկավ վարչության պահակը, ալեհեր մի ծերուկ, որը բարեհաճորեն à la lettre[2] էր հասկանում, որ ուսանողներն իրեն օղու փող են տալիս և դրա համար էլ ուսանողներն իրեն ավելի շուտ հարբած, քան թե լուրջ մարդու վիճակում էր լինում։ Նա շինելի թևքի մեջ դրած մի գրություն էր բերել «լեյտուրից», ինձ հրամայված էր ներքնայանոց նրան երեկոյան ժամը յոթին։ Պահակից հետո եկավ գաղտնի ուղարկված ու վախեցած՝ մի ուսանող՝ օտարերյան բարձրաստիճանների որդի նույնպիսի հրամայիր էր ստացել և պատկանում էր այն դժբախտ զոհերի թվին, որոնց ես հետս էի տարել։ Նա նախնեսնց կշտամբանքներ տեղալ դիմեց, հետո խորհուրդ էր հարցնում, թե ինքն ի՞նչ ասի։

---

1 Թող կորչի՛ (լատ.)։



1 վա՛յ պարտվածներին (լատ.)։

2 բնական (ֆրանս.)։

— Համառորեն նստել, ամեն բան ժխտել, բացի նրանից, որ աղմուկ է եղել և որ դուք եղել եք լսարանում,— պատասխանեցի ես։

— Բայց ռեկտորը կհարցնի, թե ինչո՞ւ ես քաղաքական լսարանում էի և ոչ թե մեր։

— Ինչպե՞ս թե ինչու, մի՞թե դուք չգիտեք, որ Ռոդիոն Գեյմանը դասախոսության չէր եկել. ցանկանալով ժամանակն իզուր չկորցնել՝ դուք գնացել էիք ուրիշ դասախոսություն լսելու։

— Նա չի հավատա։

— Դա արդեն ի՛ր գործն է։

Երբ մենք մտանք համալսարանի բակը՝ նայեցի բարոնիս. թմբլիկ այտերը շատ գունատ էին, և ընդհանրապես վատ էր զգում։

— Լսե՛ք,— ասացի ես,— դուք կարող եք վստահ լինել, որ ռեկտորը ոչ թե ձեզնից, այլ ինձնից կսկսի. ասացեք նույնը՝ տարբեր ձևերով. դուք հո իրո՛ք առանձնապես ոչինչ չեք արել։ Մի բան չմոռանաք. աղմկելու համար և սուտ խոսելու համար ամենաշատը ձեզ պատժախուց կնստեցնեն, իսկ եթե եղածը բերնից թռցնեք ու մեկն ու մեկին էլ իմ ներկայությամբ մեջ քաշեք, ես կպատմեմ լսարանում, ու մենք կթունավորենք ձեր գոյությունը։

Բարոնը խոսք տվեց և ազնվորեն խոսքի տերը եղավ։

Այդ ժամանակ ռեկտորը Դվիգուբսկին էր՝ անդրշրհեղեղյան կամ ավելի լավ կլիներ ասել՝ նախաճրդեհային, այսինքն՝ 1812 թվականից առաջվա պրոֆեսորների մնացուկներից ու նմուշներից մեկը։ Նրանց նմանները հիմա չկան. իշխան Օբոլենսկու հոգաբարձության հետ ընդհանրապես աջարտվում է Մոսկվայի համալսարանի նահապետական շրջանը։ Այն ժամանակներում ղեկավարությունը համալսարանով չէր զբաղվում, պրոֆեսորները դասախոսում էին կամ չէին դասախոսում, ուսանողները հաճախում էին կամ չէին հաճախում, և ըստ որում հաճախում էին ոչ թե համազգեստային սերթուկներով, á l'instar[1] հեծյալ-եգերականները, այլ զանազան արտառոց ու էքսցենտրիկ զգեստներով, վառանաչափ գլխարկներով, որոնք հազիվ էին մնում կուսական վարսերի վրա։ Պրոֆեսորները կազմում էին երկու թև կամ խավ, որոնք հաշտ ու խաղաղ ատում էին միմյանց. դրանցից մեկը բաղկացած էր բացառապես գերմանացիներից։ Գերմանացիները, որոնց մեջ կային բարի ու գիտուն մարդիկ,— ինչպես Լոդերը, Ֆիշերը, Հիլդեբրանդտը և ինքը՝ Հեյմը,— ընդհանրապես աչքի էին ընկնում ռուսաց լեզվի չիմանալով և իմանալ չուզենալով, ուսանողների հանդեպ սառնասրտությամբ, արևմտյան կլիենտիզմի, արհեստավորականության ոգով, չափից շատ սիգար ծխելով ու բազում խաչերով, որ երբեք չէին հանում։ Ոչ գերմանացիները, իրենց հերթին, ռուսերենից բացի, ոչ մի (կենդանի) լեզու չգիտեին, հայրենակերպ ստրկամիտ էին, ճեմարանալեզու չգիտեին, Մերզլյակովի*՝ մի կերպ յոկերպ անտաշ, բացառությամբ Մերզլյակովի՝ մի կերպ յոկերպ էին գնում և չափից դուրս սիգարի տեղակ անչափ օղի էին գործածում։ Գերմանացիները մեծ մասամբ Գյոտինգենից* էին, ոչ գերմանացիները՝ տերտերորդիներ։

Դվիգուբսկին ոչ գերմանացիներից էր։ Նրա տեսքն այնքան հորդորող էր, որ ցուցակը տանելու եկած ճեմարանական մի ուսանող մոտեցավ նրան՝ օրհնություն առնելու և շարունակ անվանում էր նրան «հայր-ռեկտոր»։ Ընդսմին, նա խիստ նման էր Աննայի խաչը վզին բուի, ինչպես նրան նկարել էր առավել աշխարհիկ կրթություն ստացած մի դպանող։ Երբ նա, պատահում էր, մեր լսարան էր գալիս կա՛մ դեկան Զումակովի, կա՛մ Կոտելնիցկու հետ,— որը տնօրինում էր չգիտես ինչու մաթեմատիկական լսարանում դրված «Materia Medica»[1] ցուցանակով պահարանը,— կա՛մ Ռեյսի հետ, որը կանչված էր Գերմանիայից հանուն այն բանի, որ նրա քեռին լավ քիմիա գիտեր,— այն Ռեյսի, որը, դասախոսելով ֆրանսերեն՝ պատրույգին ասում էր bâton de coton[2], թույնին՝ ձուկ (poisson[3]), իսկ կայծակ բառն այնքան անճոռնի էր արտասանում, որ շատերը կարծում էին, թե հայհոյում է,— երբ նրանք գալիս էին՝ մենք

1 ինչպես (ֆրանս.)։



1 «Բժշկական իրեր» (լատ.)։

2 բամբակե ձեռնափայտ՝ փոխանակ «cordon de potón»-ի— բամբակե պատրույգ (ֆրանս.)։

3 թույն՝ póison, ձուկ՝ poisson (ֆրանս.)։

աչքներս չոած նայում էինք նրանց՝ իբրև հանածոների հնավաքածուի, իբրև վերջին Աբենսերագների՝ մի այլ, ոչ այնքան մեզ, որքան Տրեդյակովսկուն ու Կոստրովին մերձավոր ժամանակվա ներկայացուցիչների,— այն ժամանակվա, երբ Խերասկով ու Կնյաժնին էին կարդում՝, բարի պրոֆեսոր Դիլտեի ժամանակվա, նրա, որ երկու շնիկ ուներ, մեկը՝ միշտ հաչող, մյուսը՝ երբեք չհաչող, որի համար էլ նա միանգամայն իրավացի մեկին անվանել էր Բավարկա[1], մյուսին՝ Պրուդենկա[2]:

Բայց Դվիգուբսկին ամենևին էլ բարի պրոֆեսոր չէր, նա մեզ ընդունեց չափազանց խստորեն և կոպիտ էր վերաբերվում. ես ահավոր ստեր էի փչում ու անվայելուչ էի պահում ինձ, բարոնն էլ նույնն էր անում։ Բորբոքված Դվիգուբսկին կարգադրեց հաջորդ առավոտ ներկայանալ համալսարանի խորհրդին, այնտեղ կես ժամում մեզ հարցաքննեցին, դատեցին, դատապարտեցին ու դատավճիռն ուղարկեցին իշխան Գոլիցինի հաստատմանը։

Հազիվ էի հասցրել մի հինգ-վեց անգամ, տնազ անելով, լսարանում ուսանողներին ներկայացնել համալսարանական սենատի դատն ու դատաստանը, երբ հանկարծ դասախոսության սկզբում հայտնվեց տեսուչը՝ ռուսական ծառայության մայորն ու ֆրանսիական պարուսույցը, ենթասպայի հետ և ինձ պատժախուց տանելու հրամանը ձեռքին։ Ուսանողների մի մասը եկավ ուղեկցելու, բակում էլ էին երիտասարդները խմբվել. երևում էր, առաջինը ինձ չէր, որ տանում էին. երբ մենք անցնում էինք, բոլորը թափահարում էին գլխարկները, ձեռքերը. համալսարանական զինվորները քշում էին նրանց, ուսանողները չէին գնում։

Կեղտոտ նկուղում, որ իբրև պատժախուց էր ծառայում, ես գտա երկու կալանավորի՝ Արապետովին ու Օռլովին. իշխան Անդրեյ Օբոլենսկուն և Ռոզենհեյմին նստեցրել էին ուրիշ սենյակում. Մալովի գործով պատժված էր ընդամենը վեց հոգի։ Հրամայված էր՝ մեզ պահել միայն հաց ու ջրով, ռեկտորն ինչ-որ ապուր ուղարկեց, մենք հրաժարվեցինք ու

1 Շառաքնոս (ֆրանս. bavard-ից)։
2 Վախկոտ (ֆրանս. prudent-ից)։



լավ արինք. հենց որ մութն ընկավ ու համալսարանը դադարվեց, մեր ընկերները պանիր, որսի միս, սիգար, գինի ու լիկյոր բերին։ Զինվորը բարկանում էր, փնթփնթում, վեցցնում էր քսանկոպեկանոցներն ու բերում մթերքը։ Կեսգիշերից հետո նա ավելի հեռուն գնաց և մի քանի հոգի հյուր թողեց մեզ մոտ։ Այսպես ժամանակ էինք անցկացնում՝ գիշերները քեֆ անելով, ցերեկները պառկել-քնելով։

Մի անգամ էլ հոգաբարձուի օգնական Պանինը, արդարադատության մինիստրի եղբայրը, հեծյալ գվարդիականի իր սովորություններին հավատարիմ՝ մտքին դրեց ստուգել համալսարանի նկուղում գտնվող պետական բանտը։ Հենց նոր աթոռի տակ, որպեսզի դրսից չերևար, վառել էինք մոմն ու սկսել մեր գիշերվա նախաճաշը, մեկ էլ դրսի դուռը թակեցին. այն թակոցը չէր, որն իր մեղմությամբ զինվորին խնդրում է բաց անել դուռը, ավելի շատ վախենում է, որ իրեն կլսեն, քան թե՝ որ չեն լսի. ո՛չ, դա հեղինակավոր թակոց էր, հրամայո՛ղ։ Զինվորը քար կտրեց, մենք շշերն ու ուսանողներին թաքցրինք փոքրիկ խորդանոցում, ճանգաստանողներին թաքցրինք մոմն ու նեռվեցինք մեր մահճակալների վրա։ Ներս մտավ Պանինը։

— Դուք կարծես ծխո՞ւմ եք,— ասաց նա՝ ձեռք թանձր ամպերի ետևից հազիվ ուրվագծվելով տեսուչի հետ, որ բռնել էր լապտերը։— էս որտեղի՞ց են կրակ ճարում, դո՞ւ ես տալիս։

Զինվորը երդվեց, որ չի տալիս։ Մենք պատասխանեցինք, որ մոտներս արեթ ունեինք։ Տեսուչը խոստացավ արեթն ու սիգարները խլել մեր ձեռքից, և Պանինը հեռացավ՝ ենթադրելով, որ գլխարկների թիվը գլուխների թվից կրկնակի շատ էր։

Շաբաթ երեկոյան տեսուչը եկավ և հայտարարեց, թե ես ու մեզնից էլի մեկը կարող ենք տուն գնալ, իսկ մյուսները կենսաթ. մինչև երկուշաբթի։ Այդ առաջարկն ինձ վիրավորական թվաց, և ես տեսուչին հարցրի՝ կարո՞ղ եմ, արդյոք, մնալ. նա մի քայլ ետ գնաց, նայեց վրաս՝ այնպիսի ահեղազդեցիկ տեսքով, որն ընդունում են ցարերն ու հերոսները բալետում գայրույթ պարելիս, և «դե՛, մնացեք» ասելով դուրս գնաց։ Վերջին արարքիս համար ինձ տանն ավելի շատ հասավ, քան այդ ամբողջ պատմության համար։

Եվ այսպես՝ հայրական տանը չքնած առաջին գիշերներս անցկացրի պատժախցում։ Շուտով ինձ վիճակվեց ճաշակել մի ուրիշ բանտ, և այնտեղ ես նստեցի ոչ թե ութ օր, այլ ինը ամիս, որից հետո ոչ թե տուն գնացի, այլ աքսորավայր։ Բայց դեռ շատ կա, որ հասնենք դրան։

Այդ ժամանակվանից ես մեծագույն համակրանք էի վայելում լսարանում։ Սկզբում լավ ուսանողի համարում ունեի. Մալովի դեպքից հետո, ինչպես գոգոլյան հայտնի տիկինը, դարձա լավ ուսանող՝ բոլոր առումներով։

Այդ բոլորով հանդերձ՝ մենք որևէ բան սովորո՞ւմ էինք արդյոք, արդյոք կարո՞ղ էինք սովորել։ Կարծում եմ՝ «այո»։ Դասավանդումն ավելի աղքատիկ էր, ծավալն ավելի փոքր, քան քառասնական թվականներին։ Համալսարանը, ի դեպ, չպիտի ավարտին հասցնի գիտական դաստիարակությունը. Նրա գործն է մարդուն à même[1] շարունակելու ինքնուրույն կերպով. Նրա գործը հարցեր հարուցելն է, հարցնել սովորեցնելը։ Հենց այդ էլ անում էին այնպիսի պրոֆեսորներ, ինչպիսին Մ. Գ. Պավլովն* էր, մյուս կողմից էլ՝ Կաչենովսկու* նմանները։ Բայց դասախոսություններից ու պրոֆեսորներից ավելի ուսանողներին զարգացնում էր լսարանը՝ պատանեկան բախումներով, մտքերի, ընթերցած գրքերի փոխանակությամբ... Մոսկվայի համալսարանն անում էր իր գործը. իրենց դասախոսություններով Լերմոնտովի, Բելինսկու, Ի. Տուրգենևի, Կավելինի*, Գիրոգովի* զարգացմանը նպաստած պրոֆեսորները կարող են հանգիստ բռնտոն խաղալ և ավելի հանգիստ հանգչել հողի տակ։

Իսկ նրանց մեջ ի՞նչ ինքնատիպություններ ու ի՞նչ հրաշքներ կային՝ սկսած Ֆյոդոր Իվանովիչ Զումակովից,— որը կալվածատիրական իրավունքի ամենակատարյալ ազատությամբ՝ բանաձևերը ճարմարեցնում էր Պուանսոյի դասընթացում եղածներին, ավելացնելով ու պակասեցնելով տարրերը, քառակուսիներն ընդունելով արմատի, իսկ x-ը՝ հայտնի թվի տեղ,— մինչև Գավրիիլ Մյախկովը, որը դասախոսում էր աշխարհի ամենադաժան գիտությունը՝ տակտիկան։ Հերոսական առարկաների հետ մշտապես շփվելուց

[1] Հնարավորություն տալ (ֆրանս.)։



Մյախկովի արտաքինն իսկ շարային կեցվածք էր առաջել։ Մինչև բուկը կոճկված, չծալվող փողկապով՝ նա ավելի շատ հրամայում էր իր դասախոսությունները, քան թե կարդում։

— Պարոննե՛ր,— գոռում էր նա,— դեպի դա՞շտ։ Հրետանու մասին։

Դա չէր նշանակում, որ թնդանոթները ռազմի դաշտ են գնում, այլ պարզապես՝ որ գրքի լուսանցքում այդպիսի խոսքեր կար։ Ափսո՛ս որ Նիկոլայը խուսափում էր համալսարանից. եթե նա տեսներ Մյախկովին՝ նրան հոգաբարձու կդարձներ։

Իսկ Ֆյոդոր Ֆյոդորովիչ Ռե՛յսը, որ քիմիա դասավանդելիս երբեք քիմիական երկրորդ սրբությունից, այսինքն՝ ջրածնից դենը չէր անցնում, Ռե՛յսը, որ իրո՛ք քիմիայի պրոֆեսորի էր վերածվել այն բանի շնորհիվ, որ ոչ թե ինքը, այլ իր քեռին էր ինչ-որ ժամանակ զբաղվել քիմիայով։ Եկատերինայի թագավորության վերջում ծերուկին Ռուսաստան հրավիրեցին. նա չէր ուզում գալ՝ և իր փոխարեն ուղարկեց զարմիկին...

Չորս տարի տևած մեր դասընթացի (քանի որ խոլերայի ժամանակ համալսարանը մի ողջ կիսամյակ փակված էր) արտակարգ իրադարձությունների թվին են պատկանում ինքը՝ խոլերան, Հումբոլդտի* ժամանումը և Ուվարովի* այցելությունը։

Ուրալից վերադարձին Հումբոլդտին Մոսկվայում դիմավորեցին համալսարանին առընթեր բնախուզողների ընկերության հանդիսավոր նիստում, ընկերություն, որի անդամները զանազան սենատորներ, նահանգապետներ՝ [illegible] ոչ բնական և ոչ էլ անբնական գիտություններով չզբաղվող մարդիկ էին։ Հումբոլդտի՝ պրուսական նորին մեծության գաղտնի խորհրդականի համբավը,— որին թագավոր-կայսրը բարեհաճել էր Աննայի շքանշան տալ և հրամայել էր նրանից չառնել նյութի ու դիպլոմի փողը,— նրանց էլ էր հասել։ Նրանք որոշեցին ամոթով չմնալ այն մարդու առաջ, որը եղել էր Շիմբորազոյում* և ապրել էր Սան-Սուսիում*։

Մենք մինչև հիմա եվրոպացիների ու Եվրոպայի վրա նայում ենք այնպես, ինչպես գավառացիներն են նայում մայրաքաղաքի բնակիչներին՝ ստրկամտությամբ ու սեմ-

փական մեղավորության զգացումով, ամեն մի տարբերություն ընդունելով իբրև պակասություն, կարմրելով իրենց առանձնահատկությունների համար, ծածկելով դրանք, հնազանդվելով ու նմանվելով։ Բանն այն է, որ մենք եզել ենք ահաբեկված և ուշքի չենք եկել Պետրոս I-ի ծաղրանքներից, Բիրոնի վիրավորանքներից, պաշտոնյա գերմանացիների ու ֆրանսիացի դաստիարակների բարձրամտությունից։ Արևմուտքի մարդիկ գատողություններ են անում մեր երկդիմության ու նենգ խարդավանքի մասին. արտահայտվելու և պարծենալու ցանկությունը նրանք ընդունում են իբրև խաբելու ցանկություն։ Մեզանում նույն մարդը պատրաստ է պաթոսամտորեն լիբերալի հետ լիբերալություն անել, ձևացնել, թե լեգիտիմիստ է, և այդպես է վարվում առանց որևէ ետին մտքի, պարզապես ակնածանքից ու սեթևեթանքից. մեր գանգում խիստ զարգացած է de l'approbativité[1]-ի պալարը։

«Իշխան Դմիտրի Գոլիցինը,— մի անգամ ասել է լորդ Դյուրամը*,— իսկական վիգ է, հոգո՛վ վիգ»։

Իշխան Դ. Վ. Գոլիցինը պատվաբժան առաջ. կալվածատեր էր, իսկ թե ինչո՛ւ էր նա «վիգ», ինչի՛ համար՝ չեմ հասկանում։ Համոզվա՛ծ եղեք՝ իշխանը օր ծերության ցանկացել է դուր գալ Դյուրամին և վիգ է ձևացել։

Հումբոլդտի ընդունելությունը Մոսկվայում և Համալսարանում հանաք բան չէր։ Գեներալ-նահանգապետը, զանազան զորա- ու քաղաքապետեր, սենատոր— բոլորը եկել էին՝ ուսաժապավիճներով, լիքվ համազգեստով, պրոֆեսորները՝ մարտական տեսքով՝ սրերը կապած ու եռանկյունաձև գլխարկները թևերի տակ։ Հումբոլդտը, ոչինչ չկասկածով, եկել էր ակնոցած կանանցներով կապույտ ֆրակ հագած և, ինչ խոսք, շփոթված էր։ Նախաճաշերը մինչև ընթրիքները ընկերության դահլիճը ամենուրեք ծաղկներ էին. այստեղ ռեկտորն էր, այնտեղ՝ դեկանը, մի տեղ սկանակ պրոֆեսորն էր, մի ուրիշ տեղ՝ ավագագույնը, որն ավարտում էր իր գործունեությունը և այդ պատճառով էլ շատ դանդաղ էր խոսում,— ամեն մեկը ոչնչանում էր նրան՝ լատինացին,

[1] դուր գալու ցանկություն (ֆրանս.)։



գերմանացին, ֆրանսիացին, և այս բոլորը տեղի էր ունենում միջանցք կոչվող այս ահավոր քարե խողովակների մեջ, որտեղ մի բոպե կանգ առնողը մի ամիս ցրտից կհիվանդանա։ Հումբոլդտը ամեն բան լսում էր գլխարկը հանած և ամենինչի պատասխանում. ես համոզված եմ, որ բոլոր վայրենիները, որոնց մեջ նա եղել էր,— կարմրամորթներն ու պղընձագույնները,— ավելի քիչ անախորժություն էին պատճառել նրան, քան մոսկովյան ընդունելությունը։

Երբ նա դահլիճ հասավ ու իր տեղը նստեց, հարկ եղավ անմիջապես ոտքի կանգնել։ Հոգաբարձու Պիսարևը անհրաժեշտ համարեց հակիրճ, բայց զորեղ խոսքերով ռուսերին հրաման տալ նորին գերազանցության և ականավոր ճանապարհորդի մատուցած ծառայությունների վերաբերյալ. դրանից հետո Սերգեյ Գլինկան, «սպան», հազար ութ հարյուր տասներկու թվականի թանձր-խուլոտ ձայնով կարդաց իր քանաստեղծությունը, որն սկսվում էր այսպես.

Humboldt — Prométhée de nos jours[1]!

Հումբոլդտն ուզում էր գատողություններ անել մագնիսական սլաքի վրա կատարած դիտարկումների վերաբերյալ, Ռուսալում կատարած իր օդերևութաբանական գրառումները բազդատել մոսկովյանի. հետ,— այնինչ ռեկտորը գնաց նրան ցույց տալու Պետրոս I-ի արքայական մագնիսից հյուսված ինչ-որ բան... էրենբուրգն ու Ռազեն մի կերպ ասելիք գտան որոշ բան պատմելու իրենց հայրենակցությունների մասին[2]։

[1] Հումբոլդտը մեր օրերի Պրոմեթե՞սն է (ֆրանս.)։

[2] Թե Դաստասանում ինչքան տարբեր է ընկալվել Համբոլդտի նահանգապետի պրահանյա-հայրարհորդությունը, կարելի է դատել Գերմի նահանգապետի պրահանյա-կում ծառայող ուրալյան կազակի պատմածից. նա սիրում էր պատմել, թե ինքն ինչպես է ուղեկցել «պրուսական խելագար արքայազն Հումբոլտին»։ «Իսկ ի՞նչ էր անում նա». «Հե՛չ, դատարկ բաներ. խոտեր էր հավաքում, ավազն էր տնողում. մի ամեղամ, աղալեցերում, թարգմանի միջոցով ինձ ասում է՝ շուրջ ծաղ, հատակում ինչ-որ գանձ՝ հանի. գի, ես էլ հանեցի ինչ որ առհասարակ հատակում լինում է, իսկ նա հարցնում է՝ ի՞նչ է, խորքում շուրջ շա՞տ է սանս։ Չէ՛, ասում եմ, ինձ չե՞ս խաբի, պատվի առա ու պատասխանեցի՝ պատրաստ ենք ծառայելու, ձերդ պայծառափայլություն» (ծանոթ.՝ Ա. Ի. Գերցենի)։

Մեզանում ոչ պաշտոնական միջավայրում էլ գործերի վիճակը դրանից լավ չէ. տասը տարի անց մոսկովյան հասարակայնությունը ճիշտ նույն կերպ ընդունեց Լիստին*։ Հանուն նրա բավականին հիմարություններ արել էին նաև Գերմանիայում, բայց այստեղինը ամենևին էլ նույն բնույթը չուներ. Գերմանիայում այդ բոլորը պառաված օրիորդների հուզավառություն է, սենտիմենտալություն, Blumenstreuen[1], մեզանում՝ հպատակություն, իշխանության ճանաչում, ինքնանվաստացում, մեզանում ամեն բան՝ «պատի՛վ ունեմ ներկայանալու ձերդ գերազանցությանը»։ Դրան էլ, դժբախտաբար, գումարվեց Լիստի՝ իբրև հայտնի լովլասի համբավը. տիկնայք այնպես էին խռնվում նրա շուրջը, ինչպես գյուղամիջյան ճամփեքին,— մինչ կլծեն ձիերը,— գյուղացի տղաներն են խմբվում ուղևորի շուրջը՝ հետաքրքրությամբ զննելով նրան, նրա կառքը, գլխարկը... Ամենքը լսում էին միայն Լիստին, ամենքը խոսում էին միայն նրա հետ, պատասխանում միայն նրան։ Հիշում եմ, երեկույթներից մեկում Խոմյակովը, հարգարժան հասարակության փոխարեն կարմրելով, ինձ ասաց։

— Եկե՛ք, խնդրում եմ, մի քիչ վիճենք որևէ բանի շուրջ, որ Լիստը տեսնի, թե այստեղ, սենյակում կան մարդիկ, որոնք միայն իրենով չեն զբաղված։

Ի մեղմություն մեր տիկնանց՝ ես կարող եմ ասել վերջ մի բան. անգլուհիներն էլ ճիշտ այդպես իրար են անցել, խռնվել են, վխտացել, ճամփա չեն տվել այլ նշանավոր մարդկանց՝ Կոշուտին*, Հեռո Գարիբալդիին* և այլոց. բայց վա՜յ նրանց, ովքեր ուզում են լավ վարվելակերպ սովորել անգլուհիներից ու նրանց ամուսիններից։

Երկրորդ «նշանավոր» ճանապարհորդը նույնպես որոշ իմաստով «մեր օրերի Պրոմիթեյն» էր, միայն թե լույսը նա գողանում էր ոչ թե Յուպիտերից, այլ մարդկանցից։ Այդ «Պրոմիթեյը», որին ոչ թե Գլինկան, այլ ինքը՝ Պուշկինն է ներբողել Լուկուլլոսին ձոնած ուղերձում, ժողովրդական լուսավորության մինիստր Ս. Ս. (դեռևս՝ ոչ կոմս) Ուվարովն էր։ Նա զարմացնում էր մեզ իր բազմալեզվությամբ, իր

[1] Ծաղիկներ նետել (գերմ.)։



խմացած հազար ու մի տեսակ տարբեր բաներով. լուսավորության վաճառասեղանի իսկական գործակատար լինելով՝ նա հիշողության մեջ պահում էր բոլոր գիտությունների նմուշները, դրանց ձեռնտու կողմերը կամ ավելի շուտ՝ հիմունքները։ Ալեքսանդրի օրոք նա լիբերալ գրքույկներ էր գրում ֆրանսերենով, ապա հունական թեմաներով նամակագրություն էր վարում Գյոթեի հետ՝ գերմաներեն։ Դառնալով մինիստր, նա դատողություններ էր անում IV հարյուրամյակի սլավոնական պոեզիայի մասին, և այդ առիթով Կալենովսկին նրան նկատել տվեց, որ այն ժամանակ մեր նախնյաց ավելի կսազեր կռիվ տալ արջերի հետ, քան թե երգեր հյուսել թրակիական աստվածների ու ինքնակալական գթասրտության մասին։ Իբրև արտոնագիր՝ նա գրպանում պահում էր Գյոթեից ստացած նամակը, որի մեջ Գյոթեն նրան գերզավեշտական հաճոյախոսություն էր արել՝ ասելով. «Դուք եք դուք ներողություն խնդրում ձեր ոճի համար. դուք հասել եք այն բանին, ինչին ես չեմ կարողացել հասնել՝ դուք մոռացել եք գերմաներենի քերականությունը»։

Ահա հենց այդ իսկական ծպտյալ Պիկ դե լա Միրանդոլը* ազնվության նոր կարգ նահմանեց։ Նա կարգադրեց առանձնացնել լավագույն ուսանողներին, որպեսզի նրանցից յուրաքանչյուրը պրոֆեսորի փոխարեն մի-մի դասախոսություն կարդա իր անցած առարկաներից։ Պարզ է, որ դեկաններն ընտրեցին ամենաճարպիկներին։

Այդ դասախոսությունները տևեցին մի ամբողջ շաբաթ։ Ուսանողները պետք է պատրաստեին իրենց դասընթացի բոլոր թեմաները. դեկանը հանում էր հարցատոմսը և ուսանողի անունը։ Ուվարովը հրավիրել էր Մոսկվայի ողջ ավագանուն։ Վարդապետներն ու սենատորները, գեներալ-նահանգապետն ու Իվ. Իվ. Դմիտրիևը՝ բոլորը առկա էին։

Ինձ վիճակվեց դասախոսություն կարդալ հանքաբանությունից՝ Լովեցկու կուրսում. նա էլ է արդեն մահացել։

Ո՞ւր է մեր ծերուկ Լանժերոնը,
Ո՞ւր է մեր ծերուկ Բենիգսոնը,
Դու էլ գնացիր, անդարձ անցար,
Կարծես թե չէիր եկել աշխարհ*։

Աշեքսեյ Լեոնտիևիչ Լովեցկին բարձրահասակ, ծանրաշարժ, կոպիտ տաշված տղամարդ էր՝ մեծ բերանով ու մեծ դեմքով, որ ամենևին ոչինչ չէր արտահայտում։ Միջանցքում հանելով տարբեր չափսի օձիքներով զարդարված իր սիսեռագույն շինելը, որ հագնում էին առաջին կոնսուլատի ժամանակ, նա, դեռ լսարան չմտած, միալար ու անտարբեր ձայնով (որ շատ լավ սազում էր նրա քարե առարկային) սկսում էր. «Անցյալ դասախոսությունը մենք ավարտեցինք, ասելով այն ամենը, ինչ որ անհրաժեշտ էր սիլիկահողի...», ապա նստում էր ու շարունակում՝ «կավահողի մասին...»։ Ցուրաքանչյուր հանածոյի տեղեկամատյանի համար նա ստեղծել էր անփոփոխ սյունակներ, որոնցից երբեք չէր շեղվում. պատահում էր, որ որոշ հանքանյութերի բնորոշումը տրվում էր ժխտողաբար. «Բյուրեղացումը— չի բյուրեղանում, գործածությունը— ոչ մի բանի համար չի գործածվում, օգուտը— օրգանիզմին վնաս է հասցնում...»։

Ասենք, նա չէր խուսափում ոչ պոեզիայից, ոչ էլ բարոյական գնահատականներից, և ամեն անգամ, երբ կեղծված քարեր էր ցույց տալիս ու պատմում, թե ինչպես են դրանք սարքում, ավելացնում էր. «Պարոնա՛յք, սա խաբեբայություն է»։ Գյուղական տնտեսության մեջ նա լավ աքաղաղին բարոյական հատկանիշների տեր էր համարում, եթե սա «երգելու և հավերի սիրահար էր», իսկ արիստոկրատական խոյի բնորոշ հատկությունը համարում էր «անմազ տոտիկները»։ Նա կարողանում էր դարձյալ սրտառուչ բարբառել, թե ինչպես մժեղները պատմում էին, որ ամռան գեղեցիկ մի օր իրենք շրջում էին ծառի վրա ու ծածկվեցին խեժով, որը սաթ դարձավ,— և ամեն անգամ ավելացնում էր. «Պարոնա՛յք, սա պրոզոպոպեա է»[1]։

Երբ դեկանը կանչեց ինձ՝ հասարակությունը մի քիչ հոգնած էր։ Մաթեմատիկայից կարդացված երկու դասախոսություններից ձանձրույթ ու տրտմություն էր իջել ոչ մի բան չհասկացած մարդկանց վրա։ Ուվարովը պահանջում էր ավելի աշխույժ մի բան և «լեզվանեկ» մի ուսանող։ Շշեպկինը տվեց իմ անունը։

[1] մարմնավորում (ֆրանս. prosopopée-ից)։



Ես բարձրացա ամբիոն, որի կողքին, Մեմնոնի կամ Օղիրիսի նման*, ձեռքերը ծնկներին դրած, անշարժ նստել էր Լովեցկին ու վախենում էր... Ես շշուկով նրան ասացի.

— Ինչ լա՞վ է, որ ինձ վիճակվեց ձե՛զ մոտ կարդալ, ես ձեզ խայտառակ չեմ անի։

— Առուն չթռած՝ հոպ մի ասա...— շուրթերը հազիվ շարժելով և ինձ չնայելով՝ սաստեց հարգարժան պրոֆեսորը։

Քիչ մնաց փոթկայի, բայց երբ դեմս նայեցի՝ աչքերս շաղվեցին, զգացի, որ սփրթնեցի ու բերանս մի տեսակ շոռացավ։ Ես երբեք հրապարակային ելույթ չէի ունեցել, լսարանը լիքն էր ուսանողներով, նրանք հույսն ինձ վրա էին դրել. ամբիոնի առաջ, սեղանի շուրջ «սույն աշխարհի ուժեղները էին» ու մեր բաժանմունքի բոլոր պրոֆեսորները։ Ես ներն

սիրտս ուժեղ քարախեց ու ձեռքերս դողացին. ես ու Մաշֆան բեմի կտևում սկսվելուն էինք սպասում։ Նա այնքան էր ինձ խղճում կամ էլ այնքան էր վախենում, թե գործը կփչացնեմ, որ մի մեծ բաժակ շամպայն տվեց ինձ, բայց դրանից հետո էլ համարյա մեռած էի։

Ժողովրդական լուսավորության մինիստրի և ժանդարմերիայի գնդապետի թեթև ձեռքով ես, արդեն առանց ջղային ցնցումների ու ինքնասեր ամոթխածության, հանդես եկա Լոնդոնի լեհական միտինգում. դա իմ երրորդ հրապարակային ելույթն էր։ Պաշտոնաթող մինիստր Ուվարովին փոխարինել էր պաշտոնաթող մինիստր Լեդրյու-Ռոլենք*։

Բայց հերիք չե՞ն, արդյոք, ուսանողական հիշողությունները։ Վախենում եմ, որ այսքան երկար դրանցից խոսելը նշան է ծերության. կավելացնեմ սոսկ մի քանի մանրամասնություններ 1831 թվականի խոլերայի մասին։

Խոլերա. այս բառը,— որն այժմ այնպե՞ս ծանոթ է Եվրոպայում և Ռուսաստանում այնքա՜ն ընտանի, որ հայրենասեր մի բանաստեղծ խոլերան անվանում է Նիկոլայի միակ հավատարիմ դաշնակիցը,— այն ժամանակ առաջին անգամ հնչեց հյուսիսում։ Ամենայն ինչ սահմռկում էր Վոլգայի վրայով գեպի Մոսկվա հառաջացող ահավոր վարակից։ Զափազանցված լուրերը սարսափով էին համակում երևակայությունը։ Հիվանդությունը քմահաճ ընթացք ուներ, կանգ էր առնում, տեղից-տեղ էր թռչում, թվում էր՝ Մոսկվայի կողքովն անցավ, ու մեկ էլ ահավոր լուրը տարածվեց քաղաքով մեկ՝ «Խոլերան Մոսկվայո՜ւմ էր»։

Առավոտյան քաղաքական բաժանմունքի ուսանողներից մեկը սրտխառնություն ունեցավ, հաջորդ օրը նա մեռավ համալսարանի հիվանդանոցում։ Մենք վազեցինք դիակը տեսնելու. նա սառուցիկ նիհարել էր, ինչպես երկարատև հիվանդությունից հետո, աչքերը փոս էին ընկել, դիմագծերն աղավաղվել էին. նրա կողքին պառկած էր պահակը. որը հիվանդությամբ բռնվել էր գիշերը։

Մեզ հայտարարեցին, որ կարգադրված է համալսարանը փակել։ Մեր բաժանմունքում այդ հրամանն ընթերցեց տեխնոլոգիայի պրոֆեսոր Դենիսովը, նա տխուր էր, գունատ՝ վախեցած։ Հաջորդ օրը երեկոյան կողմ նա էլ մեռավ։



Բոլոր բաժանմունքներից մենք եկանք հավաքվեցինք համալսարանի մեծ բակում. ինչ-որ սրտառուչ բան կար այդ խռնված երիտասարդության մեջ, որին հրամայված էր իրարից բաժանվել՝ վարակի պատճառով։ Դեմքերը գունատ էին, արտասվոր ոգելից, շատերը մտածում էին հարազատների, բարեկամների մասին. մենք հրաժեշտ տվինք դանձարանի հաշվին սովորող ուսանողներին, որոնց ախտարգելիչ միջոցառումներով առանձնացրել էին մեզանից, ու փոքրիկ խմբերով ցրվեցինք տները։ Իսկ տանը բոլորին դիմավորեցին գարշահոտ քլորակրով, «շորս ավազակների քացախով» և այնպիսի դիետայով, որը առանց քլորի ու խոլերայի էլ մարդուն կարող էր անկողին գցել։

Ցարօրինակ բան՝ այդ տխուր ժամանակը ինչ-որ հանդիսավորությամբ է մնացել հուշերիս մեջ։

Մոսկվան միանգամայն այլ տեսք ստացավ։ Հրապարակայնությունը, որ անհայտ էր սովորական ժամանակներին, նորացրել էր կյանքը։ Կառքերը սակավացել էին, մարդկանց մայթ բազմություններ էին հավաքվում խաչմերուկներում ու խոսում թունավորողների մասին։ Հիվանդներին փոխադրող ծածկակառքերը շարժվում էին դանդաղ ընթացքով, ոստիկանների ուղեկցությամբ. մարդիկ խույս էին տալիս դիակներ տանող սև բեռնասայլերից։ Հիվանդության վերաբերյալ հաղորդագրությունները հրատարակվում էին օրը երկու անգամ։ Քաղաքը, պատերազմական ժամանակվա նման, շրջափակված էր, և զինվորները խփեցին մի խեղճ տիրացուի, որը ծածուկ անցնում էր գետը։ Այս ամենը լրիվ կլանել էր մտքերը, հիվանդության վախը վերացրել էր վախը իշխանությունների հանդեպ, բնակիչները տրտնջում էին, բայց ահա՝ լուր լուրի ետևից. այսինչը հիվանդացավ, այնինչը մեռավ...

Միտրոպոլիտն ընդհանուր մաղթանք կատարեց։ Նույն օրը և նույն ժամին քահանաները խաչվառներով շրջեցին իրենց ծխերը։ Վախեցած բնակիչները դուրս էին գալիս տներից ու թափորն անցնելիս ծունկ շոքում, արցունքն աչքերին՝ թողություն հայցելով մեղքերին. քահանաներն իրենք, որ սովոր էին աստծո հետ տնավարի վարվել, լուրջ էին և զգացված։ Նրանց մի մասը գնում էր Կրեմլ. այնտեղ, մա-

քաղաք օգում, բարձրաստիճան հոգևորականությամբ շրջապատված, ծնկի էր եկել միտրոպոլիտը և աղոթում էր՝ «Ինչո՞ւ չինեն գրաժակա զարդ»։ Վեց տարի առաջ նույն այդ տեղում նա աղոթում էր հանուն գեկաբրիստների սպանության։

Ֆիլարետը ինչ-որ օպոզիցիոն թեմ էր ներկայացնում, հանուն ինչի՞ էր օպոզիցիայի մեջ՝ ես ամենևին չէի կարողանում հասկանալ։ Թերևս իր անձի համար։ Նա խելոք ու գիտուն մարդ էր, վարպետորեն տիրապետում էր ռուսաց լեզվին՝ հաջողությամբ ներմուծելով նրա մեջ եկեղեցական ալավոներենը. այդ ամենը նրան օպոզիցիայի ոչ մի իրավունք չէր տալիս։ Ժողովուրդը չէր սիրում նրան և մասն էր անվանում, որովհետև նա մոտ էր իշխան Ա. Ն. Գոլիցինի հետ և Պետերբուրգում քարոզչություն էր անում ավետարանական ընկերության ամենաեռուն գործունեության շրջանում։ Սինոդն արգելեց ըստ նրա կատեխիզիսի ուսուցանելը։ Նրան ենթակա հոգևորականությունը սարսռում էր նրա բռնապետությունից. թերևս հենց մրցակցության հողի վրա էլ նա ու Նիկոլայն ատում էին իրար։

Ֆիլարետը կարողանում էր խորամանկորեն ու ճարպկորեն նսեմացնել անցավոր իշխանությունը՝ նրա քարոզներում ճառագում էր այն քրիստոնեական, անորոշ սոցիալիզմը, որը փայլ տվեց Լակորդերին* և մյուս հեռատես կաթոլիկներին։ Ֆիլարետն իր վեհափառական թեմի բարձունքից բարբառում էր, թե մարդը երբեք չի կարող ըստ օրինաց ուրիշի գործքը լինել, թե մարդկանց միջև կարող է գոյություն ունենալ սոսկ ծառայությունների փոխանակում, և դա նա ասում էր մի պետության մեջ, որտեղ բնակչության կեսը ստրուկ էր։

Վորոբյովյան լեռների աքսորման ընդանի կոնֆրակիրներին նա ասում էր. «Քաղաքացիական օրենքը ձեզ դատապարտել է և քշում է, իսկ եկեղեցին հետամուտ է ձեզ, ուզում է մի խոսք էլ ասել, էլի՞ աղոթել ձեզ համար և օրհնել ձեր ճանապարհը»։ Ապա, մխիթարելով նրանց, ավելացնում էր, որ «նրանք, պատժվելով, ջնջել են իրենց անցյալը, որ նրանց մի նոր կյանք է սպասում, այնժամ, երբ այլոց մեջ (հավանաբար, պաշտոնյաներից բացի, ուրիշ ոչ ոք չկար) կան ավելի մեծ հանցագործներ», և նա օրինակ էր բերում Քրիստոսի հետ խաչված ավազակին։

Խալերայի առթիվ կատարած մաղթանքի ժամանակ Ֆիլարետի քարոզը գերազանցեց մյուս բոլոր քարոզներին. նա վերցրեց այն հատվածը, թե ինչպես հրեշտակը, ի պատիժ Դավթի, առաջարկեց ընտրել պատերազմը, սովը կամ ժանտախտը. Դավիթն ընտրեց ժանտախտը։ Թագավորը, կատաղած, Մոսկվա եկավ, արքունիքի մինիստր իշխան Վոլկոնսկուն ուղարկեց Ֆիլարետին մի լավ դաս տալու և սպառնում էր միտրոպոլիտ ուղարկել նրան Վրաստան։ Միտրոպոլիտը խոնարհաբար հնազանդվեց և բոլոր եկեղեցիներին նոր քարոզ առաքեց, որով պարզաբանում էր, թե զուր վերնեք առաջին քարոզի տեքստում որևէ հավելյալ բան փնտրել գիրքարեպաշտ կայսեր վերաբերյալ, թե Դավիթը մենք ինքներս ենք, որ թաղված ենք մեղքերի մեջ։ Պարզ է, որ այդ ժամանակ առաջին քարոզը հասկացան նաև նրանք, ովքեր վիճակամից հասու չէին եղել դրա իմաստին։

Այսպես էր օպոզիցիա խաղում Մոսկվայի միտրոպոլիտը։

Մաղթանքը նույնքան քիչ էր օգնում փարախի գեմ, որքան քլորակիրը. հիվանդությունը ծավալվում էր։

1849 թվականի ամենավայրագ խոլերայի ամբողջ քննությունը ես Փարիզում էի։ Հիվանդությունն ահավոր ավերածություններ էր գործում։ Հունիսյան շոգերը նպաստում էին դրան, խոնջած մարդիկ կոտորվում էին ճանճի պես։ Քաղաքացիները փախչում էին Փարիզից, մյուսները նստել մնացել էին փակի տակ։ Կառավարությունը, որ բացառապես զբաղված էր հեղափոխականների գեմ իր պայքարով, չէր մտածում գործնական միջոցներ ձեռնարկելու մասին։ Ազատիկ ավիրատվությունները չէին համապատասխանում պահանջներին։ Խեղճ աշխատավոր մարդիկ թողնված էին քախտի քմահաճույքին, հիվանդանոցներում չկային բավարար մահճակալներ, ռատիկանությունը չուներ բավարար քվով գաղներ, և տարբեր ընտանիքներով լեփ-լեցուն սենյակում դիակները օրերով մնում էին խորքի սենյակներում։

Մոսկվայում այդպես չէր։

1 Հեռացրու ինձանից այս բաժակը։

Իշխան Դ. Վ. Գոլիցինը, այն ժամանակվա գեներալ-նախ հանգապետը, թույլ, բայց ազնվաբարո, կրթված ու շատ հարգելի մի մարդ, ոգևորեց մոսկովյան հասարակությանը, և ամեն ինչ գլուխ եկավ մի տեսակ տնավարի, այսինքն՝ առանց կառավարության հատուկ միջամտության։ Պատվավոր բնակիչներից՝ հարուստ կալվածատերերից ու վաճառականներից կազմվեց մի կոմիտե։ Անդամներից յուրաքանչյուրը վերցրեց Մոսկվայի մասերից մեկը։ Մի քանի օրում բացվեց քսան հիվանդանոց, պետությունը ոչ մի կոպեկ չծախսեց դրանց վրա, ամեն ինչ արվեց նվիրատվության գումարներով։ Վաճառականները ձրի տալիս էին այն ամենը, ինչ անհրաժեշտ էր հիվանդանոցներին՝ վերմակ, սպիտակեղեն և տաք հագուստ, որոնք թողնում էին ապաքինվածներին։ Երիտասարդները անվճար դառնում էին հիվանդանոցների վերակացուներ, որպեսզի նվիրատվությունների կեսը ծառայողների բաժինը չդառնար։

Համալսարանը ետ չմնաց։ Ամբողջ բժշկական ֆակուլտետը, ուսանողներն ու բուժակները en masse[1] իրենց դրին խոլերայի կոմիտեի տրամադրության տակ. նրանց բաժանեցին հիվանդանոցների վրա, և նրանք մինչև վարակի վերջը օր ու գիշեր մնացին տեղերում։ Երեք թե չորս ամիս այդ հիանալի երիտասարդությունն ապրեց հիվանդանոցներում՝ իբրև օրդինատորներ, բուժակներ, հիվանդապահներ, դրագիրներ, և այդ ամենը՝ առանց որևէ հատուցման, ըստ որում, երբ որ մարդիկ չափից դուրս վախենում էին վարակից։ Ես հիշում եմ ուկրաինացի մի ուսանողի, կարծեմ Ֆիցխելաուրով ազգանունով, որը խոլերայի սկզբում ընտանեկան կարևոր գործերով արձակուրդ էր խնդրում։ Դասերի ժամանակ արձակուրդ հազվագեպ են տալիս. նա, վերջապես, ստացավ արձակուրդը. հենց այն ժամանակ, երբ նա պատրաստվում էր մեկնելու, ուսանողները գնում էին հիվանդանոցները։ Ուկրաինացին ձեռ քաշեց արձակուրդից և գնաց նրանց հետ։ Երբ նա հիվանդանոցից դուրս եկավ՝ արձակուրդի ժամկետը վաղուց անցել էր, և առաջինը ինքն էր սրտանց ծիծաղում իր «ուղևորության» վրա։

[1] լրիվ կազմով (ֆրանս.)։



Մոսկվան, առերևույթ կնոտ ու ալարկոտ, բամբասանքներով և ուխտագնացությամբ, հարսանիքներով ու ոչնչով զբաղվող Մոսկվան, արթնանում է ամեն անգամ, երբ հարկ է լինում, և կանգնում է հանգամանքների բարձրության վրա՝ երբ Ռուսիայի գլխին պայթում է ամպրոպը։

1612 թվականին նա արյունաթոր պսակվեց Ռուսաստանի հետ և միաձուլվեց նրան 1812-ի հրով։

Նա գլուխ խոնարհեց Պետրոսի առաջ, քանզի նրա գաղանային թաթի մեջ Ռուսաստանի գալիքն էր։ Բայց նա զզվոհ ու արհամարհանքով իր պատերից ներս առավ ամուսնու՝ արյունով թաթախված կնոջը*, զզջումից զուրկ այդ լեդի Մակբեթին, իտալական արյունից զուրկ այդ Լուկրեցիա Բորջիային*, գերմանական ծագումով ռուսական թագուհուն, և սա անխոս հեռացավ Մոսկվայից՝ հոնքերը կիտած ու վրդովված։

Հոնքերը կիտած ու վրդովված՝ Նապոլեոնը Դրագոմիլյան ուղեկալի մոտ սպասում էր Մոսկվայի բանալիներին, անհամբեր խաղացնելով ծխամորճը ու մատներով քրքրելով ձեռնոցները։ Նա՝ սովոր չէր մենակ մտնել օտար քաղաքներ։

Բայց Մոսկվան իմ ընդառաջ չգնաց,—

ինչպես ասում է Պուշկինը, այլ ինքն իրեն կրակ տվեց։

Եկավ խոլերան, և նորից ժողովրդյան քաղաքը աստարեղ եղավ՝ համակ սիրտ ու ճանդ դարձած։

1830-ին, օգոստոսին, մենք ճամփա ընկանք դեպի Վասիլևսկոյե, սովորականի պես կանգ առանք Պերխուշկովոյի ռադկիֆյան* ամրոցում և, մեզ ու ձիերին կերակրելով՝ պատրաստվում էինք շարունակելու ճանապարհը։ Բակայը, սրբիչը մեջքին դոտի արած, արդեն բղավել էր՝ «Գնացի՞նք», երբ մի ձիավոր սրընթաց գալով՝ նշան արեց, որ կանգ առնենք, և Սենատորի կառապանը, քրտինք-փոշու մեջ կորած, ցած թռավ ձիուց ու մի ծրար տվեց հորս։ Այդ ծրարի մեջ Հոպիյան նեղափոխությունն էր։ «Journal des Débats»-ի երկու էջը, որ նա բերել էր նամակի հետ, ես կարդացի հարյուր անգամ, ես անգիր գիտեի այդ էջերը. և առաջին՝ անգամը լինելով՝ ձանձրույթ զգացի գյուղում։

Փառահեղ ժամանակ էր, իրադարձությունները զարգանում էին սրընթաց։ Հազիվ էր Կարլոս X-ի լղարիկ կերպարանքն անհետացել Հոլիրուդի* մառախուղի ետևում՝ Բելգիան բռնկվեց, քաղաքացի-թագավորի* գահը երերում էր, ինչ-որ տաք, հեղափոխական շունչ սկիզբ առավ վիճաբանություններում, գրականության մեջ։ Վեպերը, դրամաները, պոեմները՝ ամեն ինչ նորից դարձավ պրոպագանդա, պայքար։

Այն ժամանակ Ֆրանսիայում տեղի ունեցող հեղափոխական բեմադրությունների զարդաքանդակած, դեկորատիվ մասը մեզ անհայտ էր, և մենք ամեն ինչ հալած յուղի տեղ էինք ընդունում։

Ով ուզում է իմանալ, թե հուլիսյան հեղաշրջման լուրն ինչքա՞ն ուժեղ էր ներգործում երիտասարդ սերնդի վրա, թող կարդա Հայնեի նկարագրությունը, որը Հելգոլանդում լսել էր, որ «կռապաշտ մեծ Պանը՝ մեռել է»։ Այստեղ կեղծ խանդավառություն չկա. Հայնեն երեսուն տարեկանում նույնչափ հափշտակված, նույնչափ երեխայի պես ոգևորված էր, որքան մենք տասնութ տարեկանում։

Մենք քայլ առ քայլ հետևում էինք յուրաքանչյուր խոսքին, ամեն մի իրադարձությանը, խիզախ հարցերին ու կտրուկ պատասխաններին, գեներալ Լաֆայետին և գեներալ Լամարկին, մենք ոչ միայն մանրամասնորեն գիտեինք, այլև ջերմորեն սիրում էինք այն ժամանակվա գործիչներին, անշուշտ արմատականներին, և մոտներս պահում էինք նրանց պատկերները՝ Մանուելից ու Բենժամեն Կոնստանից մինչև Դյուպոն դը Լյոր ու Արման Կարել։

Այս տաք պահին հանկարծ, մոտակայքում պայթած ռումբի նման, մեզ շշմեցրեց Վարշավայի ապստամբության լուրը։ Դա արդեն դրսում չէր, դա տան մեջ էր, և մենք արցունքն աչքներիս նայում էինք իրար, կրկնելով մեր պիրած խոսքը՝

Nein! Es sind keine leere Träume![1]

Մենք հրճվում էինք Դիբիչի* յուրաքանչյուր պարտությամբ, չէինք հավատում լեհերի անհաջողություններին, և նա անհապաղ իմ սրբապատկերների շարքին ավելացրի Թադեոս Կոստյուշկայի դիմանկարը։

Հենց նույն ժամանակ ես երկրորդ անգամ տեսա Նիկոլային, և այս անգամ նրա դեմքն ավելի ուժգին մեխվեց հիշողությանս մեջ։ Ազնվականությունը պարահանդես էր տալիս նրա պատվին, ես վերնասրահում էի և կարող էի մի կուշտ զննել նրան։ Այն ժամանակ նա դեռ բեղ չէր պահում, դեմքը ջահել էր, բայց թագադրությունից հետո առաջացած դիմագծերի փոփոխությունն ապշեցրեց ինձ։ Նա խոժոռ կանգնել էր սյան մոտ, մոլեգին ու սառն նայում էր դիմացը՝ ոչ մեկին չտեսնելով։ Նա նիհարել էր։ Այդ դիմագծերի մեջ, այդ անագահ աչքերի խորքում պարզ կարելի էր կարդալ Լեհաստանի, նաև Ռուսաստանի ճակատագիրը։ Նա ցնցված էր, վախեցած, նա կասկածում էր[1] գահի կայունությանը և

1 Ահա ինչ է պատմում Դենիս Դավիդովն իր «Նոթերում». «Մի անգամ թագավորը Ա. Պ. Երմոլովին՝ ասաց. «Լեհական պատերազմի շրջանում ես մի ժամանակ ահավոր սարսափելի վիճակի մեջ էի։ Կնոջս ծննդաբերելու օրերն էին, Նովգորոդում խռովություն էր բռնկվել, ինձ մոտ մնացել էր սոսկ երկու հեծելավաշտ. լուրերը բանակից ինձ հասնում էին միայն Քյոնիգսբերգի վրայով։ Ստիպված եղա ինձ շրջապատել հոսող-ոտոլից դուրս գրված զինվորներով»։

Գաբրիելանի «նոթերը» ոչ մի կասկած չեն թողնում, որ Նիկոլայն նույնպես Արակչեևը, ինչպես բոլոր ահեղը, անողորմ ու վրիժառու մարդիկ, վախկոտ էր։ Ահա ինչ է պատմել Դավիդովին գեներալ Չեչենսկին. «Դուք գիտեք, որ ես կարողանում եմ գնահատել արիությունը, ուրեմն և հիվանդագին իմ խոսքերին։ Դեկտեմբերի 14-ին, գոնվելով թագավորին մոտիկ, ես շարունակ դիտում էի նրան։ Կարող եմ հավատացնել ձեզ ազնիվ խոսքով, որ ամբողջ ժամանակ գույնը գրած թագավորի երեսին նամել էր»։

Իսկ ահա թե ինչ է պատմում ինքը՝ Դավիդովը. «Մեննալյա հրապարակի խռովության ժամանակ թագավորը մայրաքաղաք ժամանեց մինչև հերթական օրը, երբ ամեն ինչ արդեն խաղաղվել էր։ Թագավորը Պետերհոֆում էր և մի անգամ պատահաբար բերանից թռցրեց. «Մենք վազկանսկու հետ ամբողջ օրը կանգնած էինք այդու գիրեզմանոցին ու ակնոց էինք դնում, թե Պետերբուրգի կողմից չե՞ն լսվում արդյոք թնդանոթի կրակոցներ»։ Այդում անհանգիստ ականջը ձայնի պահելու և շարունակ Պետերբուրգ տուրհանդակներ ուղարկելու փափաքին,— ավելացնում է Դավիդովը,— նա պիտի անեմանք շատ ավելի, այդպես կարելի էր թե շատ արիություն ունեցող ամեն մեկը։ Հաջորդ օրը (երբ ամեն ինչ խաղաղեցված էր) թագավորը ճամբարի հրապարակը ուղարկեց ամբո-



1 Ո՛չ, սին երազանք չէ այդ՝ (գերմ.)։

պատրաստվում էր վրեժ լուծել իր տառապածի, իր երկյուղի ու կասկածանքի համար։

Լեհաստանի հնազանդեցումից սկսած այդ մարդու մեջ կուտակված բոլոր չարությունները սանձազերծվեցին։ Շուտով այդ բանը մե՛նք էլ զգացինք։

Թագավորության սկզբից համալսարանը շրջապատող լրտեսական ցանցն սկսեց սեղմվել։ 1832 թվականին կռավ մեր բաժանմունքի լեհ ուսանողը։ Նրան, որ ուղարկվել էր պետության ծախքով, ոչ իր կամքով, տեղավորել էին մեր կուրսում. մենք ծանոթացանք նրա հետ. իրեն պահում էր համեստ ու տխուր, մենք երբեք ոչ մի խիստ խոսք չէինք լսել նրանից, բայց ոչ մի թույլ խոսք էլ երբեք չէինք լսել։ Մի առավոտ նա չկար դասախոսությանը, հաջորդ օրը դարձյալ չկար։ Մենք սկսեցինք հարցուփորձ անել, պետության հաշվին սովորողները մեզ թաքուն ասացին, թե գիշերը եկել են նրա հետևից, թե նրան կանչել են վարչություն, հետո ինչոր մարդիկ են եկել նրա թղթերն ու իրերը տանելու և հրամայել են այդ մասին չխոսել։ Դրանով էլ գործն ավարտվեց, մենք երբեք ոչինչ չլսեցինք այդ գժբախտ երիտասարդի նկատմամբ մասին[1]։

Անցավ մի քանի ամիս. հանկարծ լսարանում լուր տարածվեց, թե գիշերը բռնել են մի քանի ուսանողների*, ասվում էին Կոստենեցկու, Կոլրեյֆի, Անտոնովիչի և այլոց անունները. մենք նրանց մոտիկից գիտեինք՝ նրանք բոլորն էլ հոյակապ պատանիներ էին։ Կոլրեյֆը, բոլոր քահանայի որդին, արտակարգ շնորհալի երաժիշտ էր։ Նրանց հանձնել էին ռազմադատական հանձնաժողովի ձեռքը, այլ խոսքով՝ դա նշանակում էր, որ նրանց կործանման էին մատնել։ Մենք բոլորս տենդագին սպասում էինք, թե ինչ

խի մեջ, գոռաց՝ «ծեկի՞», և ամբոխը անհապաղ կատարեց նրա հրամանը։ Տեսնելով քաղաքացիական հագուստով մի քանի մարդկանց (կառքի ետևից եկողների մեջ), թագավորը Երևայեցց. թե դրանք կասկածելի անձինք են, հրամայեց բանտախուց տանել դժբախտներին և, դիմելով ժողովրդին, սկսեց բղավել. «Այս բոլորը սուտ լեհերի արածն է, նրանք են ձեզ հրահրել»։ Նման անտեղի արարքը, իմ կարծիքով, լրիվ փչացրեց արդյունքները։ Ի՞նչ պատուղ էր այդ Նիկոլայը (ծանոթ.՝ Ա. Ի. Գերցենի)։

1 Իսկ որտե՞ղ են Կրիտսկիները։ Ի՞նչ են արել նրանք, ո՞վ է նրանց դատել, քանի՞ տարի են տվել (ծանոթ.՝ Ա. Ի. Գերցենի)։



կանեն նրանց, բայց նրանք էլ սկզբում կարծես գետնի տակն անցան։ Ջարթնող ծիլերը չարդող փոթորիկը մեր կողքին էր։ Մենք արդեն ոչ թե նրա մոտենալու հոտն էինք առնում, այլ լսում, տեսնում էինք այդ փոթորիկը և գնալով ավելի էինք սեղմվում իրար։

Վտանգն ավելի էր քրքրում մեր բորբոքված ջղերը, ստիպում էր, որ ավելի արագ բաբախեն մեր սրտերը, որ մենք ավելի ջերմորեն սիրենք մեկս մեկու։ Սկզբում մենք հինգն էինք*, այդ ժամանակ հանդիպեցինք Պասեկին*։

Վադիմի մեջ մեզ համար շատ նոր բան կար։ Մենք բոլորս էլ, փոքրիկ տարբերություններով, միանման զարգացում ունեինք, այսինքն՝ Մոսկվայից ու գյուղից բացի բան չէինք տեսել, սովորել էինք նույն գրքերով և ուսանել նույն դասատուների ձեռքի տակ, դաստիարակվել տանը կամ համալսարանի պանսիոնում։ Վադիմը ծնվել էր Սիբիրում, երբ հայրը աքսորում էր, կարիքի ու զրկանքների մեջ։ Նրա ուսուցիչը եղել էր հենց իր հայրը, նա մեծացել էր եղբայրներով ու քույրերով բազմանդամ ընտանիքում, ճնշող աղքատության, բայց լիակատար ազատության մեջ։ Սիբիրն իր հետքն է թողնում, որ ամենևին նման չէ մեր գավառականին. Սիբիրն իսկի էլ այդպես ճղճիմ ու խղճուկ չէ, նա քաջառողջություն ու լավ կոփվածք է տալիս։ Վադիմը մեր համեմատությամբ վայրի էր։ Նրա կտրիճությունն ուրիշ էր, մերը չէր, դյուցազնական էր, երբեմն պարծենկոտ. դժբախտության արիստոկրատիզմը նրա մեջ զարգացրել էր յուրահատուկ մի ինքնասիրություն, բայց նա կարողանում էր շատ սիրել նաև ուրիշներին ու շռայլորեն նվիրվել նրանց։ Նա խիզախ էր, նույնիսկ չափից ավելի անզգույշ. Սիբիրում, այն էլ աքսորականի ընտանիքում ծնված մարդը մեր համեմատությամբ ունի արդեն այն առավելությունը, որ չի վախենում Սիբիրից։

Վադիմը, ժառանգաբար, ամբողջ հոգով ատում էր ինքնիշխանությունը և հենց որ հանդիպեց մեզ՝ ամուր կրծքին սեղմեց։ Մենք շատ շուտ բարեկամացանք։ Ի դեպ՝ այն ժամանակ ծիսապաշտություն, խոհեմ զգուշավորություն՝ նման բաներ չկային մեր շրջապատում։

— Ուզո՞ւմ ես ծանոթանալ Կետշերի՞ հետ, որի մասին այդքան լսել ես,— ասում է ինձ Վադիմը։

— Անպայմա՛ն ուզում եմ։

— Վաղն արի, երեկոյան ժամը յոթին, չուշանաս, նա մոտս կլինի։

Գալիս եմ՝ Վադիմը տանը չէ։ Արտահայտիչ դեմքով ու ակնոցի տակից բարեհոգի-սպառնալից նայող բարձրահասակ մի տղամարդ սպասում է նրան։ Ես մի գիրք եմ վերցնում ձեռքս, նա էլ է գիրք վերցնում։

— Դուք,— ասում է նա՝ բացելով գիրքը,— դուք Գերցե՞նն եք։

— Այո՛, իսկ դուք Կետշե՞րն եք։

Սկսվում է խոսակցությունը՝ կենդանի, աշխույժ...

— Ներեցեք,— կտրուկ ընդհատում է ինձ Կետշերը,— ներեցեք, շնորհ արեք, ինձ հետ դու-ով խոսեք։

— Կխոսենք դու-ով։

Եվ այդ պահից (որ հավանաբար 1831 թվականի վերջին էր) մենք անբաժան ընկերներ դարձանք. այդ պահից ի վեր Կետշերի ցասումն ու ողորմածությունը, ծիծաղն ու ճիչը հնչում են մեր բոլոր հասակներում, մեր կյանքի բոլոր արկածներում։

Վադիմին հանդիպելը նոր տարերք մտցրեց մեր զապորոժյան ընկերության մեջ։

Մենք առաջվա նման ավելի շատ Օգարյովի մոտ էինք հավաքվում։ Նրա հիվանդ հայրը տեղափոխվել էր Պենզայի իր կալվածքը։ Օգարյովն ապրում էր մենակ, Նիկիտյան դարպասների մոտի իրենց տան ներքևի հարկում։ Նրա բնակարանը մոտ էր համալսարանին և բոլորիս շատ էր ձգում։ Օգարյովն ուներ այն մագնիսական ձգողականությունը, որը բյուրեղացման առաջին սլաքն է ստեղծում խառն իրար հանդիպող ատոմների ամեն մի զանգվածում, եթե, իհարկե, դրանց միջև առկա է ազգակցությունը։ Ո՛ւր էլ որ նետված լինեն՝ դրանք աննկատ դառնում են օրգանիզմի սիրտը։

Բայց նրա լուսավոր, ուրախ, ոսկեշերտ կարմիր պատառով պատած սենյակի կողքին, որտեղ միշտ նստած էր սիգարի ծուխը, փունջի և ուրիշ... ուզում էի ասել՝ ուտելիքների ու ըմպելիքների բուրմունքով, բայց կանգ առա, քանզի պանրից բացի այլ ուտելեղեն հազվադեպ էր լինում,— այսպես ուրեմն՝ Օգարյովի գերուսանողական ապաստանի կողքին, որտեղ մենք մինչև լույս վիճում էինք, իսկ երբեմն էլ ողջ գիշեր քեֆ անում, մեզ համար գնալով ավելի սիրելի էր դառնում ուրիշ մի տուն, որտեղ մենք երևի առաջին անգամ սովորեցինք հարգել ընտանեկան կյանքը։

Վադիմը հաճախ էր լքում մեր զրույցները և գնում իրենց տուն. նա տխրում էր, երբ երկար չէր տեսնում քույրերին ու մորը։

Մեզ՝ ամբողջ հոգով ընկերականությամբ տարվածներիս համար տարօրինակ էր, թե նա ինչպես էր կարողանում իր ընտանիքը գերադասել մերինից։

Նա մեզ ծանոթացրեց իրենց ընտանիքի հետ։ Այստեղ ամեն բան կրում էր ցարական այցելության հետքերը. այդ ընտանիքը երեկ էր եկել Սիբիրից, սնանկացած էր, տանջված և միաժամանակ համակված այն վեհությամբ, որ դժբախտությունը դրոշմում է ոչ թե յուրաքանչյուր տառապյալի վրա, այլ նրա՞նց ճակատին, ովքեր կարողանում էին դիմանալ։

Նրանց հայրը ձերբակալվել էր Պավելի օրոք, ինչ-որ քաղաքական մատնության հետևանքով, նետվել էր Շլյուսելբուրգ և ապա աքսորվել Սիբիր՝ բնակության։ Ալեքսանդրը վերադարձրեց իր անմիտ հոր հազարավոր աքսորյալներին, բայց Պասեկը մոռացված էր։ Նա ազգականն էր այն Պասեկի, որ մասնակցել էր Պյոտր III-ի սպանությանը, ապա գեներալ-նահանգապետ եղել լեհական գավառներում, և կարող էր պահանջել արդեն ուրիշների ձեռքն անցած ժառանգության իր բաժինը. հենց այդ ուրիշ ձեռքերն էլ պահում էին նրան Սիբիրում։

Շլյուսելբուրգում եղած ժամանակ Պասեկն ամուսնացավ տեղական կայազորի սպաներից մեկի դստեր հետ։ Օրիորդը գիտեր, որ վերջը վատ կլինի, բայց չընկրկեց աքսորի սարսափի առաջ։ Սկզբում Սիբիրում նրանք մի կերպ յոլա էին գնում՝ ծախելով վերջին իրերը, բայց ահավոր աղքատությունն անդիմադրելի ուժով աճում էր, և այնքան ավելի արագ՝ որքան մեծանում էր ընտանիքը։ Կարիքի մեջ ու տրքա-

նանքի, տաք հագուստից, իսկ երբեմն էլ հանապազօրյա հացից զուրկ՝ նրանք կարողանում էին շահել-պահել կորյունների մի ողջ ընտանիք. հայրը նրանց փոխանցեց անսանձ ու հպարտ իր ոգին, իր հանդեպ ունեցած հավատը, մեծ դժբախտությունների գաղտնիքը, նա դաստիարակում էր նրանց ի՛ր օրինակով, մայրը՝ անձնուրացությամբ ու գառն արցունքով։ Քույրերը չէին զիջում եղբայրներին հերոսական հաստատակամությամբ։ Եվ ինչո՞ւ վախենալ բառերից՝ դա հերոսնե՛ր ընտանիք էր։ Թե ի՛նչ են քաշել նրանք մեկը մյուսի համար, թե ի՛նչ են արել հանուն ընտանիքի՝ անհավատալի է, և միշտ՝ գլուխը վեր պահած, բոլորովին չընկճվելով։

Ժամանակ եղավ, որ Սիբիրում երեք քույրերով մի զույգ կոշիկ ունեին. նրանք կոշիկները խնայում-պահում էին զբոսանքի համար, որ կողմնակի մարդիկ չնկատեն ծայրահեղ աղքատությունը։

1826 թվականի սկզբին Պասեկին թույլատրվեց վերադառնալ Ռուսաստան։ Զմեռ էր. առանց մուշտակի, առանց դրամի այդպիսի ընտանիքով Տոբոլսկի գավառից դուրս գալը հանաք բան չէր, բայց մյուս կողմից էլ սիրտը դուրս էր թռչում. աքսորը ամենից շատ անտանելի է դառնում վերջանալուց հետո։ Մեր տառապյալները մի կերպ ճամփա ելան. գեղջուկ ծծմայրը, որ մոր հիվանդության ժամանակ կերակրել էր երեխաներից մեկին, ճանապարհածախսի համար նրանց տվեց հազիվ հավաքած իր փողը, խնդրելով միայն, որ իրեն էլ հետները վերցնեն. կառապանները չնչին վարձով կամ ձրի նրանց հասցրին ռուսական սահմանը. ընտանիքի մի մասը ոտքով էր գնում, մյուսները՝ սայլով, շահելները փոխնփոխ էին նստում. այդպես կտրեցին-անցան ձմեռվա ձիգ ճանապարհը՝ Ուրալյան լեռնաշղթայից մինչև Մոսկվա։ Մոսկվան ջահելների երազանքն էր, նրանց հույսը։ բայց այնտեղ նրանց սպասում էր սովը։

Կառավարությունը, ներելով Պասեկներին՝ միտք էլ չուներ վերադարձնելու նրանց ունեցվածքի որևէ մասը։ Ուժերի լարումից ու զրկանքներից մաշված՝ ծերունին անկողին ընկավ. վաղն ի՛նչ են ուտելու՝ չգիտեին։

Այդ ժամանակ Նիկոլայը տոնում էր թագադրությունը.



խրախճանքները հաջորդում էին մեկը մյուսին, Մոսկվան նման էր ճոռոմ զարդարված պարասրահի. ամենուրեք՝ հրավառություն, զարդավահաններ, տոնականություն... Երկու մեծ քույրերը, ոչ մեկի հետ չխորհրդակցելով, խնդրագիր են գրում Նիկոլային, պատմում ընտանիքի վիճակը, խնդրում են գործը վերանայել ու վերադարձնել ունեցվածքը։ Առվոտյան նրանք թաքուն տնից դուրս են գալիս, գնում են Կրեմլ, մի կերպ առաջ են անցնում և սպասում «թագադրյալ ու փառաբանյալ» ցարին։ Երբ Նիկոլայը իջնում էր Կարմիր սանդղամուտքից, երկու աղջիկները կամացուկ առաջ եկան ու մեկնեցին խնդրագիրը։ Ցարն անցավ՝ ձևացնելով, թե չի նկատում նրանց. մի արքայահամհարգ վերցրեց թուղթը, ոստիկանությունը նրանց տարավ կալանատուն։

Նիկոլայն այդ ժամանակ երեսունին մոտ էր և արդեն ընդունակ էր այդպիսի անգթության։ Այդ սառնությունը, այդ ինքնատիրապետումը հատուկ է շարքային, մանր էակներին, գանձապահներին, կատարածուներին։ Բնավորության այդ աճեցողդողդ պնդությունը ես հաճախ եմ նկատել փոստային առաքիչների, թատրոնի տեղեր, երկաթուղու տոմսեր վաճառողների մեջ, այնպիսի մարդկանց, որոնց անվերջ քաշքշում են ու ամեն րոպե խանգարում. նրանք կարողանում են նայելով մարդուն՝ չտեսնել նրան և կողքը կանգնած՝ լսել նրան։ Իսկ այդ ինքնակալ առաքիչը որտեղի՞ց էր սովորել չնայել, և ի՞նչ մի մեծ բան էր զորափոխից մի րոպե ուշանալը։

Աղջիկներին մինչև երեկո պահեցին կալանատանը։ Ահաբեկված, վիրավորված՝ նրանք արցունքներով համոզեցին թաղային պրիստավին՝ տուն թողնել իրենց, որտեղ նրանց բացակայությունը պիտի իրարանցում առաջացրած լիներ ամբողջ ընտանիքում։ Խնդրագիրը այդպես էլ մնաց թղթի վրա։

Հայրը այլևս չդիմացավ, հոգին դուրս էր եկել, նա մեռավ։ Երեխաները մենակ մնացին մոր հետ, մի կերպ յոլա գնալով ապրում էին։ Ինչքան մեծ էր կարիքը՝ այնքան շատ էին աշխատում որդիները. երեքը փայլուն ավարտեցին հանրակրթական դասընթացն ու դարձան՝ թեկնածուներ։ Ավագները գնացին Պետերբուրգ, երկուսն էլ գերազանց մա-

Թեմատիկոս էին, ծառայելուց բացի (մեկը՝ նավատորմում, մյուսը՝ որպես ինժեներ), նրանք դասեր էին տալիս և, ամեն ինչից զուրկ պահելով իրենց՝ վաստակածն ուղարկում էին ընտանիքին։

Աչքիս առաջն է մուգ կապտով[1] ու ճերմակ շորագլխարկով պառավ մայրը. նրա նիհար, գունատ դեմքը ծածկված էր խորշոմներով, նա իր տարիքից մեծ էր երևում. միայն աչքերն էին առաջվանը. այնքա՜ն հեզություն, սեր, հոգս, անցած օրերի այնքա՜ն արցունքներ կային այդ աչքերի մեջ։ Նա սիրահարված՝ էր իր երեխաներին, նրանցով էր նա հարուստ, անվանի, ջահել... Նա ընթերցում ու վերընթերցում էր մեզ նրանց նամակները, և ի՜նչ սրբազան, խորին զգացմունքով էր խոսում նրանց մասին իր նվաղ ձայնով, որը երբեմն փոխվում էր ու դողդողում՝ զսպվող արցունքներից։

Երբ նրանք բոլորով հավաքված էին լինում Մոսկվայում և նստում էին իրենց հասարակ ճաշի սեղանի շուրջ՝ պառավը երջանկությունից իրեն կորցնում էր, պտտվում սեղանի շրջբոլորը, ձեռ ու ոտ ընկնում և, հանկարծ կանգ առնելով, ի՜նչ հպարտությամբ էր նայում իր ջահելներին, ի՜նչ երջանկությամբ, և ապա հայացքն ինձ էր դարձնում՝ կարծես հարցնելով. «Ինչ լա՜վն են նրանք, չէ՞»։ Ո՞նց էի ուզում այդ պահերին նրա վզովն ընկնել, համբուրել նրա ձեռքը։ Ըստ որում, նրանք բոլորը արտաքինով էլ իսկապես շատ գեղեցիկ էին։

Նա երջանիկ էր այն օրերին... Ինչո՞ւ նա չմեռավ այդ ճաշկերույթներից մեկի ժամանակ։

Երկու տարվա մեջ նա զրկվեց երեք ավագ որդիներից։ Մեկը մեռավ փայլուն մահով, թշնամու մեջ անուն հանած, հազթանակներ ու փառք վաստակած, թեև կյանքը տվեց ոչ հանուն իր նպատակի։ Երիտասարդ գեներալ՝ էր նա, որ սպանվեց չերքեզների ձեռքով Դարգոյի մոտ։ Գափնեպսակները մոր սիրտը չե՞ն ապաքինում... Մյուսներին կարգին զոհվել անգամ չվիճակվեց. ռուսական ծանր կյանքը սեղմեց, սեղմեց նրանց՝ մինչև որ չարդեց կուրծքը։

[1] կանացի անային զգեստ։



Խե՜ղճ մայր։ Եվ խե՜ղճ Ռուսաստան։

Վադիմը վախճանվեց 1843 թվականի փետրվարին. ես ներկա էի նրա մահվանը և առաջին անգամ էի տեսնում մոտիկ մարդու մահը, ըստ որում՝ իր ողջ անողոք սարսափով, ողջ անմիտ պատահականությամբ, բութ, անբարոյական իր ողջ անարդարությամբ։

Մահվանից տասը տարի առաջ Վադիմն ամուսնացավ իմ զարմուհու հետ, և ես էլ խաչեղբայրն էի։ Ընտանեկան կյանքն ու կենցաղի փոփոխությունը մեզ մի փոքր հեռացրին։ Նա երջանիկ էր իր à parte[1], բայց նրան չէր հաջողվում կյանքի արտաքին կողմը, նրա ձեռնարկումները գլուխ չէին գալիս։ Մեր ձերբակալությունից քիչ առաջ մեկնեց Խարկով, որտեղ նրան ամբիոն էին խոստացել համալսարանում։ Թեև գնալը փրկեց նրան բանտից, բայց նրա անունը չվրիպեց ոստիկանական ականջներից։ Վադիմին մերժեցին։ Հոգաբարձուի օգնականը խոստովանել էր, որ իրենք ստացել են մի գրություն, որով արգելվում էր նրան ամբիոն տալ՝ ոճրամիտ մարդկանց հետ ունեցած կապերի համար, որոնք հայտնի էին կառավարությանը։

Վադիմը մնաց առանց պաշտոնի, այսինքն՝ առանց հացի. այս էլ նրա՝ Վյատկան էր։

Մեզ հետ հաղորդակցվելը վտանգավոր էր։ Նրա համար սկսվեցին կարիքի սև տարիները. ապրուստի խղճուկ միջոցներ հայթայթելու յոթնամյա պայքարը, կոպիտ ու բիրտ մարդկանց հետ վերավորական ընդհարումները, ընկերներից հեռու, նրանց հետ խոսք փոխանակելուց զրկված լինելը մաշեցին նրա առողջ մկանները։

— Մի անգամ,— հետագայում պատմում էր ինձ նրա կինը,— մեր ողջ դրամը, մինչև վերջին կոպեկը, վերջացավ. նախորդ օրը ես ջանացի որևէ տեղից մի տասը ռուբլի հավաքել, բան չստացվեց. ումից որ հնարավոր էր մի քիչ փոխառնել՝ արդեն ուզել էի։ Խանութներում հրաժարվում էին առանց կանխիկ վճարի մթերք տալուց. մեր մտածմունքն այն էր միայն, թե երեխաները վաղն ի՞նչ են ուտելու։ Տխուր նստել էր Վադիմը պատուհանի առաջ, հետո վեր կացավ,

[1] Այստեղ՝ ընտանեկան կյանքում իմաստով (ֆրանս.)։

գլխարկն առավ ու ասաց, որ ուզում է մի քիչ թափառել։ Ես տեսնում էի, որ նա շատ ծանր վիճակի մեջ է, ես սարսափած էի, բայց և ուրախացա, որ նա մի քիչ կցրվի։ Երբ գնաց՝ ես նետվեցի անկողնու վրա ու դառն-դառն լաց եղա, հետո սկսեցի մտածել, թե ի՛նչ անեմ. քիչ թե շատ արժեքավոր բոլոր իրերը՝ մատանիներ, գդալներ, վաղուց գրավ էին դրված. ես մի՛ ելք էի տեսնում՝ ստիպված էի գնալ մեռոնց մոտ և հայցել նրանց ճնշող, դժկամ օգնությունը։ Այնինչ Վադիմը աննպատակ թափառել էր փողոցներում ու այդպես հասել Պետրովսկու բուլվարը։ Շիրյաևի խանութի մոտ մտքովն անցել էր հարցնել, թե սա չի՞ վաճառել արդյոք իր գրքից՝ թեկուզ մեկ օրինակ. դրանից մի հինգ օր առաջ նա եղել էր այդտեղ, բայց՝ ապարդյուն. վախը սրրտում մտել էր խանութ։ «Շատ ուրախ եմ ձեզ տեսնելուս,— ասում է նրան Շիրյաևը,— Պետերբուրգի աշխատակցից նամակ է եկել. ձեր գրքերից երեք հարյուր ռուբլու վաճառել է, ուզո՞ւմ եք դրամն ստանալ»։ Եվ Շիրյաևը հաշվում-տալիս է նրան տասնհինգ ոսկի։ Վադիմը երջանկությունից կորցնում է գլուխը, նետվում պատահած պանդոկը՝ սննդամթերք առնելու, գնում է մի շիշ գինի, մրգեղեն ու կառք նստելով հանդիսավոր սլանում տուն։ Այդ ժամանակ ջրով ես շատացնում էի արգանակի մնացորդը երեխաների համար և մտածում էի մի քիչ էլ նրան պահել, հավատացնելով, թե ինքս արդեն կերել եմ, երբ մեկ էլ նա ներս է մտնում՝ տոպրակն ու շիշը ձեռքին, ուրախ ու երջանիկ՝ ինչպես առաջներում։

Եվ կինը հեկեկում էր ու այլևս ոչ մի բառ չէր կարողանում ասել։

Աքսորից հետո ես նրան թուղթիկ հանդիպեցի Պետերբուրգում և տեսա, որ շատ է փոխվել։ Իր համոզմունքները նա պահպանել էր, բայց պահպանել էր այնպես, ինչպես մարտիկը ձեռքից բաց չի թողնում թուրը՝ զգալով, որ մահացու վիրավոր է։ Նա մտախոհ էր, հյուծված ու դառնությամբ էր նայում ապագային։ Այդ վիճակում գտա ես նրան Մոսկվայում 1842 թվականին. նրա պայմանները որոշ չափով բարելավվել էին, նրա աշխատություններն արժանացել էին գնահատության, բայց այդ ամենը ուշ եկավ. դա Պոլիժաևի ծոպերիզավոր ուսադիրն* էր, Կոլրեյֆի* ներումը՝



շնորհված ոչ թե ռուսական ցարի, այլ ռուսական կյանքի կողմից։

Վադիմը հալչում էր, թոքախտն ի հայտ եկավ 1842 թվականի աշնանը. ահավո՞ր հիվանդություն, որն ինձ վիճակվեց տեսնել ես մի անգամ։

Նրա մահվանից մի ամիս առաջ ես սարսափով սկսեցի նկատել, որ մտավոր կարողությունները խամրում են, նվազում, ինչպես սպառվող մոմը, սենյակը գնալով դառնում էր ավելի մռայլ, ավելի տագնապալից։ Շուտով նա սկսեց դժվարությամբ ու ճիգ գործադրելով բառեր գտնել իր կրցկուր խոսքի համար, կարևորություն տալով դրանց արտաքին համահնչունությանը, հետո համարյա չէր խոսում, այլ սոսկ իր դեղերն էր ուզում. խմելու ժամանակը չէ՞, արդյոք։

Փետրվարյան մի գիշեր, ժամը երեքին մոտ, Վադիմի կինը մարդ ուղարկեց ինձ կանչելու. հիվանդի վիճակը ծանր էր, նա ինձ էր հարցրել. ես մոտեցա ու անխոս բռնեցի ձեռքը. կինը տվեց իմ անունը, նա հոգնած հայացքով երկար նայեց, չճանաչեց ու փակեց աչքերը։ Մոտ բերին երեխաներին, նայեց նրանց, բայց, կարծես, դարձյալ չճանաչեց։ Տնքոցը գնալով ծանրանում էր, մի քանի րոպե հանդարտվում էր, ու հանկարծ բարձրաձայն հոգոց քաշում. այդ պահին հնչեցրին մոտակա եկեղեցու զանգերը. Վադիմն ականջ դրեց ու ասաց. «Առավոտյան ժամերգությունն է»։ Այլևս ոչ մի խոսք չասաց... Կինը ծնկաչոք հեկեկում էր հանգուցյալի մահճի առաջ. վերջին ժամանակներս նրան խնամող բարի, հաճելի երիտասարդը, համալսարանական ընկերներից, իրար խառնվեց. մի կողմ էր տանում դեղոր-յաքի սեղանը, վեր էր քաշում վարագույրները... Ես դուրս եկա, բակում սառնամանիք էր, ջինջ ու պայծառ, ծագող արեգակը շլացուցիչ շողշողում էր ձյան վրա, ասես, իրոք, մի լավ բան էր տեղի ունեցել. ես գնացի դագաղ պատվիրելու։

Երբ վերադարձա, փոքրիկ տան մեջ մեռելային լություն էր, հանգուցյալը, ըստ ռուսական սովորության, պառկած էր դահլիճում դրված սեղանին, քիչ հեռու նստած էր նկարիչ Ռաբուսը, նրա բարեկամը, և մատիտով, արցունքների

միջից, քաշում էր նրա պատկերը. Հանգուցյալի կողքին, ձեռքերը ծալած, անհուն տխրությունը դեմքին՝ կանգնած էր բարձրահասակ մի կին. ոչ մի արվեստագետ չէր կարողանա քանդակել այդպիսի ազնիվ ու խոր «Վիշտ»։ Երիտասարդ չէր այդ կինը, բայց դասական, վսեմ գեղեցկության հետքերը պահպանվել էին. կզաքիսի մորթուց երկար սև թավշյա պատմուճանով փաթաթված՝ նա կանգնած էր անշարժ։

Ես կանգ առա դռան մեջ։

Անցավ երկու-երեք րոպե, նույն լռությունն էր, բայց հանկարծ նա խոնարհվեց, ամուր համբուրեց հանգուցյալի ճակատը և «Մնաս բարո՜վ, մնաս բարո՜վ, Վադի՛մ, բարեկա՛մս» ասելով՝ հաստատ քայլքով գնաց ներսի սենյակը։ Ռաբուսը շարունակում էր նկարել, նա գլխով արեց ինձ, մենք սիրտ չունեինք խոսելու, ես լուռ նստեցի պատուհանի տակ։

Այդ կինը դեկտեմբերի 14-ի համար աքսորված կոմս Զախար Չերնիշևի քույրն էր՝ Ե. Չերտկովան։

Սիմոնավանքի վարդապետ Մելքիսեդեկն ինքը տեղ առաջարկեց իր մոտ։ Մելքիսեդեկը մի ժամանակ հասարակ հյուսն էր եղել ու մոլեռանդ աղանդավոր, հետո ուղղափառություն էր ընդունել, դարձել ճգնավոր, վանահայր ու, ի վերջո՝ վարդապետ։ Բայց դրանով հանդերձ նա հյուսն էլ մնացել էր, այսինքն՝ ո՛չ սիրտն էր կորցրել, ո՛չ լայն թիկունքը, ո՛չ էլ դեմքի առողջ կարմրությունը։ Նա ճանաչում էր Վադիմին և հարգում Մոսկվային նվիրված նրա պատմական հետազոտությունների համար։

Երբ հանգուցյալի դին հայտնվեց վանքի առաջ, դարպասը բացվեց, և Մելքիսեդեկը բոլոր վանականների հետ դուրս եկավ՝ մեզ, թախծալի երգեցողությամբ տառապյալի անշուք դագաղը դիմավորելու և հուղարկելու ի գերեզման։ Վադիմի հողաթմբից քիչ այն կողմ հանգչում է մեզ համար թանկ այլ մի աճյուն՝ Վենևիտինովի* աճյունը՝ այս մակագրությամբ. «Ինչպե՜ս գիտեր նա կյանքը և ինչքա՜ն քիչ ապրեց»։ Վադի՛մն էլ շատ գիտեր կյանքը։

Ճակատագրի համար ա՛յդ էլ էր քիչ։ Ինչո՞ւ, իսկապես, այդքան երկա՜ր ապրեց ծեր մայրը։ Տեսել էր աքսորի վերջը, տեսել էր իր զավակներին՝ երիտասարդական ողջ գեղեցկությամբ, տաղանդի ամբողջ փայլով տոգորված. էլ ինչի՞ն էր պետք էլի՛ ապրել։ Ով թանկ է գնահատում երջանկությունը՝ նա պիտի ցանկա կանխահաս մահը։ Տևական երջանկություն նույնպես չկա, ինչպես որ չկա չհալչող սառույց։

Վադիմի ավագ եղբայրը մեռավ Դիոմիդի սպանվելուց մի քանի ամիս անց, նա մրսեց, աչքաթող արեց հիվանդությունը, և հյուծված օրգանիզմը չդիմացավ։ Հազիվ քառասուն տարեկան լիներ, մինչդեռ նա ավա՜գն էր։

Այս երեք դագաղները, դագաղները մեր երեք ընկերների, երկար ու ձիգ սև ստվերներ են գցում իրենց ետևից. պատանեկության վերջին ամիսները երևում են հուղարկավորության սգո ժապավենների ու բուրվառների ծխի միջից...

Անցավ շուրջ մեկ տարի, ձերբակալված ընկերների գործն ավարտվեց։ Նրանց մեղադրեցին (ինչպես որ հետագայում՝ մեզ, ապա՝ պետրաշևականներին*) գաղտնի ընկերություն կազմելու մտադրության, հանցապարտ զրույցների մեջ. դրա համար նրանց զինվոր էին դարձնում, ուղարկում Օրենբուրգ։

Դատապարտյալներից մեկին՝ Սունգուրովին Նիկոլայն առանձնացրեց։ Նա արդեն ավարտել էր դասընթացն ու ծառայում էր, ամուսնացած էր և ուներ երեխաներ. նրան դատապարտեցին ունեզրկման և աքսորի՝ Սիբիր։

«Ի՞նչ կարող էին անել մի քանի երիտասարդ ուսանողներ։ Նրանք իզո՞ւր կործանեցին իրենց»։ Այս ամենը հիմնավոր է, և այդ կերպ դատող մարդիկ գոհ պիտի լինեն մեզ հաջորդող ռուս պատանեկության ողջամտությունից։ Սունգուրովյանին հաջորդած մեր պատմությունից հետո մինչև պետրաշևյան պատմությունը խաղաղ անցավ տասնհինգ տարի, հենց այն տասնհինգ տարիները, որոնցից հազիվ սկսում է ապաքինվել Ռուսաստանը, և որոնք խորտակեցին երկու սերունդ՝ հինը, որ կորավ-գնաց մոլեգնության մեջ և մանկությունից թունավորված մատաղ սերունդը, որի ճլորած ներկայացուցիչներին մենք այժմ տեսնում ենք։

Դեկաբրիստներից հետո միություններ հիմնելու բոլոր փորձերն իրո՛ք չէին հաջողվում. ուժերի աղքատություն, նպատակների անորոշությունը թելադրում էին մի այլ՝ նախ-

նական, ներքին աշխատանքի անհրաժեշտություն։ Այդ բոլորն այդպե՛ս է։

Բայց ի՞նչ երիտասարդություն կլիներ այն երիտասարդությունը, որը կկարողանար, սպասելով տեսական լուծումների, հանգիստ նայել իր շուրջը տեղի ունեցածին, վլադիմիրյան ճանապարհին իրենց շղթաները զրնգացնող հարյուրավոր լեհերին, ճորտատիրական կացությանը, ինչ-որ գիներալ Լաշկևիչի կողմից Խոդինի դաշտում ճիպոտահարվող գինվորներին, անհայտ կորչող ուսանող ընկերներին։ Ի բարոյական մաքրումն սերնդի, ի երաշխիք ապագայի՝ նրանք պիտի վրդովվեին այնքան, որ հասնեին խելահեղ քայլերի, որ արհամարհեին վտանգը։ 16—17 տարեկան տղաներին տրված վայրագ պատիժները ահեղ դաս էին և յուրատեսակ կոփվածք. յուրաքանչյուրի վրա կախված անհոգի գազանային թաթը նախօրոք բացառում էր երիտասարդության հանդեպ ներողամտության վարդագույն հույսերը։ Լիբերալությամբ կատակելը վտանգավոր էր, դավադրություն խաղալ ոչ մեկի մտքով չէր անցնում։ Լեհաստանի համար վատ թաքցրած մի կաթիլ արցունքի դիմաց, համարձակ ասված մի խոսքի դիմաց՝ տարիների աքսոր, գինվորի գոտի, իսկ երբեմն էլ՝ զնդան. դրա համար էլ կարևոր է, որ բառերն այդ ասվում էին և արցունքներն այդ թափվում էին։ Զոհվում էին երբեմն ջահելները, բայց նրանք զոհվում էին ոչ միայն չխանգարելով ռուսական կյանքի սֆինքսային առեղծվածն իր համար պարզող մտքի աշխատանքը, այլև արդարացնելով կյանքի հույսերը։

Այժմ հերթը մերն էր։ Մեր անուններն արդեն մտցված էին գազետի ոստիկանության ցուցակների մեջ։ Երկնագույն կամվի առաջին խաղը մկան հետ սկսվեց այսպես։

Երբ դատապարտված երիտասարդներին խումբ-խումբ, տարով, առանց բավարար տաք հագուստի Օրենբուրգ էին ուղարկում, Օգարյովը՝ մեր, և Ի. Կիրեևսկին՝ իր շրջանում հանգանակություն կատարեցին։ Բոլոր դատապարտվածներն էլ տեփող էին։ Կիրեևսկին հավաքված դրամը բերեց տվեց պարեստ Ստասլին՝ այդ բարի ծերուկին, որի մասին մենք գեռ էլի կխոսենք։ Ստասլը խոստացավ փողը հանձնել և Կիրեևսկուն հարցրեց.



— Իսկ սրա՞նք ինչ թղթեր են։

— Նվիրատուների անուններն են և գումարի հաշիվը,— ասաց Կիրեևսկին։

— Դուք հավատո՞ւմ եք, որ ես փողը կհանձնեմ,— հարցրեց ծերունին։

— Ի՞նչ խոսք։

— Իսկ ես կարծում եմ, որ փողը ձեզ հանձնողներն էլ ձեզ են հավատում, ուրեմն էլ ինչների՞ս է պետք պահպանել նրանց անունները։— Այս ասելով՝ Ստասլը ցուցակը նետեց կրակի մեջ և, ինքնին հասկանալի է, հոյակա՛պ վարվեց։

Օգարյովն ինքը դրամը տարավ զորանոցները, և գործն հաջող անցավ։ Բայց ջահելների խելքին փչեց Օրենբուրգից շնորհակալություն հայտնել ընկերներին և, օգտվելով ոմն պաշտոնյայի Մոսկվա մեկնելու առիթից, խնդրեցին նրան հետը տանել նամակը, որը վախենում էին վստահել փոստին։ Աշտոնյան չհապաղեց օգտվելու նման հազվադեպ առիթից՝ հավաստելու համար հավատարիմ հպատակի իր բուռն զգացմունքները և նամակը Մոսկվայում հանձնեց ժանդարմերիայի օկրուգային գեներալին։

Այդ ժամանակ Ա. Ա. Վոլկովին, որը խելքը թոցրել էր այն պատրանքից, թե լեհերն ուզում են իրեն մատուցել լեհական թագը (ինչպիսի՞ հեգնանք՝ ժանդարմական գիներալին խելագարացնե՞լ Յագելոնների* թագով), փոխարինել էր Լեսովսկին։ Լեսովսկին ինքը լեհ էր և չար ու վատ մարդ չէր. թղթախաղով ու ինչ-որ ֆրանսիացի դերասանուհու պատճառով քոռ ու փուչ անելով իր ունեցվածքը, նա Մոսկվայում ժանդարմական գեներալի տեղին փիլիսոփայորեն գերադասեց նույն քաղաքի պարտափոսը։

Լեսովսկին կանչեց Օգարյովին, Կետչերին, Սատինին, Վադիմին, Ի. Օբոլենսկուն և այլոց ու նրանց մեղադրեց պետական հանցագործների հետ կապ ունենալու մեջ։ Օգարյովի այն առարկումին, թե ինքը ոչ ոքի նամակ չի գրել, իսկ եթե որևէ մեկը գրել է իրեն, ապա դրա համար ինքը պատասխան տալ չի կարող, մանավանդ որ՝ ինքը ոչ մի նամակ էլ չի ստացել, Լեսովսկին պատասխանեց.

— Դուք նրանց համար հանգանակություն եք արել, դա

ավելի՛ վատ է: Այս առաջին անգամը թագավորն այնքան զղջված է, որ ձեզ ներում է, միայն թե, պարոնա՛յք, նախազգուշացնում եմ, ձեզ վրա խիստ հսկողություն կլինի, զգո՛ւյշ եղեք։

Լեսովսկին նշանակալից նայեց բոլորին և, կանգ առնելով Կետչերի վրա, որը ամենքից բարձրահասակն ու տարիքովն էր ու սպառնալից վեր էր քաշում հոնքերը, ավելացրեց.

— Իսկ դուք, ողորմա՛ծ տեր, ձեր կոչումով հանդերձ՝ ինչպե՞ս չեք ամաչում։

Կարելի էր կարծել, թե Կետչերն այդ ժամանակ ռուսական աղանդների փոխկանցլերն էր, մինչդեռ նա սոսկ գավառական բուժակի պաշտոն ուներ։

Ես կանչված չէի, հավանաբար իմ անունը նամակում չկար։

Այդ սպառնալիքը մի պատիվ էր, ձեռնադրում, հզոր խթան։ Լեսովսկու խորհուրդը կրակի վրա յուղ ածեց, և մենք, ասես դյուրացնելով ոստիկանության գալիք հսկողությունը, դրեցինք թավշյա բերետներս á la Karl Sand* ու միևնույն տեսակի եռագույն շարֆ* կապեցինք։

Գնդապետ Շուբինսկին, որ սուսիկ ու մեղմորեն, թավշյա ներբաններով բարձրանում էր բռնելու Լեսովսկու տեղը, ամուր կառչեց մեր հանդեպ նրա ցուցաբերած թույլությունից. մենք պաշտոնի մեջ գնդապետի վերընթացի աստիճաններից մեկը պիտի դառնայինք, և դարձանք։

Բայց նախ մի քանի խոսք ավելացնեմ Սունգուրովի և նրա ընկերների ճակատագրի մասին։

Կոլրեյֆին Նիկոլայը տասը տարի հետո վերադարձրեց Օրենբուրգից, որտեղ կանգնած էր նրա գունդը։ Նիկոլայը նրան ներեց թոքախտի համար, ինչպես որ թոքախտի համար սպա դարձրեց Պոլեժաևին, իսկ Բեստուժևին* խալ տվեց՝ մանվան համար։ Կոլրեյֆը վերադարձավ Մոսկվա ու հանգավ վշտաբեկ հոր ծերացած ձեռքերի վրա։

Կոստենեցկին իբրև շարքային զինվոր աչքի ընկավ Կովկասում ու սպայի աստիճան ստացավ, Անեռոնովիչը՝ նույնպես։

Անհամեմատ ավելի սոսկալի է դժբախտ Սունգուրովի



ճակատագիրը։ Վորոբյովյան լեռներում գտնված առաջին կալանավայրը հասնելուց հետո Սունգուրովը աքսորյալներով լեփ-լեցուն հեղձուցիչ խրճիթից թարմ օդ դուրս գալու թույլտվություն խնդրեց սպայից։ Սպան, քանին մոտ մի երիտասարդ, հետը դուրս եկավ քայլելու։ Սունգուրովը, ընտրելով հարմար պահը, թեքվեց ճանապարհից ու անհետացավ։ Հավանաբար նա շատ լավ ծանոթ էր տեղանքին, նրան հաջողվեց փախչել սպայից, բայց հաջորդ օրը ոստիկանները հետքը գտան։ Երբ Սունգուրովը տեսավ, որ փրկություն չկա՝ կտրեց իր կոկորդը։ Ոստիկանները բերեցին նրան Մոսկվա՝ գիտակցությունը կորցրած ու արնաքամ։

Խեղճ սպային զինվոր դարձրին։

Սունգուրովը չմեռավ։ Նրան նորից դատեցին, բայց արդեն ոչ թե որպես քաղաքական հանցագործ, այլ իբրև փախստական աքսորյալ. նրա գլխի կեսը խուզեցին. ինքնատիպ և հավանորեն թաթարներից ժառանգված մի միջոց, որ գործածվում է փախուստները կանխելու նպատակով և ավելի շատ, քան մարմնական պատիժները՝ ցույց է տալիս մարդկային արժանապատվության հանդեպ ռուսական օրենսդրության արհամարհանքի ողջ չափը։ Այս արտաքին խայտառակությանը դատավճիռը հավելեց մտրակի մեկ հարված՝ բերդի պատերից ներս։ Ի կատար ածվե՞ց, արդյոք, չգիտեմ։ Դրանից հետո Սունգուրովին ուղարկեցին Ներչինսկ, հանքերը։

Նրա անունը մի անգամ էլ հնչեց իմ ականջին ու հետո լրիվ կորավ։

Վյատկայում մի անգամ փոքրացում հանդիպեցի երիտասարդ մի բժշկի, համալսարանական ընկերոջս, որը գործարանների կողմն էր գնում։ Սկսեցինք խոսել անցածգնացած ժամանակներից, ընդհանուր ծանոթներից։

— Աստվա՛ծ իմ,— ասաց բժիշկը,— գիտե՞ք, թե ում տեսա, երբ այստեղ էի գալիս։ Նիժգորոդի նահանգում նստած եմ փոստային կայարանում և ձիերի եմ սպասում։ Շատ վատ եղանակ է։ Ներս է մտնում պահակախմբի սպան, կալանավորների խումբը բերել էր, որ մի քիչ տաքանան։ Մենք սկսեցինք պրուցել. տեղեկանալով, որ ես բժիշկ եմ, նա ինձ խնդրեց գալ կալանավորների հանգրվանատեղը ու

նայել հիվանդ մի աքսորականի՝ ձևանո՞ւմ է, արդյոք, թե իրո՞ք լուրջ հիվանդ է։ Ես գնացի, հասկանալի է, բոլոր դեպքերում կալանավորի հիվանդությունը հաստատելու մտադրությամբ։ Կալանավորների փոքրիկ հանգրվանում մոտ ութսուն շղթայակապ մարդ կար՝ գլուխները խուզած ու անթրաշ, կանայք, երեխաներ. բոլորը ճամփա տվին սպային, և մենք կեղտոտ հատակին, անկյունում, ծղոտի վրա, տեսանք աքսորականի կապայի մեջ փաթաթված մի կերպարանք։

— Ահա՛ հիվանդը,— ասաց սպան։

Ստելու հարկ չկար. դժբախտը ահավոր տենդի մեջ էր. բանտից ու ճանապարհից նիհարած և ուժասպառ, գլխի կեսը խուզած, մորուքավոր՝ նա սարսափելի էր, անիմաստ շարժում էր աչքերն ու անվերջ ջուր խնդրում։

— Ի՞նչ է, ախպե՛ր, վա՞տ ես,— ասացի հիվանդին և դառնալով սպային՝ ավելացրի,— նա չի կարող գնալ։

Հիվանդն աչքերը վրաս հառեց ու շշնջաց. «Այդ դո՞ւք եք»։ Նա տվեց իմ անունը։ «Դուք ինձ չե՞ք ճանաչում»,— ավելացրեց նա այնպիսի մի ձայնով, որը դանակի պես կտրտեց սիրտս։

— Ներեցե՛ք ինձ,— ասացի ես, բռնելով սմքած ու այրվող նրա ձեռքը,— չեմ կարողանում հիշել։

— Ես Սունգուրովն եմ,— պատասխանեց նա։

— Խե՜ղճ Սունգուրով,— կրկնեց բժիշկը՝ գլուխն օրորելով։

— Ի՞նչ եղավ, նրան Թողեցի՞ն,— հարցրի ես։

— Ո՜չ, բայց սայլ հատկացրին։

Այս եղելությունը գրելուց հետո ես իմացա, որ Սունգուրովը մեռել էր Ներ չինսկում։ Նրա սեփականությունը, որ բաղկացած էր երկու հարյուր հիսուն շնչից՝ մերձմոսկովյան Բրոնիցկի գավառում և չորս հարյուր շնչից՝ Նիժգորոդի նահանգի Արզամաս գավառում, գնաց իրեն և իր ընկերներին ճետաֆենության ընթացքում բանտում պահելու-կերակրելու ծախսերը վճարելու վրա։ Նրա ընտանիքն ավերեցին, ըստ որում, սկզբում հոգացին, որ այն համ էլ կրճատվի. Սունգուրովի կինը, երկու երեխաների ճետ, ձերբակալվեց ու



տարվեց ամիս ապրեց Պրեչիստենսկի ոստիկանատանը. Կրծքի երեխան այդտեղ էլ մեռավ։ Թո՛ղ անիծյալ լինի Նիկոլայի թագավորությունը հավիտյանս հավիտենից։ Ամե՛ն։

## ԳԼՈՒԽ VII

Դասընթացի ավարտը։ Շիլլերյան շրջան։ Վաղ պատանեկություն և արտիստական կյանք։ Սեն-Սիմոնիզմը և Ն. Գոլեոյը։

Քանի դեռ մեր գլխին չէր պայթել ամպրոպը, իմ դասընթացը հասավ ավարտին։ Սովորական հոգսերը, անօգուտ մնեմոնիկ[1] տքնանքների անքուն գիշերները, մակերեսային հապճեպ սերտողությունը և քննության մտատանջությունը, որ հաղթում է գիտական հետաքրքրությանը,— այս ամենը նույնն էր։ Ես աստղաբաշխական դիսերտացիա* գրեցի ոսկե մեդալի հույսով և ստացա արծաթե։ Վստահ եմ, որ հիմա չէի կարողանա հասկանալ այն ժամանակվա գրածս և թե ինչն էր, որ արծաթի գին ուներ։

Պատահել է, որ երազումս տեսել եմ, թե ուսանող եմ և քննության եմ գնում. սարսափով մտածում էի՝ ինչքա՜ն բան մոռացել եմ, անպայման կկտրվեմ. ու զարթնում էի, սրտանց ուրախանալով, որ ծովն ու անձնագրերը, տարիներն ու վիզաները բաժանում են ինձ համալսարանից, որ ոչ ոք ինձ չպիտի քննի ու համարձակվի դնել նողկալի մեկ թվանշանը։ Բայց իրականում պրոֆեսորները կզարմանային, որ այդքան տարվա մեջ ես այդքան շատ ետ եմ գնացել։ Մի անգամ այդպիսի բան ինձ հետ արդեն պատահել է[2]։

---

1 մնեմոնիկա (հուն. տերմին)— կանոնների ու եղանակների ամբողջություն, որոնք նպատակ ունեն դյուրացնելու տեղեկությունների, փաստերի մտապահումը արհեստական ասոցիացիաներ ստեղծելու միջոցով։

2 1884 թ. Շչեպկինի տանը հանդիպեցի Պերևոշչիկովին* և ճաշին նրա կողքն էի նստել։ Վերջում նա չդիմացավ ու ասաց.

— Ափսո՜ս, շա՜տ ափսոս, որ հանգամանքները խանգարեցին ձեզ գործով զբաղվելու. դուք հիանալի ընդունակություններ ունեիք։

— Դե հո չե՞ն կարող բոլորն էլ ձեր ետեից երկինք մագլցել,— ասացի ես։— Մենք այստեղ, երկրի վրա, անելու բան կգտնենք։

— Ի՞նչ եք ասում, ինչպե՞ս կարելի է, ի՞նչ մի զբաղմունք է Հեգելի

Վերջին քննությունից հետո պրոֆեսորները փակվեցին միավորները հաշվելու, իսկ մենք, հույսով ու երկյուղով համակված, փոքրիկ խմբերով շրջում էինք միջանցքում ու նախասրահներում։ Երբեմն որևէ մեկը դուրս էր գալիս խորհրդից, մենք վրա էինք ընկնում իմանալու մեր ճակատագիրը, բայց դեռ երկար ժամանակ ոչ մի բան չէր որոշվում. վերջապես դուրս եկավ Գեյմանը։

— Շնորհավորում եմ ձեզ,— ասաց նա ինձ,— դուք թեկնածու եք։

— Է՞լ ավ, է՞լ ավ։

— Այսինչն ու այնինչը։

Ես մեկեն տխրեցի և ուրախացա. համալսարանի գարպասներից ելնելիս զգացի, որ դուրս եմ գալիս ոչ երեկվա պես, ոչ ամեն օրվա նման. ես օտարանում էի համալսարանից, այդ ընդհանուր հայրական նեղից, որտեղ այդպես պատանեկորեն լավ անցկացրի չորս տարի. մյուս կողմից՝ ինձ շոյում էր ճանաչված շափահասության զգացումը և, ինչո՞ւ չխոստովանել, նաև միանգամից ստացած թեկնածուի կոչումը։

Alma mater! Ես այնքան շատ եմ պարտական համալսարանին և դասընթացից հետո այնքան երկար ապրեցի նրա կյանքով, նրա հետ, որ չեմ կարող համալսարանը վերհիշել առանց սիրո ու հարգանքի։ Երախտամորության մեջ նա ինձ չի մեղադրի, համենայն դեպս, համալսարանի հանդեպ երախտագիտությունը դյուրին է, այն անբաժան է սիրուց, հասունացման պայծառ հիշողությունից... Եվ ես ուզո՞ւմ եմ համալսարանը հեռավոր օտարությունից։

Դասընթացն ավարտելուց հետո մեր անցկացրած առաջին տարին հանդիսավոր եզրափակեց վաղ երիտասարդությունը։ Դա բարեկամության, գաղափարների փոխանակության, ոգևորության, մոլեռանդության տևական մի խրախճանք էր...

Դասընթացը հաղթահարած համալսարանական ընկերների փոքր խումբը լցվեց ու դեռևս ապրում էր ընդհանուր համակրանքներով ու ֆանտազիաներով, ոչ ոք չէր մտածում նյութականի, ապագան դասավորելու մասին։ Ես չէի խրախուսի այդ բանը չափահաս մարդկանց մեջ, բայց թանկ եմ գնահատում պատանիների մեջ։ Պատանեկությունը, եթե միայն չի սմքել քաղքենիության բարոյական ապականությունից, ամենուրեք անգործնական է, առավել այդպիսին պիտի լինի նա բազում տենչանքներ ու նվազ նվաճումներ ունեցող երիտասարդ երկրում։ Դրանից բացի, անգործնական լինելը ամենևին էլ խարեության մեջ լինել չի նշանակում. ապագային հայող ամենայն ինչ անպայման իդեալիզմի որոշ բաժին ունի։ Առանց անգործնական բնավորությունների՝ բոլոր գործնականները կանգ կառնեին տաղտկալիորեն կրկնվող միևնույն բանի առաջ։

Խանդավառություն կա, որ ամեն մի բարոյախոսությունից ավելի լավ է պաշտպանում ստույգ անկումներից։ Ես հիշում եմ պատանեկան կերուխումները, երբեմն չափն անցնող անսանձ ազատության պահերը. ես չեմ հիշում մեր շրջանում ոչ մի անբարոյական պատմություն, ոչ մի այնպիսի բան, որի համար մարդ լրջորեն կարմրի, որը ջանա մոռանալ, կոծկել։ Ամեն ինչ արվում էր բացահայտ. բացահայտ հայտ հազվադեպ է արվում վատը։ Մեր սրտի կեսը, կեսից ավելին ձգտում էր ոչ այնտեղ, ուր անհրապատակ կրքոտու-

---

փիլիսոփայությունը. ձեր հոդվածները կարդացել եմ, հասկանալ չի լինում, թոշունի լեզու է։ Դա ի՞նչ գործ է, չէ՞։

Ես երկար ծիծաղում էի այդ դատավճռի վրա, այսինքն՝ երկար ժամանակ չէի հասկանում, որ մեր լեզուն այն օրերին իսկապես էլ շատ վատն էր և եթե թոշունի լեզու էր, ապա, հավանորեն, Մինեռվայի թոշունի՞ (ծանոթ.՝ Ա. Ի. Գերցենի)։

1 Մոսկվայից ինձ ուղարկված թղթերի մեջ գտա մի գրություն, որով այն ժամանակ իշխանուհու հետ գյուղում գտնվող զարմուհուս հայտնում էի դասընթացն ավարտելու մասին։ «Քննությունը վերջացավ, և ես թեկնածու եմ։ Դուք չեք կարող պատկերացնել չբաժանված պարապմունքներին հաջորդած ազատության քաղցր զգացումը։ Հիշո՞ւմ եք դուք, արդյոք, ինձ հինգշաբթի օրը։ Տոթ էր, և ուսանողը սկսեց առավոտվա 9-ից մինչև երեկոյան 9-ը» (1833, հունիսի 26)։ Թվում է, մի երկու ժամ ավելացված է տպավորության կամ էլ կլորացման համար։ Բայց ամբողջ բավականությամբ հանդերձ՝ ինքնասիրությանս կպել էր այն, որ ոսկե մեդալն ուրիշին (Ալեքսանդր Դրաշուսովին) բաժին ընկավ։ Երկրորդ՝ հուլիսի 6-ի նամակում ասված է. «Այսօր հանդիսությունն էր, բայց ես ներկա չէի, չէի ուզում երկրորդը ստանալ մեդալն ստանալիս» (ծանոթ.՝ Ա. Ի. Գերցենի)։

թյունն ու հիվանդոտ եսասիրությունը կենտրոնանում են անմաքուր դիտավորությունների շուրջ և եռապատկում արատները։

Ես մեծ դժբախտություն եմ համարում վիճակը այն ժողովրդի, որի մատաղ սերունդը չունի պատանեկություն. մենք արդեն նկատեցինք, որ սոսկ ջահերությունը բավարար չէ դրա համար։ Գերմանական ուսանողության ամենաալանդակ ժամանակաշրջանը հարյուր անգամ լավ է Ֆրանսիայի և Անգլիայի երիտասարդության քաղքենիական չափահասությունից. ամերիկացի տասնհինգամյա տարեց մարդիկ պարզապես նողկալի են ինձ համար։

Ֆրանսիայում մի ժամանակ կար փայլուն արիստոկրատական, այնուհետև հեղափոխական պատանեկություն։ Բոլոր այդ* Ս.-Ժյուստերն ու Գոշերը, Մարսոներն ու Դեմուլենները, հերոսական երեխաները, որ հասակ էին նետել ժանգակի մռայլ պոեզիայի հողի վրա, իսկական պատանիներ էին։ Հեղափոխությունը կատարել էին երիտասարդ մարդիկ. ոչ Դանտոնը, ոչ Ռոբիսպիերը, ոչ էլ ինքը՝ Լյուդովիկոս XVI-ը չանցան իրենց երեսունհինգը։ Նապոլեոնից սկսած պատանիներից պատրաստում են հանձնակատարներ, ռեստավրացիայից սկսած,— «ծերության հարության» հետ պատանեկությունը բոլորովի՞ն անհամատեղելի է,— ամեն բան չափահաս, գործնական, այսինքն՝ քաղքենիական է դառնում։

Ֆրանսիայի վերջին պատանիները սեն-սիմոնիստներն էին և ֆալանգան*։ Մի քանի բացառությունները չեն կարող փոխել Ֆրանսիական երիտասարդության պրոզաիկ-տափակ բնույթը։ Դեկուն և Լերբան* ինքնասպան եղան, քանզի նրանք պատանի էին ծերերի հասարակության մեջ։ Մյուսները ջրից կեղտոտ ափ նետված ձկան նման թպրտում էին, մինչև որ ոմանք բարիկադ ընկան, ոմանք էլ՝ ճիզվիտական կարգը։

Բայց քանի որ տարիքն իրենն առնում է՝ Ֆրանսիական երիտասարդության մեծ մասը պատանեկության տուրքը տալիս է արտիստական ժամանակով, այսինքն՝ ապրում է, եթե փող չունի՝ աննշան սրճարաններում աննշան սիրուհիների



հետ quartier Latin[1]-ում, և նշանավոր սրճարաններում՝ նշանավոր սիրուհիների հետ՝ եթե փող ունի։ Շիլլերյան շրջանի փոխարեն դա պոլ-դը-կոկի շրջանն է. դրա մեջ հապճեպ ու քավական խղճուկ վատնվում են ուժը, եռանդը, երիտասարդական ամեն բան, և մարդը պատրաստ է առևտրական տների commis-ի[2]։ Արտիստական շրջանը հոգու խորքում թողնում է մի՛ կիրք՝ փողի տենչը, և դրան էլ զոհաբերվում է ապագա ողջ կյանքը, այլ հետաքրքրություններ չկան։ Գործնական այդ մարդիկ ծիծաղում են ընդհանուր հարցերի վրա, արհամարհում կանանց (արհեստի բերումով պարտվածների դեմ տարած բազում հաղթանակների հետևանք)։ Սովորաբար արտիստական շրջանն անց է կացվում խամրած հռչակավորների թվին պատկանող որևէ մաշված մեղսագործի, ուրիշի հաշվին ապրող d'un vieux prostituée[3]-ի, ձայնը կորցրած որևէ դերասանի, ձեռքերը դողացող նկարչի ղեկավարության ներքո. սրանց ընդօրինակում են առոգանության մեջ, խմելիս, իսկ գլխավորը՝ մարդկային գործերին վերևից նայելու և կերակրատեսակները հիմնավորապես գիտենալու մեջ։

Անգլիայում արտիստական շրջանը փոխարինված է հաճելի յուրօրինակությունների ու արտառոց սիրալիրությունների մոլուցքով, այսինքն՝ խելահեղ արարքներով, անիմաստ վատնումներով, ծանր շարաճճիություններով, խորբայց խնամքով թաքցված անառակությամբ, դեպի Կալաբրիա կամ Կվիտո, դեպի հարավ, դեպի հյուսիս կատարվող անպտուղ ուղևորություններով,— ճանապարհին՝ ձիեր, շներ, ձիարշավներ, անմիտ ճաշկերույթներ,— և հետո էլ՝ կինը անհավատալի թվով կարմրաթշիկ ու թմբլիկ baby[4]-ներով, առևտրական գործառությունները, «Times»-ը, պառլամենտն ու գետին տապալող օլդպորտը[5]։

Ցարություններ մենք էլ էինք անում, կերուխումի մեջ մենք էլ էինք լինում, բայց դա՛ չէր հիմնական տարերքը։

---

1 Լատինական թաղամաս (ֆրանս.)։
2 գործակատարության (ֆրանս.)։
3 ծեր անառակ (ֆրանս.)։
4 երեխա (անգլ.)։
5 հին պորտվեյն (անգլ. old pórt-ից)։

մակարդակը շատ էր բարձր։ Զարաճճիությունը, զեխությունը նպատակ չէին դառնում։ Նպատակը կոչումին հավատալն էր. ընդունենք, որ մենք սխալվում էինք, բայց ունենալով հավատք՝ մենք փաստորեն ինքներս մեր մեջ և մեկս մյուսիս մեջ հարգում էինք այն զենքը, որ ծառայում էր ընդհանուր գործին։

Եվ ո՞րն էր մեր քեֆն ու խրախճանքը։ Հանկարծ մտքներըս է գալիս, որ երկու օրից դեկտեմբերի 6-ն է, Նիկոլի տոնը։ Նիկոլայների ահավոր առատություն է՝ Նիկոլայ Օգարյով, Նիկոլայ Սատին, Նիկոլայ Կետչեր, Նիկոլայ Սազոնով*...

— Պարոնա՛յք, ո՞վ է տոնում իր անվանակոչությունը։

— Ե՛ս, ե՛ս։

— Իսկ ես՝ մյո՛ւս օրը։

— Հիմարությո՛ւն, ի՞նչ մյուս օր։ Ընդհանուր տոն է, դրեք ձեր բաժինը։ Ա՛յ թե քեֆ կլինի։

— Հա՛, հա՛, իսկ ո՞ւմ մոտ ենք հավաքվում։

— Սատինը հիվանդ է, պարզ է՝ նրա տանը։

Եվ հաշիվներ են արվում, նախագծեր առաջ քաշվում, դա շատ-շատ է զբաղեցնում ապագա հյուրերին ու անվանատերերին։ Նիկոլայներից մեկը գնում է «Ցարը»՝ ընթրիք պատվիրելու, մյուսը՝ Մատերնի մոտ՝ պաների ու ճարպի։ Գինին, պարզ է, գնվում է Պետրովկայում՝ Դեպրեից, որի դավթարում Օգարյովը էպիգրաֆ էր գրել։

De près ou de loin,
Mais je fournis toujours.[1]

Մեր անփորձ ճաշակը դեռևս շամպայնից դենը չէր անցնում և այնքան մատղաշ էր, որ մենք մի անգամ շամպայնին էլ դավաճանեցինք՝ հոգուտ Rivesaltes mousseux[2], Փարիզում, ռեստորանի ճաշացուցակում ես տեսա այդ անունը, հիշեցի 1833 թվականը և պահանջեցի մի շիշ։ Բայց, ավա՜ղ, նույնիսկ հիշողություններս չօգնեցին մի գավաթից ավելի խմելու։

[1] Մոտիկ լինի, թե հեռու՝ ես միշտ հասցնում եմ (Ֆրանս.)։ Բառախաղ՝ De près (մոտիկ) և Դեպրե՝ ազգանուն։

[2] փրփրան ռիվեսալտ գինու (Ֆրանս.)։



Ցոնից առաջ մեկին ուղարկում են համտեսելու համար գինիների նմուշներ բերելու, քանզի այդ համտեսումը ակընհայտորեն հաճելի բան է։

Այստեղ չեմ կարող չպատմել, թե ինչ եկավ Սոկոլովսկուն։ Նա միշտ էլ փող չէր ունենում և ինչ որ ստանում էր՝ տեղն ու տեղը ծախսում էր։ Իր ձերբակալությունից մի տարի առաջ նա Մոսկվա եկավ ու իջևանեց Սատինի տանը։ Նա հաջող վաճառել էր, հիշում եմ, «Խեերիի» ձեռագիրը ու որոշել էր քեֆ կազմակերպել ոչ միայն մեզ համար, այլև pour les gros bonnets[1], այսինքն՝ հրավիրել էր Պոլևոյին*, Մաքսիմովիչին* և այլոց։ Նախօրյակին, առավոտից նա Պոլեժաևի հետ, որն այդ ժամանակ իր գնդով Մոսկվայում էր, գնաց գնումներ անելու, առավ-բերեց բաժակներ, նույնիսկ ինքնաեռ, զանազան անհարիավոր բաներ ու, վերջապես, գինի և ուտելիք, այսինքն՝ պաշտետներ, փորը լցրած հընդկահավեր և այլն։ Երեկոյան մենք եղանք Սատինի մոտ։ Սոկոլովսկին առաջարկեց բացել մի շիշ, հետո՝ երկրորդը. մենք հինգ հոգի էինք, երեկոյի վերջում, այսինքն՝ հաջորդ օրվա առավոտյան, պարզվեց, որ այլևս ոչ գինի է մնացել, ոչ էլ Սոկոլովսկու մոտ՝ փող։ Մանր պարտքերը վճարելուց հետո մնացած ամբողջ դրամով նա գնումներ էր կատարել։

Սոկոլովսկին քիչ մնաց վշտանա, բայց, ցավ ի սիրտ, միտք արեց, միտք ու բոլոր gros bonnets-ին գրեց, թե ինքը սաստիկ տկար է, և խնջույքը հետաձգում է։

Ցորսի անվանակոչության քեֆի համար ես կազմել էի մի ամբողջ ծրագիր, որն արժանացավ ինկվիզիտոր Գոլիցինի* հատուկ ուշադրությանը. հանձնաժողովում նա ինձ հարցրեց, թե ծրագիրն արդյոք լրի՞վ է ի կատար ածվել։

— A la lettre,— պատասխանեցի նրան։ Նա ուսերը վեր քաշեց, կարծես թե ամբողջ կյանքն անց էր կացրել Ժմոլնիի մանքում կամ էլ մեծ պասի մեջ։

Ընթրիքից հետո սովորաբար ծագում էր նիմնական հարցը, մի հարց, որ վեճեր էր բորբոքում. «Ինչպե՞ս եփել գ

Հուքյան քվե են տալիս։ Բայց այս դեպքում ամեն ոք մասնակցում էր և այն էլ՝ ընթրիքային բարձունքներից։

— Վառե՞լ, դեռ չվառե՞լ, ինչպե՞ս վառել, հանգցնել շամպայնո՞վ, թե՞ սոտերնով[1], մրգերն ու անանասը գցել քանի դեռ վառվո՞ւմ է, թե՞ հետո։

— Հավանորեն՝ քանի դեռ վառվում է, այդ դեպքում ամբողջ բուրմունքը փունջին կանցնի։

— Ի՞նչ եք ասում, անանասները երեսն են ելնում, ծայրերը կվառվեն, էդ հո կփչանա՞։

— Դատա՞րկ բան,— ամենքից բարձր բղավում է Կետշերը։— Կարևորը՝ պետք է մոմերը մարել։

Մոմերը հանգցված են, բոլորի դեմքերը կապտում են, ու դիմագծերը տարուբերվում բոցի հետ։ Մինչդեռ փոքրիկ սենյակում ջերմաստիճանը այրվող ոսմից դառնում է արևադարձային։ Բոլորը խմել են ուզում, փունջը պատրաստ չէ։ Բայց Joseph-ը, «Ցարից» ուղարկված ֆրանսիացին, պատրաստ է. նա սարքում է փունջին հակոտնյա խմիչք՝ սառցի ու զանազան գինիների խառնուրդով, á la base de cognac[2], իսկականը. իբրև «մեծ ժողովրդի» զավակ, նա, լցնելով ֆրանսիական գինին, բացատրում է մեզ, որ այդ խմիչքը նրանով է լավը, որ երկու անգամ անցել է հասարակածը։

— Oui, oui, messieurs; deux fois l'équateur, messieurs![3]

Երբ բևեռային սառնությամբ հայտնի խմիչքը վերջացած է և այլևս ընդհանրապես խմելու հարկը չկա, Կետշերը, ապուրի ամանում խառնելով հրե լիճը,— ըստ որում շաքարի վերջին կտորները հալվում են ողբաձայն թշշալով,— բղավում է.

— Հանգցրե՞ք, հանգցրե՞ք։

Բոցը շամպայնից կարմրում է, ինչ-որ թախիծով ու վատ կանխազգացումով վեռվեռում փունջի երեսով։

Հուսահատ մի ձայն.

[1] սպիտակ գինու տեսակ (ֆրանս. sauternes-ից)։

[2] կոնյակի հիմքի վրա (ֆրանս.)։

[3] Այո՛, այո՛, պարոնա՛յք, երկու անգամ հասարակածը, պարոնա՛յք (ֆրանս.)։



— Լսի՛ր, հո չե՞ս գժվել, չե՞ս տեսնում՝ ձյունը հալվում-կաթում է ուղիղ փունջի մեջ։

— Արի շիշը ի՛նքդ էնպես բռնիր էս կրակի վրա, որ ձյունը չհալվի։

— Դե՛, ձյունը պետք էր սկզբից փշրել-թափել,— շարունակում է սրտնեղած ձայնը։

— Գավաթնե՛րը, գավաթնե՛րը, հերիքո՞ւմ են, քանի՞ հոգի ենք... ինը, տասը... տասնչորս, հա՛, հա՛։

— Է՛, որտեղի՞ց տասնչորս գավաթ։

— Դե, ում գավաթ չհասավ՝ բաժակի՛ մեջ։

— Բաժակները կճաքեն։

— Չե՛ն ճաքի, չե՛ն ճաքի, մենակ թե մեջը գդալ դրեք։

Մոմերը վառվում են, բոցի վերջին ցոլքը հասավ կենտրոնին, թպրտաց ու անհետացավ։

— Փունջն ստացվե՞ց։

— Ստացվե՞ց, շա՛տ լավ ստացվեց,— ասում են ամեն կողմից։

Հաջորդ օրը՝ գլխացավ, սրտխառնուք։ Հավանաբար փունջից է՝ խառնուրդի՞ց։ Եվ այստեղից՝ անկեղծ որոշում՝ այլևս երբեք փունջ չխմել, դա թույն է։

Ներս է մտնում Պյոտր Ֆեոդորովիչը։

— Գիտե՞ք, դուք այսօր տուն եք եկել ուրիշի գլխարկով։

— Ինչպե՞ս։

— Ինչպես՝ Նիկոլայ Միխայլովիչի Կուզմայի մոտ գնամ ու բերեմ։

— Քեզ թվում է, թե որևէ մեկը առանց գլխարկի՞ է գնացել։

— Դե՛, համենայն դեպս՝ չի խանգարի։

Այստեղ ես գլխի եմ ընկնում, որ բանն ամենևին էլ գլխարկը չէ, այլ այն, որ Կուզման Պյոտր Ֆեոդորովիչին կանչել է կոճոնի։

— Դու Կուզմայի մոտ գնա, բայց նախ խոհարարից ինձ թթու կաղամբ բեր։

— Լեքսանդր Իվանիչ, ոնց որ թե անվանատերերը սևերես չեն մնացել։

— Ի՞նչ սևերես, էդպես քեֆ կուրսում չի եղել։

— Ոբեմս էսօր համալսարան չե՞նք գնա։

Խիղճս տանջում է, և ես լռում եմ։

— Ձեր հայրիկն էլ ինձ էր հարցնում. «էդ ո՞նց է, ասում է, դեռ չի՞ վեր կացել»։ Ես, գիտե՛ք, էլի՛, միամիտ չեմ. գլուխը, ասում եմ, ցավում է, առավոտից գանգատվում էր դրա համար վարագույրներն էլ չեմ բացել։ «Հա՛, ասում է լավ էլ արել ես»։

— Դե, աստվածդ նիրես, թող քնեմ։ Ուզում էիր Սատի-նի մոտ գնալ՝ գնա՛, էլի՛։

— Էս րոպեիս, կաղամբը բերեմ ու գնամ։

Տանը քունը նորից փակում է աչքերս. մի երկու ժամից զարթնում եմ շատ ավելի թարմացած։ Տեսնես ի՞նչ բանի են էնտեղ։ Կետչերն ու Օգարյովը մնացին գիշերելու։ Ափսո՛ս որ փունջն էդպես գլուխ է ցավեցնում, պիտի խոստովանել՝ շատ համով էր։ Պե՞տք էր փունջը բաժակով խմել։ Ես հաստատ այժմվանից և միշտ կխմեմ փոքրիկ ըմպանակով։

Այդ ընթացքում հայրս արդեն վերջացրել է թերթերի ընթերցանությունն ու խոհարարի ընդունելությունը։

— Գլուխդ այսօր ցավո՞ւմ է։

— Շատ։

— Գուցե շա՞տ ես պարապել։— Եվ այդ հարցումից երևվում է, որ նա դեռ պատասխանը չստացած՝ կասկածեց։— Ես արդեն մոռացել էի, չէ՞ որ դու երեկ, կարծեմ, Նիկոլաշայի[1] ու Օգարյովի մոտ ես եղել։

— Իհարկե։

— Պատի՞վ են տվել նրանք քեզ, թ՛նչ է... անվանակոչությո՞ւն էր։ Էլի՞ մադերայով սուպ։ Ա՜խ, ո՞նց չեմ սիրում ես այդ ամենը։ Դե, Նիկոլաշան, գիտեմ, սիրում է անտեղի գինի գործածել, և որտեղի՞ց է նրա մեջ այդ բանը, չեմ հասկանում։ Հանգուցյալ Պավել Իվանովիչը... Դե, հունիսի քսանիններին անվանակոչությունն է, կկանչեր բոլոր ազգականներին, ճաշը՝ ինչպես որ կարգն է,— ամեն ինչ՝ համեստ, վայելուչ։ Իսկ հիմա՝ շամպայն ու յուղով սարդինկա. զզվանքդ գալիս է։ Էլ չեմ խոսում Պլատոն Բոգդանովիչի դրժոխք որդու մասին. մենակ է, լքված։ Մոսկվա... փող կա՝ կատապան Երմեյ, «թուր, գինի բեր»։ Դե՛, կառապանն էլ ուրախ է, դրա համար խանութում նրան տասը կոպեկ է հանում։

— Այո՛, ես Նիկոլայ Պավլովիչի մոտ նախաճաշել եմ։ Բայց չեմ կարծում, որ դրանից մարդու գլուխ ցավի։ Մի քիչ ման կգամ, զբոսնելն ինձ միշտ օգնում է։

— Տերն ընդ քեզ, հուսով եմ՝ կճաշես տանը։

— Անշուշտ, ես միայն հենց այնպես եմ դուրս գալիս։

Մադերայով սուպ-ի ինչ լինելը բացատրելու համար անհրաժեշտ է ասել, որ չորս անվանակոչիկների նշանավոր քեֆից մի տարի առաջ կամ ավելի շուտ, զատկի շաբթին, Օգարյովի հետ գնացինք զվարճանալու, և, որպեսզի ազատվեմ տանը ճաշելուց՝ ասացի, թե ինձ ճաշի է հրավիրել Օգարյովի հայրը։

Հայրս առհասարակ չէր սիրում իմ ծանոթներին, աղավազում էր նրանց ազգանունները՝ սխալվելով միշտ նույն ձևով. այսպես՝ Սատինին շարունակ անվանում էր Սակեն, իսկ Սազոնովին՝ Սնազին։ Օգարյովին մյուսներից ավելի քիչ էր սիրում, թե՛ այն պատճառով, որ նա երկար մազեր էր պահում և թե՛ այն բանի համար, որ ծխում էր առանց թույլտվության։ Բայց, մյուս կողմից էլ, նա Օգարյովին ծոռակից ազգական էր համարում և, հետևաբար, ազգակից ազգանունն աղավաղել չէր կարող։ Բացի այդ, Պլատոն Բոգդանովիչը, թե՛ ազգակցությամբ և թե՛ հարստությամբ, պատկանում էր հոբս կողմից ընդունված սակավ անձանց թվին, և նրա տան հետ ունեցած իմ մոտիկությունը դուր էր գալիս հորս։ Այդ մոտիկությունն ավելի շատ դուր կգար նրան, եթե Պլատոն Բոգդանովիչը որդի չունենար։

Այսպիսով, նրան մերժելը վայելուչ բան չէր։

Պլատոն Բոգդանովիչի պատվավոր ճաշասենյակի փոխարեն մենք նախ գնացինք Նովինսկոյեի մոտ գտնվող Պրեյսի փահլևանոցը (ես հետագայում հիացմունքով հանդիպեցի կրկեսային մարմնամարզիկների այդ ընտանիքին Ժնևում ու Լոնդոնում), այնտեղ կար փոքրիկ մի աղջիկ, որով մենք հիանում էինք և որի անունը Մինյոնա՝ էինք դրել։

[1] Գոլոխվաստովի (ծանոթ.՝ Ա. Բ. Գերցենի)։

Դիտելով Մինյոնայի ելույթը և որոշելով երեկոյան նորից գալ նրան տեսնելու, մենք գնացինք «Յար»-ում ճաշելու։ Մոտս մի ոսկի կար, այդքան էլ Օգարյովն ուներ։ Մենք այն ժամանակ դեռևս կատարյալ սկսնակ էինք ու դրա համար էլ երկար կշռադատելուց հետո պատվիրեցինք ouka au chamagne[1], մի շիշ հռենոսյան գինի և մի կտոր ինչ-որ որսի միս, ու... ահավոր թանկ նստած ճաշից վեր կացանք լրիվ սոված և գնացինք նորից Մինյոնային նայելու։

Հայրս, հրաժեշտ տալով ինձ, ասաց, որ իրեն թվում է, թե կարծես ինձանից գինու հոտ է գալիս։

— Երևի նրանից է,— ասացի ես,— որ սուպը մադերայով էր։

— Au madére, այդ բանը, հավանաբար, Պլատոն Բոգդանովիչի փեսան է մեջտեղ բերել. cela sent les casernes de la garde[2].

Այդ ժամանակվանից մինչև աքսորվելս հենց որ հորս թվում էր, թե ես գինի եմ խմել, թե դեմքս կարմրած է՝ անպայման ինձ ասում էր.

— Դու, հավանաբար, այսօր մադերայով սո՞ւպ ես կերել։

Եվ այսպես՝ ես աճապարեցի Սատինի մոտ։

Օգարյովն ու Կետշերը, իհարկե, այնտեղ էին։ Ճմռթված դեմքով Կետշերը դժգոհ էր մի քանի կարգադրություններից և խստորեն քննադատում էր դրանք։ Օգարյովը նմանաբուժությամբ սեպը սեպով էր հանում՝ խմելով ոչ միայն խընջույքի, այլև Պյոտր Ֆեոդորովիչի խարավորման մնացուկները, Պյոտր Ֆեոդորովիչի, որն արդեն երգ ասելով, շվշվացնելով ու դոփդոփելով պար էր գալիս Սատինի խոհանոցում։

Մարինայի պուրակում զվարճահանդես է
Հենց մեռելոցի օրը։

... Մեր պատանեկության, մեր ողջ խմբի պատանեկության օրերը վերհիշելիս միտքս չի գալիս ոչ մի եղելություն, որը ծանրացած լիներ խղճի վրա, որն ամոթ լիներ մտաբերել։ Եվ սա վերաբերում է առանց բացառության մեր բոլոր ընկերներին։

Մեր մեջ կային պլատոնական երազողներ և տասնյոթ նուլարեկանում հիասթափված պատանիներ։ Վադիմը նույնիսկ դրամա էր գրել, որի մեջ ուզում էր ներկայացնել «իր սպանված սրտի զարհուրելի փորձը»։ Այդ դրաման սկսվում էր այսպես. «Այգի։ Հեռվում՝ տուն։ Պատուհանները լուսավորված են։ Փոթորիկ։ Ոչ ոք չկա։ Դռնակը կողպված չէ, շրրխկում է ու ճռճռում»։

— Բացի դռնակից ու այգուց, գործող անձինք կա՞ն,— հարցրեցի Վադիմին։

Եվ Վադիմը, փոքր ինչ-վշտացած, ասաց ինձ.

— Դու հա ձեռ ես առնում։ Սա կատակ չէ, այլ իմ սրտի եղելությունը։ Որ այդպես է, իսկի չեմ էլ կարդա,— և սկսեց կարդալ։

Լինում էին նաև բնավ էլ ոչ պլատոնական չարաճճիություններ, նույնիսկ այնպիսիք, որոնք վերջանում էին ոչ թե դրամայով, այլ դեղատնով։ Բայց չէին լինում կնոջը կորդրամայով, այլ դեղատնով։ Բայց չէին լինում կնոջը կորցնող և տղամարդուն նվաստացնող ճղճիմ խարդավանքներ, չկային տարփուճիներ (այդ ստոր բա՞ն անգամ չկար)։ Մեր շրջանը զերծ մնաց անվրդով, անվտանգ, պրոզաիկ, քաղքենիական անառակությունից, համաձայնագրվա՛ծ անառակությունից։

— Ուրեմն դուք ընդունում եք առավել վատթար, ծախու անառակությո՞ւնը։

— Ոչ թե ես, այլ դուք։ Այսինքն՝ ոչ թե դուք ինքներդ, այլ դուք բոլորդ։ Անառակությունն այնպես հաստատ է խարսխված հասարակական կառուցվածքին, որ իմ պաշտոնաշնորհման կարիքը չի զգում։

Ընդհանուր հարցերը, քաղաքացիական հուզավառությունը փրկում էին մեզ. և ոչ միայն դրանք, այլև ուժեղ զարգացած գիտական ու գեղարվեստական հետաքրքրությունները։ Դրանք, վառվող թղթի նման, մաքրում էին լաքաները։ Մոտս պահպանվել են Օգարյովի այդ ժամանակվա մի քանի նամակները. դրանցով հեշտությամբ կարելի է դատել այն ժամանակվա մեր կյանքի հիմնական երանգի մասին։ 1833 թվականին, հունիսի 7-ին, օրինակ, Օգարյովն ինձ գրում է.

[1] շամպայնով ձկնապուր (ֆրանս.)։

[2] Մադերայով... դրանից զվարդիական զորանոցների հոտ է փչում (ֆրանս.)։

«Մենք մեկս մյուսիս, կարծես թե, գիտենք, կարծես կարող ենք անկեղծ լինել։ Նամակս դու ոչ ոքի ցույց չես տա։ Այսպես ուրեմն, ասա. որոշ ժամանակից ի վեր ես այնպես լեփ-լեցուն եմ, կարելի է ասել՝ ճնշված եմ զգացմունքներով ու խոհերով, որ ինձ թվում է, թվալուց բացի՝ գլխումս մխրճվել է այն միտքը, թե իմ կոչումը պոետ լինելն է, բանաստեղծ թե երաժիշտ՝ alles eins[1], բայց անհրաժեշտություն եմ զգում ապրելու այդ մտքով, քանզի մի տեսակ ինքնազգացողություն ունեմ, թե ես պոետ եմ. ընդունենք, որ դեռ անճոռնի եմ գրում, բայց հոգուս մեջ եղած այս կրակը, զգացմունքների այս լիությունն ինձ հույս են ներշնչում, որ ես կգրեմ և կարգին կգրեմ (ներող կլինես այսպիսի տափակ արտահայտությանս համար)։ Դե՛, ասա՛, բարեկա՛մս, հավատա՞մ կոչմանս։ Դու, գուցե, ինձանից լավ գիտես, ավելի, քան ես ինքս, և չես սխալվի։

7-ը հունիսի, 1833»։

«Դու գրում ես. «Այո՛, դու պոետ ես, իսկապա՛ն պոետ»։ Բարեկա՛մս, կարո՞ղ ես պատկերացնել, թե ի՞նչ են առաջացնում այդ բառերն իմ մեջ։ Ուրեմն, սուտ չէ այն ամենը, ինչ ես զգում եմ, ինչին ձգտում եմ, ինչը իմ կյանքն է։ Սուտ չէ՞։

Ճի՞շտն ես ասում, արդյոք։ Դա տենդային ցնորք չէ, դա ես զգում եմ։ Դու ինձ ավելի շատ գիտես, քան Ուրիշ որևէ մեկը, ճիշտ չէ՞, ես այդ իսկապես զգում եմ։ Ո՞չ, այդ վսեմ կյանքը տենդային ցնորք չէ, երևակայության պատրանք չէ, այդ կյանքը շատ է վսեմ, որ խաբկանք լինի, դա իրողություն է, ես ապրում եմ դրանով, ես չեմ կարող ինձ համար մի այլ կյանք երևակայել։ Ինչո՞ւ ես երաժշտություն չգիտեմ, ի՞նչ սիմֆոնիա կպոռթկար հիմա հոգուս միջից։ Ահա լսում ես վեհասքանչ adagio[2]-ն, բայց ուժ չկա արտահայտելու, պետք է ավելին ասել, քան ասված է. presto, presto[3], ինձ հարկավոր է բուռն, անզուսպ presto։ Adagio և presto,

1 մեկ է (գերմ.)։
2 շատ դանդաղ (իտալ.)։
3 շատ արագ (իտալ.)։



երկու ծայրահեղություններ։ Հեռո՛ւ այդ միջակությունից՝ andante[1], allegro moderato[2], կակազները կամ տկարամիտներն են, որ չեն կարողանում ոչ բուռն խոսել, ոչ էլ բուռն զգալ։

Գյուղ Ձերոկովո, 18-ը օգոստոսի, 1833»։

Մենք օտարացել ենք պատանեկության այս վսեմ թոթովանքից, այն տարօրինակ է մեզ համար, բայց դեռ քանը լցուրած երիտասարդի այդ տողերից պարզ երևում է, որ նա ապահովագրված է ճղճիմ արատից և ճղճիմ առաքինությունից, որ նա գուցեև չփրկվի ճահճից, բայց այնտեղից դուրս կգա շաղտոտված։

Դա չէ՛ անվստահություն իր նկատմամբ, դա հավատի կասկածանք է, բուռն ցանկությունը հաստատումի, սիրո ավելորդ խոսքի, որն այնքա՞ն թանկ է մեզ։ Այո՛, դա ծնունդ առնող ստեղծագործության անհանգստությունն է, տագնապալի հայեցումը բեղմնավորված հոգու։

«Ես չեմ կարողանում դեռևս որսալ այն հնչյունները,— գրում է նա նույն նամակում,— որոնք լսում է իմ հոգին, մարմնական անընդունակությունը սահմանափակում է երևակայությունս։ Բայց, գրո՛ղը տանի, ես պոետ եմ, պոետ զիան ինձ ճշմարտությունն է հուշում այնտեղ, ուր ես այն չէի ըմբռնի սառը դատողությամբ։ Ահա՛ հայտնության փիլիսոփայությունը»։

Այսպես է ավարտվում մեր պատանեկության առաջին փուլը, երկրորդն սկսվում է բանտով։ Բայց նախքան դրան անցնելը հարկ է հիշատակել, թե ի՞նչ ընթացքի մեջ էինք, ի՞նչ խոհեր ունեին մենք, երբ վրա հասավ այդ փուլը։

Լեհական ապստամբության զսպումին հաջորդած ժամանակն արագ էր դաստիարակում։ Մեզ արդեն սոսկ այն չէր բանջում, որ Նիկոլայը աճել ու տեղը պնդացրել էր դաժանությամբ. մենք սկսել էինք ներքուստ սաթափելով արել, որ Եվրոպայում էլ, և հատկապես Ֆրանսիայում,

1 առանց շտապելու (իտալ.)։
2 չափավոր արագ (իտալ.)։

որտեղից սպասում էինք քաղաքական նշանախոսք ու կոչ, գործերը լավ չեն. մեր տեսությունները մեզ համար կասկածելի էին դառնում։

1826 թվականի մանկական լիբերալիզմը, որ կամաց-կամաց կազմավորվել դարձել էր Լաֆայետի ու Բենժամեն Կոնստանի քարոզած, Բերանժեի գովերգած ֆրանսիական հայեցողություն, մեզ համար, Լեհաստանի կործանումից հետո, կորցնում էր իր կախարդիչ ուժը։

Այդ ժամանակ էլ երիտասարդության մի մասը, այդ թվում և Վադիմը, նետվեց խոր ու լրջորեն հետազոտելու ռուսաց պատմությունը։

Մյուսը՝ դեպի գերմանական փիլիսոփայություն։

Ես և Օգարյովը չէինք պատկանում ոչ մեկին, ոչ էլ մյուսին։ Մենք չափազանց շատ էինք համակերպվել այլ գաղափարների՝ չէինք կարող դավաճանել դրանց։ Բերանժեական կերուխումային հեղափոխության հավատը խախտված էր, բայց մենք որոնում էինք ուրիշ մի բան, որը չէինք կարողանում գտնել ոչ Նեստորովյան տարեգրության, ոչ էլ Շիլլինգի տրանսցենդենտալ իդեալիզմի մեջ։

Այդ խմորումների միջոցին, կռահումների, մեզ վախեցնող տարակուսանքները հասկանալու ճիգերի արանքում մեր ձեռքն ընկան սեն-սիմոնիստների գրքույկները, նրանց քարոզները, նրանց դատավարության նյութերը։ Դրանք շշմեցրին մեզ։

Թեթևամիտ և ոչ թեթևամիտ մարդիկ բավականին ծաղրեցին հայր Ենֆանտենին* և յուր առաքյալներին. մի այլ ճանաչման ժամանակ է գալիս սոցիալիզմի այդ նախակարապետների համար։

Հանդիսավոր ու բանաստեղծորեն՝ քաղքենի աշխարհի մեջ հայտնվում էին այդ խանդավառ երիտասարդները՝ փակ ժիլետներով, երկարած մորուքներով։ Նրանք ազդարարեցին մի նոր հավատ, նրանք ունեի՛ն ասելիք և գիտեին հանուն ինչի են իրենց դատաստանի առաջ կանգնեցնում իրերի հին կարգը, որն ուզում էր նրանց դատել ըստ Նապոլեոնի օրենսգրքի և ըստ օռլեանյան կրոնի*։

Մի կողմից՝ կնոջ ազատագրում, ընդհանուր աշխատանքի



հրավեր, նրա ճակատագիրն իր ձեռքը հանձնելը, դաշինք նրա՝ իբրև հավասարի հետ։

Մյուս կողմից՝ արդարացում, մարմնի թողություն, réhabilitation de la chair[1].

Վեհ խոսքեր, որոնք պարունակում էին մարդկային նոր հարաբերությունների մի ողջ աշխարհ՝ առողջությա՛ն աշխարհը, ոգո՛ւ աշխարհը, գեղեցկությա՛ն աշխարհը, բնական-բարոյական ու դրա շնորհիվ էլ բարոյապես մաքո՛ւր աշխարհը։ Շատ են ծաղրել կնոջ ազատությունը, մարմնական իրավունքների ճանաչումը, կեղտոտ ու անվայելուչ խմաստ հաղորդելով այդ խոսքերին. վանականորեն այլասերված մեր երևակայությունը վախենում է մարմնից, վախենում է կնոջից։ Բարի մարդիկ հասկացան, որ մարմնի քավիչ մկրտությունը քրիստոնեության հոգոց հանգուցելոցն է. կենաց կրոնը գալիս էր փոխարինելու մահվան կրոնին, գեղեցկության կրոնը՝ խարազանման և պասից ու աղոթքից նվաղման կրոնին։ Խաչված մարմինը հարություն էր առնում իր հերթին և այլևս չէր ամաչում ինքն իրենից. մարդն հասնում էր ներդաշնակ միասնության, գլխի էր ընկնում, որ ինքն ամբողջական էակ է և ոչ թե բաղկացած է, ինչպես ճճանակը, մեկը մյուսին արգելակող երկու տարբեր մասներից, և որ իր հետ զոդված ոսոխը անհետացել է։

Ի՞նչ արիություն էր հարկավոր ունենալ՝ հրապարակավ Ֆրանսիայում արտասանելու համար սպիրիտուալիզմից ազատագրվելու այս խոսքերը, սպիրիտուալիզմ, որն այնքա՛ն ուժեղ է ֆրանսիացոց հասկացողություններում և այնպե՛ս իսպառ բացակայում է նրանց վարքագծում։

Վոլտերից ծանակված, հեղափոխությունից զարկված, բայց իր առօրյա գործածության համար քաղքենիությամբ կյանքունացված, կարկատված ու ամրապնդված հին աշխարհը այդպիսի բան դեռ չէր տեսել։ Նա ուզում էր հերձվածողներին դատել թաքուն համաձայնեցված իր երեսպաշտության հիման վրա, իսկ այդ մարդիկ դիմակազերծ արին նրան։ Նրանց մեղադրում էին քրիստոնեությունն ուրանալու մեջ, իսկ նրանք մատնացույց արին 1830 թվականի հեղափոխու-

[1] մարմնի ռեաբիլիտացիա (ֆրանս.)։

թյունից հետո դատավորի գլխավերևում վառագուրված սրբապատկերը։ Նրանց մեղադրում էին հեշտասիրությունն արդարացնելու մեջ, իսկ նրանք հարցրին դատավորին՝ մաքրաբարո՞ է ապրում, արդյոք, ինքը։

Նոր աշխարհը դռնից ներս էր խուժում, մեր հոգիները, մեր սրտերը բացվում էին նրա առաջ։ Սեն-սիմոնիզմը դարձավ մեր հուզմունքների հիմքը և էականում մնաց անփոփոխ։

Դյուրընկալ, անկեղծ երիտասարդներ՝ մենք հեշտությամբ ընկանք նրա զորեղ ալիքի մեջ և կանուխ անցանք այն բնագիծը, որտեղ մարդկանց ամբողջ շարաններ կանգ են առնում, թեաթափ լինում, ետ են դառնում կամ չորս դին ծանծաղուտ որոնում, որ դուրս գան ծովից։

Բայց բոլորը չէին, որ հանդգնեցին մեզ հետ։ Սոցիալիզմն ու ռեալիզմը մինչև հիմա էլ փորձաքարեր են, որ ընկած են հեղափոխության և գիտության ճանապարհներին։ Իրադարձությունների ալիքներով կամ մոտածողությամբ այդ ժայռերի վրա նետված լողորդների խմբերը անհապաղ բաժանվում են և կազմում երկու հավերժական կուսակցություն, որոնք, փոխելով տարազը, անցնում են ամբողջ պատմության միջով, բոլոր հեղաշրջումների, բազում կուսակցությունների ու մի տասնյակ պատանյակներից բաղկացած խմբակների միջով։ Մի խումբը ներկայացնում է տրամաբանությունը, մյուսը՝ պատմությունը, մեկը՝ դիալեկտիկան, մյուսը՝ էմբրիոգենիան։ Դրանցից մեկն ավելի իրավացի է, մյուսը՝ ավելի իրագործելի։

Ընտրության մասին խոսք անգամ չի կարող լինել. միտքը սանձելն ավելի դժվար է, քան ամեն մի կիրք, միտքը ձգում է ակամայից. ով որ կարող է միտքը կասեցնել զգացմունքով, երազանքով, հեռանքների երկյուղով՝ նա էլ կկասեցնի, բայց բոլորը չէ, որ կարող են։ Ում մեջ որ միտքն է գերիշխում, նրա համար հարցը կիրառելիությունը չէ, ավելի դյուրին կամ ծանր լինելը չէ, նա որոնում է ճշմարտությունը և անողոք, անաչառ անց է կացնում հիմնական սկզբունքները, ինչպես մի ժամանակ սեն-սիմոնիստները, ինչպես Պրուդոնը* մինչև այժմ։

Մեր շրջանակն ավելի սերտորեն համախմբվեց։ Դեռ այն



ժամանակ, 1833 թվին, լիբերալները խեթ-խեթ էին նայում մեզ՝ իբրև ճանապարհից շեղվածների։ Հենց բանտ ընկնելուց առաջ սեն-սիմոնիզմը սահմանագիծ քաշեց իմ և Ն. Ա. Պոլևոյի միջև։ Պոլևոյը արտակարգ ճարպիկ, գործունյա, ամեն մի սնունդ դյուրությամբ մարսող խելքի տեր մարդ էր. նա ծնվել էր ժուռնալիստ լինելու, նվաճումների, հայտնագործությունների, քաղաքական ու գիտական պայքարի տաքնգիր լինելու համար։ Ես նրա հետ ծանոթացա դասընթացի վերջում և երբեմն լինում էի նրա ու իր եղբայր Քսենոֆոնտի մոտ։ Դա նրա մեծագույն փառքի շրջանն էր, «Տելեգրաֆի» արգելմանը նախորդող ժամանակը։

Ահա այդ մարդը, որն ապրում էր վերջին հայտնագործությամբ, երեկվա հարցով, նոր նորություններով՝ տեսության մեջ և իրադարձություններում, որը փոխակերպվում էր, ինչպես քամելիոնը, մտքի ողջ աշխուժությամբ հանդերձ չէր կարողանում հասկանալ սեն-սիմոնիզմը։ Մեզ համար սեն-սիմոնիզմը հայտնություն էր, նրա համար՝ խելացնոր գաղափար, քաղաքացիական զարգացմանը խոչընդոտող սնամեջ ուտոպիա։ Ինչքան էլ ես ճարտասանում էի, ծավալվում, ապացուցում՝ Պոլևոյը անհաղորդ էր մնում, բարկանում էր, գանգատվում մաղձոտ։ Նրա համար առանձնապես ցավալի էր ուսանողից եկող ընդդիմությունը, նա շատ թանկ էր գնահատում երիտասարդության վրա ունեցած իր ազդեցությունը և այդ վիճաբանության մեջ տեսնում էր, որ երիտասարդությունը իր ձեռքից գնում է։

Մի անգամ, նրա առարկությունների անհեթեթությունից վիրավորված, ես ասացի, որ ինքը նույնպիսի հետամնաց պահպանողական է, ինչպես նրանք, որոնց դեմ ողջ կյանքում կռվել է։ Պոլևոյը խորապես վիրավորվեց իմ խոսքերից և, գլուխն օրորելով, ասաց. —

— Կգա ժամանակը և, որպես պարգև ձեր ողջ կյանքի ճիգ ու ջանքի, ջահելի մեկը ժպտալով կասի ձեզ. «Դե՛ն քաշվեք, դուք հետամնաց մարդ եք»։

Ես խղճում էի նրան, ես ամաչում էի նրան վշտացնելուս համար, բայց դրա հետ մեկտեղ հասկացա, որ նրա տխուր խոսքերում հնչում էր իր դատավճիռը։ Այդ խոսքերից հառնում էր արդեն ոչ թե ուժեղ մարտիկը, այլ իր դարն ապրած,

զառամյալ գլադիատորը։ Այն ժամանակ ես հասկացա, որ նա էլ չի հառաջանա, իսկ նման գործունյա խելքով ու այդպիսի անկայուն հիմքի վրա կանգուն մնալ չի կարողանա։

Դուք գիտեք, թե ինչ եղավ հետո. նա սկսեց գրել «Պարաշա Սիբիրյաչկան»...

Ի՞նչ բախտավորություն է ժամանակին մեռնելը այն մարդու համար, ով չի կարողանում ո՛չ բեմից իջնել իր ժամին, ո՛չ էլ առաջ քայլել։ Այս էի խորհում ես՝ նայելով Պոլևոյին, նայելով Պիոս IX-ին* և շա՜տ ուրիշների...

## ՀԱՎԵԼՈՒՄՆ

## Ա. ՊՈԼԵԺԱԵՎ

Ի լրացումն այն ժամանակվա անուրախ տարեգրության՝ հարկավոր է հաղորդել մի քանի մանրամասնություններ Ա. Պոլեժաևի մասին։

Պոլեժաևը, դեռևս համալսարանի ուսանող, արդեն հայտնի էր իր հիանալի բանաստեղծություններով։ Ի միջի այլոց, նա գրեց «Սաշկա» երգիծական պոեմը՝ «Օնեգինի» պարոդիան։ Դրա մեջ, չնեղվելով քաղաքավարության կանոններից, կատակի տոնով ու դուրեկան քառյակներով նա կպավ շատ բանի։

1826 թվականի աշնանը Նիկոլայը, կախելով Պեստելին, Մուրավյովին ու նրանց ընկերներին, տոնում էր Մոսկվայում իր թագադրությունը։ Այլոց համար այդ հանդիսությունները ներումն շնորհելու և թողություն տալու առիթ են ծառայում։ տոնելով իր ապոթեոզը, Նիկոլայը վերստին գնաց «զախչախելու հայրենիքի թշնամիներին», ինչպես Ռոբեսպիերը իր Fête-Dieu[1]-ից հետո*։

Գաղտնի ոստիկանությունը նրան հասցրեց Պոլեժաևի պոեմը...

Եվ ահա մի գիշեր, մոտ ժամը երեքին, ռեկտորն արթնացնում է Պոլեժաևին, կարգադրում հագնել համազգեստը և իջնել վարչություն։ Այնտեղ նրան սպասում է հոգաբարձուն։

[1] տերունական տոն (ֆրանս.)։



Գնալով՝ տե՞ղն են, արդյոք, համազգեստի բոլոր կոճակները և հո ավելորդ բան չկա՞ վրան, նա առանց որևէ բացատրության հրավիրեց Պոլեժաևին իր կառքը ու տարավ։

Հոգաբարձուն նրան բերեց ժողովրդական կրթության մինիստրի մոտ։ Մինիստրը Պոլեժաևին նստեցնում է իր կառքը և նույնպես տանում է. բայց այս անգամ արդեն՝ ուղիղ թագավորի մոտ։

Իշխան Լիվենը Պոլեժաևին թողեց դահլիճում, որտեղ սպասում էին մի քանի պալատականներ և այլ բարձրաստիճան պաշտոնյաներ՝ չնայած առավոտյան ժամը վեցն էր, և գնաց ներսի սենյակները։ Պալատականները ենթադրեցին, թե երիտասարդը ինչ-որ բանով աչքի է ընկել և անհապաղ սկսեցին խոսեցնել նրան։ Ինչ-որ սենատոր առաջարկեց նրան՝ դասեր տալ իր որդուն։

Պոլեժաևին կանչեցին առանձնասենյակ։ Թագավորը կանգնած էր ցածրադիր գրապահարանին հենված և խոսում էր Լիվենի հետ։ Նա զննող ու չար հայացք նետեց ներս մտնողի վրա, ձեռքին տետրակ կար։

— Դո՞ւ ես,— հարցրեց նա,— հորինել այս ոտանավորները։

— Ե՛ս,— պատասխանեց Պոլեժաևը։

— Ահա՛, իշխա՛ն,— շարունակեց թագավորը,— ահա՛ ես ձեզ կտամ համալսարանական կրթության մի նմուշ, ես ձեզ ցույց կտամ, թե ինչ են սովորում այնտեղ երիտասարդները։ Բարձրաձայն կարդա՛ այս տետրակը,— ավելացրեց նա, նորից դառնալով Պոլեժաևին։

Պոլեժաևի հուզումն այնքան ուժեղ էր, որ չէր կարողանում կարդալ։ Նիկոլայի հայացքը անթարթ գամված էր նրան։ Ինձ ծանոթ է այդ հայացքը, և ես չգիտեմ այդ գորշ-անգույն, սառն, անագե հայացքից ավելի սարսափելի, ավելի անհույս ուրիշ մի հայացք։

— Ես չեմ կարող,— ասաց Պոլեժաևը։

— Կարդա՛,— ճչաց գեղագույն ֆելդֆեբելը։

Այդ ճիչը ետ բերեց Պոլեժաևի ուժը, նա բացեց տետրակը։ «Երբեք,— ասում էր նա,— ես չէի տեսել «Սաշկան» այդպես լավ և այդքան փառավոր թղթի վրա արտագրված»։

Սկզբում դժվարանում էր կարդալ, հետո, ավելի ու ավել-

էի ոգևորվելով, բարձր ու եռանդուն մինչև վերջ կարդաց պոեմը։ Ամենասուր հառվածներին թագավորը ձեռքով նշան էր անում մինիստրին։ Մինիստրը փակում էր աչքերը սոսկումից։

— Ի՞նչ կասեք,— ասաց Նիկոլայը ընթերցումն ավարտվելուց հետո։— Ես վերջ կդնեմ այս այլասերվածությանը, սրանք տակավին հեռոfbr են, վերջին մեռցուկներ. ես արմատախիլ կանեմ դրանք։ Եթե ի՞նչ վարքի տեր է։

Մինիստրը, իհարկե, չգիտեր նրա վարքը, բայց մեջը մտքգալին ինչ-որ բան արթնացավ, և նա ասաց.

— Գեր-գերազանց, ձերդ մեծություն։

— Այս գնահատականը քեզ փրկեց, բայց քեզ պիտի պատժել՝ ի օրինակ մյուսներին։ Ուզո՞ւմ ես զինվորական ծառայություն։

Գոլեժանը լուռ էր։

— Ես քեզ զինվորական ծառայությամբ միշտ եմ տալիս մեղքդ քավելու։ Դե, ի՛նչ, ուզո՞ւմ ես։

— Ես պետք է հնազանդվեմ,— պատասխանեց Գոլեժանը։

Թագավորը մոտեցավ նրան, ձեռքը ուսին գրեց և, «Քո բախտը քեզնից է կախված. եթե ես մոռանամ, դու կարող ես ինձ գրել» ասելով՝ համբուրեց նրա ճակատը։

Ես տասն անգամ ստիպել եմ Գոլեժանին կրկնելու համբույրի պատմությունը. այնքա՞ն անհավանական էր թվում ինձ։ Գոլեժանը երդվում էր, որ դա ճշմարտություն է։

Թագավորի մոտից Գոլեժանին տարան Դիբիչի մոտ, որն ապրում էր հենց այդտեղ, պալատում։ Դիբիչը քնած էր, արթնացրին, նա դուրս եկավ հորանջելով և, կարդալով գրությունը, ֆլիգել-ադյուտանտին հարցրեց.

— Սա՞ է։

— Սա՛ է, ձերդ պայծառափայլություն։

— Դե լա՛վ, էլի՛ բան է, զինվորություն արեք. ես ամբողջ ժամանակ զինվորական ծառայության մեջ եմ եղել ու տեսնում եք՝ ինչի՛ եմ հասել, դուք էլ, կարող է, ֆելդմարշալ դառնաք...

Անտեղի, տափակ, գերմանական այդ կատակը Դիբիչի



համբույրն էր։ Գոլեժանին ճամբար տարան ու դարձրին զինվոր։

Անցավ մի երեք տարի, Գոլեժանը հիշեց թագավորի խոսքերը և նամակ գրեց նրան։ Պատասխան չեկավ։ Մի քանի ամիս անց նորից գրեց՝ դարձյալ պատասխան չկար։ Համոզված, որ իր նամակները տեղ չեն հասնում, նա փախավ. փախավ, որ անձամբ ներկայացնի խնդրագիրը։ Նա անզգույշ էր սպահել իրեն, Մոսկվայում տեսնվել էր ընկերների հետ, որոնք հյուրասիրել էին նրան. պարզ է, որ դա չէր կարող գաղտնի մնալ։ Տվերում նրան բռնեցին և, իբրև փախչող զինվոր, շղթայակապ, ոտքով գունդ ուղարկեցին։ Զինվորական դատարանը նրան դատապարտեց զորաշարքով ձաղկման, դատավճիռն ուղարկեցին թագավորին՝ ի Հաստատումն։

Գոլեժանն ուզում էր ինքնասպանություն գործել պատժից առաջ։ Բանտում երկար ժամանակ որևէ սուր գործիք ստանալով՝ նա կիսվեց մի հին զինվորի հետ, որը սիրում էր նրան։ Զինվորը հասկացավ Գոլեժանին և գնահատեց նրա ձգտումը։ Երբ ծերուին իմացավ, որ պատասխանը եկել է, նրան մի սվին բերեց և, հանձնելով, արցունքն աչքերին ասաց.

— Ինքս եմ սրել։

Թագավորը չէր կարգադրել պատժել Գոլեժանին։

Հենց այդ ժամանակ էլ նա գրեց իր սքանչելի բանաստեղծությունը.

Ես մեռնում էի
Անմխիթար,
Հաղթանակում էր
Ոգին իմ չար՝...

Գոլեժանին ուղարկեցին Կովկաս. այնտեղ նա, աչքի ընկնելով՝ ենթասպա կարգվեց։ Տարիներն անցնում-գնում էին. անելանելի, ձանձրալի վիճակն ընկճեց նրան. ոստիկանական պոետ դառնալ ու Նիկոլայի սխրագործությունները գովերգել՝ նա չէր կարող, մինչդեռ զինվորի ուսապարկից ազատագրվելու միակ ուղին դա՛ էր։

Ասենք, մի ուրիշն էլ կար, և նա գերադասեց այդ ուղին՝

իրեն խմելու տվեց։ Նա ունի «Հացօղունն» խորագրով սարսափելի մի բանաստեղծություն։

Նա խնդրեց իրեն փոխադրել Մոսկվայում գտնվող հրաձիգների գունդը։ Դա զգալիորեն բարելավեց նրա վիճակը, բայց արդեն դաժան թոքախտը կրծում էր կուրծքը։ Այդ ժամանակ էլ, մոտավորապես 1833 թվականին, ես ծանոթացա նրա հետ։ Մի չորս տարի էլ նա շարչարվեց ու մեռավ զինվորական հիվանդանոցում։

Երբ նրա ընկերներից մեկը եկավ դիակը խնդրելու, որ թաղեն, ոչ ոք չգիտեր նրա տեղը. զինվորական հիվանդանոցը դիակների վաճառք է կատարում, ծախում է դրանք համալսարանին, բժշկական ակադեմիային, կմախքներ է հանում և այլն։ Վերջապես նա նկուղում գտավ խեղճ Պոլեժաևի դիակը. նա ընկած էր մյուս դիակների տակ, առնետները կրծոտել էին նրա ոտքը։

Պոլեժաևի մահից հետո հրատարակեցին նրա երկերը, ուզում էին գրքում զետեղել զինվորական շինելով նրա նկարը։ Գրաքննությունը դա համարեց ոչ պատշաճ, և խեղճ տառապյալը ներկայացված է սպայական ծոպերիզավոր ուսադիրներով. նա աստիճանավորվել էր հիվանդանոցում։

# ՄԱՍ ԵՐԿՐՈՐԴ

## ԲԱՆՏ ԵՎ ԱՔՍՈՐ

(1834—1838)

### ԳԼՈՒԽ VIII

Մարգարեություն։ Օգարյովի ձերբակալությունը։ Հոգին։ Մասկվան լիբերալը։ Մ. Ֆ. Օրլովը։ Գերեզմանոց։

... Մի անգամ, 1834 թվականի գարնանը, առավոտյան եկա Վադիմի մոտ. ոչ ինքն էր տանը, ոչ էլ եղբայրներն ու քույրերը։ Բարձրացա վերևի նրա փոքր ոճնյակը և նստեցի գրելու։

Դուռը կամաց բացվեց ու ներս մտավ Վադիմի պատավ մայրը։ Նրա ոտնաձայնը հազիվ էր լսվում։ Հոգնած, հիվանդոտ՝ մոտեցավ բազկաթոռին ու նստելով ասաց.

— Գրե՛ք, գրե՛ք, եկա տեսնեմ՝ չի՞ եկել Վադյան. երեխաները գնացին զբոսնելու, այնպիսի մի դատարկություն է ներքևում, որ տխրություն ու վախ եկավ վրաս. ես այստեղ կնստեմ, ես ձեզ չեմ խանգարի, դուք ձեր գործն արեք։

Մատծկոտ էր նրա դեմքը, որի վրա տավորականից ավելի պարզ երևում էր անցյալ տառապանքների արտացոլումը և այն կասկածելի վեհերոտությունը. գալիքի հանդեպ, կյանքի նկատմամբ այն անվստահությունը, որ միշտ էլ մնում է մեծ, տևական ու բազում աղետներից հետո։

Մենք զրույցի բռնվեցինք։ Նա ինչ-որ բան էր պատմում Աքսորից։

— Շա՜տ տառապանք վիճակվեց ինձ, շա՜տ, տեսնես էլի ի՞նչ կգա գլխիս,— ավելացրեց նա՝ տարուբերելով գլուխը,— սիրտս ոչ մի լավ բան չի վկայում։

Ես հիշեցի, թե ինչպես այդ ծեր կինը, երբեմն լսելով մեր համարձակ պատմություններն ու ամբոխավարական

խոսակցությունները, ավելի էր գունատվում, լուռ հոգոց էր հանում, քաշվում մյուս սենյակը ու երկար ոչ մի բառ չէր ասում։

— Դո՜ւք և ձեր ընկերնե՜րը,— շարունակեց նա,— դուք ուղիղ դեպի կործանում եք գնում։ Կխորտակեք դուք Վադյային, ձեզ ու բոլորին։ Ախ, ես ձեզ էլ եմ սիրում որդուս պես։

Արցունքը գլորվում էր նիհարած այտի վրայով։

Ես լուռ էի։ Նա բռնեց ձեռքս և, ջանալով ժպտալ, ավելացրեց.

— Զբարկանաք, ջղերս քայքայվել են։ Ես ամեն բան հասկանում եմ, գնացեք ձեր ճամփով, ձեզ համար ուրիշ ճամփա չկա, իսկ եթե լիներ էլ՝ դուք բոլորդ այդ չէիք լինի։ Ես դա գիտեմ, բայց չեմ կարող հաղթահարել վախս, այնքան շատ դժբախտություններ եմ տարել, որ էլ ուժ չունեմ նորերին դիմանալու։ Տեսեք, հա՜, Վադյային ոչ մի խոսք չասեք այս մասին, նա կվշտանա, կսկսի հորդորել ինձ... Ահա՜ եկավ,— ավելացրեց նա, հապճեպ սրբելով արցունքները և հայացքով նորից խնդրելով, որ լռեմ։

Խե՜ղճ մայր, սո՜ւրբ, մե՛ծ կին։

Դա համազոր էր կորնելյան „gu'il mourût"[1]-ին։

Նրա մարգարեությունը շուտով իրականացավ։ Բարեբախտաբար, այս անգամ ամպրոպը նրա ընտանիքի կողքովն անցավ, բայց և շատ վշտացրեց ու վախեցրեց խեղճ կնոջը։

— Ո՞նց թե տարան,— հարցրի ես՝ անկողնուց վեր թռչելով ու շոշափելով գլուխս՝ հո քնիս մե՞ջ չեմ լսում։

— Ոստիկանապետը գիշերը եկավ թաղայինի ու կազակների հետ, ձեր գնալուց մի երկու ժամ հետո, վերցրեց թղթերը ու տարավ Ն. Պ.-ին։

Ասողը Օգարյովի սպասյակն էր։ Ես չէի կարողանում հասկանալ, թե ոստիկանությունն ի՞նչ պատրվակ էր հնարել։ Վերջին ժամանակներս ամեն ինչ հանգիստ էր։ Օգարյովն ընդամենը մի օր առաջ էր եկել... Եվ ինչո՞ւ նրան տարան, իսկ ինձ՝ ոչ։

[1] Երանի մեռա՜ծ լիներ՝ (ֆրանս.)։



Չէի կարող ձեռքերս ծալած նստել, հագնվեցի ու գուրս եկա տնից՝ առանց որոշակի նպատակի։ Գլխիս եկած առաջին գժբախտությունն էր դա։ Շատ վատ էի, ինձ տանջում էր անզորությունս։

Փողոցից փողոց թափառելիս՝ վերջապես միտս ընկավ ծանոթներիցս մեկը, որին իր հասարակական դիրքը հնարավորություն էր տալիս իմանալու, թե բանն ինչ է, գուցե՝ օգնելու։ Նա շատ հեռու էր ապրում՝ Վորոբյովյան դաշտից այն կողմ, ամառանոցում։ Նստեցի առաջին իսկ պատահած կառքն ու սլացա մոտը։ Առավոտվա ժամը յոթն էր։

Տարբերակս առաջ էինք ծանոթացել Վ.-ի հետ. նա բարձր հասարակության մեջ ճանաչված մարդ էր Մոսկվայում։ Դաստիարակությունն ստացել էր Փարիզում, հարուստ էր, խելք, կրթված, սրամիտ, ազատախոհ, դեկտեմբերի 14-ի գործով նստել էր Պետրոպավլովյան ամրոցում և մեկն էր ազատ արձակվածներից. աքսոր նա չտեսավ, բայց իր փառքը մնաց։ Նա ծառայում էր և գեներալ-նահանգապետի վրա մեծ ազդեցություն ուներ։ Իշխան Գոլիցինը սիրում էր ազատ մտքերի տեր մարդկանց, հատկապես, եթե նրանք այդ մտքերը լավ էին արտահայտում ֆրանսերեն. իշխանը ռուսաց լեզվից ուժեղ չէր։

Վ-ն մի տասը տարով մեծ էր մեզանից և զարմացնում էր մեզ իր գործնական գիտությունների, քաղաքական գործերի իր իմացությամբ, իր ֆրանսերեն պերճախոսությամբ ու իր լիբերալիզմի կրքոտությամբ։ Այնքա՜ն շատ բան գիտեր նա և այնքա՜ն հանգամանորեն, ի՞նչ համով պատմում էր. այնպե՜ս հաստատ, որոշակի էին նրա կարծիքները, ամեն ինչի համար ուներ պատասխան, խորհուրդ, լուծում։ Նա կարդում էր ամեն բան՝ նոր վեպեր, գիտական աշխատություններ, հանդեսներ, ոտանավորներ և, դրանից զատ, եռանդուն պարապում էր կենդանաբանությամբ, իշխանի համար գրում էր նախագծեր ու մանկական գրքերի պլաններ կազմում։

Նրա լիբերալիզմը զտարյուն էր, բարձրորակ, պատկանում էր Մոգենի ու գեներալ Կամարկի* միջև ընկած ձախակողմյան թևին։

Նրա առանձնասենյակի պատերին կախված էին բոլոր

հռչակավոր հեղափոխականների դիմանկարները՝ Հեմպեն-նից ու Բալիից մինչև Ֆիեսկի ու Արման Կարել*։ Հեղափոխական այդ պատկերակալի ետևում արգելված գրքերի մի ողջ գրադարան կար։ Կմախքը, թռչունների մի քանի խրտվիլակները, չորացրած երկկենցաղներն ու հեղուկի մեջ պահվող ներքին օրգանները խոհականության ու հայեցողության լուրջ երանգ էին սփռում առանձնասենյակի չափից ավելի շիկացած բնույթի վրա։

Մենք նախանձով էինք նայում նրա փորձվածությանը և մարդկանց ճանաչելու ունակությանը, առարկելու նուրբ ծաղրական նրա կերպը մեծ ազդեցություն ուներ մեզ վրա։ Մեր աչքին նա գործարար մի հեղափոխական էր, պետական մարդ in spe[1].

Վ.-ն տանը չէր։ Նա դեռ նախորդ երեկոյան գնացել էր քաղաք՝ իշխանի հետ հանդիպելու, սպասյակն ասաց, որ ժամուկեսից անպայման տանը կլինի։ Ես մնացի սպասելու։

Վ.-ի զբաղեցրած ամառանոցը հիասքանչ էր։ Առանձնասենյակը, որտեղ սպասում էի, ընդարձակ էր, բարձր առաստաղով և au rez-de-chaussée[2], հսկայական դուռը տանում էր դեպի պատշգամբ ու այգի։ Շոգ օր էր, այգուց ծառերի ու ծաղիկների բուրմունք էր գալիս, տան առաջ, հնչուն ծիծաղով, խաղում էին երեխաները։ Հարստություն, ունևորություն, լայնարձակություն, արև ու ստվեր, ծաղիկներ ու կանաչ... Իսկ, ա՛յ, բանտում նեղվածք է, տոթ, խավար։ Դառն մտքերով տարված շա՞տ էի նստել, թե քիչ՝ չգիտեմ, մեկ էլ հանկարծ սպասյակը ինչ-որ տարօրինակ ոգևորությամբ կանչեց ինձ պատշգամբից։

— Ի՞նչ է,— հարցրի ես։

— Եկե՛ք, խնդրեմ, այստեղ, նայեցե՛ք։

Զուզելով նեղացնել նրան, դուրս եկա պատշգամբ ու քար իմրեցի։ Շրջակա տների կեսը բոցավառվում էր, ասես բոլորը մեկեն էին բռնկվել։ Հրդեհը տարածվում էր աներևակայելի արագությամբ։

Ես մնացի պատշգամբում։ Սպասյակը մի տեսակ շղային բավականությամբ նայում էր հրդեհին, հետո էլ ասելով՝

[1] ապագայում (լատ.)։

[2] ներքևի հարկում (ֆրանս.)։



«Ա՛յ թե կուլ է տալիս, հիմի աջ կողմի էս տունն էլ կկրպվի, անպայմա՛ն կկպչի»։

Հրդեհն իր մեջ ինչ-որ հեղափոխական բան ունի. նա ծիծաղում է սեփականության վրա, համահարթում է ունեցվածքները։ Սպասավորը բնազդով ըմբռնել էր այդ։

Կես ժամ անց երկնակամարի մի քառորդը՝ ծածկվեց ծխով. ցածը՝ կարմիր, վերը՝ գորշ-սև։ Այդ օրը լրիվ վառվեց Լաֆերտովոն*։ Դա սկիզբն էր այն հրկիզումների, որոնք շարունակվեցին մոտ հինգ ամիս. դրանց մասին մենք դեռ կխոսենք։

Վերջապես Վ.-ն եկավ։ Լավ տրամադրության մեջ էր, բարի, սիրալիր. պատմեց ինձ հրդեհի մասին, որի կողքով էր անցել, ասաց, որ բոլորն էլ խոսում են, թե դա հրկիզում է, և կատակի տալով՝ ավելացրեց.

— Գուգաշովականություն է, ախպե՛ր, ա՛յ, կտեսնեք՝ մենք էլ ձեզ հետ չենք պրծնի, ցցի կհանեն...

— Մեզ ցցի հանելուց առաջ,— պատասխանեցի ես,— վախենում եմ շղթայակապ անեն։ Գիտե՞ք, որ այս գիշեր ստիկանությունը ձերբակալել է Օգարյովին։

— Ոստիկանությո՞ւնը, ի՞նչ եք ասում։

— Դրա համար էլ եկել եմ ձեզ մոտ։ Գիտի մի բան անել, գնացեք իշխանի մոտ, իմացեք ինչ է եղել, նրան տեսնելու թույլտվություն խնդրեցեք ինձ համար։

Պատասխան չստանալով՝ նայեցի Վ.-ին, բայց դեմս ասես ինքը չէր, իր մեծ եղբայրն էր, դեմքը՝ ծռմռված, դիմագծերը՝ վհատ։ Նա ախուվախ էր անում ու անհանգստանում։

— Ի՞նչ եղավ։

— Ախր, ես ձեզ ասում էի, միշտ էլ ասում էի, թե այդ ո՞ւր կհասցնի... Այո՛, այո՛, դա պիտի լիներ, ահավասիկ, հոգով-մարմնով անմեղ եմ, բայց, ա՛յ, ինձ էլ կնստեցնեն։ Հանաք բան չէ, ես գիտեմ ի՞նչ է բանտախուցը։

— Դուք կգնա՞ք իշխանի մոտ։

— Տե՛ր աստված, ինչո՞ւ գնալ։ Ես ձեզ բարեկամաբար խորհուրդ եմ տալիս՝ իսկի մի էլ խոսեք Օգարյովի մասին, ապրեք, ինչքան կարող եք, սուսուփուս, թե չէ՝ վատ կլինի։ Դուք չգիտեք որքան վտանգավոր է այդ բոլորը. անկեղծ մի

խորհուրդ՝ ձեզ հեռու պահեք, ինչքան էլ դեմ ու դեն ընկնեք՝ Օգարյովին չեք օգնի, բայց ինքներդ կընկնեք։ Ա՜յ թե ինչ բան է ինքնակալությունը՝ ի՞նչ իրավունք, ի՞նչ պաշտպանություն. փաստաբաններ, դատավորներ կա՞ն որ։

Այս անգամ ես հակված չէի լսելու նրա համարձակ կարծիքներն՝ու խիստ դատողությունները։ Վերցրի գլխարկս ու գնացի։

Տանը բոլորն էլ հուզմունքի մեջ էին։ Հայրս արդեն բարկացած էր վրաս Օգարյովի ձերբակալության համար, Սենատորն արդեն եկել էր, քրքրում էր գրքերս, ջոկում իր կարծիքով վտանգավորները և դժգոհ էր։

Սեզանին տեսա Մ. Ֆ. Օրլովի երկտողը. ինձ ճաշի էր կանչում։ Չի՞ կարող, արդյոք, նա՛ մի բան անել։ Թեև եղածից արդեն դաս առել էի, բայց, համենայն դեպս, փորձ փորձանք չէ, հարցնելը՝ հանցանք։

Միխայիլ Ֆյոդորովիչ Օրլովը նշանավոր Բարօրության միության հիմնադիրներից էր, և եթե Սիբիր չընկավ՝ ոչ թե իր մեղքն էր, այլ եղբոր*, որը վայելում էր Նիկոլայի առանձնահատուկ բարեկամությունը և դեկտեմբերի 14-ին իր հեծյալ գվարդիայով առաջինն էր հասել Ձմեռային պալատի պաշտպանությանը։ Օրլովին քշել էին իր գյուղերը, մի քանի տարի անց թույլ էին տվել բնակվելու Մոսկվայում։ Գյուղում մենության մեջ ապրելիս նա զբաղվել էր քաղաքատնտեսությամբ և քիմիայով։ Երբ ես առաջին անգամ հանդիպեցի նրան՝ խոսում էր քիմիական նոր համակարգումից։ Բոլոր եռանդուն մարդկանց մեջ, ովքեր ուշ են սկսում զբաղվել որևէ գիտությամբ, ի հայտ է գալիս «կահույքը» վերադասավորելու և յուրովի տնօրինելու հավակնություն։ Նրա այդ համակարգումն ավելի բարդ էր, քան ընդհանուր ճանաչում գտած ֆրանսիականը։ Ես ուզում էի գրավել նրա ուշադրությունը և, իբրև captatio benevolentiae[1], սկսեցի ապացուցել, որ իր համակարգումը լավ է, բայց նախկինն ավելի լավն է։

Օրլովը մի քիչ վիճեց, հետո համաձայնվեց։

Իմ կոկետությունը հասավ նպատակին, այն ժամանակվանից մենք նրա հետ մոտիկ հարաբերությունների մեջ

[1] հաճոյացում (լատ.)։



ենք։ Նա իմ մեջ տեսնում էր աճող հնարավորություն, ես նրա մեջ՝ մեր կարծիքների հին զինվորին, մեր հերոսների բարեկամին, ազնիվ մի երևույթ մեր կյանքում։

Եղբայր Օրլովը նմանվում էր վանդակում փակված առյուծի. ամենուր զարնվում էր վանդակի ճաղերին, ոչ մի տեղ նրա համար ոչ ասպարեզ կար, ոչ գործ, իսկ գործունեության ծարավը տոչորում էր նրան։

Ֆրանսիայի անկումից հետո ես բազմիցս հանդիպել եմ այդ տեսակ մարդկանց, մարդիկ, որոնք քայքայվում էին քաղաքական գործունեության անբավարարվածությունից և հնարավորություն չունեին իրենց տեղը գտնելու առանձնասենյակի չորս պատերի մեջ կամ ընտանեկան կյանքում։ Նրանք անկարող են մենակ լինել. մենակության մեջ նրանց համակում է մելամաղձոտությունը, նրանք դառնում են քմահաճ, կռվում-խռովում են իրենց վերջին ընկերների հետ, ամենուր տեսնում են իրենց դեմ ուղղված խարդավանքներ և իրենք էլ դավեր են նյութում, որպեսզի բացահայտեն այդ բոլոր չեղյալ նենգությունները։

Նրանց օդի չափ պետք է բեմ և հանդիսատես. բեմի վրա նրանք իրո՛ք հերոսներ են և կատանեն անտանելին։ Նրանց անհրաժեշտ է աղմուկ, որոտ, շռինգ, նրանք ուզում են ճառասել, լսել թշնամիների առարկությունները, նրանց անհրաժեշտ է պայքարի բորբոքում, վտանգի տենդ. առանց այդ կոնֆորտատիվների[1] նրանք թախծում են, թոշնում, թեքթափ լինում, ծանրանում են, փորձում դուրս պրծնել, սխալներ են անում։ Այդպիսին է Լեդրյու-Ռոլենը, որը, ի դեպ, դեմքով էլ հիշեցնում է Օրլովին, հատկապես այն ժամանակվանից, երբ բեղ թողեց։

Օրլովը լավ տեսք ուներ. բարձր հասակը, վեհ կեցվածքը, առնական գեղեցիկ դիմագծերը, լրիվ մազաթափ գլուխը,— այս բոլորը, ներդաշնակությամբ համաձայն՝ նրա արտաքինին տալիս էին անդիմադրելի գրավչություն։ Նրա անդրին pendant[2] Ա. Ֆ. Երմոլովի անդրուն, որին մոայլ քառակուսի ճակատը, ճերմակ մազերի խուրձը և հեռուները թափանցող հայացքը տալիս էին մարտերում ծերացած զորավարի այն

[1] ամրապնդող միջոցներ (ֆրանս. confortativ բառից)։
[2] նման է (ֆրանս.)։

գեղեցկությունը, որին սիրահարվեց Մարիա Կոչուբեյը՝ հանձին Մազեպայի։

Օրլովը ձանձրույթից չգիտեր ի՞նչ ձեռնարկել։ Նա փորձեց և՛ բյուրեղապակու գործարան բանեցնել, ուր նկարադրված միջնադարյան ապակի էր պատրաստվում, որը վաճառում էր վնասով, և՛ գիրք գրել «վարկի մասին»,— ո՛չ, դրանք իր սրտի ուզած բաները չէին, բայց ուրիշ ելք չկար։ Առյուծը դատապարտված էր աննպատակ թափառելու Արբատի ու Բասմաննայայի միջև՝ չհանդգնելով անգամ ազատություն տալ լեզվին։

Մահու չափ ցավալի էր տեսնել գիտնական, տեսաբան դառնալու ճիգ թափող Օրլովին։ Հստակ ու փայլուն խելք ուներ նա, բայց ոչ ամենևին հայեցողական, իսկ այստեղ խճճվում էր վաղուց հայտնի առարկաների համար հորինված զանազան նորագյուտ համակարգերի մեջ, ինչպես որ քիմիական համակարգում։ Ոչ մի վերացական բան իսպառ չէր հաջողվում նրան, բայց նա կատաղի կրքոտությամբ մետաֆիզիկա էր խաղում։

Խոսքի մեջ անզգույշ ու անզուսպ՝ նա անվերջ սխալներ էր անում. առաջին ապավորությամբ հրապուրվող,— տպավորություն, որ նրա մեջ դառնում էր ասպետորեն ազնիվ մի բան,— նա հանկարծ հիշում էր իր վիճակը ու կես ճանապարհից ետ կանգնում։ Դիվանագիտական այդ հակաքայլերը նրան ավելի քիչ էին հաջողվում, քան մետաֆիզիկան ու համակարգումը, և նա ձեռքը պարզում էր մի՛ ձգափոկի, երկրորդին, երրորդին՝ ջանալով շտկվել-ուղղվել։ Նրան հանդիմանում էին այդ բանի համար. մարդիկ այնքան մակերեսային ու անուշադիր են, որ ավելի շատ խոսքին են նայում, քան արարքներին, և առանձին սխալներին ավելի շատ են արժեք տալիս, քան բնավորության ամբողջականությանը։ Դե ո՞նց այստեղ մեղադրես մարդուն զգաստ ռեգուլյան տեսակետից*. հարկավոր է մեղադրել այն տխուր միջավայրը, որի պայմաններում ամեն մի ազնիվ զգացմունք փոխանցվում է իբրև մաքսանենգ ապրանք՝ փեշի տակ ու փակ դռան հետև. իսկ թե բարձրաձայն մի բան էլ ասացիր, զոր ու գիշեր պիտի մտածես՝ ուր որ է կերևա ոստիկանությունը...



Ճաշը ճոխ էր։ Ինձ վիճակվեց նստել գեներալ Ռաևսկու՝ Օրլովի աներձագի կողքին։ Ռաևսկին նույնպես դեկտեմբերի 14-ին շնորհազրկված էր։ Որդին նշանավոր Ն. Ն. Ռաևսկու՝ տասնչորսամյա պատանի, եղբոր հետ հոր կողքին էր նստած։ Ուրախությունից. հետագայում նա վերքերից մեռավ Կովկասում։ Ես նրան պատմեցի Օգարյովի մասին ու հարցրի, կարո՞ղ է և կուզենա՞, արդյոք, Օրլովը մի բան անել։

Ռաևսկու դեմքն ամպոտվեց, բայց դա ոչ թե լալկան ինքնապաշտպանության արտահայտություն էր, որ ես ոչ առավոտյան, այլ դառն հիշողությունների ու նողկանքի մի խառնուրդ։

— Ուզել-չուզելու հարց չէ,— պատասխանեց նա,— միայն թե կասկածում եմ, որ Օրլովը կկարողանա շատ բան անել. ճաշից հետո առանձնասենյակ անցեք, ես նրան ձեզ մոտ կբերեմ։ Ահա՛, ուրեմն,— ավելացրեց նա քիչ հետո,— ձեր հերթն էլ հասավ։ Այս տիղմը բոլորին կուլ կտա։

Հարցուփորձ անելով ինձ՝ Օրլովը նամակ գրեց իշխան Գոլիցինին, խնդրելով տեսակցություն։

— Իշխանը,— ասաց նա,— կարգին մարդ է. եթե ոչինչ էլ չանի, համենայն դեպս ճիշտը կասի։

Հաջորդ օրը ես գնացի պատասխանն ստանալու։ Իշխան Գոլիցինն ասել էր, որ Օգարյովը ձերբակալված է բարձրագույն հրամանով, որ նշանակված է հետաքննող հանձնաժողով, և որ ձերբակալման իրական առիթը եղել է հոմերիսի 24-ին տեղի ունեցած ինչ-որ խրախճանք, որի ժամանակ խառնակիչ երգեր են երգել։ Ես ոչինչ հասկանալ չէի կարողանում։ Այդ օրը իմ հոր անվանակոչությունն էր, [illegible] օրը ես տանն էի, Օգարյովն էլ մեզ մոտ էր։

Ես ծանր սրտով բաժանվեցի Օրլովից. նա ինքն էլ վատ էր. երբ ձեռքս մեկնեցի՝ վեր կացավ, գրկեց ինձ, ամուր սեղմեց իր լայն կրծքին ու համբուրեց։

Կարծես զգում էր, որ մենք բաժանվում ենք երկար ժամանակով։

Դրանից հետո ես նրան տեսել եմ մի անգամ, ուղիղ վեց տարի անց։ Նա հանգչում էր։ Դեմքի հիվանդագին արտահայտությունը, մտախոհությունը և նորահաս այլակերպությունը ցնցեցին ինձ. նա տխուր էր, զգում էր իր կործանու-

մը, գիտեր, որ գործերը խաթարվում են, ու ելք չէր տեսնում։ Մի երկու ամիս անց նա մեռավ. արյունը լերդացել էր ջղերում։

... Լյուցերնում զարմանալի մի հուշարձան կա. քանդակել է Տորվալդսենը՝ վայրի ժայռի մեջ։ Խոռոչում պառկած է մեռնող առյուծը. մահացու վիրավոր է, արյունը հոսում է վերքից, ուր ցցված է նետի կտորը. խիզախ գլուխը դրել է թաթին, տնքում է. հայացքը անտանելի ցավ է արտահայտում. շորս դին ամայություն է, ներքևում՝ լճակ. այդ բոլորը ծածկված է լեռներով, ծառերով, կանաչով. մարդիկ անցնում են՝ չկռահելով, որ այստեղ մեռնում է արքայական գազանը։

Մի անգամ, քարե տառապյալի առջև երկար նստած, հանկարծ հիշեցի իմ վերջին այցելությունը Օրլովին...

Օրլովի մոտից տուն գնալիս, երբ անցնում էի օբերոստիկանապետի տան կողքով, գլխումս միտք ծագեց՝ մտնել և Օգարյովի հետ տեսակցելու թույլտվություն խնդրել նրանից երես առ երես։

Ես օրումս չէի եղել ոչ մի ոստիկանական անձի մոտ։ Ինձ ստիպեցին երկար սպասել. վերջապես օբերոստիկանապետը դուրս եկավ։

Իմ խնդիրքը զարմացրեց նրան։

— Ի՞նչն է ձեր թույլտվություն հայցելու առիթը։

— Ազգակա՞նը,— հարցրեց նա՝ նայելով աչքերիս մեջ։

Ես չպատասխանեցի, բայց նույնպես նայում էի նոքին գերազանցության աչքերի մեջ։

— Ես չեմ կարող թույլտվություն տալ ձեզ,— ասաց նա,— ձեր ազգականը au secret[1]. Ե՞տ տիսոսոր։

... Անհայտությունն ու անկարողությունն սպանում էին ինձ։ Ընկերներիցս համարյա ոչ մեկը քաղաքում չէր, ոչ մի բան հնարավոր չէր իմանալ։ Թվում էր, ոստիկանությունը մոռացել կամ շրջանցել էր ինձ։ Շատ էր տաղտկալի, շա՞տ։ Բայց երբ ողջ երկինքը ծածկվեց գորշ ամպերով, և մոռանում էր աքսորի ու բանտի երկար գիշերը՝ վրան լուսավոր շող իջավ։

Խոր համակրանքի այն մի քանի խոսքը, որ ասաց տասնյոթամյա աղջնակը, որին ես երեխա էի համարում, վերանենց ինձ։

Առաջին անգամ է իմ պատումի մեջ հայտնվում կնոջ կերպարը... իսկն ասած՝ իմ ամբողջ կյանքում էլ է մեն-մի կնոջ կերպար հայտնվում։

Հպանցիկ, պատանեկան, զարնանային հրապուրանքներ, որ հուզում էին հոգիս, գունաթափվեցին, մշուշոտ պատկերների պես չքացան նրա առաջ. նորեր, ուրիշներ չեղան։

Մենք հանդիպեցինք գերեզմանոցում։ Նա կանգնած էր շիրմաքարին հենված ու խոսում էր Օգարյովի մասին, և իմ թախիծը խաղաղվեց։

— Յտեսություն մինչև վաղը,— ասաց նա և արցունքների միջից ժպտալով՝ ինձ մեկնեց ձեռքը։

— Մինչև վաղը,— պատասխանեցի ես... ու երկար նայեցի նրա անհետացող կերպարանքին։

1834-ի հուլիսի տասնինն էր։

## ԳԼՈՒԽ IX

Ներբակալություն։ Բարեխիղճը[1]։ Գրեչիստների ոստիկանական գրասենյակը։ Նոմապետական դատ։

... «Մինչև վաղը»,— կրկնում էի ես քուն մտնելիս... Հոգիս արտասովոր թեթև էր ու հանգիստ։

Գիշերվա ժամը երկուսին մոտ ինձ արթնացրեց հոր սենեկապանը. նա հանգնված չէր ու վախեցած տեսք ուներ։

— Ձեզ ինչ-որ մի սպա է ուզում։

— Ի՞նչ սպա։

— Չգիտեմ։

— Իսկ ես գիտեմ,— ասացի նրան ու վրան գցեցի խալաթը։

Դահլիճի դռան մեջ կանգնած էր զինվորական շինելով

1 Խիստ հսկողության տակ է (ֆրանս.)։



1 Բարեխիղճ (добросовестный)— այսպես էր անվանվում ցարական Ռուսաստանում ներբակալության ժամանակ ներկա գտնվող վկան։

փաթաթված մի կերպարանք. պատուհանի մոտ երևում էր փետրափնջով մի գլխարկ, ետևում էլի ինչ-որ մարդիկ կային. ես նշմարեցի կազակի փափախը։

Դա ոստիկանապետ Միլլերն էր։

Նա ինձ ասաց, որ զինվորական գեներալ-նահանգապետի, հրամանով, որն իր ձեռքին էր, ինքը պիտի զննի իմ թղթերը։ Բերեցին մոմերը։ Ոստիկանապետը վերցրեց բանալիները. թաղային ոստիկանն ու նրա հանձնակատարը սկսեցին քրքրել գրքերը, սպիտակեղենը։ Ոստիկանապետն զբաղվեց թղթերով. նրան ամեն բան կասկածելի էր թվում, նա ամեն ինչ առանձնացնում էր և հանկարծ, ինձ դառնալով, ասաց.

— Ես ձեզ կխնդրեի առայժմս հագնվել. դուք պիտի գաք ինձ հետ։

— Ո՞ւր,— հարցրի ես։

— Պրեչիստենի ոստիկանատուն,— պատասխանեց ոստիկանապետը հանգստացնող ձայնով։

— Իսկ հետո՞։

— Հետոյի մասին գեներալ-նահանգապետի կարգադրության մեջ ոչինչ չկա։

Սկսեցի հագնվել։

Այդ ընթացքում սարսափած ծառաներն արթնացրին մորս. նա իր ննջարանից իմ սենյակը նետվեց, բայց հյուրասենյակից դահլիճ տանող դռան մեջ կազակը կանգնեցրեց նրան։ Նա ճչաց, ես ցնցվեցի ու մոտ վազեցի։ Ոստիկանապետը թողեց թղթերն ու հետևիցս դահլիճ եկավ։ Նա ներողություն խնդրեց մորիցս, ներս թողեց նրան, հայհոյեց կազակին, որը մեղք չուներ, ու դարձավ թղթերին։

Ապա ներս մտավ Հայրս։ Նա գունատ էր, բայց չանում էր մնալ սառնասրտի իր դերում։ Տեսարանը դառնում էր ճնշող։ Մայրս նստել էր անկյունում ու լաց էր լինում։ Մերուկը ոստիկանապետի հետ խոսում էր անկարևոր բաներից, բայց նրա ձայնը դողում էր։ Ես վախենում էի, որ à la longue[1] չեմ դիմանա և չէի ուզում ինձ լաց լինելիս տեսնելու բավականությունը պատճառել ոստիկաններին։

[1] երկար (ֆրանս.)։



Ես քաշեցի ոստիկանապետի թևքը։

— Գնա՞նք։

— Գնանք,— ուրախությամբ ասաց նա։

Հայրս դուրս եկավ սենյակից ու մի բոպեից վերադարձավ. նա բերեց մի փոքրիկ սրբապատկեր, վիզս հագցրեց և ասաց, որ իր հայրը մեռնելիս դրանով օրհնել է իրեն։ Ես զգացված էի. այդ կրոնական ընծան ինձ ի ցույց դրեց ծեղունու սրտում եղած երկյուղի և հուզմունքի չափը։ Ես ծունկի եկա՝ երբ նա հագցնում էր սրբապատկերը. նա բարձրացրեց ինձ, գրկեց և օրհնեց։

Արծնապակյա սրբապատկերը Հովհաննես Կարապետի կտրված գլուխն էր՝ ափսեի մեջ։ Ի՞նչ էր դա՝ տիպա՞ր, խրա՞տ, թե՞ մարգարեություն, չգիտեմ, բայց սրբապատկերի խորհուրդը շանթահարեց ինձ։

Մայրս համարյա ուշագնաց էր։

Բոլոր ծառաները սանդուղքով ճանապարհում էին ինձ արցունքն աչքերին, նետվելով համբուրելու ինձ, իմ ձեռքերը. ես ողջ-ողջ մասնակցում էի իմ հուղարկավորությանը. ոստիկանապետը խոժոռվում էր և շտապեցնում։

Երբ դարպասից դուրս եկանք, նա հավաքեց իր անձնախումբը. նրա հետ էին չորս կազակ, երկու թաղային հսկիչ և երկու ոստիկան։

— Թույլ տվեք տուն գնամ,— ոստիկանապետին դիմեց դարպասի առաջ նստած մորուքավոր մարդը։

— Գնա՛,— ասաց Միլլերը։

— Էս ի՞նչ մարդ է,— կառք նստելիս հարցրի ես։

— Բարեխիղճն է։ Դուք գիտեք, որ առանց բարեխղճի ոստիկանությունը չի կարող տուն մտնել։

— Դրա համար էլ դուք նրան դարպասից դո՞ւրս էիք թողել։

— Դատարկ ձևականություն է։ Իզուր տեղը խանգարեցինք մարդու քունը,— նկատեց Միլլերը։

Մենք շարժվեցինք երկու հեծյալ կազակների ուղեկցությամբ։

Ոստիկանատանը ինձ համար հատուկ սենյակ չկար։ Ոստիկանապետը կարգադրեց մինչև առավոտ ինձ պահել գրասենյակում։ Նա ինքը ինձ բերեց այդտեղ, նետվեց բազ-

կաթոռին և, հոգնած հորանջելով, փնթփնթում էր. «Անիծյա՛լ ծառայություն. ժամը երեքից ձիավարժության եմ եղել, հիմա էլ, ահա, ձեզնով պրպղվեցի մինչև առավոտ. երևի արդեն ժամը չորսն է, իսկ վաղը ինձին պետք ներկայանալ զեկուցելուս։ «Մնաք բարով»,— ավելացրեց նա մի բոպե հետո ու դուրս գնաց։ Ենթասպան գուտը վրաս կոզակեց, ասելով, որ եթե պետք լինի՝ կարող եմ թակել։

Ես բաց աչի պառուհանը. օրն արդեն սկսվել էր, փչում էր վաղորդյան քամին. ենթասպայից ջուր խնդրեցի ու մի լրիվ թաս խմեցի։ Քնել մտքովս էլ չէր անցնում։ Ասենք, պառկելու տեղ էլ չկար. կեղտոտ կաշեպատ աթոռներից ու մի հատիկ բազկաթոռից բացի դրասենյակում միայն մի մեծ սեղան կար՝ վրան թղթեր թափված, մենկյունում էլ մի ուրիշ փոքրիկը՝ ավելի շատ թղթերով։ Եղնուկ ճրագը չէր կարողանում լուսավորել սենյակը, միայն նեռում էր առաստաղին երերվող լույսի մի պատ, որը գնալով աղոտանում էր լուսաբացից։

Ես նստեցի թաղային պրիստավի տեղը ու սեղանից վերցրի ձեռքս ընկած առաջին իսկ թուղթը՝ իշխան Գագարինի ճորտ սպասավորի թաղման գրությունը և բժշկական վկայագիրը, թե նա մեռել է համաձայն գիտության բոլոր կանոնների։ Առա մի ուրիշը՝ ոստիկանական կանոնագրություն էր։ Արագ աչքի անցկացրի և գտա մի հոդված, որտեղ ասված է. «Ձերբակալված ամեն ոք իրավունք ունի ձերբակալությունից երեք օր անց իմանալու սույնի պատճառը և կամ ազատ արձակվելուս։ Այս հոդվածը ես նկատի առա։

Մի ժամ անց լուսամուտից տեսա,- որ եկավ մեր ավագ սպասավորը և բարձ, վերմակ ու շինել բերեց ինձ։ Նա ինչոր բան էր խնդրում ենթասպային, հավանաբար՝ մուտս մտնելու թույլտվություն. ալեհեր մի ծերուկ էր դա, որի երկու թե երեք զավակներին ես կնքել էի գեռ երեխա ժամանակս։ Ենթասպան կոպտորեն ու կտրուկ մերժում էր նրան. կողքին կանգնած էր մեր կառապաններից մեկը։ Ես լուսամուտից ձայն տվի նրանց։ Ենթասպան իրար խառնվեց և նրանց հրամայեց հեռանալ։ Ծերուկը մինչև գոտկատեղը խոնարհվում էր ինձ ու լաց լինում. կառապանը,՝ մտրակելով ձիուն, հանեց գլխարկն ու սրբեց աչքերը. կառքը շարժվեց, ու արցունքները թափվեցին աչքերիցս։ Միրտս ափեափ լցվեց։ Դրանք առաջին ու վերջին արցունքներն էին բանտարկության ամբողջ ընթացքում։

Առավոտվա դեմ գրասենյակն սկսեց լցվել. հայտնվեց գրագիրը, որը դեռ երեկվանից հարբած էր՝ թոքախտավոր, շեկ, պզուկներով ծածկված, անասնակերպ-ալլասերված արտահայտությունը դեմքին մի արարած։ Հագին աղյուսագույն, ալլանդակ կարված, կեղտոտ, պլպլան ֆրակ էր։ Նրանից հետո եկավ մի ուրիշը՝ ենթասպայական շինելով, շափից դուրս անպարկեշտի մեկը։ Նա իսկույն դիմեց ինձ հարցով.

— Հը՛, թատրոնո՞ւմ եք բռնվել, ի՞նչ է։

— Ինձ ձերբակալել են տանը։

— Եվ ինքը՝ Ֆյոդոր Իվանովի՞չը։

— Ի՞նչ Ֆյոդոր Իվանովիչ։

— Գեղապետ Միլլերը։

— Այո՛, նա։

— Հասկանում ենք,— նա աչքով աբեց շեկին, որը լրիվ անտարբեր էր։ Կանտոնիստը շարունակեց խոսակցությունը. նա տեսավ, որ ես ձերբակալվել եմ ոչ կովարարության և ոչ էլ հարբեցողության համար ու կորցրեց իմ հանդեպ ողջ հետաքրքրությունը, իսկ գուցեև վախենում էր խոսքի բռնվել վոանգավոր դալանավորի հետ։

Քիչ անց երևացին քնաթաթախ ու քունը չառած զանազան ոստիկաններ, վերջապես՝ նաև հայլվորներ ու գանգատավորներ։

Հասարակաց տան մայրապետը գանգատվում էր գարեջրավաճառից, թե նա իր խանութում ժողովրդի առաջ անպատվել է իրեն ու էն էլ էնպիսի խոսքերով, որոնք ինքը, կին լինելով, չի կարող կրկնել պետերի ներկայությամբ։ Գարեջրավաճառը երդում էր ուտում, որ ինքը էդպիսի խոսքեր իսկի էլ չի ասել։ Մայրապետը երդվում էր, որ նա շատ անգամ է ասել էդ խոսքերը ու էն էլ շատ բարձր, ըստ որում, ավելացնում էր, որ նա վրա էր տվել իրեն խփելու, և եթե ինքը չկռանար՝ երեսը արյունլվիկ կաներ։ Գարեջրավաճառն ասում էր, թե նա, մեկ որ՝ չի վճարում պարտքը և երկրորդը՝ անպատվել է իրեն՝ սեփական խանութի մեջ ու, դեռ էդ քիչ

է, խոստացել է իր մարգիանց ձեռքով շանսատակ անել իրեն։

Մայրապետը, բարձրահասակ, փնթի, այտուցված աչքերով մի կին, գոռգոռում էր սուր, ճռճռան ձայնով և շատ-զանց շատախոսում։ Բուֆետապանն ավելի շատ միմիկայով ու շարժումներով էր ներգործում, քան խոսքերով։

Սողոմոն ոստիկանը, դատի փոխարեն, երկուսին էլ ուզածիդ պես հայհոյում էր։

— Կերել-կատազել են շները,— ասում էր նա։— Տո՛, անասունն՝ը, ձեններդ կտրեք, տեղներդ նստեք՝ քանի մենք աչքներս փակում ենք... Հլա մի սրա՞նց տեսեք, իրենք կռվում են ու գալիս պետերի հանգիստը խանգարում։ Դո՞ւ ինչ մի տիկին ես որ, հո առաջին անգա՞մը չի, տո՛, էնենց փեշակ ունես, որ առանց հայհոյանքի անունդ տալ չի լինի։

Գարեջրավաճառը գլխով արեց, ուսը վեր քաշեց՝ ի նշան խորին բավականության։ Ոստիկանը տեղն ու տեղը անցավ նրան.

— Դո՞ւ ինչ ես դախլի ետևից հաշում, շա՛ն մեկը, Սիբիր ես ուզո՞ւմ։ Կեղտո՛տ բերան, հլա դեռ ձե՞ռք էլ ես բարձրացնում, ճիպոտ ուտել չե՞ս ուզում...

Ինձ համար այս տեսարանն ուներ նորության ողջ հմայքը և ընդմիշտ մնաց հիշողությանս մեջ. դա իմ տեսած առաջին ռուսական նահապետական դատավարությունն էր։

Մայրապետն ու ոստիկանը գոռգոռում էին, մինչև որ թաղային պրիստավը ներս մտավ։ Սա, առանց հարցնելու, թե այդ մարդիկ ինչո՞ւ են այստեղ ու ի՞նչ են ուզում, գոռաց է՛լ ավելի կատաղի.

— Դո՛ւրս էստեղից, դո՛ւրս, ի՛նչ է, բազա՞ր է էստեղ, թե՞ կոնծանոց։

Վռնդելով «սրիկաներին», նա դարձավ ոստիկանին.

— Ամոթ չե՞ք անում, ինչի՞ եք թույլ տալիս էսպիսի անկարգություն, քանի՞ անգամ եմ ձեզ ասել, գրասենյակը հարգանքից ընկնում է։ Սրանից հետո ամեն մի տականք Սոդոմ կսարքի էստեղ։ Դուք շատ եք երես տալիս էդ խարդախներին։ Սա՞ ով է,— հարցրեց նա իմ մասին։

— Գալանավոր է,— պատասխանեց ոստիկանը.— Ֆյոդոր Իվանովիչն է բերել, էստեղ գրություն կա։



Պրիստավը արագ աչքի անցկացրեց գրությունը, նայեց ինձ, դժգոհությամբ ընդունեց սևեռուն ու անթարթ հայացքը, որ ես հառել էի նրա վրա՝ պատրաստվելով հակահարված տալու առաջին իսկ խոսքին, ու ասաց.

— Ներեցե՛ք։

Մայրապետի ու բուֆետապանի գործը նորից մեջտեղ եկավ. մայրապետը երդում էր պահանջում. եկավ քահանան, կարծեմ երկուսն էլ երդվեցին. ես վերջը չտեսա։ Ինձ ավագ ոստիկանապետի մոտ տարան՝ չգիտեմ ինչի համար. ոչ ոք ոչ մի խոսք չփոխանակեց հետս, հետո նորից բերին թաղային ոստիկանատուն, որտեղ ինձ համար սենյակ էր պատրաստված հենց դիտանոցի տակ։ Ենթասպան ասաց, որ եթե ուտել եմ ուզում՝ պիտի մարդ ուղարկեմ որևէ բան գնելու, որ պետական օրապարենը դեռ չի հատկացված ու դեռ մի երկու օր էլ չի հատկացվի. համ էլ, քանի որ օրապարենը երեք-չորս արծաթե կոպեկ արժի՝ լավ բանտարկյալները հրաժարվում են դրանից՝ ի շահ խնայողության։

Կեղտոտ բազմոցը դրված էր պատի տակ, արդեն կեսօրն անց էր, ես ահավոր հոգնություն էի զգում, նետվեցի բազմոցին ու մեռածի պես քնեցի։ Երբ արթնացա՝ հոգիս լիքի խաղաղված ու հանգիստ էր։ Վերջին ժամանակներս ես տանջահար էի եղել Օգարյովի մասին անտեղյակությունից, այժմ հերթն ինձ էլ հասավ, վտանգն արդեն հեռու չէր, բանել էր շուրջ բոլորս, ամպը կախվել էր գլխիս։ Այս առաջին հալածանքը մեզ համար ձեռնադրություն պիտի հանդիսանար։

## ԳԼՈՒԽ X

Դիտանոցի տակ։ Լիաթռչյան ոստիկանը։
Հրդիզդները։

Բանտին մարդ շուտ է սովորում, եթե քիչ թե շատ ներքին բովանդակություն ունի։ Վանդակի անդորրությանն ու կատարյալ ազատությանն ընտելանում ես արագ՝ ո՛չ մի հոգս, ո՛չ մի զբաղմունք։

Սկզբում գրքեր չէին տալիս. պրիստավը հավատացնում էր, թե տնից գրքեր բերել չի թույլատրվում։ Ես նրան խնդրե-

ցի գնել։ «Թե որքա՞ն ձեռնարկի, ինչ-որ քերականության լինի՝ թերևս կարելի է, թե ոչ՝ հարկավոր է գնահատելն հարկավոր։ Ցանձրությունից քերականություն կարդալու առաջարկությունը չափազանց ծիծաղելի էր, բայց, այնուամենայնիվ, ես երկու ձեռքով կառչեցի դրանից և խնդրեցի գրիստոսին գնել իտալերենի քերականությունն ու բառարանը։ Մոտս երկու կարմիր թղթադրամ կար. մեկը տվի նրան. նա անմիջապես հանձնակատարին ուղարկեց գրքերը բերելու և նրան տվեց ավագ ոստիկանապետին ուղղված իմ նամակը, որով ես, հիմնվելով կարդացածս հոդվածի վրա, խնդրում էի հայտնել ձերբակալության պատճառը կամ ազատ արձակել ինձ։

Գրիստավը, որի ներկայությամբ գրում էի նամակը, ինձ համոզում էր, որ չուշադրեմ։ «Իզուր է, ասում՝ ծկա, իզուր եք նեղություն տալիս գեներալին. անհանգիստ մարդիկ են, կասի։ Ձե՞զ կվնասեք, ոչ մի օգուտ էլ չի լինի»։

Երեկոյան եկավ ոստիկանը և ասաց, թե ավագ ոստիկանապետը կարգադրել է բանավոր հայտնել, որ ժամանակին ես կիմանամ ձերբակալության պատճառը։ Ապա գրպանից հանեց իտալերենի քերականության աղաստված գիրքը և, ժպտալով, ավելացրեց. «Ինչ լավ է, որ մեջը բառարան էլ կա. առանձին բառգրքույկ պետք չէ»։ Ավելացած մանրի մասին խոսք էլ չեղավ։ Ես ուզում էի նորից գրել ավագ ոստիկանապետին, բայց մինիստրությունն Հեմպդենի դեմ Գրեշիստինի ոստիկանատանը ինձ շատ զավեշտական թվաց։

Ձերբակալությունից մեկուկես շաբաթ հետո, երեկոյան մոտ ժամը տասին, եկավ կաքմահասակ, սևուկ ու չեշտ մի ոստիկան՝ հաղնվելու և հետաքննող հանձնաժողովին ներկայանալու հրամանը ձեռքին։

Մինչ ես հագնվում էի, տեղի ունեցավ հետևյալ զավեշտական-անախորժ դեպքը։ Ճաշը ինձ ուղարկում էին անից. ծառան ներքևում հանձնում էր հերթապահ ենթասպային, սա զինվորի միջոցով ուղարկում էր ինձ։ Խաղողի գինի թույլատրվում էր օրը կես շշից մի շիշ։ Ն. Սաղոնովը, օգտվելով այդ թույլտվությունից, ինձ ուղարկել էր մի շիշ հոյակապ «Թոհանիսբերգ»։ Զինվորն ու ես հաղորդցրինք եր-



կու մեխով բացել շիշը. խուրը հեռվից զգվեցրեց։ Ես ուզում էի վայելել այդ գինին մի երեք-չորս օր։

Գիտի՞ գանտում լինես, որ իմանաս, թե որքա՞ն երեխություն է մնում մարդուս մեջ և ինչպե՞ս կարելի է զվարճանալ-մխիթարվել մանրուքներով՝ մի շիշ գինուց մինչև պահանջի գլխին օրինակ խաղալը։

Ճաշս ոստիկանը գտավ իմ շիշը և պատնաղով ինձ՝ մի ցիլ խմելու թույլտվություն խնդրեց։ Ցավալի էր, բայց ես ասացի, որ շատ ուրախ եմ։ Մոտս քմպանակ չկար։ Այդ ճիվաղը վերցրեց շշի բաժակը, բերնեբերան լցրեց և տանց շունչ առնելու գլխին քաշեց. սպիրտային խմիչքներ ու գինի կամ տալու այդ ձևը կա միայն ռուսների ու լիհերի մեջ. մի շնչով բաժակ դատարկող կամ ըմպանակ կալ տվող մարդիկ ես ամբողջ Եվրոպայում չեմ տեսել։ Այդ բաժակի կորուստն ավելի զգալի դարձնելու համար շնչոտ ոստիկանը, թանձրանոտ կապույտ թաշկինակով շուրթերը սրբելով շնորհակալություն հայտնեց ինձ, հետո էլ ասելով. «Զտեսնվածի մարդու էր»։ Ես ատելությամբ նայեցի նրան և չարախնդրանքն ուրախանում էի, որ մարդիկ չէին պատվաստել ոստիկանին տավարի ծաղիկ, իսկ բնությունն էլ զուրկ չէր պահել նրան մարդու ծաղկից։

Գինիների այդ գիտակն ինձ բերեց Տվերյան բուլվարի գլխավոր ոստիկանատուն, մոցրեց կողքի գահլիճն ու մենակ թողեց։ Կես ժամ հետո ներսի սենյակից դուրս եկավ ծուլ ու բարեհոգի տեսքով հաստալիկ մի մարդ. նա թղթերով լցուն պայուսակը նետեց սեղանին և դատն վրա կանգնած ժանդարմին ինչ-որ տեղ ուղարկեց։

— Դուք,— ասաց նա ինձ,— հավանաբար, վերջերս ձերբակալված Օգաբյովի և մյուս երիտասարդների դործո՞վ եք։

Ես հաստատեցի։

— Մի թեթև լսել եմ,— շարունակեց նա։— Տարօրինակ գործ է, ոչ մի բան չեմ հասկանում։

— Ես երկու շաբաթ է այդ գործով բանտ եմ նստած և ոչ մարդ ոչ մի բան չեմ հասկանում, այլև պարզապես ոչինչ չգիտեմ։

— Այդ էլ հենց հիանալի է,— ասաց նա՝ հայացքը վրաս

սնեռելով,— և ոչինչ էլ մի իմացեք։ Դուք ինձ կներեք, ձեզ մի խորհուրդ տամ. դուք ջահել եք, ձեր արյունը դեռ եռ է գալիս, խոսել եք ուզում, դա փորձանք է. չմոռանաս, ուրեմն, որ դուք ոչինչ չգիտեք, ա՛յդ է փրկության միակ ճանապարհը։

Ես նայում էի նրան զարմանքով. նրա գեմքը ոչ մի վատ բան չէր արտահայտում. նա գլխի ընկավ և, ժպտալով, ասաց.

— Ես ինքս Մոսկվայի համալսարանի ուսանող եմ եղել տասներկու տարի առաջ։

Ներս մտավ մի պաշտոնյա. հաստլիկը նրան դիմեց որպես պետ և, ավարտելով իր հրամանները, դուրս եկավ ինքշանքով գլխով անելով ու մատը բերանին դնելով։ Ես հետո երբեք չհանդիպեցի այդ պարոնին և չգիտեմ ով էր. բայց նրա խորհրդի անկեղծությունը ես փորձեցի։

Ապա ներս մտավ ոստիկանապետը, ուրիշը, ոչ Ֆյոդոր Իվանովիչը, և ինձ հանձնաժողով տարավ։ Մեծ, բավական գեղեցիկ դահլիճում սեղանի շուրջ նստած էին մի հինգ հոգի, բոլորն էլ զինվորական համազգեստով, բացառությամբ սմքած մի ծերուկի։ Նրանք սիգար էին ծխում, ուրախուրախ խոսում էին իրար մեջ՝ համազգեստի կոճակներն արձակած ու բազկաթոռներին մեկնված։ Ավագ ոստիկանապետը նախագահում էր։ Երբ ես ներս մտա, նա դարձավ անկյունում հլու-հնազանդ նստած ինչ-որ մեկին ու ասաց.

— Տե՛ր հայր, չէի՞ք բարեհաճի։

Այստեղ միայն ես նկատեցի, որ անկյունում նստած էր ալեհեր մորուքով ու կարմրակապույտ դեմքով ծեր քահանան։ Քահանան ննջում էր, տուն էր ուզում, ինչ-որ ուրիշ բանի մասին էր մտածում ու հորանջում՝ ափով ծածկելով բերանը։ Ձայնը ծոր տալով ու մի քիչ երգեցիկ՝ նա սկսեց ինձ նորոգել. ասում էր, որ մեղք է թագավորի նշանակյալներից իսկությունը թաքցնելը, և որ անօգուտ բան է այդպես անկեղծ չլինելը, նկատի ունենալով ամենալուր ականջն ասածը։ Նա չմոռացավ անգամ վկայակոչել հավիտենական հնտվածները՝ «չիք իշխանութիւն որ զիցէ տուէալ յաստուծոյ» և «զկայսերն կայսեր»։ Վերջում ասաց, որ համբուրեմ սուրբ Ավետարանն ու ազնիվ խաչը՝ ի հաստատումն երդու-



մի,— որը, ի միջի այլոց, ես չէի տվել, ու ինքը չէր էլ պահանջել,— անկեղծորեն ու շիտակ բացել ողջ ճշմարտությունը։

Վերջացնելով, նա հապճեպ սկսեց փաթաթել Ավետարանն ու խաչը։ Ցինսկին, թեթևակի բարձրանալով, նրան ասաց, որ կարող է գնալ։ Դրանից հետո դարձավ ինձ ու հոգեոր խոսքը քաղաքացիականի վերածեց։

— Քահանայի խոսքերին ես կավելացնեմ մի բան. համոզվել, եթե ուզենայիք էլ՝ դուք չեք կարող։— Նա մատնացույց արեց թղթերի, նամակների, նկարների տրցակները, որ դեմքամբ թափված էին սեղանին։— Միայն անկեղծ խոստովանությունը կարող է թեթևացնել ձեր ճակատագիրը. ազատության մեջ կամ Բոբրույսկում, Կովկասում լինելը ձեզնից է կախված։

Հարցերն առաջադրվում էին գրավոր. մի քանիսի միամտությունը ապշեցուցիչ էր։ «Չգիտե՞ք, արդյոք, որևէ գաղտնի ընկերության գոյության մասին։ Չե՞ք պատկանում, արդյոք, որևէ ընկերության՝ գրական կամ այլ։ Ովքե՞ր են դրա անդամները, որտե՞ղ են նրանք հավաքվում»։

Այդ ամենին շատ հեշտ էր պատասխանել միայն մի ձևով։

— Դուք, տեսնում եմ, ոչինչ չգիտեք,— կարդալով պատասխանները՝ ասաց Ցինսկին։— Ես ձեզ նախազգուշացրի՝ դուք կբարդացնեք ձեր վիճակը։

Դրանով էլ ավարտվեց առաջին հարցաքննությունը։

... Ութ տարի անց հետաքննչական հանձնաժողովի շենքի մյուս կեսում իր գեղեցկուհի աղջկա հետ ապրում էր ժամանակին շատ հրապուրիչ մի կին՝ նոր ավագ ոստիկանապետի քույրը։

Ես այցելում էի նրանց և ամեն անգամ անցնում այն դահլիճով, որտեղ Ցինսկին իր գործակիցների հետ դատ ու դատաստանի էր ենթարկում մեզ. դահլիճում այն ժամանակ և հետո էլ կախված էր Պավելի նկարը. արդյո՞ք ի հիշեցումն այն բանի, թե ինչ աստիճանի կարող են նվաստացնել մարդուն ապերասանությունն ու իշխանության չարաշահումը, թե՞ ոստիկաններին ամեն տեսակ վայրագության թաքալերելու համար՝ չգիտեմ, բայց նա այդտեղ էր՝ բարա-

լիկ ձեռնափայտով, կճատ քթով ու խոժոռադեմ. ես ամեն անգամ կանգ էի առնում այդ նկարի առաջ, այն ժամանակ՝ կալանավոր, այժմ՝ հյուր։ Կողքի փոքրիկ հյուրասենյակը, որտեղ ամեն ինչ կնոջ ու գեղեցկության շնչով էր տոգորված, մի տեսակ չէր պատշաճում խստությունների ու հետաքննությունների տանը. ես այնտեղ անհարմարության զգացում ունեի և մի տեսակ ափսոսում էի, որ հիանալի փիթած ծաղիկն ընկել էր բանտասենյակի աղյուսե տխրամած. պատի վրա։ Մեր զրույցները և նրանց մոտ հավաքվող բարեկամների փոքրիկ շրջանում տեղի ունեցող զրույցներն այնպե՞ս հեգնալից էին հնչում, այնպես զարմանալի էին այդ պատերի ներսում, որոնք սովոր էին լսելու հարցաքննություններ, մատնություններ, համատարած խուզարկությունների մասին զեկույցներ,— այդ պատերի, որոնք բաժանում էին մեզ ոստիկանների փսփսոցներից, կալանավորների հառաչանքներից, ժանդարմների կոշկախթանների և ուրալյան կազակի թրի զրնգոցից...

Մեկ կամ երկու շաբաթից նորից եկավ չեչոտ ոստիկանը ու նորից բերեց ինձ Ցինսկու մոտ։ Գավթում նստած ու պառկած էին մի քանի մարդ՝ շղթայակապ, հրացանակիր զինվորներով շրջապատված, նախասենյակում նույնպես կար տարբեր խավի պատկանող մի քանի մարդ՝ առանց շղթաների, բայց խիստ հսկողության տակ։ Ոստիկանն ինձ ասաց, որ սրանք բոլորը հրկիզողներ են։ Ցինսկին հրդեհի վայրում էր, պետք էր սպասել նրա վերադարձին։ Մենք եկանք երեկոյան մոտ ժամը տասին. գիշերվա մեկն էր, ինձ դեռ ոչ ոք չէր հարցրել, և ես դեռ շատ հանգիստ նստած էի նախասենյակում՝ հրկիզողների հետ։ Նրանցից մերթ մեկին էին կանչում, մերթ՝ մյուսին, ոստիկանները ետ ու առաջ էին վազվզում, շղթաները զրնգում էին, զինվորները ձանձրույթից շրխկացնում էին հրացաններն ու վարժություններ անում։ Ժամը մեկից հետո եկավ Ցինսկին, մրի մեջ կորած, և առանց կանգ առնելու վազեց առանձնասենյակ։ Անցավ մի կես ժամ, իմ ոստիկանին ներս կանչեցին. նա ետ եկավ գույնը գցած, շփոթված, դեմքի չղաձիգ ցնցումներով։ Նրա ետևից Ցինսկին գլուխը դուրս հանեց դռնից ու ասաց.



— Իսկ ձեզ, monsieur Գ., հանձնաժողովը, լրիվ, ողջ երեկոն սպասում էր, այս պիտարը ձեզ այստեղ է բերել, ինչպես պետք էր տանել իշխան Գոլիցինի մոտ։ Ես ափսոսում եմ, որ դուք այստեղ սպասել եք այդքան երկար, բայց դա իմ մեղքը չէ։ Ի՞նչ կհրամայեք անել այսպիսի ենթակաների հետ, հիսուն տարի է ծառայում է՝ նույն հաստագլուխն է։— Դե հիմի կորի տո՛ւն,— ավելացրեց նա՝ կոպտացնելով ձայնը ու գանալով ոստիկանին։

Ոստիկանն ամբողջ ճանապարհին կրկնում էր. «Տե՛ր աստված, էս ի՞նչ փորձանք էր, մարդու մտքովն էլ չի անցնում, թե ինչ է գալու իր գլխին. ա՛յ, հիմա կյանքս կուտի։ Ես քան չէր անի, եթե ձեզ էնտեղ չսպասեին, ախր, դա նրա համար խայտառակություն է. տե՛ր աստված, էս ի՞նչ դժբախտություն էր»։

Ես նրան ներեցի հռենոսյան գինին, մանավանդ երբ ինձ ասաց, թե ինքը մի անգամ Լիսաբոնի մոտ խեղդվելիս ավելի քիչ էր վախեցել, քան հիմա։ Վերջին հանգամանքն այնքան անսպասելի էր, որ մի խելագար ծիծաղ բռնեց ինձ։

— Էդ ո՞նց եք Լիսաբոն ընկել, ո՞նց թե, էդ ինչե՞ր եք ասում,— հարցրի նրան։

Մեքուկը մի քսանհինգ տարի առաջ ծովային սպա էր եղել։ Չի կարելի չհամաձայնել մինիստրի հետ, որը կապիտան Կոպեյկինին* հավատացնում էր, թե Ռուսաստանում, որոշ առումով, ոչ մի ծառայություն անհատույց չի մնում։ Թախտը նրան փրկել էր Լիսաբոնում, որպեսզի քառասնամյա ծառայությունից հետո Ցինսկին հայհոյեր նրան՝ ասց որ մի լակոտի։

Ախր, նա համարյա մեղք չուներ։

Հետաքննչական հանձնաժողովը, որ կազմել էր գեներալ-նահանգապետը, դուր չեկավ թագավորին. նա նշանակեց նոր հանձնաժողով՝ իշխան Սերգեյ Միխայլովիչ Գոլիցինի նախագահությամբ։ Այդ հանձնաժողովի անդամներն էին՝ Մոսկվայի պարետ Ստաալը, մյուս իշխան Գոլիցինը, ժանդարմական գնդապետ Շուբինսկին և նախկին զինվորական դատախազ Օրանսկին։

Ավագ ոստիկանապետի հրամանում ասված չէր, թե

հանձնաժողովը փոխված է. շատ բնական էր, որ լիսաբոնյան ոստիկանն ինձ Ցինսկու մոտ տարավ...

Ոստիկանատունը նույնպես մեծ տագնապի մեջ էր. մի երեկոյի ընթացքում երեք հրդեհ էր տեղի ունեցել, և հանձնաժողովից էլ երկու անգամ մարդ էին ուղարկել իմանալու, թե ես ինչ եղա, հո չե՞մ փախել։ Ցինսկու պակաս թողած լուտանքը լիսաբոնցու գլխին թափեց թաղային պրիստավը, և այդպես էլ պիտի լիներ, որովհետև ինքն էլ մասամբ մեղավոր էր, քանի որ չէր տեղեկացել, թե ինձ հատկապես որտեղի՛ց են պահանջել։ Գրասենյակում, անկյունում, ինչ-որ մեկը պառկել էր աթոռների վրա ու տնքում էր. նայեցի՝ գեղեցիկ արտաքինով ու մաքուր հագնված մի երիտասարդ էր. արյուն էր թքում ու հեծում էր. ոստիկանատան բուժակը խորհուրդ էր տալիս լույսը բացվելուն պես նրան հիվանդանոց տանել։

Երբ ենթասպան ինձ իմ սենյակը տարավ, ես նրանից կորզեցի վիրավորի պատմությունը։ Դա մի պաշտոնաթող գվարդիական սպա էր, սիրային կապ էր ունեցել ինչ-որ սպասուհու հետ և նրա մոտ էր եղել, երբ բռնկվել էր կողաշենքը։ Դա հրկիզումների պատճառած ամենամեծ երկյուղի շրջանն էր. իսկապես էլ, օր չէր անցնում, որ ես մի երեք-չորս անգամ ահազանգի ձայն չլսեի. պատուհանից ամեն գիշեր երկու-երեք հրացոլք էի տեսնում։ Ոստիկանությունն ու բնակիչները գազազած փնտրում էին հրկիզողներին։ Սպան, ազգկան անվանարկած չլինելու համար, հենց որ տաքնապն սկսվել էր, անցել էր ցանկապատի վրայով ու թաքնվել հարևան տան մարագում, սպասելով հարմար պահի, որ դուրս գա։ Թակում մի փոքրիկ աղջիկ տեսել էր նրան և առաջինը տեղ հասած ոստիկաններին ասել, թե հրկիզողը թաքնվել է մարագում։ Նրանք ամբոխի հետ նետվել էին այնտեղ ու հանդիսավորությամբ քաշել-հանել էին սպային։ Նրանք այնպես հիմնավոր ծեծ էին տվել, որ հաջորդ օրը առավոտյան կողմ նա մեռավ։

Սկսվեց բռնված մարդկանց ստուգումը. կեսին բաց թողին, մյուսներին համարեցին կասկածելի։ Ոստիկանապետ Բրյանչանինովն ամեն առավոտ գալիս էր ու երեք-չորս ժամ հարցաքննում։ Երբեմն հարցաքննվողներին մտրակահարում



էին կամ ծեծում. նրանց վայնասունը, ճիչը, աղաչանքը, կազկանձը, կանացի թառանչը, ոստիկանապետի սուր ձայնի ու գրագրի միապաղաղ ընթերցանության հետ միասին, հասնում էին ինձ։ Ահավոր, անտանելի բան էր դա։ Գիշերները երազումս լսում էի այդ ձայները և սարսափահար զարթնում, խորհելով, որ այդ տառապյալները ինձնից մի քանի քայլ այն կողմ պառկած են ծղոտի վրա, շղթայակապ, մեջքները բզկտված ու ջարդոտված և, հավանաբար, առանց սրբի մեղքի։

Իմանալու համար, թե ինչ բան են ռուսական բանտը, ռուսական դատարանն ու ոստիկանությունը՝ պետք է լինել մուժիկ, ճորտ, արհեստավոր կամ քաղքենի։ Քաղաքական կալանավորներին, որոնք մեծ մասամբ ազնվականությանն են պատկանում, պահում են խստորեն, պատժում են վայրագորեն, բայց նրանց վիճակը ոչ մի համեմատության մեջ չի կարող դրվել թշվառ մորուքավորների վիճակի հետ։ Սրանց հետ ոստիկանությունը ձևականություններ չի անում։ Մուժիկը կամ արհեստավորը հետո ո՞ւմ մոտ է գանգատի գնալու որ, որտե՞ղ կգտնի արդար դատ ու դատաստան։

Ռուսական դատարանի և ռուսական ոստիկանության չարգազանցությունը, գազանությունը, կամայականությունն ու ապականությունը այնպիսին են, որ դատի տակ ընկած հասարակ մարդը ոչ թե դատարանի պատժից է վախենում, այլ դատավարությունից։ Նա անհամբեր սպասում է, թե ե՛րբ են իրեն Սիբիր ուղարկելու. նրա նահատակությունը վերջանում է պատիժը սկսվելուն պես։ Այժմ հիշենք, որ երեք քառորդը այն մարդկանց, որոնց ոստիկանությունը բռնում է կասկածելով, դատով ազատվում է, և որ նրանք ճաշակում են նույն խոշտանգումները, ինչ որ մեղավորները։

Պյոտր III-ը վերացրեց զնդաններն ու գաղտնի գրասենյակը։

Եկատերինա II-ը վերացրեց տանջաքննությունը։

Ալեքսանդր I-ը մի անգամ ևս վերացրեց այն։

Օրենքով՝ «վախից» տրված պատասխանները հաշվի չեն առնվում։ Մեղադրյալին տանջաքննող պաշտոնյան ինքն է պատի ու ուխտ պատժի ենթարկվում։

Եվ Ռուսաստանով մեկ՝ Բերինգի ծոցից մինչև Տաուրո-

գեն, մարդկանց խոշտանգում են. այնտեղ, ուր վտանգավոր է ճիպոտահարելը, տանջում են անտանելի տապով, ծարավով, աղի կերակուրով. Մոսկվայում ոստիկանությունը ինչոր մեղադրյալի տասը աստիճան սառնամանիքին ոտաբոբիկ կանգնեցրել է չուգունե հատակին. նա հիվանդացել է ու մեռել հիվանդանոցում, որի պետը այդ դեպքի մասին վերդովմունքով խոսող իշխան Մեշչերսկին էր։ Ջոջերը գիտեն այդ բոլորը, նահանգապետները կոծկում են, կառավարող սենատը թողություն է տալիս, մինիստրները լռում են. թագ'որն ու սինոդը, կալվածատերերն ու ոստիկանները, բոլորն էլ համաձայն են Սելիֆանի ասածին. «Իսկ ինչի՞ մուժիկին չծեծել որ, մուժիկին մեկ-մեկ քոթակելը պետք է»։

Հրդեհումները հետաքննելու համար նշանակված հանձնաժողովը մոտ վեց ամիս շարունակ դատում էր, այսինքն՝ ծեծեց-ծեծեց ու ոչ մի բան չբացեց։ Թագավորը զայրացավ և հրամայեց երեք օրում գործն ավարտել։ Եվ երեք օրում էր գործն ավարտվեց. մեղավորները գտնվեցին և դատապարտվեցին մտրակահարության, խարանման ու տաժանակիր աքսորի։ Բոլոր տներից հավաքեցին դռնապաններին՝ «հրկիզողներին» ահեղ պատիժը տեսնելու։ Դա արդեն ձմռանն էր, և այդ ժամանակ ես Կրուտիցիի զորանոցներում էի։ Պատժին ներկա գտնված ժանդարմական ոստիսարը, բարի մի ծերուկ, ինձ պատմեց մանրամասնություններ, որոնք ես այժմ հաղորդում եմ։ Մտրակահարության դատապարտված առաջին մարդը բարձր ձայնով ասաց ժողովրդին, թե ինքը երդվում է, որ անմեղ է, թե ինքն էլ չգիտե ի՞նչ պատասխաններ է տվել ցավից ստիպված, ու հանեց շապկը և, մեջքով դառնալով բազմությանը, ավելացրեց. «սե՛ք, ուղղափառնե՛ր»։

Ամբոխը սարսափից հառաչեց. նրա մեջքը կապույտ-տավոր մի վերք էր, և հենց այդ վերքը պիտի մտրակարեին։ Հավաքված ամբոխի տրտունջն ու մռայլ տեսքը ոստիկանությանն ստիպեցին աճապարել, դահիճները սեղրին օրենքով սահմանված հարվածները, ոմանք լանը խփեցին, ոմանք էլ շղթայեցին ոտքերը, և գործն ավարտված էր թվում։ Այս տեսարանը, սակայն, ցնցեց բնակիչներին. Մոսկվայի բոլոր շրջաններում դրանից էին խոսում։



Գեներալ-նահանգապետն այդ մասին հայտնեց թագավորին։ Թագավորը հրամայեց նշանակել նոր դատ և հատուկ քննություն առնել պատժից առաջ բաղոք հայտնած հրկիզողի գործը։

Մի քանի ամիս անց ես թերթերում կարդացի, որ թագավորը, ցանկանալով փոխհատուցել մտրակով պատժված երիտասարդներին, հրամայել է յուրաքանչյուր հարվածի դիմաց նրանց երկուհարյուրական ռուբլի տալ և հատկացնել հատուկ անձնագիր, որը, չնայած խարանին, վկայելու էր նրանց անմեղությունը։ Մեկն այն հրկիզողն էր, որ գիտել էր ժողովրդին, իսկ մյուսը՝ նրա ընկերը։

1834 թվականին Մոսկվայում տեղի ունեցած հրկիզումների պատմությունը, որ մի տասը տարի անց արձագանք գտավ տարբեր գավառներում, մնում է առեղծված։ Որ հրկիզումներ եղել են՝ տարակույս չկա. առհասարակ կրակը, «կարմիր աքաղաղը», վրիժառության հույժ ազգային միջոց է մեզանում։ Շարունակ լսում ես աղալի դաստակերտը, խրճանոցը, ամբարը հրդեհելու մասին։ Բայց ի՞նչն էր հատկապես 1834-ին Մոսկվայում տեղի ունեցած հրդեհների պատճառը՝ ոչ ոք չգիտի և ամենից քիչ՝ հանձնաժողովի անդամները։

Թագադրության օրվա՝ օգոստոսի 22-ի նախօրեին ինչոր չարաճճիներ տարբեր տեղերում նամակներ էին գցել, որոնցով բնակիչներին հայտնում էին, որ հրավառության համար հոգ չտանեն, որ չուսավորություն կլինի։

Մոսկվայի վախվոտ պետերն իրար անցան։ Ոստիկանատունն առավոտից լցված էր զինվորներով, բակում կանգնած էր ուլանների հեծելավաշտը։ Երեկոյան հեծյալ ու հետիոտն պարեկներն անընդհատ շրջում էին փողոցներում։ Ֆեյերվերկատանում պատրաստ էր հրետանին։ Ոստիկանապետները ետ ու առաջ էին պտտում կազակների ու ժանդարմների հետ, ինքը՝ իշխան Դոլգոռուկին համհարզների ուղեկցությամբ ձիով շրջեց քաղաքում։ Համեստ Մոսկվայի այդ ռազմական տեսքը տարօրինակ էր և ազդում էր ջղերի վրա։ Ես մինչև ուշ գիշեր իմ դիտանոցի տակ պառկել էի պատուհանին ու բակ էի նայում... Ձիերից նոր փշած ուլանները փոսը-փոսը նստում էին ձիերի մոտ, մյուսները ձիերն էին

հեծնում. սպաները գնում-գալիս էին՝ արհամարհանքով նայելով ոստիկաններին. պլաց-համհարզները գալիս էին մտահոգ տեսքով, դեղին օձիքներով, և ոչինչ չարած ետ գնում։

Հրդեհներ չեղան։

Դրանից անմիջապես հետո ինքը՝ թագավորը եկավ Մոսկվա։ Նա դժգոհ էր մեր գործի հետաքննությունից, որ հենց նոր սկսվել էր, դժգոհ էր, որ մեզ թողել են քաղաքացիական ոստիկանության ձեռքը, դժգոհ էր, որ չէին գտել հրկիզողներին, մի խոսքով՝ դժգոհ էր ամեն ինչից ու ամենքից։

Մենք շուտով զգացինք բարձրագույն մերձավորությունը։

## ԳԼՈՒԽ XI

Կրուտիցիի զորանոցները։ Ժանդարմական պատմություններ։ Սպաները։

Թագավորի ժամանումից մի երեք օր հետո ուշ երեկոյան,— բոլոր այդ բաներն արվում են մթության մեջ, որպեսզի չանհանգստացնեն հասարակությանը,— ինձ մոտ եկավ ոստիկանական սպան՝ իրերս հավաքելու և իր հետ գնալու հրամանը ձեռքին։

— Ո՞ւր,— հարցրի ես։

— Կտեսնեք,— խելոք ու բարեկիրթ պատասխանեց ոստիկանը։ Դրանից հետո, պարզ է, ես չշարունակեցի խոսակցությունը, իրերս հավաքեցի ու գնացի։

Մենք գնացինք, գնացինք մոտ մեկուկես ժամ, վերջապես անցանք Սիմոնավանքը ու կանգ առանք քարակոփ ծանր դարպասի մոտ, որի առաջ քայլում էին կարաբինավոր երկու ժանդարմ։ Դա Կրուտիցիի վանքն էր, որը վերածվել էր ժանդարմական զորանոցի։

Ինձ տարան փոքր մի գրասենյակ։ Գրագիրները, համհարզները, սպաները,— բոլորը կապույտ էին։ Հերթապահ սպան, սաղավարտով ու լրիվ համազգեստով, ինձ խնդրեց սպասել և նույնիսկ առաջարկեց ծխել ծխամորճը, որ բռնել էի ձեռքիս։ Ապա սկսեց գրել կալանավորի ընդունման ստացականը. այն հանձնելով ոստիկանին, գնաց ու ետ եկավ մի ուրիշ սպայի հետ։

— Ձեր սենյակը պատրաստ է,— ասաց ինձ վերջինս,— գնա՞նք։

Ժանդարմը լապտերով ուղեկցում էր մեզ. մենք իջանք աստիճաններով, մի քանի քայլ բակով անցանք, փոքր դռնով մտանք երկար միջանցքը, որ լուսավորված էր մի լապտերով. երկու կողմերում դռնակներ կային, հերթապահ սպան բացեց դրանցից մեկը. այն տանում էր դեպի մի պստլիկ պահականոց, դրան կից էր խոնավ ու ցուրտ փոքր մի սենյակ, որից նկուղի հոտ էր գալիս։ Ինձ այստեղ բերած ուսապով սպան դիմեց ինձ ֆրանսերեն, ասելով, թե ինքը désolé d'être dans la nécessite[1] խուզարկելու իմ գրպանները, բայց, դե՛, զինվորական ծառայություն է, պարտականություն, ենթակայություն... Այս պերճախոս ներածականից հետո նա շատ հասարակ շուտ եկավ ժանդարմի կողմը և հայացքով ցույց տվեց ինձ։ Ժանդարմն իսկույն անասելի խոշոր ու կոշտ ձեռքը խոթեց գրպանս։ Ես հարգալից սպային ասացի, որ դրա հարկը բնավ չկա, որ ի՛նքս էլ շուտ կտամ բոլոր գրպաններս՝ առանց այդպիսի բռնի միջոցների։ Համ էլ, ի՞նչ կարող էր լինել մոտս մեկուկես ամսվա բանտարկությունից հետո։

— Գիտենք,— չտեսնված ինքնագոհ ժպիտով ասաց ուսակապով սպան,— մենք գիտենք ոստիկանատների կարգուկանոնը։

Հերթապահ սպան նույնպես կծու ժպտաց, այնուամենայնիվ ժանդարմին ասացին, որ նա միայն նայի, թե ի՛նչ կա. ես ունեցաս-չունեցածս հանեցի։

— Թափեք սեղանին ձեր թութունը,— ասաց սպան désolé[2]։

Ծխախոտիս քսակում թղթի մեջ փաթաթված մի փոքրիկ դանակ ու մի մատիտ կար. ես հենց սկզբից մտածում էի դրանց մասին և, սպայի հետ խոսելով, քսակն այնքան տնտղեցի, մինչև որ դանակը ձեռքս ընկավ. կտորի միջից

1 վշտացած է անհրաժեշտությունից (ֆրանս.)։
2 վշտացած (ֆրանս.)։

բռնեցի դանակն ու համարձակ սեղանին թափեցի ծխախոտը, ժանդարմը նորից տեղը լցրեց։ Դանակն ու մատիտը փրկված էին. ա՛յ քեզ մի դաս ուսակապով ժանդարմին՝ քաղաքացիական ոստիկանության հանդեպ ունեցած ամբարտավան արհամարհանքի համար։

Այս միջադեպը բարձրացրեց տրամադրությունս, ես ուրախ սկսեցի գնել իմ նոր տիրույթները։

Ճգնավորների խցերում, որոնք շինված էին երեք հարյուր ութարի առաջ ու գետնի մեջ էին խրվել, մի քանի աշխարհիկ խցեր էին սարքել քաղաքական կալանավորների համար։

Իմ սենյակում կար առանց ներքնակի մի մահճակալ, փոքրիկ մի սեղան՝ վրան ջրով լի բաժակ, առաջը՝ մի աթոռ, պղնձյա խոշոր աշտանակի մեջ վառվում էր բարակ ճարպամոմը։ Խոնավությունն ու ցուրտը ոսկորներիս էին հասնում. սպան կարգադրեց վառել վառարանը, ապա բոլորը գնացին։ Զինվորը խոստացավ շոր խոտ բերել. առայժմ, շինելը գլխիս տակ դնելով, պառկեցի մերկ մահճակալին ու ծխեցի ծխամորճս։

Մի որպես անց նկատեցի, որ առաստաղը ծածկված էր պրուսական ուտիճներով։ Նրանք վաղուց մոմ չէին տեսել և բոլոր ծայրերից վազում էին դեպի լուսավորված կողմը, հրմշտում իրար, իրարով անցնում, ընկնում սեղանին և ապա աճապարանքով ետ ու առաջ վազվզում սեղանի եզրով։

Ես չէի սիրում ուտիճներ, ինչպես առհասարակ ամեն տեսակ անկոշ հյուրեր. հարևաններս ահավոր նողկալի թվացին ինձ, բայց ոչինչ անել հնարավոր չէր,— հո չպիտի՞ գանգատվեի ուտիճներից,— և ջղերս հանդարտվեցին։ Ի միջի այլոց, մի երեք օր հետո բոլոր բլոճները տեղափոխվեցին միջնորմից այն կողմ, զինվորի մոտ, որտեղ ավելի տաք էր. պատահում էր, վազում-գալիս էր մեկը, մյուսը։ Բեղերը շարժում ու խեղճուն ետ դառնում՝ տաքանալու։

Ինչքան էլ խնդրեցի ժանդարմին, նա վառարանը, այնուամենայնիվ, փակեց։ Ես վատ էի զգում, գլուխս պտտվում էր, ուզում էի վեր կենալ ու թակել զինվորի պատը. իրոք,



վեր կացա, բայց այդքանով էլ ավարտվում է այն ամենը, ինչ հիշում եմ...

... Երբ ուշքի եկա՝ պառկած էի հատակին, գլուխս սաստիկ ցավում էր։ Բարձրահասակ, ալեհեր ժանդարմը, ձեռները ծալած, կանգնել ու ինձ էր նայում անիմաստ ուշադրությամբ, այն տեսքով, ինչպես հայտնի բրոնզե արձանիկները։ Շունը նայում է կրիային։

— Ածխահոտը կարգին բռնել էր ձեզ, ձերդ ազնվություն,— ասաց նա՝ տեսնելով, որ ուշքի եմ եկել։— Ձեզ համար աղով ու կվասով ծովաբողկ եմ բերել. արդեն տվել եմ՝ հոտ եք քաշել, հիմա էլ խմեցեք։

Ես խմեցի, նա ինձ բարձրացրեց ու դրեց անկողնուն. շատ վատ էի զգում, պատուհանը կրկնակի փեղկերով էր և առանց օդանցքի. զինվորը գնաց գրասենյակ՝ բակ դուրս գալու թույլտվություն խնդրելու. հերթապահ սպան կարգադրել էր ասել, որ ոչ գնդապետը, ոչ էլ համհարզը տեղում չեն, և ինքը պատասխանատվությունն իր վրա առնել չի կարող։ Ստիպված եղա մնալ ածխահոտ սենյակում։

Ես ընտելացա նաև Կրուտիցքի զորանոցներին, խոնարհելով իտալերենի բայերն ու ինչ-որ գրքույկներ կարդալով։ Սկզբում հսկողությունը շատ խիստ էր։ Երեկոյան ժամը իններին, ազդաշեփորի վերջին կանչի հետ, զինվորը մտնում էր սենյակ, մարում էր մոմը և կողպեքով փակում դուռը։ Երեկոյան ժամը տասից մինչև հաջորդ օրվա ութը ստիպված էի նստել մթության մեջ։ Ես երբեք էլ շատ չեմ քնել, չորս ժամվա քունը բանտում, անշարժության մեջ, ինձ լիովին բավական էր. ուրեմն ի՞նչ պատիժ էր մոմ չունենալը։ Եվ դեռ ժամապահներն էլ միջանցքի երկու կողմից քարոզ ժամը մեկ ձիգ ու զիլ գոռում էին՝ «լսի՞ր»։

Մի քանի շաբաթ անց գնդապետ Սեմյոնովը (նշանավոր դերասանուհի, հետագայում իշխանուհի Գագարինայի եղբայրը) թույլատրեց մոմը թողնել, արգելելով որևէ բանով ծածկել պատուհանը,— որը գետնից ցած էր, այնպես որ՝ ժամապահը կարող էր տեսնել կալանավորի սենյակում կատարվող ամեն բան,— և թույլ տվեց միջանցքում «լսի՞ր» գոռալ։

Հետո պարետը թանաքաման ունենալու և բակում զբոս-

նելու իրավունք տվեց մեզ։ Թուղթը տրվում էր հաշվով, այն պայմանով, որ ոչ մի թերթ չպակասեր։ Զբոսնել թույլատրվում էր օրը մեկ անգամ՝ ցանկապատով ու ժամապահների շղթայով շրջափակված բակում, զինվորի և հերթապահ սպայի ուղեկցությամբ։

Կյանքն ընթանում էր միապաղաղ, հանդարտ, զինվորական ճշտակատարությունը տալիս էր նրան մեխանիկական մի կանոնավորություն, որ նման էր ոտանավորի հատածին։ Առավոտյան ժանդարմի օգնությամբ վառարանի մեջ ես սուրճ էի եփում. ժամը տասին մոտ գալիս էր հերթապահ սպան՝ հետը բերելով մի քանի խորանարդ ֆուտ[1] սառնամանիք, շրխկացնելով թուրը, լայնաթև ձեռնոցներով, սազավարտով ու շինելով. ժամը մեկին ժանդարմը բերում էր կեղտոտ անձեռոցիկ ու մի ափսե սուպ, որը միշտ բռնում էր ճղերից, այնպես որ՝ երկու բութ մատերը նկատելի կերպով մյուսներից ավելի մաքուր էին լինում։ Մեզ կերակրում էին տանելի, բայց չպետք է մոռանալ, որ ուտելիքի դիմաց օրը երկու ռուբլի էին վերցնում. իննամսյա բանտարկության ընթացքում դա չունևորների համար բավական զգալի գումար կազմեց։ Բանտարկյալներից մեկի հայրը պարզապես ասաց, որ ինքը փող չունի. նրան սառնասրտորեն պատասխանեցին, թե կպահեն իր ռոճիկից։ Եթե ռոճիկ ստանալիս չլիներ, շատ հավանական է, որ նրան բանտ նստեցնեին։

Ի հավելումն, հարկավոր է նկատել, որ մեզ սնելու համար պարետային վարչությունից օրական մեկ ռուբլի հիսուն կոպեկ էր ուղարկվում զորանոց՝ գնդապետ Սեմյոնովին։ Քիչ էր մնացել աղմուկ բարձրանար, բայց պարետի համհարզները, որոնք դրանից օգուտ ունեին, անդրանիկ ներկայացումների ու բենեֆիսների օթյակի տոմսերով կաշառեցին ժանդարմական դիվիզիոնին, և դրանով էլ գործը փակվեց։

Վերջալույսից հետո կատարյալ լռություն էր իջնում, որն ամենևին չէր խախտվում ո՛չ զինվորի՝ պատուհանի տակ

[1] Ֆուտ— երկարության անգլիական միավոր, որ գործածվում էր նաև Ռուսաստանում. մոտավորապես հավասար է մեկ ոտնաչափի (30 սմ.)։



ձյան վրա ճռճռացող քայլքից, ո՛չ էլ ժամապահների՝ հեռվից եկող կանչերից։ Սովորաբար ես ընթերցում էի մինչև ժամը մեկը ու հետո մարում մոմը։ Քունը տանում էր ինձ ազատ աշխարհ, երբեմն քնի մեջ երևում էին, թո՛ւ, ի՞նչ ծանր տեսիլքներ՝ բանտ, ժանդարմներ,— և ուրախանում ես, որ այդ բոլորը երազ է, բայց մեկ էլ միջանցքում շրխկում է թուրը, կամ հերթապահ սպան է բաց անում դռները՝ լապտեր բռնած զինվորի ուղեկցությամբ, կամ ժամապահն է անմարդկային ձայնով գոռում՝ «Ո՞վ է գալիս», կամ էլ հենց պատուհանի տակ հնչող «արևածագի» զիլ շեփորա-կանչն է ծվատում վաղորդյան օդը...

Տրտմալի պահերին, երբ կարդալս չէր գալիս, ես զրուցում էի ինձ հսկող ժանդարմների, հատկապես ինձ շմոլքից փրկած ծերուկի հետ։ Գնդապետը, ի նշան ողորմածության, հին զինվորներին, ազատելով շարային ծառայությունից, փակի տակ դրված մարդուն պահպանելու հանգիստ պաշտոնին է դնում. նրանց վրա կարգվում է եֆրեյտորը՝ լրտեսի ու խարդախի մեկը։ Հինգ-վեց ժանդարմ կատարում էին ոչ ծառայությունը։

Ծերուկը, որի մասին խոսում եմ, հասարակ, բարի մի էակ էր, հակված ամեն մի փաղաքշանքի, որը, հավանորեն, քիչ էր բաժին ընկել նրան կյանքում։ Նա մասնակցել էր 1812 թվականի պատերազմին, կուրծքը ծածկված էր մեդալներով, նա իր ժամկետը ծառայել-վերջացրել էր և, չիմանալով ինչ անել, կամովին մնացել էր զինվորության մեջ։

— Ես,— ասում էր նա,— երկու անգամ գրել եմ ծննդավայրս, Մոգիլյովի նահանգ, բայց պատասխան չի եկել. երևում է՝ իմոնցից է՛լ մարդ չի մնացել. ու մի տեսակ վախենալու բան է երկիրդ գնալը. կմնաս, կմնաս ու, ոնց որ մի անիծված, կերթաս՝ ուր որ աչքդ կտրի, ի սեր Քրիստոսի ողորմություն խնդրելու։

Ի՞նչ բարբարոսական ու անողորմ է զինվորական ծառայության կարգը Ռուսաստանում՝ իր հրեշավոր ժամկետով։ Մարդու անձը մեզանում ամենուրեք զոհաբերված է առանց դույզն իսկ գթության, առանց որևէ հատուցման։

Ծերուկ Ֆիլիմոնովը հավակնություններ ուներ գերմաներենի իմացության, որը սովորել էր ձմեռային հանգրվանների

ներում՝ Փարիզի առումից հետո։ Նա, չատ հաջող, ռուսական բարքերին էր հարմարեցնում գերմաներեն բառերը. ձիուն ասում էր ֆերտ, ձվին՝ երի, ձկանը՝ պիշ, վարսակին՝ օբեր, բլիթին՝ պանկուխի[1]։

Նրա պատմածներում կար միամտության մի հատկանիշ, որը տրտմություն ու մտորումներ էր հարուցում իմ մեջ։ Մոլդավիայում, 1805 թվականի թուրքական պատերազմի ժամանակ, նա գտնվում էր աշխարհիս ամենաբարի կապիտանի վաշտում, մի կապիտան, որն ամեն մի զինվորի մասին հոգ էր տանում՝ որպես իր որդու, և կռվում միշտ առջևում էր։

— Նրան կախարդել էր մի մոլդավուհի. տեսնում ենք մեր վաշտապետը մտատանջության մեջ է ընկել, նա, ուրեմն, էնի՛քը, նկատել էր, որ մոլդավուհին ուրիշ սպայի մոտ է գնում-գալիս։ Մի անգամ կանչեց ինձ ու մի ընկերոջս,— քա՞ջ զինվոր էր, հետո Մալի Յարոսլավեցի տակերկու ոտքը կորցրեց,— կանչեց ու սկսեց մեզ ասել, թե մոլդավուհին վիրավորել է իրեն, և մենք չե՞նք ուզենա օգնել իրեն ու դաս տալ նրան։ «Ինչի չէ,— ասում ենք նրան,— մենք միշտ ուրախ ենք ծառայելու ձերդ բարեծնությանը»։ Նա շնորհակալություն հայտնեց, սպայի ապրած տունն էլ ցույց տվեց ու ասում է. «Գիշերը կանգնեցեք կամրջի վրա, նա անպայման կգնա սպայի մոտ, դուք նրան սուս ու փուս բռնեք ու գետը գցեք»։ «Էդ կարելի է, ձերդ բարեծնություն»,— ասում ենք մենք նրան, ու ընկերոջս հետ պարկն էլ պատրաստեցինք. նստած ենք. էդպես, կեսգիշերին մոտ, վազելով գալիս է մոլդավուհին. մենք էլ, ուրեմն, ասում ենք նրան. «Տիրուհի՛, էդ ո՞ւր եք վռազում», ու մի հատ գլխին տվինք. աղավնյակս իսկի ծպտուն էլ չհանեց, մենք նրան՝ պարկի մեջ ու, հա՛յդա, գետը։ Իսկ կապիտանը մյուս օրը սպայի մոտ եկավ ու ասում է. «Դուք չբարկանաք մոլդավուհու վրա, մենք նրան մի քիչ ուշացրինք, նա հիմա, այսինքս, գետի մեջն է, իսկ ձեզ հետ, ուրեմն, կարող ենք մի կողմի վրա գնալ օրով կամ ատրճանակով՝ ո՛նց կուզեք»։

[1] Աղճատված գերմաներեն բառեր. Pferd— ձի, Eier— ձվեր, Fisch— ձուկ, Hafer— վարսակ, Pfannkuchen— բլիթ։



Ու կռվեցին։ Նա մեր կապիտանի կուրծքը ահագին ճղեց, ամբողջ խեղճը ու մի երեք ամսից հոգին ավանդեց։

— Իսկ մոլդավուհին այդպես էլ խեղդվե՞ց,— հարցրի ես։

— Խեղդվեց,— պատասխանեց զինվորը։

Ես զարմացած էի այն մանկական անհոգության վրա, որով ծեր ժանդարմը պատմում էր ինձ այս եղելությունը։ Նա, կարծես կռահելով կամ էլ առաջին անգամը խորհելով դրա մասին, ավելացրեց՝ հանգստացնելով ինձ ու խղճի հետ հաշտություն կնքելով.

— Հեթանոսուհի էր, մեկ է թե՝ չմկրտված, էդպես է էդ ժողովուրդը։

Ժանդարմներին յուրաքանչյուր տոն օր մի գավաթ օղի էին տալիս։ Վախմիստրը Ֆիլիմոնովին թույլատրել էր հինգ-վեց անգամ հրաժարվել իր բաժնից և բոլոր հինգ-վեցը միանգամից ստանալ. Ֆիլիմոնովը փայտե հաշվետախտակի վրա նշան էր անում, թե քանի գավաթ է մեջ տվել, ու ամենամեծ տոներին գնում էր ստանալու։ Այդ օրին նա լցնում էր պնակը, մեջը հաց էր բրդում ու գդալով ուտում։ Այդպիսի նախաճաշից հետո ծխում էր կարճ ու մեծ իր ծխամորճը. նրա թութունը շատ թունդ էր, ինքն էր փշրում ու դրա համար էլ սրամտորեն անվանում էր «ինքփշուր»։ Մինչև նա տեղավորվում էր փոքրիկ պատուհանին,— պահանջկոտում աթոռ չկար,— ու երեքտակ լինելով երգ ասում.

Աղջիկները մարգագետին դուրս եկան,
Ուր բուրավետ ծաղիկ ու սեզ կա այնքան։

Հարբելով, քանի գնում՝ ավելի էր աղավաղում ծաղիկ բառը. «տաղիկ», «կաղիկ», «խաղիկ». հասնելով «խաղիկին», քնում էր։ Ի՞նչ առեղծության տեր էր վաթսունն անց, երկու անգամ վիրավորված և նման նախաճաշերին դիմացող այդ մարդը։

Այդ զորանոցային-ֆլամանդական a la Վուվերման-Կալո՝ պատկերները և բոլոր ազատազուրկներին հիշողությունների նմանվող այդ բանտային շաղակրատանքները վերջացնելուց առաջ մի քանի խոսք էլ ասեմ սպանների մասին։

Նրանցից շատերը բավականին բարի մարդիկ էին, բնավ էլ ոչ չրտեսներ, այլ մարդիկ, որոնք պատահականո-

րեն էին ընկել ժանդարմական դիվիզիոն։ Ջահել աղվա-
կաններ, քիչ կամ ոչինչ չսովորած, կարողությունից զուրկ,
չիմանալով ինչով զբաղվել՝ նրանք ժանդարմ էին դարձել,
որովհետև ուրիշ գործ չէին գտել։ Իրենց պաշտոնը նրանք
կատարում էին ամենայն զինվորական ճշգրտությամբ, բայց
ես չէի նկատում փութաջանության ոչ մի նշույլ, բացառու-
թյամբ, ասենք, համհարզի, բայց նա էլ համհա՞րզ էր, չէ՞։

Երբ սպաները հետս ծանոթացան՝ ընձեռում էին ինձ
իրենցից կախված բոլոր փոքրիկ արտոնություններն ու
դյուրությունները, նրանցից գանգատվելը մեղք կլիներ։

Մի երիտասարդ սպա պատմում էր ինձ, թե՝ 1831 թվա-
կանին ինքը գործուղվել էր՝ գտնելու և բռնելու մի լեհ կալ-
վածատիրոջ, որ թաքնվել էր իր կալվածքի շրջակայքում։
Նրան մեղադրում էին էմիսարների[1] հետ կապեր ունենալու
մեջ։ Սպան մեկնել էր, ձեռք բերված տեղեկություններից
իմացել էր կալվածատիրոջ թաքստավայրը, իր ջոկատով
գնացել այնտեղ, շրջապատել տունը ու ներս մտել երկու
ժանդարմների հետ։ Տունը դատարկ էր. նրանք շրջեցին
սենյակները, դես ու դեն ընկան՝ ոչ ոք չկար, այնինչ մի
քանի մանր-մունր բաներ բացահայտորեն վկայում էին, որ
տանը վերջերս բնակիչներ եղել են։ Ժանդարմներին թողնե-
լով ներքևում, երիտասարդը երկրորդ անգամ բարձրացավ
ձեղնահարկ. ուշադիր զննելով, նա տեսավ փոքրիկ մի դուռ,
որը տանում էր դեպի խորդանոց կամ ինչ-որ մի խուց. դու-
ռը ներսից կողպված էր, նա ոտքով հրեց, դուռը բացվեց,
և... նրա առաջ կանգնած էր բարձրահասակ, գեղեցիկ ար-
տաքինով մի կին. սա լռելյայն մատնացույց արեց տղա-
մարդուն, որը գրկել էր համարյա գիտակցությունը կորցրած
մոտ տասներկուամյա աղջկան։ Դա նա էր և իր ընտանիքը։
Սպան շփոթվեց։ Բարձրահասակ կինը նկատեց այդ և հարց-
րեց.

— Ով դուք դաժանություն կունենաք կործանելո՞ւ նրանց։

Սպան ներողություն խնդրեց՝ անառարկելի հնազանդու-
թյան, պարտքի մատին սովորական տափակություններ ա-
սելով, և, վերջապես, հուսահատված, տեսնելով, որ իր խոս-

[1] լեհական հեղափոխական կառավարության լիազորներ։



քերը ոչ մի ազդեցություն չեն թողնում, վերջացրեց իր ճառը
այս հարցով.

— Բա ես ի՞նչ անեմ։

Կինը հպարտ նայեց նրան և ասաց՝ ձեռքով ցույց տա-
լով դուռը.

— Գնացեք ներքև ու ասեք, որ այստեղ ոչ ոք չկա։

— Աստված վկա,— ասում էր սպան,— չգիտեմ դա ոնց
եղավ ու հետս ինչ կատարվեց, բայց ես իջա ձեղնահարկից
ու ենթասպային կարգադրեցի տանել ջոկատը։ Երկու ժամ
հետո մենք նրան ջանասիրաբար որոնում էինք ուրիշ կալ-
վածքում, մինչ նա անցնում էր սահմանը։ Ա՛յ թե կին էր,
հա՞։

... Աշխարհում ոչինչ չի կարող ավելի սահմանափակ ու
անմարդկային լինել, քան ամբողջ դասերի միապիտակ
պարսավանքը՝ ըստ ցուցանակի, ըստ բարոյական կարգագրի,
ըստ համայնքի հիմնական բնույթի։ Անուն կպցնելը ահա-
վոր բան է։ Ժ.—Պ. Ռիխտերը՝ բացառիկ ստուգությամբ
ասում է. եթե երեխան ստի՝ վախեցրեք նրան, թե ինքը վատ
է վարվել, ասացեք, որ ստել է, բայց մի ասեք, որ ինքը
ստախոս է։ Դուք կխորտակեք նրա բարոյական հավատը իր
հանդեպ՝ նրան ստախոս որակելով։ «Սա մարդասպան է»—
ասում են մեզ, և մենք անմիջապես պատկերացնում ենք
թաքցված դաշույն, գազանային արտահայտություն, մութ
դիտավորություններ, կարծես սպանելը մշտական զբաղ-
մունքը, արհեստն է այն մարդու, որը կյանքում մի անգամ
մեկին սպանել է։ Չի կարելի լինել լրտես, կավատ և միա-
ժամանակ ազնիվ մարդ, բայց կարելի է լինել ժանդարմա-
կան սպա՝ չկորցնելով ողջ մարդկային արժանապատվու-
թյունը, ինչպես որ կարելի է հաճախ կանացիություն, քըն-
քուշ սիրտ և նույնիսկ ազնվություն գտնել «հասարակական
անժուժկալության» դժբախտ զոհերի մեջ։

Ես նողկանք եմ տածում այն մարդկանց հանդեպ, ով-
քեր չեն կարողանում, չեն ուզում կամ իրենց նեղություն չեն
տալիս՝ վերանալու անունից, զանց առնելու հանցագործու-
թյունը, խճճված, կեղծ վիճակը, առաքինի տեսքով երես
թեքելով կամ կոպտորեն վանելով։ Այդ սովորաբար անում են
ինքնամփոփ, շոր, եսամոլ, իրենց անաղարտության մեջ

նոզկալի բնավորությունները կամ ճղճիմ, ստոր բնավորությունները, որոնց դեռևս չի հաջողվել և կամ որոնք կարիք չեն ունեցել պաշտոնապես ցուցադրելու իրենց. նրանք հոգով արդեն այն կեղտոտ հատակումն են, որտեղ ուրիշները պարզապես ընկել են։

## ԳԼՈՒԽ XII

Հետաքննություն։ Գոլիցին sen-ը։ Գոլիցին jun-ը[1]։ Գեներալ Ստասալը։ Խրատաբանություն։ Սոկոլովսկին։

... Բայց, այս բոլորով հանդերձ, ի՞նչ եղավ գործը, ի՞նչ եղան հետաքննությունն ու դատավարությունը։

Նոր հանձնաժողովում գործը նույնպես առաջ չէր գնում, ինչպես և հնում։ Ոստիկանությունը մեզ հետևում էր վաղուց, բայց իր պարտաճանաչությամբ անհամբեր՝ չէր կարողացել ապասել էական պատրվակի ու անհեթեթ արարք էր թույլ տվել։ Պաշտոնաթող ստա Սկարյատկային ուղարկել էր, որպեսզի մեզ գործի մեջ ներքաշի, ի հայտ բերի. նա ծանոթացավ համարյա մեր ողջ խմբի հետ, բայց մենք շատ շուտ կռահեցինք նրա ի՞նչ լինելը և մեզնից հեռու վանեցինք։ Մյուս ջահելները, մեծ մասամբ ուսանողներ, այդքան զգուշավոր չէին, բայց այդ մյուսները ոչ մի լուրջ կապ չունեին մեզ հետ։

Դասընթացն ավարտած մի ուսանող 1834 թվականի հունիսի 24-ին քեֆ էր կազմակերպել իր բարեկամների համար։ Խնջույքին ոչ միայն մեզնից ոչ ոքը չէր, այլև ոչ ոք չէր էլ հրավիրվել։ Ջահելները չափից շատ էին խմել, հիմարություններ արել, մազուրկա պարել և, ի միջի այլոց, խմբով երգել Սոկոլովսկու հայտնի երգը.

Գնաց ռուսաց կայսրը
Գիրկը հավերժության,
Ճեղքեց նրա փորը
Վիրաբույժը դաժան։
Պետությունն է լալիս,
Երկիրը բովանդակ.

Իշխելու է գալիս
Կոնստանտինն այլանդակ։
Բայց արքային երկնակալ,
Աստծուն աշխարհաստեղծ,
Ցարը բարեբանյալ
Հրովարտակ հանձնեց։
Ցերը խղճահարվեց,
Մանիֆեստն երբ կարդաց։
Մեզ Նիկոլայ տվեց՝
Շ . . . . . այդ չեղած։

Երեկոյան Սկարյատկան ճանկարձ հիշեց, որ այդ օրը իր անվանակոչության օրն է, պատմեց, թե ինչպես ինքը օգուտով ծախել է ձին և ուսանողներին իր տուն հրավիրեց՝ խոստանալով մի դյուժին շամպայն։ Բոլորն էլ գնացին։ Նեամպայնը մեջտեղ եկավ, և տանտերը, օրորվելով, առաջարկեց մի անգամ էլ երգել Սոկոլովսկու երգը։ Երգի կեսին դուռը բացվեց ու ներս մտավ Ցինսկին՝ ոստիկանության հետ։ Այս բոլորն արված էր կոպիտ, հիմար, անշնորհք և ընդամին՝ անհաջող։

Ոստիկանությունը ուզում էր բռնել մեզ, նա առերևույթ ուզում էր փնտրում գործի մեջ ներքաշելու հինգ-վեց հոգու, որոնց հետամտում էր, և քանի անմեղ մարդ բռնեց։

Բայց ռուսական ոստիկանությանը շփոթեցնելը դժվար է։ Երկու շաբաթ անց մեզ ձերբակալեցին՝ որպես տոնակատարության գործին առնչվողներ։ Սոկոլովսկու մոտ գտան Սաթինի նամակները, Սատինի մոտ՝ Օգարյովի, Օգարյովի մոտ՝ իմ. այնուամենայնիվ, ոչինչ չէր բացահայտվում։ Առաջին հետաքննությունը չհաջողվեց։ Երկրորդ հանձնաժողովի հաջողությունն ապահովելու համար թագավորը Պետերբուրգից ուղարկեց ինկվիզիտորներից ամենաբնտիրին՝ Ա. Ֆ. Գոլիցինին։

Ինկվիզիցիայի այդ ցեղը հազվագյուտ է մեզանում։ Դրան էին պատկանում Երրորդ բաժանմունքի հայտնի պետ Մորդվինովը, Վիլնոյի ռեկտոր Պելիկանը, մեկ էլ մի քանի Ֆառայաշնորհյալ մերձբալթիկցիներ ու բարոյալքված լյուտերներ[1]։

[1] Senior— ավագ, junior— կրտսեր (լատ.)։

[1] Նորերս աչքի ընկած տաղանդների թվին է պատկանում հայտնի Լիպրանդին, որը լրտեսների ակադեմիա հիմնելու նախագիծ է ներկայացրել (1858) (ծանոթ.՝ Ա. Ի. Գերցենի)։

Բայց, ի դժբախտություն ինկվիզիցիայի, հանձնաժողովի գլխավոր անդամ էր նշանակված Մոսկվայի պարետ Ստաալը։ Ստաալը՝ այդ ուղղամիտ ռազմիկը, ծեր, քաջ գեներալը, գործը քննեց՝ ու գտավ, որ այն բաղկացած է իրար հետ ընդհանուր ոչ մի բան չունեցող երկու հանգամանքներից. տոնակատարության գործից, որի համար հարկավոր է ոստիկանական կարգով պատժել, և աստված գիտե, թե ինչի համար բռնված մարդկանց ձերբակալությունից, որոնց ողջ շոշափելի մեղքը կիսաբերան հայտնված ինչ-որ կարծիքներն են, որոնց համար դատելը թե՛ դժվար է և թե՛ ծիծաղելի։

Ստաալի կարծիքը դուր չեկավ կրտսեր Գոլիցինին։ Նրանց վեճը սուր բնույթ ընդունեց։ Հին ռազմիկը բռնկվեց զայրույթից, սուրը հատակին խփեց ու ասաց.

— Մարդկանց կործանելու փոխարեն՝ ավելի լավ կլիներ, եթե դուք բոլոր դպրոցներն ու համալսարանները փակելու առաջարկ ներկայացնեիք, դա կնախազգուշացնի այլ դժբախտների. ասենք, դուք կարող եք ինչ ուզում եք անել, բայց անել առանց ինձ, ես հանձնաժողով ոտք չեմ դնի։

Այս խոսքերով ծերուկն արագ թողեց դահլիճը։

Նույն օրը այդ մասին տեղեկացրին թագավորին։

Առավոտյան, երբ պարետը ներկայացավ զեկույցի, թագավորը նրան հարցրեց՝ ինչո՞ւ չի ուզում մասնակցել հանձնաժողովին։ Ստաալն ասաց, թե ինչո՞ւ։

— Հիմարությո՛ւն է,— առարկեց կայսրը։— Գժտվել Գոլիցինի՝ հետ, ամոթ չէ՞։ Ես հուսով եմ, որ դու առաջվա նման կմնաս հանձնաժողովում։

— Տեր թագավոր,— պատասխանեց Ստաալը,— խնայեցեք իմ ճերմակ մազերը, ես այսքան ապրել եմ առանց որևէ բիծ ունենալու։ Իմ ջերմեռանդությունը հայտնի է ձերդ մեծությանը. իմ արյունը, մնացյալ օրերս ձեզ են պատկանում։ Բայց այստեղ հարցը վերաբերում է իմ պատվին. խիղճս ընդվզում է այն բանի դեմ, ինչ կատարվում է հանձնաժողովում։

Թագավորը կնճռոտվեց, Ստաալը գլուխ տվեց և այդ օրվանից ոչ մի անգամ հանձնաժողովում չեղավ։

Այս միջադեպը, որի ճշմարտացիությունը ամենաչնչին կասկած անգամ չի հարուցում, լավ լույս է սփռում Նիկոլայի բնավորության վրա։ Նրա մտքով ինչպե՞ս չանցավ, որ այն մարդը, որին ինքը չի զանում իր հարգանքը, քաջ ռազմիկն ու վաստակավոր ծերուկը այդպես համառում ու այդպես աղերսում է խնայել իր պատիվը, ուրեմն գործն այնքան էլ մաքուր չէ։ Ամենաքիչը հարկավոր էր տեղն ու տեղը կանչել Գոլիցինին և հրամայել Ստաալին, որ նրա ներկայությամբ բացատրի գործը։ Նա չարեց այդ բանը, այլ հրամայեց ավելի խիստ հսկողության տակ պահել մեզ։

Նրանից հետո հանձնաժողովում մնացին միայն մեղադրյալների թշնամիները՝ պարզամիտ ծերուկ իշխան Ս. Մ. Գոլիցինի նախագահությամբ, որը ինն ամիս անց նույնքան քիչ էր իրազեկ գործին, ինչքան այն սկսելուց ինն ամիս առաջ։ Նա նշանակալից լռություն էր պահպանում, հազվադեպ էր խոսակցության բռնվում և հարցաքննությունն ավարտվելուց հետո ամեն անգամ հարցնում էր.

— Նրան կառեի՞ է բաց թողնել։

— Կարելի է,— պատասխանում էր Գոլիցին junior-ը, և senior-ը լուրջ-լուրջ ասում էր կալանավորին.

— Գնացե՛ք։

Իմ առաջին հարցաքննությունը տևեց չորս ժամ։

Հարցերը երկու տեսակի էին։ Դրանց մի մասը նպատակ ուներ բացահայտելու «կառավարության ոգուն անհարիր» մտածելակերպը, «հեղափոխական և Սեն-Սիմոնի կործանարար ուսմունքով տոգորված կարծիքները»,— այսպես արտահայտվում էին Գոլիցին junior-ը և դատախազ Օրանսկին։

Այդ հարցերը հեշտ էին, բայց դրանք հարցեր չէին։ Բռնագրավված թղթերում ու նամակներում կարծիքներն արտահայտված էին բավականին պարզորոշ. հարցերը, ըստ էության, կարող էին վերաբերել իրեղեն փաստին. մարդն այդպիսի տողեր գրե՞լ է, թե ոչ։ Հանձնաժողովն անհրաժեշտ էր գտել յուրաքանչյուր դուրս գրված արտահայտությանը հավելել. «Դուք ինչպե՞ս եք բացատրում ձեր նամակի այս տեղը»։

Պարզ է, որ բացատրելու բան չկար, ի պատասխան ես գրում էի խուսափողական ու դատարկ ֆրազներ։ Մի տեղ գրում էի խուսափողական ու դատարկ ֆրազներ։ Մի տեղ դատախազը հայտնաբերեց այս արտահայտությունը. «Բո-

լոր սահմանադրական օրենքները ոչ մի բանի չեն հանգեցնում, գրանք համաձայնագրեր են տերերի և ստրուկների միջև. խնդիրն այն չէ, որ ստրուկների վիճակը բարելավվի, այլ՝ որ ստրուկներ չլինեն»։ Երբ ես ստիպված եղա բացատրելու այդ արտահայտությունը, ասացի, որ ոչ մի պարտավորություն չեմ տեսնում՝ պաշտպանելու սահմանադրական կառավարությունը, և որ եթե ես այն պաշտպանեի՝ դրա համար ինձ կմեղադրեին։

— Սահմանադրական ձևի վրա կարելի է հարձակվել երկու կողմից,— ջղային, ֆշշացող ձայնով նկատեց Գոլիցին junior-ը,— դուք միապետական տեսանկյունից չէ, որ հարձակվում եք, այլապես չէիք խոսի ստրուկների մասին։

— Այդ առումով ես կիսում եմ Եկատերինա Երկրորդ կայսրուհու սխալը. նա կարծում էր, որ իր հպատակներին չկոչեն ստրուկներ:

Գոլիցին junior-ը, կատաղությունից շնչահեղձ լինելով այդ հեգնական պատասխանից, ինձ ասաց.

— Դուք, երևի, մտածում եք, թե մենք այստեղ հավաքվում ենք սխոլաստիկ վեճե՞ր մղելու համար, թե դուք համալսարանում դիսերտացիա՞ եք պաշտպանում։

— Էլ ինչո՞ւ եք բացատրություններ պահանջում։

— Դուք ձևացնում եք, թե չեք հասկանում ի՞նչ են ձեզանից ուզում։

— Չեմ հասկանում։

— Ի՞նչ հոմառ են սրանք բոլորը,— ավելացրեց նախագահ Գոլիցին senior-ը, ուսերը թոթվեց ու նայեց ժանդարմական գնդապետ Շուբինսկուն։ Ես ժպտացի։— Ի՞սկը Օգարյովն է,— խոսքն ավարտեց բարեսիրտ նախագահը։

Հարցաքննությունն ընդհատվեց։ Հանձնաժողովը հավաքվում էր իշխան Սերգեյ Միխայլովիչի գրադարանում. ես շրջվեցի պահարանների կողմը և սկսեցի նայել գրքերին։ Ի միջի այլոց, այստեղ էր հերցոգ Սեն-Սիմոնի* նոթագրությունների բազմահատոր հրատարակությունը։

— Ահա՛,— ասացի ես՝ դառնալով նախագահին,— ի՞նչ անարդարություն։ Ես հետաքննության եմ ենթարկվում սեն-սիմոնիզմի համար, իսկ դուք, իշխա՛ն, երբ երեկոյից մի քա՛ն հատոր ունեք։



Քանի որ բարի ծերուկը ի ծնե ոչինչ չէր կարդացել՝ պատասխանելու բան չգտավ։ Բայց Գոլիցին jun.-ը ժի հայացք նետեց վրաս ու հարցրեց.

— Ի՞նչ է, դուք չե՞ք տեսնում, որ դրանք նոթերն են ա՛յն հերցոգ Սեն-Սիմոնի, որն ապրել է Լյուդովիկոս տասներորդի օրոք։

Նախագահը ժպտաց, գլխով նշան արեց ինձ՝ «Ի՞նչ է, ախպե՛ր, ուրեմն քարի՞ն առավ», և ասաց.

— Գնացեք։

Երբ ես դուռն մեջ էի, նախագահը հարցրեց.

— Սա է, չէ՞, Պետրոս Առաջինի մասին գրել՞, այն, որ ինձ ցույց էիք տալիս։

— Ի՞նքն է,— պատասխանեց Շուբինսկին։

Ես կանգ առա։

— Il'a des moyens[1],— նկատեց նախագահը։

— Ավելի՞ վատ։ Թույնը ճաթիկ ձեռքերում առավել վտանգավոր է,— ավելացրեց ինկվիզատորը։— Հույժ վնասակար և միանգամայն անուղղելի երիտասարդ է...

Իմ դատավճիռը այդ խոսքերի մեջ էր։

A propos[2] դառնանք Սեն-Սիմոնին։ Օգարյովի մոտից թղթեր ու գրքեր վերցնելիս ոստիկանապետը մի կողմ դրեց Թիերի՝ Ֆրանսիական հեղափոխության պատմության մի հատորը, հետո գտավ մյուսը... երրորդը... ութերորդը։ Ի վերջո նա չհամբերեց ու ասաց. «Աստվա՛ծ իմ, այս ինչքա՞ն են հեղափոխական գրքերը*... Ահա մի հատ էլ»,— ավելացրեց, նա՝ թաղային ոստիկանին տալով Կյուվիեի ճառը „Sur les révolutions du globe terrestre"[3].

Հարցերի մյուս շարքն ավելի խճճված էր։ Նրանցում գործի էին դրվում զանազան ոստիկանական խորամանկություններ ու հետաքննչական չարաճճիություններ՝ շփոթության մեջ գցելու, խճճելու, հակասություններ ստեղծելու նպատակով։ Այստեղ ակնարկություններ էին արվում մյուսների ցուցմունքի վերաբերյալ և գործադրվում զանազան բարոյական կատանքներ։ Դրանք պատմել շարժե, բա-

1 Նա ընդունակություններից զուրկ չէ (ֆրանս.)։

2 ի դեպ (ֆրանս.)։

3 «Երկրագնդի կատաստրոֆների մասին»։

վական է ասել, որ, իրենց բոլոր խորամանկություններու հանդերձ, նրանք ոչ մի առերեսում չկարողացան սարքել մեր շորսի միջև։

Ստացել էի վերջին հարցը և մենակս նստած էի փոքր սենյակում, որտեղ մենք գրում էինք։ Հանկարծ դուռը բացվեց ու ներս մտավ Գոլիցին jun-ը՝ տխուր ու մտահոգ։

— Ես,— ասաց նա,— եկել եմ խոսելու ձեզ հետ՝ նախքան կվերջացնեք ձեր ցուցմունքները։ Հանգուցյալ հորս վաղեմի կապը ձեր հոր հետ հարկադրում է ինձ հատուկ կարեկցություն դրսևորել հանդեպ ձեզ։ Դուք երիտասարդ եք և դեռ կարող եք հաջողությունների հասնել. դրա համար ձեզ հարկավոր է դուրս գալ այս գործից... իսկ դա, բարեբախտաբար, ձեզնից է կախված։ Ձեր հայրը սրտին շատ մոտ ընդունեց ձեր ձերբակալությունը և այժմ ապրում է այն հույսով, որ ձեզ ազատ կարձակեն. իշխան Սերգեյ Միխայլովիչի հետ մենք հիմա խոսում էինք այդ մասին և սրտանց պատրաստ ենք շատ բան անելու. միջոցներ տվեք մեզ, որ օգնենք։

Ես տեսնում էի, թե ո՞ւր է խփում. արյունը գլխիս տվեց, նեղվելուց կրծոտում էի գրիչը։

Նա շարունակեց.

— Դուք ուղիղ զինվորություն կամ զնդան եք գնում, այդ ճամփան բռնած՝ դուք կսպանեք ձեր հորը, նա մի օր էլ չի ապրի՝ տեսնելով ձեզ գորշ շինելի մեջ։

Ես ուզում էի ինչ-որ բան ասել, բայց նա ընդհատեց.

— Ես գիտեմ ի՞նչ եք ուզում ասել։ Մի քիչ համբերեք։ Որ դուք դիտավորություններ եք ունեցել կառավարության դեմ՝ ակնհայտ է։ Միապետի ողորմածությունը ձեզ վրա հրավիրելու համար մենք պետք է ձեր զղջման ապացույցներ ունենանք։ Դուք ամեն ինչ հերքում եք, խուսափում եք պատասխաններից և պատվի կեղծ զգացումից դրդված՝ պաշտպանում մարդկանց, որոնց մասին մենք ավելի շատ բան գիտենք, քան դուք, և որոնք այնպես համեստ չեն եղել, ինչպես դուք[1]. դուք նրանց չեք օգնի, բայց նրանք ձեզ իրենց

[1] Հարկ կա՞, արդյոք, ասելու, որ դա լկտի սուտ էր, ոստիկանական ատոր մի խորամանկություն (ծանոթ.՝ Ա. Ի. Գերցենի)։



հետ անդունդը կքաշեն։ Մի նամակ գրեք հանձնաժողովին՝ պարզ, անկեղծ ասացեք, որ զգում եք ձեր մեղքը, որ դուք տարվել եք ջահելության պատճառով, տվեք անունները այն դժբախտ մոլորյալների, ովքեր ձեզ ներքաշել են։ Ձե՞ք ուզում այս հեշտ ճանապարհով փրկել ձեր ապագան։ Եվ ձեր հոր կյանքը։

— Ես ոչ մի բան չգիտեմ և ոչ մի բառ չեմ ավելացնի իմ ցուցմունքներին,— պատասխանեցի ես։

Գոլիցինը կանգնեց ու չոր ասաց.

— Ուրեմն դուք չե՞ք ուզում, դե՛, մեղքը մերը չէ։

Սրանով հարցաքննություններն ավարտվեցին։

1835 թվականի հունվարին կամ փետրվարին ես վերջին անգամ եղա հանձնաժողովում։ Ինձ կանչել էին՝ նորից կարդալու պատասխաններս, լրացումներ անելու, եթե ուզում եմ, և ստորագրելու։ Ներկա էր միայն Շուբինսկին։ Ընթերցումն ավարտելով՝ ես նրան ասացի.

— Կուզենայի իմանալ, թե այս հարցերից ու այս պատասխաններից ելնելով՝ ինչի՞ մեջ կարելի է մեղադրել մարդուս։ Օրենսգրքի ո՞ր հոդվածի տակ կգցեք ինձ։

— Օրենսգիրքը նախատեսված է այլ բնույթի հանցագործությունների համար,— նկատեց կապույտ գնդապետը։

— Դա ուրիշ բան է։ Վերընթերցելով բոլոր այս գրական մարգանքները, ես չեմ կարող հավատալ, թե հենց սա է ամբողջ գործը, որի պատճառով ես յոթերորդ ամիսն է բանտեմ նստած։

— Եվ դուք իրոք երևակայում եք,— առարկեց Շուբինսկին,— թե մենք այդպես էլ հավատացինք ձեզ, որ դուք գաղտնի ընկերություն չէի՞ք կազմում։

— Բայց ո՞ւր է այդ ընկերությունը,— հարցրի ես։

— Ձեր բախտից է, որ հետքեր չգտնվեցին, որ դուք չհասցրիք ոչ մի վատ բան անել։ Մենք ժամանակին ձեզ կանգնեցրինք, այսինքն, պարզ ասած՝ փրկեցինք ձեզ։

Նորի՞ց փականագործի կնոջ՝ Պոշլեպկինայի ու նրա ամուսնու պատմությունը* «Ռևիզորից»։

Երբ ես ստորագրեցի, Շուբինսկին զանգը տվեց ու կարգադրեց կանչել քահանային։ Քահանան եկավ և ստորագրեց

իմ ստորագրության տակ, առ այն, որ ես բոլոր ցուցմունքները տվել եմ կամավոր և առանց որևէ բռնության։ Ինքնին հասկանալի է, որ նա ներկա չէր եղել հարցաքննություններին և նույնիսկ քաղաքավարության համար էլ ինձ չհարցրեց, թե ինչն ինչոց է (դարպասի տակի իմ նո՞ւյն բարեխիղճը)։

Հետաքննությունն ավարտվելուց հետո բանտային կալանքը մի քիչ մեղմացրին։ Մոտիկ ազգականները կարող էին պարետի գրասենյակից տեսակցության թույլտվություն ստանալ։ Այդպես անցավ ևս երկու ամիս։

Մարտի կեսին մեր դատավճիռը՝ հաստատվեց. ոչ ոք չգիտեր դրա բովանդակությունը. ոմանք ասում էին, թե մեզ Կովկաս են աքսորում, մյուսները՝ թե տանում են Բոբրույսկ, ոմանք էլ հույս ունեին, թե բոլորին ազատ կարձակեն (այդպիսին էր Ստասալի կարծիքը, որով նա հատկապես դիմել էր թագավորին. նա առաջարկել էր բանտարկությունը համարել մեր պատիժը)։

Վերջապես, մարտի քսանին բոլորիս հավաքեցին իշխան Գոլիցինի մոտ՝ լսելու դատավճիռը։ Դա տոների տոնն էր։ Այստեղ մենք տեսնվեցինք առաջին անգամ՝ ձերբակալությունից հետո։

Աղմկոտ, ուրախ, գրկախառնվելով ու իրար ձեռք սեղմելով՝ կանգնել էինք մենք, շրջապատված ժանդարմական ու կայազորի սպաների շքեղությամբ։ Տեսակցությունը ոգևորել էր ամենքին. հարցուփորձին, զվարճալի պատմություններին վերջ չկար։

Ներկա էր Սոկոլովսկին, մի քիչ նիհարած ու գունատ, բայց իր հումորի ողջ փայլով։

Սոկոլովսկին, «Տիեզերքի», «Խաների» և բազմաթիվ այլ բանաստեղծությունների հեղինակը, բնությունից օժտված էր պոետական մեծ տաղանդով, որը, սակայն, ո՛չ բավականաչափ արտաքին-ինքնատիպ էր, որպեսզի կարողանար յոլա գնալ առանց զարգացման, և ո՛չ էլ բավականաչափ կիրթ՝ զարգանալու համար։ Զվարճասեր և կյանքում բանաստեղծ՝ նա բնավ էլ քաղաքականության մարդ չէր։ Նա շատ հետաքրքիր, սիրալիր, ուրախ ընկեր էր զվարթ



դահերին, bon vivant[1], քեֆեր սիրող, ինչպես մենք բոլորս... թերևս մի քիչ ավելի։

Գինարբուքից հանկարծ բանտ ընկած՝ Սոկոլովսկին իրեն հիանալի էր պահել, զնդանում նա աճել էր։ Հանձնաժողովի դատախազը՝ մանրախույզի, կեղծ-բարեպաշտի, լրտեսի մեկը, որ սմքել ու ճերմակել էր նախանձից, ընչաքաղցությունից ու բանսարկություններից մեջ, գահին ու կրոնին նվիրվածությունից չհամարձակվելով հասկանալ, երգի վերջին երկու տողերի քերականական իմաստը՝ Սոկոլովսկուն հարցրել էր.

— Ո՞ւմ են վերաբերում երգի վերջին հանդուգն բառերը։

— Վստահ եղեք,— ասել էր Սոկոլովսկին,— ո՛չ թագավորին, և ձեր ուշադրությունը հատուկ հրավիրում եմ այդ մեղմացուցիչ հանգամանքի վրա։

Դատախազը վեր էր քաշել ուսերը, աչքերը երկինք հառել ու լուռ նայելով Սոկոլովսկուն՝ քթախոտ էր քաշել։

Սոկոլովսկուն բռնել էին Պետերբուրգում և, չասելով, թե ուր են տանելու, ուղարկել էին Մոսկվա։ Նման կատակներ ոստիկանությունը մեզանում անում է հաճախ և միանգամայն անօգուտ։ Դա նրա՛ պոեզիան է։ Աշխարհում չկա մի այնպիսի պրոզայիկ, գաղշելի զբաղմունք, որը չունենար իր արտաքսական պահանջմունքը, անհարկավոր պերճանքը, պաճուճանքները։ Սոկոլովսկուն բերեցին ուզիզ բանտ և ստեցրին խավար մի խցում։ Ինչո՞ւ էին նրան բանտ նստեցրել, երբ որ մեզ պահում էին զորանոցներում։

Նա հետը երկու-երեք շապիկ ուներ և ուրիշ ոչինչ։ Անգլիայում բանտ բերվող ամեն մի կալանավորի, տեղ հասնելուն պես, իսկույն լոգարան են նստեցնում. մեզանում կանխական միջոցներ են ձեռք առնում ընդդեմ մաքրության։

Թթե բժիշկ Գաազը իր սպիտակեղենից մի կապոց չուղարկեր Սոկոլովսկուն՝ նա կեղտի մեջ կփտեր։

Բժիշկ Գաազը գերինքնատիպ էր։ Այդ ասածու խենթ ու խելառի հիշատակը չպետք է կորչի առաջին երկու դասի՝ մարմինը փտելուց առաջ ի հայտ չեկող առաքինություններ-

1 լավ ապրելու սիրահար (ֆրանս.)։

ը պատկերող մահախոսականների պաշտոնական ջուրծեծուքի մեջ։

Մաշված, նիհարուկ, մոմե ծերուկը՝ սև ֆրակով, կարմիկ տաբատով, սև մետաքսե գուլպաներով ու ճարմանդավոր ոտնամաններով, թվում էր XVIII հարյուրամյակի ինչոր դրամայից հենց նոր դուրս եկած։ Հուղարկավորության ու հարսանիքի այդ grand gala[1]-ով և հյուսիսային 59° լայնության հաճելի կլիմայի պայմաններում՝ Գաազը ամեն շաբաթ, երբ աքսորյալներ էին ուղարկում, գնում էր Վորոբյովյան լեռներում գտնվող կալանավորների հավաքավայր։ Իբրև բանտային հաստատությունների բժիշկ՝ նա մուտք ուներ նրանց մոտ, գնում էր նրանց քննելու և ամեն անգամ հետը զամբյուղով այլևայլ մթերքներ ու զանազան քաղցրավենիք— ընկույզ, շաքարաբլիթ, նարինջ ու խնձոր էր տանում կանանց համար։ Դա հարուցում էր բարեգործ տիկնանց զայրույթն ու վրդովմունքը, որոնք վախենում էին բարեգործությամբ բավականությո՛ւն պատճառելուց, վախենում էին ավելի շատ բարեգործել, քան հարկավոր էր սովամահությունից ու սաստիկ սառնամանիքից փրկելու համար։

—Բայց Գաազը իրասածի մարդ էր և, հեզաբար լսելով «հանցագործ կանանց անմտորեն երես տալու» համար արվող կշտամբանքները, շփում էր ձեռքերն ու ասում. «Բարեհաճեցեք նկատել, ողորմած տիրուհի, կտոր՝ խաց, կոռ ամենք տալիս, իսկ կոնֆետ կամ նառինջ նրանք երկար չեն տեսնի, այդ բաներ նրանց ոչ ոք տալիս, ես այդ կարող եմ կոնսեկվացնել[2] ձեր խոսքերից. հենց նրա համար եմ անում նրանց այդ հաճույք, որ այդ բան երկար ժամանակ չի կրկնվի»։

Գաազն ապրում էր հիվանդանոցում։ Ճաշից առաջ նրա մոտ է գալիս մի հիվանդ՝ խորհուրդ հարցնելու։ Գաազը քննում է նրան ու գնում առանձնասենյակ, որ դեղ նշանակի։ Ետ է գալիս ու տեսնում, որ ոչ հիվանդը կա, ոչ էլ սեղանին դրված արծաթե սպասքը։ Գաազը կանչում է պահակին ու հարցնում՝ հիվանդից բացի որևէ մեկը ներս չի՞ մտել։ Պահակը գլխի է ընկնում, դուրս է վազում ու մի րոպեից վերադառնում է՝ հետը բերելով գդալներն ու հիվանդին, որին բռնել էր հիվանդանոցի մի այլ զինվորի օգնությամբ։ Գողը բժշկի ոտքերն է ընկնում ու ներումն հայցում։ Գաազը ազդվում է։

— Գնա ոստիկանի հետևից,— ասում է նա պահակներից մեկին։— Դու էլ գրագրին կանչիր։

Պահակները, գոհ բացահայտումից, հաղթանակից ու հասարակ գործին մասնակցելուց՝ դուրս են վազում, իսկ Գաազը, օգտվելով նրանց բացակայությունից, գողին ասում է.

— Դու խարդախ մարդ ես, դու ինձ խաբեցիր և ուզում էիր կողոպտել. աստվա՛ծ կանի դատաստանդ... իսկ հիմա չստ արա փախիր ետևի դռնով, քանի զինվորները չեն վերադարձել... բայց սպասիր, գուցե մոտդ ոչ մի կոպեկ չկա, առ մի հիսուն կոպեկանոց. բայց աշխատիր մաքրել հոգիդ. աստծուց չես պրծնի, ինչպես պահակից պրծար։

Այստեղ Գաազի դեմ ընդվզում են նաև տնեցիները։ Բայց անուղղելի բժիշկը իրենն էր ասում.

— Գողությունը մեծ արատ է. բայց ես գիտեմ ոստիկանությանը, գիտեմ, թե ինչպես են նրանք տանջում. կհարցաքննեն, կծեծեն. մերձավորին ճիպոտահարելը ավելի մեծ արատ է. համ էլ, ի՞նչ իմանաս, կարող է իմ վարմունքը կզգացնի՞ նրա հոգին։

Տնեցիք օրորում էին գլուխները ու ասում «Er hat einen Raptus»[1]. բարեգործ տիկնայք ասում էին. „C'est un brave homme, mais ce n'est pas tout à fait en règle là"[2], և ցույց էին տալիս ճակատը։ Իսկ Գաազը շփում էր ձեռքերը ու իրենն անում։

... Հազիվ էր Սոկոլովսկին վերջացրել իր անեկդոտները, մի քանի ուրիշներ միանգամից սկսեցին իրենցը. կարծես բոլորս վերադարձել էինք երկարատև ճանապարհորդությունից։

1 տոնական հագուստ (ֆրանս.)։
2 եղրակացնել (ֆրանս. conséquense բառից)։



1 Նա տարօրինակություններով մարդ է (գերմ.)։
2 Այս մարդը ազնիվ է, բայց թե էստեղը մի բան պակաս է (ֆրանս.)։

նից՝ հարցուփորձին, կատակներին, սրամտություններին վերջ չկար։

Ֆիզիկապես Սատինը մյուսներից ավելի էր տուժել. նիհարել էր ու մասամբ ճաղատացել։ Տամբովի նահանգում, իր մոր գյուղում, իմանալով, որ մեզ բռնել են, նա ինքն էր եկել Մոսկվա, որպեսզի ժանդարմների երևալը չվախեցներ մորը, ճանապարհին մրսել էր ու տուն հասել տաքության մեջ։ Ոստիկանությունը նրան գտավ անկողնում, քաղաքամաս տանելն անհնարին էր։ Նրան ձերբակալեցին տան մեջ, ննջարանի դռանը, ներսից, ոստիկան զինվոր կանգնեցրին ու որպես գթության եղբայր հիվանդի մահճի մոտ նստեցրին թաղային վերակացուին. այնպես որ՝ զառացանքներից ուշքի գալով՝ նա տեսնում էր մեկի լսող հայացքը կամ մյուսի հարբած մռութը։

Ձմռան սկզբին նրան տեղափոխեցին Լեֆորտովյան հոսպիտալ. պարզվեց, որ հիվանդանոցում ոչ մի դատարկ գաղտնի կալանավորական սենյակ չկար. այդպիսի չնչին բանի առաջ չարժեր կանգ առնել. գտնվեց մեկուսացված մի անկյուն, առանց վառարանի. պառկեցրին հիվանդին այդ հարավային պատշգամբում ու վրան ժամապահ կարգեցին։ Թե ձմռանն ինչքան էր քարե խորդանոցի ջերմաստիճանը՝ կարելի է գլխի ընկնել հետևյալից. ժամապահը գիշերն այնքան էր ուժասպառվել սառնամանիքից, որ գնացել էր միջանցքի վառարանի մոտ տաքանալու, խնդրելով Սատինին՝ հերթապահին չասել այդ մասին։

Բևեռին այդքան մոտիկ արևադարձային տաքությամբ կացարան ունենալը իրենց՝ հիվանդանոցի տերերին էլ անկարելի թվաց. Սատինին տեղափոխեցին այն սենյակը, որի կողքին սառածներին ետ բերելու տեղն էր։

Մենք չէինք հասցրել պատմել ու լսել արկածների կեսն անգամ, երբ հանկարծ համհարզներն իրարով անցան, կայազորային սպաները ձգվեցին, ոստիկաններն իրենց կարգի բերին. դուռը հանդիսավոր բացվեց, և փոքր խշխան Սերգեյ Միխայլովիչ Գոլիցինը ներս մտավ en grande tenue[1], ժապավենը ուսին. Ցինսկին շքախմբային համազգեստով էր, նույնքան գատախազ Օրանսկին ինչ-որ բաց-կանաչավուն կես քաղաքացիական, կես զինվորական համազգեստ էր հագել այդպիսի ուրախության առիթով։ Պարետը, հասկանալի է, չէր եկել։

Մինչդեռ աղմուկն ու ծիծաղն այնպես ուժեղացել էին, որ գատախազը սպառնալից դահլիճ դուրս եկավ և դիտողություն արեց, թե բարձր խոսակցությունը և հատկապես ծիծաղը ցուցադրում են կործանարար անհարգալիություն բարձրագույն վճռի հանդեպ, որը մենք հիմա պիտի լսենք։

Դռները բացվեցին։ Սպաները մեզ բաժանեցին երեք խմբի. առաջինում Սոկոլովսկին էր, նկարիչ Ուտկինը և սպա իրենը, երկրորդում մենք էինք, երրորդում՝ tutti frutti[1].

Առաջին խմբի դատավճիռը կարդացին հատուկ. այն ավելորդ էր. նորին մեծությանը վիրավորելու մեղադրանքով՝ նրանք անժամկետ աքսորվում էին Շլյուսելբուրգ։

Երեքն էլ հերոսաբար լսեցին այդ վայրենի դատավճիռը։

Երբ Օրանսկին, կարևորություն տալու համար երկարացնելով, շեշտելով կարդում էր, որ նորին մեծությանը և օգոստոսափառ գերդաստանը վիրավորելու համար ա՛յս պատիժն է հասնում, ա՛յն պատիժը... Սոկոլովսկին նրան ասաց.

— Գերդաստանը ես իսկի էլ չեմ վիրավորել։

Նրա թղթերի մեջ, ոտանավորներից բացի, գտել էին մեծ իշխան Միխայիլ Պավլովիչի ձեռագրի նմանությամբ կազմակով մի քանի անգամ արված մակագրություններ՝ ուղղագրական դիտումնավոր սխալներով, օրինակի համար՝ «հասդատում եմ», «բանակծել», «զեկուցել ինց» և այլն, և այդ սխալները նպաստել էին նրան մեղադրելուն։

Ցինսկին, ցուցադրելու համար, որ ինքն էլ կարող է անավարի ու սիրալիր լինել, վճռից հետո Սոկոլովսկուն ասաց.

— Իսկ դուք առաջներում Շլյուսելբուրգում եղե՞լ եք։

— Անցյալ տարի,— անմիջապես պատասխանեց նրան Սոկոլովսկին,— ասես սիրտս վկայում էր՝ ես այնտեղ մի շիշ մադերա խմեցի։

Երկու տարի հետո Ուտկինը մեռավ բանտախցում։ Սո-

1 ամենայն համազգեստով (ֆրանս.)։



1 մնացած բոլորը (իտալ.)։

կոլովսկուն կիսամեռ դուրս թողին Կովկաս, նա մեռավ Պյատիգորսկում։ Ամոթի ու խղճի ինչ-որ մնացուկ կառավարությանն ստիպեց երկուսի մահից հետո երրորդին տեղափոխել Պերմ։ Իրաևը մեռավ յուրովի. նա դարձավ միստիկ։

Ուտկինը՝ «բանտում պահվող ազատ նկարիչը», ինչպես ինքն էր ստորագրում հարցաքննությունների տակ, քառասունին մոտ մարդ էր. նա երբեք ոչ մի քաղաքական գործի մասնակից չէր եղել, բայց լինելով ազնիվ ու պոռթկուն, հանձնաժողովում լեզվին ազատություն էր տվել, կոշտ ու կոպիտ էր վերաբերվել անդամների հետ։ Դրա համար նրան մեռցրին խոնավ բանտախցում, որի պատերից ջուր էր կաթում։

Իրաևը մյուսներից ավելի էր մեղավոր՝ սոսկ ուսադիրների համար։ Եթե սպա չլիներ՝ նրան երբեք այդպես չէին պատժի։ Մարդը պատահմամբ եկել էր ինչ-որ քեֆի. երևի խմել էր ու երգել, ինչպես բոլոր մյուսները, բայց և, հավանաբար, ոչ ուրիշներից ավելի շատ ու ոչ էլ ավելի բարձր։

Եկավ մեր հերթը։ Օրանսկին ակնոցը սրբեց, հազալով մաքրեց կոկորդը և սկսեց ակնածալից ազդարարել բարձրագույն կամքը։ Նրանում պատկերացված էր, որ թագավորը, քննելով հանձնաժողովի զեկուցագիրը և հատուկ ուշադրության առնելով հանցագործների ջահել հասակը, կարգադրել էր դատի չտալ մեզ, այլ հայտարարել, որ օրենքով հարկավոր էր մեզ, որպես խռովիչ երգերով նորին մեծությանը վիրավորելու մեջ մերկացված մարդկանց՝ զրկել կյանքից, իսկ ըստ այլ օրենքների՝ աքսորել հավիտենական տաժանակրության։ Դրա փոխարեն թագավորը, իր անսահման ողորմածությամբ, հանցավորների մեծ մասին ներում է, նրանց թողնելով բնակության վայրում՝ ոստիկանության հսկողության ներքո։ Իսկ առավել հանցավորների նկատմամբ հրամայում է կիրառել ուղղիչ միջոցներ՝ անժամկետ քաղաքացիական ծառայության ուղարկել հեռավոր նահանգներ և պահել տեղական իշխանության հսկողության տակ։

Այդ առավել հանցավորները վեցն էին՝ Օգարյովը, Սատինը, Լախտինը, Օբոլենսկին, Սորոկինն ու ես։ Ես նշանակված էի Պերմ։ Դատապարտյալների մեջ էր Լախտինը, որն փսկի ձերբակալված էլ չէր։ Երբ նրան հանձնաժողով կանչեցին վճիռը լսելու, կարծում էր վախեցնելու համար է, որ պետքի ինքը տանջահար լինի՝ տեսնելով, թե ինչպես են պատժում ուրիշներին։ Պատմում էին, որ իշխան Գոլիցինի մերձավորներից մեկը, բարկանալով Լախտինի կնոջ վրա՝ մուռը հանել էր այս անակնկալով։ Թույլ առողջություն ունենալով՝ նա մի երեք տարի անց մեռավ աքսորավայրում։

Երբ Օրանսկին վերջացրեց ընթերցումը, հանդես եկավ դիդակտիկ Շուբինսկին։ Նա ընտիր բառերով ու լոմոնոսովյան ոճով ազդարարեց մեզ, թե մենք հանձնաժողովին նայելով՝ ազնվատոհմիկի միջնորդությանն ենք պարտական, որ թագավորն այդպես ողորմած է գտնվել։

Շուբինսկին սպասում էր, որ այդ խոսքի վրա բոլորը կսկսեն շնորհակալություն հայտնել իշխանին. բայց այդպես չեղավ։

Ներվածներից մի քանիսը գլխով արին, այն էլ թաքուն մեր կողմը նայելով։

Մենք, ձեռքներս ծալած, կանգնել էինք, բնավ էլ ցույց չտալով, թե մեր սրտերն զգացված են թագավորական ու իշխանական ողորմածությունից։

Այնժամ Շուբինսկին ուրիշ հնարք գտավ և, դիմելով Օգարյովին, ասաց.

— Դուք գնում եք Պենզա։ Մի՞թե կարծում եք, թե դա պատահական է։ Պենզայում կաթվածահար պառկած է ձեր հայրը. իշխանը թագավորին խնդրեց ձեզ այդ քաղաքը նշանակել, որպեսզի ձեր ներկայությունը որոշ չափով մեղմացնի ձեր աքսորի հասցրած հարվածը։ Միթե դո՞ւք էլ պատճառ չեք գտնում շնորհակալ լինելու իշխանից։

Ելք չկար, Օգարյովը թեթև գլուխ տվեց։ Ահա թե ինչի համար էին նրանք ճիգ ու ջանք թափում։

Բարի ծերուկին այդ բանը դուր եկավ և նա, չգիտեմ ինչու, դրանից հետո կանչեց ինձ։ Ես առաջ եկա սրբազան մտադրությամբ՝ նա և Շուբինսկին ի՛նչ էլ ասեն՝ շնորհակալություն չհայտնել. մանավանդ որ՝ ինձ ուղարկում էին ամենքից հեռու և ամենավատ քաղաքը։

— Իսկ դուք Պերմ եք գնում,— ասաց իշխանը։

Ես լուռ էի։ Իշխանը վրիպեց և, մի բան ասած լինելու համար, ավելացրեց.

— Ես այնտեղ կալվածք ունեմ։

— Դուք կամենում եք իմ միջոցով ինչ-որ քա՞ն հանձնարարել ձեր տանուտերին,— հարցրի ես ժպտալով։

— Ձեզ նման մարգկանց ես ոչինչ չեմ հանձնարարում, ձեզ՝ կարբոնարիների՞դ[1],— ավելացրեց հնարամիտ իշխանը։

— Ուրեմն ինձնից ի՞նչ եք ուզում։

— Ոչինչ։

— Ինձ թվաց, թե դուք ինձ կանչեցիք։

— Դուք կարող եք գնալ,— ընդմիջեց Շուբինսկին։

— Թույլ տվեք,— ընդդիմացա ես,— քանի որ այստեղ եմ՝ հիշեցնելու՝ ձեզ, որ դուք, գնդապե՛տ, երբ ես վերջին անգամ հանձնաժողովում էի, ինձ ասում էիք, թե ոչ ոք ինձ չի մեղադրում խնջույքի գործով, իսկ դատավճռի մեջ ասված է, որ ես մեկն եմ այդ գործի հանցավորներից։ Այստեղ ինչ-որ սխալ կա։

— Դուք ուզում եք առարկե՞լ բարձրագույն վճիռը,— ասաց Շուբինսկին։— Ցնցեք, որ հանկարծ Գերմը մի ավելի վատ բանով չփոխարինվի։ Ես կկարգադրեմ գրի առնել ձեր խոսքերը։

— Ես էլ ա՛յդ կուզեի խնդրել։ Դատավճռում տված է՝ ըստ հանձնաժողովի զեկուցագրի. ես առարկում եմ ձեր զեկուցագրի և ոչ թե բարձրագույն կամքի դեմ։ Ես վկայակոչում եմ իշխանին, որ ինձ նույնիսկ հարց էլ չի տրվել ա՛ չ խնջույքի, ո՛չ էլ որևէ երգի մասին։

— Կարծես թե չգիտեք,— ասաց Շուբինսկին՝ զայրույթից սկսելով սփրթնել,— որ ձեր մեղքը տասնապատիկ ավելի մեծ է, քան խնջույքին մասնակցածներինը։ Ահա՛,— նա մատով ցույց տվեց ներկաներից մեկին,— ահա նա հարբած վիճակում մի պիղծ բան է երգել, բայց հետո ծնկաչոք, արցունքն աչքերին ներում է խնդրել. բայց դուք դեռ հեռու եք ամեն մի զղջումից։

Գարոնը, որին ցույց տվեց գնդապետը, լուռ էր և, կասկարմիր կտրած, կախել էր գլուխը... Լավ դաս էր ստացել։ Դե՛, սրանից հետո գնա ստորությո՞ւն արա...

— Ներեցե՛ք, խոսքն իմ մեղքի մեծ կամ փոքր լինելու մասին չէ,— շարունակեցի ես,— բայց եթե ես մարդասպան եմ՝ չեմ ուզում, որ ինձ գող համարեն։ Ես չեմ՝ ուզում, որ իմ մասին, նույնիսկ ինձ արդարացնելով, ասեն, թե այս կամ այն բանն արել եմ «հարբած վիճակում», ինչպես դուք այժմ արտահայտվեցիք։

— Եթե ես որդի ունենայի, հարազա՛տ որդի, որն այդքան անուղղելի լիներ՝ թագավորին ինքս կխնդրեի նրան Սիբիր աքսորել։

Այստեղ ավագ ոստիկանապետը ինչ-որ անկապ տխմարություն դուրս տվեց։ Ափսոս, որ ներկա չէր կրտսեր Գոլիցինը. ա՛յ թե ճարտասանելու առիթ կլիներ։

Այս ամենը, անշուշտ, իզուր բան էր։

Լախտինը մոտեցավ իշխան Գոլիցինին և խնդրեց հեռաձգել իր մեկնումը։

— Կինս հղի է,— ասաց նա։

— Դրա մեջ ես մեղք չունեմ,— պատասխանեց Գոլիցինը։

Գազանը, կատաղած շունը, երբ կծում է, լուրջ տեսք է ընդունում, պոչն իրեն քաշում, իսկ այս պակասամիտ մեծատոհմիկը, արիստոկրատը, այն էլ բարի մարդու համբավով... շամաչեց այդ ստոր կատակից։

... Մենք մի անգամ էլ քառորդ ժամով հավաքվեցինք դահլիճում՝ հակառակ ժանդարմական ու ոստիկանական սպաների եռանդուն հորդորների, ամուր գրկախառնվեցինք ու հրաժեշտ տվինք երկար ժամանակով։ Մինչև Վյատկայից վերադառնալս ես Օբոլենսկուց բացի ոչ մեկին չտեսա։

Շուտով ճամփա էինք ընկնելու։

Բանտը դեռ շարունակություն էր անցյալ կյանքի. բայց մեր մեկնումով դեպի հեռուները՝ այն բեկվում էր։

Գատանեկան գոյատևումը մեր ընկերական խմբակում ավարտվում էր։

Աքսորը կտևի, հավանորեն, մի քանի տարի։ Որտե՞ղ և ինչպե՞ս կհանդիպենք մենք, և կհանդիպե՞նք արդյոք...

Ափսոս էր նախկին կյանքը, և այնպե՞ս մեկին էինք ստիպված թողնել այն... առանց մնաս բարով ասելու։ Օգարյովին տեսնելու հույս չունեի։ Վերջին օրերին ընկերներից երկուսը մոտս ընկան, բայց դա ինձ համար քիչ էր։

Մի՞ անգամ էլ տեսնեի իմ պարմանուհի մխիթարիչին,





1 իտալական հեղափոխականներ։

սեղմեի՞ նրա ձեռքը, ինչպես սեղմել էի գերեզմանոցում... Ի դեմս նրա՝ ես ուզում էի հրաժեշտ տալ անցյալին և դիմավորել գալիքը...

Մենք տեսնվեցինք մի քանի րոպեով, 1835 թվականի ապրիլի 9-ին, աքսորավայր մեկնելուս նախօրյակին։

Երկար ժամանակ հիշողությանս մեջ ես օրհնում էի այդ օրը, իմ կյանքի այդ ամենաերջանիկ ակնթարթներից մեկը։

... Բայց ինչո՞ւ հիշողությունն այդ օրվա և իմ ապրած բոլոր լուսավոր օրերի՝ այդքան շատ ահավոր բան է արթնացնում... Գերեզման, ալ կարմիր վարդերից հյուսված պսակ, երկու երեխաներ, որոնց ձեռքը բռնել էի, ջահեր, տարագիրների ամբոխ, լուսնյակ, տաք ծով՝ լեռան ստորոտին, ճառ, որը ես չէի հասկանում, բայց որը կտոր-կտոր էր անում սիրտս...

Ամեն բան անցավ-գնա՞ց։

## ԳԼՈՒԽ XIII

**Ակսոր։ Քաղաքագլուխը։ Վոլգան։ Պերմը։**

Ապրիլի տասի առավոտյան ժանդարմական սպան ինձ բերեց գեներալ-նահանգապետի հիմնարկը։ Այնտեղ, գրասենյակի գաղտնի բաժանմունքում, հարազատներիս թույլատրված էր հրաժեշտ տալ ինձ։

Հասկանալի է, որ այս ամենը տհաճ էր ու հոգեմաշիչ. վխտացող լրտեսներ, գրագիրներ, հրահանգավորում այն ժանդարմին, որը տանելու էր ինձ, առանց վկաների որևէ բան ասելու անհնարինություն,— մի խոսքով՝ ավելի վիրավորական ու ավելի տխուր իրավիճակ չէր կարելի ստեղծել։

Ես շունչ քաշեցի, երբ կառքը, վերջապես, շարժվեց Վլադիմիրյան ճանապարհով։

Per me si va nella citta dolente;
Per me si va nel eterno dolore...[1]

1 Ինձանով են գնում գեհենն ահավոր,
Ինձանով են գնում հոգվոց հարատևոր... (իտալ., Դանթե, Աստվածային կատակերգություն, «Դժոխք», երգ երրորդ)։ Թարգմ.՝ Արքուն Ֆայանի։



Ինչ-որ կայարանում ես գրեցի այս երկու տողը, որոնք լավ են սազում դժոխքի նախադռանն ու Սիբիրի մայրուղուն։

Մոսկվայից յոթ վերստ այն կողմ մի պանդոկ կա, որ կոչվում է «Պերով»։ Մոտիկ ընկերներիցս մեկն ինձ խնդրեց սպասել այնտեղ։ Ես ժանդարմին առաջարկեցի օգի խմել, նա համաձայնեց. քաղաքից հեռու էր։ Մենք նստեցինք մտանք, բայց ընկերս այնտեղ չէր։ Ես ամեն կերպ ուզում կախ էի գցում պանդոկում, ժանդարմն այլևս չէր ուզում սպասել, կառապանը պատրաստվում էր քշել ձիերը, հանկարծ՝ եռաձի մի կառք սլանում է ուղիղ դեպի պանդոկը։ Ես նետվեցի դեպի դուռը... Վաճառականի երկու անծանոթ ֆեֆչի որդյակներ աղմուկով իջնում էին կառքից։ Ես նայեցի հեռուն՝ ոչ մի շարժվող կետ, ոչ մի մարդ չէր երևում Մոսկվա տանող ճանապարհին... Դառն էր հեռանալը։ Ես մի քանկոպեկանոց տվի կառապանին, ու մենք սլացանք՝ ոգեզից արձակված նետի պես։

Մենք գնում էինք առանց կանգ առնելու. ժանդարմին հրամայված էր անցնել օրը երկու հարյուր վերստից ոչ պակաս։ Դա տանելի կլիներ, միայն թե ոչ ապրիլի սկզբին։ Ճանապարհը տեղ-տեղ ծածկված էր սառույցով, տեղ-տեղ՝ շրով ու ցեխով. ըստ որում, մոտենալով Սիբիրին՝ կայարանից կայարան ավելի ու ավելի էր վատանում։

Առաջին ճամփորդական զավեշտը տեղի ունեցավ Պոկրովում։

Մենք մի քանի ժամ կորցրինք սառույցի պատճառով, որ գալիս էր գետով՝ ընդհատելով բոլոր կապերը մյուս ափի հետ։ Ժանդարմն շտապում էր. մեկ էլ Պոկրովի կայարանապետը հայտարարում է, թե ձիեր չկան։ Ժանդարմը ցույց է տալիս, որ ճամփորդության վկայագրում ասված է՝ եթե փոստային ձիեր չկան, տալ սուրհանդակային։ Վերակացուն պատասխանում է, թե ձիերը վերցված են ներքին գործոց մինիստրի օգնականի համար։ Ինչպես պետք էր սպասել՝ ժանդարմն սկսեց վիճել, աղմկել. վերակացուն վազեց տեղացիներից ձիեր ճարելու։ Ժանդարմը գնաց նրա հետ։

Ես ձանձրացա կայարանապետի կեղտոտ սենյակում նրանց սպասելուց։ Դարպասից դուրս եկա և սկսեցի քայլել

տան առաջ։ Դա ինքնամոլ բանտարկությունից հետո առաջին զբոսանքն էր՝ առանց զինվորի։

Մուտ կես ժամ քայլել էի, երբ հանկարծ դեմս եկավ մի մարդ՝ առանց ուսադիրների համազգեստային սերթուկով ու երկնագույն pour le mérite[1]-ը վզին։ Նա սևեռուն համառությամբ նայեց վրաս, անցավ, իսկույն ետ եկավ ու հանդգնի տեսքով հարցրեց ինձ.

— Ժանդարմը ձե՞զ է ուղեկցում Պերմ։

— Ինձ,— պատասխանեցի ես՝ կանգ չառնելով։

— Սպասե՛ք, սպասե՛ք, ո՞նց է համարձակվում...

— Ո՞ւմ հետ պատիվ ունեմ խոսելու։

— Ես տեղիս քաղաքագլուխն եմ,— պատասխանեց անծանոթը մի ձայնով, որի մեջ հնչում էր հասարակական նման դիրքի վեհության խոր գիտակցումը։— Ահավասի՛կ, ես ամեն րոպե մինիստրի օգնականին եմ սպասում, իսկ այստեղ քաղաքական կալանավորները ճեմո՛ւմ են փողոցներում։ Էդ ի՞նչ էշ ժանդարմ է։

— Չէի՞ք հաճի դիմել իրեն՝ ժանդարմին։

— Ես ոչ թե կդիմեմ, այլ կձերբակալեմ նրան, ես կհրամայեմ մահակի հարյուր հարված տալ նրան, իսկ ձեզ կուղարկեմ ոստիկանի հետ։

Ես գլխով արի նրան, շպասելով ճառի ավարտին, ու արագ քայլերով մտա կայանատուն։ Պատուհանից լսում էի, թե նա ինչպես բորբոքված խոսում էր ժանդարմի հետ, ինչպես սպառնում էր նրան։ Ժանդարմը ներողություն էր խնդրում, բայց, կարծես, այնքան էլ վախեցած չէր։ Մի երեք րոպե հետո երկուսով էլ ներս մտան. ես նստել էի դեմքս պատուհանին ու նրանց չէի նայում։

Ժանդարմին տված քաղաքագլխի հարցերից ես անմիջապես տեսա, որ նա ուզում է իրեն՝ իմանալու համար, թե ի՞նչ գործով, ինչո՞ւ և ինչպե՞ս եմ աքսորվել։ Ես համառորեն լռում էի։ Քաղաքագլուխը անգամ մի ճառախոսություն սկսեց իմ և ժանդարմի արանքում.

— Մեր դրության մեջ ոչ ոք չի ուզում մտնել։ Ի՞նչ է, ինձ հաճելի՞ է նախատել զինվորին կամ անախորժություններ պատճառել մի մարդու, որին կյանքումս չեմ տեսել։ Պատասխանատվությա՞ն խնդիր է։ Քաղաքագլուխը քաղաքի տերն է։ Ինչ լինում է՝ պատասխա՞ն տուր. գանձարանը կողոպտեն՝ մեղավո՞ր ես, եկեղեցին վառվեց՝ մեղավո՞ր ես, հարբածները շատ են փողոցում՝ մեղավո՞ր ես, գինի քիչ են խմում՝ նո՛ւյնպես մեղավոր ես (վերջին դիտողությունը նրա դուրը շատ եկավ և նա շարունակեց ավելի աշխույժ տոնով). ու էլի էսպես կողքովն անցնեիք, նա էլ հարցներ. «Ո՞նց թե, քաղաքական կալանավորը զբոսնո՞ւմ է. դատի՛ տալ քաղաքագլխին...»։

Ի վերջո, նրա պերճախոսությունն ինձ ձանձրացրեց, և ես, դառնալով նրան՝ ասացի.

— Արեք այն ամենը, ինչ պարտավոր եք ծառայությամբ, բայց ես ձեզ խնդրում եմ ազատեք ինձ խրատներից։ Ձեր խոսքերից տեսնում եմ՝ դուք սպասում էիք, որ ես խոնարհվեի ձեզ։ Ես անծանոթ մարդկանց գլուխ տալու սովորություն չունեմ։

Քաղաքապետը շփոթվեց։

«Մեզանում միշտ այդպես է,— ասում էր Ա. Ա.-ն,— ով առաջինը կսպառնա, կսկսի գոռալ՝ նա էլ կհաղթի։ Եթե պետի հետ խոսելիս դուք նրան թույլ տաք ձայնը բարձրացնել՝ կորած եք. լսելով իր գոռգոռոցը՝ նա վայրի գազան կկտրի։ Բայց եթե առաջին իսկ կոպիտ խոսքից դուք գոռաք՝ նա անպայման կվախենա ու տեղի կտա, մտածելով, որ դուք ուժեղ կամք ունեք, և որ այդպիսի մարդկանց պետք չէ շատ դրդռել»։

Քաղաքապետը ժանդարմին ուղարկեց իմանալու, թե ի՞նչ եղան ձիերը և, դառնալով ինձ, ներողություն խնդրելու պես ասաց.

— Ես ավելի շատ զինվորի համար այդպես վարվեցի. դուք չգիտեք ի՞նչ բան է մեր զինվորը. ամենափոքր զանցանք անգամ թույլ չպիտի տալ. բայց հավատացեք, ես կարողանում եմ մարդկանց զանազանել... Թույլ տվեք հարցնել ձեզ՝ ի՞նչ դժբախտ դեպք է...

— Գործը փակվելուց հետո մեզ արգելել են պատմել։

— Այ էդպես է... իհարկե... ես չեմ համարձակվում...—

[1] շքանշանի ժապավեն (ֆրանս.)։

և քաղաքագլխի հայացքն արտահայտեց հետաքրքրասիրության տառապանք։ Նա մի քիչ լռեց։— Ես մի հեռու ազգական ունեի, մի տարի է նստել էր Պետրոպավլովյան բերդում. դե՛, գիտե՛ք, կապեր են, էլի՛... Կնոջ-երեք, տեղի ունեցածը ծանրացել է հոգուս վրա, դուք երևի դեռ բարկացա՞ծ եք։ Ես զինվորական մարդ եմ, խստապահանջ, սովորություն է. տասնյոթ տարեկանից գունդ եմ մտել, շուտ տաքացող բնավորություն ունեմ. բայց մի բոպեից ամեն բան անցավ։ Ես բան չեմ անի ձեր ժանդարմին, գրողը տանի...

Ժանդարմը ներս եկավ և զեկուցեց, որ ձիերը մի ժամից շուտ հնարավոր չէ արոտավայրից բերել։

Քաղաքապետը ժանդարմին հայտնեց, որ ինքը ներում է նրան՝ իմ միջնորդությամբ, ապա, դառնալով ինձ՝ ավելացրեց.

— Իսկ դուք, խնդրում եմ, մի՛ մերժեք ու թե էլ չեք բարկանում՝ թույլ տվեք հրավիրելու ձեզ նախաճաշի՝ աստծո տվածով. ես ապրում եմ էստեղից երկու տուն դենը։

Դա այնքան ծիծաղելի էր մեր հանդիպումից հետո, որ ես գնացի քաղաքագլխի տուն ու կերա նրա ձուկն ու խավիարը և խմեցի նրա օղին ու մադերան։

Նա այնքան բացվեց, որ պատմեց ինձ իր բոլոր ընտանեկան գործերը, նույնիսկ կնոջ յոթնամյա հիվանդության մասին։ Նախաճաշից հետո նա հպարտ գոհունակությամբ սեղանին դրված սկահակից վերցրեց ու տվեց ինձ կարդալու իր որդու «բանաստեղծությունը», որը կադետական կորպուսում հրապարակային ընթերցման էր արժանացել քննության ժամանակ։ Պարտավորեցնելով ինձ վստահության այդպիսի ակնհայտ ապացույցներով, նա խորամանկորեն անուղղակի անցավ իմ գործին։ Այս անգամ ես մասամբ բավարարեցի քաղաքագլխին։

Այդ քաղաքագլուխն ինձ հիշեցրեց գավառային դատարանի քարտուղարին, որի մասին պատմում էր մեր Շչեպկինը*։ «Ինը ոստիկանապետ փոխվեց, բայց քարտուղարն անփոփոխ մնաց ու առաջվա նման կառավարում էր գավառը։ «Էդ ո՞նց եք բոլորի հետ լեզու գտնում»,— հարցրել էր նրան Շչեպկինը։ «Ոչինչ, աստծու օգնությամբ մի կերպ յոլա ենք գնում։ Ասենք, մեկը հենց սկզբից էնքան հերսո՞տ է, աղ ու ձախ քացի է տալիս, գոռում, հայհոյում, համ գործի՞ց կվռնդեմ, ասում է, համ էլ, ասում է, կենտրոնի՞ն կհայտնեմ. դե՛, գիտե՛ք, մերը ենթակայի գործ է, լռում ես ու մտածում՝ վախտը գա՝ հլա կճկոի, էդ դեռ առաջին լուծն է։ Ու ճիշտ որ, մեկ էլ տեսար՝ արդեն լավ սանձի է եկել...»

... Երբ մենք մոտենում էինք Կազանին, Վոլգան գարնանային վարարման իր ողջ փայլի մեջ էր։ Մի լրիվ կայարան՝ Ուսլոնից Կազան հարկավոր էր լողալ լաստանավով, գետը վարարել էր տասնհինգ վերստի վրա, գուցե ավելի։ Անձրևոտ ու ցուրտ օր էր։ Փոխադրումը դադարել էր, բազմաթիվ սայլեր ու ամեն տեսակ կառքեր կանգնել-սպասում էին ափին։

Ժանդարմը գնաց վերակացուի մոտ ու լաստանավ պահանջեց։ Վերակացուն դժկամությամբ էր համաձայնվում, ասում էր՝ ի միջի այլոց, ավելի լավ կլինի սպասենք, վատ ժամանակ է։ Ժանդարմն շտապում էր, որովհետև հարբած էր, որովհետև ուզում էր ցույց տալ իր ուժը։

Իմ կառքը տեղավորեցին ոչ մեծ մի լաստանավի վրա, ու մենք սկսեցինք գետանցը։ Եղանակը, կարծես, հանդարտվեց. կես ժամ հետո թաթարը առագաստը պարզեց, մեկ էլ հանկարծ խաղաղված փոթորիկը նորից ուժեղացավ։ Այնքան թափով էինք սլանում, որ հասնելով մի գերանի՝ ուժգին խփվեցինք, խարխուլ լաստանավը ճաքեց, ու ջուրը լցվեց տախտակամածը։ Տհաճ վիճակ էր, սակայն թաթարը կարողացավ լաստանավը ծանծաղուտի կողմն ուղղել։

Կողքով վաճառականական բեռնանավ էր անցնում, ձայն տվինք, խնդրեցինք մակույկ ուղարկել. բուլակները լսեցին ու ոչ մի օգնություն ցույց չտալով անցան։

Փոքրիկ մակույկով, կնոջ հետ, մի գեղջուկ մոտեցավ, հարցրեց ի՞նչ է պատահել ու լաստանավ ելավ՝ ասելով. «Դե, ի՞նչ կա որ, ծակը փակեք ու, խաչ հանելով, ճամփա ընկեք, ի՞նչ եք թթվել, ա՛յ, դու թաթար ես, դրա համար էլ բան չես կարողանում անել»։

Թաթարը իրոք որ շատ էր տագնապած։ Նախ՝ երբ ջուրը թրջեց՝ քնած ժանդարմին, սա վեր թռավ ու խկույն սկսեց ծծել թաթարին։ Երկրորդ՝ լաստանավը պետական էր, և թաթարը հա՛ կրկնում էր.

— Ա՜յ, բա որ խորտակվի՝ ինձ ի՞նչ կանեն, ի՞նչ կանեն։ Ես նրան մխիթարում էի, ասելով, թե այդ ժամանակ լաստանավի հետ ինքն էլ կխեղդվի։

— Լավ կլինի, աղա՜, թե որ խեղդվեմ, բա որ չխեղդվե՞մ,— պատասխանում էր նա։

Մուժիկն ու բանվորները, ամեն տեսակ բաներ խցկելով ծակը փակեցին. մուժիկը կացնով թխկթխկացրեց, ինչ-որ տախտակ մեխեց. ապա, մինչև գոտկատեղը ջրի մեջ, օգնեց մյուսներին՝ լաստանավը ծանծաղուտից դուրս քաշելու, և մենք շուտով Վոլգայի հունն ընկանք։ Գետը կատաղի քշում էր։ Քամին ու ձյունախառն անձրևը մտրակում էին երեսներս, ցուրտը ոսկորներիս էր հասնում, բայց շուտով մառախուղի ու ջրի հոսանքի միջից երևաց Իվան Ահեղի հուշարձանը։ Թվում էր, թե վտանգն անցել է, երբ հանկարծ թաթարը սրտաճմլիկ ճչաց. «Լցվո՛ւմ է, լցվո՛ւմ է». և իրոք՝ ջուրը թափով ներս է հոսում փակած անցքից։ Մենք գետի հենց մեջտեղն էինք, լաստանավը գնալով ավելի դանդաղ էր շարժվում, կարելի էր նախատեսել, թե ե՛րբ լրիվ կսուզվի։ Թաթարը հանել էր փափախն ու աղոթում էր։ Սենեկապանս, գլուխը կորցրած, լաց էր լինում ու ասում. «Մնաս բարո՛վ, մերիկս, էլ քեզ չեմ տեսնի»։ Ժանդարմը հայհոյում էր ու խոստանում ափին բոլորին էլ մի լավ քոթակ տալ։

Սկզբում ես էլ սարսափեցի, բացի դրանից, անձրևախառն քամին ավելացնում էր իրարանցումն ու շփոթմունքը։ Բայց այն միտքը, որ անհեթեթ բան կլինի, եթե ոչինչ շարած զոհվեմ, պատանեկան այդ «Quid timeas? Caesarem vehis!»[1]-ը հաղթանակեց, և ես հանգիստ սպասում էի վերջին, հավատացած, որ չեմ զոհվի Ուլլոնի ու Կազանի արանքում։ Կյանքը հետագայում ստիպում է ետ վարժվել հպարտ հավատից, պատժում է դրա համար. այդ պատճառով էլ հենց ջահելությունը անվեհեր է և լի է հերոսությամբ, իսկ տարիքն առած մարդը զգույշ է և հազվադեպ է ոգևորվում։

... Քառորդ ժամ անց մենք ափին էինք, Կազանի կրեմլի պատերի տակ՝ թրջված ու գողահար։ Ես մտա առաջին իսկ

1 «Ի՞նչ ես վախենում։ Դու տանում ես Կեսարին» (լատ.)։



գինետունը, մի բաժակ թունդ գինի խմեցի, վրայից խաշած ձու կերա ու գնացի փոստատուն։

Գյուղերում ու փոքրիկ քաղաքներում կայարանապետերը ճամփորդների համար սենյակ ունեն։ Մեծ քաղաքներում բոլորն իջևանում են հյուրանոցներում, և կայարանապետերը ճամփորդների համար ոչ մի տեղ չունեն։ Ինձ տարան փոստի գրասենյակը։ Կայարանապետը ցույց տվեց իր սենյակը, այնտեղ երեխաներ ու կանայք էին, հիվանդ ծերուին գամված էր անկողնին. մի անկյուն էլ չկար, որ հագուստս փոխեի։ Ես նամակ գրեցի ժանդարմական գեներալին և խնդրեցի որևէ տեղում մի սենյակ տրամադրել՝ տաքանալու և շորերս չորացնելու համար։

Մի ժամից ժանդարմը ետ եկավ ու ասաց, որ կոմս Ապրակսինը կարգադրել է սենյակ հատկացնել։ Մի երկու ժամի չափ սպասեցի, ոչ ոք չեկավ. ես նորից ուղարկեցի ժանդարմին։ Նա լուր բերեց, թե գնդապետ Պուլը, որին գեներալը հրամայել էր սենյակ տրամադրել ինձ, ազնվականական ակումբում թուղթ է խաղում, և մինչև վաղը անկարելի է սենյակ առանձնացնել։

Դա բարբարոսություն էր, և ես երկրորդ նամակը գրեցի կոմս Ապրակսինին, խնդրելով անհապաղ ճանապարհել ինձ, ասելով, որ հաջորդ կայանում ես կարող եմ ապաստան գտնել։ Կոմսը բարեհաճել էր քուն մտնել, և նամակը մինչև առավոտ տեղ չհասավ։ Ոչինչ անել չէի կարող. հանեցի թաց հագուստս ու փաթաթվելով «պետի» շինելով՝ պառկեցի փոստի գրասենյակի սեղանին. բարձի տեղակ մի հաստ գիրք վերցրի ու վրան մի քանի կտոր սպիտակեղեն դրի։

Առավոտյան մարդ ուղարկեցի՝ նախաճաշ բերելու։ Փոստի աշխատողներն արդեն հավաքվում էին։ Էկզեկուտորն ինձ նախատում էր, թե պետական հիմնարկում նախաճաշելը, իհարկե, լավ չէ. անձամբ իր համար մեկ է, բայց փոստի պետին կարող է դուր չգալ։

Ես կատակով ասում էի, թե վնդել կարելի է միայն նրան, ով իրավունք ունի դուրս գալու, իսկ ով որ չունի՝ ակամա ստիպված է ուտել ու խմել այն տեղում, ուր ինքը պահվում է...

Հաջորդ օրը կոմս Ապրակսինը թույլատրեց ինձ երեք օր մնալ Կազանում և ապրել հյուրանոցում։

Այդ երեք օրը ժանդարմի հետ թափառում էի քաղաքում։ Ծրեսները ծածկած թաթարուհիները, նրանց այտոսկրոտ ամուսինները, ուղղափառ եկեղեցիների կողքին մուսուլմանական մեչիտները՝ այս ամենը հիշեցնում է Ասիան ու Արևելքը։ Վլադիմիրում, Նիժնիում առնում ես Մոսկվայի շունչը, այստեղ՝ հեռաստանի։

... Պերմում ինձ ուղիղ նահանգապետի մոտ բերին։ Նա մեծ հավաքույթի մեջ էր, այդ օրը նրա դստերը պսակում էին ինչ-որ սպայի հետ։ Նա պահանջեց, որ ներս մտնեմ, և ես ճամփորդական աղտոտված արխալուղով, կեղտի ու փոշու մեջ՝ պիտի ներկայանայի Պերմի ողջ հասարակությանը։ Նահանգապետը, ամեն տեսակ տխմարություններ դուրս տալով, ինձ արգելեց ծանոթանալ լեհ աքսորականների հետ և կարգադրեց մոտ օրերս ներկայանալ իրեն, ասելով, որ այդ ընթացքում ինձ համար զբաղմունք կգտնի գրասենյակում։

Այդ նահանգապետն ուկրաինացի էր, աքսորյալներին չէր նեղում և առհասարակ հանդարտ մարդ էր։ Նա սուսիկ-փուսիկ բարելավում էր իր կարողությունը, ինչպես խլուրդը ինչ-որ տեղ, գետնի տակ՝ աննկատ ավելացնում էր հատիկը հատիկին ու բավականին ետ գցեց սև օրվա համար։

Հանուն ինչ-որ անհասկանալի հսկողության և կարգուկանոնի՝ նա բոլոր Պերմ աքսորվածներին հրամայում էր շաբաթ օրերը առավոտյան ժամը տասին ներկայանալ իրեն։ Ցխամորճն ու թուղթն առած՝ նա դուրս էր գալիս, ստուգում՝ բոլո՞րն են ներկա, և եթե մեկն ու մեկը չէր լինում՝ թաղային ուղարկում էր պատճառն իմանալու, համարյա ոչ ոքի ոչինչ չէր ասում ու բաց էր թողնում։ Այս կերպ ես նրա դահլիճում ծանոթացա բոլոր լեհերին, որոնց հետ նա ինձ զգուշացնում էր ծանոթություն չհաստատել։

Տեղ հասնելուս հաջորդ օրը ժանդարմը գնաց, և ես ձերբակալությունից հետո առաջին անգամ հայտնվեցի ազատության մեջ։

Ազատության մեջ... Սիբիրի սահմանին ընկած փոքրիկ քաղաքում, առանց դույզն ինչ փորձառության, գաղափար չունենալով այն միջավայրից, որի մեջ պիտի ապրեի։



Մանկասենյակից ես անցա լսարան, լսարանից՝ ընկերական խմբակ,— թեորիաներ, երազանքներ, յուրայիններ, ո՛չ մի գործարար հարաբերություն։ Հետո բանտ՝ որպեսզի այդ բոլորը նստվածք տար։ Կյանքի հետ գործնական շփումն սկսվում էր այստեղ՝ Ուրալյան լեռնաշղթայի մոտ։

Կյանքն իսկույն իրեն զգացնել տվեց. գալուս հաջորդ օրը ես նահանգապետարանի պահակի հետ գնացի բնակարան փնտրելու, նա ինձ տարավ մեծ, միհարկանի մի տուն։ Ինչքան էլ նրան հասկացնում էի, թե ես փնտրում եմ փոքրիկ տուն, կամ ավելի լավ կլիներ՝ տանմի մասը, նա հարատև պահանջում էր, որ ներս մտնեմ։

Տանտիրուհին ինձ նստեցրեց բազմոցին, տեղեկանալով, որ Մոսկվայից եմ՝ հարցրեց, թե Մոսկվայում չե՞մ տեսել, արդյոք, պ-րն Կաբրիտին։ Ես ասացի, որ նման ազգանուն նույնիսկ չեմ էլ լսել։

— Ո՞նց թե,— ասաց պառավը,— Կաբրիտ ազգանունը,— և տվեց նրա անունն ու հայրանունը։— Դիտե՞ս, տե՛ր իմ, նա մեզ մոտ վիստնահանգապետ[1] էր։

— Դե ես ինն ամիս նստած էի բանտում, գուցե դրա համար էլ չեմ լսել,— ժպտալով ասացի ես։

— Հենց այդպես էլ եղած կլինի։ Է՛, տե՛ր իմ, հիմա տունը վարձո՞ւմ ես։

— Մեծ է, շատ է մեծ, ես ծառայողին էլ եմ ասել։

— Ավել թիքան փոր չի ծակի։

— Այդպես է, բայց ավելի համար դուք ավել էլ փող կուզեք։

— Է՛, հարազատս, էդ ո՞վ է քեզ իմ գնի մասին ասել, ես դեռ ձայն էլ չեմ հանել։

— Դե՛, ես հասկանում եմ, որ այսպիսի տան համար չի կարելի էժան ուզել։

— Իսկ դու ինչքա՞ն ես տալիս։

Նրանից ազատվելու համար ասացի, թե երեք հարյուր հիսուն ռուբլուց ավել չեմ տա։

— Է՛հ, էդքանի համար էլ շնորհակալ եմ, հրամայի։

---

1 այսինքն՝ վիցենահանգապետ։

ադամնյակս, թող ճամբարուկներդ բերեն, ու մի բաժակ էլ տաներիվ թեմի։

Այդ գինը անհավատալի էժան թվաց, ես վարձեցի տունը և երբ ուզում էի գնալ՝ նա ինձ կանգնեցրեց։

— Մոռացա հարցնեմ՝ սեփական կով պահելո՞ւ ես։

— Ո՛չ, աստվա՜ծ սիրեք,— պատասխանեցի ես՝ վիրավորվելու չափ զարմացած նրա հարցից։

— Դե՛, ուրեմն՝ քեզ կաթնասեր կբերեմ։

Ես տուն գնացի, սարսափով մտածելով, թե ո՞ւր եմ ընկել և ի՞նչ եմ դարձել, որ կասկածեցին, թե կարող է սեփական կո՞վ էլ պահեմ։

Բայց դեռ չէի հասցրել շուրջբոլորս աչք ածել, երբ նահանգապետն ինձ հայտնեց, որ ես փոխադրվում եմ Վյատկա, քանի որ Վյատկա նշանակված մի ուրիշ աքսորյալ խնդրել էր իրեն տեղափոխել Պերմ, որտեղ ինքը ազգականներ ուներ։ Նահանգապետն ուզում էր, որ ես հենց մյուս օրն էլ մեկնեի։ Դա հնարավոր չէր. մտադրվելով որոշ ժամանակ Պերմում մնալ, ես մանր-մունր բաներ էի գնել. հարկավոր էր ծախել դրանք թեկուզ կես գնով։ Զանազան խուսափողական պատասխաններից հետո նահանգապետը թույլատրեց ինձ երկու օր մնալ՝ խոսք առնելով, որ մյուս աքսորյալի հետ տեսնվելու առիթ չեմ փնտրի։

Պատրաստվում էի հաջորդ օրը ծախել ձին ու մնացած անպետքությունը, երբ մեկ էլ եկավ ոստիկանապետը՝ բերելով քսանչորս ժամվա մեջ մեկնելու կարգադրություն։ Ես նրան բացատրեցի, որ նահանգապետը հետաձգել է մեկնումս։ Ոստիկանապետը ցույց տվեց գրությունը, որով նրան իրոք հրամայված էր քսանչորս ժամվա մեջ ինձ ճամփու դնել։ Գրությունն ստորագրված էր հենց նույն օրը, հետևաբար՝ ինձ հետ տեղի ունեցած խոսակցությունից հետո։

— Ա՛հ,— ասաց ոստիկանապետը,— հասկանում եմ, հասկանում, մեր էդ հերոսն ուզում է, որ գործի պատասխանատուն ե՛ս լինեմ։

— Գնանք նրան բռնացնենք։

— Գնա՛նք։

Նահանգապետն ասաց, որ ինքը մոռացել է ինձ տված



թույլտվությունը։ Ոստիկանապետը խորամանկորեն հարցրեց, թե նա չի՞ հրամայի, արդյոք, փոխել գրությունը։

— Զարշարվել արժե՞ որ,— պարզամտորեն ավելացրեց նահանգապետը։

— Բռնացրի՞նք,— ասաց ինձ ոստիկանապետը, քավանությունից շփելով կեղտոտ ձեռքերը...,— թղթակիցի՛ մեկը։

Պերմի ոստիկանապետը պատկանում էր ապամա-քաղաքացիական պաշտոնյաների հատուկ տեսակին։ Դրանք այն մարդիկ են, ովքեր զինվորական ծառայության ժամանակ բռնություն են ունեցել սվինի կամ գնդակի մի թեթև հարված ստանալ, դրա դիմաց քաղաքացիի[1] պաշտոնները առավելապես նրանց են տրվում։

Գնդում նրանք վարժվել են շփոտության որոշ վարվելակերպերի, սովորել պատվի անձեռնմխելիության, ազնվության վերաբերյալ զանազան ասույթներ, գրագիրների հասցեին կծու ծաղրանքի խոսքեր։ Նրանցից կրտսերները կարդացել են Մարլինսկուն ու Զագոսկինին, անգիր գիտեն «Սուվերենի գերտ», «Վոյնարովսկու» սկիզբը և հաճախակի կրկնում են սերտած բանաստեղծերը։ Օրինակ, ամանք ծխող մարդ տեսնելիս ամեն անգամ ասում են.

Սաթը ծխում է նրա շուրթերին[2]։

Նրանք բոլորն էլ, առանց բացառության, խորապես ու բացահայտ գիտակցում են, որ իրենց դիրքը շատ ավելի ցածր է իրենց արժանապատվությունից, որ միայն կարիքը կարող է պահել իրենց այդ «թաղի մրոտողների աշխարհում», որ եթե աղքատությունն ու վերքերը չլինեին՝ իրենք բանակի կորպուսներ կղեկավարեին կամ էլ գեներալ-ադյուտանտներ կլինեին։ Յուրաքանչյուրը նախկին ընկերներից մեկն ու մեկի ցայտուն օրինակն է թարում ու ասում.

— Ա՛յ, Կրժյոը կամ Թիդիգերը, ախր նույն հրամանով ենք կոնտա՞ կարդվել։ Մի բնակարանում էինք ապրում՝

---

1) Քաղաքացի— պետական հիմնարկի աստիճանավոր, որի վրա դրվում են ոստիկանական ու տնտեսավարական պարտավորություններ։

2) սպայական առաջին աստիճան՝ հեծելազորում։

Պետրուշան, Ալյոշան. դե՛ ես, տեսնում եք, գերմանացի չեմ, համ էլ ոչ մի աջակցություն չունեի. դե գնա ու պահակ դարձիր։ Կարծում եք հե՞շտ է մեր հասկացողության տեր ազնիվ մարդու համար ոստիկանի պաշտոն վարել։

Նրանց կանայք է՛լ ավելի շատ են մղկտում ու սրտեղած ամեն տարի մի բան տանում գրավատուն, փող վերցնում և մեկնում Մոսկվա այն պատրվակով, թե մայրը կամ մորաքույրը հիվանդ է և ուզում է վերջին անգամ տեսնել իրենց։

Եվ այդպես սպրում են նրանք մի տասնհինգ տարի։ Ամուսինը, գանգատվելով բախտից, մտրակում է ոստիկաններին, քոթակում քաղքենիներին, ստորաքարշություն է անում նահանգապետի առաջ, հովանավորում գողերին, փաստաթղթեր գողանում ու կրկնում է «Բախչիսարայի շատրվանի» տողերը։ Կինը, գանգատվելով բախտից ու գավառական կյանքից, վերցնում է ինչ որ տալիս են, թալանում խնդրատուներին, խանութները և սիրում է լիալուսին գիշերները, որոնք անվանում է «լուսնյակ» գիշերներ։

Այս բնութագրի վրա ես կանգ առա, որովհետև սկզբում այդ պարոնները մոլորության մեջ էին գցել ինձ, և ես նրանց իրոք մի քիչ ավելի լավ էի համարում մյուսներից, բայց ամենևին էլ այդպես չէր...

Ես Պերմից հետո տարա անձնական մի հիշողություն, որ թանկ է ինձ համար։

Աքսորյալների նահանգապետական ստուգատեսներից մեկի ժամանակ ինձ իր մոտ հրավիրեց մի քյոնձ[1]։ Այնտեղ մի քանի լեհ կար։ Նրանցից մեկը նստել էր լուռ, մտախոհ ծխում էր փոքրիկ ծխամորճը. թախիծ, անելանելի մի թախիծ էր նշմարվում նրա ամեն ինչի մեջ։ Նա կորացած էր, նույնիսկ կողքի ծռված, նրա դեմքը լեհ-լիտվական այն անկանոն տեսակից էր, որը նախ զարմացնում է, ապա՝ ձգում։ Այդպիսի դիմագծեր ուներ մեծագույնը լեհերից՝ Թադեուշ Կոստյուշկան։ Ցեխանովիչի* հագուստը վկայում էր ահավոր աղքատության մասին։

Մի քանի օր հետո ես զբոսնում էի ամայի բուլվարում, որով մի կողմից վերջանում էր Պերմը. մայիսի երկրորդ կեսն էր, փթթում էր մատղաշ սաղարթը, կեչիները ծաղկել էին (հիշում եմ՝ ամբողջ ծառուղին կեչի էր), ու մարդ չկար։ Մեր գավառացիք չեն սիրում պլատոնական զբոսանքներ։ Երկար թափառելուց հետո վերջապես բուլվարի մյուս կողմում, այսինքն՝ դաշտի մեջ մի մարդ տեսա, որը հերբարիումի համար կամ հենց այնպես պոկում էր այդ երկրամասի միանման ու աղքատիկ ծաղիկները։ Երբ նա գլուխը բարձրացրեց՝ ես ճանաչեցի Ցեխանովիչին ու մոտեցա։

Հետագայում ես շատ եմ տեսել լեհական գործի նահատակներ,— լեհական պայքարի հայսմավուրքը շա՛տ է հարուստ,— Ցեխանովիչն առաջինն էր։ Երբ նա ինձ պատմեց, թե իրենց ինչպես էին հալածում գեներալ-ադյուտանտի հագուստով դահիճները, այդ բռունցքները, որոնցով հարվածում էր Ձմեռային պալատի գազազած բռնակալը, այնժամ ինձ խղճուկ թվացին մեր ձախորդությունները, մեր բանտն ու մեր հետաքննությունը։

Վիլնոյում այդ ժամանակ հաղթական հակառակորդի կողմից պետ էր նշանակված հայտնի ռենեգատ Մուրավյովը*, որն իրեն անմահացրեց պատմական այն ասույթով, թե «ինքը այն Մուրավյովներից չէ, որոնց կախում են, այլ նրանցից, որոնք կախում են»։ Նիկոլայի նեղմիտ, վրիժառու տեսակետից՝ դյուրագրգիռ իշխանասիրության և բիրտ անողոքության տեր մարդիկ ամենապիտանին, առնվազն ամենահամակրելին էին։

Գեներալները,— որ քննարաններում նստած տանջում էին էմիսարներին, նրանց ծանոթներին, նրանց ծանոթների ծանոթներին,— կալանավորների հետ վարվում էին ամենամի դաստիարակությունից, նրբանկատության ամեն մի զգացումից զուրկ սինքլորների նման, ըստ որում շատ լավ իմանալով, որ իրենց բոլոր արարքները քողարկված են Նիկոլայի՝ լեհ նահատակների արյունով ու լեհ մայրերի արցունքով ողողված զինվորական շինելով... Մի ողջ ժողովրդի այդ շարաշարանց շաբաթը դեռ սպասում է իր Ղուկասին կամ Մատթեոսին... Բայց թող նրանք իմանան՝ դահիճները մեկը մյուսի

[1] լեհ կաթոլիկ քահանա։

[1] այստեղ՝ աննպատակ։

*հետևից պատմության անարգանքի սյունին կգամվեն և կդրոշմեն այնտեղ իրենց անունը։ Դա կլինի Նիկոլայի ժամանակաշրջանի դիմանկարների շարքը 1812 թվականի զորավարների* pendant *պատկերասրահում*[*]։

*Մուրավյովը կալանավորներին «դու» էր ասում և հայհոյում փողոցային խոսքերով։ Մի անգամ նա այնքան էր գազազել, որ մոտեցել էր Յեխանովիչին ու փորձել էր բռնել նրա կրծքից, գուցեև խփել, բայց դեմ էր առել շղթայված կալանավորի հայացքին, շփոթվել էր ու շարունակել այլ տոնով։*

*Ես պատկերացրի, թե ինչպիսին պիտի եղած լիներ այդ հայացքը. դեպքից երեք տարի հետո այդ պատմությունն անելիս Յեխանովիչի աչքերը վառվում էին, և ուռչում էին երակները նրա ճակատի ու ծամոված վզի վրա։*

*— Իսկ ի՞նչ կանեիք դուք՝ շղթաների մեջ։*

*— Ես ատամներո՞վս կհոշոտեի նրան, ես իմ գանգով, իմ շղթաներով կջարդեի նրան,— ասաց նա դողալով։*

*Յեխանովիչն սկզբում աքսորված էր Վերխոտուրյե, Պերմի նահանգի ամենահեռավոր, Ուրալյան լեռներում կորած, ձյան տակ թաղված քաղաքներից մեկը, որը ճանապարհներից այնքան է կտրված, որ ձմռանը համարյա ոչ մի հաղորդակցություն չունի։ Հասկանալի է, որ Վերխոտուրյեում ապրելն ավելի վատ է, քան Օմսկում կամ Կրասնոյարսկում։ Բոլորովին մենակ՝ Յեխանովիչն այնտեղ զբաղվում էր բնական գիտություններով, հավաքում Ուրալյան լեռների աղքատիկ բուսականությունը։ Ի վերջո Պերմ տեղափոխվելու թույլտվություն ստացավ. և դա նրա համար արդեն բախելավում էր՝ նա նորից լսեց մայրենի բարբառը, հանդիպեց բախտակից ընկերներին։ Լիտվայում մնացած նրա կինը գրել էր, թե, ինքը Վիլնոյի նահանգից ոտքով կգա նրա մոտ... Նա սպասում էր կնոջը։*

*Երբ ինձ այդքան անսպասելի փոխադրեցին Վյատկա, ես գնացի Յեխանովիչին հրաժեշտ տալու։ Փոքրիկ սենյակը, որտեղ ապրում էր նա, համարյա լրիվ դատարկ էր. փոքր հին ճամպրուկը դրված էր խղճուկ անկողնու մոտ. փայտե մի սեղան ու մի աթոռ՝ ահա ամբողջ կահույքը. հիշեցի Կրուտիցիի իմ խուցը։*



*Իմ մեկնելու լուրը վշտացրեց նրան, բայց նա այնպես էր վարժվել զրկանքներին, որ մի րոպե հետո, գրեթե պայծառ ժպիտով, ինձ ասաց.*

*— Ա՜յ, հենց դրա համար էլ սիրում եմ բնությունը. մարդը ուր էլ լինի՝ նրանից չես խլի բնությունը։*

*Ես ուզում էի որևէ հիշատակ թողնել նրան, հանեցի վերնաշապիկս ճարմանդն ու խնդրեցի, որ վերցնի։*

*— Իմ վերնաշապկին չի սազում,— ասաց նա,— բայց ձեր ճարմանդը մինչև կյանքիս վերջը կպահեմ և կզուգվեմ դրանով թաղման ժամանակ։*

*Ապա նա մատաժմունքի մեջ ընկավ ու հանկարծ սկսեց տարագ քրքրել ճամպրուկը։ Մի տապրակ գտավ, միջից եր-կաթե ինքնատիպ մի շղթայիկ հանեց, պոկեց մի քանի օղ և տվեց ինձ, ասելով.*

*— Այս շղթայիկը ինձ համար շատ թանկ է, նրա հետ կապված են այլ օրերի ամենասուրբ հիշողություններս. լրիվ չեմ տա ձեզ, բայց վերցրեք այս օղերը։ Չէի կարծում, թե ես՝ Լիտվայից աքսորյալս, կնվիրեմ դրանք ռուս աքսորյալի։*

*Ես գրկեցի նրան ու հրաժեշտ տվի։*

*— Ե՞րբ եք մեկնելու,— հարցրեց նա։*

*— Վաղն առավոտյան, բայց ես չեմ հրավիրում ձեզ, իմ բնակարանում արդեն սպասում է ժանդարմը։*

*— Դե՛, բարի ճանապա՛րհ, ինձանից երջանիկ լինեք։*

*Հաջորդ օրը առավոտյան ժամը ինների ոստիկանապետն արդեն իմ բնակարանումն էր և շտապեցնում էր ինձ։ Պերմի ժանդարմը, անհամեմատ ավելի ընտանի, քան Կրուտիցինը, կառքի մոտ գործ էր անում, շիթաքցնելով իր ուրախությունը, որը նրան պատճառել էր այն հույսը, թե ինքը 350 վերստ հարբած է լինելու։ Ամեն բան պատրաստ էր. պատահաբար փողոց նայեցի. անցնում է Յեխանովիչը, ես նեռվեցի դեպի պատուհանը։*

*— Դե՛, փա՛ռք աստծո,— ասաց նա,— արդեն լրջորդ անգամն է անց եմ կենում, որ դուն հեռվից հրաժեշտ տամ ձեզ, բայց դուք շարունակ չէիք նկատում։*

*Աչքերս արցունքով լեցուն՝ ես շնորհակալ եղա նրանից։ Քնքուշ, կանացի այդ ուշադրությունը խորապես հուզեց ինձ.*

առանց այդ հանդիպման ես ափսոսալու ոչ մի բան չի ունենա Պերմում։

... Պերմից մեկնելու մյուս օրը լուսաբացից անձրև սկսվեց՝ ուժեղ, անընդհատ, ինչպես անտառոտ վայրերում է լինում, ու շարունակվեց ամբողջ օրը. ժամը երկուսին մոտ հասանք Վյատկայի շատ աղքատ գյուղերից մեկը։ Կայարանատուն չկար. վոտյակները (անգրագետ) կատարում էին կայարանապետերի պաշտոնը, բացում ճամփորդության ուղեգիրը, նայում՝ մի՞ կնիք է, թե՞ երկու, «հա՛յդա, հա՛յդա» էին դոռում ու լծում ձիերը, ինչ խոսք, կրկնակի արագ, քան կանեին կայարանապետի ներկայությամբ։ Ես ուզում էի շորերս չորացնել, տաքանալ, մի բան ուտել։ Պերմի ժանդարմը համաձայնվեց մի երկու ժամ հանգիստ առնելու իմ առաջարկին։ Այդ ամենը որոշվեց, երբ մոտենում էինք գյուղին։ Բայց երբ մտա հեղձուցիչ, մութ խրճիթը և իմացա, որ բացարձակ ոչինչ ճարել չի կարելի, որ հինգ վերստի վրա գինետուն անգամ չկա՝ քիչ մնաց զզվայի և ուզում էի ձի խնդրել։

Մինչ ես կմտմտայի՝ գնա՞մ,—թե՞ չգնամ, ներս մտավ մի զինվոր ու զեկուցեց, որ էտապային սպան[1] իրեն ուղարկել է ինձ մի բաժակ թեյի հրավիրելու։

— Մեծ հաճույքով, որտե՞ղ է քո սպան։

— Մոտիկ է, խրճիթում, ձերդ բարեծնություն։— ու զինվորը կատարեց հայտնի «ետ դա՛ռձ»-ը։

Ես հետևեցի նրան։

Տարիքն առած ցածրահասակ սպան, բազում հոգսերի, մանր կարիքների, պետերի հանդեպ վախի արտահայտությունը դեմքին, ինձ դիմավորեց մահացու ձանձրույթից եկող ողջ օրիալիրությամբ։ Դա մեկն էր այն սահմանափակ, բարեհոգի ծառայողներից, որոնք մի քսանհինգ տարի առանց դատողությունների, առանց առաջքաշման քարշ են տալիս իրենց ծանր լուծը, ինչպես ծառայում են պառավ ձիերը, երևի կարծելով, թե հենց այդպես էլ պիտի լինի՝ լուսաբացին պիտի խամուտ հագնեն ու որևէ բան կրեն։

1 էտապային սպա— սպա, որն ուղեկցում է աքսորյալներին՝ մի կայանից մյուսը։



— Ո՞ւմ եք տանում դուք և ո՞ւր։

— Էլ մի՛ հարցնեք, սիրտս մղկտում է. դե՛, էդ ջոջերի՛ խմանալիքն է, մեր գործը հրամայվածը կատարելն է, պատասխանը մենք չենք տալիս, բայց մարդկային բան չի։

— Իսկ ի՞նչ է եղել որ։

— Հավաքել-բերել են ութ-ինը տարեկան անիծյալ ջհուդի երեխեքի։ Նավատորմի համա՞ր են հավաքում, թե ինչ՝ չգիտեմ։ Սկզբում հրամայել էին նրանց Պերմ բշել, բայց փոփոխություն եղավ, հիմա բշում ենք Կազան։ Ես նրանց ընդունել եմ մի հարյուր վերստ առաջ. հանձնող սպան ասում էր՝ «Փորձանք բան է, մեկ երրորդը ճամփին մնաց» (և սպան մատով ցույց տվեց գետինը)։ Կե՞սն էլ տեղ չի հասնի,— ավելացրեց նա։

— Համաճարա՞կ է, ի՞նչ է,— հարցրի ես՝ մինչև հոգուս խորքը ցնցված։

— Չէ՛, համաճարակ-բան չկա, բայց ճանճի պես կոտրվում են. ջհուդի ճուտը, գիտե՞ք, է՛լի՝ լղար-մղար, թուլ, ոնց որ փոստը հանած կատու, սովոր չի տասը ժամ ցեխ տրորել ու սուխարի կրծել. համ էլ՝ օտար մարդիկ, ոչ հեր կա, ոչ մեր, ոչ էլ երես տվող. դե՛, հազում է, հազում ու... Մոգիլյո՛վ՝ գնում։ Տե՛ր աստված, իբր թե բան են մտածել, ինչի՞ են պետք էս երեխեքը։

Ես լուռ էի։

— Դուք ե՞րբ եք ճամփա ընկնելու։

— Վաղուց արդեն ժամանակն է, անձրևը շատ էր ուժեղ...

Հե՛յ, զինվո՛ր, հրաման տուր՝ խոխեքին հավաքեն։

Մանկիկներին բերին ու մի շարքով շարեցին. դա մեկն էր իմ տեսած ամենազարհուրելի տեսարաններից. խե՛ղճ, խե՛ղճ երեխաներ։ Տասներկու տասներեք տարեկան տղաները դեռ մի կերպ զսպում-պահում էին իրենց, բայց ութ-ինը տարեկան պստիկները... Ոչ մի մոայլ վրձին այդպիսի սարսափ չի հարուցի կտավի վրա։

Գունատ, հյուծված, վախեցած տեսքով՝ կանգնած էին նրանք անհարմար, հաստ, ցցված օձիքով զինվորական շինելներով, մի տեսակ անօգնական, սրտաճմլիկ հայացքը

1 այստեղ՝ могила (գերեզման) բառից։

կայազորի զինվորներին, որոնք ֆոպտորոնն շարքի էին կանգնեցնում նրանց. սփրթնած ջուրթերը, աչքերի տակի կապույտը տենդի կամ դողէրոցքի նշան էին։ Եվ առանց խնամքի, առանց փաղաքշանքի՝ այդ հիվանդ երեխաները Սառուցյալ օվկիանոսից անարգել փչող քամու տակ գնում էին գեղի գերեզման։

Ըստ որում, հաշվի առեք, որ նրանց տանողը դեռ բարեսիրտ ապա էր, որը բացահայտորեն խղճում էր երեխաներին։ Բա որ ռազմաքաղաքական մի կարգադրիչ լիներ։

Ես սեղմեցի սպայի ձեռքը և «պահպանեցե՛ք նրանց» ասելով, նեռվեցի կառքի մեջ. լացս գալիս էր, զգում էի, որ չեմ կարողանա ինձ զսպել...

Ի՜նչ հրեշավոր հանցագործություններ են անհայտ թաղված Նիկոլայի ոճրագործ, անբարոյական թագավորության արխիվներում։ Մենք վարժվել ենք դրանց՝ դրանք ամեն օր կատարվող, շատ սովորական, ամենքի համար աննկատ, ահավոր հեռաստաններում կորած, գրասենյակային խուլ փոսերում անձայն լեցված կամ ոստիկանական գրաքննչությամբ պահված բաներ են դարձել։

Մի՞թե սեփական աչքերով չենք տեսել բռնությամբ Տոբոլսկի նահանգ վերաբնակեցվող և առանց ուտելիքի ու անօթևան Մոսկվայի Տվերյան հրապարակում քարշ եկող պսիխոզյան մուժիկների սովահար ընտանիքները՝ մինչև որ իշխան Դ. Վ. Գոլիցինը կարգադրեց իր հաշվին խնամել նրանց։

## ԳԼՈՒԽ XIV

Վյատկա։ Նորին գերազանցության գրասենյակի ս. ֆոքսենյակը։ Կ. Յա. Ֆյոֆլովը։

Վյատկայի նահանգապետն ինձ չընդունեց. կարգադրել էր ասել, որ իրեն ներկայանամ մյուս օրը առավոտյան ժամը տասին։

Առավոտյան դահլիճում գտա իսպրավնիկին, ոստիկանապետին և գրկու պաշտոնյաների. բոլորն էլ կանգնած էին, խոսում էին շշուկով ու անհանգիստ դռան կողմն էին նայում։ Դուռը բացվեց ու ներս մտավ միջահասակ, թիկնեղ մի ծերուկ, գլուխն ուսերին կպած՝ բուլդոգի գլխի նման, խոշոր ծնոտները լրացնում էին շան հետ ունեցած նմանությունը, մանավանդ որ դրանք մի տեսակ գիշատիչ ժպիտ ունեին. դեմքի մաշված, մխաժամանակ վավաշոտ արտահայտությունը, մանր, շաքժուն, գորշավուն աչքերն ու ցանցառ, ցցված մազերը ահավոր նողկալի տպավորություն էին թողնում։

Սա նախ շան լափ թափեց իսպրավնիկի գլխին այն ճանապարհի համար, որով երեկ ինքն անցել էր։ Իսպրավնիկը, ի նշան հարգանքի ու հնազանդության, կանգնել էր գլուխը մի քիչ կախ և նրա ամեն խոսքից հետո, ինչպես հնում ծառաներն էին անում, ավելացնում էր. «Լսո՛ւմ եմ, ձեզ գերազանցություն»։

Իսպրավնիկի հետ հաշիվը փակելով, նա դարձավ ինձ։ Լկտի հայացք նետեց վրաս ու հարցրեց.

— Դուք Մոսկվայի համալսարանն եք ավարտել, չէ՞։

— Ես թեկնածու եմ։

— Հետո ծառայե՞լ եք։

— Կրեմլի էքսպեդիցիայում[1]։

— Հա՛, հա՛, հա՛, լա՛վ ծառայություն է։ Դուք այդ ծառայության մեջ, անշուշտ, պարապ ժամանակ եք ունեցել քեֆ անելու ու երգեր երգելու։ Ալենիցի՞ն,— բղավեց նա։

Ներս մտավ ճպռոտ մի երիտասարդ։

— Լսի՛ր, ախպե՛ր, տա՛ քեզ Մոսկվայի համալսարանի մի թեկնածու. սա, երևի, ամեն ինչ գիտի, բացի ծառայությունից. նորին մեծությունը կամեցել է, որ նա մեզանի՛ց բան սովորի։ Բանեցրու նրան քո գրասենյակում և հատուկ զեկուցիր ինձ։ Վաղը առավոտյան ժամը թենին դուք կներկայանաք գրասենյակ, իսկ հիմա կարող եք գնալ։ Հա՛, նեռեցեք, մոռացա հարցնել՝ ինչպե՞ս եք գրում։

Ես միանգամից չհասկացա։

— Դե՛, այսինքն, ձեռագի՛րդ։

— Մոտ գրելու բան չկա։

— Թուղթ ու գրիչ տուր,— և Ալենիցինը գրիչ տվեց ինձ։

---

1 Էքսպեդիցիա— այստեղ՝ հիմնարկի բաժանմունք, որը առաքում էր պաշտոնական փաստաթղթեր։

— Իսկ ի՞նչ եմ գրելու։

— Ինչ կամենաք,— ասաց քարտուղարը,— գրեցե՛ք։ Բայց ըստ տեղեկանքի պարզվեց։

— Իհարկե, թագավորին ուղղված թղթերը դուք չեք արտագրի,— հեգնորեն ժպտալով նկատեց նահանգապետը։

Ես դեռ Պերմում շատ բան էի լսել Տյուֆյաևի մասին, բայց նա գերազանցեց իմ բոլոր սպասելիքները։

Ի՞նչ ասես և ո՞ւմ ասես որ չի արտագրում ռուսական կյանքը։

Տյուֆյաևը ծնվել է Տոբոլսկում։ Նրա հայրը քիչ էր մնում աքսոր ուղարկվեր և ամենաչքավոր քաղքենիներից էր։ Տասներեք տարեկանից պատանի Տյուֆյաևը միացել է թափառաշրջիկ խեղկատակների խմբին, որոնք շրջում են տոնավաճառից տոնավաճառ, պարանի վրա պար են գալիս, գլուխկոնծի տալիս անիվի պես և այլն։ Նրանց հետ նա Տոբոլսկից հասել էր մինչև լեհական նահանգները՝ զվարճացնելով ուղղափառ ժողովրդին։ Այնտեղ նրան, չգիտեմ ինչու, ձերբակալել էին և, քանի որ վկայական չուներ, իբրև թափառաշրջիկի, կալանավորների խմբի հետ ոտքով ուղարկել էին Տոբոլսկ։ Նրա մայրը այրիացել էր և ծայր աստիճան թշվառության մեջ էր, տղան ինքն էր շարել վառարանը, երբ փուլ էր եկել. հարկավոր էր որևէ արհեստ ձեռք բերել. տղային գրագիտությո՞ւնը հաջողվեց, և նա գրագիր վարձվեց քաղաքապետարանում։ Ի ծնե լինելով լկտի և բազմակողմանի դաստիարակությամբ զարգացնելով իր ընդունակությունները լարախաղացների թափառախմբում ու աքսորյալների խմբերում, որոնց հետ ծայրից ծայր կտրել-անցել էր Ռուսաստանը, նա դարձել էր ճարպիկ մի գործամոլ։

Ալեքսանդրի թագավորության սկզբում Տոբոլսկ է գալիս ինչ-որ վերաքննիչ։ Նրան գործունյա գրագիրներ էին հարկավոր, մեկը երաշխավորում է Տյուֆյաևին։ Վերաքննիչն այնքան գոհ է մնում նրանից, որ առաջարկում է իր հետ Պետերբուրգ գնալ։ Այնժամ Տյուֆյաևը, որի փառասիրությունը, իր իսկ ասելով, գավառական դատարանի քարտուղարի պաշտոնից այն կողմ չէր անցնում, իրեն այլ կերպ է գնահատում և երկաթյա կամք դրսևորելով՝ որոշում է վեր բարձրանալ։



Եվ բարձրացավ։ Տասը տարի հետո մենք նրան արդեն տեսնում ենք Կանկրինի անխոնջ քարտուղարի դերում. Կանկրինն այդ ժամանակ գեներալ-ինտենդանտ էր[1]։ Եվ մի տարի անց Տյուֆյաևն արդեն բաժնի վարիչ էր Արակչեևի գրասենյակում, որը ողջ Ռուսաստանն էր կառավարում. նա կոմսի հետ եղել էր դաշնակից զորքերի կողմից գրավված Փարիզում։

Տյուֆյաևը ամբողջ ժամանակ, առանց դուրս գալու, նստել էր շարժական ռազմական գրասենյակում և à la lettre[2] չէր տեսել ոչ մի փողոց Փարիզում։ Իր արժանավոր ընկեր Կլեյնմիխելի հետ նա գիշեր-ցերեկ նստած փաստաթղթեր էր կազմում ու արտագրում։

Արակչեևի գրասենյակը նման էր այն պղնձահանքին, ուր աշխատողներին ուղարկում են միայն մի քանի ամսով, քանի որ եթե ավելի երկար են պահում՝ նրանք մեռնում են։ Ի վերջո Տյուֆյաևն էլ հոգնեց հրամանների ու հրամանագրերի, կարգադրությունների ու օրենսդրությունների այդ ֆաբրիկայում և սկսեց ավելի հանգիստ մի տեղ խնդրել։ Արակչեևը չէր կարող չսիրել այնպիսի մի մարդու, ինչպիսին Տյուֆյաևն էր՝ առանց մեծ նկրտումների, առանց զվարճանքների, առանց կարծիքների, մի մարդու, որը ձևականորեն ազնիվ էր, համակված էր փառատենչությամբ և հնազանդությունը մարդկային ցեղի առաքինությունն էր համարում։ Արակչեևը Տյուֆյաևին փոխնահանգապետի պաշտոն պարգևեց։ Մի քանի տարի անց նրան տվեց Պերմի վոյեվոդությունը։ Այն նահանգը, որով Տյուֆյաևը մի անգամ անցել էր պարանի վրայով և մի անգամ էլ պարանակապ՝ ընկած էր նրա ոտքի տակ։

Նահանգապետի իշխանությունը առհասարակ մեծանում է Պետերբուրգից ունեցած հեռավորությանն ուղիղ համեմատ, բայց այն նահանգներում, որտեղ ազնվականություն չկա, ինչպես Պերմը, Վյատկան ու Սիբիրը, այդ իշխանությունը մեծանում է երկրաչափական պրոգրեսիայով։ Տյուֆյաևին էլ հենց այդպիսի մի երկրամաս էր պետք։

---

1 զորքերի պարենային, նյութական և ֆինանսական մատակարարումը տնօրինող գեներալ։

2 տառացիորեն (ֆրանս.)։

Արևելյան մի սատրապ էր Տյուֆյակը, միայն թե՝ գործունյա, անհանգիստ, ամեն բանի խառնվող, միշտ զբաղված։ Տյուֆյակը 94 թվականին կլիներ Կոնվենտի մոլեգին կոմիսար, մի Կարյե՞։

Կյանքում՝ այլասերված, բնավորությամբ՝ կոպիտ, ոչ մի առարկություն չհանդուրժող՝ նրա ազդեցությունը չափազանց վնասակար էր։ Նա կաշառք չէր վերցնում, թեև, այնուամենայնիվ, իր համար կարողություն դիզել էր, ինչպես պարզվեց մահից հետո։ Նա խստապահանջ էր ենթակաների հանդեպ. առանց խնայելու հալածում էր նրանց, ովքեր բռնվում էին, իսկ չինովնիկները գողանում էին ավելի, քան երբևէ։ Ներգործության շարաշահումը նա հասցրել էր ծայրահեղ աստիճանի. օրինակ, հետաքննության ուղարկելով պաշտոնյային՝ եթե, անշուշտ, այդ գործով ինքը շահագրգռված էր՝ նրան ասում էր, որ, հավանաբար, կրացահայտվեն այսինչ ու այնինչ բաները, և վայը տարել էր պաշտոնյային, եթե որևէ ուրիշ բան բացահայտվեր։

Պերմում դեռևս ամեն ինչ ներծծված էր Տյուֆյակի փառքով, այնտեղ նա ուներ կոզմնակիցների իր խումբը, որը թշնամի էր նոր նահանգապետին, և սա էլ, հասկանալի է, իրեն շրջապատել էր իր մանկլավիկներով։

Բայց և մարդիկ էլ կային, որ ատում էին նրան։ Դրանցից մեկը՝ ռուսական կառավարության բավական ինքնատիպ մի ստեղծագործություն, ինձ հատկապես նախազգուշացնում էր, թե ի՞նչ բան է Տյուֆյակը։ Խոսքը գործարանների մեկի բժշկի մասին է։ Այդ մարդը, որ խելոք էր ու շատ ջղային, դասընթացն ավարտելուց հետո անհաջող մի ամուսնություն էր ունեցել, ապա ընկել էր Եկատերինբուրգ և, լրիվ անփորձ լինելով, խրվել էր գավառական կյանքի ճահճի մեջ։ Բավականին անկախ դիրք ունենալով այդ միջավայրում, նա, այնուամենայնիվ, կոտրվել էր. նրա ողջ գործունեությունը հանգում էր չինովնիկներին կծու ծաղրանքով հետամտելուն։ Նա դեմ առ դեմ հանդիպում էր նրանց վրա, ծամածռություններ անելով՝ նրանց երեսին ասում էր ամենավիրավորական բաները։ Քանի որ ոչ մեկին չէր խնայում, ոչ ոք էլ առանձնապես չէր նեղանում բժշկի շաք լեզվից։ Նա իր համար հասարակական դիրք էր ստեղծել իր հարձակումներով և ստիպել էր կամազուրկ հասարակությանը դիմանել այն ճիպոտներին, որոնցով ինքն անվերջ խարազանում էր նրան։

Ինձ նախազգուշացրել էին, որ նա լավ բժիշկ է, բայց խանգարված, և որ շատ հանդուգն է։

Նրա շաղակրատանքն ու կատակները ոչ կոպիտ էին, ոչ էլ տափակ. ճիշտ հակառակը՝ դրանք հագեցած էին հումորով ու թանձր մաղձով, դա նրա պոեզիան էր, նրա վրիժառությունը, սրտնեղության ու, թերևս, մասամբ էլ հուսահատության նրա ճիչը։ Նա հետազոտել էր չինովնիկների շրջանը՝ իբրև արվեստագետ և իբրև բժիշկ, նա գիտեր նրանց բոլոր մանր ու ծածուկ կրքերը և, իր ծանոթների անճարակությունից, երկչոտությունից քաջալերված՝ ինչ ուզում անում էր։

Ամեն մի ասածին նա ավելացնում էր՝ «գրոշի արժեք չունի»։ Ես մի անգամ, կատակի տալով՝ նրան հիշեցրի այդ խոսքը։

— Ինչո՞ւ եք զարմանում որ,— առարկեց բժիշկը։— Ամեն մի խոսքի նպատակը համոզելն է, ես էլ հենց շտապում եմ ավելացնել աշխարհիս ամենաուժեղ ապացույցը։ Հավատացրեք մարդուն, թե հարազատ հորն սպանելը գրոշի արժեք չունի՝ և նա կսպանի։

Չեբոտարյովը երբեք չէր մերժում պարտքով փոքր գումար՝ հարյուր-երկու հարյուր ռուբլի խնդրողներին։ Երբ մեկն ու մեկը փող էր ուզում, նա հանում էր ծոցատետրը և հանգամանորեն հարցնում, թե ե՞րբ կվերադարձնի։

— Հիմա,— ասում էր նա,— թույլ տվեք մեկ ռուբլու վրա գրազ գալ, որ դուք ժամանակին չեք վերադարձնի։

— Տե՞ր աստված,— առարկում էր դիմացինը,— ինչի՞ տեղ եք ինձ դնում։

— Ձեզ համար գրոշի արժեք չունի,— պատասխանում էր բժիշկը,,— թե ինչի տեղ եմ ձեզ դնում, բայց բանն այն է, որ ես վեցերորդ տարին է ծոցատետր եմ պահում ու դեռ ոչ մի մարդ ժամանակին չի վերադարձրել, առանք, համարյա ոչ ոք ժամկետից հետո էլ չի բերել։

Ժամկետն անցնում էր, և բժիշկը ամենայն լրջությամբ պահանջում էր շահած ռուբլիանոցը։

Պերմցի կապալառուն վաճառում էր կառքը, բժիշկը գալիս է նրա մոտ ու մի շնչով արտասանում հետևյալ ճառը.

— Դուք ծախում եք կառքը, ինձ կառք է հարկավոր, դուք հարուստ մարդ եք, դուք միլիոնատեր եք, դրա համար ձեզ բոլորը հարգում են, և այդ պատճառով էլ ես եկել եմ ձեզ իմ հարգանքը հավաստելու. իբրև հարուստ մարդ՝ ձեզ համար գրոշի արժեք չունի կառքը կծախե՞ք, թե ոչ, իսկ ինձ կառքը շատ է պետք, բայց փողս քիչ է. դուք կուզենաք ինձ նեղը գցել, օգտվել իմ կարիքից և կառքի համար կպահանջեք հազար հինգ հարյուր. ես ձեզ կառաջարկեմ մի յոթ հարյուր ռուբլի, ամեն օր կգամ սակարկելու. մի շաբաթից դուք գինը կիջեցնեք յոթ հարյուր հիսունի կամ ութ հարյուրի. ավելի լավ չի՞ լինի հենց դրանից սկսել։ Ես պատրաստ եմ այդքանը տալու։

— Շատ էլ լավ կլինի,— պատասխանում է զարմացած կապալառուն և տալիս է կառքը։

Չեբոտարյովի զվարճապատումներին ու շարաճճիություններին վերջ չկար. կավելացնեմ ևս երկուսը[1]։

— Դուք հավատո՞ւմ եք հիպնոզությանը,— իմ ներկայությամբ նրան հարցրեց բավականին խելոք ու կրթված մի տիկին։

— Իսկ դուք ի՞նչ եք հասկանում հիպնոզություն ասելով։

Տիկինը ինչ-որ տարածված անհեթեթություն ասաց նրան։

— Ձեզ համար գրոշի արժեք չունի՝ հավատո՞ւմ եմ ես հիպնոզությանը, թե չէ,— պատասխանեց նա,— բայց ուզո՞ւմ եք ձեզ պատմեմ, թե դրան վերաբերող ինչ եմ տեսել։

— Խնդրեմ։

— Միայն թե ուշադիր լսեք։

Եվ նա շատ աշխույժ, խելացի ու հետաքրքիր նկարագրեց խարկովյան մի բժշկի՝ իր ծանոթի փորձերը։

Զրույցի կեսին ծառան մատուցարանով ուտելիք բերեց։ Երբ նա դուրս էր գալիս՝ տիկինն ասաց.

1 Այս երկու զվարճապատումներն առաջին հրատարակության մեջ չկային, ես դրանք հիշեցի սրբագրական մամուլները կարդալիս (1958)։ (Ծանոթ.՝ Ա. Ի. Գերցենի)։



— Մանանեխը մոռացել ես։

Չեբոտարյովը խոսքն ընդհատեց։

— Շարունակեցե՛ք, շարունակեցե՛ք,— ասաց տիկինը՝ մի քիչ վախեցած,— ես լսում եմ։

— Գոնե աղը բերե՞լ է։

— Ա՜յ, դուք արդեն բարկանում եք,— ալվելացրեց տիկինը՝ կարմրելով։

— Ամենևի՜ն, վստահ եղեք. ես գիտեմ, որ դուք ուշադիր լսում էիք, և այն էլ գիտեմ, որ կինը, ինչքան էլ խելոք լինի և խոսքն ինչի՜ն էլ վերաբերի՝ չի կարող երբեք խոհանոցից վեր կանգնել. էլ ինչո՞ւ անձամբ ի՜նքս պիտի համարձակվեի բարկանալ ձեզ վրա։

Կոմսուհի Պոլյեի գործարաններում, որտեղ նույնպես նա բժշկություն էր անում, նրան դուր էր եկել ճորտ մի տղա, որին իր մոտ ծառայության կանչեց։ Տղան համաձայն էր, բայց կառավարիչն ասաց, որ առանց կոմսուհու թույլտվության ինքը չի կարող նրան ազատ արձակել։ Չեբոտարյովը գրեց կոմսուհուն։ Սա կառավարչին կարգադրեց անձնագիր տալ, բայց պայմանով, որ Չեբոտարյովը կանխավ վճարի հինգ տարվա վարձը։ Ստանալով այդ պատասխանը, նա անհապաղ գրեց կոմսուհուն, թե համաձայն է, բայց խնդրում է նախապես փարատել իր հետևյալ տարակուսանքը. ումի՞ց պիտի ետ ստանա ինքը վճարած դրամը այն դեպքում, եթե էնկի գիսավոր աստղը, կտրելով երկրագնդի ուղեծիրը, նրան իր ուղուց շեղի, մի բան, որը կարող է պատահել ժամկետը վերջանալուց տարի ու կես առաջ։

Վյատկա մեկնելուս օրը առավոտ կանուխ եկավ բժիշկը և սկսեց հետևյալ տխմարությունից.

— Դուք ոնց որ Հորացիոսը լինեք. մի անգամ երգել եք, ու մինչև հիմա ձեզ շարունակ փոխադրում են[1]։

Ապա նա հանեց դրամապանակն ու հարցրեց՝ ինձ ճանապարհի փող հարկավոր չէ՞։ Ես շնորհակալ եղա և հրաժարվեցի։

1 Բնագրում և այստեղ՝ բառախաղ. переводить (փոխադրել)— ոչ թե բարգմանություն, այլ անդրադարձություն իմաստով։

— Ինչո՞ւ չեք վերցնում։ Դա ձեզ համար գրոշի արժեք չունի։

— Ես փող ունեմ։

— Վատ է,— ասաց նա,— աշխարհի վերջը գալիս է,— բաց արեց ծոցատետրն ու գրանցեց. «Տասնհինգ տարվա փորձից հետո առաջին անգամ հանդիպեցի մի մարդու, որը փողը չվերցրեց, ու էն էլ ճանապարհվելիս»։

Կատակներ անելուց հետո նա նստեց մոտս, անկողնու վրա, և լրջորեն ասաց.

— Դուք գնում եք ահավոր մի մարդու մոտ։ Զգուշացեք նրանից և հնարավորին չափ հեռու մնացեք։ Եթե նա ձեզ սիրեց՝ ձեզ համար վատ հանձնարարական է, եթե ատեց՝ ուրեմն ձեզ կուտի, զրպարտությամբ, բանսարկությամբ, չգիտեմ էլ ինչով, բայց լրիվ կուտի, դա նրա համար գրոշի արժեք չունի։

Ըստ որում, նա ինձ պատմեց մի դեպք, որի իսկությունը առիթ ունեցա փաստաթղթերով ստուգելու ներքին գործոց մինիստրության գրասենյակում։

Տյուֆյաևը բացահայտ կապված է եղել մի խեղճ չինովնիկի քրոջ հետ։ Եղբոր վրա ծիծաղում էին, եղբայրն ուզում էր խզել այդ կապը, սպառնում էր մատնել, ուզում էր գրել Պետերբուրգ, մի խոսքով՝ այնքան աղմկեց ու հուզվեց, որ մի օր էլ ոստիկանությունը նրան բռնեց ու որպես խելագարի՝ ներկայացրեց նահանգային վարչություն՝ ստուգման ենթարկելու։

Նահանգային վարչությունը, ատյանների նախագահներն ու բժշկական բաժանմունքի տեսուչը՝ ծերուկ գերմանացին,— որը մեծ սեր էր վայելում ժողովրդի մեջ և որին անձամբ ճանաչում էի,— բոլորն էլ գտան, որ Պետրովսկին խելագար է։

Մեր բժիշկը ճանաչում էր Պետրովսկուն, եղել էր նրա բժիշկը։ Ձևի համար նրան էլ հարցրին։ Նա տեսուչին հայտնեց, որ Պետրովսկին բնավ էլ խելագար չէ, և որ ինքն առաջարկում է վերաքննություն կատարել, այլապես հարկադրված կլինի այդ գործին հետագա ընթացք տալ։ Նահանգային վարչությունը ամենևին էլ դեմ չէր, բայց, դժբախտաբար, Պետրովսկին, չսպասելով երկրորդ ստուգման համար նշանակված օրվան, մեռավ գժանոցում, չնայած որ երիտասարդ ու առողջ մարդ էր։

Գործը հասավ Պետերբուրգ։ Պետրովսկայային ծերբակալեցին (ինչո՞ւ ո՛չ Տյուֆյաևին), սկսվեց գաղտնի հետաքննությունը։ Պատասխանները թելադրում էր Տյուֆյաևը, այդ գործի մեջ նա ինքն իրեն գերազանցեց։ Գործը միանգամից կարճելու և երկրորդ անգամ ակամա Սիբիր ուղևորվելու վտանգն իրենից վանելու համար Տյուֆյաևը Պետրովսկայային սովորեցրեց ասել, թե իր եղբայրը իր հետ գրծած էր այն ժամանակվանից, երբ ինքը, շահել ու անփորձ, Ալեքսանդր կայսեր՝ Պերմից անցնելու ժամանակ կորցրել էր կուսությունը, որի համար էլ գեներալ Սոլոմկայի միջոցով հինգ հազար ռուբլի էր ստացել։

Ալեքսանդրի սովորություններն այնպիսիք էին, որ այդ բանը անհնազանդական չէր։ Խկությունը պարզելը հեշտ չէր։ Համենայն դեպս, շատ աղմուկ կհաներ։ Պ-ոն Բենկենդորֆի հարցումին գեներալ Սոլոմկան պատասխանել էր, թե իր ձեռքով այնքա՞ն փող է անցել, որ ինքը չի մտաբերում այդ հինգ հազարը։

«La regina en aveva molto!»[1],— ասում է իմպրովիզատորը Պուշկինի «Եգիպտական գիշերներում»...

Եվ ահա Արակչեևի այդ պատվարժան աշակերտն ու Կլեյնմիխելի արժանավոր ընկերը, լարախաղացը, շրջմոլիկը, օրագիրը, քարտուղարը, նահանգապետը, քնքուշ սիրտը, անշահախնդիր մարդը, որ առողջներին փակում էր գժանոցի մեջ և այնտեղ ոչնչացնում, այն մարդը, որ զբաղվում էր Ալեքսանդր կայսրին, որպեսզի թող փչեր Նիկոլայ կայսեր աչքին, այժմ ձեռնամուխ էր լինում ինձ ծառայության վարժեցնելու։

Ես մեծ կախում ունեի նրանից։ Բավական էր, որ նա անհեթեթ մի բան գրեր մինիստրին՝ և ինձ կգրեին Իրկուտսկի մի անկյունը։ Եվ ինչո՞ւ գրեր։ Ի՞նքն իրավունք ուներ տեղափոխելու ամեն մի հաղորդակցությունից, կենսամիջոց-

[1] «Կայսրուհին շատ է ունեցել գրանցից» (իտալ.)։

ներից զուրկ որևէ վայրենի քաղաք՝ Կայ կամ Ցարևո-Սանչուրսկ։ Տյուֆյակը Գլազով էր ուղարկել մի լեհ երիտասարդի այն բանի համար, որ դամաները գերադասում էին մազուրկա պարել նրա և ոչ թե նորին գերազանցության հետ։

Այդպես իշխան Դոլգորուկին ուղարկվել էր Պերմից Վերխոտուրիե։ Լեռների ու ձյան մեջ կորած Վերխոտուրիեն դեռևս պատկանում է Պերմի նահանգին, և այդ վայրը արժե՛ Բերյոզովին իր կլիմայով, բայց Բերյոզովից վատն է իր ամայությամբ։

Իշխան Դոլգորուկին պատկանում էր վատ առումով աղատ վարքի տեր արիստոկրատ երիտասարդների թվին, որոնք արդեն հազվադեպ են պատահում մեր ժամանակներում։ Նա ամեն տեսակ չարություններ էր անում Պետերբուրգում, Մոսկվայում, Փարիզում։

Դրա վրա էր մսխվել նրա կյանքը։ Դա փոքր չափի մի Իզմայլով* էր, մի իշխան Ե. Գրուզինսկի*՝ առանց փախստականների Լիսկովոյի որջի, այսինքն՝ երես առած, անպատկառ, նողկալի մի զվարճամոլ, աղա ու խեղկատակ՝ միաժամանակ։ Երբ նրա արարքները չափ ու սահմանն անցան՝ նրան հրամայեցին բնակության գնալ Պերմ։

Նա եկավ երկու կառքով. մեկի մեջ ինքն էր՝ շան հետ, մյուսում՝ իր ֆրանսիացի խոհարարը՝ թութակներով։ Պերմում ուրախացան հարուստ հյուրով, և շուտով ողջ քաղաքը խռնվեց նրա սեղանատանը։ Դոլգորուկին սկսեց սիլի-բիլի անել պերմցի մի խանումի հետ. խանումը, ինչ-որ անհավատարմություն կասկածելով, մի առավոտ հանկարծակի հայտնվեց իշխանի մոտ ու բռնացրեց նրան սպասուհու հետ։ Դրանից սկսված տեսարանը վերջացավ նրանով, որ անհավատարիմ սիրեկանը պատից պոկեց որսորդական մտրակը. խորհրդականի կինը, տեսնելով նրա մտադրությունը, սկսեց փախչել, սա էլ հետևից՝ անփույթ վրան գցած մեն մի խալաթով. հասնելով նրան մի փոքր հրապարակում, որտեղ սովորաբար վարժեցնում էին գումարտակը, մտրակով մի քանի հատ հասցրեց խանդոտ խանումին ու հանգիստ տուն գնաց, կարծես թե մի գործ արած լիներ։



Նման քնքուշ կատակները պերմցի բարեկամներին լարեցին նրա դեմ, և պետերը սիրտ արին քառասնամյա թեքեստիկին քշել Վերխոտուրիե։ Մեկնելու նախօրեին նա ճոխ հաշկերույթ տվեց, և չինովնիկները, չնայած գժտություններին, այնուամենայնիվ, եկան. Դոլգորուկին խոստացել էր նրանց կերակրել չտեսնված մի կարկանդակով։

Մսակարկանդակն իրոք հոյակապ էր և անհետանում էր անհավատալի արագությամբ։ Երբ միայն չորքուքներն էին մնացել, Դոլգորուկին հանդիսավոր դիմեց հյուրերին և ասաց.

— Թող չասեն թե ես, բաժանվելով ձեզանից, որևէ բան խնայեցի։ Ես երեկ հրամայեցի մորթել իմ Գարդիին՝ կարկանդակի համար։

Չինովնիկները սարսափով իրար նայեցին և աչքերով փնտրեցին բոլորին ծանոթ դանիական շանը. շունը չկար։ Իշխանը գլխի ընկավ ու ծառային հրամայեց բերել Գարդիի հողեղեն նշխարները, մորթին. պարունակությունը պերմցիների փորումն էր։ Քաղաքի կեսը սարսափից հիվանդացավ։

Այնինչ Դոլգորուկին, գոհ, որ ճարպիկ խաղ է խաղացել բարեկամների գլխին, հանդիսավորությամբ մեկնում էր Վերխոտուրիե։ Երրորդ կառքը տանում էր մի ողջ հավանոց. փոստատար կառքո՞վ գնացող հավանոց։ Ճանապարհին նա մի քանի կայաններից վերցրեց-տարավ մուտքի մատյանները, խառնեց դրանք, ամսաթվերը փոփոխեց և քիչ էր մնում խելագարեցներ փոստային գերատեսչությանը, որը մատյանների օգնությամբ էլ միշտ չէ, որ հաջող էր ծայրը ծայրին հասցնում։

Ռուսական կյանքի հեղձուցիչ դատարկությունն ու մընչությունը, տարօրինակ կերպով ձուլվելով աշխույժ և նույնիսկ մոլեգին բնավորությանը, մեր մեջ առանձնապես զարգացնում է ամեն տեսակ խենթություններ։

Սուվորովի աքլորականչի մեջ*, ինչպես որ Դոլգորուկիի շնակարկանդակում, Իզմայլովի վայրենի արարմունքների մեջ, Մամոնովի* կես-կամավոր խելահեղության և Տոլստոյ-Ամերիկացու* մոլեգին հանցագործությունների մեջ ես լսում

նմ համահարազատ մի հնչյուն, որը ծանոթ է ամենքիս, բայց որը մեր մեջ նվազեցվել է կրթությամբ կամ ուղղվել է ուրիշ մի կողմ։

Ես անձամբ ճանաչում էի Տոլստոյին և հենց այն շրջանում, երբ նա փորձել էր իր դուստր Սառային, բանաստեղծական բարձր ձիրքով օժտված արտասովոր այդ աղջկան։ Ներունու արտաքին տեսքին, ճերմակ գանգուրներով ծածկված ճակատին, փայլարձակ աչքերին ու մարմնամարզիկի կառուցվածքին նետված մի հայացքից իսկ երևում էր, թե ինչքան ուժ ու եռանդ էր տրված նրան բնությունից։ Նա զարգացրել էր լոկ մոլեգին կրքերը, լոկ վատ հակումները, և դա զարմանալի չէ. մեզանում թույլ են տալիս, որ ամենայն արատավորը երկար ժամանակ ծավալվի անարգել, իսկ մարգկային կրքերի համար, առաջին իսկ քայլից; կայազոր են ուղարկում կամ Սիբիր... Նա սանձարձակություններ էր արել, թալանել թղթախաղով, կռիվներ սարքել, խեղանդամել մարդկանց, ընտանիքներ էր քայքայել՝ քսան տարի շարունակ, մինչև որ, ի վերջո, աքսորվել էր Սիբիր, որտեղից «վերադարձել էր ալեուտ դարձած», ինչպես ասում է Գրիբոյեդովը, այսինքն՝ Կամչատկայով անցել էր Ամերիկա և այնտեղից Ռուսաստան գալու թույլտվություն հայցել։ Ալեքսանդրը նրան ներել էր, և նա գալու հաջորդ օրից շարունակել էր նախկին կյանքը։ Ամուսնացած լինելով իր ձայնով հայտնի և մոսկովյան թափառախմբին պատկանող մի գնչուհու հետ, նա իր տունը դարձրել էր խաղավայր, ամբողջ ժամանակն անց էր կացնում խրախճանքների մեջ, բոլոր զիշերները տալիս էր թղթախաղին, և փոքրիկ Սառայի օրոցքի մոտ անհագության ու հարբեցողության վայրի տեսարաններ էին տեղի ունենում։ Ասում են, թե նա մի անգամ կնոջը հրամայեց կանգնել սեղանին և կրակոցով ծակեց նրա կոշիկի կրունկը՝ ի ապացույց իր անվրեպ նշանառության։

Վերջին արարքը քիչ էր մնացել նրան նորից Սիբիր տաներ։ Նա վաղուց բարկացած էր մի քաղքենու վրա, մի օր բռնեց նրան իր տանը, ձեռ ու ոտը կապեց ու քաշեց ատամը։ Հավատալի՞ է, արդյոք, որ այս դեպքը պատահել տասը կամ տասներկու տարի առաջ։ Քաղքենին գանգ-



ներկայացրեց։ Տոլստոյը կաշառեց ոստիկաններին, կաշառեց դատարանին, և քաղքենուն բանտ նստեցրին՝ զրպարտության համար։ Այդ ժամանակ բանտային կոմիտեում ծառայում էր մի հայտնի ռուս գրող՝ Ն. Ֆ. Պավլովը*։ Քաղքենին նրան պատմեց իր գործը, անփորձ պաշտոնյան գործը նորից հարուցեց։ Վախն ընկավ Տոլստոյի սիրտը, ակընհայտորեն նրան դատապարտելու հոտ էր գալիս, բայց մե՞ծ է ռուսական աստվածը։ Կոմս Օրլովը իշխան Շչերբատովին* գրեց գաղտնի մի գրություն, խորհուրդ տալով նրան գործը կոծկել, որպեսզի թույլ չտրվի ստորին դասին այդպիսի ուղղակի հաղթանակ տանել բարձր դասի դեմ։ Կոմս Օրլովը խորհուրդ էր տալիս՝ Ն. Ֆ. Պավլովին հեռացնել այդ պաշտոնից... Դա այն քաշած ատամից ավելի անհավատալի մի բան է։ Ես այդ ժամանակ Մոսկվայում էի և շատ լավ գիտեի անզգույշ պաշտոնյային։ Բայց ետ դառնանք Վյատկա։

Գրասենյակը անհամեմատ վատ էր բանտից։ Ոչ թե բուն աշխատանքն էր շատ, այլ այդ նեխած միջավայրի՝ շան բնի պես հեղձուցիչ օդը և ժամանակի ահավոր, անմիտ կորուստն էին անտանելի դարձնում գրասենյակը։ Ալենիցինն ինձ չէր նեղում, նույնիսկ սպասածիցս ավելի քաղաքավարի էր. նա սովորել էր Կազանի գիմնազիայում և դրա համար էլ հարգանք ուներ Մոսկվայի համալսարանի թեկնածուի հանդեպ։

Գրասենյակում շուրջ քսան գրագիր կար։ Մեծ մասը առանց որևէ կրթության և բարոյական ամեն մի հասկացողությունից զուրկ մարդիկ էին՝ գրագիրների ու քարտուղարների զավակներ, որոնք օրորոցից սովորել էին ծառայությունը համարել վաստակի միջոց, իսկ գյուղացիներին՝ եկամտաբեր աղբյուր, նրանք տեղեկանքներ էին ծախում, վերցնում էին քսան կոպեկանոցներ ու քառորդ ռուբլիանոցներ, մի գավաթ գինու համար խաբում էին, նվաստանում, ամեն տեսակ ստորություններ անում։ Իմ սենեկապանը «բիլիարդանոց» գնալուց ձեռ քաշեց, ասելով, թե չինովնիկները խարդախից խարդախ են, իսկ հախներից գալ չես կարող՝ նրանք սպաներ են։

Այդ մարդկանց հետ էլ, ահա, որոնց իմ ծառան չէր ծեծում սոսկ նրանց աստիճանի պատճառով, ես հարկադրը-

ված էի նստել ամեն օր առավոտյան ժամը իններից մինչև երկուսը և երեկոյան՝ հինգից ութը։

Ալենիցինից՝ գրասենյակի ընդհանուր պետից բացի ես ունեի նաև բաժնի վարիչ, որի մոտ էլ ինձ նստեցրել էին. սա նույնպես չար էակ չէր, բայց հարբեցող էր ու անգրագետ։ Մի սեղանի շուրջը ինձ հետ նստում էին չորս գրագիր։ Նրանց հետ պետք էր խոսել ու ծանոթություն անել, ասենք մյուս բոլորի հետ՝ նույնպես։ Բացի այն, որ այդ մարդիկ «հպարտության համար» վաղ թե ուշ իմ դեմ թակարդ կլարեին, պարզապես հնարավոր չէ օրվա մի քանի ժամն անցկացնել միևնույն մարդկանց մեջ, առանց հետները ծանոթություն անելու։ Ավելին՝ չպետք է մոռանալ, թե ինչպես են գավառացիները մոտ-մոտ անում օտար մարդուն, հատկապես մայրաքաղաքից եկածին, և էն էլ դեռ ինչ-որ մի հետաքրքիր պատմություն պոչին։

Ամբողջ օրը նստելով այդ թիանավում, ես երբեմն տուն էի գալիս բոլոր ընդունակություններս մի տեսակ բթացած և ընկնում էի բազմոցին՝ ուժասպառ, նվաստացած, որևէ գործ, որևէ բան անելու անկարող։ Ես սրտանց ափսոսում էի Կրուտիցիի իմ խուցը՝ իր ծխահոտով և ոստիճներով, դռանը կանգնած ժանդարմով ու դռան կողպեքով հանդերձ։ Այնտեղ ես ազատ էի, ինչ ուզում անում էի, ոչ ոք ինձ չէր խանգարում. այս ճղճիմ խոսքերի, կեղտոտ մարդկանց, ստոր ըմբռնումների, կոպիտ զգացմունքների փոխարեն մեռելային մի լռություն կար արտեղ և անխռով անցնող ժամանակ։ Եվ երբ միտքս էր գալիս, որ ճաշից հետո նորից պիտի գնամ ու վաղը՝ դարձյալ, երբեմն լցվում էի կատաղությամբ ու հուսահատությամբ, և ես գինի ու օղի էի խմում՝ մխիթարության համար։

Ու դեռ մեկ էլ տեսար՝ «ճամփի վրա» կգա պաշտոնակիցներից որևէ մեկը՝ ձանձրույթից ժամանակ սպանելու, դեսից-դենից խոսելու, մինչև որ հասնի ծառայության գնալու սահմանված ժամը...

Ասենք, մի քանի ամսից գրասենյակը մի քիչ ավելի տանելի դարձավ։

Տևական, հետևողական հետապնդումը հատուկ չէ ռուսական բնավորությանը, եթե մեջ չեն ընկնում անձինք կամ



էլ գրական շահը. և դա բնավ էլ նրանից չէ, որ կառավարությունը չէր ուզում խեղդել, ոչնչացնել, այլ գալիս է ռուսական անհոգությունից, մեր laisser-aller[1]-ից։ Ռուսական իշխանությունները բոլորն էլ ընդհանրապես անտաշ են, լկտի, անպատկառ, նրանց կոպտության առիթ տալը շատ հեշտ է, բայց մարդկանց անդադար տանջահարելը նրանց բարքերում չկա, նրանց համբերությունը չի հերիքում դրա համար, պատճառը գուցե այն է, որ դա ոչ մի շահ չի բերում։

Սկզբում, տաք-տաք, մի կողմից՝ փութաջանություն, մյուս կողմից՝ իշխանություն ցուցադրելու համար ամեն տեսակ անմիտ ու անպետք բաներ են անում, հետո կամաց-կամաց մարդուն հանգիստ են թողնում։

Այդպես էր նաև գրասենյակը։ Ներքին գործոց մինիստրությունն այդ ժամանակ բռնված էր վիճակագրության մոլուցքով. հրամայել էր ամենուրեք ստեղծել կոմիտեներ և տեղերն էր ուղարկել այնպիսի ծրագրեր, որոնք հաղիվ թե հնարավոր լիներ իրագործել Բելգիայի կամ Շվեյցարիայի պես մի երկրում. ըստ որում՝ ամեն տեսակ շինծու աղյուսակներ՝ maximum-ով ու minimum-ով, միջին թվերով ու տասնամյա հնության տվյալներից հանված եզրակացություններով (կազմված այնպիսի տեղեկությունների հիման վրա, որոնք մի տարի առաջ չէի՞ն էլ հավաքվում), բարոյախոսական նշումներով և օդերևութաբանական դիտողություններով։ Կոմիտեի ու տեղեկությունների հավաքման համար ոչ մի կոպեկ չէր հատկացվում. այդ բոլորը պիտի արվեր վիճակագրության հանդեպ տածած սիրուց, զեմստվոյական ոստիկանության միջոցով և կարգի բերվեր նահանգապետարանի գրասենյակում։ Գործի մեջ թաղված գրասենյակը, բոլոր խաղաղ ու տեսական զբաղմունքներն ատող զեմստվոյական ոստիկանությունը վիճակագրական կոմիտեն համարում էին ավելորդ մի պերճանք, մինիստրական շարաճճիություն. այնուամենայնիվ, հաշվետվությունները հարկավոր էր ներկայացնել աղյուսակներով ու եզրակացություններով հանդերձ։

1 անփութություն (ֆրանս.)։

Այդ գործն անչափ դժվար էր թվում ամբողջ գրասենյակին, պարզապես անհնարին էր. բայց դրան ոչ ոք ուշադրություն չէր դարձնում, նկատողություն չստանալու մասին էին մտահոգված։ Ես Ալենիցինին խոստացա պատրաստել ներածությունն ու սկիզբը, աղյուսակների ամփոփումները՝ պերճախոս նշումներով, օտար բառերով, քաղվածքներով ու ցնցող հետևություններով,— եթե նա ինձ թույլատրի այդ ծանր գործով զբաղվելու տանը և ոչ թե գրասենյակում։ Ալենիցինը խոսեց Տյուֆյաևի հետ ու համաձայնեց։

Կոմիտեի աշխատանքի վերաբերյալ հաշվետվության սկիզբը, որի մեջ ես խոսում էի հույսերից ու նախագծերից,— քանի որ առկա ոչինչ չկար,— մինչև հոգու խորքը հուզեց Ալենիցինին։ Ինքը՝ Տյուֆյաևը գտավ, որ վարպետորեն է գրված։ Դրանով էլ ավարտվեցին վիճակագրության գծով աշխատանքները, բայց կոմիտեն հանձնեցին իմ տնօրինությանը։ Ինձ այլևս չէին քշում թղթեր արտագրելու կոռի, և իմ հարբեցող սեղանապետը դարձավ համարյա ինձ ենթակա անձ։ Ալենիցինը միայն բարձրագույն պատշաճավորության ինչ-ինչ նկատառումներով էր պահանջում, որ ես ամեն օր կարճ ժամանակով անցնեի գրասենյակ։

Լուրջ աղյուսակներ կազմելու ողջ անհնարինությունը ցույց տալու համար կհիշատակեմ գավառական խուլ քաղաք Կայից ուղարկված տեղեկությունները։ Դրանցում այլևայլ անհեթեթությունների մեջ կային այսպիսիք. «Խեղդվածներ—2, խեղդվելու պատճառներն անհայտ են—2», իսկ հանրագումարի սյունակում նշված էր «չորս»։ Արտակարգ պատահարների սյունակում հիշատակված էր հետևյալ ողբերգական դավեշտը. «Քռեղքենի այսինչը, թունդ խմիչքներով վնասելով իր խելքը, կախվել է»։ Քաղաքի բնակիչների բարոյականությանը վերաբերող սյունակի ներքո գրված էր. «Կայ քաղաքում չհուդներ չէին գտնվում»։ Չե՞ն հատկացվել, արդյոք, գումարներ եկեղեցու, բորսայի, անկելանոցի շինության համար հարցի պատասխանները հետևում էին այսպես. «Բորսայի կառուցմանը հատկացված եղել է— չի եղել»...

Վիճակագրությունը, փրկելով ինձ գրասենյակային աշխատանքից, հանգեցրեց Տյուֆյաևի հետ անձնական շփումներ ունենալու դժբախտ հետևանքին։

Ժամանակ է եղել, երբ ես ատել եմ այդ մարդուն, ժամանակն այդ վաղուց անցել է, և այդ մարդն էլ է անցել-գնացել. նա մեռավ Կազանի իր կալվածքներում, մոտավորապես 1845 թվականին։ Հիմա ես հիշում եմ նրան՝ առանց չարության, իբրև անտառ ընկած յուրատիպ մի գազանի և վայրի մի կենդանու, որին հարկավոր էր ուսումնասիրել, բայց որի վրա չէր կարելի բարկանալ այն բանի համար, որ նա գազան է. այն ժամանակ ես չէի կարող նրա հետ պայքարի մեջ չմտնել. դա անհրաժեշտություն էր ամեն մի օրինավոր մարդու համար։ Պատահա՛րն օգնեց, այլապես նա մեծ վնաս կպատճառեր ինձ, բայց իմ նկատմամբ նրա չարած չարության դիմաց ոչ պահելը ծիծաղելի ու ողորմելի կլիներ։

Տյուֆյաևն ապրում էր մենակ։ Կինը բաժանված էր նրանից։ Նահանգապետի տան ետևի մասում, մի տեսակ գիտավոր անսքողությամբ, թաքնվում էր նրա սիրուհին՝ խոհարարի կինը, որի ամուսինը լինելու մեղքի համար էլ հենց խոհարարը քշված էր գյուղ։ Սիրուհին հանդես չէր գալիս բացահայտ, բայց նահանգապետին առանձնապես նվիրված պաշտոնյաները, այսինքն՝ հետաքննություններից առանձնապես վախեցողները «պատեհ ժամին» խոհարարի կնոջ պալատական «շքախումբն» էին կազմում։ Սրանց կանայք ու դուստրերը, առանց դրանով պարծենալու, ծածուկ, երեկոյան այցելություններ էին անում նրան։ Այդ տիրուհին աչքի էր ընկնում նույն վարվելակերպով, որն ուներ նրա փայլուն նախորդներից մեկը՝ Պոտյոմկինը. գիտենալով ծերուկի բնավորությունը և վախենալով փոխարինվելուց, նա ինքն էր անվանագ մրցակցուհիներ հայթայթում նրա համար։ Երախտապարտ ծերուկը այդ ներողամիտ սիրույն հատուցում էր մտերմությամբ, և նրանք ապրում էին հաշտ։

Տյուֆյաևն ամբողջ առավոտն աշխատում էր և լինում էր նահանգական վարչությունում։ Կյանքի պոեզիան սկսվում էր ժամը երեքից։ Ճաշը նրա համար հանաք բան չէր։ Նա սիրում էր ուտել, և ուտել՝ մարդկա՛նց ներկայությամբ։ Նրա խոհանոցում միշտ տասներկու հոգու ուտելիք էր պատ-

բաստվում։ Եթե հյուրերը կեսից քիչ էին լինում՝ նա վշտանում էր, եթե երկու մարդուց ավել չէր լինում՝ նա դժբախտ էր, իսկ եթե ոչ ոք չէր լինում՝ նա, հուսահատության հասած, գնում էր ճաշելու Դուլսինեայի հարկաբաժնում։ Սրտխառնության չափ կուշտ կերակրելու համար մարդիկ ճարելը դժվար բան չէր, բայց Տյուֆյակի պաշտոնական դիրքն ու պաշտոնյաների վախը նրանից ոչ նրանց էին թույլ տալիս՝ օգտվելու իր հյուրասիրությունից, ոչ էլ իրեն՝ տունը պանդոկի վերածելու։ Հարկ էր լինում սահմանափակվել խորհրդականներով, նախագահներով (բայց կեսի հետ ինքը գժտված էր, այսինքն՝ նրանց նկատմամբ բարեհաճ չէր), հազվադեպ ճամփորդներով, հարուստ վաճառականներով, կապալառուներով ու capacités[1] ունեցողների նման ինչ-որ տարօրինակություններով, որոնց Լյուդովիկոս-Ֆիլիպի օրոք ընտրական իրավունք էին ուզում տալ*։ Ինչ խոսք, ես առաջին մեծության տարօրինակություն էի Վյատկայում։

«Կարծիքի համար» հեռավոր քաղաքներ բնակության աքսորված մարդկանցից մի քիչ վախենում են, բայց նրանց բնավ չեն խառնում սովորական մահկանացուների հետ։ «Վտանգավոր մարդիկ» գավառի համար նույն հետաքրքրքրականությունն ունեն, ինչ որ հայտնի լվվլասները՝ կանանց և կուրտիզանները՝ տղամարդկանց համար։ Վտանգավոր մարդկանցից ավելի շատ Պետերբուրգի պաշտոնյաներն ու մոսկովյան ջոջերն են-խուսափում, քան գավառացիք, հատկապես սիբիրցիները։

Դեկտեմբերի տասնչորսի գործով աքսորվածները մեծ հարգանք էին վայելում։ Առաջինը Յուշնևսկու այրո՛ւն* էին այցելում պաշտոնյաները Նոր տարուն։ Սիբիրը վերստուգման ենթարկող սենատոր Տոլստոյը պաշտոնյաների տված տեղեկություններն ստուգելու համար զեկավարվում էր աքսորյալ դեկաբրիստների՛ց ստացված տեղեկություններով։

Մինիխը* Պելիմի իր աշտարակից վարում էր Տոբոլսկի նահանգի գործերը։ Նահանգապետները նրա՛ մոտ էին գնում՝ կարևոր գործերի մասին խորհրդակցելու։

1 իրավասություններ (ֆրանս.)։



Հասարակ ժողովուրդն աքսորականների նկատմամբ ավելի քիչ է անարդյացական, նա ընդհանրապես պատժվածների կողմն է։ Սիբիրի սահմանի մոտ «աքսորական» բառն անհետանում է ու փոխարինվում «դժբախտ» բառով։ Ռուս ժողովրդի աչքում դատավճիռը չի արատավորում մարդուն։ Պերմի նահանգում, Տոբոլսկի ճանապարհին, գյուղացիները փոքրիկ պատուհանի գոգին հաճախ կվաս, կաթ ու հաց են դնում՝ Սիբիրից թաքուն փախչող «դժբախտի» համար։

Ի դեպ՝ աքսորականների մասին. Նիժնիից դենը սկսում են հանդիպել աքսորված լեհեր, Կազանից նրանց թիվն աստիճանաբար աճում է։ Պերմում կար մոտ քառասուն հոգի, Վյատկայում՝ դրանից ոչ քիչ. բացի այդ, ամեն մի գավառական քաղաքում մի քանիսը կային։

Նրանք ապրում էին ռուսներից լրիվ առանձին և խուսափում բնակիչների հետ որևէ շփում ունենալուց. նրանք միաբան էին, և հարուստներն իրենց ունեցածը եղբայրաբար կիսում էին աղքատների հետ։

Բնակիչների կողմից ես չեմ տեսել նրանց նկատմամբ ոչ ատելություն և ոչ էլ առանձին մի համակրանք։ Նրանք լեհերին վերաբերվում էին իբրև կողմնակիների, մանավանդ որ՝ համարյա ոչ մի լեհ ռուսերեն չգիտեր։

Անուղղելի մի սարմատ[1], ծեր Պոնյատովսկու* մոտ ծառայած ուլանական մի սպա, որ մասնակցել էր Նապոլեոնի արշավանքների մի մասին, 1837 թվականին թույլտվություն ստացավ վերադառնալու իր լիտվական կալվածքները։ Մեկնելու նախօրյակին ծերուկն ինձ ու մի քանի լեհերի հրավիրեց ճաշի։ Ճաշից հետո իմ հեծելազորայինը բաժակը ձեռքին մոտեցավ ինձ, գրկեց ու զինվորական պարզասրտությամբ ականջիս ասաց. «Ախ ինչո՞ւ դուք ռո՛ւս եք»։ Ես ոչ մի բառ չասացի, բայց այդ հանդիմանանքը ուժեղ մեխվեց սրտիս մեջ։ Ես հասկացա, որ ա՛յդ սերունդը չէր, որ պիտի աղատագրեր Լեհաստանը։

Կոնարսկուց* սկսած՝ լեհերը բոլորովին այլ կերպ են նայում ռուսներին։

1 Պոլոնիայում, Սև ծովի ու մերձազովյան շրջաններում մ. թ. ա. III—II դարերում ապրած ցեղախմբի անուն։

Բնակության աքսորված լեհերին ընդհանրապես չեն նեղում, բայց կարողություն չունեցողների նյութական վիճակը սոսկալի է։ Կառավարությունը չքավորներին տալիս է ամսական 15-ական ռուբլի թղթադրամ. այդ փողից պիտի բնակարանի վարձ տալ, հագնվել, ուտել ու տաքանալ։ Զգալիորեն մեծ քաղաքներում, Կազանում, Տոբոլսկում, կարելի էր մի բան վաստակել դասերով, համերգներով, պարահանդեսներին նվագելով, դիմանկարներ անելով, պարի խմբակներ պահելով։ Պերմում և Վյատկայում այդ միջոցներն էլ չկային։ Եվ, չնայած դրան, ռուսներից նրանք ոչ մի բան չէին խնդրում։

... Տյուֆյաևի հրավերքները իր յուզվի, սիբիրյան ճաշակերույթներին՝ ինձ համար իսկական պատիժ էին։ Նրա ճաշասենյակը նույն գրասենյակն էր, բայց այլ ձևի մեջ, ավելի քիչ կեղտոտ, սակայն ավելի շատ անվայելուչ, քանի որ ուներ բարի կամքի և ոչ թե բռնության տեսք։

Տյուֆյաևը հինգ մատի պես գիտեր իր հյուրերին, արհամարհում էր նրանց, երբեմն իր ճիրաններն էր ցույց տալիս և առհասարակ նրանց հետ վարվում էր այնպես, ինչպես տերը վարվում է իր շների հետ՝ մերթ ավելորդ ընտանեվարությամբ, մերթ չափն անցնող կոպտությամբ. և այնուամենայնիվ կանչում էր նրանց իր ճաշերին, և նրանք սրտի թրթռոցով ու բերկրանքով գալիս էին նրա մոտ՝ նվաստանալով, բամբասելով, շողոքորթելով, հաճոյանալով, ժպտալով, մեջք ծռելով։

Ես կարմրում ու ամաչում էի նրանց փոխարեն։

Մեր բարեկամությունը երկար չտևեց։ Տյուֆյաևը շուտով գլխի ընկավ, որ ես պիտանի չեմ՝ լինելու Վյատկայի «բարձր» հասարակության մեջ։

Մի քանի ամիս անց նա արդեն ինձնից դժգոհ էր, ևս մի քանի ամիս հետո նա ինձ ատում էր, և ես ոչ միայն նրա ճաշկերույթներին չէի լինում, այլև բոլորովին դադարեցի նրա մոտ գնալուց։ Թագաժառանգի ուղևորությունն ինձ փրկեց նրա հետապնդումներից, ինչպես կտեսնենք հետո։

Ըստ որում, անհրաժեշտ է նշել, որ ես բացարձակ ոչինչ չէի արել սկզբում նրա ուշադրությանն ու հրավերքներին։



Հետո էլ՝ զայրույթին ու անբարյացակամությանն արժանանալու համար։ Նա չէր կարողանում հանդուրժել ինձ, մի մարդու, որն իրեն պահում էր անկախ, բայց բնավ ոչ հանդուգն. ես նրա հետ միշտ en règle[1] էի, նա պահանջում էր առորաքարշություն։

Նա խանդոտ սիրում էր իր իշխանությունը, այն ձեռք էր բերվել քրտինքով, և նա ակնկալում էր ոչ միայն հնազանդություն, այլև անառարկելի ենթարկվածության դրսևորում։ Դժբախտաբար, դրանում նա ազգային դրոշմ ուներ։

Կալվածատերը ծառային ասում է. «Լռի՛ր։ Ես չե՞մ հանդուրժի, որ դու ինձ պատասխանես»։

Գեպարտամենտի[2] պետը, գունատվելով, ասում է առարկություն անող պաշտոնյային. «Դուք մոռանո՞ւմ եք, թե ո՛ւմ հետ եք խոսում»։

Թագավորը «կարծիքի համար» աքսորում է Սիբիր, բանաստեղծությունների համար տանջում զնդաններում, և բոլոր երեքն էլ ավելի շուտ պատրաստ են ներելու գողությունն ու կաշառքը, սպանությունն ու կողոպուտը, քան թե մարդկային արժանապատվության հանդգնությունն ու անկախ խոսքի համարձակությունը։

Տյուֆյաևը իսկական ցարական ծառա էր, նրան գնահատեցին, բայց քիչ։ Նրա մեջ բյուզանդական ստրկությունը չտեսնված հաջողությամբ միահյուսված էր գրասենյակային կարգուկանոնին։ Իշխանության առաջ ինքն իրեն ոչնչացնելը, կամքից ու խելքից հրաժարվելը անխզելիորեն զուգորդվում էին ենթակաների դաժան ճնշման հետ։ Նա կարող էր լինել քաղաքացիական մի կլեյնմիխել, նրա «չերմեռանդությունը» ճիշտ նույն կերպ կարող էր ամեն բան հաղթահարել, և նա ճիշտ նույն կերպ պատերը կծեփեր մարդկային դիակներով, պալատը կչորացներ մարդկային թոքերով, փիսկ ինժեներական կորպուսի երիտասարդներին կխարազաներ ավելի սատիկ այն բանի համար, որ նրանք մատնիչներ չեն։

Տյուֆյաևը կայուն, ներքին ատելություն ուներ ամենայն

---

1 քաղաքավարի (ֆրանս.)։

2 դեպարտամենտ — մինիստրությունների և մյուս բարձրագույն ինտակտ հիմնարկությունների ենթադասին՝ ցարական Ռուսաստանում։

արիստոկրատական հանդեպ, այդ ատելությունը նրա մեջ մնացել էր դառն փորձություններից։ Տյուֆյաևի համար Արակչեևի տաժանակրային գրասենյակը եղել էր առաջին նավահանգիստը, առաջին ազատագրումը։ Նախկինում պետերը նրան աթոռ չէին հրամցնում, օգտագործում էին մանր հանձնարարությունների համար։ Երբ նա ծառայում էր ինտենդանտական զորամասում, սպաները հալածում էին նրան զինվորավարի, և մի գնդապետ Վիլնոյի փողոցում հասցրել էր նրան մտրակով... Այդ ամենը ծլել-հասունացել էր գրագրի հոգու մեջ. այժմ, երբ նահանգապետ էր՝ հերթն իրե՛նն էր, եկել էր հալածելու, աթոռ չտալու, դու-ով խոսելու, ձայնը հարկ եղածից ավելի բարձրացնելու, իսկ երբեմն էլ տոհմիկ ազնվականներին դատի տալու ի՛ր ժամանակը։

Տյուֆյաևը Պերմից փոխադրվել էր Տվեր։ Ազնվականությունը, իր ողջ զիջողությամբ ու ողջ ստրկամտությամբ հանդերձ, չէր կարողացել դիմանալ Տյուֆյաևին։ Նրանք խնդրեցին-համոզեցին մինիստր Բլուդովին*՝ տեղափոխել նրան։ Բլուդովը նրան նշանակեց Վյատկա։

Այստեղ նա նորից իր միջավայրն ընկավ։ Չինովնիկներ ու կապալառուներ, գործարանատերեր և պաշտոնյաներ՝ իսկակա՛ն փառավորություն։ Ամենքը սոսկում էին նրանից, ամենքը ձգվում էին նրա առաջ, բոլորը խմեցնում էին նրան, բոլորը ճաշկերույթ էին տալիս, բոլորը նրա աչքունքին էին նայում. հարսանիքներում ու անվանակոչության տոնախմբություններին առաջինը «նորին գերազանցության կենացն» էր։

## ԳԼՈՒԽ XV

Չինովնիկներ։ Սիբիրի գեներալ-նահանգապետները։ Գիշատիչ ոստիկանապետը։ Ջենտառուն դատավորը։ Տապակած խոյավնիկը։ Առաքյալակերպ բարեսիրը։ Իշակաճ սեռի տղան։ Կարտոֆիլային տեռորը և այլն։

Պետրոսյան հեղաշրջման ամենատխուր արդյունքներից մեկը չինովնիկական խավի առաջացումն էր։ Արհեստական, անկիրթ, սոված, «ծառայությունից» բացի ուրիշ որևէ բանի



ոչնչի ընդունակ, գրասենյակային ձևականություններից զատ ոչինչ չիմացող այդ դասը քաղաքացիական մի հոգևորականություն է, որը սրբազնագործում է դատարաններում ու ոստիկանատներում և անկուշտ ու աղտոտ հազար բերան դարձած՝ ծծում ժողովրդի արյունը։

Գոգոլը բարձրացրեց վարագույրի մի՛ ծայրը և ցույց տվեց մեզ ռուսական չինովնիկությանը՝ իր ողջ այլանդակությամբ. բայց Գոգոլը ակամայից հաշտեցնում է ծիծաղով, նրա վիթխարի կոմիկական տաղանդը գերազանցում է վրդովմունքը։ Բացի այդ, ռուսական գրաքննության կապարի մեջ նա հազիվ թե կարողանար ձեռք տալ տխուր կողմին կեղտոտ այդ ներքնատան, որտեղ դարբնվում է թշվառ ռուս ժողովրդի ճակատագիրը։

Այնտեղ, ինչ-որ մրոտ գրասենյակներում, որոնց միջով մենք շտապում ենք անցնել, քնձռոտ մարդիկ գրում են. գրում են գորշ թղթի վրա, արտագրում դրոշմաթղթին, և անհատներ, ընտանիքներ, ամբողջ գյուղեր վշտացած են, ահաբեկված, քայքայված։ Հայրը աքսորավայր է գնում, մայրը՝ բանտ, որդին՝ զինվորության, և այդ ամենը, ամպրոպի նման, ճայթում է հանկարծակի, մեծ մասամբ անմեղ տեղը։ Եվ ինչի՞ համար։ Փողի՛։ Կաշառաբաժի՛ն... կա՛մ կսկսվի հետաքննությունը գինուց վառված ու ցրտից սառած ինչ-որ հարբեցողի անշունչ մարմնի համար։ Եվ գյուղապետը հավաքում է, տանուտերը հավաքում է, մուժիկները բերում են վերջին կոպեկը։ Պրիստավը պիտի ապրի, իսպրավնիկը պիտի ապրի ու դեռ կին էլ պահի, խորհրդականը պիտի ապրի ու դեռ երեխաներ էլ դատարակի, խորհրդականը օրինակելի՛ հայր է...

Չինովնիկությունն իշխում է Ռուսիայի հյուսիս-արևելյան նահանգներում և Սիբիրում, այստեղ այն ծավալվել է անարգել, առանց քաշվելու... Ահավոր հեռաստան, բոլորը օգուտ են քաղում, թալանը դառնում է res publica[1]։ Ցարական իշխանությունն անգամ, որ կրակում է հրետառումբի նման, չի կարող ծակել խրուտ ցեխով լեցուն ձյունածածկ, ճահճապատ այդ խրամատները։ Կառավարության ձեռք ա-

1 ընդհանուր գործ (լատ.)։

ռած բոլոր միջոցները նվաղեցված են, բոլոր ցանկություն-
ները՝ աղճատված. նա խաբված է, հիմարացված, նրան դա-
վաճանել են, ծախել, և այդ ամենը՝ հավատարիմ հպատակի
առերևույթ ստրկամտությամբ ու գրասենյակային բոլոր
ձևերի պահպանումով։

Սպերանսկին* փորձեց թեթևացնել Սիբիրի ժողովրդի
վիճակը։ Ամենուրեք նա մտցրեց կոլեգիալության սկզբուն-
քը. կարծես թե բանն այն էր, թե ո՛վ ինչպե՛ս է գողանում՝
մենա՞կ, թե՞ խմբովի։ Նա հարյուրներով հեռացրեց հին
խարդախներին և հարյուրներով ընդունեց նորերին։ Սկզբում
նա այնպիսի մի սարսափ տարածեց զեմստվոյական ոս-
տիկանության վրա, որ մուժիկները չինովնիկներից փող էին
առնում, որ գանգատ չներկայացնեն։ Մի երեք տարուց չի-
նովնիկները նոր ձևերով իրենց գործն անում էին ոչ պա-
կաս, քան հին ձևերով։

Գտնվեց ուրիշ մի խենթ, գեներալ Վելյամինովը։ Մի եր-
կու տարի նա շարշարվեց Տոբոլսկում, ջանալով վերացնել
չարաշահումները, բայց տեսնելով, որ ապարդյուն է՝ ամեն
բան թողեց ու դադարեց նման գործերով զբաղվելուց։

Մյուսները, նրանից ավելի ողջամիտները, փորձեր չէին
անում, այլ իրենք օգտվում էին, ուրիշներին էլ չէին խան-
գարում։

— Ես արմատախիլ կանեմ կաշառքը,— ասել էր Մոսկ-
վայի նահանգապետ Սենյավինը ալեհեր մի գյուղացու, որը
գանգատ էր ներկայացրել մի բացահայտ անարգարության
դեմ։

Մերուկը ժպտացել էր։

— Ի՞նչ ես ծիծաղում,— հարցրել էր Սենյավինը։

— Ներող կլինես, տե՛ր իմ,— պատասխանել էր մուժի-
կը,— միտս եկավ մեր կտրիճներից մեկը. գլուխ էր գովում,
թե Ցար-Թնդանոթը կբարձրացնի ու, ճիշտ էլ, փորձեց,
բայց թե հո Թնդանոթը չբարձրացրե՞ց։

Սենյավինը. որ ինքն էր պատմում այս միջադեպը, ռու-
սական այն անգործնական մեծավորներից էր, ովքեր կար-
ծում են, թե աղնվության մասին հռետորություն անելով ու
ձեռքն ընկած մի քանի խարդախների դաժանորեն հալա-
ծելով կարելի է բուժել այնպիսի մի համատարած հիվանդու-



թյան, ինչպիսին ռուսական կաշառակերությունն է, որն
ապատորեն աճում է գրաքննության ծառի ստվերի ներքո։

Դրա դեմ կա երկու միջոց. հրապարակայնություն և ամ-
բողջ մեքենայի միանգամայն այլ կազմակերպում. նորից
գործի դնել միջնորդ դատարանների ժողովրդական սկզբ-
ունքները, բաց դատավարությունը, երդվյալներին և այն
ամենը, ինչ այնքա՞ն ատում է Պետերբուրգի կառավարու-
թյունը։

Արևմտյան Սիբիրի գեներալ-նահանգապետ Պեստելը,
Նիկոլայի կողմից մահապատժի ենթարկված նշանավոր
Պեստելի հայրը, իսկական մի հռոմեական փոխհյուպատոս
էր, այն էլ՝ ամենակատաղիներից։ Նա բացահայտ սիս-
տեմատիկ թալան մտցրեց իր լրտեսների շնորհիվ Ռուսաս-
տանից կտրված ողջ երկրամասում։ Ոչ մի նամակ սահման-
ը չէր անցնում՝ առանց բացվելու, և վա՜յ նրան, ով կհա-
մարձակվեր որևէ բան գրել նրա կառավարման մասին։ Նա
թռաջին գիլդիայի վաճառականներին տարով պահում էր
բանտում, շղթայակապ, խոշտանգում էր նրանց։ Չինովնիկ-
ներին քշում էր Արևելյան Սիբիրի ծայրը և թողնում այն-
տեղ երկու-երեք տարով։

Ժողովուրդը երկար համբերեց. վերջապես, տոբոլսկցի մի
քաղքենի սիրտ արեց թագավորին տեղեկացնել գործերի
վիճակի մասին։ Սովորական ճանապարհից վախենալով,
նա գնաց Կյախտա և այնտեղից թեյի քարավանի հետ ան-
ցավ Սիբիրի սահմանը։ Նա հաջողեցրեց Ցարսկոյե Սելոյում
իր խնդրագիրը հանձնել Ալեքսանդրին, աղաչելով, որ նա
կարդա այն։ Ալեքսանդրը զարմացել-ապշել էր իր կարդա-
ցած սոսկալի բաներից։ Նա կանչել էր քաղքենուն և, հե-
ռը երկար խոսելով, համոզվել, որ նրա ամբաստանությու-
նը տխուր իրողություն է։ Վշտացած ու մի քիչ շփոթված՝
թագավորը նրան ասել էր.

— Հիմա գնա՛ տուն, եղբա՛յր, այս գործը քննության
կանվի։

— Ձե՛րդ մեծություն,— պատասխանել էր քաղքենին,—
հիմա ես տուն չեմ գնա։ Ավելի լավ է հրամայեք ինձ բան-
տում պահել։ Իմ խոսակցությունը Ձերդ մեծության հետ
գաղտնի չի մնա՝ ինձ կսպանեն։

Ալեքսանդրը ցնցվել էր ու դառնալով Միլորադովիչին, որն այդ ժամանակ Պետերբուրգի գեներալ-նահանգապետն էր, ասել էր.

— Սրա համար դո՞ւ ես պատասխանատու իմ առաջ։

— Այդ դեպքում,— ասել էր Միլորադովիչը,— թույլ տվեք ինձ՝ նրան մեր տուն տանել։

Քաղքենին իսկապես մնաց այնտեղ՝ մինչև քննության ավարտը։

Պեստելը համարյա միշտ ապրում էր Պետերբուրգում։ Հիշեցեք, որ փոխհյուպատոսներն էլ սովորաբար ապրում էին Հռոմում։ Նա իր ներկայությամբ ու կապերով, իսկ ավելի շատ՝ ավարը կիսելով կանխում էր ամեն տեսակի անախորժ լուրերն ու ասեկոսեները[1]։ Պետական խորհուրդը, օգտվելով Վերնոյում կամ Աախենում* գտնվող Ալեքսանդրի բացակայությունից, խելոք ու արդարացի որոշում կայացրեց. քանի որ ամբաստանության մեջ խոսվում է Սիբիրի մասին՝ ուրեմն և գործը հանձնել Պեստելի քննությանը, մանավանդ՝ որ ինքն էլ այստեղ է։ Միլորադովիչը, Մորդվինովը և էլի մի երկուսը ընդվզեցին այդ առաջարկության դեմ, և գործը գնաց սենատ։

Սենատը, նույն վրդովեցուցիչ անարդարացիությամբ, որով միշտ քննում է բարձրագույն պաշտոնյաների գործերը, արդար դուրս բերեց Պեստելին, իսկ Տրեսկինին՝ Տոբոլսկի քաղաքացիական նահանգապետին, զրկելով աստիճաններից ու ազնվականի կոչումից, ինչ-որ տեղ բնակության աքսորեց։ Պեստելը սոսկ պաշտոնից հանվեց։

Պեստելից հետո Տոբոլսկ եկավ Կապցևիչը՝ Արակչեևի սաներից։ Նիհար, մաղձոտ, բնավորությամբ բռնակալ, բռնակալ, քանի որ ողջ կյանքն անց էր կացրել զինվորական ծառայության մեջ, ջանադիր կատարող՝ նա ամեն ինչ զինվորական կարգ ու կանոնի էր բերում, նշանակում էր գների maximum, իսկ սովորական գործերը թողել էր ավագակների ձեռքը։ 1824 թվականին թագավորը ցանկացավ այցելել Տոբոլսկ։ Պերմի նահանգով անցնում է հոյակապ, լայն, վաղուց հարթված ճանապարհ. դրան, հավանաբար, նպաստել էր տեղանքը։ Կապցևիչը մի քանի ամսում այդպիսի մի ճանապարհ գցեց մինչև Տոբոլսկ։ Գարնանը, անանցանելի ցեխին ու սաստիկ ցրտին, նա հազարավոր աշխատավորներին ստիպեց շինել ճանապարհը. նրանց ըստ շնչի քշում էին մոտիկ ու հեռու բնակավայրերից. սկսվեցին հիվանդությունները, բանվորների կեսը կոտորվեց, բայց «ճանապարհը կառուցվեց։

Արևելյան Սիբիրը կառավարվում է է՛լ ավելի վայրիվերոտ։ Դա արդեն այնքան հեռու է, որ լուրն անգամ հազիվ է Պետերբուրգ հասնում։ Իրկուտսկում գեներալ-նահանգապետ Բրոնևսկին, երբ «քեֆի մեջ էր», սիրում էր քաղաքում թնդանոթ կրակել։ Մի ուրիշն էլ, հարբած, իր տանը պատարագ էր կատարում լրիվ զգեստավորված և հոգևորականի ներկայությամբ։ Համենայն դեպս, մեկի աղմուկն ու մյուսի բարեպաշտությունը այնքան վնասակար չէին, որքան Պեստելի պաշարողական դրությունը և Կապցևիչի անդուլ գործունեությունը։

Ափսո՞ս որ Սիբիրն այդպես վատ է կառավարվում։ Գեներալ-նահանգապետների ընտրությունն առանձնապե՛ս ձախողակ է։ Զգիտեմ ինչպիսին է Մուրավյովը. նա հայտնի է իր խելքով և ընդունակություններով. մնացածները բանի պետք չէին։ Սիբիրը մեծ ապագա ունի. նրան համարում են սոսկ մի նկուղ, ուր շատ ոսկի, շատ մորթի ու այլ բարիքներ կան, որը, սակայն, ցուրտ է, ձյունապատ, ապրուստի միջոցներով աղքատ, ճանապարհները քիչ են, բնակեցված չէ։ Դա ճիշտ չէ։

Դժնդակ ռուսական կառավարությունը, որն ամեն ինչը անում է բռնությամբ, մահակով, չի կարողանում հաղորդել ինքնաբերաբար այն մղումը, որն առաջ կտաներ Սիբիրը ամենաբերեկյան թափով։ Տեսնենք ի՞նչ կլինի, երբ Ամուրի գետաբերանը նավարկելի դառնա և Ամերիկան Չինաստանի մոտ հանդիպի Սիբիրին։

[1] Դա առիթ էր տվել կոմս Ռոստոպչինին՝ կծու խոսք ասելու Պեստելի հասցեին։ Նրանք երկուսով ճաշում էին թագավորի մոտ։ Թագավորը, պատուհանի առաջ կանգնած, հարցրել էր. «Այդ ի՞նչ սև բան է այնտեղ, եկեղեցու վրա... խաչին»։ «Ես չեմ տեսնում,— ասել էր Ռոստոպչինը,— հարկավոր է Բորիս Իվանովիչից հարցնել, նա հիանալի աչք ունի, նա այստեղից տեսնում է, թե ի՞նչ է կատարվում Սիբիրում» (ծանոթ.՝ Ա. Ի. Գերցենի)։

Ես վաղուց եմ ասել, որ խաղաղ օվկիանոսը ապագայի Միջերկրական ծովն է[1]: Այդ ապագայում Սիբիրի դերը, մի երկրի, որն ընկած է օվկիանոսի, Հարավային Ասիայի և Ռուսաստանի միջև, չափազանց կարևոր է։ Պարզ է, որ Սիբիրը պետք է իշնի դեպի չինական սահմանը։ Հո չի՞ կարելի սառչել ու դողդողալ Բերյոզովում և Յակուտսկում, երբ գոյություն ունեն Կրասնոյարսկը, Մինուսինսկը և այլք։

Սիբիրի բուն ռուսական ազգաբնակչությունն իր խառնվածքի մեջ ունի այնպիսի նախահիմքեր, որոնք հուշում են մի այլ զարգացում։ Առհասարակ սիբիրյան ցեղը առողջ է, բարձրահասակ, խելացի ու արտակարգ։ Լինելով վերաբնակիչների զավակներ՝ սիբիրցիները ամենևին ծանոթ չեն կալվածատիրական իշխանությանը։ Ազնվականություն Սիբիրում չկա, և ուրեմն՝ արիստոկրատիա էլ չկա քաղաքներում. չինովնիկն ու սպան՝ իշխանության ներկայացուցիչները, ավելի շուտ հաղթողի կողմից կարգված թշնամական կայազորի են նման, քան արիստոկրատիայի։ Վիթխարի տարածությունները գյուղացիներին փրկում են նրանց հետ հաճախակի շփվելուց. փողը փրկում է վաճառականներին, որոնք Սիբիրում արհամարհում են չինովնիկներին և, առերևույթ զիջելով, նրանց ընդունում են այնպես, ինչպիսին կան՝ համարում են իրենց կամակատարները քաղաքացիական գործերում։

Զենքին սովոր լինելը, որը սիբիրցու համար պարտադիր, համատարած բան է, վտանգներին, արագաշարժությանը սովոր լինելը սիբիրցի գյուղացուն դարձրել են վելիկոռուս գյուղացուց ավելի մարտական, հնարամիտ, հակահարված տալու ավելի պատրաստ։ Եկեղեցու հեռավորությունը նրա միտքն ավելի շատ է զերծ պահել մոլեռանդությունից, քան Ռուսաստանում է, նա անտարբեր է կրոնի հանդեպ, մեծ մասամբ՝ հերձվածող։ Կան հեռավոր գյուղեր, ուր տերտերը տարին մի երեք անգամ է գնում և թոմարի կնքում, թաղում, պսակում ու խոստովանեցնում է՝ ամբողջ անցած ժամանակվա համար։

1 Մեծ ուրախությամբ տեսա, որ նյույորքյան հանդեսները քանիցս կրկնեցին այս միտքը (ծանոթ.՝ Ա. Ի. Գերցենի)։



Ուրալյան լեռնաշղթայի այս կողմում գործերն ավելի ֆանտաստ են արվում, և, չնայած դրան, ես կարող էի հարցեր լցնել չինովնիկների շարաշահումների ու խարդախությունների մասին պատմություններով, որ լսել եմ գրանցանյակում ծառայած ժամանակ և նահանգապետի ճամանյակում։

— Ա՛յ թե պրոֆեսոր էր իմ նախորդը,— մտերմական զրույցի պահին ասում էր ինձ Վյատկայի ոստիկանապետը։— Դե՛, ի՛նչ խոսք, էդպես էլ կարելի է ապրել, մենակ թե՝ ի ծնե պիտի էդպիսին լինել. դա իր տեսակի մեջ, կարող եմ ասել, մի Սեսլավին, մի Ֆիգներ* էր,— և վերքի պատճառով ոստիկանապետ կարգված կաղ մայորի աչքերը փայլում էին պանծալի նախորդին հիշելիս։

— Գողերի մի խումբ էր հայտնվել քաղաքի մոտերքը. մի քանի անգամ իշխանությանը լուրեր են հասնում— մեկ՝ վաճառականների ապրանքն են թալանել, մեկ՝ կապալառու պաշտոնյայի փողերն են խլել։ Նահանգապետը. գխաթ՝ ի ծնե պիտի էդպիսին լինել. դա իր տեսակի մեջ, կարող եմ ասել, մի Սեսլավին, մի Ֆիգներ* էր,— և վերքի պատճառով ոստիկանապետ կարգված կաղ մայորի աչքերը փայլում էին պանծալի նախորդին հիշելիս։

— Գողերի մի խումբ էր հայտնվել քաղաքի մոտերքը. մի քանի անգամ իշխանությանը լուրեր են հասնում— մեկ՝ վաճառականների ապրանքն են թալանել, մեկ՝ կապալառու պաշտոնյայի փողերն են խլել։ Նահանգապետը. գխաթ՝ ցավանքի մեջ է ընկնում, մեկը մյուսի ետևից հրամաններ է գրում։ Գիտե՞ք, էլի, զեմստվոյական ոստիկանությունը վախկոտ է. մանր գողի մեկին կարող է կապկպել ու քարշ տալ դատարան, իսկ հնտեղ մի ողջ շայկա է, էն էլ, երևի, զինված։ Զեմստվոյականները ոչ մի բան չարին։ Նահանգապետը ոստիկանապետին կանչում է ու ասում. «Ես, իհարկե, գիտեմ, որ դա իսկի էլ ձեր պարտականությունը չէ, բայց ձեր չերմեռանդությունը ինձ հարկադրում է ձե՛զ դիմելու։» Ոստիկանապետն արդեն լսել էր գործի մասին։ «Գեներա՛լ,— պատասխանում է նա,— ես մի ժամից գնում եմ։ Գողերը պիտի որ էսինչ կողմերում լինեն. ես հետս մի չոկ եմ վերցնում, նրանց կգտնեմ էդ տեղերում ու երկու-երեք օրից շղթայակապ նահանգական բանտ կբերեմ»։ Ի՞սկը մի Սուվորով՝ ավստրիական կայսեր մոտ*։ Իրոք որ՝ ասեց ու արեց. նա իր չոկով էդպես էլ հանկարծակի բռնում է նրանց, փողը չէին հասցրել թաքցնել, ոստիկանապետը բոլորը վերցնում է ու գողերին բերում քաղաք։

Սկսվում է հետաքննությունը։ Ոստիկանապետը հարցնում է.

— Ո՞ւր է փողը։

— Ախր, փողը, տե՛ր իմ, մենք ինքներս քո ձեռքը տվինք,— պատասխանում են երկու գող։

— Ի՞նձ,— ասում է ոստիկանապետը զարմանք կտրած։

— Քե՛զ,— գոռում են գողերը,— քե՛զ։

— Ա՜յ քեզ լկտիություն,— ասում է ոստիկանապետը թաղային պրիստավին՝ զայրույթից սփրթնելով։— Խարդախնե՛ր, դուք հլա կհավատացնեք էլ, թե ես թալանել եմ ձեզ հետ միասին։ Հիմա ես ձեզ ցույց կտամ, թե ի՞նչ ասել է կեղտոտել իմ անունը։ Ես ուլանական կոռնետ[1] եմ և թույլ չե՛մ տա, որ պատվիս հետ խաղան։

Նրանց ջարդում է՝ չէ՛ որ չէ՝ խոստովանեցեք, թե փողն ի՞նչ եք արել։ Նրանք սկզբում իրենցն են պնդում։ Բայց հենց որ նա հրամայեց երկու ծխամորճի ծեծ տալ՝ գողերի գլխավորը ճչաց.

— Մեղավոր ենք, փողը մսխել ենք։

— Վաղուց պիտի ասած լիներիր,— ասում է ոստիկանապետը,— թե չէ էնպիսի ստեր ես փչում որ. ինձ չե՛ս խաբի, ախպերս։

— Ճիշտ որ, մենք ձերդ գերազանցությունից պիտի սովորենք և ոչ թե դուք՝ մեզնից։ Մենք ի՞նչ ենք որ,— փընթփընթում է փորձված խարեբան, զարմանքով նայելով ոստիկանապետին։

— Եվ նա այդ գործի համար Վլադիմիրի շքանշան ստացավ։

— Ներեցեք, իսկ ի՞նչ է նշանակում՝ երկու ծխամորճի ծեծ տալ,— հարցրի ես՝ ընդհատելով մեծ ոստիկանապետին գովաբանող խոսքը։

— Դե դա տնական խոսք է մեզանում։ Պատժի ժամանակ, գիտեք, էլի, ձանձրանում ես, է՛հ, դու էլ հրամայում ես ծեծել և ծխամորճ ես քաշում. սովորաբար ծխամորճդ պրծնում է ու պատիժն էլ հետը. իսկ արտակարգ դեպքերում երբեմն հրամայում ես նաև երկու ծխամորճով հյուրասիրել բարեկամիդ։ Ոստիկանները սովոր են, գիտեն, թե ծեծը ինչքան պիտի տևի։

1 հեծելազորի սպայական առաջին աստիճան ունեցող վինվորական՝ ցարական բանակում։



Այդ Ֆիգների և Սեսլավինի մասին լեգենդներ էին պատմում Վյատկայում։ Նա հրաշքներ էր գործում։ Մի անգամ, չեմ հիշում ինչ առիթով,— ինչ-որ գեներալ-ադյուտա՞նտ, թե՞ մինիստր էր գալիս,— ոստիկանապետն ուզեց ցույց տալ, որ ինքը զուր չի ուլանի համազգեստ հագնում և ուրիշներից վատ չի խթանի իր ձիուն։ Այդ նպատակով նա Մաշկովցևներից՝ այդ երկրամասի հարուստ վաճառականներից մեկին դիմել էր խնդիրքով, որ սա իրեն տա իր թանկարժեք մոխրագույն ձին։ Մաշկովցևը չէր տվել։

— Լա՜վ,— ասել էր Ֆիգները,— դուք էդքան դատարկ մի բան չեք ուզում հոժար կամքով անել, ձին առանց ձեր թույլտվության էլ կառնեմ։

— Էդ դեռ կտեսնենք,— ասում է ոսկին։

— Եվ կտեսնենք,— ասում է պողպատը։

Մաշկովցևը ձին գնում է փակի տակ, երկու պահակ կարգում։ Այս անգամ ոստիկանապետը կվրիպի։

Բայց այդ գիշեր, հակառակի պես, վառվեցին կապալառուներին պատկանող և հենց Մաշկովցևի տան հետևը գտնվող դատարկ մարագները։ Ոստիկանապետն ու ոստիկանները գործում էին գերազանց։ Մաշկովցևի տունը փրկելու համար նրանք նույնիսկ քանդեցին ախոռի պատը և, առանց բաշն ու պոչը խանձելու, դուրս բերին վեճի առարկա ձին։ Երկու ժամ անց ոստիկանապետը, ճերմակ հովատակը հեծած, շքերթային տեսքով գնում էր մեծավորից շնորհակալություն ստանալու՝ հրդեհը օրինակելիորեն հանգցնելու համար։ Դրանից հետո ոչ ոք կասկած չուներ, որ ոստիկանապետը ամեն ինչ կարող է անել։

Նահանգապետ Ռիխլևսկին վերադառնում էր ակումբից։ Այն պահին, երբ նրա կառքը շարժվեց՝ ինչ-որ կառապան, անուշադիր գտնվելով, իր փոքր սահնակով ընկավ զույգ քեղաձիերի ու առջևի զույգ ձիերի լծափոկերի արանքը։ Դրանից բոպեական մի շփոթ առաջացավ, որը, սակայն, չխանգարեց Ռիխլևսկուն՝ շատ-հանգիստ տուն հասնելու։ Մյուս օրը նահանգապետը ոստիկանապետին հարցրել էր՝ գիտի՞, արդյոք, թե ո՛ւմ կառապանն էր իր լծափոկերի մեջ ընկնողը. նրան հարկավոր է սաստել։

— Էդ կառապանը, ձերդ գերազանցություն, էլ չի ընկ-

նի լծափոկերի արանքը, ես նրան մի լավ դաս եմ տվել,— ժպտալով պատասխանել էր ոստիկանապետը։

— Բայց ո՞ւմ կառապանն էր։

— Խորհրդական Կուլակովի, ձերդ գերազանցություն։

Այդ պահին ծերունի խորհրդականը, որին ես գտա ու թողի նահանգային վարչության խորհրդականի նույն պաշտոնում, մտել էր նահանգապետի սենյակը։

— Դուք մեզ կներեք,— ասել էր նրան նահանգապետը,— որ ձեր կառապանին դաս ենք տվել։

Զարմացած խորհրդականը, բան չհասկանալով, հարցական նայել էր նրանց։

— Երեկ նա մտավ իմ կառքի լծափոկերի մեջ։ Դե տեսեք, էլի՛, եթե նա ի՞մ կառքի լծափոկերի արանքն է մտել, ուրեմն...

— Բայց, ձերդ գերազանցություն, երեկ ե՛ս էլ, տիրուհի՛ս էլ տնից դուրս չենք եկել, կառապա՛ն էլ է տան եղել։

— Սա ի՞նչ է նշանակում,— հարցրել էր նահանգապետը։

— Ես, ձերդ գերազանցություն, երեկ էնքան զբաղված էի, խելքս իմս չէր. մեղավոր եմ, կառապանի մասին բոլորովին մոռացել էի և, խոստովանում եմ, սիրտ չարի այդ բանը զեկուցելու ձերդ գերազանցությանը։ Ես հենց հիմա ուզում էի կարգադրություն անել։

— Հա՛, դուք իսկակա՛ն ոստիկանապետ եք, խո՛սք չկա,— ասել էր Ռիխլևսկին։

Այդ գիշատիչ պաշտոնյայի կողքին եռ ձեզ ցույց կտամ նաև ուրիշ, հակադիր տեսակը՝ մեղմ, կարեկից, ձեռնատուն պաշտոնյային։

Ծանոթներիս մեջ կար պատկառելի մի ծերուկ, տենատորական վերտուգումով գործից հանված մի խապրավնիկ։ Նա զբաղվում էր խնդրագրեր կազմելով և գործերի ընթացքին հետևելով, մի բան, որ նրան հատկապես արգելված էր։ Այդ մարդը, որ իր ծառայությունն սկսել էր անհիշելի ժամանակներից, գողացել էր, կլպել, կեղծ տեղեկություններ հավաքել երեք նահանգներում, երկու անգամ դատի տակ էր եղել և այլն։ Ջեմստվոյական ոստիկանության այդ վետերանը սիրում էր պատմել զարմանալի զավեշտապատումներ իր և իր պաշտոնակիցների մասին, չթաքցնելով արհա-



մարհանքը նոր սերնդի այլասերված չինովնիկների հանդեպ։

— Դրանք հե՞չ, թեթևսոլիկնե՞ր են,— ասում էր նա,— ինչ խոսք, նրանք վերցնում են, առանց դրա ապրել չի լինի, բայց ճարպկության կամ թե օրենքը գիտենալու մասին մի՞ք էլ հարցնի։ Ձեզ կպատմեմ, օրինակի համար, մի բարեկամիս մասին։ Մի քսան տարի դատավոր էր, հերու մեռավ, ա՛յ թե գլուխ ուներ. հա՛մ մուժիկները նրան չեն անիծում, հա՛մ էլ տնեցիներին մի կտոր հաց թողեց։ Յուրահատուկ մի ձև ուներ։ Մուժիկը կգար խնդրանքով, դատավորը տեղնուտեղը կընդուներ. այնպե՞ս սիրալիր է, այնպե՞ս ծիծաղկոտ։

— Անունդ ի՞նչ է, քեռի՛, համ էլ հո՞ր անունն ինչ է։

Գյուղացին գլուխ կտար։

— Երմոլայ, այսինքն, տե՛ր իմ, հորս էլ Գրիգորի էին ասում։

— Այ բա՛րև, Երմոլայ Գրիգորևիչ, էդ որտեղի՞ց՝ ասում։

— Դե, մենք դուբիլովցի ենք։

— Գիտե՛մ, գիտե՛մ, ձեր ջաղացը, կարծեմ, ճանապարհի աջ կողմն է։

— Ճիշտ է, տե՛ր իմ, մեր ջաղացը համայնական է։

— Հարուստ գյուղ է, լավ սեահող ունի։

— Աստծուց չենք գանգատվում, ոչինչ, կերակրում է։

— Դե՛, էդ էլ հենց պետք է։ Երևի թե ընտանիքդ փոքր չէ, հա՞, Երմոլայ Գրիգորևիչ։

— Երեք տղա, երկու աղջիկ, մեծիս համար էլ հինգերորդ տարին է մի կտրիճ տնփեսա եմ բերել։

— Երևի թե թոռնե՞ր էլ ունես։

— Դրանից էլ կա, ձերդ ողորմածություն։

— Դե փառք աստծուն, աճեք ու բազմացեք։ Երմոլայ Գրիգորևիչ, երկար ճամփա ես անցել, մի բաժակ արաղ խմենք։

Մուժիկը նազուտուզ է անում։ Դատավորը լցնում է նրա բաժակը, ասելով.

— Դե լա՛վ, լա՛վ, ախպե՛ր, էսօր սրբերը գինին ու ձիթայուղը չեն արգելում։

— Էդպես է, արգելք չկա, բայց հենց գինին է ամեն տե-

սակ փորձանքի մեջ գցում մարդուս,— և նա երեսը խաչակնքում է, գլուխ տալիս ու խմում արաղը։

— Էդպիսի ընտանիքով, Գրիգորիչ, ապրելը երևի շատ է դժվար։ Ամեն մեկին ուտեցրու, հագցրու, մի քոսոտ ձիով կամ կովով յոլա չես տանի, կաթը հերիք չի անի։

— Բա ի՞նչ, տեր իմ, մի ձիով ի՞նչ կանես, երեքն ունեմ, չորրորդն էլ կար, աշխատ ձի էր, սուրբ Պետրոսի պատին աչքով տվին՝ սատկեց. մենք մի դուփգար ունենք, Դորոֆեյը, աստված հեռո՞ւ պահի, ուրիշի բարիքը փորը չի տանում, համ էլ շատ չար աչք ունի։

— Պատահում է, պատահում։ Բայց դուք մեծ արոտատեղեր ունեք, երևի ոչխա՞ր եք պահում։

— Ոչինչ, ոչխար էլ կա։

— Է՛հ, համա թե քեզ հետ խոսքի բռնվեցի։ Ծառայությունը, Երմոլայ Գրիգորևիչ, թագավորական է, դատարան գնալուս ժամանակն է։ Ի՞նչ կա, գործ-մորթ ունե՞ս, ի՞նչ է

— Հենց էդ է, ձերդ ողորմածություն, ունեմ։

— Դե՛, ի՞նչ է եղել, կռիվ-մռի՞վ եք արել։ Շո՛ւտ արա, քեռի, պատմի՛, գնալուս ժամանակն է։

— Ի՞նչ ասեմ, հարազա՛տս, օր ծերության փորձանք եկավ գլխիս... Հենց աստվածածնի տոնին էր, մենք գինետանն էինք, դե՛, հարևան գյուղացու հետ թունդ խոսքակռվի բռնվեցինք. ավազակի մեկն է, մեր անտառը թալանում է։ Խոսքի մեջ ձեռքը բարձրացրեց ու բռունցքով խփեց կրծքիս։ «Դու ուրիշի գյուղում կռիվ մի՛ արա»,— ասում եմ նրան և ուզում էի հենց էնպես, այսինքն, օրինակի համար, բռթել նրան, էլ չիմացա հարբած էի, թե սատանան դրդեց՝ ուղիղ աչքին տվի ու փչացրի, այսինքն, աչքը, նա էլ երեցփոխի հետ տեղն ու տեղը գավառի պրիստավի մոտ գնաց՝ թե օրենքով դատ եմ ուզում։

Պատմելու ընթացքում դատավորը, ի՞սկը ձեր Պետերբուրգի դերասանները, գնալով ավելի լրջանում է, աչքերը էնպես սարսափելի չռում ու՝ ո՞չ մի բառ։

Մուժիկը տեսնում է ու գույնը գցում, գլխարկը ոտքերի մոտ է դնում, հանում թաշկինակը, որ քրտինքը սրբի։ Դատավորը հա լռում է ու գրքի էջերն է շուռ տալիս։



— Ես էլ, ահա՛, տե՛ր իմ, մոտդ եմ եկել,— ասում է մուժիկը այլայլված ձայնով։

— Դե՛, ես էստեղ ի՞նչ կարող եմ անել։ Էնպե՞ս էլ մի պատճառ է որ։ Ախր ինչի՞ հենց աչքին տվիր։

— Է՛դ ասա, տե՛ր իմ, ինչի՞... սատանան շշկլացրեց։

— Ափսո՛ս, շա՛տ ափսոս, ի՞նչ բանի համար պիտի ասեն քանդվի։ Ո՞նց պիտի ընտանիքդ առանց քեզ մնա։ Բոլորը չահել են, թոռներդ՝ մանր, պառավդ էլ՝ մե՛ղք։

Մուժիկի ոտներն սկսում են դողալ։

— Էս ի՞նչ բան էր, տե՛ր իմ, էս ի՞նչ փորձանքի մեջ ընկա։

— Ահա՛, Երմոլայ Գրիգորևիչ, ի՞նքդ կարդա... թե՞ գիր չգիտես։ Դե, ըհը՛, տեսնո՛ւմ ես «մարմնական վնասի մասին» հոդվածը...«Մտրակահարելուց հետո՝ աքսորել Սիբիր»։

— Մի՛ թող մարդը կործանվի, մի՛ մորթի քրիստոնյային։ Բա ուրիշ տեսակ չի լինի՞...

— Էսպես էլ մա՛րդ կլինի, հո չի՞ կարելի օրենքին դեմ գնալ։ Իհարկե, ամեն ինչ մարդուս ձեռքին է։ Ասենք երեսուն հարվածի տեղ մենք նշանակեցինք մի հինգը։

— Բա, ախր Սիբի՞րը...

— Մեր կամքից կախված չի, ախպե՛ր։

Մուժիկը ծոցից հանում է քսակը, քսակից՝ մի թուղթ, թղթի միջից՝ երկու-երեք՝ ոսկի ու, ցածր խոնարհվելով՝ դնում սեղանին։

— Է՞դ ինչ է, Երմոլայ Գրիգորևիչ։

— Փրկի՛ր, տե՛ր իմ։

— Դե լա՛վ, լա՛վ։ Էդ ի՞նչ ես անում։ Ես, մեղավորս, մաղարիչ մեկ-մեկ առնում եմ։ Ռոճիկս քիչ է, ուզես-չուզես՝ կվերցնես, բայց թե պիտի մի բանի դիմաց վերցնես։ Ես ո՞նց օգնեմ քեզ։ Գոնե կողը լիներ կամ ատամը, թե չէ՝ հենց աչքի՛ն ես տվել։ Ետ վերցրեք ձեր փողերը։

Մուժիկը մեռած է, թաղված չի։

— Գուցե թե էսպես անենք՝ ընկերներիս հետ խոսեմ ու գրեմ նահանգ։ Թե գործը ատյան հասավ՝ էնտեղ բարեկամներ ունեմ, ամեն բան կանեն. բայց միայն թե՝ նրանք ուրիշ տեսակի մարդիկ են, էնտեղ երեք ոսկով չես պրծնի։

Մուժիկն սկսում է ուշքի գալ։

— Ես՝ հե՛չ, ինձ բան մի տա, ընտանիքիդ եմ խղճում, իսկ նրանց երկու գորշագույնից[1] պակաս առաջարկել չի լինի։

— Այսինքն, ասուված վկա, խելքս չի կտրում, էդ որտեղի՞ց ճարեմ էդքան փող՝ չորս հարյուր մանեթ, ժամանակն էլ ժամանակ չի որ։

— Ես ինքս էլ եմ կարծում, որ գժվար բան է։ Պատիժը մենք կթեթևացնենք, զղջանքի համար իբր, և նկատի առնելով հարբած վիճակդ... Սիբիրումն էլ են մարդիկ ապրում։ Էդքան էլ մի հեռու չի... Իհարկե, եթե մի երկու ձի, կովերից մեկն էլ ու ոչխարներ ծախես՝ գուցե թե հերիքի։ Բայց թե էդ քո գյուղացի հալով ե՞րբ կկարողանաս նորից էդքան փողի տեր դառնալ։ Մյուս կողմից էլ, որ մտածում ես՝ ձիերդ կմնան, իսկ ինքդ կընկնես ջհանդամները։ Մտածի՛ր, Գրիգորիչ, դեռ ժամանակ կա, մինչև վաղը կսպասենք, դե, ես գնացի,— ավելացնում է դատավորն ու գրպանը գնում ոսկիները, որոնցից հրաժարվել էր, հետո էլ ասելով. «Սա լրիվ ավելորդ է, ես միայն վերցնում եմ, որ ձեզ չվիրավորեմ»։

Հաջորդ առավոտ, մեկ էլ տեսար, քավթառ ջհուդը զանազան մետաղադրամներով ու հին մանեթանոցներով մի երեք հարյուր հիսուն ռուբլի է բերում դատավորին։

Դատավորը խոստանում է գործը հոգալ. մուժիկին դատում են, դատում, վախեցնում, հետո էլ բաց թողնում՝ մի թեթև պատժելով կամ խորհուրդ տալով, որ հետագայում նման դեպքերում զգույշ լինի, կամ էլ այսպիսի մի նշում անելով՝ «պահել կասկածի տակ», և մուժիկը ամբողջ կյանքում աղոթում է աստծուն՝ դատավորի համար։

— Մ՛յ թե հնում ինչպե՞ս էին անում,— ասում էր պաշտոնից հանված խսպրավնիկը,— գործը մաքո՞ւր էին բռնում։

... Վյատկայի մուժիկներն առհասարակ շատ էլ հանդուրժող չեն։ Դրա համար էլ չինովնիկները նրանց խաբարբզիկ ու անհանգիստ մարդիկ են համարում։ Ջեմստվոյական ոստիկանության համար իսկական գանձը վոտյակներն են, մորդուինները, չուվաշները. խղճուկ, վեհերոտ, անխարդ մի ժողովուրդ... Խսպրավնիկները երկու անգամ շատ կաշառք տալիս նահանգապետներին՝ ֆիններով բնակեցված գավառներում նշանակվելու համար։

Ոստիկանությունն ու չինովնիկները անբնակայելի խաղեր են խաղում այդ թշվառների գլխին։

Թե հանձնարարություն կատարելու գնացող հողաչափը վոտյակների գյուղով անցնի՝ անպայման կանգ է առնում, ասպից վերցնում է աստրոլաբը[1], տնկում ձողը ու լարը քաշում։ Մի ժամից ամբողջ գյուղն իրարանցման մեջ է։ «Հողաչափո՛ւմ, հողաչափո՛ւմ»,— ասում են մուժիկներն այնպիսի տեսքով, ինչպես 12 թվականին «Ֆրանսիացի՞ն, ֆրանսիացի՞ն» էին ասում։ Գալիս է գյուղապետը՝ խոնարհ խնդիրքը անելու։ Դեռ նա հա՛ շարժում է ու ցուցակագրում։ Գյուղապետը նրան խնդրում է հողը չպակասեցնել, իրենց վնաս չտալ։ Հողաչափը պահանջում է քսան-երեսուն ռուբլի։ Վոտյակներն էլ ուրա՛խ են, հավաքում են փողը, և հողաչափը գնում է վոտյակների հաջորդ գյուղը։

Թե խսպրավնիկի ու գավառական պրիստավի ձեռքը դիակ ընկնի՝ օգտվելով սառնամանիքից, երկու շաբաթ քարշ են տալիս վոտյակների գյուղերով ու ամեն մի գյուղում ասում, թե հենց նոր են գտել և հետաքննությունն ու դատը նշանակված է նրանց գյուղում։ Վոտյակները փրկագին են տալիս։

Իմ գալուց մի քանի տարի առաջ խսպրավնիկը, փրկագին առնելու ավարտակով, դիակը բերել էր ռուսական մի մեծ գյուղ և պահանջել, որքան հիշում եմ, երկու հարյուր ռուբլի։ Գյուղապետը համայնքի ժողով էր գումարել։ Համայնքը հարյուրից ավել չէր տալիս։ Խսպրավնիկը չէր պիշում։ Մուժիկները զայրացան, նրան երկու գրագիրների հետ փակեցին վարչության մեջ և, իրենց հերթին, սպասում էին վառել նրանց։ Խսպրավնիկը չհամաձայնեց սպառնալիքին։ Մուժիկները տեսակի չորս կողմը ծղոտ լցրին և, իբրև վերջնագիր, պատուհանից խսպրավնիկին մատուցեցին ձողին ցցած մի հարյուրանոց։ Հերոս խսպրավնիկը պահանջում էր ևս

---

1 բնագրում серенькая— 200 ռուբլիանոց թղթադրամ



1 հին աստղաբաշխական գործիք, որով որոշում էին երկնային լուսատուների դիրքը։

հարյուր։ Եվ մուժիկները խոտը կրակ տվին, ու զեմստվոյական ոստիկանության երեք Մուկիոս Սկևոլաներն* էլ վառվեցին։ Այս գործը հետո սենատ հասավ։

Վոտյակների գյուղերն ընդհանրապես ռուսականներից ավելի աղքատ են։

— Վատ ես ապրում, ախպերս,— ասում էի ես վոտյակ տանտիրոջը, երբ ձիերի էի սպասում հեղձուցիչ, սևացած ու թեքված փոքրիկ խրճիթում, որի պատուհանները հետևից էին, այսինքն՝ բակի կողմից։

— Ի՞նչ անես, աղա՛, մենք խեղճ, փող ետ գցել սև օրվա համար։

— Դե՛, սրանից սև օր հո չի՞ լինի, ա՛յ հալևոր,— ասացի ես նրան՝ մի բաժակ ռոմ լցնելով։— Դարդից մի հատ գցի։

— Մենք չենք խմում,— պատասխանեց վոտյակը, ագահ նայելով բաժակին ու կասկածանքով՝ ինձ։

— Դե լա՛վ, վերցրո՛։

— Առաջ ինքդ խմել։

Ես խմեցի, վոտյակն էլ խմեց։

— Իսկ դու ո՞վ,— հարցրեց նա։— Նահանգի՞ց, գործո՞վ։

— Չէ՛,— պատասխանեցի ես,— ճամփորդ եմ, գնում եմ Վյատկա։

Դա բավականին հանգստացրեց նրան, և նա, թեթևացած, բացատրության կարգով՝ ավելացրեց.

— Սև օր, երբ իսպրավնիկ ու տերտեր գալիս։

Հենց այս վերջինիս մասին էլ ուզում եմ ձեզ որոշ բաներ պատմել։ Տերտերը մեզանում գնալով ավելի է վերածվում հոգևոր ոստիկանի, ինչպես որ պետք է սպասել մեր եկեղեցու բյուզանդական հնազանդությունից ու կայսերական քահանայապետությունից։

Ցինն բնակչությունը մասամբ մկրտություն է ընդունել նախապետրոսյան շրջանում, մասամբ Ելիզավետայի թագավորության օրոք է մկրտվել և մասամբ էլ մնացել է հեթանոս։ Ելիզավետայի օրոք մկրտվածների մեծ մասը թաքուն հավատարիմ է մնում իր սխուր, վայրենի կրոնին[1]։

1 Նրանց բոլոր աղոթքները իրենց ցեղի շարունակման, բերքի, հոտի պահպանման նյութական մի խնդրանք են, ուրիշ ոչինչ։ Ահա՛ տարա,



Ցիկու-երեք տարին մեկ իսպրավնիկը կամ պրիստավը տերտերի հետ գնում են գյուղերը՝ ստուգելու, թե վոտյակներից պասը ո՛վ է պահել, ո՛վ չի պահել և ինչո՛ւ։ Նրանց նեղում են, բանտ նստեցնում, ծեծում, ստիպում են վճարել փսակատարությունների համար. և, որ գլխավորն է, տերտերն ու իսպրավնիկը փնտրում են վոտյակների՝ իրենց նախկին ծեսերից հրաժարված չլինելու որևէ ապացույց։ Եվ հոգևոր լրտեսն ու զեմստվոյական միսիոները փոթորիկ են սարքում, հսկայական փրկագին առնում, սև օր են բերում ու գնում, ամեն ինչ թողնելով առաջվանը, որպեսզի առիթ ունենան մի երկու տարուց նորից գալու՝ մտրակով և խալով։

1835 թվականին սրբազնագույն սինոդը անհրաժեշտ համարեց քարոզչություն անել Վյատկայի նահանգում և հեթանոս չերեմիսներին դարձնել ուղղափառ։

Այդ դարձի բերելը ռուսական կառավարության բոլոր մեծ բարեփոխումների տիպար է, մի ֆասադ, դեկորացիա, blague[1], սուտ, ուռեցրած մի հաշվետվություն. մեկը գողություն է անում, մեկին ծեծում են։

Միտրոպոլիտ Ֆիլարետը միսիոներ ուղարկեց մի ժիր քահանայի։ Նրան անվանում էին Կուրբանովսկի։ Ռուսական հիվանդությամբ՝ փառասիրությամբ տառապող Կուրբանովսկին եռանդով գործի անցավ։ Նա վճռել էր, ինչ էլ լինի, աստծո երանությունը ներարկել չերեմիսներին։ Սկզբում նա փորձեց քարոզել, բայց շուտով ձանձրացավ։ Եվ իսկապես էլ, ի՞նչ օգուտ այդ հնօրյա միջոցից։

Չերեմիսները, կռահելով նրա ուզածը, ուղարկեցին իրենց

Ցումալա՛, որ մի ոչխարս երկուսը ծնի, մի հատիկս հինգ դառնա, որ իմ գավակները գավակներ ունենան։ Երկրային կյանքի և հանապազօրյա հացի հանդեպ այս անվստահության մեջ մեռած, ընկճված, դժբախտ ու տխուր ինչ-որ բան կա։ Սատանան (չեյթանը) պաշտում է աստծուն հավասար։ Ես մեծ հրդեհ տեսա մի գյուղում, որտեղ խառն ապրում էին ռուսներ ու վոտյակներ։ Ռուսները քաշում-հանում էին իրերը, գողանում էին, ձեռ ու ոտ էին ընկել։ աչքի էր ընկնում մանավանդ օղեվաճառը։ Հրդեհի առաջն առնելը անհնար էր, բայց ինչ-որ բան փրկելը սկզբում հեշտ էր։ Վոտյակները հավաքվել էին փոքրիկ բլրի վրա ու, ոչինչ չանելով, հանգիստ-հանգիստ լաց էին լինում (ծանոթ.՝ Ա. Ի. Գերցենի)։

1 պարծենկոտություն (ֆրանս.)։

քահանաներին՝ կատաղի, ֆանատիկոս, ճարպիկ։ Երկար բանակցելուց հետո սրանք Կուրբանովսկուն ասացին.

— Անտառում կան սպիտակ կեչիներ, բարձր սոճիներ ու եղևնիներ, բայց գաճաճ գիհի էլ կա։ Աստված դրանց բոլորին հանդուրժում է և գիհուն չի հրամայում սոճի դառնալ։ Ահա մենք էլ էդպես նման ենք անտառի։ Դուք սպիտակ կեչին եղեք, մենք գիհի կմնանք, մենք ձեզ չենք խանգարում, բայց[1] ավորի համար աղոթում ենք, հարկը վճարում ենք, զինվոր տալիս ենք, իսկ մեր սրբությանը դավաճանել չենք ուզում։

Կուրբանովսկին տեսավ, որ նրանց հետ չի կարողանում ընդհանուր լեզու գտնել, որ Կիրիլի ու Մեֆոդիի* բախտն էլեն չի վիճակված։ Նա դիմեց իսպրավնիկին։ Իսպրավնիկն սնշափ ուրախացավ. նա վաղուց էր ուզում ցուցադրել իր չերմեռանդությունը եկեղեցու հանդեպ. նա չմկրտված թաթար էր, այսինքն՝ ուղղափառ մահմեդական՝ կոչյալ Դեվլեթ-Կիլդեև։

Իսպրավնիկը մի չոկատ առավ ու գնաց պաշարելու չերեմիսներին աստծո խոսքով։ Մի՛ քանի գյուղ մկրտվեցին։ Կուրբանովսկի առաքյալը մաղթանք կատարեց և գնաց հնազանդորեն վեղար ստանալու։ Թաթար-առաքյալին կառավարությունը Վլադիմիրի խաչ ուղարկեց՝ քրիստոնեություն տարածելու համար։

Դժբախտաբար, թաթար միսիոնները հաշտ չէր Մալմիժի մոլլայի հետ։ Մոլլային ամենևին դուր չէր գալիս, որ Ղուրանի ուղղափառ որդին այդպես հաջող ավետարան է քարոզում։ Ռամազանի տոնին իսպրավնիկը, քաջաբար խաչը վզից կախած, հայտնվեց մեչիդում և, իհարկե, կանգնեց բոլորից առաջ։ Մոլլան հենց նոր էր սկսել քթի մեջ Ղուրան կարդալ, երբ հանկարծ կանգ առավ ու ասաց, թե ինքը չի համարձակվում շարունակել ուղղափառի ներկայությամբ, որը մեչիդ է եկել քրիստոնեական նշանը վրան։

1 Նման մի պատասխան (եթե Կուրբանովսկին այն չի հնարել) մի ժամանակ տվել են Գերմանիայի գյուղացիները, որոնց ուզում էին կաթոլիկ դարձնել (ծանոթ.՝ Ա. Ի. Գերցենի)։



թաթարները տրտնջացին, իսպրավնիկը շփոթվեց, ինչպես թաքնվեց ու խաչը հանեց։

Հետագայում ես ներքին գործոց մինիստրության հանգամանքում կարդացի չերեմիսների այդ փայլուն հավատափոխության մասին։ Հոդվածում հիշատակված էր Դեվլեթ-Կիլդեևի չանադիր աշակցությունը։ Դժբախտաբար, մոռացել էին ավելացնել, որ եկեղեցու հանդեպ նրա չերմեռանդությունը նույնքան անշահախնդիր էր, որքան հաստատ էր նրա հավատը իսլամի հանդեպ։

Վյատկայում բնակվելուս ժամկետի վերջում պետական գույքերի դեպարտամենտի կատարած զողությունը հասավ այնպիսի անպատկառության, որ նրա վրա կարգեցին հետաքննիչ մի հանձնաժողով, որը վերստուգողներ ուղարկեց գյուղացիների եորովի կառավարմանը։

Նահանգապետ Կորնիլովը պետք է իր կողմից երկու հիանալի հատկացներ վերստուգման համար։ Նշանակվածներից մեկը ես էի։ Ի՞նչ ասես չկարդացի այդտեղ՝ թե՛ տեքստեր, թե՛ ծիծաղելի, թե՛ նողկալի։ Գործերի խորագրերն իսկ ցնցում էին ինձ զարմանքից։

«Գործ գավառային վարչության շենքի անհետ կորստյան մնացորդների կողմից նրա նախագծի կրծոտման վերաբերյալ»։

«Գործ պետական բանաձևերի բարհատու հողակտորի կորստյան վերաբերյալ», այսինքն՝ տասնհինգ վերստ հողի։

«Գործ գեղջուկ տղա Վասիլիին իգական սեռի փոխադրելու վերաբերյալ»։

Վերջինս դուրս այնքան եկավ, որ տեղն ու տեղը ծայրից ծայր կարդացի։

Այդ կարծեցյալ Վասիլիի հայրը նահանգապետին ուղղված իր դիմումի մեջ գրում է, որ տասնհինգ տարի առաջ ինքն ունեցավ մի աղջիկ, որի անունն ուզում էր դնել Վասիլիսա, բայց քահանան, «հարբածության մեջ» լինելով՝ աղջիկան Վասիլի կնքեց ու այդպես էլ գրանցեց ծննդականում։ Սույն հանգամանքը, քստ երեսուրին, մուժիկին քիչ էր անհանգստացրել, բայց երբ նա գլխի ընկավ, որ շուտով զինվոր տալու և գլխահարկի հերթը իր օջախին կհասնի՝ եղավ

ծի մասին հայտնեց գյուղապետին ու պրիստավին։ Այդ դեպքը ոստիկանությանը թվաց շատ խրթին։ Ոստիկանությունը նախապես մերժեց մուժիկին, ասելով, թե տասնամյա վաղեմության ժամկետն անցել է։ Մուժիկը գնաց նահանգապետի մոտ։ Նահանգապետը նշանակեց իգական սեռի այդ տղայի հանդիսավոր զննում բժշկի և տատմոր միջոցով... Էստեղ էլ գրագրություն սկսվեց կոնսիստորիայի հետ, և ասպարեզ եկավ մի տերտեր, ժառանգորդն այն մեկի, որը հարբած լինելով՝ ողջախոհորեն չէր զանազանել մարմնական տարբերությունները, ու գործը տարիներով երկարեց քիչ մնաց աղջկան կասկածեին արական սեռին պատկանելու մեջ։

Չկարծեք, թե այս անհեթեթ ենթադրությունը ես եմ հորինել կատակի համար. քա՛վ լիցի, դա միանգամայն համապատասխանում է ռուսական ինքնակալության ոգուն։

Պավելի օրոք գվարդիայի մի գնդապետ ամսվա զեկուցագրում մեռածների մեջ նշել էր մի սպայի, որը բուժվում էր հիվանդանոցում։ Պավելը, որպես մեռածի, նրան հանել էր ցուցակներից։ Դժբախտաբար, սպան չմեռավ, առողջացավ։ Գնդապետը նրան խնդրել-համոզել էր երկու տարով իր գյուղերը գնալ, հուսալով, որ գործը շտկելու համար մի առիթ կգտնի։ Սպան համաձայնել էր, բայց, ի դժբախտություն գնդապետի, ժառանգորդները, հրամանագրերում կարդալով ազգականի մահվան մասին, ոչ մի կերպ չէին ուզում նրան կենդանի ճանաչել և, կորստից անմխիթար՝ համառորեն պահանջում էին նրա սեփականությունն իրենց հանձնել։ Երբ կենդանի մեռյալը տեսավ, որ իրեն վիճակված է նորից մեռնել, էն էլ ոչ թե հրամանով, այլ քաղցից, գնաց Պետերբուրգ և խնդրագիր ներկայացրեց Պավելին։ Պավելը իր ձեռքով նրա դիմումի վրա մակագրեց՝ «Քանի որ պ. սպայի վերաբերյալ բարձրագույն հրաման է կայացված՝ ուստի նրա խնդիրքը մերժել»։

Սա իմ Վասիլիսա-Վասիլիից ավելի՛ լավ է։ Ի՞նչ արժեք ունի կյանքի կոպիտ փաստը բարձրագույն հրամանի առաջ։ Պավելը ինքնիշխանության պո՛տն էր ու դիալեկտի՛կը։

Ինչքան էլ կեզտոտ ու խրուտ է վարչական գործերի այդ մասը, այնուամենայնիվ մի քանի խոսք էլ ավելացնեմ։ Նրա հրապարակայնությունը վերջին, նվազ փոխհատուցումն է տառապյալներին, անհուշ, անմխիթար զոհվածներին։

Կառավարությունը բարձրաստիճան չինովնիկներին հանքով պարգև է տալիս պարապ հողերը։ Դրանում մի մեծ գիտություն չկա, թեև ավելի խելացի կլիներ այդ պաշարները պահել բազմացող բնակչության համար։ Այն կանոնները, որոնց համաձայն կարգադրված էր կատարել սահմանազատումները, բավականին մանրամասն էին. չի կարելի հատացնել նավարկելի գետի ափերը, շինափայտի անտառը, գետի զուլդ ափերը, վերջապես՝ կարգադրված էր ոչ մի դեպքում չվերցնել գյուղացիների մշակած հողերը, թեկուզ գյուղացիները ոչ մի իրավունք չունենային այդ հողերի նկատմամբ, բացի վաղեմության իրավունքից...[1]

Այդ բոլորը, իհարկե, թղթի վրա էր։ Իրականում մասնավոր տնօրինության համար հողերի սահմանազատումը անձարանը կողոպտելու և գյուղացիներին կեղեքելու ահալոր աղբյուր էր։

Վարձակալության իրավունք ստացող ազնվազարմ մեծատոհմիկները սովորաբար կա՛մ իրենց իրավունքները ծախում են վաճառականներին, կա՛մ ջանում նահանգի զեկավարության միջոցով, հակառակ կանոնների, որևէ խոշոր բան ճանկել։ Կոմս Օրլովն ինքը պատահաբար իրեն հոգաբաժին ստացավ մի ճանապարհ ու արոտավայրեր, որտեղ մակաղում են Սարատովի նահանգի հոտերը։

Ուշեմն և զարմանալի չէ, որ մի գեղեցիկ առավոտ Կոտելնիկովոյի գավառի Դարովի շրջանի գյուղացիների հողը կտրեցին ընդհուպ մինչև կալատեղերն ու տները և մասնավոր տնօրինության հանձնեցին կոմս Կանկրինի ինչ-որ ազգականից վարձակալության իրավունքը գնած վաճառականներին։ Վաճառականները հողի համար վարձավճար սահմանեցին, այնուամենայնիվ մի քանի խոսք էլ ավելացնեմ։

1 Վյատկայի նահանգում գյուղացիները շատ են սիրում տեղափոխվել։ Հաճախ անտառում հանկարծ հայտնվում են երկու-երեք շեն։ Հնկայական հողերն ու անտառները (արդեն կիսով չափ հատված) հրապուրում են գյուղացիներին՝ վերցնելու անօգուտ մնացած այդ res nullius-ը [անտեր իրը (լատ.)]։ Ֆինանսների մինիստրությունը մի քանի անգամ ստիպված էր հողը ամրացնել գավթողներին (ծանոթ.՝ Ա. Ի. Գերցենի)։

մանեցին։ Դրանից դատական գործ ծագեց։ Պետական ատյանը, վաճառականներից կաշառված ու Կանկրինի ազդեցությունից վախենալով, գործը խճճեց։ Բայց գյուղացիները վճռեցին համառորեն հետամտել, նրանք ընտրեցին երկու բանիմաց մուժիկ և ուղարկեցին Պետերբուրգ։ Գործը գնաց սենատ։ Հողաբաշխիչ դեպարտամենտը կռահեց, որ մուժիկներն իրավացի են, բայց չգիտեր ի՞նչ աներ և խորհուրդ հարցրեց Կանկրինից։ Կանկրինը պարզապես ընդունեց, որ հողը սխալ է բաժանհատված, սակայն դժվար համարեց այն վերադարձնելը, քանզի այդ ժամանակաընթացքում կարող էր վերավաճառված լինել և հողի տերերը կարող էին կատարած լինել զանազան բարեկարգումներ։ Եվ դրա համար էլ նորին պայծառափայլությունը, օգտվելով պետական հողերի մեծ քանակությունից, որոշեց գյուղացիներին լրիվ չափով բաժին հատկացնել մյուս կողմից։ Դա դուր եկավ բոլորին, բացի գյուղացիներից։ Նախ՝ հանա՞ք բան է հանդերը նոր մեկանց մշակելը, և երկրորդ՝ մյուս կողմինը անհարմար, ճահճոտ հող դուրս եկավ։ Քանի որ Դարովի շրջանի գյուղացիներն ավելի շատ զբաղվում էին երկրագործությամբ, քան թե լուսավի ու մորակոցարի որսով, ուստի նորից խնդրագիր ներկայացրին։

Այդ ժամանակ պետական ատյանն ու ֆինանսների մինիստրությունը նոր գործը հնից զատեցին և, գտնելով մի օրենք, որտեղ ասված է, որ եթե բաժին ընկած հողը անհարմար է դուրս գալիս՝ այն պետք է ոչ թե հաշվից հանել, այլ կիսով չափ ևս՝ ավելացնել, կարգադրեցին Դարովի գյուղացիների ճահճին մի կես-ճահիճ էլ հավելել։

Գյուղացիները նորից դիմեցին սենատին, բայց մինչև նրանց գործը քննարկման կհասներ, հողաբաշխիչ դեպարտամենտը նրանց ուղարկեց նոր հողաբաժնի հատակագիծ, ինչպես կարգն է՝ կազմած, գույնզգույն, քամիները ցույց տվող աստղանիշերով, RRZ և ZZR շեղանկյունների պատշաճ բացատրություններով, և գլխավորը՝ այսինչ տասնորդը վճարելու պահանջով։ Գյուղացիք, տեսնելով, որ իրենց ոչ միայն հող չեն տալիս, այլև ուզում են ճահճի գիմաց իրենցից փող պոկել՝ լրիվ հրաժարվեցին վճարելուց։

Խպրավենիկը հայտնեց Տյուֆյաևին։ Տյուֆյաևը զինվորական էկզեկուցիա[1] ուղարկեց Վյատկայի ոստիկանապետի մոտ։ Սա եկավ, մի քանի մարդ բռնեց, ծեծեց, գյուղակը խաղաղեցրեց, գնաց, մեղավորներին հանձնեց քրեական դատարանին, և մի շաբաթ խոսում էր գյուղապետի խռպոտած ձայնով։ Մի քանի մարդ պատժվեցին ճիպոտահարությամբ ու աքսոր քշվեցին։

Երկու տարի անց թագաժառանգն անցնում էր Դարովի գյուղակով. գյուղացիները խնդրագիր հանձնեցին, նա կարգադրեց գործը հետաքննել։ Այդ առթիվ ես գործի վերջին մի զեկուցագիր կազմեցի։ Թե ի՞նչ՝ դուրս եկավ այդ վերանայումից՝ չգիտեմ։ Ես լսեցի, որ աքսորվածներին վերադարձրել էին, բայց վերադարձրե՞լ էին արդյոք հողը՝ չեմ լսել։

Վերջում հիշատակեմ կարտոֆիլային խռովության նշանավոր պատմությունը և այն, թե ինչպես Նիկոլայը թափառաշրջիկ գնչուներին հաղորդակից էր դարձնում պետերբուրգյան քաղաքակրթության բարիքներին։

Ռուս գյուղացիները դժկամությամբ էին կարտոֆիլ ցանում, ինչպես մի ժամանակ ողջ Եվրոպայի գյուղացիները, կարծես բնազդը ժողովրդին ասում էր, թե դա անպետք ուտելիք է, որը ոչ ուժ է տալիս, ոչ էլ առողջություն։ Ի միջի այլոց, կաթգին կալվածատերերի հողերում ու բազմաթիվ պետական գյուղերում «գեռանախնձորը» ցանում էին կարտոֆիլային տեսակից շատ ավելի առաջ։ Բայց ռուսական կառավարությանը նողկանք է պատճառում հենց այն, ինչը կատարվում է ինքնին։ Հարկավոր է, որ ամեն բան արվի զոռով, ըստ ֆիզգելմանի[2], ըստ տեմպի։

Կազանի, մասամբ նաև Վյատկայի նահանգների գյուղացիները գաշտերը կարտոֆիլ ցանեցին։ Երբ կարտոֆիլը հավաքել էին, մինիստրության խելքին փչեց գավառականներում կենտրոնական հորեր բացել. հորերը վավերացված են, հորերը կարգադրագրված են, հորերը փորվում են. և ձմեռնամուտին մուժիկները, սրտի մրմունով, կարտոֆիլը

---

1 զինվորական ուժի միջոցով։

2 ըստ ֆիզգելմանի— ցուցման համաձայն, ֆիզգելման—զինվորների շաբաթյան առջև զենքի գործածության ձևերը ցույց տվող ենթասպա. զինվորները նույնությամբ պետք է կրկնեին այդ ձևերը։

տարան կենտրոնական հորերը։ Բայց երբ հաջորդ գարնանը նրանց ուզեցին ստիպել, որ սառած կարտոֆիլը ցանեն՝ հրաժարվեցին։ Իրոք էլ՝ չէր կարելի ավելի լկտի մի վիրավորանք հասցնել աշխատանքին, քան բացահայտ անմտություն անելու հրամանն էր։ Այս ընդդիմությունը ներկայացվել էր իբրև խռովություն։ Մինիստր Կիսելյովը* Պետերբուրգից մի չինովնիկ ուղարկեց. սա, խելոք ու գործնական մի մարդ, առաջին գավառակում շնչից մի ռուբլի առավ և թույլ տվեց ցրտահարված կարտոֆիլը չցանել։

Չինովնիկը նույնը կրկնեց երկրորդ ու երրորդ գավառակում։ Բայց չորրորդում գյուղապետը կտրականապես ասաց, որ ինքը ոչ կարտոֆիլ կցանի, ոչ էլ փող կտա նրան։ «Դու,— ասել էր նրան գյուղապետը,— այսինչներին ու այսինչներին ազատել ես. պարզ բան է, որ մեզ էլ պիտի ազատես։» Չինովնիկն ուզում էր գործը գլուխ բերել սպառնալիքով ու ճիպոտահարությամբ, բայց մուժիկները փետերն առան, ոստիկանական ջոկատը վռնդեցին. զինվորական նահանգապետը կազակներ ուղարկեց։ Հարևան շրջանները պաշտպան կանգնեցին յուրայիններին։

Բավական է ասել, որ բանը հասավ Թնդանոթին ու հրացանին։ Մուժիկները տները թողին ու ցրվեցին անտառները. կազակները նրանց դուրս էին քշում թավուտներից՝ ինչպես վայրի գազանների, բռնում էին, շղթաներով կապոտում և ուղարկում Կոզմոդեմյանսկ՝ ռազմադատական հանձնաժողով։

Տարօրինակ պատահականությամբ՝ ներքին պահակախմբի ծեր մայորը ազնիվ, հասարակ մի մարդ էր. նա բարեսրտորեն ասաց, թե այդ բոլորի մեղավորը Պետերբուրգից ուղարկված չինովնիկն է։ Ամենքը վրա տվին նրան, ձայնը խեղդեցին, լռեցրին, ահաբեկեցին և նույնիսկ ամոթանք տվին, ասելով, թե ուզում է «կործանել անմեղ մարդուն»։

Դե՛հ, հետաքննությունն էլ ընթացավ սովորական ռուսական հանգով. մուժիկներին ծեծեցին հարցաքննության ժամանակ, ծեծեցին՝ որպես պատիժ, ծեծեցին ի խրատ այլոց, ծեծեցին փողի համար և մի մեծ խումբ քշեցին Սիբիր։

Նշանակալից է, որ դատի ժամանակ Կիսելյովն անցնում



Կոզմոդեմյանսկով։ Թվում էր, թե կարելի էր զինվորական հանձնաժողով մտնել կամ իր մոտ կանչել մայորին։

Այդ բանը նա չարե՞ց։

... Նշանավոր Տյուրգոն*, տեսնելով կարտոֆիլի հանդեպ ֆրանսիացիների ատելությունը, բոլոր վարձակալներին, մատակարարներին և իրեն ենթակա բոլոր անձանց ցանելու կարտոֆիլ ուղարկեց, խստիվ արգելելով գյուղացիներին տալը։ Միաժամանակ նրանց գաղտնի ծանուցեց շարգելել, որ գյուղացիները ցանելու համար կարտոֆիլ գողանան։ Մի քանի տարում Ֆրանսիայի մի մասը ծածկվեց կարտոֆիլի դաշտերով։

Tout bien pris[1], դա հո թնդանոթից ավելի լա՞վ է, Պավե՛լ Դմիտրիևիչ։

1836 թվականին քոչելով եկել Վյատկա էր հասել գնչուների մի թափառախումբ և տեղավորվել դաշտում։ Այդ գընչուները քարշ էին գալիս մինչև Տոբոլսկ ու Իրբիտ, շարունակելով անհիշելի ժամանակներից եկող իրենց թափառական ազատ կյանքը՝ մշտական վարժեցրած արջով ու ոչ մի բանի չվարժեցված երեխաներով, ձիու հեքիմներով, գրաբյուրյամբ ու մանր գողություններով։ Նրանք հանգիստ երգեր էին երգում ու հավ գողանում, բայց մեկ էլ նահանգապետը բարձրագույն հրաման ստացավ՝ եթե գտնվեն անձնագիր չունեցող գնչուներ (ոչ մի գնչու երբեք էլ անձնագիր չի ունեցել, և այդ բանը շատ լավ գիտեին թե՛ Նիկոլայը և թե՛ նրա մարդիկ), նրանց տալ այսինչ ժամկետը, որպեսզի գրանցվեն գյուղական ու քաղաքային համայնքներում այնտեղ, ուր կլինեն հրամանն առնելիս։

Հրամայված էր այդ ժամկետն անցնելուց հետո զինվորական ծառայության համար բոլոր պիտանիներին տալ զինվորության, մնացածներին ուղարկել աքսորանակության, խլելով արական սեռի երեխաներին։

Այդ խեղացնող հրամանը, որ հիշեցնում էր ամբողջ ցեղեր և բոլոր պատին միզողներին կոտորելու և պատժելու ասորածաշնչյան պատումները, ամոթահար արեց իրեն՝ Ցյուֆյանին։ Նա գնչուներին տեղյակ պահեց այդ անմիտ

1 ամեն բան նկատի առնելով (ֆրանս.)։

հրամանին, կատարման անհնարինության մասին գրեց Պետերբուրգ։ Գրանցվելու համար փող է հարկավոր, հարկավոր է համայնքների համաձայնությունը, որոնք նույնպես չեն ցանկանա ձրի ընդունել գնչուներին, քան որում պետք է նաև հաշվի առնել, թե կուզենա՞ն արդյոք գնչուներն իրենք՝ հենց այդտեղ բնակություն հաստատել։ Այս ամենը նկատի ունենալով՝ Տյուֆյակը,— և այստեղ չի կարելի նրան արդարը չմատուցել,— նրանց արտոնություններ տալու և ժամկետը երկարաձգելու առաջարկ էր արել մինիստրությանը։

Ի պատասխան՝ մինիստրը գրավոր հրամայել էր ժամկետը լրանալուն պես ի կատար ածել նաբուդոդոնոսորյան կարգադրությունը*։ Սրտի ցավով Տյուֆյակը ջանքեր ուղարկեց՝ հրամայելով շրջապատել թափառախումբը. երբ այդ բանը արդեն աբվել էր, եկավ ոստիկանությունը՝ կաչաղորային գումարտակով, և թե էստեղ ի՞նչ եղավ, ասում են, դժվար է պատկերացնել։ Կանայք զզզված մազերով, ճիչ ու լացով, ասես խելագարված՝ վազվզում էին, ոստիկանության ոտերն ընկնում, ալեհեր պառավները կանչում էին որդիներին։ Բայց կարգը հաստատվեց, և կուլտնի ոստիկանապետը տարավ երեխաներին, տարավ զինվորագրություններին, մկացածներին էտապով աքսորարանության ուղարկեցին։

Բայց երբ խլեցին երեխաներին, հարց ծագեց՝ ո՞ւր տանել նրանց և ի՞նչ փոքրավ պահել։

Առաջներում հասարակական խնամակալության վարչությունները կից կային կրթատներ, որոնք մի տանձին ծախս չէին պահանջում գանձարանից։ Բայց Նիկոլայի պրուսական անաբառությունը ոչնչացրեց դրանք՝ որպես բարոյականության համար վնասակար բաներ։ Ցյուֆյակն ինքը նախապես փող տվեց և հարցում արեց մինիստրին։ Մինիստրները երբեք և ոչ մի բանում չեն հապաղում. հրամայեցին՝ մանուկներին, մինչև կարգադրություն լինելը, հանձնել անկելանոցների ծերուկների ու պառավների խնամքին։

Փոքրիկ երեխաներին տեղավորել մեռնող ծերերի ու պառավների հետ, և ստիպել նրանց՝ մահվա՞ն օր չնչել, և անդորր որոնող զառամյալների՞ն հանձնարարել երեխաների ձրի խնամքը...



Գոնանե՞ր։

Խոսքս կիսատ չթողնեմ՝ անեմ էստեղ տարիուկես հետո Հորս վլադիմիրյան տանուտիրոջ գլխին եկած պատմությունը։ Նա խելոք, շատ բան տեսած մուժիկ էր, տայլանյան էր ծնել, ինքն էլ մի քանի կառք էր պահում և մի քսան տարի տանուտեր էր բահրատու փոքրիկ գյուղում։

Այն տարի, երբ ես ապրում էի Վլադիմիրում, հարևան գյուղացիները խնդրեցին նրան՝ իրենց փոխարեն զինվորագրվել. նա քաղաք եկավ հայրենիքի ապագա պաշտպանի ականջից բռնած ու մեծ ինքնավստահությամբ՝ որպես իր գործի վարպետ։

— Էգ բոլորը, տեր իմ, մարդուս ձեռքին է,— թավ, ալեխառն շեկ մորուքը մատներով սանրելով ասում էր նա։— Նախանցյալ տարի մեր տղին տվինք. էնպես հիվանդո՞տ էր, թուլակազմ, մուժիկները շատ էին վախենում, թե չի անցնի։ Է՛, ես էլ ասում եմ. «Ուղղափառնե՞ր, իսկ ինչքա՞ն մեջտեղ կդնեք. ակը չլուցես՝ չի պտտի»։ Իրար մեջ տվինքառանք, ու համայնքը որոշեց քսանհինգ ռուբլի։ Գալիս եմ նահանգ ու, պետական տոյանում խոսելուց հետո, գնում ուղիղ նախագահի մոտ. սա, տեր իմ, խելացի մարդ էր ու ինձ էլ վաղուց գիտեր։ Կանչել տվեց ինձ առանձնասենյակ, իր ոքն էլ ցավում է ու բարեհաճել է պառկել բազմոցին։ Ես ամեն ինչ ներկայացրի նրան, իսկ նա ծիծաղելով ասում է. «Էհ՛-վ, լա՛վ, դու ասա, թե էն բանից ինչքա՞ն ես բերել։ Ախր, դու չհուդի մեկն ես, ես քեզ գիտե՞մ»։ Սեղանին տասը ռուբլի դրի ու խոր գլուխ տվի. նա էլ դրանք ձեռքն առավ ու խաղացնում է։ «Բայց, ախր, ասում է, մենակ ի՞նձ հո չպիտի տա՞ք, է՛լ ինչքան ես բերել»։ Ես զեկուցում եմ, թե մի տասն էլ կճարվի։ «Բա դրա՞նք ինչ ես անելու, ասում է, ի՞նդ հաշվիր. երկուսը՝ բուժակին, երկուսը՝ ընդունող զինվորականին, գրագրին ու, ասենք, տարբեր մաղարիչների համար երեք հատից ավելի հո չի՞ գնա, էնպես որ՝ դու մնացածը էստեղ տուր, իսկ ես կաշխատեմ գործը սարքել»։

— Է՛, դու էլ տվի՞ր։

— Բա ո՞նց, տվի, տվի ու շատ լավ էլ գլուխը խուզեցին։ Հաշիվն այդպես կլորացնելու սովոր, այդ տեսակ հաշ-

վարկների, հավանաբար նաև հինգ ոսկուն վարժված տանուտերը,— ոսկիներ, որոնց ո՛ւր գնալը նա լռության մատնեց,— վստահ էր, որ գործը կհաջողվի։ Բայց կաշառքի և այդ կաշառքը վերցնող ձեռքի աքանքում կարող են շատ փորձանքներ պատահել։ Զինվորահավաքին Վլադիմիր ուղարկվեց Ֆլիգել-ադյուտանտ կոմս Էսսենը։ Տանուտերը սրա մոտ էլ քիթը խոթեց՝ իր տասանոցներով ու ոսկիներով։ Դժբախտաբար, մեր կոմսը, «Նուլինի» հերոսուհու նման, դաստիարակված էր «ոչ թե հայրենական կարգով», այլ բալթիական արիստոկրատիայի դպրոցում, որն ուսուցանում էր գերմանական նվ՛իրվածություն՝ ռուսական թագավորին։ Էսսենը ջղայնացավ, գոռգոռաց և, որ ամենից վատն էր, զանգը քաշեց. ներս վազեց գրագիրը, ժանդարմներ եկան։ Տանուտերը, որը երբեք չէր երևակայել, թե կարող են գոյություն ունենալ կաշառք չվերցնող պաշտոնյաներ, գլուխն այնքան կորցրեց, որ չժխտեց, երդում չկերավ, թե փող չի առաջարկել, թե եթե մտքովն էդպիսի բան է անցել՝ թող աչքերը քոռանան, թող սովից սատկի։ Նա, ոչխարի պես, թույլ տվեց, որ իրեն բռնացնեն, ոստիկանատուն տանեն, հավանորեն զղջալով, որ գեներալին քիչ էր առաջարկել ու դրանով վիրավորել էր նրան։

Բայց Էսսենը չբավարարվեց ոչ սեփական մաքուր խղճով, ոչ խեղճ գյուղացու սարսափով ու ցանկանալով, հավանաբար, արմատախիլ անել in Russland[1] կաշառքը, պատժել արատը և բուժիչ օրինակ ցույց տալ՝ տանուտերի հանցագործ ոտնձգության մասին. գրեց ոստիկանությանը, գրեց նահանգապետին, գրեց զորակոչային ատյանին։ Մուժիկին բանտ նստեցրին ու դատի տվին։ Անմիտ ու այլանդակ օրենքի պատճառով,— որը հավասարապես պատժում է թե՛ նրան, ով, ազնիվ մարդ լինելով, փող է տալիս չինովնիկին, թե՛ հենց իրեն՝ կաշառք վերցնող չինովնիկին,— գործը շատ ծանր էր, և տանուտերին պետք էր փրկել՝ ինչ գնով էլ լինի։

Ես շտապեցի նահանգապետի մոտ. նա հրաժարվեց այդ գործին խառնվելուց. քրեական ատյանի նախագահն ու

1 Ռուսաստանում (գերմ.)։



խորհրդականները, Ֆլիգել-ադյուտանտի միջամտությունից երկյուղած, օրորում էին գլուխները։ Ֆլիգել-ադյուտանտն առաջինը ինքը, զայրույթը ողորմածության փոխած, ասում էր, թե «տանուտերին ոչ մի վատություն չի ուզում անել, թե ցանկացել է դաս տալ նրան, թե թող նրան դատեն-դատեն ու բաց թողնեն»։ Երբ ես սրա մասին պատմում էի ոստիկանապետին, նա ինձ ասաց. «Հենց է՛դ է, որ էդ բոլոր պարոնները գործից չեն հասկանում. նրան ուղղակի մոտս ուղարկեր, ես նրան, էդ տխմարին, մի լավ կքոթակեի՝ գլխից դեռ մեծ բաներ մի՛ բռնի, ու կճամփեի, և ամենքն էլ գոհ կլինեին. իսկ հիմա գնա՛ ու գլո՛ւխ դիր ատյանի հետ»։

Այս երկու դատողություններն այնպես հաջող ու վառ են արտահայտում իրավունքի ռուսական կայսերական հասկացությունը, որ ես չէի կարող դրանք մոռանալ։

Հայրենական իրավաբանության հերկուլեսյան սյուների արանքում տանուտերն ընկել էր մեջտեղի, ամենախոր փոսը, այսինքն՝ քրեական ատյան։ Մի քանի ամսից պատրաստեցին վճիռը, որով տանուտերին մտրակահար անելուց հետո ուղարկելու էին Սիբիր՝ աքսորաբանակության։ Նրա որդին, ողջ ընտանիքը մոտս եկան՝ աղաչելով փրկել հորն ու գերդաստանի գլխավորին։ Լրիվ անմեղ տեղը կործանվող գյուղացին էր շատ մեղքս գալիս։ Նորից նախագահի ու խորհրդականների մոտ գնացի, նորից սկսեցի նրանց ապացուցել, թե վնաս են պատճառում իրենց՝ այդպես խստորեն պատժելով տանուտերին, թե իրենք էլ շատ լավ գիտեն, որ ոչ մի գործ առանց կաշառքի գլուխ չես բերի, թե, վերջապես, հենց իրենք քաղցած կմնան, եթե, որպես իսկական քրիստոնյաներ, չընդունեն, որ «ամենայն տուրք՝ բարի և ամենայն պարգևք կատարեալք են»։ Խնդրելով, խոնարհվելով և տանուտերի որդուն ուղարկելով ավելի՛ խոր խոնարհանքի, ես հասա նպատակիս կեսին։ Տանուտերին դատապարտեցին բանտի մեջ ճիպոտի մի քանի հարվածի, թողնելով բնակության վայրում և արգելելով ուրիշ գյուղացիների գործերի համար միջնորդություններ անել։

Ես թեթևացած շունչ քաշեցի՝ տեսնելով, որ նահանգապետն ու դատախազը համաձայնվեցին, և գնացի ոստիկա-

նատուն՝ պատիժը մեղմացնելու խնդրանքով. ոստիկանները, մասամբ շոյված այն բանից, որ ես ինքս էի եկել իրենց խնդրելու, մասամբ խղճալով տառապյալին, որը տուժել էր ամեն մեկին այդքան հարազատ մի գործի պատճառով, բացի դրանից, գիտենալով, որ նա ունևոր մուժիկ է՝ ինձ խոստացան պատիժը դարձնել ձևական։

Մի քանի օր հետո առավոտյան եկավ տանուտերը՝ նիհարած, ավելի սպիտակած։ Ես նկատեցի, որ ողջ ուրախությամբ հանդերձ՝ նա մի տեսակ տխուր էր և ինչ-որ ծանր մտքի ազդեցության տակ։

— Ի՞նչ ես դարդ անում,— հարցրի նրան։

— Է՛, ամեն ինչ միանգամից անեին-պրծնեին։

— Բան չեմ հասկանում։

— Բա, այսինքս, ե՞րբ պիտի պատժեն։

— Քեզ չե՞ն պատժել, ի՞նչ է։

— Չէ՛։

— Էլ քեզ ո՞նց են բաց թողել, տուն ես գնում, չէ՞։

— Գնալը՝ գնում եմ, բայց մտածմունքս պատիժն է։ քարտուղարը հատուկ կարդաց։

Ես խկապես բան չէի հասկանում և ի վերջո նրան հարցրի, թե իրեն որևէ թուղթ տվե՞լ են։ Նա ինձ տվեց թուղթը։ Այնտեղ գրված էր ամբողջ վճիռը և վերջում ասված էր՝ քրեական տոյանի ցուցումով մտրակահարության պատժի ենթարկելով բանտի պատերի ներսում, ետալ նրան տույն վիճականը և բանտից ազատ արձակելը։

Ես քահ-քահ ծիծաղեցի։

— Է՛, դու արդեն պատժվա՞ծ ես։

— Չէ՛, տեր իմ, չէ՛։

— Դե՛, եթե դժգոհ ես՝ գնա, խնդրիր, որ պատժեն, գուցե թե ոստիկանությունը դրությանդ մեջ մտնի։

Տեսնելով, որ ես ծիծաղում եմ՝ ծերունին էլ ծիծաղեց, տարակուսանքով օրորելով գլուխն ու հետո էլ ասելով.

— Տե՛ս, է՛, ի՞նչ հրաշքներ են լինում։

«Ի՞նչ անկարգություն»,— կասեն շատերը, բայց թող նրանք հիշեն, որ միայն այդ անկարգությունն էլ հենց հնարավոր է գտնում կյանքը թունավորելու։



## ԳԼՈՒԽ XVI

### Ալեքսանդր Լավրենտիի Վիտբերգը

Այս այլանդակ ու քծնող, մանր ու գարշելի մարդկանց և տեսարանների, գործերի ու խորագրերի արանքում, այս գրասենյակային շրջանակի ու պաշտոնական իրադրության մեջ միտքս են գալիս կառավարության սառն ու անհոգի գժանությամբ ճզմված նկարչի տխուր, ազնիվ դիմագծերը։

Ցարի կապարե ձեռքը ոչ միայն օրոցքի մեջ խեղդեց հանճարեղ գործը, ոչ միայն ոչնչացրեց նկարչի բուն ստեղծագործությունը, խճճելով նրան դատական խաղերի ու ոստիկանական հետաքննչական խորամանկությունների մեջ, այլև չանաց վերջին պատառ հացի հետ խլել նրա ազնիվ անունը, նրան ներկայացնել իբրև կաշառակերի, գանձագողի մեկը։

Կործանելով, վարկաբեկելով Ա. Լ. Վիտբերգին, Նիկոլայը նրան աքսորեց Վյատկա։ Այնտեղ մենք հանդիպեցինք իրար։

Երկուսուկես տարի ես ապրեցի մեծ նկարչի հետ ու տեսնում էի, թե ինչպես հալածանքների ու դժբախտությունների բեռան տակ քայքայվում էր-այդ ուժեղ մարդը, որը զոհ դարձավ աշխարհում ամեն ինչ բթամտորեն զորակոչային արշինով ու գրասենյակային քանոնով չափող վարչա-զորանոցային ինքնիշխանությանը։

Դեռ կարելի ասել, թե նա հեշտությամբ հանձնվեց. նա ժառորեն ամբողջ տասը տարի պայքարում էր, նա աքսոր էր եկել թշնամիներին դեռևս հաղթելու, արդարանալու հույսով, մի խոսքով՝ նա եկել էր դեռևս պայքարի պատքաստ, եկել էր ծրագրերով ու մտադրություններով։ Բայց այստեղ նա հասկացավ, որ ամեն ինչ վերջացած է։

Թերևս նա դիմակայեր նաև այդ հայտնությանը, բայց կողքին կինն էր, երեխաները, իսկ առջևում հառնում էին աքսորի, կարիքի, զրկանքների տարիները, և Վիտբերգը ժամ առ ժամ սպիտակում էր ու ծերանում։ Երբ ես երկու տարի հետո բաժանվեցի նրանից Վյատկայում՝ նա տասը տարով ծերացել էր։

Ահա՛ այդ տևական նահատակության պատմությունը։

Ալեքսանդր կայսրը չէր հավատում Նապոլեոնի դեմ տարած իր հաղթանակին, նրան ճնշում էր փառքի ծանրությունը, և այդ հաղթանակը նա վերագրում էր աստծուն։ Միշտ հակված դեպի միստիցիզմն ու հոգու մռայլությունը, որի մեջ շատերը խղճի խայթ էին տեսնում, նա այդ տրամադրությանը հանձնվեց հատկապես Նապոլեոնի դեմ տարած մի շարք հաղթանակներից հետո։

Երբ «հակառակորդի վերջին զինվորը սահմանն անցավ», Ալեքսանդրը հրովարտակ արձակեց, որի մեջ երդվում էր մի մեծ տաճար կանգնեցնել Մոսկվայում՝ հանուն Փրկչի։

Ամեն տեղից նախագծեր պահանջվեցին, լայն մրցույթ սահմանվեց։

Վիտբերգն այդ ժամանակ դասընթացն ավարտած և գեղանկարչությունից ոսկե մեդալ ստացած երիտասարդ նկարիչ էր։ Ծագումով շվեդացի՝ նա ծնվել էր Ռուսաստանում և սկզբում դաստիարակվել լեռնակազետական կորպուսում։ Խանդավառ, էքսցենտրիկ և միստիցիզմին անձնատուր արտիստ. արտիստը կարդում է հիովարտակը, կարդում հրավերքները և մի կողմ է դնում իր բոլոր գործերը։ Գիշերցերեկ թափառում է Պետերբուրգի փողոցներով՝ սևեռուն մտքով տանջահար. այդ միտքը նրանից զորեղ էր. նա փակվում է իր սենյակում, ձեռքն է առնում մատիտն ու աշխատում։

Ոչ մի մարդու չէր վստահում արտիստն իր մտահղացումը։ Մի քանի ամիս աշխատելուց հետո մեկնում է Մոսկվա՝ ուսումնասիրելու քաղաքը, շրջակայքը ու նորից աշխատում է՝ ամիսներով թաքնվելով մարդկանց աչքից և թաքցնելով իր նախագիծը։

Եկավ մրցույթի ժամանակը։ Նախագծերը շատ էին, նախագծեր կային Իտալիայից ու Գերմանիայից, մեր ակադեմիկոսները ներկայացրել էին իրենցը։ Այլոց թվում անհայտ երիտասարդն էլ ներկայացրեց իր գծագիրը։ Շաբաթներ անցան, մինչև որ կայսրն զբաղվեց գծագրերով։ Անապատի քառասուն օրերն էին դրանք, փորձության, կասկածանքների ու տանջալից սպասման օրերը։

Վիտբերգի վիթխարի, կրոնական պոեզիայով տոգորված նախագիծն ապշեցրեց Ալեքսանդրին։ Նա կանգ առավ այդ



փագծի գիմաց և առաջինը դրա՛ մասին հարցրեց, թե ո՞վ ներկայացրել։ Բաց արին ծրարը և կարդացին ակադեմիական անհայտ անունը։

Ալեքսանդրը ցանկացավ տեսնել Վիտբերգին։ Նա երկար զրուցեց նկարչի հետ։ Սրա համարձակ ու ոգեշունչ խոսքը, անկեղծ ոգևորությունը, որով համակված էր, և համոզմունքների միստիկական երանգավորումը հիացրեցին կայսրին։ «Դուք քարերով խոսո՛ւմ եք»,— նկատեց նա՝ նորից գծելով նախագիծը։

Հենց նույն օրն էլ նախագիծը հաստատվեց, ու Վիտբերգը նշանակվեց տաճարի կառուցող և շինարարական հանձնաժողովի տնօրեն։ Ալեքսանդրը չգիտեր, որ դափնեպսակի հետ նաև փշե պսակ է դնում արտիստի գլխին։

Չկա ուրիշ մի արվեստ, որն ավելի հարազատ լինի միստիցիզմին, քան ճարտարապետությունը. վերացական, երկրաչափական, համր-նրաժշտային, անկիրք՝ այն ապրում է սիմվոլիկայով, կերպարով, ակնարկումով։ Հասարակ գծերը, դրանց ներդաշնակ զուգորդումը, ռիթմը, թվային հարաբերությունները խորհրդավոր ու միաժամանակ անավարտ ինչ-որ բան են ներկայացնում։ Շենքը, տաճարը իրենց մեջ չեն պարունակում իրենց նպատակը, ինչպես արձանը կամ կտավը, պոեմը կամ սիմֆոնիան. շենքը բնակիչ է որոնում, դա շրջագծված, մաքրված մի տեղ է. դա կահավորություն է, կրիայի զրահը, կակղամորթի խեցին. բանն էլ հենց այն է, որ պարունակողն այնպես համապատասխանի՝ ոգուն, նպատակին, կենվորին, ինչպես զրահը՝ կրիային։ Տաճարի պատերին, կամարներին ու սյուներին, շքամուտքին ու ֆասադին, հիմքի մեջ ու գմբեթի վրա պիտի դրոշմված լինի տաճարում ապրող աստվածությունը, այնպես, ինչպես ուղեղի ծալքերն են դրոշմվում գանգոսկրին։

Եգիպտական տաճարները նրանց սուրբ գրքերն էին։ Կոթողները՝ մեծ ճանապարհի քարոզներ։

Սողոմոնի տաճարը կառուցված Աստվածաշունչ է, այնպես, ինչպես ս. Պետրոսի տաճարը կառուցված մի ելք է կաթոլիկությունից, աշխարհիկ կյանքի սկիզբ, սկիզբը մարդկային ցեղի կարգալուծության։

Տաճարների կառուցումն ինքնին միշտ էլ այնպես է հա-

գեղեցիկ եղել միստիկ աղաղոցություններով, այլաբանություններով, խորհրդավոր մաղթանքներով, որ միջնադարյան կառուցողներն իրենց համարում էին հատուկ մի հոգևորականություն. Սողոմոնի տաճարի ժառանգորդներ և իրար հետ կազմում էին որմնադիրների գաղտնի աղանդներ, որոնք հետագայում վերածվեցին մասոնության։

Ձևա միստիկ բնույթը ճարտարապետությունը կորցնում է հընթացս Վերածնության դարերի։ Քրիստոնեական կրոնը մաքառում է փիլիսոփայական թեականության դեմ, գոթական ոլորը՝ հունական ֆրոնտոնի դեմ, հոգևոր սրբությունը՝ աշխարհիկ գեղեցկության դեմ։ Դրա համար էլ հենց ս. Պետրոսի տաճարն ունի այդպիսի վսեմ նշանակություն, նրա վիթխարի չափերի մեջ քրիստոնեությունը բուռն ձգտում է դեպի կյանք, եկեղեցին դառնում է հեթանոսական, և Բրունաբոտին Սիքստինյան կապելայի պատին Հիսուս Քրիստոսի պատկերում է լայնալանջ մարդիկի, Հերկուլեսի տեսքո ծանկուն հասակում և ուժեղ։

Սուրբ Պետրոսի տաճարից հետո եկեղեցիների ճարտարապետությունը լրիվ անկում ապրեց և ի վերջո հանգեց մերթ հին հունական պերիպտերների[1], մերթ սուրբ Պետրոսի եկեղեցու պարզ կրկնության։

Մի Պարթենոնը Փարիզում անվանեցին սուրբ Մագդալենի եկեղեցի, մյուսը—քորսա՝ Նյու-Յորքում։

Առանց հավատի և առանց հատուկ հանգամանքների գծվար էր ստեղծել որևէ կենդանի բան. բայց նոր եկեղեցիները շնչում էին արհեստականությամբ, երևակայությամբ, անախրոնիզմով, ինչպես խցանի տեղ կոճղեղիկներ ունեցող հնգաթև-բյուզանդական ձևի հինգգմբեթի աշտանները, որոնք կառուցում է Նիկոլայը Ֆոնի հետ, կամ ինչպես ոճն գոթական, արտիստական աշքը վիրավորող եկեղեցիները, որոնցով անգլիացիները զարդարում են իրենց քաղաքները։

Բայց բուն հանգամանքները,— որոնց առկայությամբ Վիարեզն ստեղծեց իր նախագիծը,— նրա անհատականությունը և Ալեքսանդր կայսեր որամադրությունը արտաքոր էին։

1 պերիպտեր— չորս կողմից սյունաշարով պատված անտիկ տաճար։



1812 թվականի պատերազմը ուժգին ցնցեց մտքերը Ռուսաստանում, Մոսկվայի ազատագրումից հետո երկար ժամանակ չէին կարողանում խաղաղվել հուզված մտքերն ու զգացմունքները։ Ռուսաստանից դուրս տեղի ունեցող իրադարձությունները, Փարիզի առումը, Հարյուր օրվա պատմությունը, սպասումները, լուրերը, Վաթերլոոն, օվկիանոսի հեռուները լուսացող Նապոլեոնը, սուրբ՝ զոհված ազգերի համար, երեքյուրը՝ ազգերի համար, ևս դարձող զորքը, տուն եկող ռազմիկները՝ այդ բոլորը ուժգին էին ամենաուժգին բնավորությունների վրա։ Պատերազմներ հիմա արտաքսա-պատանում, միստիկին, արվեստագետին, ոչ՝ արվեստագետին՝ կատարվող դեպքերի, ցարական հրավերի և տեսական հանձարի ազդեցության ներքո։

Մոսկվայի մոտ, Մոժայսկի և Կալուգայի ճանապարհների արանքում փոքրիկ մի բարձունք իշխում է ողջ քաղաքի վրա. Վորոբյովյան լեռներն են, որոնք ես հիշատակել եմ պատանեկությանս առաջին հուշերում։ Ամբողջ քաղաքը փռված է դրանց ստորոտին, բարձունքից բացվում է Մոսկվայի ամենաշքեղ տեսարաններից մեկը։ Այստեղ կանգնած լացել է այն ժամանակ դեռ չահել անառակ Իվան Ահեղը և նայել, թե ինչպես է վառվում իր մայրաքաղաքը, այստեղ հայտնվեց նրան երեց Սիլվեստրը և իր խիստ խոսքով քրտնաջան տարվա համար վերադարձեց հանձարեղ ճիվաղին։

Այս՞ լեռը շրջանցեց Նապոլեոնն իր բանակով, այստեղ կտրվեց նրա ուժը, Վորոբյովյան լեռների ստորոտից սկսվեց նահանջը։

Կարելի՞ էր, արդյոք, 1812 թվականի հիշատակին նվիրված տաճարի համար դանել ավելի լավ տեղ, քան այդ ամենահեռավոր կետը, որին հասել էր թշնամին։

Բայց դա դեռ քիչ է, հարկավոր էր հենց լեռը դարձնել տաճարի ստորին մաս, դաշտը մինչև գետ գրկել սյունաշարերով և երեք կողմից բնության կառուցած այդ հիմքի վրա կանգնեցնել երկրորդ ու երրորդ տաճարները, որոնք կազմում էին զարմանալի մի միասնություն։

Վիարեզի տաճարը, ինչպես քրիստոնեության գլխավոր դպրոցները, մի երրորդությունն է և անբաժանելի։

Լեռան մեջ փորված ներքևի տաճարը զուգահեռակող քառանկյունու, դագաղի, իրանի ձև ուներ. նրա արտաքինը ծանրանիստ մի շքամուտք էր, որ հենվում էր համարյա եգիպտական սյուների վրա. նա ձուլվում-կորչում էր լեռան մեջ, վայրի, կուսական բնության մեջ։ Այդ տաճարը լուսավորված էր էտրուրիական բարձր աշտանակների լամպերով, ցերեկային լույսը. աղոտ հասնում էր նրան երկրորդ տաճարից՝ անցնելով տուրբ ծննդյան թափանցիկ պատկերի միջով։ Այդ ստորգետնյա մատուռում պիտի հանգչեին 1812 թվականին զոհված բոլոր հերոսները, հավիտենական հոգեհանգիստ պիտի կատարվեր մարտի դաշտում ընկածների համար, պատերին պիտի փորագրվեին նրանց բոլորի անունները՝ զորավարներից մինչև շարքայիններ։

Այս դագաղի, այս գերեզմանոցի վրա չորս կողմ էր փռվում երկրորդ տաճարի՝ բացված ձեռքերի, կյանքի, տառապանքների, տքնության տաճարի հավասարածայր հունական խաչը։ Տաճար տանող սյունաշարը զարդարված էր Հին կտակարանի մարդկանց արձաններով։ Մուտքի մոտ կանգնած էին մարգարեները։ Նրանք կանգնած էին տաճարից դուրս՝ ցուցանելով այն ճանապարհը, որով իրենց չէր վիճակվել անցնել։ Այդ տաճարի ներսում ողջ ավետարանական պատմությունն էր և պատմությունը առաքյալների գործերի։

Այս տաճարից վեր, պսակելով, ավարտելով ու ամփոփելով այն, գալիս էր երրորդ տաճարը՝ ռոտոնդի տեսքով։ Վառ լուսավորված այդ տաճարը տաճար էր ոգու, անվրդով խաղաղության, հավիտենականության, որն արտահայտված էր նրա շրջանաձև հատակագծով։ Այստեղ չկային ոչ սրբապատկերներ, ոչ անդրիներ, միայն դրսից նա շրջապատված էր հրեշտակապետերի պսակով ու ծածկված էր հնկայական գմբեթով։

Ես հիմա հիշողությամբ եմ վերարտադրում Վիաբերգի գլխավոր հղացումը, որը նա մշակել էր ամենայն մանրամասնությամբ և ամենուրեք քրիստոնեական թեոդիցեայի[1] ու ճարտարապետական ներքագեղության խստիվ հետևողականությամբ։

Զարմանալի այդ մարդը ամբողջ կյանքում աշխատում էր իր նախագծի վրա։ Դատապարտվածության տասը տարիներին նա զբաղվում էր միայն դրանով. աքսորի աղքատության ու կարիքի մեջ՝ ամեն օր մի քանի ժամ նվիրում էր իր տաճարին։ Նա ապրում էր այդ տաճարում, նա չէր հավատում, որ այն չի կառուցվի. հիշողությունները, մխիթարությունները, փառքը՝ ամեն ինչ արտիստի այդ թղթապանակում էր։

Թերևս երբևէ ուրիշ մի արվեստագետ, տառապյալի մահից հետո, թափ կտա թղթերի փոշին ու բարեպաշտությամբ կհրատարակի այդ ճարտարապետական մարտիրոսագրությունը, հանուն որի մաշվեց-անցավ ուժեղ մի կյանք, որ մի ակնթարթ պայծառ լուսավորվեց ու հետո ճզմվեց, ոչնչացվեց ֆելդֆեբել-ցարի, ճորտ-կալվածատերերի և գրաֆ-մինիստրների արանքում։

Նախագիծը հանճարեղ էր, ահավոր, խելահեղ. դրա համար էլ հենց Ալեքսանդրն այն ընտրեց, դրա համար էլ հենց հարկավոր էր այն իրագործել։ Ասում են, թե լեռը չէր կարող դիմանալ այդ տաճարին։ Ես դրան չեմ հավատում։ Հատկապես՝ եթե հիշենք ինժեներների բոլոր նոր միջոցները Ամերիկայում և Անգլիայում, ուիթրոպեանոց այդ թունելները, շղթայաշեն կամուրջները և այլն։

Միլորադովիչը Վիտբերգին խորհուրդ էր տվել ներքին տաճարի հատակի սյուները պատրաստել մի ամբողջական գրանիտից։ Առարկելով կոմսին, ինչ-որ մեկն ասել էր, թե Ֆինլանդիայից փոխադրելը շատ թանկ կնստի։

— Հենց դրա համար էլ պետք է բերել տալ,— պատասխանել էր նա։— Եթե գրանիտի հանքը Մոսկվա գետի ափին լիներ, սյուներ կանգնեցնելը ի՞նչ մի զարմանալի բան կլիներ որ։

Միլորադովիչը պոետ-ռազմիկ էր և դրա համար էլ ընդ-

---

1 թեոդիցեա (հուն. theos—աստված և dikē— իրավունք, արդարություն)— XVII—XVIII դարերում տարածված կրոնա-փիլիսոփայական թեորիա, որ նպատակ ուներ բացատրելու և արդարացնելու «աստծո ամենակարողության» ու «ողորմածության» և աշխարհում գոյություն ունեցող անարդարության միջև եղած բացահայտ հակասությունը։

հանրապես հասկանում էր պահեստան։ Վիթխարի գործեր արվում են վիթխարի միջոցներով։

Միայն բնությունն է մեծագործում ձրի։

Վիտբերգին ներկայացվող գլխավոր մեղադրանքը նույնիսկ նրանց կողմից, ովքեր երբեք չէին կասկածում նրա մաքրությանը, այս էր. ինչո՞ւ նա հանձն առավ դիրեկտորի պաշտոնը, նա՝ անփորձ արտիստը, գրասենյակային գործից ոչինչ չհասկացող երիտասարդը։ Նա պիտի բավարարվեր ճարտարապետի դերով։ Դա ճիշտ է։

Բայց հեշտ է նման մեղադրանքներ հարուցել սեփական սենյակում նստած։ Վիտբերգը հենց նրա համար էլ հանձն առավ, որովհետև երիտասարդ էր, անփորձ ու արտիստ. նա հանձն առավ, որովհետև իր նախագիծն ընդունվելուց հետո իրեն ամեն բան հեշտ էր թվում. նա հանձն առավ, որովհետև ինքը՝ ցարն էր առաջարկել, խրախուսել ու սատարել նրան։ Ո՞ւմ խելքը չէր գնա... Ո՞ւր են այդ սթափ մարդիկ, չափավորները, ժուժկալները։ Եվ եթե կան էլ՝ չե՞ն ստեղծում վիթխարի նախագծեր և չե՞ն ստիպում «քարերին՝ խոսել»։

Ինքնին հասկանալի է, որ Վիտբերգին շրջապատեց խարդախների ամբոխը, մարդիկ, ովքեր Ռուսաստանը համարում էին մի ագերա, ծառայությունը՝ շահավետ գործարք, պաշտոնը՝ հարստանալու երջանիկ առիթ։ Դժվար չէր հասկանալ, որ նրանք Վիտբերգի ոտքի տակ փոս պիտի փորեին։ Բայց որպեսզի նա, փոսի մեջ ընկնելով, այնտեղից դուրս գալ չկարողանար՝ հարկավոր էր նաև, որ գողությանը գումարվեր ոմանց նախանձը և այլոց վերավորված փառասիրությունը։

Հանձնաժողովում Վիտբերգի գործընկերներն էին՝ միտրոպոլիտ Ֆիլարետը, Մոսկվայի գեներալ-նահանգապետը, սենատոր Կուշնիկովը. նրանք բոլորն էլ էն գլխից վիրավորված էին կաթնակերի, այն էլ համարձակորեն իր կարծիքը հայտնող, համաձայն չլինելիս առարկություն անող կաթնակերի հետ ընկերակցելուց։

Նրանք օգնեցին խճճելու Վիտբերգին, օգնեցին զրպարտելու և ապա սառնասրտորեն կործանեցին։

Դրան նպաստեց սկզբում իշխան Ա. Ն. Գոլիցինի մինիստրության անկումը։



Գոլիցինի մինիստրության հետ մեկտեղ վերացան մասոնական ազատությունը, բիբլիական ընկերությունները, լյութերական պիետիզմը, որոնք, հանձին Մագնիցկու՝ կազանում և հանձին Ռունիչի՝ Պետերբուրգում, հասել էին անսահման տարածվածության, վայրենի հետապնդումների, մոլապարության, ընկնավորության ու ասուված գիտի էլ ի՞նչ հրաշքների։

Իր հերթին տիրապետող դարձավ վայրենի, կոպիտ, ոգեղ ոգեղափառությունը։ Այն քարոզում էր Նովգորոդի վարդապետ Ֆոտին, որն ինչ-որ, հասկանալի է՝ ոչ մարմնական,— մոտիկություն ուներ կոմսուհի Օրլովայի հետ։ Պյոտր III-ին խեղդած հայտնի Ալեքսեյ Գրիգորևիչի դուստրը մտածում էր փրկել հոր հոգին՝ Ֆոտիին ու նրա մենասանին տալով Եկատերինայի կողմից վանքերից բռնությամբ խլված հսկայական կալվածքի մի մասը և անձնատուր լինելով խելահեղ մոլեռանդության։

Բայց մի՛ բանում Պետերբուրգի կառավարությունը հետևողական է, մի՛ բանի նա չի դավաճանում՝ ինչքան էլ փոխվեն իր սկզբունքները, իր կրոնը. դա անարդարացի հալածանքն է ու հետապնդումը։ Ռունիչների և Մագնիցկիների մոլեռանդությունը շուտ նեռավ։ Ռունիչների ու Մագնիցկիների դեմ։ Բիբլիական ընկերությունը, որ երեկ հովանավորվում էր ու խրախուսվում և հենարանն էր բարոյականության ու կրոնի՝ այսօր փակված, արգելքի տակ է դրված և համարյա պրամանենդների շարքն է դասված. «Սիոնսկի վեստնիկը», որ երեկ հանձնարարվում էր ընտանիքի բոլոր հայրերին՝ արգելված է ավելի, քան Վոլտերն ու Գիդրոն, և նրա հրատարակիչ Լաբզինն աքսորված է Վոլոգդա։

Իշխան Ա. Ն. Գոլիցինի անկումը քշեց-տարավ Վիտբերգին. ամեն ինչ բարդվում է նրա վրա, հանձնաժողովը բողոքում է, միտրոպոլիտը դառնացած է, գեներալ-նահանգապետը՝ դժգոհ։ Նրա պատասխանները «հանդուգն են» (նրա գործի մեջ ճանդգնությունը առաջադրված է որպես գլխավոր մեղադրանքներից մեկը). նրա ենթակաները գողանում են. կարծես թե Ռուսաստանում ծառայության մեջ գտնվող որևէ մեկը չի գողանում։ Ի միջի այլոց, հավանական է, որ Վիտբերգի մոտ գողանում էին ավելի շատ, քան ուրիշների.

նա ուղղիչ տներ և աստիճանավոր գողերին զեկավարելու ոչ մի փորձ չուներ։

Ալեքսանդրը կարգադրեց Արակչեևին՝ քննել գործը։ Նա խղճում էր Վիտբերգին և իր մոտիկներից մեկի միջոցով Վիտբերգին հայտնեց, թե ինքը վստահ է, որ նա արդար է։

Բայց Ալեքսանդրը մեռավ և Արակչեևն ընկավ։ Վիտբերգի գործը Նիկոլայի օրոք անմիջապես վատթարագույն ընթացք ստացավ։ Այն ձգձգվեց տասը տարի՝ աներևակայելի անհեթեթություններով։ Քրեական ատյանի հաստատած մեղադրական հոդվածները մերժում էր սենատը։ Այն հոդվածները, որոնցով արդարացնում էր ատյանը, որպես մեղադրանք էր հարուցում սենատը։ Մինիստրների կոմիտեն ընդունում է բոլոր մեղադրանքները։ Թագավորը, օգտվելով «ցարերի ամենալավ՝ ներելու և պատիժը մեղմացնելու արտոնությունից», դատավճռին հավելում է աքսորը Վյատկա։

Այսպիսով, Վիտբերգն ուղևորվում է աքսորավայր՝ պաշտոնից հեռացվելով «Ալեքսանդր կայսեր վստահությունը չարաշահելու և գանձարանին հասցրած վնասի համար»։ Նրա վրա բարդում են, կարծեմ, մեկ միլիոն ռուբլի, վերցնում են ամբողջ կալվածքը, աճուրդով վաճառում ու լուր տարածում, թե նա ահագին գումար է փոխադրել Ամերիկա։

Ես ապրել եմ Վիտբերգի հետ նույն տան մեջ երկու տարի, և հետո էլ, մինչև մեկնելուս պահը, մշտապես կապ եմ պահպանել նրա հետ։ Նա չէր փրկել հանապազօրյա մի կտոր հաց. նրա ընտանիքն ապրում էր ամենաահավոր թշվառության մեջ։

Այդ և Ռուսաստանում կատարվող բոլոր նման գործերը բնութագրելու համար բերեմ երկու մանրուք, որոնք առանձնապես մնացել են հիշողությանս մեջ։

Վիտբերգը շինարարության համար մի փոքրիկ անտառ գնեց վաճառական Լոբանովից. նախքան ծառահատումն սկսելը Վիտբերգը տեսավ մի ուրիշ անտառակ, նույնպես Լոբանովինը, գետին ավելի մոտիկ, և նրան առաջարկեց տաճարի համար վաճառածը փոխարինել դրանով։ Վաճառականը համաձայնեց։ Անտառը հատեցին, փայտն առաքեցին։



Հետո մի անտառակի կարիք էլ զգացվեց, և Վիտբերգը նորից գնեց առաջինը։ Ահա միևնույն անտառը երկրորդի գնելու նշանավոր մեղադրանքը։ Խեղճ Լոբանովն այդ գործի համար բանտ նետվեց ու մեռավ այնտեղ։

Երկրորդը տեղի ունեցավ իմ աչքի առաջ։ Վիտբերգը մի կալվածք գնեց տաճարի համար։ Նրա մտքինն այն էր, որ կալվածատիրական գյուղացիները, որ գնված էին հողի հետ միասին, պարտավորվեին որոշ թվով բանվորներ հատկացնել. այդ միջոցով նրանք լիակատար ազատություն էին ձեռք բերում իրենց և գյուղի համար։ Զավեշտական է, որ մեր սենատոր-կալվածատերերը այդ միջոցառման մեջ ինչոր ազատազրկում հայտնաբերեցին։

Ի միջի այլոց, Վիտբերգն ուզում էր գնել Ռուզայի գավառում, Մոսկվա գետի ափին գտնվող հորս կալվածքը։ Գյուղամամարամար էր հայտնաբերվել, և Վիտբերգը մարմարի քանակը որոշելու համար երկրաբանական հետազոտություն կատարելու թույլտվություն խնդրեց։ Հայրս թույլ տվեց։ Վիտբերգը մեկնեց Պետերբուրգ։

Երեք ամիս անց հայրս իմանում է, որ քարհատումը հրամայական չափեր է ընդունել, որ գյուղացիների աշնանացանի արտերը ծածկվել են մարմարով. նա բողոքում է, չեն լսում։ Սկսվում է տևական մի դատ։ Սկզբում ուզում էին ամեն ինչ բարդել Վիտբերգի վրա, բայց, դժբախտաբար, պարզվեց, որ նա ոչ մի հրաման չէր տվել և որ այդ ամենն արել էր հանձնաժողովը՝ նրա բացակայության ժամանակ։

Գործը գնաց սենատ։ Սենատը, ի զարմանս ընդհանուրի, առողջ բանականությանը բավականին մոտ վճիռ կայացրեց. կտրված քարը թողնել կալվածատիրոջը՝ ի հատուցումն տրորված արտերի, քարհատման և կատարված աշխատանքի վրա գանձարանի ծախսած գումարը, շուրջ հարյուր հազար ռուբլի, բռնագանձել համաձայնագիրն ստորագրածներից։ Ստորագրողները իշխան Գոլիցինը, Ֆիլարետը և Կուշնիկովն էին։ Պարզ է՝ աղմուկ բարձրացավ։ Գործը հասցրին թագավորին։

Նա ունի յուր իրավագիտությունը։ Նա կարգադրեց վճռումից ազատել մեղավորներին, քանի որ, գրեց նա սեփական ձեռքով (ինչպես սենատի տեղեկագրում էլ տպված

էր), «հանձնաժողովի անդամները չեն իմացել, թե ի՞նչ են ստորագրում»։ Ենթադրենք, թե միտրոպոլիտը արհեստի բերումով հնազանդություն պիտի դրսևորեր, բա մյո՞ւս մեծամեծները, որոնք ընդունեցին այդպես հարգալից ու ողորմածաբար հիմնավորված ընծան։

Բայց որտեղի՞ց պիտի գտնեին հարյուր հազարը։ Պետական ունեցվածքը, ասում են, ոչ կրակն է վառում, ոչ էլ ջուրն է տանում. այն սոսկ գողացվում է, կարող էինք ավելացնել մենք։ Այստեղ երկար մտածելու հարկ չկար. անմիջապես գեներալ-ադյուտանտին փոստակառքով Մոսկվա ուղարկեցին՝ գործը քննելու։

Ստրեկալովն* ամեն ինչ քննեց, կարգավորեց, հարթեց ու մի քանի օրում գործն ավարտեց— քարը կալվածատիրոջից վերցնել հատման համար ծախսված գումարի դիմաց. ի դեպ, եթե կալվածատերն ուզում է քարն իրեն պահել՝ հարյուր հազարը գանձել նրանից։ Կալվածատիրոջը հատուկ փոխհատուցում տալու հարկ չկա, քանի որ նրա կալվածքի արժեքը բարձրացել է հարստության նոր աղբյուրի հայտնաբերումով (սա հո մի chef-d'oeuvre[1] է), և, ի միջի այլոց, գյուղացիների որորված արտերի դիմաց, համաձայն Պետրոս I-ի կողմից հաստատված՝ հեղեղված մարգագետինների և ապօրինի արածեցված խոտհարքների վերաբերյալ օրենքի, տաղ դեսյատինին այսքան կոպեկ։

Այդ գործում խնդական պատժվողը հայրս եղավ։ Հարկ չկա ավելացնելու, որ այդ քարհատումը դատավարությունով, այնուամենայնիվ, վերագրվեց Վիտբերգին։

... Վիտբերգի աքսորումից մի երկու տարի հետո Վյատկայի վաճառականությունը որոշեց կառուցել նոր եկեղեցի։

Ճանկանալով ամենուրեք և ամեն բանի մեջ սպանել անկախության, անհատականության, ֆանտազիայի, պաղատության ոգին, Նիկոլայը հրատարակեց եկեղեցական ֆասադների՝ բարձրացված ամբողջ մի հատոր։ Ով էլ ուզեր եկեղեցի կառուցել՝ պետք է անպայման ընտրեր պետական նախագծերից մեկը։ Ասում են, թե հենց նա էլ արգելել էր գրել ռուսական օպերաներ, գանելով, որ սեփական գրասենյակի III բաժանմունքի ֆելիգել-ադյուտանտները* գրածներն անգամ բանի պետք չեն։ Բայց գա դեռ քիչ է։ Նա պիտի որ հրատարակեր բարձրագույնս վավերացված մոտիվների ժողովածու։

Վյատկայի վաճառականությունը, աչքի անցկացնելով «վավերացված» նախագծերը, քաջություն ունեցավ համաձայն չլինելու թագավորի ճաշակին։ Վյատկայի վաճառականության նախագիծը զարմացրեց Նիկոլային, նա հասատեց այդ նախագիծը և կարգադրեց պատվիրել նահանգապետությանը, որ կառուցման ծախսանակ շաղավաղեն ճարտարապետի մտահղացումը։

— Ո՞վ է արել այդ նախագիծը,— հարցրեց նա պետական քարտուղարին։

— Վիտբերգը, ձերդ մեծություն։

— Ո՞նց թե, այն Վիտբե՞րգը։

— Հենց նա, ձերդ մեծություն։

Եվ ահա Վիտբերգը թույլտվություն ստացավ վերադառնալ Մոսկվա կամ Պետերբուրգ,— երկնայի՜ն պարգև։ Մարդն արդարանալու թույլտվություն էր խնդրում՝ նրան մերժեցին, հաջող նախագիծ արեց՝ թագավորը կարգադրեց նրան ետ բերել, կարծես թե որևէ մեկը կասկածում էր նրա գեղարվեստական կարողություններին...

Պետերբուրգում, աղքատությունից մահվան դուռը հարած, նա կատարեց իր պատիվը պաշտպանելու վերջին փորձը։ Այն լրիվ ապարդյուն անցավ։ Վիտբերգը դիմեց իշխան Ա. Ն. Գոլիցինին, բայց իշխանը գործը կրկին հարուցելը հնարավոր չէր համարում և Վիտբերգին խորհուրդ տվեց աղերսագիր ուղարկել թագաժառանգին՝ դրամական նպաստի խնդրանքով։ Նա խոստանում էր ժուկովսկու հետ միջնորդություն անել և ակնկալում էր մի հազար ռուբլի արծաթով։

Վիտբերգը հրաժարվեց։

1846-ին, ձմեռնամուտին, ես վերջին անգամ եղա Պետերբուրգում ու տեսա Վիտբերգին։ Նա լրիվ կործանվում էր, նույնիսկ նրա նախկին զայրույթը իր թշնամիների դեմ, որն ինձ այնպես դուր էր գալիս, սկսել էր մարել. հույսեր նա այլևս չուներ, նա ոչինչ չէր անում իր վիճակից դուրս գալու համար։

---

1 գլուխգործոց (ֆրանս.)։

լու համար, միապաղաղ հուսահատությունը վերջ էր տալի նրան, գոյության բոլոր բաղադրյալները խարխլվել էին։ Նա սպասում էր մահվան։

Եթե այդ էր ուզում Նիկոլայ Պավլովիչը, ապա կարող է գոհ լինել։

Կենդանի՞ է, արդյոք, տառապյալը՝ չգիտեմ, բայց կասկածում եմ։

— Եթե ընտանիքս, երեխաներս չլինեին,— հրաժեշտ տալիս ասում էր նա ինձ,— ես դուրս կգրծնեի Ռուսաստանից ու կթափառեի աշխարհով մեկ. Վլադիմիրյան խաչս վզիս՝ ես հանգիստ անցորդներին կպարզեի ձեռքս, որը սեղմել էր Ալեքսանդր կայսրը, կպատմեի նրանց իմ նախագծի մասին և արվեստագետի ճակատագիրը Ռուսաստանում։

Քո ճակատագիրը, նահատա՛կ, խորհում էի ես, կիմանան Եվրոպայում, ես քեզ խոսք եմ տալիս։

Մոտիկությունը Վիտբերգի հետ մեծ թեթևացում էր ինձ համար Վյատկայում։ Պահվածքի լրջախոհ պարզությունն ու որոշ հանդիսավորությունը ինչ-որ հոգևոր բան էին հաղորդում նրան։ Նա շատ մաքուր բարքի տեր էր և ընդհանրապես ավելի շուտ ասկետիզմի հակումն ուներ, քան վայելքների, բայց խստաբարո լինելը ոչնչով չէր նվազեցնում նրա արտիստական խառնվածքի շռայլությունն ու հարստությունը։ Նա կարողանում էր իր միստիցիզմին տալ այնպիսի մի պլաստիկություն և նրբագեղ կոլորիտ, որ առարկությունը սառում էր շուրթերիդ, ափսոսդ գալիս էր վերլուծել ու տարրալուծել նրա ֆանտազիայի շողշողուն կերպարներն ու մշուշապատ պատկերները։

Վիտբերգի միստիցիզմը մասամբ նրա սկանդինավյան արյան մեջ էր. դա նույն այն սառնասրտորեն կշռադատված երազկոտությունն էր, որը մենք տեսնում ենք Շվեդենբորգի* մեջ, և որն, իր հերթին, նման է Նորվեգիայի սառցալեռների ու ձյան վրա ընկնող արևի ճառագայթների հրավառ արտացոլքին։

Վիտբերգի ազդեցությունը երերեց ինձ։ Բայց իմ ռեալիստական խառնվածքը, այնուամենայնիվ, հաղթող դուրս եկավ։ Ինձ վիճակված չէր երրորդ երկինք բարձրանալ, ես



կատարյալ երկրային մարդ եմ ծնվել։ Իմ ձեռքի շարժումից սեղաններ չեն պտտվում, իմ հայացքից մատանիներ չեն շարժվում։ Մտքի ցերեկային լույսը ֆանտազիայի լուսնային լուսավորումից ավելի հարազատ է ինձ։

Բայց հենց այն շրջանում, երբ ապրում էի Վիտբերգի հետ, ես ավելի, քան երբևէ, հակված էի միստիցիզմին։

Բաժանումը, աքսորը, իմ ստացած նամակների կրոնական հուզավառությունը, ողջ հոգիս ավելի ու ավելի ուժգնորեն համակող սերը և միաժամանակ զղջման ճնշող զգացումը,— այս բոլորը օգնում էին Վիտբերգին։

Ես հետո դեռ մի երկու տարի էլ Ավետարանից ու ժանգակից վերցված միստիկական-սոցիալական գաղափարների ազդեցության տակ էի, Պյեռ Լերուի* պես ֆրանսիական մտածողների նման։

Օգարյովն ինձնից ավելի առաջ ընկղմվեց միստիկական ալիքների մեջ։ 1833-ին նա սկսեց տեքստ գրել Գեբելի[1] «Կորուսյալ դրախտ» օրատորիայի համար։ «Կորուսյալ դրախտի» գաղափարի մեջ,— գրում էր ինձ Օգարյովը,— ամփոփված է մարդկության ողջ պատմությունը»։ Ուրեմն՝ այն ժամանակ նա էլ էր իդեալի փնտրվող դրախտը կորուսյալի տեղ ընդունում։

Ես 1833 թվականին սոցիալ-կրոնական ոգով պատկերներ գրեցի, որոնք այն ժամանակ դրամաներ էի համարում։ Մի մասի մեջ ներկայացնում էի հին աշխարհի պայքարը քրիստոնեության դեմ (այդտեղ Պողոս առաքյալը, մտնելով Հռոմ, հարություն էր տալիս մեռած պատանուն՝ նոր կյանքի համար), մյուսների մեջ՝ պաշտոնական եկեղեցու պայքարը կվակերների[2] դեմ և Ուիլյամ Պենի մեկնումը Ամերիկա, Նոր Աշխարհ[3]։

---

1 Գեբել— այդ շրջանի հայտնի կոմպոզիտոր (ծանոթ.՝ Ա. Ի. Գեր-ցենի)։

2 Կվակեր— եկեղեցական ծեսերը մերժող քրիստոնեական կրոնական աղանդի անդամ (Անգլիայում, ԱՄՆ-ում)։

3 Ես այդ պատկերները, չգիտեմ ինչու, որոշեցի գրել շափածո։ Հավանաբար մտածում էի, թե անհանգ հնգավանկ յամբով կարող է ամեն ոք գրել, եթե ինքը՝ Պոգոդինն* էլ էր այդպես գրում։ 1839 կամ 40 թվին ես երկու տեսարաններս տվի Բելինսկուն և հանգիստ սպասում էի

Գիտության միստիցիզմը իմ մեջ շուտով փոխարինվեց ավետարանական միստիցիզմով. բարեբախտաբար ես երկրորդից էլ ազատվեցի։

Բայց վերադառնանք մեր համեստ Ելինով ավանը, որը, չգիտեմ ինչու, թերևս ֆիննական հայրենասիրությունից, Եկատերինա II-ը վերանվանել էր Վյատկա։

Վյատկայի այդ խուլ աքսորավայրում, չինովնիկների այդ կեղտոտ միջավայրում, այդ տխուր հեռաստանում, ամենայն թանկագինից բաժանված, անպաշտպան հանձնված նահանգապետի իշխանությանը՝ ես անց եմ կացրել բազում հրաշալի, սուրբ պահեր, հանդիպել եմ բազում ջերմ սրտերի ու բարեկամ ձեռքերի։

Ո՞ւր եք, ի՞նչ եղաք, իմ ձյունածածկ ընկերներ։ Քսան տարի մենք չենք տեսնվել։ Երևի դուք էլ ծերացել եք ինձ պես, աղջիկներ եք մարդու տալիս, շշերով շամպայն ու ըմպանակով մրգաղի էլ չեք խմում։ Ո՞րդ է հարստացել, ո՞րդ՝ ենանկացել, ո՞վ է պաշտոնյա, ո՞վ՝ անդամալույծ։ Եվ գլխավորը՝ ապրո՞ւմ է, արդյոք, ձեր մեջ հիշողությունը մեր համարձակ զրույցների, չե՞ն մաքել, արդյոք, այն լարերը, որ այնպես ուժգին ցնցվում էին սիրուց ու ցասումից։

Ես մնացել եմ նույնը, դուք այդ գիտեք. երևի Թեմզայի ափերից ձեզ լուրեր հասնում են։ Երբեմն հիշում եմ ձեզ, միշտ էլ՝ սիրով. մոտս այն ժամանակվա նամակներ կան,

---

գովեստի։ Բայց Բելինսկին հաջորդ օրը գրանք ինձ ուղարկեց մի երկտողով, որի մեջ գրում էր. «Ներողություն, խնդրում եմ, իրար հետևից, առանց բանաստեղծների, այդ ժամանակ հաճույքով կկարդամ, իսկ հիմա ինձ անվերջ խանգարում է այն միտքը, թե սա ստեղծագործություն է»։

Բելինսկին սպանեց դրամատիկական պատկերների երկու փորձերս։ Գարտը հատուցմամբ է գնեցին։ 1841-ին Բելինսկին «Օտեչեստվենների զապիսկիում» զետեղեց գրականության մասին մի երկար զրույց։ «Հավանո՞ւմ ես իմ վերջին հոդվածը»,— հարցրեց նա ինձ en petit comité [նեղ շրջանում (ֆրանս.)] Դյուսոյի տանը ճաշելիս։ «Շա՞տ,— պատասխանեցի ես,— այն ամենը, ինչ դու ասում ես, հոյակապ է, բայց ասա, խնդրեմ, ինչպե՞ս կարողացար երկու ժամ խոսել այդ մարդու հետ, առաջին իսկ բառից պլիթ չընկնելով, որ նա հիմար է»։ «Ճի՞շտ որ,— ասաց Բելինսկին՝ ծիծաղից թուլանալով,— հա՛, տխպերս, սպանիչիր-թողիր, ախր կատարյա՞լ հիմար է» (ծանոթ.՝ Ա. Գ. Գրիգոնի)։



մի քանիսն ինձ համար շատ թանկ են, և ես սիրում եմ դրանք վերընթերցել։

«Ես չեմ ամաչում քեզ խոստովանել,— 1838-ի հունվարի 26-ին գրում էր ինձ մի պատանի,— որ հիմա շատ վատ եմ։ Օգնիր ինձ ի սեր այն կյանքի, որին կոչեցիր ինձ, օգնիր ինձ քո խորհրդով։ Ես ուզում եմ սովորել, հանձնարարիր ինձ գրքեր, հանձնարարիր ինչ կուզես, ես բոլոր ուժերս կդնեմ ծառայեցնեմ, տո՛ւր ինձ ընթացք. մեղքի տակ կընկնեմ՝ եթե վանես ինձ»։

«Ես քեզ օրհնում եմ,— գրում է ինձ մի ուրիշը՝ մեկնելուց անմիջապես հետո,— ինչպես հողագործն է օրհնում խամ հողին կյանք տվող անձրևը»։

Սին զգացմունքից չէր, որ ես դուրս գրեցի այս տողերը, այլ՝ որովհետև դրանք շատ թանկ են ինձ համար։ Հանուն պատանեկան այդ կանչերի ու պատանեկան սիրո, հանուն նրանց մեջ բորբոքված այդ կարոտի կարելի էր հաշտվել ինձ համար բանտարկության և երեք տարվա Վյատկայի կյանքիս հետ։

Շաբաթը երկու անգամ Վյատկա էր գալիս մոսկովյան փոստը. ի՞նչ հուզմունքով էի սպասում ես փոստի գրասենյակի առաջ՝ մինչև կդասավորեին նամակները, որտի ի՞նչ թրթիռով էի պոկում կնիքը և տնից եկած նամակի մեջ փնտրում բարակ թղթի վրա, զարմանալի մանր ու նրբագեղ տառերով գրված փոքրիկ նամակը։

Եվ այդ նամակը ես չէի կարդում փոստի գրասենյակում, այլ դանդաղ գնում էի տուն՝ հետաձգելով ընթերցման պահը, հաճույք վայելելով այն մեն մի մտքից, թե նամակը կա։

Այդ նամակները բոլորն էլ պահպանվել են։ Ես դրանք թողեցի Մոսկվայում։ Շա՛տ, շա՛տ կուզենայի նորից կարդալ ու նորից շոշափել...

Նամակներն ավելի՞ն են, քան հիշողությունները, դրանց վրա մնացել է իրադարձությունների արյունը, դրանք բուն անցյալն են, ինչպես որ եղել է, պահպանված ու հավերժ։

... Գե՞տք է, արդյոք, մի անգամ ևս հասու լինել, տեսնել, ծերությունից թոշոմած ձեռքերով դիպչել սեփական պապակի հանդերձներին...

## ԳԼՈՒԽ XVII

Թագաժառանգը Վյատկայում: Տյուֆյակի անկումը: Վլադիմիր փոխադրվելու: Խպրավնիկը նեստաֆենության ժամանակ:

Թագաժառանգը գալիս է Վյատկա՝: Թագաժառանգը շրջագայում է Ռուսաստանում, որպեսզի իրեն ցո՛ւյց տա Ռուսաստանին և ինքն էլ նրա՛ն տեսնի: Լուրն այս հուզել էր ամենքին, բայց բոլորից շատ, պարզ է՝ նահանգապետին: Նա իրարով անցավ ու մի շարք աներևակայելի հիմարություններ արավ. ճանապարհին ընկած գյուղերի մուժիկներին կարգադրեց տոնական կապա հագնել, կարգադրեց քաղաքներում ներկել ցանկապատներն ու նորոգել մայթերը: Օրլովում մի խեղճ այրի՝ փոքր մի տան տեր, քաղաքագլխին ասաց, որ ինքը մայթը նորոգելու փող չունի, քաղաքագլուխը հայտնեց նահանգապետին: Նահանգապետը կարգադրեց քանդել նրա տան հատակը (մայթերն այնտեղ փայտից են), իսկ եթե չհերիքի՝ նորոգումը կատարել պետության հաշվին և հետո փողը նրանից գանձել, թեկուզ դրա համար հարկ լիներ տունը աճուրդով վաճառել: Բանը վաճառքի չհասավ, բայց այրու հատակը քանդեցին:

Վյատկայից հիսուն վերստ հեռու կա մի վայր, որտեղ նովգորոդցիներին հայտնվել էր Խլինովի Նիկոլայի հրաշագործ սրբապատկերը: Երբ նովգորոդցիները բնակություն էին հաստատում Խլինովում (Վյատկայում), սրբապատկերը տեղափոխեցին, բայց այն անհետացավ ու կրկին հայտնվեց Մեծ գետի վրա՝ Վյատկայից հիսուն վերստ հեռու. նովգորոդցիները սրբապատկերը նորից տեղափոխեցին, բայց միաժամանակ ուխտ արեցին՝ եթե սրբապատկերը մնա, ամեն տարի հանդիսավոր երթով այն տանել Մեծ գետ, կարծեմ մայիսի 23-ին: Դա գլխավոր ամառային տոնն է Վյատկայի նահանգում: Մի օր առաջ սրբապատկերը շքեղ լաստանավով ճանապարհ է ընկնում գետով, նրա հետ էլ եպիսկոպոսն ու ողջ հոգևորականությունը՝ լրիվ զգեստավորությամբ: Ամեն տեսակի հարյուրավոր նավակներ, տախտականավեր, լաստեր՝ գյուղացիներով, գեղջկուհիներով, վոտյակներով, քաղքենիներով լեցուն՝ խայտաբղետ շարժվում են լողացող սրբապատկերի հետևից: Եվ բոլորի առջևից՝ կարմիր մահուդով պատած նահանգապետական լաստանավը: Վայրենի այն տեսարանը շատ լավն է: Մոտիկ ու հեռու գավառներից տասնյակ հազարավոր մարդիկ սպասում են Մեծ գետով եկող սրբապատկերին: Այդ թափորը ազմկոտ խմբերով թափառում է փոքր գյուղի շուրջը և, որ ամենից տարօրինակ է, չմկրտված վոտյակների ու չերեմիսների, նույնիսկ թաթարների բազմություններ գալիս են ազոթելու սրբապատկերին: Դրա համար էլ տոնը զուտ հեթանոսական տեսք ունի: Վանքի պատերից դուրս վոտյակները, ռուսները մատաղի ոչխար ու հորթ են բերում. հենց այդտեղ էլ մորթում են, աբեղան ազոթք է կարդում, օրհնում է միսը, որը մատուցում են ցանկապատի ներսից բացված հատուկ պատուհանի միջով: Այդ միսը կտոր-կտոր բաժանում են ժողովրդին: Հնում այն տալիս էին ձրի, հիմա վանականները մի քանի կոպեկ են վերցնում ամեն մի կտորի համար: Այնպես որ՝ ամբողջ մի հորթ նվիրաբերած մուժիկը պիտի մի երկու գրոշ ծախսի, որպեսզի մի կտոր ուտելու միս ստանա: Վանքի բակում նստած են աղքատների, հաշմանդամների, կույրերի, ամեն տեսակ խեղվածների բազմություններ, որոնք միասին երգում են «Ղազարոսը»: Ջահել տերտերորդիներն ու քաղքենիների տղաները թանգամանքներն առած նստում են եկեղեցու մոտի տապանաքարերին ու գոռում՝ «Հիշատակի թո՛ղթ գրեմ, հիշատակի թո՛ղթ գրեմ»: Կնիկներն ու աղջիկները շրջապատում են նրանց՝ անուններ տալով. տղաները, լոթիավարի ճոճոցնելով գրիչները, կրկնում են՝ «Մարյային, Մարյային, Ակուլինային, Ստեպանիդային, հայր Յոհանին, Մատրյոնային, հիմի քոնո՛նց, հիմի քոնո՛նց, մորքո՛ւր, մի տես՝ գրոշ ա տալիս, հինգից պակաս չի լինի, հլա քանի՛սն ունես՝ Յոհանին, Վասիլիսային, Իոնային, Մարյային, Եպրաքսիային, ծծկեր Կատերինային...»:

Եկեղեցում հրմշտոց է ու տարօրինակ նախապատվություն. մի կնիկ հարևանին մոմ է տալիս ճշգրիտ հանձնարարությամբ՝ վառել «հյուրի» համար, մյուսը մոմ է վառում «տիրոջ» համար: Վյատկայի վանականներն ու սարկավագները այդ ամբողջ հանդիսություններին միշտ հարբած են:

Նրանք ճանապարհին կանգ են առնում մեծ գյուղերում, և մուժիկները նրանց կուշտ-ու կուշտ պատվում են։

Ահա հենց այս ժողովրդական տոնը, որին գյուղացիները դարեր շարունակ վարժվել էին, նահանգապետն ուզում էր տեղափոխել, կամենալով զվարճացնել Թագաժառանգին, որը պիտի ժամաներ մայիսի 19-ին. ի՞նչ մի դժբախտություն է որ՝ եթե հյուր-Նիկոլայը երեք օր շուտ գա տանտիրոջ մոտ։ Դրա համար հարկավոր էր եպիսկոպոսի համաձայնությունը. բարեբախտաբար եպիսկոպոսը զիջող մարդ էր և ոչնչով չառարկեց մայիսի 23-ը 19-ին տոնելու նահանգապետական մտադրությանը։

Թագաժառանգին ընդունելու իր մի շարք հնարամիտ միջոցառումները նահանգապետը ներկայացրեց Թագավորին. տեսե՛ք, իբր, ինչպե՞ս ենք պատվում ձեր որդուն։ Թագավորը, կարդալով, կատաղեց ու ասաց ներքին գործոց մինիստրին. «Նահանգապետն ու եպիսկոպոսը ապուշներ են, տոնը թողնել նո՛ւյնը»։ Մինիստրը նահանգապետի հերն անիծեց, սինոդը՝ եպիսկոպոսի, և հյուր-Նիկոլայը հավատարիմ մնաց իր սովորությանը։

Պետերբուրգից արված տարբեր կարգադրությունների շարքում նաև հրամայված էր յուրաքանչյուր նահանգային քաղաքում պատրաստել երկրամասի ամեն տեսակի ստեղծագործությունների ու ձեռքի աշխատանքների ցուցահանդես և այն դասավորել ըստ բնության երեք թագավորությունների։ Ըստ թագավորությունների այդ բաժանումը շատ նեղը գցեց գրառնյակին և մասամբ նույնիսկ Տյուֆյանին։ Որպեսզի չսխալվի, նա որոշեց, չնայած իր անբարյացակամությանը, կանչել ինձ՝ խորհրդի։

— Ա՛յ, օրինակ, մեղրը,— ասում էր նա,— որի՞ն է պատկանում մեղրը։ Կամ ոսկեզոծ շրջանակը, ո՞նց որոշել, թե որի՞ն է վերաբերում։

Պատասխաններիցս տեսնելով, որ ես զարմանալի ճշգրիտ տեղեկություններ ունեմ բնության երեք թագավորություններից, նա ինձ առաջարկեց զբաղվել Թանգարանի դասավորությամբ։

Մինչ ես զբաղված էի փայտյա ամանեղենն ու վոտյակական զգեստները, մեղրն ու չուգունե վանդակները տեղադրելով, իսկ Տյուֆյանը շաքունակում էր կատաղի միջոցներ ձեռք առնել «նորին բարձրության» առավելագույն բավականության համար՝ սա բարեհաճեց ժամանել Օրլով, և Օրլովի քաղաքագլխի ձերբակալման որոտալից լուրը տարածվեց քաղաքով մեկ։ Տյուֆյանը գեղնեց և սկսեց մի տեսակ ծուռումուռ քայլել։

Թագաժառանգի Օրլով ժամանելուց հինգ օր առաջ քաղաքագլուխը Տյուֆյանին գրել էր, թե այրին, որի տան հատակը քանդել էին, աղմկում է և որ վաճառական այսինչը, Կարատաև և քաղաքում ճանաչված մի մարդ, պարծենում է, թե ամեն ինչ Թագաժառանգին կպատմի։ Տյուֆյանը սրտի հարցում վարվեց շատ խելացի. նա քաղաքագլխին կարգադրեց վաճառականին խելագարության կասկածի տակ առնել (Պետրովսկու օրինակը նրան դուր էր եկել) և քննության ներկայացնել Վյատկա. մինչ գործն ընթացքի մեջ կլիներ, Թագաժառանգը կմեկներ Վյատկայի նահանգից, դրանով էլ բանը կվերջանար։ Քաղաքագլուխն ամեն ինչ ի կատարածեց. վաճառականը Վյատկայի հիվանդանոցում էր։

Վերջապես Թագաժառանգը ժամանեց։ Ցոր բարևեց Տյուֆյանին, ներս չհրավիրեց նրան և անմիջապես բժիշկ Ենոխինին ուղարկեց քննելու ձերբակալված վաճառականին։ Ամեն բան նրան հայտնի էր։ Օրլովյան այրին իր խնդրագիրն էր տվել, մյուս վաճառականներն ու քաղքենիները ամեն ինչ պատմել էին։ Տյուֆյանն է՛լ ավելի այլայլվեց։ Բանը բուրդ էր։ Քաղաքագլուխն ուղղակի ասաց, թե ինքն ամեն ինչի վերաբերյալ գրավոր կարգադրություններ է ունեցել նահանգապետից։

Բժիշկ Ենոխինը հավատացնում էր, որ վաճառականը միանգամայն առողջ է։ Տյուֆյանը կորած էր։

Երեկոյան ժամը ութին Թագաժառանգը շքախմբով եկավ ցուցահանդես։ Տյուֆյանը առաջնորդում էր նրան՝ կցկտուր բացատրություններ տալով, խճճելով ու ինչ-որ ցար Տոխտամիշից՝ խոսելով, Ժուկովսկին ու Արոսենը, տեսնելով, որ գործը դուրս չի գալիս, գիմեցին ինձ՝ ցուցահանդեսն իրենց ներկայացնելու խնդրանքով։ Ես տարա նրանց։

Թագաժառանգի տեսքը չուներ իր հոր անձուկ խստություն, սառն, անտարբեր դատողություն։ Նրա դիմագծերն

ավելի շուտ ի ցույց էին հանում բարեհոգություն և թմրածություն։ Նա մոտ քսան տարեկան էր, բայց արդեն սկսում էր շաղանալ։

Այն մի քանի խոսքերը, որ նա ասաց ինձ, փաղաքշական էին, առանց Կոնստանտին Պավլովիչի խռպոտ, ընդհատուն երանգի, առանց լսողին ուշաթափության չափ վախեցնելու հայրական սովորության։

Երբ նա գնաց, Ժուկովսկին ու Արսենևն սկսեցին ինձ հարցափորձ անել, թե ինչպե՞ս եմ Վյատկա ընկել. նրանց զարմացրեց կարգին մարդու լեզուն՝ Վյատկայի նահանգական չինովնիկի բերանում։ Նրանք անմիջապես ինձ ասացին, որ կպատմեն թագաժառանգին իմ վիճակը, և իսկապես էլ՝ արեցին ինչ որ կարողացան։ Թագաժառանգը թագավորի առաջ միջնորդեց, որ ինձ թույլատրվի մեկնելու Պետերբուրգ։ Թագավորը պատասխանել էր, թե դա անարդարացի կլիներ մյուս աքսորականների վերաբերմամբ, բայց, հաշվի առնելով թագաժառանգի միջնորդությունը, կարգադրեց ինձ տեղափոխել Վլադիմիր. դա աշխարհագրական բարելավում էր՝ հեռավորությունը յոթ հարյուր վերստով պակասում էր։ Բայց այդ մասին՝ հետո։

Երեկոյան պարահանդես տեղի ունեցավ ազնվականական ակումբում։ Գործարաններից մեկից հատուկ կանչված երաժիշտները ժամանեցին թունդ հարբած. նահանգապետը կարգադրեց, որ նրանց պարահանդեսից մի օր առաջ փակի տակ դնեն և ոստիկանատնից պահակներով բերեն ուղիղ վերնասրահ, ոչ մեկին դուրս չթողնեն այստեղից մինչև պարահանդեսի վերջը։

Պարահանդեսը անհեթեթ, անշնորհք, չափազանց աղքատիկ ու չափազանց խայտաբղետ էր, ինչպես միշտ լինում է փոքրիկ քաղաքներում արտակարգ իրադարձությունների ժամանակ։ Ոստիկաններն իրար էին անցել, համազգեստ հագած չինովնիկները ծեփվել էին պատերին, տիկնայք խոնարվել էին թագաժառանգի շուրջը, ինչպես վայրենիներն են շրջապատում ճանապարհորդներին... Ի դեպ՝ տիկնանց մասին. մի փոքրիկ քաղաքում ցուցահանդեսից հետո «գուտյե»[1] էր

[1] Հյուրասիրություն (ֆրանս. goûter բառից)։



պատրաստվել։ Թագաժառանգը ոչ մի բան չէր կերել, բացի մի դեղձից, որի կորիզը նետել էր պատուհանի գոգը։ Հանկարծ չինովնիկների ամբոխից անջատվում է զեմստվոյական ատենակալի՝ հայտնի հարբեցողի՝ սպիտակով լեցուն բարձրահասակ կերպարանքը, համաչափ քայլքով մոտենում է պատուհանին, վերցնում կորիզն ու գրպանը դնում։

Պարահանդեսից կամ գուտյեից հետո ատենակալը մոտենում է նշանավոր տիկիններից մեկին և առաջարկում բարձրագույնս կրծոտված կորիզը. տիկինը հիացմունքի մեջ է։ Ապա նա մոտենում է մյուսին, հետո՝ երրորդին. բոլորն էլ խանդավառված են։

Ատենակալը գնել էր հինգ դեղձ, հանել կորիզներն ու երշանկացրել վեց տիկինների։ Ո՞ւմ մոտ էր իսկականը։ Բոլորն էլ կասկածում էին իրենց կորիզի ստուգությանը...

Տյուֆյակը, թագաժառանգի մեկնումից հետո, սրտի ցավով պատրաստվում էր փաշալիքը[1] փոխարինել սենատորի բազկաթոռով, բայց ավելի վատ բան ստացվեց։

Մի երեք շաբաթ անց փոստը Պետերբուրգից փաստաթղթեր բերեց «նահանգի կառավարչի» անունով։ Գրասենյակում բոլորն իրար անցան։ Նահանգային վարչության գործավարը վազ տվեց հայտնելու, որ հրամանագիր է ստացվել։ Գործերի կառավարիչը նետվեց Տյուֆյակի մոտ. Տյուֆյակն իրեն հիվանդ ձևացրեց և հիմնարկ չգնաց։

Մի ժամից իմացանք, որ նա հեռացված է՝ sans phrase[2]։

Ողջ քաղաքն ուրախ էր Տյուֆյակի անկման համար, նրա կառավարչությունը հեղձուցիչ, անմաքուր, բորբոսնած-գրասենյակային ինչ-որ բան ուներ իր մեջ, և, չնայած դրան, դարձյալ նողկալի էր տեսնել չինովնիկների ցնծությունը։

Այո՛, մի՛ էշ չէր, որ սմբակում էր այդ վիրավոր վարազին։ Մարդկային ստորությունն այդտեղ էլ պակաս չդրսևորվեց, ինչպես Նապոլեոնի անկման ժամանակ, չնայած տրամագծերի տարբերությանը։ Ամբողջ վերջին շրջանում ես նրա հետ բացահայտ գժտության մեջ էի, և նա անպայման ինձ կքշեր հեռավոր-խուլ մի կայ քաղաք, եթե իրե՛ն չքշեին։

[1] Վարչական շրջան, որը կառավարվում է փաշայի կողմից (փոխառ. թուրքերենից), այստեղ նկատի է առնված նահանգը։

[2] առանց այլևայլության (ֆրանս.)։

Ես հեռանում էի նրանից և նրա նկատմամբ իմ վերաբերմունքը փոխելու պատճառ չունեի։ Բայց մյուսները, որ երեկ գլխարկներն էին հանում՝ հեռվից նրա կառքը տեսնելիս, որ նրա աչք-ունքին էին նայում, որ ժպտում էին նրա շնիկին, ծխախոտ հրամցնում նրա սենեկապանին,— այժմ հաղիվ էին բարևում նրան և կոկորդ էին պատռում ընդդեմ այն անկարգությունների, որոնք նա անում էր նրանց հետ միասին։ Այս ամենը գալիս է հնից և այնպես մշտական կրկնվում է դարեդար ու ամենուրեք, որ մենք այդ սորությունը պիտի համարենք համամարդկային մի հատկանիշ և, համենայն դեպս, չզարմանանք դրա վրա։

Հայտնվեց նոր նահանգապետը։ Դա միանգամայն այլ տեսակի մարդ էր։ Բարձրահասակ, գեր, լմփոշ-ալարկոտ մի տղամարդ, մոտ հիսուն տարեկան, հաճելի ժպիտը դեմքին ու կիրթ շարժուձևով։ Նա արտահայտվում էր արտասովոր քերականական ճշգրտությամբ, բազմախոսք, մանրամասն, այնպիսի մի հստակությամբ, որը կարող էր իր ավելորդության մեջ մթագնել ամենապարզ նյութը։ Նա լիցեյի աշակերտ էր եղել, Պուշկինի ընկերը*, ծառայել էր գվարդիայում, գնում էր ֆրանսերեն նոր գրքեր, սիրում էր զրուցել կարևոր նյութերից և ժամանելու հաջորդ օրը ինձ տվեց Տոկվիլի գիրքը* ամերիկյան դեմոկրատիայի մասին։

Փոփոխությունը շատ էր կտրուկ։ Նույն սենյակները, նույն կահույքը, իսկ տունգուսական արտաքինով ու սիբիրյան սովորություններով թաթարական բասակի[1] փոխարեն՝ մի գոկտրինյոր[2], մի քիչ բծախնդիր, բայց, այնուամենայնիվ, կարգին մի մարդ։ Նոր նահանգապետը խելացի էր, սակայն նրա խելքը, մի տեսակ, լուսավորում, բայց չէր տաքացնում, ձմեռային պայծառ օրվա պես, որը հաճելի է, բայց ո՛չ պտղաբեր։ Ըստ որում նա ահավոր ֆորմալիստ էր, ո՛չ գրասենյակային ֆորմալիստ, այլ՝ ո՞նց ասեմ... նրա ֆորմալիզմը երկրորդ կարգի էր, բայց բոլոր մյուսների չափ տաղտկալի։

[1] Խանական իշխանության ներկայացուցիչ, թաթարական լծի ժամանակաշրջանի հարկահավաք։

[2] Իր որդեգրած տեսությանը համառորեն հետևող մարդ, նույնիսկ այն դեպքում, երբ այդ տեսությունը հակասում է իրականությանը



Քանի որ նոր նահանգապետն իրո՛ք ամուսնացած էր, նահանգապետի տունը կորցրեց իր գեր-ամուրիական ու բոլորում-կնային բնույթը։ Հասկանալի է, դա բոլոր խորհրդականներին շրջեց դեպի իրենց կանայք։ Ճաղատ ծերուկները չէին պարծենում «թռչնակների հաշվով» իրենց հաղթանակներով, այլ, ընդհակառակը, քնքշորեն էին արտահայտվում իրենց ամուսինների մասին՝ թորշոմած, չոր վախք դարձած կամ ճարպակալած այնպես, որ ծակեն՝ արյան չի գա։

Կորնիլովը, վյատկա ժամանելուց մի քանի տարի առաջ, ուղղակի սեմյոնովյան, թե՞ իզմայիլյան գնդապետի պաշտոնից ինչ-որ տեղ քաղաքացիական նահանգապետ էր նշանակվել։ Նա վոյենվոդության պաշտոնին եկավ գործից լրիվ անտեղյակ։ Սկզբում, ինչպես բոլոր նորեկները, սկսեց ամեն ինչ կարդալ։ Հանկարծ նրա ձեռքն ընկավ այդ նահանգից ուղարկված մի գրություն, որը մի քանի անգամ կարդաց, բայց չհասկացավ։

Կանչեց քարտուղարին և տվեց նրան կարդալու։ Քարտուղարը նույնպես չկարողացավ պարզ ներկայացնել գործը։

— Բա ի՞նչ կանեք այս գրությունը,— հարցրեց նրան Կորնիլովը,— եթե ես գրասենյակ հանձնեմ։

— Կուղարկեմ երրորդ սեղան, դա երրորդ սեղանի գծով է։

— Ուրեմն, երրորդ սեղանի պետը գիտե՞ ինչ պիտի անել։

— Ինչպե՞ս կարող է չիմանալ, ձերդ գերազանցություն։ Նա յոթերորդ տարին է վարում է ջրդ բաժինը։

— Կանչեցեք նրան ինձ մոտ։

Սեղանապետը եկավ։ Կորնիլովը, նրան տալով գրությունը, հարցրեց, թե ի՞նչ պիտի անել։ Սեղանապետը արագ աչքի անցկացրեց գործն ու զեկուցեց, թե հարկավոր է հարցում անել պետական ատյանին և խորհրդակցին գրավոր կարգադրել։

— Բայց ի՞նչ կարգադրել։

Սեղանապետը գժվարացավ պատասխանել և ի վերջո

խոստովանեց, թե դա խոսքով ասելը դժվար է, բայց գրելը հեշտ է։

— Ահա ձեզ աթոռ, խնդրեմ գրեք պատասխանը։

Սեղանապետը ձեռքն առավ գրիչը և, առանց ընդմիջելու, աշխույժ երկու թերթ լցրեց։

Նահանգապետը վերցրեց, կարդաց, մեկ կարդաց, երկու կարդաց՝ ոչինչ չկարողացավ հասկանալ։

— Ես տեսա,— պատմում էր նա ժպտալով,— որ դա իսկական այն գրության պատասխանն էր, և փառք տալով, ստորագրեցի։ Այդ գործի մասին այլևս ոչ մի հիշատակություն չեղավ. գրությունը լիովին բավարար էր։

Վլադիմիր փոխադրվելուս լուրը եկավ ծննդյան տոնի նախօրեին. արագ հավաքվեցի ու ճամփա ընկա։

Վյատկայի հասարակությանը ես հրաժեշտ տվի չերմորեն։ Այդ հեռավոր քաղաքում երկու-երեք անկեղծ բարեկամներ էի գտել երիտասարդ վաճառականների մեջ։

Բոլորն ուզում էին, իրար առաջ կտրելով, կարեկցանք ու բարեկամություն դրսևորել տարագրյալի հանդեպ։ Մի քանի սահնակ ուղեկցում էին ինձ մինչև առաջին կայանը, ինչքան էլ դիմադրեցի՝ սահնակիս մեջ դրին ամեն տեսակ սննդամթերքի ու գինիների ամբողջ մի բեռ։ Հաջորդ օրը ես հասա Ցարանսկ։

Ցարանսկից ճանապարհն անցնում է սոճու անվերջ անտառների միջով։ Գիշերները լուսընկա էին ու սաստիկ ցուրտ, փոքրիկ սահնակները սլանում էին նեղլիկ ճանապարհով։ Այդպիսի անտառներ ես այլևս երբեք չեմ տեսել, դրանք այդպես, անընդհատ, շարունակվում են մինչև Արխանգելսկ, երբեմն այդ անտառներով եղջերուները հասնում են Վյատկայի նահանգ։ Անտառը մեծ մասամբ շինափայտի է։ Արտակարգ ուղղաձիգ սոճիներն անցնում էին սահնակների մոտով, զինվորների պես, բարձր ու ձյունով պատված, ձյան տակից փուշ-փուշ ցցված էին նրանց սև տերևները, և քնում ես ու արթնանում, իսկ սոճիների գագաթներն անցնո՞ւմ են արագ քայլով, երբեմն թափ տալով իրենց վրայի ձյունը։ Ձիերը փոխում են մաքրազարդված փոքրիկ վայրերում. ծառերի ետևում՝ կորած մի տնակ, ձիերը կապված են սյանը, բոժոժները զրնգում են, երկուերեք չերեմիս տղաներ ասելնագործված շապիկներով քնաթաթախ դուրս կվազեն, վոտյակ կառապանը մի տեսակ խոպոտ ձայնով կվիճի ընկերոջ հետ, «հա՛յդա» կգոռա, բաղաձայն մի երգ կգլի... ու նորից՝ սոճի ու ձյուն, ու նորից՝ ձյուն ու սոճի...

Վյատկայի նահանգից դուրս գալու պահին ինձ վիճակվեց նաև հրաժեշտ տալ չինովնիկական աշխարհին, և այդ աշխարհը pour la clôture[1] ի հայտ եկավ իր ողջ փայլով։

Մենք կանգ առանք կայարանի մոտ, կառապանն սկսեց արձակել ձիերը. բարձրահասակ մի մուժիկ հայտնվեց գալթում և հարցրեց.

— Անցնողն ո՞վ է։

— Քո՞ ինչ գործն է։

— Գործն էն է, որ իսպրավնիկն է կարգադրել իմանալու, ես էլ զեմստվոյական դատարանի կատարածու եմ։

— Դե՛, ուրեմն գնա կայանատուն, իմ ուղեգիրն այնտեղ է։

Մուժիկը գնաց, մի րոպեից ետ եկավ ու կառապանին ասաց.

— Սրան ձի չտալ։

Դա արդեն չափից դուրս էր։ Ես թռա սահնակից ու գնացի խրճիթ։ Կիսահարբած իսպրավնիկը նստած էր նստարանին ու թելադրում էր կիսահարբած գրագրին։ Մյուս նստարանին, անկյունում, նստած, կամ ավելի ճիշտ՝ պառկած էր ձեռքն ու ոտքը շղթայված մի մարդ։ Դեմ ու դեն թափված էին մի քանի շշեր, բաժակներ, ծխախոտի մոխիր ու թղթերի կույտեր։

— Որտե՞ղ է իսպրավնիկը,— բարձրաձայն հարցրի ես, ներս մտնելով։

— Իսպրավնիկն էստեղ է,— պատասխանեց կիսահարբած լազարևը, որին ես տեսել էի Վյատկայում։ Եվ նա լկտի ու կոպիտ վրաս հառեց աչքերը ու հանկարծ նետվեց դեպի ինձ՝ գիրկը բացած։

Այստեղ հարկ է հիշել, որ Տյուֆյանին փոխելուց հետո չինովնիկները, տեսնելով իմ բավականին լավ հարաբերությունները

1 հրաժեշտին (ֆրանս.)։

թյունները եթե նահանգապետի հետ, սկսել էին ինձնից դա-
խենալ։

Ես ձեռքով պահեցի նրան և շատ լուրջ հարցրի.

— Ինչպե՞ս կարող էիք գուշ կարգադրել, որ ինձ ձի չտան։ Այդ ի՞նչ տխմարություն է՝ մայրուղո՞ւ վրա կանգնեցնել ուղևորներին։

— Կատակ արի, ներող եղեք, ո՞նց կարող եք նեզանալ։ Ձիե՞ր, հրամայիր ձիե՞ր տան, ի՞նչ ես անկվել, ավագա՛կ,— գոռաց նա կատաղածուի վրա։— Շնորհ արեք, մի բաժակ ռոմով թել խմեք։

— Խոնարհաբար շնորհակալ եմ։

— Տեսնես շամպայն չունե՞ք...— նա նետվեց գեպի շշերը. բոլորը դատարկ էին։

— Էս ի՞նչ եք անում էստեղ։

— Հետաքննություն է. էս կորիճը կացնով սպանել է հորն ու հարազատ քրոջը՝ վեճի ու խանդի պատճառով։

— Ոչ գուշ միասին քե՞ֆ եք անում։

Իսպրավնիկի լեզուն կապ ընկավ։ Ես նայեցի չերեմիսին. նա մոտ քսան տարեկան էր, ոչինչ գազանային չկար նեզլիկ, փայլատակող աչքերով, սև մազերով հույժ արևելյան նրա դեմքի վրա։

Այդ բոլորը միասին այնպես նոզկալի էր, որ ես նորից բակ գուրս եկա։ Իսպրավնիկը հետևիցս գուրս վազեց. նա մի ձեռքով բռնել էր թաժակը, մյուսով՝ ռոմի շիշը և համոզում էր, որ խմեմ։

Նրանից պրծնելու համար՝ խմեցի։ Նա խլեց ձեռքս ու ասաց.

— Մեզալո՞ր եմ, մեզավո՞ր եմ, էլի՛, ի՞նչ անեմ։ Բայց հուսով եմ, որ դուք այս մասին չեք ասի նոքին գիրազանցությանը, չեք խորտակի ազնիվ մարդուն։

Այդ ընթացքում իսպրավնիկը խլեց իմ ձեռքը և համբուրեց, տասն անգամ կրկնելով.

— Աստծու սիրուն, մի՛ խորտակեք ազնիվ մարդուն։

Ես զգվանքով ետ քաշեցի ձեռքս ու նրան ասացի.

— Դե, գնա՛, է՛, շա՛տ պետքս է, որ պատմեմ։

— Ի՞նչ անեմ հիմի ձեզ համար։

— Հետևեցեք, որ ձիերը շուտ լծեն։



— Շո՛ւտ, շո՛ւտ,— գոռաց նա,— հա՛յդա, հա՛յդա,— և ինքն սկսեց ինչ-որ թակեր ու փոկեր ձգտել լծատարքի վրա։

Այս դեպքը ամուր խրվեց հիշողությանս մեջ։ 1846 թվականին, երբ վերջին անգամ Պետերբուրգում էի, հարկ եղավ մտնել ներքին գործոց մինիստրի գրասենյակ՝ անձնագիր ձեռք բերելու հոգսով։ Մինչ խոսում էի սեղանապետի հետ, անցավ ինչ-որ պարան... բարեկամաբար սեղմելով գրասենյակի պաշտոնյաների ձեռքերը, ոգորմածաբար գլուխ տալով սեղանապետերին։ «Թո՛ւ, սատանան տանի,— մտածեցի ես,— մի՞թե սա նա է»։

— Ո՞վ է։

— Լազարևը՝ հատուկ հանձնարարությունների լիազորակը մինիստրի մոտ, մեծ էլ ուժ ունի։

— Նա Վյատկայի նահանգում իսպրավնիկ եղե՞լ է։

— Եղել է։

— Շնորհավորում իմ ձեզ, պարոնա՛յք, ինչ տարի առաջ նա իմ ձե՛ռքն էր համբուրում։

Գերազանցությունը՝ մարդիկ ընտրելու վարպե՞տ է։

## ԳԼՈՒԽ XVIII

### Վլադիմիրյան կամրջի սկիզբը

... Երբ ես դուրս եկա սահնակ նստելու կոզմոդեմյանսկում՝ սահնակը լծված էր ռուսական ձիով. երեք ձի մի գծի վրա, մեկը՝ կենտրոնում, երկուսը՝ կողքերից, կենտրոնինը՝ լծագեզովը, ուրախ պրնգացրեց բաժակները։

Գերմանում և Վյատկայում ձիերը լծում են շարքով, մեկը մյուսի ետևից կամ երկուսը իրար կողքի, իսկ երրորդը՝ առջևից։

Սիրտս թունդ առավ ուրախությունից՝ երբ ես տեսա մեր լծատարքը։

— Դե՛, մեզ ցույց տուր քո շնորհքը,— ասացի շահելին, որ լապտոզ-լապտոզ նստել էր կառապանի տեղը՝ քուրքը հագին, կաշե թաթմանոցներով, որոնց մեջ հագցրել էր կարզանում մատներն այնքան իրար բերել, որ ձեռքից վերցնի ատաղձիանոցը։

— Հարգանք-պատվո՞վ։ Դ!՝, աղավնյակնե՞ր։ Մենակ թե դու, աղա,— ասաց նա, մեկեն դառնալով ինձ,— քեզ պինդ պահի, էստեղ դիք է, ձիերին թողնելու եմ։

Դա գահավեժ վայրէջք էր դեպի Վոլգա, որի վրայով անցնում էր ձմեռային լայն ճանապարհը։

Իրոք, նա ձիերին թողեց։ Սահնակը ոչ թե գնում, այլ մի տեսակ ամբողջ կարկ, ու սարքով աջ ու ձախ էր թռչկոտում, ձիերը սլանում էին լեռնիվայր, կառապանը անչափ գոհ էր, ասենք, ես ինքս էլ, մեղավորս, նույնն էի զգում, ռուսական բնավորություն է։

Այդպես էի թեակոխում ես փոստատար սահնակով 1838 թվականը՝ իմ կյանքի լավագույն, ամենալուսավոր տարին։ Ձեզ կպատմեմ այդ տարվա հետ մեր առաջին հանդիպումը։

Նիժնիից ութսուն վերստ անց մենք, այսինքն՝ ես ու իմ ծառա Մատվեյը, մտանք կայարանապետի կացարանը՝ տաքանալու։ Բակում սաստիկ սառնամանիք էր ու հետն էլ քամի։ Կայարանապետը, նիհար, հիվանդոտ ու խղճուկ արտաքինով մի մարդ, գրանցում էր ճանապարհաթուղթը՝ ինքն իրեն թելադրելով ամեն մի տառը և, այնուամենայնիվ, սխալվելով։ Ես հանեցի մուշտակս և քայլում էի սենյակում մորթե մեծ ճտքակոշիկներով, Մատվեյը տաքանում էր շիկացած վառարանի առաջ, կայարանապետը մոթմոթում էր, փայտե ժամացույցը չխկչխկում էր փշրված ու թույլ ձայնով...

— Տեսեք,— ասաց ինձ Մատվեյը,— շուտով ժամը տասներկուսն է, ախր Նոր տարի է գալիս։ Մի բան բերեմ այն պաշարից, որ Վյատկայում հետներս դրին,— ավելացրեց նա կիսահարցական նայելով ինձ։ Եվ, պատասխանի չսպասելով, սկսեց հանել շշերն ու ինչ-որ փաթեթ։

Մատվեյը, որի մասին հետո դեռ պատմելու եմ, ավելին էր, քան ծառան. նա իմ բարեկամն էր, փոքր եղբայրը։ Մոսկովյան մի քաղքենի էր նա և կազմարարական արհեստ սովորելու համար աշակերտած լինելով Զոնենբերգին,— որի հետ նույնպես ծանոթանալու ենք և որը, ի միջի այլոց, առանձնապես չէր տիրապետում այդ գործին,— տեղափոխվել էր ինձ մոտ։

Ես գիտեի, որ իմ մերժումը կվշտացներ Մատվեյին,



ասենք, ինքս էլ, ըստ էության, դեմ չէի փոստային տոնակատարությանը... Նոր տարին յուրովի մի կայարան է։

Մատվեյը խոզապուխտ ու շամպայն բերեց։

Շամպայնը սառցակալել էր, խոզապուխտը պետք էր կտրել. պսպղում էր՝ սառցի կտորտանքներից, բայց à la guerre comme à la guerre[1]:

«Շնորհավո՞ր Նոր տարի, նո՞ր երջանկություն...». իսկապես որ՝ նո՞ր երջանկություն։ Մի՞թե ես ետդարձի ճամփին չէիս։ Ամեն մի ժամն ինձ մոտեցնում էր Մոսկվային. սիրտս լի էր հույսերով։

Սառած շամպայնը շատ էլ դուր չեկավ կայարանապետին, ես նրա գինու մեջ կես բաժակ ռոմ ավելացրի։ Այդ նոր half-and-half[2]-ը մեծ հաջողություն ունեցավ։

Կառապանը, որին նույնպես հրավիրել էի, ավելի արմատական էր. նա փրփրապատ գինու բաժակի մեջ պղպեղ լցրեց, գդալով խառնեց, մի շնչով խմեց, ցավոտ շունչ քաշեց ու թեթև տնքոցով ավելացրեց՝ «Լա՜վ վառեց»։

Կայարանապետն ինքը ինձ սահնակ նստեցրեց և այնպես եռանդով էր իրար անցել, որ վառվող մոմը խոտի մեջ գցեց և հետո չէր կարողանում գտնել։ Նա լավ տրամադրության մեջ էր և կրկնում էր.

— Ահա ի՛մ էլ Նոր տարին շնորհավոր արիք... Ա՜յ շնորհավորանք։

«Վառված» կառապանը քշեց ձիերը...

Հաջորդ օրը, Խրեկոյան մոտ ժամը ութին, հասա Վլադիմիր և իջևանեցի հյուրանոցում, որը շատ դիպուկ նկարագրված է «Տարանտասի*» մեջ՝ իր հավերով, «սրընթացությամբ», հաց-պատիշեով[3] ու բորդոյի տեղ հրամցվող քացախով։

— Ձեզ մի մարդ էր հարցնում էսօր առավոտ. նա երևի սպասում է պանդոկում,— ճանապարհաթղթի մեջ անունս կարդալով, ասաց ինձ սպասավորը՝ այնպիսի լոթի սանրվածքով ու բուռն քունքամազով, որով առաջ աչքի էին

1 Թե կռիվ է՝ կռիվ (ֆրանս.)։
2 երկու խմիչքների հավասար խառնուրդ (անգլ.)։
3 կարկանդակով (ֆրանս. pâtisserie-ից)։

զարնում միայն ոուս սպասավորները, իսկ այժմ՝ սպասավորները և Լյուդովիկոս-Նապոլեոնը։

Ես չէի կարողանում հասկանալ, թե դա ո՞վ կարող էր լինել։

— Ահա և ինքը,— ասաց սպասավորը՝ մի կողմ քաշվելով։

Բայց նախ երևաց ոչ թե մարդը, այլ վիթխարի մեծությամբ մի սկուտեղ, որի վրա բազում բարիքներ կային՝ կուլիչ ու օղաբլիթ, նարինջ ու խնձոր, ձու, նուշ, շամիչ... իսկ սկուտեղի եզևից նշմարվում էին հորս վլադիմիրյան գյուղի տանուտերի ճերմակ մորուքն ու կապույտ աչքերը։

— Գավրիլո Սեմյո՛նիչ,— գոչեցի ես ու նետվեցի գրկելու նրան։

Դա առաջին մարդն էր Մերոնցից, իմ նախկին կյանքից, որին հանդիպեցի բանտից ու սխտորից հետո։ Ես չէի կարողանում կշտանալ խելացի ծերուկին նայելուց ու հետը խոսելուց։ Նա ինձ համար Մոսկվայի, մեր տան, ընկերներիս մերձավորության ներկայացուցիչն էր, նա երեք օր առաջ բոլորին տեսել է, բոլորից ողջույն է բերել... Ուրեմն՝ այնքա՛ն էլ հեռու չէ։

Նահանգապետ Կուրուտան, խելացի հույնը, շատ լավ էր ճանաչում մարդկանց ու վազուց էր արդեն անտարբեր գարձել բարու և չարի հանդեպ։ Իմ վիճակը նա հասկացավ անմիջապես և ինձ նեղելու ամենափոքր փորձ իսկ չարեց։ Գրանենյակի մասին խոսք անգամ չեղավ, նա ինձ հանձնարարեց գիմնազիայի ուսուցիչներից մեկի հետ վարել «Նահանգային տեղեկագիրը». այդ էր իմ ողջ ծառայությունը։

Այդ գործն ինձ ծանոթ էր. ես արդեն Վյատկայում կարգի էի գցել «Տեղեկագրի» ոչ պաշտոնական մասը և այնտեղ զետեղել էի փոքրիկ մի հոդված, որի պատճառով քիչ էր մնացել փորձանքի գար իմ հաշորդը։ Նկարագրելով «Մեծ գետի» տոնախմբությունը, ես ասել էի, որ Խլինովի Նիկոլային զոհաբերված ոչխարը հնում բաժանում էին աղքատներին, իսկ այժմ ծախում են։ Եպիսկոպոսը կա-



տաղեց, և նահանգապետը հաղիվ համոզեց նրան, որ ձեռք չտրվի գործին։

«Նահանգային տեղեկագիրը» հիմնվել էր 1837 թվին։ Լույսն ու համբույթն երկրում հրապարակայնության վերջնելու ինքնատիպ միջոցը ծագել էր ներքին գործոց մինիստր Բլուդովի գլխում։ Բլուդովը հայտնի էր որպես Կարամզինի պատմության շարունակող, որը հետագայում ոչ մի տող չէր գրել, հայտնի էր որպես հեղինակ դեկտեմբերի 14-ից հետո «Հետաքննչական հանձնաժողովի զեկուցագրի», որն ավելի լավ կլիներ իսկի չգրվեր. նա պատկանում էր Ալեքսանդրի թագավորության վերջում երևան եկած պետական դոկտրինյորների թվին։ Սրանք խելացի, կրթված, ազնիվ մարդիկ էին, ծերացած ու ծառայության վերին սահմանին հասած «արզամասյան սագեր»*. կարողանում էին գրել ռուսերեն, հայրենասերներ էին և այնքան չանդրադարձել ռուսերեն, հայրենասերներ էին և այնքան չանդրադարձել ռուսերեն, հայրենական պատմությամբ, որ ժամանակ չունեին լրջորեն զբաղվելու արդիականությամբ։ Նրանք բոլորն էլ հարգում էին Ն. Մ. Կարամզինի անմոռաց հիշատակը, սիրում էին Ժուկովսկոն, անգիր գիտեին Կոքլոլին և գնում էին Մոսկվա՝ զրուցելու Ի. Ի. Դմիտրիևի հետ Սադովայա փողոցի նրա տանը, ուր ես էլ էի, հաճախում ուսանող ժամանակս՝ զինված ռոմանտիկ նախապաշարումներով, Ն. Պոլևոյի հետ անձնական ծանոթությամբ և անբավականության թաքուն զգացումով այն բանի համար, որ Դմիտրիևը, լինելով պոետ, արդարադատության մինիստր է, նրանցից շատ բանի հույս ունեին, նրանք ոչինչ չարեցին, ինչպես առհասարակ բոլոր երկրների դոկտրինյորները։ Գուցե նրանց հաջողվեր ավելի կայուն հետք թողնել Ալեքսանդրի օրոք, բայց Ալեքսանդրը մեռավ, և նրանք այդպես էլ մնացին որևէ օգտակար բան անելու իրենց ցանկությամբ ճանաչած։

Մոնակոյում տիրակալ իշխաններից մեկի տապանաքարին գրված է՝ «Աստ հանգչի Ֆլորիստան այսինքը. նա ուզում էր բարիք անել իր հպատակներին»[1], Մեր դոկտրինյորները նույնպես ուզում էին բարիք անել եթե ոչ իրենց, ապա նի-

[1] Il a voulu le bien de ses su ets (ծանոթ՝ Ա. Ի. Գերցենի)։

կոլայ Պավլովիչի հպատակներին, բայց հաշիվը կազմված էր առանց տիրոջ։ Չգիտեմ Ֆլորեստանին ո՞վ էր խանգարել, բայց նրանց խանգարեց մեր Ֆլորեստանը։ Նրանց վիճակվեց առնչվել Ռուսաստանի զոլոր վատթարացումներին և սահմանափակվել անհարկավոր նորամուծություններով՝ ձևերի, անվանումների փոփոխումներով։ Ամեն մի պետ մեզանում իր գերագույն պարտավորությունն է համարում՝ մեկ էլ տեսար ներկայացնել ինչ-որ նախագիծ, փոփոխություն, սովորաբար՝ դեպի ավելի վատը, իսկ երբեմն՝ պարզապես փուչ։ Նահանգապետի գրասենյակի քարտուղարին, օրինակ. հարկ համարեցին անվանել գործերի կառավարիչ, մինչդեռ նահանգային վարչության քարտուղարին թողին առանց ռուսերեն թարգմանելու։ Ես հիշում եմ, որ արդարադատության մինիստրը նախագիծ էր ներկայացրել քաղաքացիական պաշտոնյաների համազգեստի մեջ անհրաժեշտ փոփոխություններ մտցնելու վերաբերյալ։ Այդ նախագիծն սկսվում էր մի տեսակ վեհ ու հանդիսավոր՝ «Առանձնապես ուշադրություն դարձնելով քաղաքացիական գերատեսչության որոշ համազգեստների կար ու ձևի միասնականության պակասավորությանը և հիմք ընդունելով...» և այլն։

Համակված նախագծային միևնույն ցամով՝ ներքին գործոց մինիստրը զեմստվոյական ատենակալներին փոխարինեց գավառամասային պրիստավներով։ Ատենակալներն ապրում էին քաղաքներում և այցելում էին գյուղերը։ Գավառամասային պրիստավները երբեմն գալիս են քաղաք, բայց մշտապես ապրում են գյուղում։ Բոլոր գյուղացիները, այսպիսով, հանձնվել էին ոստիկանության հսկողությանը, և դա արվում էր՝ լավ գիտենալով հանդերձ, թե ինչ դիշատիչ, գիշակեր, այլասերված արարած է մեր ոստիկանական չինովնիկը։ Բլուդովը ոստիկանին մտցրեց գյուղացու զբաղմունքի ու կարողության գաղտնիքների, ընտանեկան կյանքի, համայնքի գործերի մեջ և այդ միջոցով կապավ ժողովրդական կյանքի վերջին ապաստանին։ Բարեբախտաբար գյուղերը մեզանում շատ շատ են, իսկ պրիստավ մի գավառում երկուսն են։

Գրեթե նույն այդ ժամանակ նույն այդ Բլուդովը հորինեց



«ընհանրային տեղեկագիրը»։ Մեզանում կառավարությունը, արհամարհելով ամեն մի գրագիտություն, մեծ հավակնություններ ունի գրականության նկատմամբ, և այն դեպքում, երբ, օրինակ, Անգլիայում բոլորովին չկան պետական հանդեսներ, մեզ մոտ յուրաքանչյուր մինիստրություն հրատարակում է իր հանդեսը, ակադեմիան ու համալսարանները՝ իրենցը։ Մեզանում կան լեռնային ու աղահանքային, ֆրանսիական ու գերմանական, ծովային ու ցամաքային հանդեսներ։ Այս բոլորը հրատարակվում է պետության հաշվին, հոդվածների պատվերները մինիստրություններում կատարվում են այնպես, ինչպես վառելափայտի ու մոմի կապալները, միայն թե առանց սակարկության. ընդհանուր հաշվետվությունների, մտացածին թվերի ու ֆանտաստիկ եզրակացությունների պակաս չի լինում։ Տիրելով բոլոր մոնոպոլիաներին, կառավարությունն իր ձեռքն առավ նաև շաղակրատության մոնոպոլիան, նա կարգադրեց, որ բոլորը լռեն և սկսեց անդադար խոսել։ Շարունակելով այս կարգը, Բլուդովը հրամայեց, որ ամեն մի նահանգային վարչություն հրատարակի իր «Տեղեկագիրը» և որ ամեն մի «Տեղեկագիր» ունենա իր ոչ պաշտոնական բաժինը՝ պատմական, գրական և այլ հոդվածների համար։

Ասածն արած է, և ահա հիսուն նահանգային վարչություններ գլուխ են ջարդում ոչ պաշտոնական բաժնի վրա։ Ճեմարանական քահանաները, բժշկության դոկտորները, գիմնազիայի դասատուները, բոլորը, ովքեր կասկածվում են ուսյալ լինելու և «Ъ» տառը ճիշտ գործածելու մեջ, թարկվում են բռնագրավման։ Նրանք մտմտում են, վերընթերցում «Բիբլիոտեկա դլյա չտենիան» ու «Օտեչեստվեննիե զապիսկին», վախվորում են, յուրացման փորձ կատարում և, վերջապես, հոդվածիկներ գրում։

Իր անունը մամուլում տեսնելը գրքի դարաշրջանով աղճատված մարդու ամենաուժեղ արհեստական կրքերից մեկն է։ Բայց, այդուհանդերձ, հեշտ բան չէ սիրտ անել իր ստեղծագործությունները հրապարակավ ի ցույց դնելու՝ առանց հատուկ առիթի։ Մարդիկ, ովքեր չէին հանդգնի մտածել իրենց հոդվածները «Մոսկովսկիե վեդոմոստիում», պետերբուրգյան հանդեսներում տպագրելու մասին, սկսեցին

տպագրվել իրենց տանը։ Մինչդեռ օրգան ունենալու կոր-
ծանարար սովորությունը՝ հրապարակայնության սովորությունը՝
արմատավորվում էր։ Ասենք, լրիվ պատրաստ գործիք ունե-
նալն էլ վատ չի։ Տպագրական դազգահը նույնպես ոսկոր
չունի։

Խմբագրատան իմ գործընկերը մեր համալսարանի թեկ-
նածու էր՝ իմ բաժանմունքից։ Նա այնպես ցավալիորեն
ավարտեց իր կյանքը, որ խիղճս չի տանում ժպիտով խո-
սելու նրա մասին, բայց, այնուամենայնիվ, մինչև մահը
նա շատ ծիծաղելի էր։ Ամենևին էլ ոչ հիմար՝ նա արտա-
կարգ անճարակ էր ու դանդաղոշ։ Դժվար էր գտնել ոչ միայն
այդպիսի լիակատար, այլև այդպիսի խոշոր, այսինքն՝ այդ-
պիսի լողլող մի անճոռնիություն։ Նրա դեմքը սովորակա-
նից մեկուկես անգամ մեծ էր ու մի տեսակ խորդուբորդ,
հսկայական ձկան բերանը բացվում էր մինչև ականջները,
շեկ թարթիչները ոչ թե ստվերում, այլ ավելի շուտ լուսա-
վորում էին բաց մոխրագույն աչքերը, կոշտ մազերը ժլա-
տորեն ծածկում էին նրա գանգը, ըստ որում՝ նա մի գլխով
բարձր էր ինձնից, կուզիկացած ու խիստ թափթփված։

Նույնիսկ ազգանունն էր այնպիսին, որ դրա համար ժա-
մապահը Վլադիմիրում նրան բանտարկեց պահակախցում։
Ուշ երեկոյան, շինելով փաթաթված, անցնում էր նա նա-
հանգապետարանի մոտով, հեռադիտակը ձեռքին կանգ
առավ ու նշան բռնեց ինչ-որ մոլորակի. այդ բանը անհան-
գստացրեց զինվորին, որը, հավանաբար, աստղերը հա-
մարում էր պետական սեփականություն։

— Ո՞վ է գալիս,— գոռում է նա անշարժ կանգնած դի-
տորդին։

— Ներբարան[1],— պատասխանում է իմ բարեկամը թավ
ձայնով, չշարժվելով տեղից։

— Դուք ինձ ձեռ մի առեք,— ասում է վիրավորված ժա-
մապահը,— ես ծառայության մեջ եմ։

— Դե՛, ասում եմ, չէ՞, որ ես Ներբարան եմ։

Զինվորը չհամբերեց ու գանգը քաշեց. եկավ ենթա-
սպան, ժամապահը աստղագետին հանձնեց նրան, որ պա-

[1] Ռուսերեն բառախաղ է ստացվում. Небаба—не баба (կնիկ չեմ)։



հակնոց տանի՝ այնտեղ կպարզեն կնի՞կ ես, թե չէ։ Նա
անպայման կնստեր մինչև առավոտ, եթե հերթապահ սպան
չճանաչեր։

Մի անգամ Ներբարան առավոտյան մոտս եկավ հայտնե-
լու, որ մի քանի օրով Մոսկվա է գնում. ըստ որում, նա մի
տեսակ շարաճճի-գործովալից ժպտում էր։

— Ես,— ասաց կմկմալով,— ես մենա՛կ չեմ վերա-
դառնա։

— Այսինքն՝ ո՞նց թե...

— Հա՛, օրինական ամուսնանում եմ,— ամոթխած պա-
տասխանեց նա։

Ինձ ապշեցրեց հերոսական խիզախությունն այն կնոջ,
որը վճռել էր ամուսնանալ այդ բարի, բայց չափազանց
տգեղ մարդու հետ։ Սակայն երբ երկու-երեք շաբաթ անց
նրա տանը տեսա եթե ոչ գեղեցիկ, ապա սիրունիկ, աշխույժ
աչքերով տասնութամյա աղջկան՝ Ներբարան իմ աչքում
դարձավ հերոս։

Մեկուկես ամսից ես նկատեցի, որ իմ Քվազիմոդոյի
կյանքը լավ չէր, նա ընկճված էր վշտից, վատ էր սրբա-
գրում, չէր կարողանում ավարտել «շվող թռչունների» մա-
սին իր հոդվածը և մռայլ էր ու ցրված. երբեմն ինձ թվում
էր, թե նրա աչքերը թաց են արտասուքից։ Դա երկար
չտևեց։ Մի անգամ, Ոսկե դարպասներով տուն դառնա-
լիս, տեսա դեպի եկեղեցու գավիթ վազող տղաների ու խա-
նութպանների. ոստիկաններն իրար էին անցել։ Ես էլ գնացի։

Ներբարայի դիակն ընկած էր եկեղեցու պատի տակ, կող-
քին՝ հրացանը։ Նա ինքնասպան էր եղել իր տան լուսա-
մուտների դիմաց, ոտքին մնացել էր կապած թոկը, որով
քաշել էր ձգանը։ Բուժվարչության տեսուչը շրջապատողնե-
րին հանգիստ պատմում էր, որ հանգուցյալը խոկի չի տանջ-
վել. ոստիկանները պատրաստվում էին նրան քաղաքամաս
տանել։

... Բնությունը որքա՜ն դաժան է մարդկանց նկատմամբ։
Ինչե՛ր, ինչե՛ր է զգացել սիրուն այս տղան, նախքան
նա կհամարձակվեր իր թելի կտորով կանգնեցնել այն ճո-
ճանակը, որը սոսկ միայն վիրավորանքներով, դժբախտու-
թյուններով էր հաշվում նրա ժամանակը։ Եվ ինչո՞ւ. հա՞յրն

է գեղձախտավոր եղել կամ մայրը՝ լիմֆատի՞կ։ Այդպես է։ Բայց ի՞նչ իրավունքով ենք մենք արդարություն, հաշիվ, հիմնավորում պահանջում։ Ո՞ւմից։ Կյանքի խելահեղ փոթորկի՞ց...

Այդ ժամանակ էլ սկսվեց կյանքիս նոր շրջանը... մաքուր, ջինջ, ջահել, լուրջ, ճգնավորական ու սիրով տոգորված շրջանը։

Դա նյութն է կազմում գրքիս մյուս մասի։

# ՄԱՍՆ ԵՐՐՈՐԴ

## ԿԼՅԱԶՄԱՅԻ ՎԼԱԴԻՄԻՐԸ

(1838—1839)

Ինձանից լսպասեք երկար պատմություններ այն ժամանակվա ներաշխարհիս մասին... Սոսկալի իրադարձությունները, ամեն մի ցավ, այնուամենայնիվ, ավելի հեշտ են հանձնվում թղթին, քան միանգամայն լուսավոր ու անամպ հիշողությունները... Մի՞թե կարելի է երջանկությունը պատմել։

Պակասը ինքնե՛րդ լրացրեք, սրտո՛վ հասու եղեք, իսկ ես կխոսեմ դրսի իրադրությունից, հազվադեպ, շատ հազվադեպ դառնալով նվիրական գաղտնիքներիս՝ մի ակնարկով կամ մի բառով*։

(«Եղելություն և խոսեր»)

### ԳԼՈՒԽ XIX

**Իշխանուհին և իշխանագուստրը**

Սրբ հինգշաբթի էի և շարություն շատ էի անում, վերա Արտամոնովնան ասում էր. «Լա՜վ, շա՜տ լավ, ես էլ ամեն բան կպատմեմ իշխանուհուն՝ հենց որ գա»։ Այդ պառնալիքից հետո ես անմիջապես հանդարտվում էի ու աղաչում, որ չգանգատվի։

Իշխանուհի Մարիա Ալեքսեևնա Խովանսկայան, հորս հարազատ քույրը, մռայլ մի պառավ էր՝ թանձրամարմին, վեհաերպ, խալավոր թշով, կեղծ խոպոպիկները շորագլխարկի տակ. նա խոսում էր աչքերը կկոցելով և մինչև կյանքի վերջը, այսինքն՝ մինչև ութսունը, գործածում էր մի քիչ կարմիր ու մի քիչ էլ ճերմակ շպար։ Ամեն անգամ, երբ

երևում էի նրա աչքին՝ նեղում էր ինձ. նրա քարոզները, ինքնինքոցները վերջ չունեին. նա ինձ կշտամբում էր ամեն ինչի՝ ճմռթված օձիքի, հագուստիս կեղտի, ձեռքը համբուրելիս սխալ մոտենալու համար ստիպում էր, որ նորից մոտենամ։ Քարոզն ավարտելուց հետո նա երբեմն, մատների ծայրով քթախոտ վերցնելով ոսկե փոքրիկ տուփից, հորս ասում էր. «Լավ կլիներ, սիրելի՛ս, որ քո այս երեսառաջին տայիր ե՛ս դաստիարակի, ձեռքիս տակ-մի ամսում մեռաքս դառնար»։ Ես գիտեի, որ ինձ չեն տա, բայց, այնուամենայնիվ, այդ խոսքերից սարսուռ էր իջնում վրաս։

Տարիների հետ վախն անցավ, բայց ես իշխանուհու տունը չսիրեցի. այնտեղ չէի կարողանում ազատ շունչ քաշել, նրա մոտ վատ էի զգում և, բռնված նապաստակի նման, դես ու դեն էի նայում՝ փախուստ տալու համար։

Իշխանուհու տունը ամենևին նման չէր հորս կամ Սենատորի տանը։ Դա հին, ուղղափառ-ռուսական տուն էր. մի տուն, որտեղ պաս էին պահում, գնում արավոտյան ժամերգության, ջրօրհնեքի նախօրյակին խաչակնքում դռներին, բարեկենդանին թխում էին զարմանալի բլիթներ, ուտում խոզի խաշած միս՝ ծովաբողկով, ճաշում ճիշտ ժամը երկուսին և ընթրում իններին։ Արևմուտքի վարակը, որ դիպել էր եղբայրներին ու մի քիչ շեղել նրանց հայրենական հունից, իշխանուհու ապրելակերպին ձեռք չէր տվել։ Նա, ընդհակառակը, դժգոհությամբ նշում էր, թե ինչպես էին «Վանլուշան ու Լյովուշան» փչացել այդ Ֆրանսիայում։

Իշխանուհին ապրում էր իր հորաքրոջ՝ ուրբանամյա կույս իշխանադուստր Մեշչերսկայայի տան թևաշնքում։

Իշխանադուստրը ազգականների բազմաթիվ քանակության յոթ պորտերը իրար բերող կենդանի և գրեթե միակ կապն էր։ Մեծ տոներին նրա շուրջն էին խմբվում բոլոր մերձավորները. նա հաշտեցնում էր գժտվածներին, մոռացնում հեռացածներին, նրան բոլորը հարգում էին, և նա աբժանի էր դրան։ Նրա մահով ազգական ընտանիքները բաժան-բաժան եղան, կորցրին իրենց առանցքակետը, մոռացան միմյանց։

Նա ավարտին հասցրեց հորս ու նրա եղբայրների դաստիարակությունը. նրանց ծնողների մահից հետո, մինչև չափահասությունը, իշխանադուստրն է կառավարել նրանց կալվածքը, նա՛ է ուղարկել նրանց գվարդիական ծառայության, նա՛ է ամուսնացրել նրանց քույրերին։ Զգիտեմ որքանով էր գոհ իր դաստիարակության արդյունքից՝ Զոլոտերի ազգական ֆրանսիացի ինժեների աջակցությամբ ստեղծելով կալվածատեր- esprits forts[1], բայց իր եկատմամբ հարգանք ներշնչել նա կարողանում էր, և հնազանդության ու հարգանքի զգացմունքներին ոչ այնքան էլ հակված ազգականները պաշտում էին պառավին ու մինչև կյանքի վերջն էլ հաճախ լսում էին նրան։

Իշխանադուստր Աննա Բորիսովնայի տունը, որ հրաշքով փրկվել էր 1812 թվականի հրդեհից, Ֆուրշ հիսուն տարի էր նորոգվել. խունացած ու սևացած կերպասե պաստառները ծածկում էին պատերը, բյուրեղապակյա ջահերը, որ ժամանակի ընթացքում մի տեսակ մգացել ու ծխագույն տապակոնի էին վերածվել, առկայծելով և աղոտ փայլ արձակելով օրորվում ու զրնգում էին, երբ մեկն ու մեկը քայլում էր սենյակում։ Ամբողջական կարմրափայտից շինված, ոսկեփոշին թափված պաճուճազարդերով ծանր կահույքը տխուր կանգնած էր պատերի տակ. չինական դրվագազարդերով պահարանները, պղնձապատ սեղանները, ոսկոկոր ոճի ճենապակյա տիկնիկները,— ամեն ինչ հիշեցնում էր ուրիշ դարաշրջան, այլ բարքեր։

Նախասենյակում նստում էին ալեհեր սպասավորները, լուրջ-լուրջ և հանդարտ զրազվելով զանազան մանր գործերով, իսկ երբեմն էլ ցածրաձայն ընթերցելով աղոթագիրքը կամ Սաղմոսը, որի էջերը կազմից ավելի մուգ էին։ Դռների մոտ կանգնում էին ծառա տղաները, բայց նրանք էլ ավելի շուտ նմանվում էին ծեր թզուկների, քան երիտասարդների, երբեք չէին ծիծաղում և ձայնը չէին բարձրացնում։

Ներսի սենյակներում մեռյալ լռություն էր տիրում. միայն ժամանակ առ ժամանակ լսվում էր թութակի թախծոտ ձայնը՝ մարդկային խոսքը դատապարտելով կրկնելու նրա իղձուկ փորձը, թիթեղապատ թառին զարնվող նրա կոուցի հնչյունը ու մեկ էլ դահլիճում, հախճաղյուսե վառարանի

1 ազատախոհներ (ֆրանս.)։

նի փոքրիկ ելուստի վրա ապրող պստլիկ, ծերացած, թոքախտավոր կապկի անդուր նվնվոցը։ Դեբարդերի[1] նման հագնված, լայն կարմիր շալվարով այդ կապիկը ամբողջ սենյակը համակել էր յուրահատուկ, խիստ անախորժ հոտով։ Մյուս դահլիճում կախված էին ամեն մեծության, ամեն ձևի, բոլոր ժամանակների, բոլոր տարիքների ու ամեն տեսակի տարազներով բազում տոհմական նկարներ։ Այդ նկարներն ինձ համար առանձնահատուկ հետաքրքրություն էին ներկայացնում հենց բնօրինակի և պատկերվածի միջև եղած հակադրության պատճառով։ Բաց կանաչավուն ասեղնագործված կապայով, շպարված մազերով, կտավի վրայից քաղաքավարի ժպտացող մոտ քսանամյա երիտասարդը իմ հայրն էր։ Խոնված խոպոպներով, վարդի փնջով, երեսին խալ քաշած, մարմինը անողոքաբար ասես նիստավոր գավաթի մեջ սեղմված, լայն ֆիժմաների[2] մեջ խցկված աղջնակը ահեղ իշխանուհին էր...

Կաշկանդվածությունն ու լռությունը աճում էին առանձնասենյակին մոտենալիս։ Լայնեզր շորե սպիտակ գլխարկով պառավ աղախինները, ձեռքերին զանազան թեյնիկներ, այնպես կամաց էին ետ ու առաջ անում, որ ոտնաձայն անգամ չէր լսվում. երբեմն դռների մեջ երևում էր հաստ, կապույտ մահուդե երկար կապա հագած որևէ ալեհեր սպասավոր, բայց նրա ոտնաձայնն էլ չէր լսվում, նույնիսկ ավագ սպասուհուն իր զեկույցը նա տալիս էր շուրթերի շարժումով, առանց ծպտուն հանելու։

Ցածրահասակ, շորացած, կնճռոտված, բայց բնավ էլ ոչ անճոռնի պառավը սովորաբար նստած, կամ ավելի ճիշտ՝ պառկած էր լինում մեծ, անհարմար բազմոցին՝ բարձերով շրջապատված։ Նա հազիվ էր երևում. ամեն բան ճերմակ էր՝ տնային շրջազգեստը, շորե գլխարկը, բարձերը, բազմոցի ծածկոցները։ Մոմի պես գունատ և ժանյակի նման նուրբ դեմքը, նվաղուն ձայնի ու ճերմակ հագուստի հետ մեկտեղված՝ մի տեսակ հոգեվարքային տխուր էր տալիս նրան։

[1] բեռնակիր (ֆրանս. débardeur բառից)։

[2] ֆիժմա— շրջազգեստի տակից դրվող լայն օղակներ։



Ինչպես անգլիական մեծ ժամացույցը համաչափ, բարձրաձայն զարկով,— թի՛կ-թա՛կ, թի՛կ-թա՛կ,— ասես չափում էր նրա կյանքի վերջին քառորդ ժամը։

Ժամը մեկին հայտնվում էր Իշխանուհին ու ծանրաշուք նստում խոր բազկաթոռին. նա ձանձրանում էր իր դառարկ թևաշենքում։ Նա այրի էր, և ես դեռ հիշում եմ նրա ամուսնուն՝ միջահասակ, ալեհեր մի ծերուկ, որ իշխանուհուց թաքուն թրմօղի ու մրգօղի էր խմում, տանը ոչ մի պետական բանով չէր զբաղվում և ընտելացել էր անվերապահ կնոջը ենթարկվելուն, որի դեմ երբեմն, հատկապես մրգօղուց հետո, ըմբոստանում էր խոսքով, բայց ոչ երբեք գործով։ Իշխանուհին հետո զարմանում էր, թե Իշխան Ֆյոդոր Սերգեևիչի վրա ի՛նչ ուժեղ է ազդում մի պստլիկ բաժակ օղին,— որ սա բացահայտորեն խմում էր ճաշից առաջ,— և թողնում էր, որ ողջ առավոտը հանգիստ խաղ անի կեռնիների, սոխակների ու դեղձանիկների հետ, որոնք, միմյանց ընդհատելով, ճռվողում էին ամբողջ ձայնով. մի քանի նիսին նա երգել էր սովորեցնում ձեռքի երգեհոնով, մյուսներին՝ սեփական սուլոցով. նա անձամբ առավոտ կանուխ գնում էր Օխոտնի ռյադ՝ թռչուններ փոխանակելու, ծախելու։ Նա արտիստի բավականություն էր ստանում, երբ (էն էլ թանկ կարծիքով) խաբում էր վաճառողին... Եվ այսպես շարունակում էր իր օգտակար կյանքը՝ մինչև որ մի առավոտ, դեղձանիկների համար շշվվացնելուց հետո, մեջքի վրա ընկավ ու երկու ժամ հետո մեռավ։

Իշխանուհին մենակ մնաց։ Նա երկու աղջիկ ուներ. երկուսին էլ մարդու տվեց, երկուսն էլ ամուսնացան ոչ թե սիրելով, այլ սոսկ մոր ծնողական ճնշումից ազատագրվելու համար։ Երկուսն էլ մեռան սնդրանիկ ծննդաբերությունից։ Իշխանուհին իրո՛ք դժբախտ կին էր, բայց փորձանքներն ավելի շուտ փչացրել, քան թե մեղմացրել էին նրա բնավորությունը։ Նա ճակատագրի հարվածներից դարձել էր ավելի հե՛զ ու բարի, այլ առավել դաժան ու մռայլ։

Այժմ նրան մնացել էին միայն եղբայրները և, գլխավորը՝ իշխանադուստրը, որից նա ողջ կյանքում համաբյուրաժանվեց, և որը Իշխանուհուն, ամուսնու մահից հետո, դարձրեց իրեն ավելի մերձավոր։ Նա տան մեջ ոչինչ չէր

տեսքինում։ Իշխանուհին միտքեծան կառավարում էր ամենքին ու հոգատարության և ուշադրության պատրվակով ենդում էր պառավին։

Պատերի տակ, տարբեր անկյուններում, միշտ նստոտում էին ամեն տեսակի պառավներ, որոնք ապրում էին իշխանադստեր ողորմածությամբ կամ էլ ժամանակավորապես ապաստան էին գտել նրա տանը։ Կես-սուրբ ու կես-թափառաշրջիկ, մի քիչ ցնորված ու խիստ բարեպաշտ, հիվանդոտ ու շափից վեր կեղտոտ այդ պառավները քարշ էին գալիս մի հնամյա տնից մյուսը. մեկում կկերակրեն, մյուսում հին շալ կնվիրեն, մի տեղից ձավար ու վառելափայտ կուղարկեն, մի տեղից՝ քաթան ու կաղամբ— մի կերպ ծայրը-ծայրին կհասանի։ Նրանցից ամենուրեք խորշում էին, ամենուրեք խուսափում, նրանց ամենուրեք նստեցնում էին հետին տեղում և ամենուրեք ընդունում ձանձրույթից, պարապությունից, իսկ ավելի շատ՝ բամբասանքի սիրուց։ Կողմնակիների ներկայությամբ այդ տխուր կերպարանքները սովորաբար լռում էին, նախանձոտ ատելությամբ խեթում իրար... Հոգոց հանելով, օրորում էին գլուխները, խաչակնքում, քթի տակ փնթփնթալով ինչ-որ բան հաշվում, աղոթում, գուցեև հայհոյում։ Փոխարենը բարեբարուն և նվաստավարուն հնամենակ մնալով՝ լռության դիմաց իրենց վարձատրում էին ամենադավաճան բամբասանքով բոլոր մյուս բարեբարուհիների հասցեին, որոնց տներում նրանց ընդունում էին, կերակրում ու նվերներ տալիս։

Նրանք անվերջ որևէ բան էին ուզում իշխանադուստրից և նվերների դիմաց, որ նա հաճախ տալիս էր իշխանուհուց թաքուն (իշխանուհին չէր սիրում երես տալ նրանց), բերում էին քարացած նշխարք և սեփական արտադրության բրդյա անպիտաքություններ, որոնք իշխանադուստրը հետո ծախում էր նրանց իսկ օգտին, ընդ որում՝ գնորդի կամքը բնավ էլ հաշվի չէր առնվում։

Մննդյան, անվանակոչության և մյուս տոներից զատ, ազգականների ու մերձավորների ամենահանդիսավոր հավաքը իշխանադստեր տանը լինում էր Նոր տարվա նախօրյակին։ Իշխանադուստրն այդ օրը եկեղեցուց բերել էր տալիս Իվերյան աստվածամորը։ Վանականներն ու քահանաներ աբրապատակերը երգեցողությամբ պտանցնում էին բոլոր սենյակներում։ Իշխանադուստրը, խաչակնքելով, առաջինն էր անցնում սրբապատակերի տակով, նրա հետևից՝ բոլոր հյուրերը, ծառաները, ազախիններն ու ծերերը, երեխաները։ Դրանից հետո ամենքը շնորհավորում էին նրա Ամանորը և նվիրում ամեն տեսակ զիզի-բիզի բաներ, ինչպես երեխաներին են նվիրում։ Նա մի քանի օր զվարճանում էր դրանցով, հետո ինքն էր նվիրում սրան-նրան։

Հայրս ամեն տարի ինձ տանում էր այդ հեթանոսական փարատարությանը. ամեն ինչ կրկնվում էր նույն կարգով, միայն թե որոշ ծերուկներ ու պառավներ էին պակասած լինում, նրանց մասին գիտավորյալ լռում էին, մենակ իշխանադուստրն էր ասում, «Մեր Իլյա վասիլիչն էլ չկա, աստված հոգին լուսավորի... Տեսնես եկող տարի տերն ո՞ւմ կկանչի»։ Ու կասկածանքով տարուբերում էր գլուխը։

Իսկ անգլիական ժամացույցի զարկը շարունակում էր շափել օրերը, ժամերը, րոպեները... և ի վերջո շափեց հասավ ճակատագրական վայրկյանին. մի օր էլ պառավը, վեր կենալով, մի տեսակ վատ զգաց, սենյակներով գնացել էր, հոգնել, հագուստով պառկեց իր բազմոցին, եկավ չի անցնում. քթից արյուն եկավ, էն էլ շատ, նա թուհանգիստ քնեց... ու չզարթնեց։ Այդ ժամանակ նա խենթանոնն անցել էր։

Տունը և կալվածքի մեծ մասը նա թողեց իշխանուհուն, բայց իր կյանքի ներքին իմաստը չփոխանցեց նրան։ Իշխանուհին չկարողացավ շարունակել նախամոր, բազում շառավիղների նահապետական հանգույցի յուրովի նրբագեղը։ Իշխանադստեր մահից հետո ամեն բան միանգամից մոայլ տեսք ընդունեց, ինչպես լինում է լեռնային վայրերում մայրամուտին. երկար, սև ստվեր փռվեց ամեն ինչի վրա։ Նա ամուր կողպեց հորաքրոջ տունը և շարունակեց ապրել թեաշենքում, բակը ծածկվեց խոտով, պատերն ու փեղկերը գնալով ավելի էին սևանում. գավիթը, որտեղ անվերջ մրափում էին դեղնավուն անճոռնի ինչ-որ շներ, ծռմռվել էր։

Տանտերերի ու ազգականների թիվը պակասում էր, իշ-

խանումու տունը ամայանում էր, նա վշտանում էր դրանից, բայց վիճակը շտկել չէր կարողանում։

Ամբողջ ընտանիքից մենակ ինքն էր մնացել և սկսեց դողալ իր ավելորդ կյանքի վրա ու անխղճորեն վանել իրենից այն ամենը, ինչ կարող էր ֆիզիկապես կամ բարոյապես խախտել հավասարակշռությունը, անհանգստություն պատճառել, դառնացնել։ Անցյալից ու հիշողություններից երկյուղելով՝ նա աչքից հեռացնում էր աղջիկներին պատկանող բոլոր իրերը, նույնիսկ նրանց նկարները։ Նույնը եղավ իշխանադստեր մահից հետո. թութակն ու կապիկը աքսորվեցին ծառայանոց, հետո արտաքսվեցին տնից։ Կապիկը իր վերջին օրերն ապրեց Սենատորի կառապանատունը, շնչահեղձ լինելով էժանագին ծխախոտի հոտից ու զվարճացնելով կառապաններին։

Ինքնապահպանման էգոիզմը խիստ անտարբեր է դարձնում ծեր սիրտը։ Երբ իշխանուհու վերջին դստեր հիվանդությունը միանգամայն անհուսալի բնույթ ստացավ, մորը համոզեցին ետ դառնալ իր տուն, և նա գնաց։ Տանը նա անհապաղ կարգադրեց պատրաստել զանազան սպիրտներ ու կաղամբի տերևներ (դրանք նա կապում էր գլխին), որպեսզի երբ անավոր լուրը գա՝ հարկ եղած ամեն բան ձեռքի տակ լինի։ Նա վերջին հրաժեշտը չէր տվել ոչ ամուսնու, ոչ էլ աղջկա դիակին, մեռնելուց հետո նա չէր տեսել նրանց և թաղմանը չէր եղել։ Երբ հետագայում մեռավ Սենատորը, իր սիրասուն եղբայրը, նա զարմիկի մի քանի խոսքից կռահեց կատարվածը և խնդրեց նրան՝ չհայտնել իրեն տխուր նորությունը ու ոչ էլ մահվան մանրամասները։ Սեփական սրտի, այն էլ այդքան համոզվող սրտի դեմ նման միջոցներ կիրառելով՝ էլ ո՞նց չապրես մի ութ-ինը տասնամյակ՝ լիակատար առողջության մեջ ու չխաթարվող մարսողությամբ։

Ի պաշտպանություն իշխանուհու՝ հիշեցնեմ, սակայն, որ բոլոր տխուր բաների այդ այլանդակ վանումը անցյալ դարի արիստոկրատ շփացածների շրջանում շատ ավելի սովորական էր, քան այժմ։ Նշանավոր Կաունիցը* օր ծերության խստագույնս արգելեց իր ներկայությամբ խոսել որևէ մեկի մահվան մասին և ծաղիկ հիվանդությունից, որից



նա էր վախենում։ Երբ մեռավ Իոսիֆ II-ը, քարտուղարը, լիմանալով՝ ինչպես հայտնի Կաունիցին, սիրտ արեց ասել. «Այժմ թագավորող Լեոպոլդ կայսրը»։ Կաունիցը հասկացավ և, գույնը գցած, ընկավ բազկաթոռին՝ ոչինչ չհարցնելով։ Նրա այդպիսի խոսակցության մեջ չէր գործածվում «պատվաստում» բառը, որպեսզի չհիշեցներ ծաղիկ հիվանդությունը։ Վերջապես՝ սեփական որդու մահվան մասին նա իմացավ պատահականորեն, իսպանական դեսպանորդից։ Մինչդեռ մարդիկ ծիծաղում են վտանգից գլուխը թևի տակ թաքցնող ջայլամների՝ վրա։

Իր լիակատար հանգստությունը պահպանելու համար իշխանուհին հատուկ ոստիկանություն էր հիմնել և նրա ղեկավարությունը վստահել էր հմուտ ձեռքերի։

Իշխանադուստրից ժառանգած թափառող պառավներից բացի, իշխանուհու տանն ապրում էր մշտական «ընկերակցուհին»։ Այս պատվավոր պաշտոնը զբաղեցնում էր զվենիգորոդյան մի պաշտոնյայի առողջ, կարմրաթուշ այրին, իր «ազնվազարմությամբ» ու հանգուցյալի ատենակալական աստիճանով հպարտ, կովարար ու անդադար մի կին, որը երբեք չէր կարողանում ներել Նապոլեոնին՝ 1812 թվականին Հայրենական պատերազմում զոհված իր զվենիգորոդյան կովի անժամանակ մահը։ Հիշում եմ, թե Ալեքսանդր Ա-ի մահից հետո նա որքան լրջորեն մտահոգվում էր, թե ինքն ի՞նչ լայնքի սգաժապավեն պիտի կրի՝ ըստ աստիճանակարգի։

Քանի դեռ իշխանադուստրը կենդանի էր, այդ կինը կարևոր դեր չէր խաղում, բայց հետո այնպես ճարպկորեն կարողացավ հարմարվել իշխանուհու քմահաճույքներին և սեփական անձի համար ունեցած տագնապալի անհանդգստությանը, որ շուտով նրա մոտ բռնեց ճիշտ նույն տեղը, որ ուներ ինքը՝ իշխանուհին հորաքրոջ օրոք։

Իր աստիճանավորական սգաժապավեններով պաճուճված՝ Մարիա Ստեպանովնան առավոտից իրիկուն գնդակի պես գլորվում էր տան մեջ, գոռգոռում էր, աղմկում, հանգիստ չէր տալիս ծառաներին, գանգատվում էր նրանցից, հետամտում աղախիններին, դմբուզներ բաժանում ու տղաների ականջները քաշում, հաշիվներ մաքրում, վազում էր

խոհանոց, վազում էր տխոռ, ճանճերին էր քշում, շփում տիրուհու ոտները, ստիպում դեղորայք ընդունել։ Տնեցիներն այլևս տիրուհու մոտ մուտք չունեին. դա մի Արակչեև էր, մի Թիրոն, մի խոսքով՝ առաջին մինիստր։ Խստաբարո ու թեև հին ձևով, բայց և կրթյալ՝ իշխանուհին հաճախ, հատկապես սկզբնական շրջանում, նեղվում էր զվենիգորոդյան այրուց, նրա ճղճղան ձայնից, շուկայական շարժուձևից, բայց գնալով ավելի ու ավելի էր ապավինում նրան ու հիարմունքով նկատում, որ Մարիա Ստեպանովնան զգալիորեն պակասեցնում էր տան առանց այդ էլ ոչ այնքան մեծ ծախսերը։ Թե ո՛ւմ համար էր իշխանուհին խնայում փողը՝ դժվար է ասել, նա ոչ մի մտերիմ չուներ, բացի եղբայրներից, որոնք կրկնակի հարուստ էին իրենից։

Այդ ամենով հանդերձ իշխանուհին, ըստ էության, ամուսնու և դստերի մահից հետո ձանձրանում էր և ուրախ էր լինում, երբ պառավ Ֆրանսուհին, որ նրա աղջիկների դաստիարակչուհին էր եղել, մի երկու շաբաթով հյուր էր գալիս իրեն կամ էլ երբ Կորչևայից այցելում էր իր զարմոհին։ Բայց այս բոլորը անցողիկ, հազվադեպ բաներ էին, իսկ «ընկերակցուհու» հետ մեն-մենակ մնալու ձանձրույթը չէր լցնում դատարկությունը։

Զրաժմունքը, խաղալիքն ու զվարճանքը շատ բնականորեն երևան եկան իշխանադստեր մահից քիչ առաջ։

## ԳԼՈՒԽ XX

### Ուրբ

1825 թվականի կեսերին, հոր գործերը շատ խառնակ վիճակում ընդունած Քիմիկոսը Պետերբուրգից Եկատերինոսլավ գալուց ուղարկեց իր եղբայրներին, ու քույրերին. նա տրամադրում էր նրանց կալվածատիրական տուն ու ապրուստ, մտադրվելով հետագայում զբաղվել նրանց դաստիարակությամբ ու ապագայով։ Իշխանուհին գնաց նրանց տեսնելու։ Ուր տարեկան երեխան զարմացրեց նրան իր տխուր-մտախոհ տեսքով. իշխանուհին նրան կառք նստեցրեց, բերեց տուն և պահեց իր մոտ։



Մայրն ուրախ էր և մյուս երեխաների հետ ուղևորվեց Նոմրով։

Քիմիկոսը համաձայնվեց՝ նրա համար միևնույն էր։

— Ամբողջ կյանքումդ հիշիր,— ասում էր փոքրիկ աղջիկան «ընկերակցուհին», երբ նրանք տուն հասան,— հիշիր, որ իշխանուհին քո բարերարուհին է և աղոթիր, որ նա երկար կյանք ունենա։ Ի՞նչ կլինեիր դու առանց նրա։

Եվ ահա այդ հնօրյա տանը, որի վրա ծանրացել էր երկու անդադրում պառավների մռայլ շունչը,— մեկը՝ ոտից գլուխ քմահաճույք ու կամակորություն, մյուսը՝ սիրտ անգլուխ քմահաճույք ու կամակորություն, հանգիստ լրտեսուհին՝ զուրկ ամեն մի նրբանկատությունից ու ամեն մի տակտից,— հայտնվեց մի երեխա, որը կտրված էր իր բոլոր մերձավորներից, խորթ էր ամբողջ շրջապատին, որին վերցրել էին ձանձրույթից, ինչպես շնիկ են վերցնում կամ ինչպես իշխան Ֆյոդոր Սերգեևիչն էր դեղձանիկներ պահում։

Բոլոր երկար սգազգեստով, կապտին տվող գունատությամբ աղջիկը նստած էր պատուհանի մոտ՝ երբ մի քանի օր հետո հայրս ինձ իշխանուհու տուն բերեց։ Նա նստած էր լուռ, զարմացած, երկյուղած և հայացքը հառել էր պատուհանին, վախենալով նայել որևէ այլ կողմ։

Իշխանուհին կանչեց նրան և ներկայացրեց հորս։ Միշտ սառն ու անբարեհամբույր՝ հայրս անտարբեր ձեռքը թեթև դրեց նրա ուսին, ասաց, որ հանգստյալ եղբայրն ինքն էլ չգիտեր, թե ի՞նչ էր անում, կշտամբեց Քիմիկոսին և սկսեց խոսել ուրիշ բաներից։

Աղջկա աչքերում արցունք կար. նա նորից նստեց պատուհանի առաջ և նորից շարունակեց նայել դուրս։

Ամեն կյանք էր սկսվում նրա համար։ Ոչ մի չերմ խոսք, ոչ մի քնքուշ հայացք, ոչ մի փաղաքշանք. կողքն ու շուրջը՝ կողմնակի մարդիկ, խորշումներ, դեղնած այտեր, հանգչող, նվաղող արարածներ։ Իշխանուհին միշտ խիստ էր, պահանջկոտ, անհամբերատար և իրեն շատ հեռու էր պահում որբից, որպեսզի սրա մտքով չանցնի վայելել իր հովանավորությունը, ջերմանալ, մխիթարվել իր մոտիկությունից և կամ լաց լինել։ Հյուրերը ոչ մի ուշադրություն չէին դարձնում նրան։ «Ընկերակցուհին» նրան հանդուրժում էր իբրև

իշխանուհու քմահաճույք, իբրև ավելորդ մի բան, որը, սակայն, իրեն վնաս տալ չի կարող. նա, առանձնապես կողմնակիների ներկայությամբ, նույնիսկ ցույց էր տալիս, թե հովանավորում է երեխային և նրա համար բարեխոսում է իշխանուհու առաջ։

Երեխան չէր ընտելանում և մի տարի հետո նույնքան օտարոտի էր, որքան առաջին օրը, և ավելի՛ տխուր։ Իշխանուհին ինքը զարմանում էր նրա «լրջության» վրա ու երբեմն, տեսնելով, որ ժամերով տխուր-տրտում նստած է փոքրիկ քարգահի առաջ, ասում էր.

— Ինչո՞ւ չես թռչկոտում, վազվզում։

Աղջիկը ժպտում էր, կարմրում, շնորհակալություն էր հայտնում, բայց տեղից չէր շարժվում։

Եվ իշխանուհին հանգիստ էր թողնում նրան, ըստ էության բնավ էլ չմտահոգվելով երեխայի տրտմությամբ ու ոչինչ չանելով նրան զվարճացնելու համար։ Գալիս էին տոները, մյուս երեխաներին խաղալիքներ էին նվիրում, մյուս երեխաները պատմում էին զբոսանքներից, նոր զգեստներից։ Որբին ոչինչ չէին նվիրում։ Իշխանուհին կարծում էր, որ արդեն շատ բան է անում նրա համար՝ ապաստան տալով. մաշիկներ ունի՝ հերիք է, էլ տիկնիկնե՞րն ինչին են պետք։ Տիկնիկներ իրո՞ք էլ պետք չէին. նա խաղալ չգիտեր, ասենք՝ խաղընկեր էլ չուներ։

Լոկ մի՛ էակ հասկացավ որբի վիճակը. նրան խնամելու համար մի պառավ դայակ էր կարգված, միայն նա էր պարզ ու միամիտ սիրում երեխային։ Հաճախ երեկոները, նրա շորերը հանելիս, հարցնում էր.

— Օրիորդս, էդ ինչո՞ւ եք էդպես տխուր։

Աղջիկը նրա վզովն էր ընկնում ու դառն լաց լինում, և պառավը, արցունքն աչքերին, գլուխն օրորելով, հեռանում էր մոմակալը ձեռքին։

Այդպես անցնում էին տարիները։ Աղջիկը չէր գանգատվում, չէր տրտնջում, նա տասներ-կու տարեկանում միայն մեռնե՞լ էր ուզում։ «Ինձ շարունակ թվում էր,— գրում էր նա,— որ ես սխալմամբ եմ ընկել այստեղ և որ շուտով տուն պիտի վերադառնամ. բայց որտե՞ղ էր իմ տունը...



Պետերբուրգից մեկնելիս ես մեծ ձնակույտ էի տեսել հորս գերեզմանին. մայրս, թողնելով ինձ Մոսկվայում, անհետացավ լայն, անվերջ ճանապարհով... Ես սրտանց լաց էի լինում ու աղոթում աստծուն՝ ինձ շուտ տուն տանել»։

«...Իմ մանկությունը ամենատխուրն էր, ամենադառը, ինչքա՞ն արցունք է թափվել, որ ոչ ոք չի տեսել, քանի՞ անգամ, պատահել է, գիշերը, դեռ չիմանալով ի՛նչ բան է աղոթքը, ես թաքուն վեր էի կենում (աղոթե՞լ անգամ չհանդգնելով սահմանված ժամից դուրս) ու խնդրում աստծուն, որ ինձ մեկը սիրի, գուրգուրի։ Ես չունեի այն խաղն ու խաղալիքը, որն զբաղեցներ ինձ ու մխիթարեր, քանզի, եթե որևէ բան էլ տալիս էին՝ ապա երեսով տալով ու անպայման ավելացնելով. «Դու դրան չարժես»։ Նրանցից ստացած ամեն մի լաթի վրա ես լաց եմ եղել. հետո ես դրանից վեր կանգնեցի, գիտության ձգտումը խեղդում էր ինձ, ես ուրիշ երեխաների ոչ մի բանին չէի նախանձում, բացի նրանց ուսումից։ Շատերն ինձ գովում էին, մեջս ընդունակություններ տեսնում ու կարեկցանքով ասում՝ «Եթե ձե՞ռք մեկնեն այս երեխային». «Նա աշխարհը կզարմացնի»,— ավելացնում էի ես մտքումս և այտերս վառվում էին, ես շտապում էի դուրս գնալ, աչքիս երևում էին իմ նկարները, իմ աշակերտները. մինչդեռ ինձ մի կտոր թո՞ւղթ, մի կտոր մատի՞տ չէին տալիս... Այլ աշխարհ դուրս գալու ձգտումն ավելի ու ավելի էր ուժեղանում, և դրա հետ մեկտեղ մեծանում էր արհամարհանքը իմ զնդանի ու նրա դաժան պահակների հանդեպ. ես անդադար կրկնում էի Ջերնեցի տողերը.

Ահա գաղտնիքը. իմ գարնան օրերին
Կյանքի ողջ վիշտը ես արդեն ճաշակել էի՞։

Արդյոք հիշո՞ւմ ես, մի անգամ մենք ձեր տանն էինք, վազո՞ւց, դեռևս այն տանը, դու հարցրեցիր՝ կարդացե՞լ եմ Կոզլովին, ու արտասանեցիր նույն այդ տողերը։ Սիրտս թրթռաց, ես ժպտացի՝ հազիվ զսպելով արցունքներս»։

Անհուն թախծալի լարը շարունակ հնչում էր նրա կրծքի տակ. այն երբեք լրիվ չմարեց, այլ սոսկ երբեմն լռում էր՝ կլանված կյանքի պայծառ պահով։

Մահից մի երկու ամիս առաջ, վերստին դառնալով իր մանկությանը, նա գրում էր.

«Զորս բոլորս՝ հնացածություն, այլանդակություն, սառնություն, մեռյալություն, սուտ, իմ դաստիարակությունն սկսվել է նախատինքներից ու վիրավորանքներից, դրա հետևանքով էլ՝ օտարացում բոլոր մարդկանցից, անվստահություն նրանց փաղաքշանքներին, խորշանք նրանց կարեկցանքից, ինքնամփոփում...»։

Բայց այդպիսի ինքնամփոփման համար հարկավոր էր ունենալ ոչ միայն հոգու վիթխարի խորություն, որտեղ անկաշկանդ սուզվեիր, այլև անկախության ու ինքնատիպության վիթխարի ուժ։ Անբարյացակամ ու ճղճիմ, ճնշող ու անելանելի միջավայրում շատ քչերը կարող են ապրել իրենց կյանքով։ Սրբեմն ոգի՛դ չի դիմանա, երբեմն էլ մարմի՛նդ կընկճվի։

Որբությունն ու կոպիտ վերաբերմունքը ամենանուրբ հատակում սև շերտ թողին նրա հոգու մեջ, մի վերք, որ երբեք լրիվ չբուժվեց։

«Ես չեմ հիշում,— գրում է նա 1837-ին,— որ երբևէ ազատ ու սրտանց արտասանած լինեմ «մայրիկ» բառը, որ անհոգ, ամեն ինչ մոռանալով՝ գլուխս դրած լինեմ սրեէ մեկի կրծքին։ Ութ տարեկանից ամենքին ասում՝ ես սիրում եմ իմ մորը... բայց մենք չենք ճանաչում իրար»։

Տասներկուամյա աղջկա դեմքի գունատությանը, մուգ շրջագծով պատած խոշոր աչքերին, նրա տանջալից հոգնածությանն ու մշտաթախծությանը նայելիս՝ շատերին թվում էր, որ գա թոքախտի կանխորոշված, վաղ զոհերից մեկն է, այն զոհերից, որոնց ճակատին մանկուց գրոշմված է մահը՝ գեղեցկության հատուկ նշանով ու վաղահաս խոհականությամբ։ «Գուցե,— ասում է նա,— ես չդիմանայի ամբ պալքարին, եթե փրկված չլինեի մեր հանդիպումով»։

Եվ ես ինչ ո՛ւշ հասկացա ու ճանաչեցի նրան։

Մինչև 1834-ը ես դեռ չէի կարողանում գնահատել այդ հարուստ գոյությունը, որ ծավալվում էր իմ կողքին, չնայած ինը տարի էր անցել այն պահից, երբ իշխանուհին ներկայացրել էր նրան հոր՝ բրդե երկար հագուստով։ Դժվար



է այդ բացատրելը։ Նա վայրի էր, ես՝ մատչելի, ես խրոնում էի մանկիկիկին, որն անվերջ այդպես տխուր ու միայնակ նստում էր պատուհանի առաջ, բայց մենք շատ քիչ էինք տեսնվում։ Հազվագեպ և ամեն անգամ ակամա էի գնում իշխանուհու մոտ։ Ավելի հազվագեպ էր նրան մեզ մոտ բերում իշխանուհին։ Ըստ որում, իշխանուհու այցելությունները գրեթե միշտ տհաճ տպավորություն էին թողնում, նա սովորաբար դատարկ բաների համար գժավում էր հորս հետ և, մի երկու ամիս չտեսնվելուց հետո, նրանք փայլող խոսքեր էին ասում իրար, քողարկելով դրանք սիրալիր գարձվածքներով, այնպես, ինչպես նաբաթով սղալում են զզվելի դեղորայքը։ «Աղավնյա՛կս»,— ասում էր իշխանուհին, «Աղավնյա՛կդ իմ»,— պատասխանում էր հայրս։ Ու գժտությունն ընթանում էր իր կարգով։ Մենք միշտ ուրախանում էինք, երբ իշխանուհին մեկնում էր։ Ավելին՝ շպնտք է մոռանալ, որ այդ ժամանակ ես լրիվ տարված էի քաղաքական երազանքներով, գիտություններով, ապրում էի համալսարանով ու իմ ընկերներով։

Բայց ինչո՞վ էր ապրում նա, իր տխրությունից բացի, այդ խավար, տեսական ինը տարիներին՝ շրջապատված տխմար կեղծ բարեպաշտներով, գոռոզ ազգականներով, ձանձրալի կուսակրոններով, հաստլիկ իրիցկիններով, եկեղեցապաշտորեն հովանավորված «ընկերակցուհու» կողմից և իրավունք չունենալով դուրս գալու խոտակալած տխուր բակից ու տան եռեք փոքրիկ պարտեզից։

Բերված տողերից արդեն երևում է, որ վերցրած երեխայի դաստիարակությունը մի մեծ ծախս չէր նստում իշխանուհու վրա։ Բարոյականությամբ նա ինքն էր զբաղվում։ Այդ ուսուցանությունը բաղկացած էր արտաքին կեցվածքից ու երեսպաշտության ողջ մի համակարգի ներարկումից։ Երեխան առավոտվանից պիտի լիներ հագած-կապած, սանրված, ձգված. դա կարելի էր թույլատրել այն չափով, որքանով չէր վնասում առողջությանը։ Բայց իշխանուհին մեզքի հետ միասին քաղաքակրթում էր նաև հոգին՝ ճնշելով ամեն մի անկեղծ, սրտաբուխ զգացմունք, նա պահանջում էր ժպտալ և ուրախ տեսք ընդունել՝ երբ երեխան տխուր էր, սիրալիր խոսք ասել՝ երբ նա ուզում էր լաց լինել։ Կարեկցանք արթնանալ՝ երբ նա ուզում էր զայրանալ։

տահայտել այն բանի հանդեպ, որին նա անտարբեր էր՝ մի խոսքով՝ մշտական կեղծիք։

Սկզբում խեղճ աղջկան ոչինչ չէին սովորեցնում, պատրվակելով, թե վաղ ուսուցումն անօգուտ է. հետո, այսինքն՝ մի երեք-չորս տարի անց, ձանձրանալով Սենատորի և նույնիսկ կողմնակի մարդկանց դիտողություններից, իշխանուհին որոշեց կարգավորել ուսուցումը՝ նկատի ունենալով դրամի ամենանվազ ծախսը։

Այդ նպատակով նա օգտագործեց պառավ-դաստիարակչուհուն, որն իրեն պարտական էր համարում իշխանուհուն և երբեմն զգում էր նրա կարիքը. այսպիսով՝ ֆրանսերենը հաստվել էր ծայրահեղ էժանության, դրա համար էլ դասավանդվում էր à bâtons rompus[1].

Բայց ռուսաց լեզուն էլ էր հասցված նույն վիճակին. դրա և մյուս բոլոր բաների համար հրավիրված էր իշխանուհուց բարերարված ինչ-որ այրի տերտերակնոջ որդին, հասկանալի է՝ առանց հատուկ ծախսի. միտրոպոլիտի առաջ իշխանուհու բարեխոսությամբ այրու երկու որդիները տաճարի քահանա էին կարգվել։ Ուսուցիչը նրանց ավագ եղբայրն էր, աղքատ ծխի սարկավագ, ընտանիքի հոգսը վզին. նա խեղդվում էր աղքատությունից, գոհ էր ամեն մի վարձատրությունից և չէր հանդգնում պայմաններ առաջադրել եղբայրների բարերարուհուն։

Ի՞նչը կարող էր նման դաստիարակությունից ավելի խղճուկ, ավելի անբավարար լինել. մինչդեռ ամեն ինչ օգտակար եղավ, ամեն ինչ զարմանալի պտուղներ տվեց. այնքա՞ն քիչ բան է հարկավոր զարգացման համար, եթե միայն զարգանալու բան կա։

Խեղճ, նիհար, բարձրահասակ ու ճաղատ սարկավագը մեկն էր այն խանդավառ երազողներից, որոնց չեն բուժում ոչ տարիքը, ոչ ձախորդությունները, ընդհակառակը՝ ձախորդությունները նրանց պահում են միստիկ հայեցողության մեջ։ Ֆանատիզմի հասնող նրա հավատը անկեղծ էր և զուրկ չէր պոետական երանգից։ Նա՝ քաղցած ընտանիքի հայրը, ն ուրիշի հացով կերակրվող որբը անմիջապես հասկացան իրար։

Իշխանուհու տանը սարկավագին ընդունում էին այնպես, ինչպես հարկ է ընդունել անպաշտպան ու միաժամանակ հեզ աղքատին,— հազիվ գլխով անելով, հազիվ արժանացնելով մի խոսքի։ Նույնիսկ «ընկերակցուհին» անհրաժեշտ էր համարում նայել նրան վերևից. իսկ նա էլ հազիվ էր նկատում թե՛ նրանց և թե՛ նրանց ընդունելությունը, սիրով տալիս էր իր դասերը, զգացված էր աշակերտուհու գյուրըմբռնողությունից և կարողանում էր հուզել նրան արտասվելու չափ։ Այդ բանը իշխանուհին չէր կարողանում հասկանալ, կշտամբում էր երեխային լացկանության համար և շատ դժգոհ էր, որ սարկավագը քայքայում է ջղերը։ «Դա արդեն չափից դուրս է, իսկի մանկանը արժանի բան չէ՞»։

Այնինչ ծերուկի խոսքերը մատաղ էակի առաջ բացում էին ուրիշ, այլ կերպ առինքնող մի աշխարհ, քան այն աշխարհը, որտեղ ինքը՝ կրոնը դառնում էր խոհանոցային մի բան, հանգում պաս պահելուն ու գիշերները եկեղեցի հաճախելուն, ուր երկյուղածությամբ զարգացված մոլեռանդությունը գիրկընդխառն էր խաբեությանը, ուր ամեն բան սահմանափակ էր, խարդախված, պայմանական ու ճղմում էր հոգին իր անձկությամբ։ Սարկավագը աշակերտուհու ձեռքը տվեց Ավետարանը, և նա երկար չէր պոկվում դրանից։ Ավետարանը առաջին գիրքն էր, որ նա հաճախ կարդում էր իր միակ ընկերուհու՝ դայակի ազգականուհի, իշխանուհու երիտասարդ աղախին Սաշայի հետ։

Ես Սաշային հետո շատ լավ ճանաչեցի։ Թե որտեղ ու ինչպես էր կարողացել զարգանալ՝ ծնված լինելով կառապանատան և խոհանոցի արանքում, դուրս չգալով աղախնասենյակից՝ ես բնավ չէի կարողանում հասկանալ, բայց զարգացած էր արտակարգ։ Նա մեկն էր այն անմեղ զոհերից, որոնք աննկատ ու ավելի հաճախ, քան մենք ենք կարծում, կործանվում են ծառայասենյակում, ճորտային վիճակով ճղմված։ Նրանք կործանվում են ոչ միայն առանց որևէ փոխհատուցման, կարեկցության, առանց լուսավոր օրվա, առանց ուրախ հիշողության, այլև չիմանալով, իրենք

[1] մի կերպ (ֆրանս.)։

էլ չկասկածելով, թե ի՞նչ է կործանվում և ինչքա՞ն բան է մեռնում իրենց մեջ։

Խանումը սրտնեղած կասի. «Հենց նոր էր աղջիկը ծառայել սովորում ու մեկ էլ տեղաշրջ ընկավ ու մեռավ...»։ Ցորնանասունամյա տնտեսվարուհին կմռթմռթա. «Էս ի՞նչ են դարձել հիմիկվա սպասուհիները, օրիորդ-պարոնից էլ նազուկ են», ու... կգնա քչեխի։ Մայրը լաց կլինի, լաց ու կսկսի խմել. դրանով էլ բանը կավարտվի։

Եվ մենք անցնում ենք կողքով, անապարելով ու չնկատելով մեր աչքի առաջ կատարվող այդ ահավոր պատմությունները, օձիքներս ազատելով կարևոր զբաղվածությամբ, մի քանի ռուբլով ու փաղաքշական մի խոսքով։ Ու մեկ էլ հանկարծ, զարմացած, լսում ենք սարսափելի մի հառաչանք, որով իր մասին լուր է տալիս հավիտյանս ընկրճված հոգին, ու, ասես քնի միջից, հարցնում ենք՝ որտեղի՞ց հայտնվեց այդ հոգին, այդ ուժը։

Իշխանուհին սպանեց իր ազախնին,— իհարկե, չուզենալով ու անգիտակցաբար,— նրան տանջեց մանրուքներով, ընկճեց նրան, հալածելով ողջ կյանքում, ուժասպառեց նվաստացումներով, կոշտ ու կոպիտ վերաբերմունքով։ Նա մի քանի տարի չէր թողնում նրան ամուսնանալ և թույլատրեց այն ժամանակ՝ միայն, երբ թոքախտ նշմարեց նրա տանջահար դեմքին։

Եվ՝ դե Սաշա, խեղճ դո՛ հնարտական վիճակով ստեղծված նողկալի, անիծյալ ռուսական կյանքի,— մահմոդ դու ազատությո՛ւն ստացար։ Եվ դու գեթ անհամեմատ ավելի երջանիկ էիր մյուսներից, իշխանուհու տան դժգոհության մեջ դու հանդիպեցիր ընկերոջ, և բարեկամությունն այն աղջկա, որին դու այդպես անհունորեն սիրում էիր, հեռացրեց քեզ մինչև գերեզման։ Նա շատ արցունք թափեց քեզ համար. իր մահից քիչ առաջ դեռ հիշում էր քեզ և օրհնում հիշատակը քո՝ որպես միակ լուսավոր կերպարը, որ հայտնվել էր իր մանկության տարիներին։

... Երկու պարամանուհիները (Սաշան մի քիչ մեծ էր) վեր էին կենում առավոտ կանուխ, երբ տանը դեռ բոլորը քնած էին, դուրս գալով բակ, մաքուր երկնքի տակ կարդում էին Ավետարանն ու աղոթում։ Նրանք աղոթում էին իշխանուհու համար, «ընկերակցուհու» համար, թախանձում էին ասածն՝ բացել նրանց հոգու դռները, հորինում էին իրենց համար փորձություններ, շարաթներով միս չէին ուտում, նրազում էին վանքի ու անդրշիրիմյան կյանքի մասին։

Այսպիսի միստիցիզմը սազում է պատանեկությանը, այն հասակին, երբ ամենայն ինչ դեռ գաղտնիք է, ամենայն բան՝ կրոնական միստերիա, երբ արթնացող միտքը դեռ ազատ լուսավորում է վաղորդյան մշուշի միջից, իսկ մշուշը դեռ չի ցրվել՝ ոչ փորձով, ոչ էլ կրքո՛վ։

Խաղաղ ու մեղմ պահերիս ես սիրում էի հետագայում լսել պատմությունը այդ մանկական աղոթքի, որով սկսվում էր լայնարձակ մի կյանք և ավարտվում դժբախտ մի գոյություն։ Կերպարը կոպիտ բարերարությամբ վիրավորված որի և իր վիճակի անելանելիությամբ վիրավորված սարուորի և մեղմ ապահովությամբ վիրավորված ինքնասիրության, — որոնք ամայի բակում աղոթում էին հանուն իրենց ինքի,—

տասարդ աղջիկը, ինքն էլ արցունքի մեջ կորած, սկսեց ֆիսաձայն աղոթքը. հիվանդն այդ ընթացքում հանգավ։ Սենյակում ամենքը ծնկի էին եկել ու խաչակնքում էին. նա փակեց աղջկա աչքերը, համբուրեց սառչող ճակատը և դուրս եկավ[1]։

Միայն չոր ու ապաշնորհ բնավորություններն են, որ չեն ունենում այդ ռոմանտիկ շրջանը. նրանք նույնքան խղճալի են, որքան այն թույլ ու նվաղ էակները, որոնց միստիցիզմը չի սպառվում երիտասարդությամբ ու մնում է մինչև վերջ։ Մեր դարում սթափ բնավորությունների հետ այդպիսի բան չի էլ պատահում. բայց որտեղի՞ց կարող էր իշխանուհու տուն թափանցել տասնիններորդ հարյուրամյակի սոչխարճիկ ազդեցությունը. այդ տունը այնքա՜ն լավ խցված-փակված էր։

Ճեղքը, այնուամենայնիվ, գտնվեց։

Կորշևյան զարմուհին երբեմն հյուրընկալվում էր իշխանուհու մոտ, նա սիրում էր «փոքրիկ զարմուհուն», ինչպես սիրում են երեխաներին, մանավանդ դժբախտներին, բայց չէր ճանաչում նրան։ Զարմանքով, համարյա վախով, նկատեց նա հետագայում այդ արտասովոր խառնվածքը և, ամեն ինչում լինելով պոռթկուն, անմիջապես որոշեց շտկել իր անուշադրությունը։ Նա-ինձանից խնդրում էր Հյուգոյ

1 Թղթերիս մեջ պահպանվել են Սաշայի մի քանի նամակները՝ գրված 35 և 36 թվականների միջև։ Սաշան մնացել էր Մոսկվայում, իսկ նրա ընկերուհին գյուղում էր՝ իշխանուհու հետ. ես չեմ կարող կարդալ սրտի այդ պարզ ու խանդավառ թրթռվանքը առանց խորին զգացվածության։ «Մի՞թե ճշմարիտ է,— գրում է նա,— որ դուք գալու եք։ Ա՜խ, եթե դուք իսկապե՞ս գայիք, ես չգիտեմ, ի՞նչ կլիներ։ Ախր դուք չեք հավատա ինչքա՜ն հաճախ եմ մտածել ձեր մասին, համարյա բոլոր իմ ցանկությունները, բոլոր իմ խոհերը, բոլորը, բոլորը, բոլորը ձեր մեջ են... Ա՜խ, Նատալյա Ալեքսանդրովնա, ախր այնպե՞ս գեղեցիկ եք դուք, այնպե՞ս սիրասուն, այնպե՞ս վեհ, այնպե՞ս... բայց էլ չեմ կարող ասել։ Ազնի՜վ խոսք, սրանք սերտած բառեր չեն, ուղղակի սրտիցս են...»։

Ուրիշ մի նամակում նա շնորհակալություն է հայտնում, որ «տիրուհին» հաճախ է գրում իրեն։ «Դա արդեն շա՜տ շատ է,— ասում է նա,— բայց ախր այդ դո՛ւք եք, դո՛ւք», և նամակն ավարտում է այս խոսքերով. «Ամենքը խանգարում են, գրկում եմ ձեզ, ի՜մ հրեշտակ, անսահման սիրո ողջ անկեղծությամբ։ Օրհնեցե՛ք ինձ» (ծանոթ՝ Ա. Ի. Գերցենի)։



Փոքրիկ կամ պոհասարակ որևէ նորություն։ «Փոքրիկ զարմուհին,— ասում էր նա ինձ,— հանճարեղ էակ է, մենք պիտի նրան առա՜ջ մղենք»։

«Մեծ զարմուհին»,— այդ անունը տալիս ես չեմ կարող առանց ժպիտի հիշել, որ նա շատ կարճլիկ էր,— իր հովանավորյալին միանգամից հաղորդեց այն ամենը, ինչ խմորվում էր իր սեփական հոգում՝ շիլլերյան գաղափարները և գաղափարները Ռուսոյի, ինձնից վերցրած հեղափոխական մտքերը և երազանքները սիրահարված աղջկա, որ փոխ էր առել ինքն իրենից։ Ապա նրան թաքուն տալիս էր ֆրանսիական վեպեր, բանաստեղծություններ, պոեմներ։ Դրանք մեծ մասամբ գրքեր էին, որ լույս էին տեսել 1830 թվականից հետո։ Այդ գրքերը, բոլոր թերություններով հանդերձ, ուժգնորեն արթնացնում էին միտքը և հրով ու ոգիով մկրտում ջահել սրտերը։ Այդ ժամանակվա վեպերում և վիպակներում, պոեմներում ու երգերում,— գրողի կամոք, թե ոչ,— ամենուր ուժգին բաբախում էր սոցիալական զարկերակը, ամենուր մերկացվում էին հասարակական վերքերը, ամենուր լսվում էր քաղցից ճզմված անմեղ տաժանակիրների աշխատանքի հառաչանքը. այն ժամանակ դեռևս այդ արտունչքից ու այդ հառաչանքից չէին վախենում՝ իբրև հանցագործությունից։

Ինքնին հասկանալի է, որ «զարմուհին» գրքերը տալիս էր առանց որևէ ընտրության, առանց որևէ բացատրության, և ես կարծում եմ, որ այդտեղ վնասակար բան չկար. խառնվածքներ կան, որոնց երբեք պետք չէ ուրիշի օգնությունը, նեցուկը, ցուցումը, որոնք ամենից լավ բացվում են այնտեղ, ուր վանդակ չկա։

Շուտով ավելացավ կորշևյան զարմուհու աշխարհիկ ազդեցությունը շարունակող մի այլ անձնավորություն։ Իշխանուհին, վերջապես, որոշեց դաստիարակչուհի վերցնել և, որպեսզի էժան վճարի, հրավիրեց ինստիտուտը նոր ավարտած մի երիտասարդ ռուս աղջկա։

Ռուս դաստիարակչուհիները մեզանում շրի գին ունեն, համենայն դեպս այդպես էր երեսնական թվականներին, այնինչ բոլոր թերություններով հանդերձ՝ նրանք դարձյալ ավելի լավն են Շվեյցարիայից եկած ֆրանսուհիների՝ ան-

ժամկետ արձակված թեթևաբարո կոմունց ու պաշտոնաթող դերասանուհիների մեծ մասից, որոնք հուսահատությունից նետվում են դաստիարակության ասպարեզ՝ որպես հանապազօրյա հաց հայթայթելու վերջին մի միջոցի,— միջոց, որի համար ոչ տաղանդ, ոչ երիտասարդություն՝ ոչինչ հարկավոր չէ, բացի «դ» առոգանությունից և d'une dame de comptoir[1] շարժուձևից, որը մեր գավառներում հաճախ ընդունվում է իբրև «լավ» վարվելակերպ։ Ռուս դաստիարակչուհիները շրջանավարտներ են ինստիտուտների կամ կրթարանների. ուրեմն և, այնուամենայնիվ, ունեն ինչ-որ ճիշտ դաստիարակություն և գերծ են այն քաղքենիական pli[2]-ից, որ արտահանում են օտարերկրուհիները։

Այժմյան ֆրանսիացի դաստիարակչուհիներին չպետք է նույնացնել նրանց հետ, ովքեր Ռուսաստան էին գալիս մինչև 1812 թվականը։ Այն ժամանակ թե՛ Ֆրանսիան էր ավելի պակաս քաղքենիական և թե՛ եկող կանայք էին բոլորովին այլ խավից։ Նրանք մասամբ վտարականների, քայքայված ազնվականների դուստրեր էին, սպաների այրիներ, հաճախ՝ դրանց լքված կանայք։ Նապոլեոնը ամուսնացնում էր իր զինվորներին, ինչպես մեր կալվածատերերն են ամուսնացնում իրենց ճորտերին՝ առանձնապես չհոգալով սիրո և ճաշակի մասին։ Նա ուզում էր ամուսնություններով վառոդի ազնվականությանը մերձեցնել հին ազնվականությանը. նա ուզում էր իր Սկալոզուբներին հղկել ամուսնություններով։ Կույր հնազանդությանը սովոր՝ նրանք ամուսնանում էին առանց հակառակության, բայց շուտով լքում էին իրենց կանանց, գտնելով, որ նրանք խիստ անպատշաճ են զորանոցային ու ճամբարային երեկույթների համար։ Եթե կանայք քարշ էին գալիս Անգլիաներ, Ավստրիաներ, Ռուսաստաններ։ Նախկին դաստիարակչուհիներից էր իշխանուհու մոտ հյուրընկալվող ֆրանսուհին։ Նա խոսում էր ժպտալով, ընտիր ոճով և երբեք չէր գործածում ոչ մի ուժեղ արտահայտություն։ Նա ասում էր լավ վարվելակերպ էր և երբեք ոչ մի բառի չէր կորցնում իրեն։ Հաստատված եմ, որ նա գիշերը անկողնում ավելի շատ դասավանդում էր, թե ինչպես պիտի քնել, քան թե քնում էր։

Երիտասարդ շրջանավարտուհին խելացի, ժիր, եռանդուն աղջիկ էր, պանսիոնական խանդավառությունն ու ազնվությունն բնածին զգացմունքն էլ հետը։ Գործնական ու բանկուն՝ նա շատ ավելի կյանք ու շարժում մտցրեց սանուհի-ընկերուհու գոյության մեջ։

Վհատ, թախծոտ բարեկամությունը դալկացող Սաշայի հետ՝ տխուր, սգավոր ցոլք ուներ։ Այդ բարեկամությունը, սարկավագի խոսքերի ու որևէ զվարճանքի չգոյության հետ մեկտեղ, հեռու էր պահում ջահել աղջկան աշխարհից, մարդկանցից։ Երրորդ կենդանի, ուրախ, երիտասարդ ու դրա հետ մեկտեղ ամենայն երազայինին ու ռոմանտիկայինին կարեկցող անձնավորությունը շատ ի դեպ էր. նա քաշում էր դեպի երկիր, դեպի իրական, իսկական հողը։

Ակզբում աշակերտուհին յուրացրեց էմիլիայի մի քանի արտաքին ձևերը. ժպիտն սկսեց ավելի հաճախ երևալ, խոսակցությունը դարձավ ավելի աշխույժ, բայց մի տարի անց երկու աղջիկների բնավորությունները հատկանշվեցին քսան տեսակարար կշռի։ Ցրված, քնքուշ էմիլիան խոնարհվեց ուժեղ էակի առջև ու լրիվ ենթարկվեց աշակերտուհուն, նայում էր նրա աչքերով, խորհում նրա մտքերով, ապրում նրա ժպիտով, նրա բարեկամությամբ։

Դասընթացն ավարտելուց առաջ ես սկսեցի ավելի հաճախ գնալ իշխանուհու տուն։ Ջահել աղջիկը, թվում էր, ճախ գնալ իշխանուհու տուն։ Ջահել աղջիկը, թվում էր, ճախ գնալ իշխանուհու տուն։ Ջահել աղջիկը, թվում էր, երբեմն այտերը բոցաշուրթանում էր՝ երբ ես գալիս էի, երբեմն այտերը բոցաշուրթանում էր՝ երբ ես գալիս էի, երբեմն այտերը բոցաշուրթանում էր՝ երբ ես գալիս էի, երբեմն այտերը բոցաշուրթանում էր՝ երբ ես գալիս էի, խոսքն աշխուժանում էր, բայց նա անմիջապես ընկնում էր իր սովորական, մտածկոտ հանգստության մեջ, հիշեցնելով անդրու սառը գեղեցկությունը կամ Շիլլերի՝ ամեն մի մերձավորություն կասեցնող «տարաշխարհի վրայինը»։

Գա ոչ օտարացում էր, ոչ սառնություն, այլ ներքին աշխատանք. այլոց համար օտար՝ նա ինքն իրեն էլ էր օտար և ավելի շատ կանխազգում էր, քան գիտեր, թե ի՞նչ կա իր մեջ։ Նրա չքնաղ դիմագծերում անավարտ, չարտահայտված ինչ-որ բան կար, այդ դիմագծերին պակասում էր մի կայծ, հատիլի մի հարված, որը որոշելու էր՝ ուժեղ

[1] գործակատարուհու (ֆրանս.)։
[2] նրանց (ֆրանս.)։

սեղանի՞ պիտի նա, թառամի՞ ավազուտ հողում, չճանաչված ո՛չ իրեն, ո՛չ էլ կյանքը, թե՞ պիտի արտացոլի կրքի հուրը, համակվի դրանով ու ապրի,— գուցեև տանջվի, նույնիսկ անպայմա՛ն տանջվի, բայց լիարյուն ապրի:

Նրա կիսամանկական դեմքին հայտնված կյանքի դրոշմը առաջինը ես նկատեցի երկարատև անջատման նախօրեին։

Հիշարժան են ինձ համար այլակերպ լուսավորված այդ հայացքը և բոլոր դիմագծերը, որ հանկարծ փոխել էին իրենց նշանակությունը, ասես տոգորվել ուրիշ մի իմաստով, այլ մի կրակով... կարծես գաղտնիքը լուծված է ու ներքին մշուշը՝ ցրված։ Դա բանտում էր։ Տասն անգամ մենք հրաժեշտ էինք տալիս ու չէինք ուզում բաժանվել, վերջապես, մայրս, որ Natalie-ի[1] հետ եկել էր Կրուտիցի, վճռական վեր կացավ գնալու։ Աղջիկը ցնցվեց, գունատվեց, իր ուժից վեր ամուր սեղմեց ձեռքս ու շրջվելով, որ թաքցնի արցունքները, կրկնեց. «Ալեքսանդր, չմոռանա՞ս քրոջդ»։

Ժանդարմը ճանապարհեց նրանց և սկսեց ետ ու առաջ անել։ Ես նեռվեցի անկողնու վրա ու երկար նայում էի գռանը, որի ետևում անհետացավ այդ լուսե էակը։ «Ո՛չ, քո եղբայրը չի՞ մոռանա քեզ»,— ասում էի ես մտքումս։

Հաջորդ օրն ինձ տարան Պերմ. բայց նախքան բաժանվելս խոսելս՝ կպատմեմ, թե ուրիշ էլ ի՞նչ էր բանտից դուրս գալուս՝ ինձ ավելի լավ հասկանալու Natalie-ին, ավելի շատ մտերմանալու նրան։ Ես սիրահարվա՞ծ էի։

Այո՛, ես սիրահարված էի, և այդ պատանեկան, մաքուր սիրո հուշն ինձ համար թանկ է, ինչպես հիշողությունը գարնանային զբոսանքի՝ ծովափին, ծաղկանց ու երգերի մեջ։ Դա մի երա՞զ էր, որ բազում գեղեցկություններ պարգևեց ու չքացավ, ինչպես սովորաբար չքանում են երազները։

Արդեն ասել եմ, որ քիչ կանայք կային մեր ողջ շրջապատում, հատկապես այնպիսիք, որոնց հետ ես մոտ լինեի. կորչելյան զարմուհուս հետ սկզբում կրակոտ իմ բարեկամությունը կամաց-կամաց հավասարակշիռ բնույթ ընդունեց, նրա ամուսնությունից հետո մենք տեսնվում էինք հազվադեպ, հետո նա մեկնեց։ Ավելի ջերմ, ավելի քնքուշ մի զգացմունքի պահանջը, քան մեր տղամարդկային բարեկամությունն է, անորոշ եռում էր սրտիս մեջ։ Ամեն ինչ պատրաստ էր, պակասում էր լոկ «նա»։ Մեր ծանոթ տնեցիներից մեկում կար ջահել մի աղջիկ[1], որի հետ ես շուտով մտերմացա, տարօրինակ մի պատահար մոտեցրեց մեզ։ Նա նշանված էր, հանկարծ ինչ-որ գժտություն ծագեց, փեսացուն թողեց նրան ու գնաց Ռուսաստանի մյուս ծայրը։ Նա հուսահատության մեջ էր, վշտացած, վիրավորված. անկեղծ ու խորին կարեկցանքով էի տեսնում ես, թե ինչպես էր դժբախտությունը մաշում նրան. սիրտ չանելով ձայն հանել պատճառի մասին, ես ջանում էի ցրել նրա մտքերը, սփոփել նրան, վեպեր էի տանում, ինքս կարդում էի՝ բարձրաձայն, պատմություններ էի պատմում ու երբեմն էլ բոլորովին չէի պատրաստվում համալսարանական դասախոսություններին, որպեսզի ավելի երկար նստեմ վշտացած աղջկա կողքին։

Կամաց-կամաց նրա արցունքները պակասեցին, երբեմն դրանց միջից փայլում էր ժպիտը. նրա հուսահատությունը կամաց-կամաց հավասարակշիռ բնույթ ընդունեց, նրա ամուսնությունից հետո մենք տեսնվում էինք հազվադեպ, հետո նա մեկնեց։ Ավելի ջերմ, ավելի քնքուշ մի զգացմունքի պահանջը, քան մեր տղամարդկային բարեկամությունն է, անորոշ եռում էր սրտիս մեջ։ Ամեն ինչ պատրաստ էր, պակասում էր լոկ «նա»։ Մեր ծանոթ տնեցիներից մեկում կար ջահել մի աղջիկ[1], որի հետ ես շուտով մտերմացա, տարօրինակ մի պատահար մոտեցրեց մեզ։ Նա նշանված էր, հանկարծ ինչ-որ գժտություն ծագեց, փեսացուն թողեց նրան ու գնաց Ռուսաստանի մյուս ծայրը։ Նա հուսահատության մեջ էր, վշտացած, վիրավորված. անկեղծ ու խորին կարեկցանքով էի տեսնում ես, թե ինչպես էր դժբախտությունը մաշում նրան. սիրտ չանելով ձայն հանել պատճառի մասին, ես ջանում էի ցրել նրա մտքերը, սփոփել նրան, վեպեր էի տանում, ինքս կարդում էի՝ բարձրաձայն, պատմություններ էի պատմում ու երբեմն էլ բոլորովին չէի պատրաստվում համալսարանական դասախոսություններին, որպեսզի ավելի երկար նստեմ վշտացած աղջկա կողքին։

Կամաց-կամաց նրա արցունքները պակասեցին, երբեմն դրանց միջից փայլում էր ժպիտը. նրա հուսահատությունը

---

[1] Ես շատ լավ գիտեմ, թե ինչքան շինծուություն կա անունների ֆրանսերեն թարգմանության մեջ, բայց ի՞նչ անես. անունն ավանդական բան է, ինչպե՞ս փոխես։ Ըստ որում, բոլոր ոչ սլավոնական անունները մեզանում մի տեսակ սղված են ու նվազ հնչեղ,— մենք, մասամբ դատապարտված «ազ հայրենական օրենքով», մեր երիտասարդության օրերին «ռոմանտիկանացնում էինք» անունները, բարձրագույն իշխանությունները «սլավոնացնում են» դրանք։ Աստիճանի բարձրացման և արքունիքում ուժ ձեռք բերելուն զուգընթաց փոխվում են անվան տառերը. այսպես, օրինակ՝ կոմս Ստրոգանովը՞ մինչև կյանքի վերջը մնաց Սերգեյ Գրիգորևիչ, բայց իշխան Գոլիցինը միշտ անվանվում էր Սերգեյ Միխայլովիչ։ Այս ասպարեզում վերջին վերափոխումը մենք նկատեցինք դեկտեմբերի 14-ի գործով նայտնի գեներալ Ռոստովցևի մոտ։ Նիկոլայ Պավլովիչի ողջ թագավորության ընթացքում նա Ցակով էր, այնպես, ինչպես Ցակով Դոլգորուկին, բայց Ալեքսանդր II-ի գահակալությունից սկսած նա դարձավ Իակով, այնպես, ինչպես տյառնեղբայրս (ծանոթ Ա. Ի. Գերցենի)։

point d'honneur'a[1]-ից, ինչպես ռազմիկն է պաշտպանում դրոշը, հասկանալով, որ ճակատամարտը տանուլ է տրված։ Ես տեսնում էի երկնակամարի վրա հազիվ մնացած այդ վերջին ամպերը և, ինքս էլ հրապուրված ու բարախուն սրտով կամաց-կամաց դուրս էի քաշում նրա ձեռքից դրոշը, իսկ երբ նա դադարեց դրոշը բռնելուց՝ ես սիրահարված էի։ Մենք հավատում էինք մեր սիրուն։ Նա ինձ ոտանավորներ էր գրում, ես նրան արձակով գրում էի ամբողջ դիսերտացիաներ, իսկ հետո միասին երազում էինք ապագայի, աքսորի, բանտախցերի մասին. նա ամեն ինչի պատրաստ էր։ Կյանքի արտաքին կողմը երբեք լուսավոր չէր պատկերանում մեր երազանքների մեջ. մենք գատապարտված էինք պայքարելու հրեշավոր ուժի դեմ, և հաջողությունը մեզ թվում էր գրեթե անհնարին։ «Եղիր իմ Գայետանան»,— ասում էի ես նրան, կարդալով Սանտինի «Խեղանդամը», և երևակայում էի, թե նա ինչպես է ուղեկցում ինձ դեպի սիբիրյան հանքերը։

«Խեղանդամը» այն պոեմն էր, որ պասկվիլ էր գրել Սիքստոս V-ի դեմ և մատնել էր իրեն, երբ պապը խոսք էր տվել մեղավորին մահապատժի չենթարկել։ Սիքստոս V-ը կարգադրեց կտրել նրա ձեռքերն ու լեզուն։ Կերպարը դժբախտ տառապյալի, որը շնչահեղձ էր լինում իր գլխում կուտակված ու ելք չգտնող մտքերի սեփական առատությունից, չէր կարող դուր չգալ մեզ այն ժամանակ։ Տառապյալի տխուր ու հոգնատանջ հայացքը հանգստանում էր և երախտապարտությամբ ու խնդության փշրանքներով կանգ էր առնում միայն այն աղջկա վրա, որը սիրել էր նրան նախկինում և չէր դավաճանել գժբախտության մեջ. նրա անունն էլ հենց Գայետանա էր։

Սիրո այդ առաջին փորձը շուտ անցավ, բայց միանգամայն անկեղծ էր։ Թերևս, այդ սերը պետք է որ անցներ էլ, այլապես նա կզրկվեր իր լավագույն, ամենաանուշաբույր արժանիքից, իր տասնիններորդ հասակից, իր անարատ թարմությունից։ Այդ ե՞րբ են հովտաշուշանները ձմեռում։

Եվ մի՞թե դու, իմ Գայետանա՞, պարզ ժպիտով չես հիշում մեր հանդիպումը, մի՞թե ինչ-որ դառնություն է խտանում իմ հիշատակին՝ քառասներկու տարի անց։ Դա շատ ցավալի կլիներ ինձ համար։ Եվ որտե՞ղ ես դու։ Եվ ո՞նց ապրեցիր քո կյանքը։

Ես իմն ապրեցի-պրծա ու քարշ եմ գալիս հիմա լեռնիվար՝ կոտրված ու բարոյապես «խեղանդամված», չեմ փնտրում ոչ մի Գայետանա, քրքրում եմ անցյալս, և հիշողությունը քո մասին խնդությամբ համակեց ինձ... Հիշո՞ւմ ես անկյունի պատուհանը փոքրիկ նրբանցքի դեմ, դեպի ուր ես պիտի թեքվեի, դու միշտ մոտենում էիր պատուհանին՝ հրաժեշտ տալով ինձ, և ինչպե՞ս պիտի վշտանայի, եթե դու չմոտենայիր կամ հեռանայիր ավելի շուտ, քան ես կթեքվեի։

Իսկ քեզ հանդիպել ես իրո՞ք չէի ուզենա։ Դու իմ երևակայության մեջ մնացել ես քո ջահել դեմքով, քո blond cendré[1] գանգուրներով. այդպիսին էլ մնա. չէ՞ որ դու էլ, եթե մտաբերում ես ինձ, հիշում ես վայելչակազմ պատանուն՝ բոցկլտուն հայացքով, կրակոտ խոսքով. այդպես էլ հիշիր և մի իմանա, որ հայացքս մարել է, որ ես ծանրացել եմ, որ կնճիռները պատել են ճակատս և վաղուց չկա դեմքս, որ քիթս առաջվա պայծառ ու աշխույժ արտահայտությունը, որը Օգարյովն անվանում էր «հուսո արտահայտություն», ասենք հա՞ւյն էլ չկա։

Մեկս մյուսիս համար մենք պիտի լինենք այնպիսին, ինչպիսին այն ժամանակ էինք... ո՛չ Աքիլլեսը, ո՛չ Դիանչպիսին այն ժամանակ չեն ծերանում... Չեմ ուզում քեզ հետ հանդիպել այնպես, ինչպես էարինան՝ իշխանադուստր Ալինայի հետ.

Կուզինա, հիշո՞ւմ ես Գրանդիսոնին։
Ի՞նչ, Գրանդիսոնի՞ն... Գրանդիսոնին, հա՞,
Հիշում եմ, հիշում։ Որտե՞ղ է հիմա։
Սիմոնի մոտ, Մակվայում կրկին։
Ճրագալույսին նա ինձ այցելեց,
Ոչգուն էլ վերջիս ամուսնացրեց։

... Հանգչող սիրո վերջին բոցը մի պահ լուսավորեց բանտի կամարը, ջերմացրեց կուրծքս նախկին եռագանգ-

1 պասքվի սեփական բերանումից (ֆրանս.)։

1 մոխրագույն (ֆրանս.)։

ներով, և ամեն մեկս գնացինք մեր ճանապարհով։ Նա մեկնեց Ուկրաինա, ես պատրաստվում էի աքսորվի։ Այդ ժամանակվանից լուր չկար նրանից։

## ԳԼՈՒԽ XXI

### Բաժանում

Ա՛խ մարդիկ, չա՜ր մարդիկ,
Ո՜ւր նրանց... բաժանեցիք։

Այսպես էր ավարտվում իմ առաջին նամակը Natalie-ին, և հատկանշական է, որ «սրտերը» բառից վախեցած՝ չգրեցի այդ բառը, այլ նամակի վերջում գրեցի՝ «Քո եղբայրը»։

Թե ինչքա՜ն թանկ էր ինձ համար արդեն այն ժամանակ իմ Ֆույրը ու մտքիս մեջ էր անվերջ՝ երևում է այն բանից, որ ես գրում էի նրան Նիժնիից, Կազանից և Պերմ գալուս հենց մյուս օրը։ Ֆույր բառն արտահայտում էր մեր համակրանքի մեջ եղած ողջ գիտակցականը. այդ բառն ինձ անսահման դուր էր գալիս և հիմա էլ է դուր գալիս, գործածվելով ոչ իբրև սահման, այլ, ընդհակառակը, որպես սահմանների խառնուրդ, այդ բառի մեջ համակցված են բարեկամությունը, սերը, արյունակցական կապը, ընդհանուր ավանդույթը, հարազատ իրադրությունը, սովորական դարձած անքակտելիությունը։ Ես ոչ մեկին առաջ այդ անունը չէի տվել, և այնպես թանկ էր այն ինձ համար, որ հետո էլ հաճախ Natalie-ին այդպես էի անվանում։

Նախքան մեր հարաբերությունը լիովին հասկանալս, և թերևս հենց լիովին չհասկանալուս համար՝ ինձ սպասում էր մի այլ գայթակղություն,— որը չդարձավ այնպես լուսաշերտ, ինչպես հանդիպումը Գայետանայի հետ,— գայթակղություն, որն ընկճեց ինձ և շատ տխրություն ու ներքին տագնապ պատճառեց։

Նվաղ կենսափորձով, նետված ինձ միանգամայն խորթ մի աշխարհ՝ իննամսյա բանտարկությունից հետո, ես ապրում էի սկզբում ցրված, առանց երկար-բարակ խորհելու. նոր երկրամասը, նոր իրադրությունը խայտում էին աչքիս առաջ։ Իմ հասարակական դրությունը փոխվեց։ Պերմում, Վյատկայում ինձ նայում էին բոլորովին այլ կերպ, քան Մոսկվայում. այնտեղ ես ծնողներիս տանն ապրող մի երիտասարդ էի, այստեղ, այս ճահճում, ես կանգնեցի սեփական ոտքերիս վրա, ընդունվում էի որպես պաշտոնյա, թեև ամենևին էլ այդպիսին չէի։ Ինձ համար դժվար չէր ուսհել, որ ես հեշտությամբ կարող էի բարձրաշխարհիկ մարդու դեր խաղալ անդրվոլգյան ու անդրկամայան հյուրասենյակներում և Վյատկայի հասարակության կուռքը լինել։

Պերմում ես չհասցրեցի չորս բոլորս նայել, այնտեղ միայն տանտիրուհին, որի մոտ եկա բնակարան վարձելու, հարցրեց՝ պետք չէ՞, արդյոք, ինձ բանջարանոց, կով պիտի պահե՞մ։ Մի հարց, որով ես սարսափով չափեցի իմ անկման աստիճանը՝ ուսանողական կյանքի ակադեմիական բարձունքներից։ Բայց Վյատկայում ես ծանոթացա ողջ բարձր հասարակության հետ, հատկապես երիտասարդ վաճառականության, որն այդտեղ ներքին նահանգների վաճառականությունից շատ ավելի զարգացած է, թեև պակաս քիֆլի չէ։ Գրասենյակի պատճառով իմ պարապմունքներից զրկված՝ ես անհանգիստ պարապ կյանք էի վարում. բնավորությանս դյուրագրգռության կամ ավելի ճիշտ՝ դյուրաշարժության և փորձառության բացակայության պատճառով կարելի էր սպասել ամեն տեսակի ընդհարումներ։

De L'approbativité[1] կոկետ մղումով ես ջանում էի հաճոյանալ աջ ու ձախ՝ ո՛ւմ ուզում է լինի, համակրանք էի ձեռքբերում, մի երկու խոսքից բարեկամանում էի, մտերմանում ավելի, քան պետք էր, մի երկու ամսից գիտակցում էի պակաս, լրում նրբանկատությունից ու քարշ տալիս կեղծ հարաբերությունների տաղտկալի շղթան՝ մինչև որ կտրվեր անմիտ մի վեճից, որի համար հենց ինձ էլ մեղադրում էին՝ կամակոր անհանդուրժողության, երախտամոռության, փոփոխամտության մեջ։

Սկզբում Վյատկայում մենակ չէի ապրում։ Տարօրինակ ու կոմիկ մի անձ, որ ժամանակ առ ժամանակ երևում է իմ կյանքի բոլոր խաչմերուկներում, բոլոր կարևոր իրադար-

[1] դուր գալու (ֆրանս.)։

ձուքյուններում, անձ, որը խեղդվում էր, որ ինձ՝ ծանոթանի Օգարյովի հետ և թափահարում էր թաշկինակը ուղարկողից, երբ ես անցնում էի Տաուրոգենի սահմանը,— մի խոսքով՝ Կ. Ի. Զոնենբերգը ապրում էր ինձ հետ Վյատկայում. ես մոռացա այդ՝ իմ աքսորի մասին պատմելիս։

Այսպես եղավ.— Ինձ Պերմ ուղարկելու ժամանակ Զոնենբերգը պատրաստվում էր գնալու Իրբիտի տոնավաճառ։ Հայրս, որ սիրում է հասարակ գործերը միշտ բարդացնել, առաջարկեց Զոնենբերգին՝ մտնել Պերմ ու այնտեղ մոնտաժել իմ տունը, փոխարենը նա իր վրա էր վերցնում ճանապարհածախսը։

Պերմում Զոնենբերգը եռանդով գործի անցավ, այսինքն՝ ձեռնամուխ եղավ անպետք իրեր, ամեն տեսակ ամանեղեն, կաթսաներ, բաժակներ, բյուրեղապակի, պաշար գնելու. նա անձամբ գնում էր Օբվա, որպեսզի ex ipso fonte[1] ձեռք բերի Վյատկայի ձի։ Երբ ամեն ինչ պատրաստ էր՝ ինձ փոխադրեցին Վյատկա։ Մենք կես գնով ծախծխեցինք գնված բարիքն ու թողինք Պերմը։ Զոնենբերգը, բարեխղճորեն կատարելով հորս կամքը, անհրաժեշտ համարեց գալ նաև Վյատկա՝ «մոնտաժելու» իմ տունը։ Հայրս այնքան գոհ էր նրա նվիրվածությունից ու ինքնազոհաբերությունից, որ նրան հարյուր ռուբլի ամսական նշանակեց՝ քանի մոտս կլինի։ Դա Իրբիտից ավելի շահավետ և հուսալի էր,— և նա չէր շտապում թողնել ինձ։

Վյատկայում նա գնեց արդեն ոչ թե մի, այլ երեք ձի, որոնցից մեկը պատկանում էր իրեն, թեև նույնպես գնված էր հոբ փողով։ Այդ ձիերը շափազանց բարձրացրին մեզ Վյատկայի հասարակության աչքում։ Կարլ Իվանովիչը մենք արդեն ասել ենք, չնայած իր հիսնամյա տարիքին ու դեմքի զգալի թերություններին, մեծ կնամոլ էր և ուներ այդ հատկության հատուկությունը, որ իրեն մատնացույց անեն մի-կին ու աղջիկ ենթարկվում է վառվող մոմի շուրջը պտտվող թիթեռների փոանգին։ Ձիերի թողած տպավորությունը Կարլ Իվանովիչը չէր ուզում ձեռքից բաց թողնել և ջանում էր օգուտ քաղել դրանից՝ տարփանքի մարզում։ Ըստ արտաքին, բոլոր

[1] բուն աղբյուրից (լատ.)։



նախապատրաստությունները նրան նպաստում էին. մենք բակ նայող մի պատշգամբ ունեինք, բակից հետո սկսվում էր այգին։ Ամավոտվա ժամը տասից Զոնենբերգը, կազանյան իշիկ-ձեռավոտվա ժամը տասից Զոնենբերգը, կազանյան իշիկ-ձեռով, ոսկեկար տիբիտեյկայով ու կովկասյան բեշմետը վրան, մեծ սաթե ծխամորճը բերանին՝ նստում էր պահակատում, ձևացնելով, թե կարդում է։ Տիբիտեյկան և սաթը,— այդ բոլորը հարևան տանն ապրող երեք աղջիկ-պարոնների համար էր։ Աղջիկ-պարոններն իրենց հերթին զբաղվում էին եկվորներով. և հետաքրքրությամբ գնում էին պատշգամբում ծխող արևելյան տիկնիկին։ Կարլ Իվանովիչը գիտեր ե՛րբ և ինչպե՛ս են նրանք թաքուն բարձրացնում վարագույրը, գտնում էր, որ իր գործերը հաջող են գնում,— և քնքշորեն թեթև քուլաներով բաց էր թողնում ծուխը բաղձալի ուղղությամբ։

Շուտով այգին հնարավորություն ընձեռեց մեզ՝ ծանոթանալու հարևանուհիների հետ։ Մեր տանտերն ուներ երեք թոռնուհի, այգին ընդհանուր էր։ Երկու տներն զբաղված էին, մեկում ապրում էինք մենք և ինքը տանտերը, խորթ մոր՝ հաստ ու փափլիկ այրու հետ, որն այնպես մայրաբար ու այնպես խանդով էր հետևում նրան, որ սա միայն նրանից թաքուն էր խոսում այգու տիկինների հետ։ Երկրորդում ապրում էին աղջիկ-պարոնները՝ իրենց ծնողների հետ, երրորդում տունը դատարկ էր։ Կարլ Իվանովիչը մի շաբաթից արդեն տանուտարդ էր մեր այգու կանանց հասարակության մեջ, նա միշտ օրը մի քանի ժամ աղջիկ-պարոններին ճոճում էր ճոճանակով, վազում էր թիկնոց ու հովանոց բերելու, մի խոսքով՝ aux petit soins[1]։ Աղջիկ-պարոնները նրա հետ ավելի էին սեթևեթում, քան ուրիշների, հենց այն պատճառով, որ նրան ավելի քիչ կարելի էր կասկածել, քան Կեսարի կնոջը. նրան նայելիս կուլ էր գնում ամեն մի, անգամ ամենահանդուգն շարախոսությունը։

Եբեկոները ես էլ էի այդի գնում այն նախրային զգացումով, որի մղումով մարդիկ առանց որևէ ցանկության անում են նույն բանը, ինչ ուրիշները։ Այնտեղ, կենվորներից բացի, գալիս էին նրանց ծանոթները, զբաղմունքի և խոսակ-

[1] ջանում էր ամեն կերպ հաճոյանալ (ֆրանս.)։

ցությունների գլխավոր առարկան կնամոլությունն էր մի միայնց հետամտելը։ Կարլ Իվանովիչը Վիդոկի անխոնջությամբ տրվել էր սենտիմենտալ լրտեսության, գիտեր ով ում հետ է ավելի հաճախ զբոսնում, ո՛վ ո՛ւմ է ուրիշ աչքով նայում։ Ես մի ահավոր գայթակղության քար էի մեր այգու ողջ գաղտնի ոստիկանության համար, տիկիններին ու տղամարդկանց զարմացնում էր իմ գաղտնապահությունը, և ամբողջ ջանադրությամբ հանդերձ չէին. կարողանում բացահայտել, թե ես ո՛ւմ եմ սիրահետում, ո՛վ է ինձ հատկապես դուր գալիս, մի բան, որ իսկապես էլ հեշտ չէր. ես ոչ մեկին էլ չէի ծիրահետում, և բոլոր աղջիկ-պարոններն էլ ինձ առանձնապես դուր չէին գալիս։ Դա, ի վերջո, նրանց ձանձրացրեց ու վիրավորեց, ինձ սկսեցին համարել գոռոզ, ծաղրաբան, և աղջիկ-պարոնների բարեկամությունը նկատելիորեն սառեց,— չնայած առանձնության մեջ ամեն մեկն ինձ վրա փորձում էր իր ամենավտանգավոր հայացքը։

Այս բոլոր հանգամանքների արանքում, մի առավոտ, Կարլ Իվանովիչն ինձ հայտնեց, որ տան խոհարարուհին առավոտվանից բաց է արել երրորդ տան փեղկերը և լվանում է լուսամուտները։ Տունն զբաղեցրել էր ինչ-որ եկվոր ընտանիք։

Այգին սկսեց զբաղվել բացառապես նորեկներին վերաբերող մանրամասնություններով։ Անծանոթ տիկինը, ճամփից հոգնած կամ դեռևս տունը կարգի բերելով զբաղված լինելով, հակառակի նման, չէր երևում մեր զբոսավայրում։ Նրան չանում էին տեսնել պատուհանի առաջ կամ գավթում, ոմանց հաջողվում էր, մյուսներն օրերով ապարդյուն հետևում էին, տեսնողները գտնում էին, որ նա գունատ է, տանջահար, մի խոսքով՝ հետաքրքիրն է ու լավիկը։ Աղջիկ-պարոններն ասում էին, որ նա թախծոտ է ու հիվանդոտ։ Եկվորներին ճանաչում էր միայն երիտասարդ նահանգային չինովնիկը, թեթևաբարո և ամենևին էլ ոչ անխելքի մեկը։ Սա առաջ ծառայել էր նրանց հետ նույն նահանգում, ամենքն սկսեցին հարցակոխ անել նրան։

Ճարպիկ չինովնիկը, գոհ, որ գիտի այն, ինչ մյուսները չգիտեն, անվերջ խոսում էր նորեկ կնոջ արժանիքներից. փառաբանում էր նրան, անվանում մայրաքաղաքի տիկին։



— Խելացի է,— կրկնում էր նա,— անուշիկ, ուսյալ, Ներոնց վրա իսկի չի էլ նայի։ Օ՜, աստված իմ,— ավելացրեց նա, հանկարծ դառնալով ինձ,— ա՛յ հրաշալի միտք՝ գնացեք Վյատկայի հասարակության պատիվը, սիրաբանեցեք նրան... դե՛, դուք Մոսկվայից եք, աքսորավայրում, հաստատ ոտանավորներ եք գրում. սա երկնքից մի պարգև է ձեզ։

— Ի՞նչ հիմարություն եք դուրս տալիս,— ասացի նրան ծիծաղելով, բայց դեմքս շառագունեց, ես ուզեցի տեսնել այդ կնոջը։

Մի քանի օր անց նրան հանդիպեցի այգում, նա իրոք էլ շատ հետաքրքիր խարտյաշ մի կին էր. հենց նույն պարոնը, որը խոսում էր նրա մասին, ներկայացրեց ինձ նրան, ես հուզված էի և նույնքան քիչ կարողացա թաքցնել այդ, որքան իմ խնամակալը՝ իր ժպիտը։

Ինքնասեր ամոթխածությունս անցավ, ես ծանոթացա նրա հետ,— նա շատ դժբախտ էր և, ինքն իրեն խաբելով թվացյալ հանգստությամբ, տառապում ու մաշվում էր սրտի դատարկությունից։

Բ.-ն մեկն էր այն կանացի ինքնամփոփ-կրքոտ բնավորություններից, որոնք պատահում են միայն խարտյաշուհիների մեջ, նրանց կրակոտ սիրտը քողարկված է մեղմ ու հիների մեջ, նրանց կրակոտ սիրտը քողարկված է մեղմ ու հանգարտ դիմագծերով. նրանք սփրթնում են հուզմունքից, և նրանց աչքերը ոչ թե կայծկլտում են, այլ ավելի շուտ մառում՝ երբ զգացմունքները հորդում են ափերից։ Նրա հոգում՝ երբ զգացմունքները հորդում են ափերից։ Նրա հոգում՝ նրա հայացքը ինչ-որ բանի ձգտումից ուժասպառվում էր, նրա հայացքը ինչ-որ բանի ձգտումից ուժասպառվում էր, անհագուրդ սիրտը՝ անհամաչափ բաբախում։ Նրա ողջ էությունը՝ անհանգիստ, էլեկտրական մի բան կար։ Հաճախ, այդպես զբոսնելիս, նա հանկարծ գունատվում էր և, ներքևում

Ամուսինը համարյա դուրս չէր գալիս սենյակից. պառանհոգի մի ծերուկ էր, կալվածատիրության հավակնող մի չինովնիկ, դյուրագրգիռ՝ ինչպես բոլոր հիվանդները և ինչպես համարյա բոլոր այն մարդիկ, ովքեր կորցրել են հարստությունը։ Բ.-ն տասնվեց տարեկան էր, երբ ամուսնացրին, ամուսինը ունևոր էր, բայց հետագայում բոլորը տանուլ տվեց թղթախաղում և ստիպված եղավ ապրել ծառայությամբ։ Վյատկա փոխադրվելուց մի երկու տարի առաջ սկսեց տկարանալ, ոտքի վերքը վերաճում էր ոսկրախտի, ծերուկը դարձել էր խոժոռ ու ծանրաշարժ, վախենում էր իր հիվանդությունից և տագնապալի ու անզոր կասկածամտությամբ էր նայում իր կնոջ վրա։ Կինը նոխուր ու անձնազոհ խնամում էր նրան, բայց դա պարտքի կատարում էր։ Երեխաները չէին կարող բավարարություն տալ բոլոր զգացմունքներին. ամայի սիրտը ինչ-որ բանի էր ձգտում։

Մի երեկո, դեսից-դենից խոսելիս, ես ասացի, որ շատ կուզենայի զարմուհուս ուղարկել իմ դիմանկարը, բայց չեմ կարողացել Վյատկայում գտնել մատիտ բռնող մի մարդ։

— Եկեք ես փորձեմ,— ասաց Հարևանուհիս,— մի ժամանակ բավական հաջող դիմանկարներ էի անում սև մատիտով։

— Շատ ուրախ եմ։ Իսկ ե՞րբ գամ։

— Վաղը ճաշից առաջ, եթե ուզում եք։

— Ի՜հա՛րկե։ Ես կգամ ժամը մեկին։

Այս բոլորը տեղի ունեցավ ամուսնու ներկայությամբ. նա ոչ մի բառ չասաց։

Հաջորդ օրը առավոտյան Հարևանուհուցս ստացա մի երկտող. դա առաջին գրությունն էր նրանից։ Նա շատ քաղաքավարի և զգուշությամբ տեղեկացնում էր ինձ, թե իր ամուսինը դժգոհ է, որ ինքն առաջարկել է նկարել ինձ։ Ներողամտություն էր հայցում հիվանդի քմահաճույքների հանդեպ, ասում, թե պետք է խնայել նրան և վերջում առաջարկում էր դիմանկարն անել մի ուրիշ օր, այդ մասին չասելով ամուսնուն, որպեսզի նա շանհանգստանա։

Ես ջերմ, գուցեն չափից դուրս ջերմ շնորհակալություն հայտնեցի նրան, գաղտնի նկարվելու առաջարկը չընդունեցի, բայց, այդուհանդերձ, այս երկու գրությունները շատ դուր եկան մեզ։ Ամուսնու հանդեպ նրա վերաբերմունքը, ժառանգորդին մեզ։ Ամուսնու հանդեպ նրա վերաբերմունքը, ինքն երբեք չէի անդրադառնա, արտահայտված էր։ Իմ նա միշտ ակամա ստեղծվում էր գաղտնի համաձայնություն, միություն՝ ընդդեմ ամուսնու։

Երեկոյան գնացի տուն. դիմանկարի մասին՝ ոչ մի խոսք։ Եթե ամուսինն ավելի խելոք լիներ՝ պիտի կռահեր եղածը, բայց ավելի խելոք չէր։ Ես հայացքով շնորհակալ եղա նրանից, նա ժպիտով պատասխանեց ինձ։

Շուտով նրանք տեղափոխվեցին քաղաքի այլ թաղամաս։ Երբ առաջին անգամ նրանց մոտ գնացի՝ հարևանուհիս մեն-մենակ էր վատ կահավորված դահլիճում. նա նստած էր դաշնամուրի առաջ, աչքերն արցունքից թաց։ Խընդրեցի, որ շարունակի, բայց նվագը չէր ստացվում, նա սխալվում էր, ձեռքերը դողում էին, մեկ գունատվում էր, մեկ՝ այրվում։

— Ի՞նչ տոթ է այստեղ,— ասաց նա, արագ վեր կենալով դաշնամուրի առջևից։

Ես լուռ բռնեցի նրա ձեռքը, նրա թույլ, տաք ձեռքը. գլուխը, ծանրացած ծաղկի նման, տառապալից հնազանդվելով ինչ-որ ուժի՝ խոնարհվեց կրծքիս, նա հպեց ճակատը կրծքիս ու ակնթարթորեն անհետացավ։

Հաջորդ օրը նրանից ստացա փոքր-ինչ վախվորած, երեկվա տեղի ունեցածը մշուշել ջանացող մի երկտող. նա գրում էր այն ահավոր ջղային վիճակի մասին, որի մեջ ինքը գտնվում էր՝ երբ ես ներս էի մտել, գրում էր, թե ինքը հազիվ է հիշում եղածը, ներողություն էր խնդրում. բայց այդ բառերի թեթև քողն արդեն չէր կարող ծածկել տողերի արանքից ճառագայթող կիրքը։

Ես գնացի նրանց մոտ։ Այդ օրը ամուսնու վիճակն ավելի թեթև էր, թեև նոր բնակարանում նա արդեն գամված էր անկողնուն. ես լարված-հուզված էի, հիմար կատակներ էի անում, սրամտություններ շաղ տալիս, ամեն տեսակ անհեթեթ բաներ պատմում, թուլանալու չափ ծիծաղեցնում հիվանդին և, զարմանալի է, այդ բոլորը նրա համար էր, որ [illegible] Հարևանուհուս և իմ շփումները։ Ավելին,

ես զգում էի, որ այդ ծիծաղը հրապուրում ու արբեցնում է նրան։

... Անցավ մի երկու շաբաթ։ Ամուսինը գնալով վատանում էր, ինն անց կեսին նա խնդրում էր հյուրերին՝ գնալ, թուլությունը, վտիտությունն ու ցավերը շատանում էին։ Մի երեկո, ժամը իններին մոտ, ես հրաժեշտ տվի հիվանդին։ Բ.-ն եկավ ինձ համփու դնելու։ Լիալուսինը երեք մանուշակագույն շեղ շերտեր էր գցել հյուրասենյակի հատակին։ Ես բաց արի պատուհանը, մաքուր ու թարմ օդը համակեց ինձ։

— Ի՜նչ երեկո է,— ասացի ես։— Իսկի չեմ ուզում գնալ։

Նա մոտեցավ պատուհանին։

— Մի քիչ մնացեք այստեղ։

— Անհնար է, ես այս ժամին փոխում եմ վիրակապը։

— Եկեք հետո, ես ձեզ կսպասեմ։

Նա լուռ էր, ես բռնեցի նրա ձեռքը։

— Դե եկե՛ք, հա՞, խնդրում եմ... Կգա՞ք։

— Ախր չի կարելի, ես նախ վերնաշապիկ եմ հագնում։

— Եկեք վերնաշապիկով, ես ձեզ առավոտները մի քանի անգամ տեսել եմ վերնաշապիկով։

— Բա որ ձեզ մեկն ու մեկը տեսնի՞։

— Ո՞վ։ Ձեր ծառան խմած է, ուղարկեցեք քնելու, իսկ ձեր Դարյան... Հավատացե՛ք, ձեզ ավելի է սիրում, քան ձեր ամուսնուն, ասենք, նա ի՛մ էլ բարեկամուհին է։ Համ էլ՝ ի՞նչ կա որ։ Հիմա ժամը տասը չկա, ասենք թե դուք ուզում էիք ինձ որևէ բան հանձնարարել, խնդրել էիք սպասել...

— Առանց մոմի՞...

— Կարգադրե՛ք բերեն։ Բայց այս գիշերը մի ողջ ցերեկ արժե։

Նա դեռևս տատանվում էր։

— Արի՛, արի՛,— շշնջում էի ես նրա ականջին, առաջին անգամ այդպես դիմելով նրան։

Նա ցնցվեց։

— Կգամ, բայց միայն մի րոպեով։

... Կես ժամից ավել սպասում էի նրան... Տանը համատարած լռություն էր, ես կարող էի լսել ծերունու հառաչանքն ու հազը, նրա դանդաղ խոսքը, ինչ-որ սեղանի տեղաշարժումը... Խմած ծառան, չվշվացնելով, նստած էր թախտին գցում էր իր անկողինը, հայհոյեց ու մի բան պոկեց խամփացրեց... Ննջասենյակից դուրս եկող աղախնի ծանր քայլվածքը վերջին ձայնն էր... Հետո՝ լռություն, հիվանդի հառաչանք ու նորից լռություն և... հանկարծ՝ խշշոց, հատակը ճռռաց, թեթև քայլք... ու ճերմակ վերնաշապիկն առկայծեց դռների մեջ...

Նրա հուզմունքն այնքան ուժեղ էր, որ սկզբում չէր կարողանում ոչ մի բառ արտասանել, շուրթերը սառն էին, ձեռքերը՝ սառույց։ Ես զգում էի, թե ինչպես ուժգին խփում էր նրա սիրտը։

— Ես կատարեցի քո ցանկությունը,— վերջապես ասաց նա։— Հիմա թո՛ղ ինձ... Մնաս բարով... Աստված սիրես, մնաս բարով, դո՛ւ էլ տուն գնա,— ավելացրեց նա աղերսալի տխուր ձայնով։

Ես գրկեցի նրան և ամուր, ամուր սեղմեցի կրծքիս։

— Սիրելի՛ս... դե գնա՛։

Դա անհնար էր... Troppo tarbi[1]... Թողնել նրան այն պահին, երբ այդպես բաբախում էր նրա սիրտը, ի՛մ սիրտը՝ այդ կլիներ մարդկային ուժերից վեր բան ու մեծ հիմարություն... Ես չգնացի— նա մնաց... Լիալուսինն իր շողքը գցել էր այլ կողմ։ Նա նստել էր պատուհանի առաջ ու դառնալիս էր... Ես համբուրում էի նրա թաց աչքերը, արբում էի նրա մազափնջերով, որոնք ընկած էին լուսդրանք նրա մազափնջերով, որոնք ընկած էին լուսնի լույսը ներծծող ու առանց արտացոլման նրբագեղ խայտացող մեղմ-կաթնագույն ուսին։

Մեղքս գալիս էր թողնել նրան արցունքն աչքերին, ես կիսաշշուկով ինչ-որ բան էի զառանցում... Նա նայեց ինձ, և նրա աչքերում, արցունքի միջից, այնպիսի՜ մի երջանկություն կայծկլտաց, որ ես ժպտացի։ Նա կարծես հատակցավ միտքս, երկու ձեռքով ծածկեց դեմքն ու վեր կացավ... Հիմա իրո՞ք որ ժամանակն էր, ես խլեցի-համբուրեցի նրա ձեռքերը, համբուրեցի նրան ու դուրս եկա։

Սուսիկ դուրս թողեց ինձ աղախինը, որի կողքով անցա, չհամարձակվելով նայել դեմքին։ Խոնջացած լուսինը վիթխարի հրե գունդ դարձած՝ հանգչում էր. ծագում էր արշա-

[1] չափազանց ուշ (իտալ.)։

լույսը։ Բավականին զով էր, քամին փչում էր ուղիղ երեսիս։ Ես շնչում էի ավելի ու ավելի խորը, ինձ հարկավոր էր թարմանալ։ Երբ մոտենում էի տանս՝ արևը ծագեց, և ինձ հանդիպող բաբի մարդիկ զարմանում էին, որ այդպես վաղ վեր եմ կացել «օգտվելու լավ եղանակից»։

Մոտ մի ամիս շարունակվեց սիրո այդ արբեցումը. գեղեցիկ ասես սիրուս հոգնեց, ուժասպառվեց,— ինձ սկսեցին հոգնակել թախծի պահերը։ Ես խնամքով թաքցնում էի այդ պահերը, ջանում էի չհավատալ դրանց, զարմանում էի, թե ի՞նչ է կատարվում մեջս,— իսկ սերը պաղում էր ու պաղում։

Ինձ սկսեց նեղել ծերունու ներկայությունը, նրա մոտ լինելն ինձ համար տհաճ էր, զզվելի։ Ես ոչ թե անիրավացի էի զգում ինձ՝ կնոջ քաղաքացիական-եկեղեցական սեփականատիրոջ առաջ,— մի կնոջ, որը նրան չէր կարող սիրել և որին նա ի զորու չէր սիրելու,— այլ ինձ նվաստացուցիչ էր թվում իմ երկակի դերը. երեսպաշտություն և երկերեսանություն՝ երկու հանցագործություն, որ ամենից ավելի խորթ են ինձ։ Քանի դեռ ծավալվող կիրքը գերակշռում էր՝ ոչ մի բանի մասին չէի մտածում, բայց երբ այն սկսեց մի քիչ պաղել՝ ի հայտ եկավ մտորումը։

Մի առավոտ Մատվեյը մաավ ննջասենյակս, հայտնեց, որ ծերուկ Բ.-ն «կյանքը մեզ է բաշխել»։ Այդ լուրն ինձ համակեց տարօրինակ մի զգացումով, շրջվեցի մյուս կողքիս և չէի աճապարում հագնվել, ես չէի ուզում տեսնել հանգուցյալին։ Ներս մտավ Վիտբերգը՝ լրիվ պատրաստ։ «Ո՞նց թե,— ասում էր նա,— դուք դեռ անկողնո՞ւմ եք, մի՞թե չեք լսել ի՞նչ է պատահել, երևի խեղճ տիկին Բ.-ն մենակ է, գնանք տեսնենք, շուտ հագնվեք։ Հագնվեցի՞ գնացինք։

Մենք Բ.-ին տեսանք ուշագնաց կամ ինչ-որ ջղային լեթարգիական քնի մեջ։ Դա ձն չէր. ամուսնու մահը հիշեցրել էր նրան իր անօգնական վիճակը. նա մենակ էր մնում երեխաների հետ օտար քաղաքում, անփող, առանց մերձավորների։ Բացի այդ, առաջներում էլ ուժեղ ցնցումների ժամանակ նա ունենում էր այդպիսի հանկարծահաս ջղային բարդացումներ, որոնք տևում էին մի քանի ժամ։ Մահճակալի գունատ, դեմքը սառած, աչքերը փակ՝ պառկած էր նա



ապարդյուն դեղերում, մեկ-մեկ օդ կուլ տալով, իսկ մնացած ժամանակ՝ անշնչացած։

Ոչ մի կին չեկավ նրան օգնելու, կարեկցելու, երեխաներին, տանը նայելու։ Վիտբերգը մնաց նրա մոտ, մարդասիրությունն ու ես ձեռնամուխ եղանք թաղման հոգսերին։

Ծերուկը, նիհարած ու սևացած, համազգեստով պառկած էր սեղանին, հոնքերը կիտած, ասես բարկանում էր ինձ վրա. մենք նրան դրինք դագաղի մեջ, իսկ երկու օր հանց իջեցրինք գերեզման։ Թաղումից վերադարձանք հանգույալի տուն, երեխաները, սգերիզավոր սև զգեստներով, մի անկյուն էին քաշվել՝ ավելի շատ զարմացած ու վախեցած, քան վշտացած. նրանք փսփսում էին իրար մեջ և թաթերի վրա էին շարժվում։ Անխոս նստել էր Բ.-ն՝ գլուխը հենած ձեռքին, ասես ինչ-որ բան մտորելով։

Այս հյուրասենյակում, այս բազմոցի վրա ես սպասում էի նրան, ականջ դնելով հիվանդի հառաչանքին ու հարբած ծառայի հայհոյանքներին։ Այժմ ամեն ինչ սևով էր պատած... Թաղման կացության, խնկահոտի մեջ՝ ես մոայլ ու աղոտ վերհիշում էի խոսքեր, պահեր, որոնց, այնուամենայնիվ, չէի կարող չանդրադառնալ առանց քնքշության։

Նրա վիշտը կամաց-կամաց հանդարտվեց, նա ավելի զգաստ էր նայում իր վիճակին. հետո կամաց-կամաց նաև այլ մտքեր երևացին նրա հոգսատանջ ու տրտում դեմքին։ Նրա հայացքը մի տեսակ հուզումնալից սպասումով էր գամվում վրաս, նա ասես ինչ-որ բան էր ակնկալում՝ հարց... պատասխան...

Ես լռում էի,— և նա, վախեցած, տագնապած՝ սկսեց փսփսալ։

Այստեղ ես հասկացա, որ ամուսինը, ըստ էության, ինձ համար մի արդարացում էր. սերը պաղել էր իմ մեջ։ Մ՞ի՞թե անտարբեր չէի նրա նկատմամբ, բայց դա այն չէր, ինչ հարկավոր էր նրան։ Ինձ այժմ զբաղեցնում էին այլ տեսակի մտքեր, և այդ բուռն պոռթկումն, ասես, նրա համար էր համակել ինձ, որ հասկանալի դարձներ ուրիշ մի զգացումը։ Որպես արդարացում՝ մի՛ բան կարող եմ ասել. ես անկեղծ եմ իմ հրապուրանքի մեջ։

Մի՛ ... կորցրել էի գլուխս և չգիտեի ի՞նչ անել, մինչ

փոքրոգի վեհերոտությամբ պատահական փոփոխություն էի ակնկալում ժամանակից, հանգամանքներից՝ ժամանակն ու հանգամանքները է՛լ ավելի բարդացրին վիճակը։

Տյուֆյակը, տեսնելով երիտասարդ, սիրունիկ և առանց որևէ նեցուկի հեռավոր, իրեն օտար մի քաղաք նետված այրու անօգնական վիճակը, որպես իսկական «նահանգահայրդ», ամենաքնքշալի հոգածություն տածեց նրա նկատմամբ։ Սկզբում մենք բոլորս մտածում էինք, թե նա իրոք կարեկցում է նրան։ Բայց շուտով Բ.-ն սարսափով նկատեց, որ նրա ուշադրությունն ամենևին էլ անկանխակալ չէ։ Երկու-երեք այլասերված նահանգապետներ դաստիարակել էին Վյատկայի տիկիններին, և Տյուֆյակը, որ վարժվել էր նրանց, առանց հետաձգելու սկսեց ուղղակի սեր խոստովանել նրան։ Բ.-ն, իհարկե, պատասխանել էր նրան սառն արհամարհանքով ու ծաղրելով ծերունական հաճոյախոսությունները։ Տյուֆյակն իրեն պարտված չհամարեց և շարունակեց լկտի սիրահետումը։ Տեսնելով, սակայն, որ գործն առաջ չի գնում, նա այրուն զգացնել տվեց, որ նրա երեխաների բախտն իր ձեռքում է, և որ առանց իրեն նա չի կարողանա տեզավորել նրանց պետության հաշվին, իսկ ինքն էլ իր կողմից չանք չի գործադրի, եթե նա չփոխի սառն վերաբերմունքը իր հանդեպ։ Վիրավորված կինը ծառս եղավ խոցված գազանի պես։

— Բարեհաճեցեք դո՞ւրս կորչել, ձեր ոտքը չտեսնե՛մ իմ շեմին,— ասաց նա՝ ցույց տալով դուռը։

— Օ՜, ինչ բարկացկո՞տն եք,— ասաց Տյուֆյակը՝ կատակի տալով։

— Գյո՞տր, գյո՞տր,— գոռաց նա, դառնալով նախասրահի կողմը, և սարսափած Տյուֆյակը, վախենալով, որ մարդիկ կիմանան, կատաղությունից շնչահեղձ, ամոթահար ու նվաստացած՝ նետվեց իր կառքի մեջ։

Երեկոյան Բ.-ն պատահածի մասին պատմեց Վիտբերգին ու ինձ։ Վիտբերգն անմիջապես հասկացավ, որ փախուստի դիմած ու վիրավորված կնամուլը հանգիստ չի թողնի խեղճ կնոջը,— Տյուֆյակի բնավորությունը լավ հայտնի էր բոլորիս։ Վիտբերգը վճռեց, ինչ էլ լինի՝ փրկել կնոջը։

Հալածանքները շուշացան։ Երեխաների վերաբերյալ



առաջարկությունը գրված էր այն ձևով, որ մերժումն անխուսափելի էր Տանտերը, խանութպանները առանձնահատուկ մի համառությամբ պահանջում էին կատարել վճարումները։ Աստված գիտե, թե էլ ինչե՞ր կարելի էր սպասել։ Չէր կարելի կատակել մի մարդու հետ, որը մեռցրել էր Պետրովսկուն գժանոցում։

Վիտբերգը, հսկայական ընտանիքով ծանրաբեռնված, չքավորության տակ ճզմված՝ ոչ մի բոպե չվարանեց և իր կնոջ Վյատկա ժամանելուց երկու թե երեք օր հետո Բ.-ին առաջարկեց երեխաների հետ տեղափոխվել իր մոտ։ Այստեղ Բ.-ն փրկված էր, այդպիսի՛ն էր այս աքսորյալի բարոյական ուժը։ Նրա անսասան կամքից, նրա ազնվաբարո տեսքից, նրա համարձակ խոսքից, նրա արհամարհական ժպիտից վախենում էր ինքը՝ Վյատկայի Շեմյական։

Ես ապրում էի նույն տան առանձին հարկաբաժնում և ճաշին նստում էի Վիտբերգի հետ նույն սեղանի շուրջ։ և մինչև մենք հայտնվեցինք նույն հարկի տակ՝ հենց այն ժամանակ, երբ պիտի բաժանված լինեինք ծովերով։

Այդ մոտիկության մեջ նա հասկացավ, որ եղածը չես վերադարձնի։

Ինչո՞ւ նա հանդիպեց հենց ինձ՝ այն ժամանակ դեռ անհաստատունիս։ Նա կարող էր լինել երջանիկ, նա արժանի էր երջանկության։ Տխուր դիպվածն անցավ, սիրո, ներդաշնակության նոր կյանքն այնպե՞ս հնարավոր էր նրա համար։ Խե՜ղճ, խե՜ղճ Բ.։ Մեղավո՞ր եմ արդյոք, որ այնպես անկասելի վրա եկած սիրո այդ ամպը այդքան տաք շունչ արձակեց, արբեցրեց, հրապուրեց ու հետո ցրվեց։

... Շփոթված, կանխազգալով դժբախտություններ, ինքս ինձնից դժգոհ՝ ապրում էի մի տեսակ տագնապի մեջ։ Նորից քեֆ էի անում, մոռացում փնտրում աղմուկի մեջ, սրբտնեղում էի՝ երբ գտնում էի այդ մոռացումը, սրտնեղում էի՝ երբ չէի գտնում և, որպես օդի մաքուր մի շիթ փոշեպատ տապի մեջ՝ սպասում էի մի քանի տող Մոսկվայից, Natalie-ից։ Կրքերի այդ ողջ խառվքի վրա ավելի ու ավելի պայծառ ծագում էր մանուկ-կնոջ հեզ կերպարը։ Բ.-ի հանդեպ սիրո պոռթկումը իմ առաջ բացեց սեփական սիրտս, պարզեց նրա գաղտնիքը։

Ավելի ու ավելի տարվելով բացակա զարմուհուս հանդեպ իմ համակրանքով, ես առանձնապես հաշիվ չէի տալիս ինձ, թե այդ ի՞նչ զգացմունք է, որ կապում է ինձ նրա հետ։ Ես վարժվել էի այդ զգացմունքին և չէի հետևում՝ փոխվո՞ւմ է այդ զգացմունքը, թե՞ ոչ։

Իմ նամակները գնալով ավելի տագնապալի էին դառնում. մի կողմից ես խորապես զգում էի ոչ միայն իմ մեղքը Բ.-ի առաջ, այլև ստի այն նոր մեղքը, որ հանձն էի առնում լռությամբ։ Ինձ թվում էր, թե ես բարոյապես ընկել եմ, արժանի չեմ մի այլ սիրո... իսկ սերը գնալով մեծանում էր ու մեծանում։

«Քույր» անունն սկսում էր ճնշել ինձ, այժմ ինձ չէր բավարարում բարեկամությունը, այս անդորր զգացմունքը թվում էր սառն։ Նրա սերը երևում էր նամակների ամեն մի տողից, բայց ինձ համար արդեն դա էլ էր քիչ, ինձ հարկավոր էր ոչ միայն սեր, այլև բուն այդ բառը, և ահա ես գրում եմ. «Ես քեզ տարօրինակ մի հարց կտամ. հավատո՞ւմ ես արդյոք, որ իմ հանդեպ տածած քո զգացմունքը սոսկ բարեկամություն է։ Հավատո՞ւմ ես արդյոք, որ քո հանդեպ տածած իմ զգացմունքը սոսկ բարեկամություն է։ Ես չե՞մ հավատում»։

«Դու մի տեսակ-շփոթված ես,— պատասխանում է նա,— ես գիտեի, որ քո նամակը քեզ ավելի է վախեցրել, քան ինձ։ Հանգստացիր, սիրելի՛ս, այդ նամակն իմ մեջ ամենևին ոչինչ չփոխեց, այն արդեն չէր կարող ինձ ստիպել սիրելու քեզ ոչ ավելի շատ, ոչ էլ ավելի քիչ»։

Բայց բառն արդեն ասված էր։ «Մշուշը ցրվեց,— գրում է նա,— նորից ամեն ինչ ջինջ է ու պայծառ»։

Նա զվարթ ու անհոգ տարվեց այդ զգացմունքին, նրա նամակները պատանեկան սիրո մի-մի երգ են, որ մանկական թոթովանքից հասնում են զորեղ քնարականության։

«Գուցե դու նստած ես հիմա առանձնասենյակում,— գրում է նա,— ոչ գրում ես, ոչ կարդում, այլ մտախոհ պատկերակ ես ծխում, ու հայացքդ խորասուզված է անորոշ հեռավորություններում, և չես պատասխանում ներս մտնողի բարևին։ Ո՞ւր են սուզվում քո խոհերդ քեզ, ո՞ւր է ուղղված քո հայացքը։ Մի՛ պատասխանիր— ինձ մոտ թող դանա»։



«... Դեկ մանկանա՞նք, ժամ նշանակենք և այդ ժամին նրկուսս էլ անպայման լինենք դրսում, մի ժամ, երբ մենք նրկուսս էլ անպայման լինենք, որ հեռավորությունից բացի՝ մեզ ոչինչ չի խանգարում։ Երեկոյան ժամը ութին դու էլ երևի ազատ ես, չէ՞։ Ա՛յ, անցյալ ծրը ես սանդղամուտք եկա ու... անմիջապես ետ եկա, մտածելով, որ դու սենյակումդ ես»։

«... Նայելով քո նամակներին, քո դիմանկարին, խորհելով իմ նամակների, ապարանջանի մասին, ուզեցի տեսնել, թե ի՞նչ բախտ կվիճակվի դրանց մի հարյուր տարի հետո։ Այն առարկաները, որոնք մեզ համար եղել են սրբություն, որոնք դարմանել են մեր մարմինն ու հոգին, որոնց հետ մենք զրուցել ենք և որոնք ինչ-որ չափով փոխարինել են լուրաքանչյուրիս՝ բաժանման մեջ,— բոլոր այդ զենքերը, որոնցով մենք պաշտպանվել ենք մարդկանցից, ճակատագրի հարվածներից, ինքներս մեզանից՝ ի՞նչ կլինեն մեզնից հետո։ Կմնա՞ արդյոք նրանց մեջ ո՛ւժը նրանց, նրանց ոգի՛ն, կարթնացնե՞ն արդյոք, կջերմացնե՞ն նրանք որևէ մեկի սիրտը, կպատմե՞ն մեր պատմությունը, մեր տառապանքները, մեր սերը, կհասուցե՞ն արդյոք նրանց գոնե մի՛ կաթիլ արտասուքով։ Ինչ տխո՞ւր է պատկերացնել, որ քո դիմանկարը*, վերջ ի վերջո, կախված կլինի անհայտ որևէ մեկի առանձնասենյակում, կամ գուցե թե ինչ-որ մանկիկ խաղալով կկոտրի ապակին ու կջնջի դիմագծերդ»։

Այդպիսին չեն ի՛մ նամակները՝, կատարյալ, խանդավառ սիրո արանքով թափանցում են արտենեզության, զրզվառ

* Natalie-ի ու իմ նամակների ոճերի տարբերությունը շատ է մեծ, հատկապես նամակագրության սկզբում։ Հետո, դրանք հավասարվում ու դառնում են նման։ Իմ նամակներում՝ անկեղծ զգացմունքների կողքին՝ սեթևեթ արտահայտություններ, պաճուճանքներ, փքուն բառեր, Հյուգոյի դպրոցի ու ֆրանսիական նոր վիպասանների բացահայտ ազդեցություն։ Դրա նամակներում՝ ոչ մի նման բան, նրա լեզուն պարզ է, բանաստեղծական, անկեղծ, նկատվում է լոկ մի ազդեցություն՝ ավետարանի ազդեցությունը։ Այն ժամանակ ես գեռ չանում էի գրել վերամբարձ, և վատ էի գրում, որովհետև գա ի՛մ լեզուն չէր։ Կյանքը անգթությունների ուղղորդում է ավելորդ ընթերցանությունը երկար թույլ չեն տալիս, որ պատանին խոսի և գրի պարզ ու բնական։ Մտավոր չափահասությունը մարդու համար սկսվում է միայն այժմյան, երբ նրա սեռը կայունանում է և առանձնանում իր վերջնական ձևը (նամակ.՝ Ա. Ֆ. Գերցենին)։

ջումի դառն հնչյունները, Բ.-ի լուռ կշտամբանքը կրծում է սիրտս, պղտորում լուսավոր զգացմունքս, ես ինձ խաբեբա էի զգում, բայց, ախր, ես չէի՞ ստում։

Եվ ո՞նց խոստովանեի, ո՞նց ասեի Բ.-ին հունվարին, որ ես տխալվել եմ օգոստոսին՝ խոսելով իմ սիրո մասին։ Նա ո՞նց կհավատար խոսքերիս ճշմարտությանը,— նոր սերը կլիներ առավե՛լ հասկանալի, դավաճանությունը՝ ավելի՛ պարզ մի բան։ Բացակա-հեռավոր կերպարը ինչպե՞ս կարող էր պայքարի մեջ մտնել ներկա-իրականի հետ, ինչպե՞ս կարող էր ուրիշ մի սիրո շիթ անցնել այդ քուրայի միջով ու ելնել առավել գիտակցված և առավել ուժեղ,— այս ամենը ինքս էլ չէի հասկանում, բայց զգում էի, որ այդ բոլորը ճշմարտություն է։

Վերջապես Բ.-ն ինքը, մոդեսի անորսալի ճարպկությամբ, խույս էր տալիս լուրջ բացատրություններից, նա առնում էր վտանգի հոտը, լուծում էր փնտրում և միևնույն ժամանակ հետաձգում էր ճշմարտությունը։ Ասես կանխատեսում էր, որ իմ խոսքերը կբացահայտեն ահավոր խզությունը, որից հետո ամեն բան վերջացած կլինի, և նա խոսքն ընդհատում էր այնտեղ, ուր այն դառնում էր վտանգավոր։

Սկզբում նա նայումէր շորս բոլորը, մի քանի օր մրցակցուհուն էր տեսնում ջահել, սիրունիկ, աշխույժ գերմանուհու մեջ, որին ես սիրում էի որպես մի երեխայի, որի հետ լինելիս ինձ թեթև էի զգում հենց այն պատճառով, որ ո՛չ նրա, ո՛չ էլ իմ մտքով չէր անցնում կոկետություն անել։ Մի շաբաթից նա տեսավ, որ Պաուլինան իսկի էլ վտանգավոր չէ։ Բայց ես չեմ կարող շարունակել պատմությունս՝ մի քանի խոսք չասելով նրա մասին։

Հասարակական խնամակալության Վյատկայի դեղատանը կար մի գերմանացի դեղագործ, և դրանում զարմանալի ոչինչ չկա, զարմանալին այն էր, սակայն, որ նրա օգնականը ռուս էր, բայց անունը՝ Բոլման։ Սրա հետ էլ, ահա, ես ծանոթացա. նա ամուսնացած էր Վյատկայի մի չինովնիկի աղջկա հետ, որի ծամերը իմ տեսածներից ամենաերկարը, ամենախիտն ու ամենագեղեցիկն էին։ Ինքը՝ դեղագործը, Ֆերդինանդ Ռուլկովիուսը, բացակայում էր, և մենք Բոլմանի հետ խոսում էինք նրա զանազան «փրփրահյութերն» ու գեղարվեստական-«ստամոքսային» դեղաթուրմերը։ Դեղագործը Ռևելում էր. այնտեղ ծանոթացել էր ջահել մի աղջկա հետ և ամուսնության առաջարկ արել. աղջիկը, որ հազիվ էր ճանաչում նրան, գլուխը կորցրած ամուսնանում է հետը, ինչպես վարվում է աղջիկն ընդհանրապես և գերմանուհին՝ առանձնապես, նա նույնիսկ գաղափար չուներ, թե ինչ խուլ վայր է տանում իրեն ամուսինը։ Բայց երբ հարսանիքից հետո հարկ եղավ ճանապարհի պատրաստություն տեսնել՝ վախն ու վհատությունը պատեցին նրան։ Նորահարսին մխիթարելու համար դեղագործը հրավիրեց իրենց հետ վյատկա մեկնել տասնյոթամյա մի աղջկա՝ իր կնոջ հեռավոր ազգականուհուն, սա, է՛լ ավելի գլուխը կորցրած և արվ

տեին Շիլլերին, երբեմն դաշնամուր էին նվագում ու երգում գերմանական ռոմանսներ։ Սրանով էլ, ի միջի այլոց, նրանց նմանությունն ավարտվում էր։ Դեղագործի կինը խարտյալ էր, լիմֆատիկ, բարձրահասակ, բավական դուրեկան, բայց թմրած ու անաշխույժ, նա չափազանց բարի էր, ասենք, նման կազմվածք ունենալով՝ դժվար էր չար լինել։ Մեկընդմիշտ համոզվելով, որ իր ամուսինը ի՛ր ամուսինն է՝ նա մեղմ ու հանդարտ սիրում էր նրան, զբաղվում խոհանոցով ու սպիտակեղենով, ազատ պահերին կարդում էր վեպեր և ժամանակին դեղագործի համար ծնեց ճեփ-ճերմակահեր ու ճաղատ մի աղջիկ։

Նրա ընկերուհին՝ մանրահասակ, թուխ-թուխ, ամրակազմ, խոշոր սև աչքերով ու ինքնատիպ տեսքով մի աղջիկ՝ պինդ, ժողովրդական գեղեցկություն ուներ. նրա շարժումներում ու խոսքի մեջ նկատվում էր մեծ եռանդ, և երբ, պատահում էր, դեղագործը, տաղտկալի ու ժլատ այդ արարածը, ոչ այնքան էլ հարգալից դիտողություններ էր անում իր կնոջը, և նա լսում էր ժպիտը շուրթերին ու արցունքը թարթիչներին, Պաուլինան կարմրատակում էր ու այնպիսի հայացք նետում սանձաթող դեղագործի վրա, որ սա իսկույն խաղաղվում էր, ձևացնում, թե շատ զբաղված է ու քաշվում լաբորատորիա՝ խառնելու և մանրացնելու ամեն տեսակ անպետքություններ՝ Վյատկայի չինովնիկների առողջությունը վերականգնելու համար։

Ինձ դուր էր գալիս միամիտ այդ աղջիկը, որը կարողանում էր պաշտպանել իրեն, և, չգիտեմ ոնց եղավ, բայց առաջինը նրա՛ն պատմեցի իմ սիրո մասին, նրա՛ն էի թարգմանում նամակները։ Այդ սրտալի շաղակրատանքի արժեքը գիտե միայն նա, ով երկար, տարիներ շարունակ ապրել է բոլորովին օտար մարդկանց մեջ։ Ես հազվագեպ եմ խոսում զգացմունքներից, բայց լինում են պահեր, երբ արտահայտվելու պահանջը դառնում է անդիմադրելի, նույնիսկ՝ ճիմա։ Իսկ այն ժամանակ ես քսանչորս տարեկան էի և նոր միայն հասկացել էի իմ սերը։ Ես կարողանում էի տանել բաժանումը, կտանեի նաև լռությունը, բայց հանդիպելով մի այլ երիտասարդ, որի մեջ ամեն ինչ այնպես



խնամքորեն պարզ էր, չկարողացա զսպել ինձ և ասացի նրան իմ գաղտնիքը։ Ու դրա համար ինչքա՛ն շնորհակալ էր նա ինձանից և որքա՛ն բարիք արեց ինձ։

Վիտբերգի միշտ լուրջ զրույցները երբեմն հոգնեցնում էին ինձ, Ք.-ի հետ ունեցած իմ ծպտոր հարաբերությունից ստանջահար՝ ես չէի կարողանում ազատ զգալ նրա ներկայությամբ։ Հաճախ երեկոները գնում էի Պաուլինայի մոտ, փուլ վիպակներ էի կարդում նրա համար, լսում նրա զրընդուն ծիծաղը, ունկնդրում հատուկ ինձ համար նրա երգած «Das Mädchen aus der Fremde»-ն, որն ինձ ու նրա համար ուրիշ մի պանդուխտ աղջկա իմաստ ուներ, և ամպերը փարատվում էին, հոգիս համակվում էր անկեղծ խնդությամբ, անխառն հանգստությամբ ու ես խաղաղված գնում էի տուն, երբ դեղագործը, ավարտելով վերջին դեղախառնումն ու քսուկապատելով վերջին սպեղանին, գալիս էր ձանձրացնելու ինձ քաղաքական հիմար հարցմունքներով,— գնում էի տուն, բայց ոչ շուտ, քան կխմեի նրա «դեղորայքային» ըմպելիքը և կճաշակեի der Frau Apothekerin[2]-ի փափկիկ ձեռքերով պատրաստված հերինգսալաթը[3]։

... Ք.-ն տանջվում էր, ես խղճուկ թուլակամությամբ սպասում էի, որ ժամանակը պատահականորեն կլուծի հարցը և երկարաձգում էի կիսասուտը։ Հազար անգամ ուզել եմ գնալ Ք.-ի մոտ, ոտներն ընկնել, ամեն ինչ պատմել, դիմանալ նրա ցասումին, նրա արհամարհանքին... բայց ես վախենում էի ոչ թե զայրույթից,— դրան ուրա՛խ կլինեի,— վախենում էի արցունքներից։ Շատ այլանդակություններ պիտի ճաշակած լինել՝ կարենալու համար դիմանալ կանանց արցունքներին, կարենալու համար կասկածել, քանի դեռ արցունքները, այդ տաք արցունքները, հոսում են կրակված այտերով։ Մանավանդ որ՝ նրա արցունքները անկեղծ կլինեին։

Այդպես անցավ շատ ժամանակ։ Սկսեցին բուրեր պտըտ-

---

1 «Պանդուխտ աղջիկ» (գերմ.)։
2 տիկին դեղագործուհի (գերմ.)։
3 ծովատանձով սալաթ (գերմ. Hering-Salat-ից)։

վել. թե շուտով աքսորը կվերջանա, այնքան էլ հեռու չէր թվում այն օրը, երբ կառք կնստեմ ու կսլանամ Մոսկվա, տեսնում էի ծանոթ դեմքեր ու նրանց մեջ, նրանց առջևում՝ նվիրական դիմագծերը. բայց հենց որ տրվում էի այդ երազանքներին՝ մյուս կողմից աչքիս առաջ էր գալիս Բ.-ի գունատ, տխուր կերպարանքը՝ լացակումած աչքերով, ցավալից ու հանդիմանող հայացքով, և իմ խնդությունը պղտորվում էր, ես խղճում էի նրան, շա՜տ էի խղճում։

Կեղծ վիճակի մեջ մնալ այլևս չէի կարող և որոշեցի բոլոր ուժերս հավաքելով դուրս պրծնել։ Ես նրան գրեցի կատարյալ մի խոստովանանք։ Ջերմ, անկեղծ պատմեցի նրան ողջ ճշմարտությունը։ Հաջորդ օրը նա չերևաց և իրեն հիվանդ հայտարարեց։ Այդ օրը ես վերապրեցի այն ամենը, ինչ կարող է զգալ մերկացումից վախեցող հանցագործը. նրան նորից համակել էր ջղային անզգայությունը. ես չէի հանդգնում այցելել նրան։

Ինձ պետք էր ավելի մեծ մի ապաշխարանք. Վիտբերգի հետ փակվեցի առանձնասենյակում և պատմեցի նրան իմ սիրո ողջ պատմությունը։ Սկզբում նա զարմացավ, ապա լսեց ոչ իբրև դատավոր, այլ որպես ընկեր, չտանջեց հարցափորձով, հետին թվով բարոյախոսություն չքարոզեց, այլ հետս միասին սկսեց հարվածը մեղմացնելու միջոցներ փնտրել. հենց միայն նա կարող էր այդ անել։ Նա ջերմորեն էր սիրում նրանց՝ ում սիրում էր։ Ես վախենում էի նրա խստաբարոյությունից, բայց գերակշռողը իմ և Բ.-ի հանդեպ նրա բարեկամությունն էր։ Այո՜, նրան կարող էի վստահել դժբախտ կնոջը, որի անուրախ գոյությանը ես հասցրի վերջին հարվածը. հանձին Վիտբերգի նա գտնում էր բարոյական ուժեղ նեցուկ և հեղինակություն։ Բ.-ն հարգում էր նրան՝ որպես հոր։

Առավոտյան Մատվեյն ինձ մի երկտող բերեց։ Ամբողջ գիշեր համարյա չէի քնել, հուզված բաց արի դողացող ձեռքով։ Նա գրում էր մեղմ, ազնվորեն ու խորին տխրությամբ. իմ պերճախոսության ծաղիկները չէին քողարկել իժին, նրա հաշտվողական խոսքերում լսվում էր նվաղ կրծքի թաքուն թառանչը, բացառիկ ճիգով զսպված ցավի ճիչը։ Նա



հար-կյանք էր բարեմաղթում. ինձ, Natalie-ին անվանում էր քույր ու անցյալը մոռանալու և գալիք բարեկամության ձեռք էր մեկնում մեզ՝ կարծես թե ի՞նքն էր մեղավորը։

Հեկեկալով՝ ես նորից ու նորից կարդում էի նրա նամակը։ Qual cuor tradisti![1]

Հետագայում ես հանդիպեցի նրան, բարեկամաբար ինձ մեկնեց ձեռքը, բայց մենք շփոթված էինք, ամեն մեկիս համար ինչ-որ բան ասված չէր, ամեն մեկս ինչ-որ բանի չէինք դիպչում։

Մի տարի առաջ ես առա նրա մահվան լուրը։

Վյատկայից մեկնելուց հետո ինձ երկար տանջում էր վերհուշը Բ.-ի մասին։ Խաղաղվելով՝ ձեռնամուխ եղա գրելու մի վիպակ, որի հերոսուհին Բ.-ն էր։ Պատկերացրի եկաթերինյան ժամանակների մի աղայորդու, որը լքում է սիրող կնոջը և ամուսնանում ուրիշի հետ։ Կինը թառամում է ու մեռնում։ Նրա մահվան լուրը ծանրանում է աղայորդու հոգու վրա, նա դառնում է մռայլ, մտախոհ ու, ի վերջո, խելագարվում է։ Նրա կինը, հեզության ու ինքնազոհաբերման այդ տիպարը, ամեն ինչ զգալով, խաղաղ մի պահի տանում է նրան Կուսավանք և հետը միասին ծունկ չոքում դժբախտ կնոջ գերեզմանին՝ ներումն ու պաշտպանություն հայցելով։ Վանքի պատուհաններից լսվում են աղոթքի խոսքեր, կանացի մեղմ ձայները քավության երգեր են երգում. աղայորդին առողջանում է։ Վիպակը չստացվեց՝ երբ գրում էի այն, Բ.-ն չէր պատրաստվում Մոսկվա գնալ, և միակ մարդը, որ գլխի էր ընկել իմ ու Բ.-ի միջև եղածը, «հավերժական գերմանացի» Կ. Ի. Զոնենբերգն էր։ Մորս մահից՝ 1851-ից հետո նրանից ոչ մի լուր չկար։ 1860-ին մի տուրիստ, պատմելով ինձ ութսունամյա Կարլ Իվանովիչի հետ իր ծանոթության մասին, ցույց տվեց նրա նամակը։ Հետքրքրության մեջ նա տեղեկացնում էր Բ.-ի մահը և հայտնում, որ իմ եղբայրը նրան թաղել է Նովոդեվիչիե վանքում։

Ինքնին հասկանալի է, որ վիպակը նրանց երկուսին էլ անհայտ էր։

---

[1] Ի՜նչ սրտի դավաճանեցիր դու (իտալ.)։

## ԳԼՈՒԽ XXII

### Մոսկվայում՝ առանց ինձ

Իմ խաղաղ կյանքը Վլադիմիրում շուտով խառնվեց մոսկովյան լուրերով, որոնք այժմ գալիս էին բոլոր կողմերից։ Դրանք շատ էին վշտացնում ինձ։ Այդ լուրերը հասկանալի դարձնելու համար հարկավոր է ետ դառնալ 1834 թվականը։

Իմ ձերբակալման հաջորդ օրը (1834 թվականին) Իշխանուհու անվանակոչության տոնն էր, դրա համար էլ Natalie-ն, հրաժեշտ տալով ինձ գերեզմանոցում, ասաց. «Մինչև վաղը»։ Նա սպասում էր ինձ. հավաքվել էին ազգականներից մի քանիսը, հանկարծ հայտնվում է իմ զարմիկը և ամենայն մանրամասնությամբ պատմում իմ ձերբակալության մասին։ Միանգամայն անսպասելի այդ նորությունը ցնցում է նրան, նա վեր է կենում, որ գնա մյուս սենյակը, և, երկու քայլ անելով, ուշաթափ ընկնում է հատակին։ Իշխանուհին ամեն բան տեսնում է ու ամեն ինչ հասկանում. նա վճռում է բոլոր միջոցներով խոչընդոտել ծլարձակող սերը։

Ինչի՞ համար։

Զգիտեմ։ Վերջերս, այսինքն՝ դասընթացս ավարտելուց հետո, իշխանուհին շատ լավ էր տրամադրված իմ նկատմամբ. բայց իմ ձերբակալությունը, մեր ազատ մտածելակերպի, սեն-սիմոնիստական «աղանդով» ուղղափառ եկեղեցուն դավաճանելու լուրերը զայրացրել էին նրան. այդ պահից նա ինձ չէր կոչում այլ կերպ, քան «պետական հանցագործ» կամ «եղբայր Իվանի թշվառ զավակ»։ Անհրաժեշտ եղավ Սենատորի ողջ հեղինակությունը, որպեսզի նա թողներ Natalie-ին Դրուտիցի՝ հրաժեշտ տալու ինձ։

Բարեբախտաբար ինձ աքսորում էին, իշխանուհին գործելու ժամանակ չնտ ուներ։ «Այնքան հեռու՞ են այդ Պերմը, Վյատկան— նա հաստատ իր վիզը այնտեղ կկոտրի, կա՛մ ուրիշները կկոտրեն, և ամենակարևորը՝ աղջկան կմոռանա»։

Բայց, ի հեճուկս իշխանուհու, ես լավ հիշողություն ունեի։ Նամակագրությունն ինձ հետ, որ երկար ժամանակ կարելի էր պահվում իշխանուհուց, ի վերջո բացահայտվեց, և նա խստագույնս արգելեց ծառաներին ու աղախիններին նամակները բերել օրիորդին կամ նրա նամակները կոստ տանել։ Մի երկու տարուց սկսեցին խոսել վերադառնալու մասին։ «Այդպես ըր լինի՝ մի առավոտ էլ թշվառ եղբորդիս բաց կանի դուռն ու ներս կմտնի, պետք չի երկար մտածել ու հետաձգել— մենք նրան մարդու կանանք ու կիրդենք պետական հանցագործից, անհավատ ու անկարգ մարդուց»։

Առաջներում իշխանուհին հոգոց քաշելով էր խոսում խնդրի որդի մասին, ասում էր, որ նա համարյա ոչինչ չուներ, որ նա չափազանց երկար-բարակ ընտրություն անի, որ ինքը կուզենար նրան մի կերպ տուն ու տեղի տեր դարձնել իր հովանու ներքո։ Նա իսկապես իր ձրիակեր կանանց հետ մի կերպ հաշտեցրել էր բախտավորեցնել կարողությունից զուրկ իր մի հեռավոր ազգականուհուն՝ ամուսնացնելով նրան մի ատենապետի հետ։ Բարի, սիրունիկ, շատ զարգացած աղջիկը մարդու գնաց՝ իր մոր խաթեր. մի երկու տարի հետո նա մահացավ, բայց ատենապետը կենդանի մնաց և, ի նշան երախտապարտության՝ շարունակում էր վարել նրանց պարտավորություն։ Իշխանուհու գործերը։ Այժմ լրիվ հակառակն էր. որքան ամենանին էլ աղքատ հարստացու չէր, իշխանուհին պատրաստվում է նրան ամուսնացնել իրեն հարազատ աղջկա, հարյուր հազար զուտ փող է տալիս և, բացի այդ, թողնում է որոշ ժառանգություն։ Նման պայմաններով միշտ էլ կարելի է փեսացու գտնել ոչ միայն Մոսկվայում, այլև ուղղակի տեղում, հատկապես ոստիկանապետ, գենկերալգուբերնատոր, իշխանական տիտղոս և թափառող պատվիներ։

Քշիչներ, խոստումներ, լուրեր... և ապասահիները գժտեցին զոհին հացրին իշխանուհու այդ խնամակալական մտադրությունները։ Նա «գենկերալգուբերնատորի» ասաց, որ վճռականապես չի ընդունի ոչ մի առաջարկություն։ Այնժամ սկիզբ առավ վիրավորական, անգութ ու ամեն մի նրբավարքությունից զուրկ անընդհատ հալածանքը, մինչև, ասենք մի քայլի, ասենք մի խոսքի նկատմամբ բծախնդիր դարձանքը։

«Պատկերացրու վատ մի եզանակ, անհավոր սառնամանիք, քամի, անձրև, մաքախլապատ, ոչինչ չարտահայտող երկինք, նոզկալի փոքրիկ մի սենյակ, որտեղից ասես հենց նոր հանգուցյալ են դուրս բերել, համ էլ՝ այս երեխաները, աննպատակ, նույնիսկ առանց հաճույքի, աղմկում են, գոռգոռում, կոտրում ու ապականում ամեն մի նվիրական բան. դեռ ոչինչ, եթե միայն նայեիր այդ երեխաներին, իսկ երբ ստիպում են նրանց մե՛ջ լինել»,— գրում է նա մի նամակում՝ գյուղից, ուր գնում էր իշխանուհին ամառները, և շարունակում է. «Մեզ մոտ են երեք պառավ, և երեքն էլ պատմում են, թե ինչպես իրենց հանգուցյալները կաթվածահար էին եղել, ինչպես էին իրենք խնամում նրանց. բայց առանց այդ էլ ցո՛ւրտ է»։

Այժմ այդ միջավայրին հավելվեց համառ հետապնդումը և արդեն ոչ միայն սոսկ իշխանուհու, այլև ողորմելի պառավների կողմից, որոնք անվերջ տանջում էին Natalie-ին, համոզելով նրան մարդու գնալ և հայհոյելով ինձ. մեծավ մասամբ նամակներում նա լռության էր տալիս իր կրած մի շարք անախորժությունները, բայց երբեմն դառնությունը, նվաստացումն ու տաղտուկը հաղթում էին։ «Չգիտեմ,— գրում է նա,— կարելի՞ է արդյոք էլի ինչ-որ բան հավելել իմ կեղեքմանը, մի՞թե այդքան խելք կունենան։ Գիտե՞ս արդյոք, որ նույնիսկ մյուս սենյակ գնալն ինձ արգելված է, անգամ նույն սենյակում տեղս փոխելը։ Ես վաղուց դաշնամուր չեմ նվագել, լույսը բերում են թե չէ՝ գնում եմ դահլիճ. գուցե կողորման, ո՛չ, ետ են գարձնում,— սոխպում հյուսել. հենց ուրիշ սեղանի առաջ եմ նստում,— նրանց կողքին անտանելի է, գոնե այդքանը կարելի՞ է,— չէ՛, պիտի այստե՛ղ նստես՝ իրիցկնկա մոտ. լսի՛ր, նայի՛ր, խոսի՛ր, իսկ նրանք խոսում են միայն Ֆիլարետից ու դատափետում քեզ։ Մի պահ ես սրտնեղեցի, կարմրեցի, ու հանկարծ տխրության ծանր զգացմունքը ճմլեց սիրտս, բայց ոչ այն պատճառով, որ պիտի լինեմ նրանց ստրուկը, ո՛չ... ես շա՛տ խղճացի նրանց»։

Սկսվում է պաշտոնական խնամախոսությունը։

«Մեզ մոտ կար մի տիկին, որը սիրում է ինձ և որին ես դրա համար էլ չեմ սիրում... ամեն կերպ աշխատում է



պակել ինձ, և այնքան բարկացրեց, որ նրա ետևից երգեցի.

«Ես կգցեմ գլխիս ծածկոց դագաղի,
Քան նախշուն քող՝ առանց սիրած աղջի»...

Մի քանի օր անց, 1837 թվականի հոկտեմբերի 26-ին, նա գրում է. «Թե ի՞նչ քաշեցի այսօր, բարեկա՛մս, չես կարող պատկերացնել։ Ինձ զարդարեցին ու տարան Ս.-ի մոտ, որը մանկուցս չափից դուրս ողորմած էր իմ նկատմամբ, նրանց տուն ամեն երեքշաբթի գալիս է գնդապետ Զ.-ն՝ թուղթ խաղալու։ Երևակայիր իմ վիճակը. մի կողմից՝ պառավներ թղթախաղի սեղանի շուրջ, մյուս կողմից՝ զանազան այլանդակ կերպարանքներ և նաև խոսակցությունը, դեմքերը,— այդ բոլորն այնպե՛ս խորթ է, արտառոց, նոզկալի, այնպե՛ս անկյանք, ճղճիմ, ես ինքս ավելի շատ արձանի էի նման, քան կենդանի էակի. ինչ որ կատարվում էր՝ ծանր, հեղձուցիչ մի երազ էր թվում ինձ, ես, երեխայի նման, անվերջ խնդրում էի տուն գնալ, ինձ չէին լսում։ Տանտիրոջ և հյուրի ուշադրությունը ճզմում էր ինձ, նա նույնիսկ կավճով նախշագրեց անվանս առաջին կեսը, աստվա՛ծ իմ, ուժերս չեն հերիքում, ես չեմ կարող հենվել ոչ մեկի վրա այն մարդկանցից, ովքեր կարող էին նեցուկ լինել ինձ. մենակ եմ անդունդի եզրին, և ողջ մի ամբոխ գործադրում է բոլոր ուժերը, որ գլորի ինձ, երբեմն հոգնում եմ, ուժս պակասում է, և դու կողքիս չես ու հենվում էլ չես երևում. բայց մեն-մի հիշողություն՝ և հոգիս արթնանում է ու նորից պատրաստ է սիրո սուսերով կռվի նետվելու»։

Մինչդեռ գնդապետը բոլորին դուր եկավ, Սենատորը բարեհաճ էր նրա նկատմամբ, հայրս գտնում էր, որ «ավելի լավ փեսացու չէր կարելի և պետք էլ չէ սպասել»։ «Նույնիսկ,— գրում է Natalie-ն,— նորին գերազանություն Դ. Պ.-ն (Գոլոխվաստովը) գոհ է նրանից»։ Իշխանուհին Natalie-ին ուղղակի չէր ասում, բայց ավելացնում էր հաճանքներն ու արագացնում գործը։ Natalie-ն փորձում էր գնդապետի ներկայությամբ իրեն կատարյալ «հիմար» ձևացնել, կարծելով, թե կվանի նրան։ Իսկի՞ էլ չէ. նա շարունակում է ավելի ու ավելի հաճախակի գալ։

«Երեկ,— գրում է Natalie-ն,— ինձ մոտ էր Էմիլիան, ահա ի՞նչ ասաց. «Եթե ես լսեի, որ դու մեռել ես՝ ուրախ կխաչակնքեի ու շնորհակալություն կհայտնեի աստծուն»։ Նա իրավացի է շատ առումներով, բայց ոչ լրիվ. միայն վշտի մեջ ապրող նրա հոգին լիովին հասկացավ իմ հոգու տառապանքները, բայց այն երանությունը, որով համակում է ինձ իմ սերը՝ հազիվ թե հասու լինի նրան»։

Բայց իշխանուհին նույնպես չէր վհատվում։ «Ցանկանալով իր խիղճը մաքրել՝ Իշխանուհին կանչեց Զ.-ին ծանոթ ինչ-որ քահանայի ու հարցրեց՝ մեղք չի՞ լինի, արդյոք, եթե ինձ զոռով մարդու տա։ Քահանան ասաց, որ որբի ամուսնությունը հաշտեցնելը նույնիսկ աստվածահաճո բան է։ Ես կանչել կտամ իմ խոստովանահորը,— ավելացնում է Nataile-ն, —և ամեն ինչ կասեմ նրան»։

**30-ը նոյեմբերի:** «Ահա շորերը, ահա վաղվա զարդերը, իսկ այնտեղ՝ սրբապատկեր, մատանիներ, իրարանցում, նախապատրաստություններ,— ու ինձ՝ ոչ մի խոսք։ Հրավիրված են Նասակինները և ուրիշներ։ Նրանք ինձ համար անակնկալ են պատրաստում, ես էլ՝ նրանց համար»։

**Երեկո:** «Այժմ խորհրդակցություն է։ Լև Ալեքսեևիչը (Սենատորը) այստեղ է։ Դու համոզում ես ինձ։ Պետք չէ, բարեկամս, ես կարո՞ղ եմ երես շրջել այդ սարսափելի, քսամնելի տեսարաններից, դեպի ուր տանում են ինձ շրջապատյակաց։ Քո պատկերն է շոգում ինձ վրա, ինձ համար իսկի մի վախենա, և բուն թախիծն ու բուն վիշտը այնքա՞ն սրբազան են, այնպես ամուր ու պինդ են փաթաթվել հոգուս, որ եթե պոկես՝ ավելի մեծ ցավ կպատճառես, վերքերս կրացվեն»։

Բայց ինչպես էլ թաքցնում ու քողարկում էին՝ գնդապետը չէր կարող չտեսնել հարսնացուի վճռական նոզկանքը. նա սկսեց հազվադեպ դալ, ձևանում էր հիվանդ, նույնիսկ օժիտն ավելացնելու ակնարկ արեց. դա շատ բարկություն առաջացրեց, բայց իշխանուհին այդ նվաստացումն էլ զանց առավ, իր մերձմոսկովյան կալվածքն էլ էր տալիս։ Այդ գիշերությանը, թվում է, գնդապետն ինքն էլ չէր ապասում, քանզի դրանից հետո լրիվ անհետացավ։

Մի երկու ամիս անցավ խաղաղ։ Հանկարծ լուր տարածվեց, որ ես փոխադրվում եմ Վլադիմիր։ Այնժամ իշխանուհին արեց խնամախոսության վերջին հուսահատ փորձը։ Նրա ծանոթներից մեկն ուներ մի սպա որդի, որ հենց նոր էր վերադարձել Կովկասից. երիտասարդ էր, կրթված ու շատ կարգին մարդ։ Իշխանուհին, մի կողմ դնելով զոռոզությունը, ինքն առաջարկեց նրա քրոջը՝ «տնտղել» եղբորը. չի՞ ուզում, արդյոք, պսակվել։ Սպան ենթարկվեց քրոջ ներշնչմանը։ Աղջիկը չէր ուզում կրկին անգամ խաղալ նույն զզվելի ու տխուր դերը. տեսնելով, որ գործը լուրջ քննության է ստանում՝ նա տղային մի նամակ գրեց, ուղղակի, բացահայտ ու պարզ ասաց, որ սիրում է ուրիշի, ապավինեց նրա պատվախնդրությանը և աղերսեց նոր տառապանքներ չպատճառել իրեն։

Սպան շատ նրբանկատորեն մի կողմ քաշվեց։ Իշխանուհին զարմացած էր, վիրավորված ու վճռեց իմանալ, թե ի՞նչ է եղել։ Սպայի քույրը,— որի հետ խոսել էր Natalie-ն ինքը և որը խոսք էր տվել եղբորը՝ ոչինչ չհայտնել իշխանուհուն,— ամեն ինչ պատմել էր «ընկերակցուհուն»։ Սա, պարզ է, անմիջապես տեղ էր հասցրել։

Իշխանուհին քիչ էր մնում զայրույթից շնչահեղձ լիներ։ Չիմանալով ինչ անի՝ նա աղջկան հրամայեց գնալ վերև՝ իր սենյակը և աչքին չերևալ. չբավարարվելով դրանով, նա կարգադրեց դուռը վրան կողպել և հսկելու համար երկու սպասուհի կարգեց։ Ապա գրեց իր եղբայրներին ու զարմիկներից մեկին և խնդրեց նրանց հավաքվել խորհուրդ անելու, հայտնելով, որ ինքն այնպես ընկճված է ու վշտացած, որ չի կարողանում գլուխ հանել իրեն բաժին ընկած այդ դժբախտ գործից։ Հայրս հրաժարվեց, ասելով, որ ինքն էլ շատ հոգսեր ունի, որ իսկի էլ պետք չէ այդքան կարևորություն տալ եղածին, և որ ինքը վատ դատավոր է սրտային գործերում։ Սենատորն ու Գ. Պ. Գոլոխվաստովը հաջորդ օրը երեկոյան ներկայացան ըստ հրավերի։

Երկար խոսեցին, ոչ մի բանում համաձայնության չեկան և ի վերջո պահանջեցին կալանավորին։ Աղջիկը ներս մտավ. բայց դա նրանց իմացած լուսկյաց, ամոթխած որբը չէր։ Դեմքի հանգիստ ու հպարտ արտահայտության մեջ երևում էին անհողդողդ հաստատակամությունն ու վճռական

վճիռը. դա արդեն երեխա չէր, այլ մի կին, որը գնում էր պաշտպանելու իր սերը— ի՛մ սերը։

«Մեղադրյալի» տեսքը խառնեց բարձրագույն ատյանը։ Նրանք շփոթված էին. վերջապես, Դմիտրի Պավլովիչը, l'orateur de la famille[1], ընդարձակ շարադրեց իրենց հավաքի պատճառը, իշխանուհու վիշտը, իր որդեգրի բախտը կարգավորելու նրա սրտաբուխ ցանկությունը և այն տարօրինակ հակառակությունը, որ ցուցաբերում էր հենց նա, ում օգտին արվում է այդ բոլորը։ Սենատորը գլխով ու ցուցամատով հաստատում էր զարմիկի խոսքերը։ Իշխանուհին լուռ էր, նստել էր երեսը շուռ տված ու քթաղ էր քաշում։

«Մեղադրյալը» ամեն ինչ լսեց ու պարզամտորեն հարցրեց, թե իրենից ի՞նչ են պահանջում։

— Մենք շատ հեռու ենք որևէ բան պահանջելուց,— նկատեց զարմիկը,— մենք այստեղ ենք հորաքրոջ կամքով, որ ձեզ անկեղծ խորհուրդ տանք։ Ձեզ ընձեռնվում է բոլոր առումներով հիանալի ամուսնություն։

— Ես այն չեմ կարող ընդունել։

— Իսկ ի՞նչն է պատճառը։

— Դուք գիտե՛ք։

Ընտանիքի հոգետորը մի քիչ կարմրեց, քթախոտ քաշեց և, աչքերը կկոցելով, շարունակեց.

— Այստեղ շատ-շատ բաներ կան, որոնց դեմ կարելի էր առարկել. ես ձեր ուշադրությունն եմ հրավիրում ձեր հույսերի խախուտության վրա։ Դուք շատ վաղուց չեք տեսնվել մեր դժբախտ Alexandr-ի հետ, նա այնպե՞ս ջահել է, տաքարյո՞ւն, դուք վստա՞հ եք, որ...

— Վստա՞հ եմ։ Եվ ինչ էլ լինեն նրա մտադրությունները՝ ես իմս փոխել չեմ կարող։

Զարմիկն սպառեց իր ճարտասանությունը. նա վեր կացավ՝ ասելով.

— Տա՛ աստված, տա՛ աստված, որ դուք չզղջաք։ Ես շատ եմ վախենում ձեր ապագայի համար։

[1] ընտանեկան հոգետորը (ֆրանս.)։



Սենատորը հոնքերը կիտեց, և հենց նրան էլ դիմեց դժբախտ աղջիկը։

— Դուք,— ասաց նա,— միշտ էլ կարեկցել եք ինձ, աղաչում եմ ձեզ, փրկեցեք ինձ, ինչ ուզում եք արեք՝ բայց ազատեցեք ինձ այս կյանքից։ Ես ոչ ոքի ոչ մի բան չեմ արել, ոչինչ չեմ խնդրում, ոչինչ չեմ ձեռնարկում, ես լոկ հրաժարվում եմ խաբել մարդուն ու կործանել ինձ՝ ամուսնանալով նրա հետ։ Թե դրա համար ինչեր եմ տանում՝ դժվար է պատկերացնել, ցավում եմ, որ այս բանն ստիպված եմ ասել իշխանուհու ներկայությամբ, բայց տանել վիրավորանքները, կշտամբանքի խոսքերը, նրա բարեկամուհու ակնարկությունները՝ ուժերիցս վեր է։ Ես չեմ կարող, ես չպիտի թույլ տամ, որ իմ մեջ վիրավորվի...

Ջղերը չդիմացան, ու արցունքները հեղեղի պես թափվեցին նրա աչքերից. Սենատորը վեր թռավ և, հուզված, սկսեց քայլել սենյակում։

Այդ պահին «ընկերակցուհին», շարությունից եփ գալով, չհամբերեց ու, դառնալով իշխանուհուն, ասաց.

— Տեսա՞ք մեր համեստին, էս էլ ձեզ շնորհակալությունը։

— Էս ո՞ւմ մասին է խոսում,— գոռաց Սենատորը։—

— Հը՞, էդ ո՞նց եք դուք, քույրի՛կս, թույլ տալիս, որ սա՝ սատանան գիտե, թե ով, ձեր ներկայությամբ այդպես խոսի ձեր եղբոր աղջկա մասին։ Եվ, ընդհանրապես, ինչո՞ւ է այս քնձռոտն այստեղ։ Սրա՞ն էլ եք կանչել խորհրդի։ Ձեր ազգականուհի՞ն է, ի՞նչ է։

— Աղավնյա՛կս,— պատասխանեց վախեցած իշխանուհին,— դու գիտես ի՛նչ է նա ինձ համար և ո՞նց է ինձ խնամում։

— Հա՛, հա՛, դա լավ է, դե թող դեղ տա ու էլի ինչ որ պետք է. խոսքն այդ մասին չէ. ես ձեզ, ma soeur[1], հարցնում եմ՝ ինչո՞ւ է նա այստեղ, երբ խոսում են ընտանեկան գործից, ու դեռ ձայնն էլ բարձրացնում է։ Ուրեմն կարելի է պատկերացնել, թե նա մենակն ինչե՞ր է անում, իսկ հետո էլ գանգատվում եք։ Է՛յ, կա՛ռքս։

[1] քույր (ֆրանս.)։

«Ընկերակցուհին», լացակումած ու կարմրատակած, գուրս վազեց։

— Ինչո՞ւ եք այդպես երես տալիս նրան,— շարունակեց զայրացած Սենատորը։— Նա անվերջ երևակայում է, թե Զվենիգորոդի գինետանն է, ո՞նց չեք զզվում։

— Վե՛րջ տուր, բարեկա՛մս, առանց էն էլ ջղերս քայքայված են, օ՜հ... Դու կարող ես գնալ՝ վերև ու այնտեղ մնալ,— ավելացրեց նա՝ դառնալով զարմուհուն։

— Ժամանակն է այդ բոլոր բաստիլիաներն* էլ ոչնչացնելու։ Այդ ամենը հիմարություն է և ոչ մի բանի չի հասցնի,— նկատեց Սենատորն ու խլեց գլխարկը։

Մեկնելիս նա բարձրացավ վերև. տեղի ունեցածից հուզված, Natalie-ն նստել էր բազմոցին՝ դեմքը ծածկած, ու դառն լաց էր լինում։ Մերուկը շոյեց նրա ուսն ու ասաց.

— Հանգստացի՛ր, հանգստացի՛ր, ամեն ինչ կանցնի։ Դու աշխատիր, որ քույրս դադարի քեզ վրա բարկանալուց, նա հիվանդ կին է, հարկավոր է նրան զիջել, նա, ախր, ի վերջո քո լավն է ուզում. իսկ քեզ զոռով մարդու չեն տա, դրա համար ե՞ս եմ պատասխանատու։

— Ավելի լավ է վանք մտնեմ, պանսիոն, գնամ Տամբով՝ եղբորս մոտ, Պետերբուրգ, քան այսպես ապրեմ,— պատասխանեց նա։

— Դե լա՛վ, լա՛վ, աշխատիր հանգստացնել քրոջս, իսկ այդ ապուշի հախից ե՞ս կգամ։

Սենատորը, դահլիճով անցնելիս, հանդիպեց «ընկերակցուհուն»։ «Խնդրում եմ համը չհանեք»,— գոռաց նրա վրա՝ մատը թափ տալով։ Սա, հեկեկալով, գնաց ննջարան, ուր իշխանուհին արդեն պառկած էր անկողնու մեջ, և չորս սպասուհիներ շփում էին նրա ձեռքերն ու ոտքերը, քացախի թրջոց դնում բունքերին ու Հոֆմանի կաթիլներ կաթեցնում շաքարին։

Դրանով էլ ընտանեկան խորհուրդն ավարտվեց։

Պարզ է, որ աղջկա վիճակը լավանալ չէր կարող։ «Ընկերակցուհին» դարձավ ավելի զգույշ, բայց, տածելով անձնական ատելություն և ցանկանալով վրեժխնդիր լինել նրանից վիրավորանքի ու նվաստացման համար, այժմ



թունավորում էր նրա կյանքը մանր, կողմնակի միջոցներով. ինքնին հասկանալի է, որ իշխանուհին մասնակցում էր անպաշտպան աղջկա այդ անազնիվ հալածանքին։

Հարկավոր էր վերջ դնել դրան։ Ես որոշեցի ուղղակի ասպարեզ գալ և հանգիստ տոնով ընդարձակ, անկեղծ մի նամակ գրեցի հորս։ Նրան հայտնում էի իմ սիրո մասին և, կանխատեսելով պատասխանը, ավելացնում, որ ես ամենևին էլ իրեն չեմ շտապեցնում, որ ժամանակ եմ տալիս մի լավ զննելու՝ վաղանցո՞ւկ զգացմունք է դա, թե ոչ, և միայն մի՛ բան էի խնդրում՝ որ ինքն ու Սենատորը մտնեն դժբախտ աղջկա դրության մեջ, հիշեն, որ աղջկա նկատմամբ իրենք ունեն նույնքան իրավունք, ինչքան և ինքը՝ իշխանուհին։

Հայրս պատասխանեց, թե ինքը տանել չի կարող ուրիշի գործերին խառնվելը, թե իրեն չի վերաբերում՝ ի՞նչ է անում իշխանուհին սեփական տանը։ Նա ինձ խորհուրդ էր տալիս ձեռք քաշել սին մտքերից, որ «ծնունդ են աքսորավայրի պարապության ու ձանձրույթի», և ավելի լավ է նախապատրաստվել օտար երկրներ ճանապարհորդելու։ Մենք անցած տարիներին հաճախ էինք նրա հետ խոսում արտասահմանյան ուղևորությունից, նա գիտեր, թե ես ինչ բուռն ցանկություն ունեի, բայց բազում խոչընդոտներ էր ի հայտ բերում և միշտ եզրափակում էր միևնույն խոսքերով. «Դու նախ ձեռքովդ աչքերս փակիր, հետո ճանապարհդ բաց է՝ ո՛ւր կուզես գնա»։ Աքսորում ես կորցրի մոտակա ուղևորության ամեն մի հույս, գիտեի, թե ինչքան դժվար կլինի թույլտվություն ստանալը, և, բացի այդ, ինձ անվայելուչ էր թվում բռնի բաժանումից հետո պահանջել կամավոր բաժանում։ Ես հիշում էի ծերունական կոպերին թրթռացող արցունքը, երբ ուղևորվում էի Պերմ... ու հանկարծ հայրս նախաձեռնությո՞ւն է հանդես բերում և առաջարկում է ինձ՝ մեկնել։

Ես անկեղծ էի, գրել էի՝ խնայելով ծերուկին, այնքա՞ն քիչ բան էի խնդրել, իսկ նա ինձ պատասխանում էր հեգնանքով ու խորամանկելով։ «Նա ոչինչ չի ուզում անել ինձ համար,— ասում էի ինքս ինձ,— նա, Գիզոյի* նման, քա-

բողում է la non-intervention[1]. լա՜վ, ես ի՞նքս կանեմ ուզածս և արդեն՝ վե՛րջ զիջումներին»։ Ես առաջ երբեք չէի մտածել ապագաս կարգավորելու մասին։ Ես հավատում էի, գիտեի, որ ապագան ի՛մն է, մե՛րն է և մանրամասները թողել էի դեպքերի ընթացքին. մեզ բավական էր սիրո գիտակցումը, մեր ցանկությունները բոպեական տեսակցությունից չէին անցնում։ Հորս նամակն ինձ ստիպեց, որ իմ ապագան իմ ձեռքն առնեմ։ Սպասելու հարկ չկար— cosa fatta capo ha![2]։ Հայրս այնքան էլ սենտիմենտալ չէ, իսկ իշխանուհին՝

*Թող իր համար լաց լինի...*
*Այդ ինչ է որ. շուտ կանցնի՞։*

Այդ ժամանակ Վլադիմիրում հյուր էին եղբայրս և Կետշերը։ Մենք Կետշերի հետ գիշերներ էինք անցկացնում՝ խոսելով, վերհիշելով, ծիծաղելով արցունքի միջից և արցունքոտվելու չափ։ Նա մերոնցից առաջինն էր, որին տեսա Մոսկվայից մեկնելուց հետո։ Նրանից ես իմացա մեր խմբի ժամանակագրությունը, եղած փոփոխությունները, հետաքրքրող հարցերը, ի՞նչ մարդիկ են եկել, որտե՞ղ են նրանք, ովքեր թողել են Մոսկվան և այլն։ Խոսելով ամեն ինչից, ես պատմեցի մտադրություններիս մասին։ Քննելով, թե ի՞նչ պիտի անել և ինչպե՞ս, Կետշերն ամփոփեց մի առաջարկությամբ, որի անհեթեթությունը ես գնահատեցի հետո։ Ցանկանալով փորձել բոլոր խաղաղ ուղիները, նա ուզում էր գնալ հորս մոտ, որին հազիվ էր ճանաչում, և լրջորեն խոսել նրա հետ։ Ես համաձայնեցի։

Կետշերը, անշուշտ, ամեն մի լավ ու ամեն մի վատ բանի ավելի էր ընդունակ, քան դիվանագիտական բանակցությունների, էն էլ հորս հետ։ Նա ծայրագույնս օժտված էր այն ամենով, ինչը պիտի վերջնականապես փչացներ գործը։ Սոսկ նրա երևույթն արդեն վհատություն ու տագնապ էր պատճառում ամեն մի պահպանողականի՝ բարձրահասակ, արտառոց ցրիվ մազերով, անկանոն սանրվածքով, 93 թվականի Կոնվենտի մի շարք անդամներին, ամենից շատ

[1] չմիջամտել (ֆրանս.)։
[2] եղածը ետ չես դարձնի (իտալ.)։



Մարատին՝ հիշեցնող խիստ դեմքով՝ նույն մեծ բերանը, արհամարհանքի նույն խիստ գծագրությունը շուրթերին և նույն թախծոտ ու զայրացկոտ-տխուր արտահայտությունը. սրան հարկ է ավելացնել ակնոցը, լայնեզր գլխարկը, ծայրահեղ դյուրագրգռությունը, բարձր ձայնը, իրեն չզսպելու սովորությունն ու բարկանալուն զուգընթաց հոնքերն ավելի ու ավելի վեր քաշելու ունակությունը։ Կետշերը նման էր Ժ. Սանդի հիանալի «Օրաս» վեպի Լարավինյեին՝ ինչ-որ պատֆայնդերյան՝, ռոբինզոնյան և էլի ինչ-որ զուտ մոսկովյան խառնուրդով։ Շիտակ, ազնիվ խառնվածքը նրան մանկուց բացահայտ գժտության մեջ էր դրել շրջապատող աշխարհի հետ. նա չէր թաքցնում այդ թշնամական վերաբերմունքը և վարժվել էր դրան։ Մի քանի տարով մեզնից մեծ՝ նա անվերջ վիճում էր մեզ հետ ու ամեն ինչից դժգոհ էր, նկատողություններ էր անում, գժտվում և այդ բոլորը պատում մանկան բարեսրտությամբ։ Նրա խոսքերը կոպիտ էին, բայց զգացմունքները՝ նուրբ, և մենք շա՜տ շատ բան էինք ներում նրան։

Դե՛, պատկերացրեք հենց սրան, «ժողովրդի բարեկամ» Մարատի դեմքով այդ վերջին մոհիկանին, որը գնում է հորդորելու իմ հորը։ Շատ անգամ էի ես հետագայում ստիպում կետշերին՝ պատմել իրենց տեսակցությունը։ իմ երևակայությունը չէր հերիքում պատկերացնելու այդ դիվանագիտական միջամտության ողջ ինքնատիպությունը։ Այնպես հանկարծահաս էր այդ միջամտությունը, որ ծերուկն սկզբում իրեն կորցրեց, սկսեց բացատրել բոլոր այն խորին նկատառումները. թե ինչու է ինքը դեմ իմ ամուսնությանը, և հետո արդեն, ուշքի գալով, տոնը փոխեց ու Կետշերին հարցրեց, թե ի՞նչ իրավունքով է եկել իր մոտ՝ խոսելու մի գործից, որ բոլորովին իրեն չի վերաբերում։ Խոսակցությունն ընդունեց մաղձոտ բնույթ։ Դիվանագետը, տեսնելով, որ գործն ավելի է վատանում, փորձեց ծերուկին վախեցնել իմ առողջական վիճակով. բայց դա արդեն ուշացած քայլ էր, և տեսակցությունը վերջացավ, ինչպես որ պետք էր սպասել, մի շարք խայթող խոսքերով՝ հորս կողմից և կոպիտ արտահայտություններով՝ Կետշերի կողմից։

Կետշերն ինձ գրում էր. «Ներուկից ոչ մի բան մի սպասիր»։ Հենց այդ էլ հարկավոր էր։ Բայց ի՞նչ անել, ինչպե՞ս սկսել։ Մինչ ես օրը տասը տարբեր նախագիծ էի մտմտում ու չէի որոշում ո՛րը գերադասել՝ եղբայրս պատրաստվում էր մեկնել Մոսկվա։

Դա 1838 թվականի մարտի 1-ին էր։

## ԳԼՈՒԽ XXIII

### 1838 թվականի մարտի երեքը և մայիսի ինը

Առավոտյան նամակներ էի գրում. երբ վերջացրի՝ նստեցինք ճաշելու։ Ես չէի ուտում, մենք լռում էինք, ինձ համար անտանելի ծանր էր,— դա ժամը մոտ հինգին էր, յոթին ձիերը պիտի գային։ «Վաղը ճաշից հետո նա կլինի Մոսկվայում, իսկ ես...», և բոպե առ բոպե զարկերակս ավելի ուժգին էր խփում։

— Լսեք,— վերջապես ասացի եղբորս՝ նայելով ափսեիս մեջ,— ինձ Մոսկվա տարեք, հա՞։

Եղբայրս վայր դրեց պատառաքաղն ու կասկածանքով նայեց ինձ. իրո՞ք լսեց, թե՞ թվաց։

— Անցկացրեք ուղեկալից՝ ձեր ծառայի տեղ, էլ ինձ ոչինչ պետք չէ, լա՞վ։

— Դե՛, ի՛նձ ինչ կա որ, միայն թե՝ հետո քեզ...

Այդ «հետո քեզ»-ն արդեն ուշացած էր, նրա «ինձ ինչ կա որ»-ը արյանս մեջ էր, ուղեղիս մեջ։ Մի բոպե առաջ հազիվ առկայծած միտքն այժմ մեջիցս հանել չէր լինի։

— Մտածելու բան չկա, ինչ ասես կարող է պատահել. դե՛, վերցնո՞ւմ եք ինձ։

— Ինչո՞ւ չէ, ես պատրաստ եմ, միայն թե...

Ես վեր թռա սեղանից։

— Դուք մեկնո՞ւմ եք,— հարցրեց Մատվեյը՝ ցանկանալով ինչ-որ բան ասել։

— Մեկնում եմ,— պատասխանեցի ես այնպես, որ նա ոչինչ չավելացրեց։— Վաղը չէ մյուս օրը կվերադառնամ, եթե որևէ մեկը գա՝ ասա, որ գլուխս ցավում է, քնած եմ,



երեկոյան մոմերը վառիր, իսկ հիմա տուր ինձ սպիտակեղեն ու ճամպրուկս։

Բոժոժիկները զնգզնգացին բակում։

— Դուք պատրա՞ստ եք։

— Պատրաստ եմ։ Դե՛, բարի ճանապարհ։

Մյուս օրը ճաշի ժամին բոժոժիկները դադարեցին զնգզնգալուց, մենք Կետշերի տան մուտքի առաջն էինք։ Ես կարգադրեցի կանչել նրան։ Մի շաբաթ առաջ, երբ նա ինձ թողեց Վլադիմիրում, իմ գալու մասին ենթադրություն անցամ չկար, և դրա համար էլ ինձ տեսնելով՝ այնպես զարմացավ, որ սկզբում ոչ մի բառ չասաց, իսկ հետո ծիծաղից թուլացավ, բայց շուտով մտահոգ տեսք ընդունեց ու ինձ տարավ ներս։ Երբ իր սենյակումն էինք, նա, դուռը խնամքով կողպելով, հարցրեց.

— Ի՞նչ է պատահել։

— Ոչինչ։

— Բա էս ինչի՞ ես եկել։

— Չէի կարող մնալ Վլադիմիրում, ես ուզում եմ տեսնել Natalie-ին. ահա և բոլորը, իսկ դու պիտի դա գլուխ բերես և հենց այս բոպեին, որովհետև վաղը ես պետք է լինեմ տանը։

Կետշերը նայեց աչքերիս ու թափով վեր քաշեց հոնքերը։

— Ի՞նչ հիմարություն, սատանա՛ն տանի, անհարկի, ոչինչ չնախապատրաստած՝ ելնել ու գալ։ Է՛, գրե՞լ ես, ժամադրե՞լ ես։

— Ոչինչ չեմ գրել։

— Բա հիմա ի՞նչ պիտի անենք, -խպերս։ Սա հո խելագարությո՛ւն է։

— Բանն էլ հենց այն է, որ առանց բոպե կորցնելու հարկավոր է մի հնարար գտնել։

— Դու հիմար ես,— վճռականորեն ասաց Կետշերը՝ հոնքերն է՛լ ավելի վեր քաշելով,— շատ ուրախ կլինեի, չափազա՛նց ուրախ՝ եթե ոչ մի բան չհաջողվեր, քեզ դա՞ս կլիներ։

— Եվ բավականին տհաճան՝ եթե բռնվեմ։ Լսի՛ր, երբ մթնի՝ մենք կգնանք իշխանուհու տան մոտ, դու ծառաներից

մեկն ու մեկին դուրս կկանչես, ես քեզ կասեմ՝ ում. հետո կտեսնենք ի՞նչ պիտի անենք։ Եղա՞վ։

— Է՛, ճա՛րս ինչ, գնանք, բայց ո՞նց կուզեի, որ չհաջողվեր։ Ինչո՞ւ երե՛կ չգրեցիր,— և Կետշերը հանդիսավոր գլխին քաշելով լայնեզր շլյապան, վրան գցեց կարմիր աստառով սև թիկնոցը։

— Անիծվա՞ծ փնթփնթան,— ասացի նրան, դուրս գալով, և Կետշերը, սրտանց ծիծաղելով, կրկնում էր. «Եփած հավի ծիծաղն էլ կգա՝ առանց գրելու վեր կենաս ու գաս. չտեսնվա՞ծ բան է»։

Կետշերի մոտ մնալ չէր կարելի, նա շատ հեռու էր ապրում, և այդ օրը նրա մայրը հյուրեր ուներ։ Նա ինձ տարավ մի հուսարական սպայի մոտ։ Կետշերը նրան ճանաչում էր իբրև ազնիվ մարդու, նա խառն չէր քաղաքական գործերին, և, հետևաբար, ոստիկանական հսկողությունից դուրս էր։ Երբ մենք եկանք, երկար բեղերով սպան նստել էր ճաշելու. Կետշերը նրան պատմեց գործի էությունը, սպան, ի պատասխան, մի բաժակ կարմիր գինի լցրեց ինձ ու շնորհակալություն հայտնեց վստահության համար, ապա հետո եկավ իր ննջարանը, որը զարդարված էր համեստներով ու թամքատակերով, այնպես որ՝ կարելի էր կարծել, թե նա քնում է ձի հեծած։

— Ահա՛ քեզ սենյակ,— ասաց նա,— ձեզ այստեղ ոչ ոք չի անհանգստացնի։

Ապա կանչեց սպասյակին, նույնպես հուսար, և կարգադրեց ոչ մի դեպքում ոչ մեկին ներս չթողնել այդ սենյակը։ Ես կրկին հայտնվեցի զինվորի հսկողության տակ, այն տարբերությամբ, որ Կրուտիցիում ժանդարմն ինձ հսկում-պահպանում էր ողջ աշխարհի՛ց, իսկ այստեղ հուսարը ողջ աշխա՛րհն էր հսկում-պահպանում ինձնից։

Երբ լրիվ մթնեց, Կետշերի հետ գնացինք։ Սիրտս թունդ առավ՝ երբ նորից տեսա ծանոթ, հարազատ փողոցները, վայրերը, տները, որոնք չէի տեսել շուրջ չորս տարի... Կուզնեցկի կամուրջը, Տվերյան բուլվարը... ահա և Օգարյովի՛ տունը, նրա վրա փակցրել էին ինչ-որ վիթխարի մի գերբ, այն օտար էր արդեն. ներքևի հարկում, ուր անցել էին մեր պատանեկան օրերը, ապրում էր դերձակը... ահա Գավրսկայա փողոցը,— շունչս կտրվում է, կիսավերնահարկում, անկյունի պատուհանին մոմ է վառվում, դա նրա սենյակն է, նա նամակ է գրում ինձ, նա մտածում է իմ մասին, մոմն այնպես խնդուն վառվում է, վառվում է ինձ համար։

Մինչ մենք հնար էինք մտմտում, թե ոնց ավելի հարմար ձևով որևէ մեկին դուրս կանչենք, վազելով մեր դեմ ելավ իշխանուհու ջահել սպասավորներից մեկը։

— Արկա՛դի,— ասացի ես՝ երբ նա մեզ հասավ։ Նա ինձ չճանաչեց։— Ի՞նչ է եղել,— ասացի,— ինչո՞ւ ձերոնց չես ճանաչում։

— Վա՛հ, այդ դո՞ւք եք,— ճչաց նա։

Ես մատս շուրթերիս դրի ու ասացի.

— Եթե ուզում ես ինձ բարեկամական ծառայություն մատուցել՝ հենց հիմա, Սաշայի կամ Կոստենկայի միջոցով, ինչքան կարող ես շուտ, տեղ հասցրու այս երկտողը, հասկացա՞ր։ Մենք պատասխանին կսպասենք Ներքանցքի անկյունում, և ոչ մեկին ոչ մի խոսք, թե դու տեսել ես ինձ Մոսկվայում։

— Հանգիստ եղեք, էս ա, ամեն ինչ կանենք,— պատասխանեց Արկադին ու վազեց տուն։

Մոտ կես ժամ մենք ետ ու առաջ էինք քայլում Ներքանցքում, մինչև որ աճապարելով ու շորս կողմը նայելով տնից դուրս եկավ միջահասակ, նիհարուկ մի պառավ, հենց այն ժիր աղախինը, որը 1812 թվականին ֆրանսիական զինվորներից ինձ համար «մանժե» էր խնդրել. մանկուց մենք նրան Կոստենկա էինք ասում։ Պառավը երկու ձեռքով բռնեց դեմքս ու պաչպչեց։

— Էսպես ուրեմն՝ թոռա՛ր-եկար,— ասում էր նա,— ախ դո՛ւ խելառի մեկը, ախր ե՞րբ պիտի խելքդ գլուխդ գա, խենթո՛ւկս, օրիորդին էլ էնպես վախեցրիր՝ քիչ մնաց ուշքը գնա։

— Պատասխա՛ն ուր է, բերե՞լ ես։

— Բերել եմ, բերել, ա՛յ թե ինչամբերն ես,— և ինձ տվեց թղթի մի կտոր։

Դողդոջուն մատիտագիր մի քանի բառ. «Աստվա՞ծ իմ, մի՞թե ճիշտ է, որ դու այստեղ ես, վաղն առավոտյան ժամը

վեցին քեզ կսպասեմ, չե՞մ հավատում, չե՞մ հավատում։ Մի՞թե սա երազ չէ»։

Հուսարը նորից ինձ հանձնեց սպասյակի պահպանությանը։ Ժամը հինգն անց կեսին ես կանգնել էի լապտերասյանը հենված ու սպասում էի իշխանուհու տան բակի դռնակից ներս մտած Կետշերին։ Չեմ էլ փորձի պատմել, թե ինչ էր կատարվում մեջս՝ սյան տակ սպասելիս. նման ակընթարթները այն պատճառով են մնում անձնական գաղտնիք, քանզի դրանք համր են։

Կետշերը ձեռքով արեց ինձ։ Ես ներս մտա դռնակից, պատանյակը, որ հասցրել էր բոյ քաշել, ուղեկցեց ինձ՝ մտերմորեն ժպտալով։ Եվ ահա ես նախասրահում եմ, ուր մի ժամանակ մտնում էի հորանջելով, իսկ հիմա պատրաստ էի ծունկ չոքել ու համբուրել հատակի ամեն մի տախտակը։ Արկադին ինձ բերեց հյուրասենյակ ու դուրս գնաց։ Հոգնած՝ նետվեցի բազմոցին, սիրտս այնպես արագ էր խփում, որ ցավ էի զգում, և, բացի այդ, սարսափը պատել էր ինձ։ Ես ձգձգում եմ պատմությունս, որ ավելի երկար մնամ այդ հիշողությունների մեջ, թեև տեսնում եմ, որ խոսքս անզոր է։

Նա ներս մտավ ոտից-գլուխ սպիտակ հագած, շլացուցիչ գեղեցիկ. բաժանման երեք տարիներն ու մղած պայքարը ավարտուն էին դարձրել դիմագծերն ու դեմքի արտահայտությունը։

— Այդ դո՛ւ ես,— ասաց նա իր հանգիստ, մեղմ ձայնով։

Մենք նստեցինք բազմոցին ու լուռ էինք։

Երջանկության արտահայտությունը նրա աչքերի մեջ հասնում էր տառապանքի։ Ուրախության բարձրագույն աստիճանի զգացումը երևի խառն է ցավով, քանի որ նա էլ ի՞նձ ասաց. «Ի՞նչ տանջված տեսք ունես»։

Ես բռնել էի նրա ձեռքը; մյուսի վրա նա հենվել էր, և մենք ոչինչ չունեինք իրար ասելու... կարճ արտահայտություններ, երկու-երեք հիշողություն, բառեր՝ նամակներից, դատարկ խոսքեր Արկադիի, հուսարի, Կոստենկայի մասին։

Հետո ներս մտավ դայակը, ասաց, որ ժամանակն է, ու ես վեր կացա, առանց առարկության, և նա էլ ինձ չպահեց... Հոգիս այնպես լի՞ք էր։ Շատն ու քիչը, կարճն ու տևակա-



ն, մի հիշ էլ-ը,— այս ամենը չքանում էր լեցուն ներկայի առաջ...

Երբ ուղեկալն անցել էինք՝ Կետշերը հարցրեց.

— Ի՞նչ արիք, մի բան որոշեցի՞ք։

— Ոչ մի բան։

— Խոսեցի՞ր հետը։

— Այդ մասին՝ ոչ մի խոսք։

— Նա համաձա՞յն է։

— Չեմ հարցրել, անշուշտ, համաձայն է։

— Դու, աստված վկա, երեխայի պես ես քեզ պահում կամ խելագարի,— նկատեց Կետշերը՝ վեր քաշելով հոնքերն ու զայրույթով թոթվելով ուսերը։

— Ես նրան կգրեմ, հետո՝ քեզ, իսկ հիմա մնաս բարո՛վ։ Հա՛յդա, գնացինք։

Հալոցք էր, փափկած ձյունը տեղ-տեղ սևացել էր, երկու կողմից փռված էր անսահման սպիտակ դաշտը, գալիս ու անցնում էին գյուղակները՝ իրենց ծխով, հետո դուրս եկավ լուսինը, և ամեն ինչ այլ կերպ լուսավորվեց. ես մենակս էի կառապանի հետ ու հա՛ նայում էի ու հա՛ այնտեղ էի, նրա հետ, և ճանապարհը, լուսինը և դաշտերը սպես խառնվում էին իշխանուհու հյուրասենյակի հետ։ Եվ տարօրինակ է, ես հիշում էի դայակի, Արկադիի, նույնիսկ ինձ մինչև դարպաս ուղեկցած աղախնի ամեն մի խոսքը, բայց թե ինչ եմ խոսել նրա հետ, ինչ է նա՛-ասել ինձ՝ չէի հիշում։

Երկու ամիսն անցավ անընդհատ գլխացավանքների մեջ, հարկավոր էր փող պարտք վերցնել, ձեռք բերել ծննդյան վկայական. պարզվեց, որ իշխանուհին այն վերցրել էր։ Ընկերներիցս մեկը* կոնսիստորիայից մի ուրիշը ձեռք բերեց՝ գործի դնելով ամեն մի միջոց,— վճարելով, խոնարհվելով, կաշառելով ոստիկաններին ու գրագիրներին։

Երբ ամեն ինչ պատրաստ էր՝ մենք գնացինք, այսինքն՝ ես-ու Մատվեյը։

Մայիսի 8-ի լուսաբացին Մոսկվա տանող ճանապարհի վերջին փոստակայանում էինք։ Կառապանները գնացին ձիերը բերելու։ Եղանակը հեղձուցիչ էր, անձրևը կաթկթում էր, թվում էր ամպրոպ կլինի, ես դուրս չեկա կառքից և

շտապեցնում էի կառապանին։ Ինչ-որ մեկը տարօրինակ, նուրբ, լացակումած, ծորուն ձայնով խոսում էր կառքի մոտ։ Շրջվեցի ու տեսա մոտ տասնվեց տարեկան մի աղջկա՝ գունատ, նիհար, ցնցոտիապատ, խռիվ մազերով, նա ողորմություն էր խնդրում։ Ես նրան տվի արծաթե մի մանրադրամ, նա, դրամը տեսնելով, հոհոաց, բայց, հեռանալու փոխարեն, բարձրացավ կառքի նստիքին, դարձավ իմ կողմն ու սկսեց անկապ-անկապ մրթմրթալ՝ նայելով ուղիղ դեմքիս. նրա հայացքը պղտոր էր, խեղճ, մազերը թափվել էին երեսին։ Նրա հիվանդագին դեմքը, անհասկանալի շաղակրատանքը, վաղորդյան լույսի հետ մեկտեղ, համակում էին ինձ մի տեսակ ջղային երկչոտությամբ։

— Սա մեր գիժն է, այսինքն՝ ցնդած է,— ասաց կառապանը։— Ո՞ւր ես խցկվում, ա՛յ, մտրակով կտամ՝ կիմանաս, աստված վկա՝ կտամ, խելառի մեկը։

— Ի՞նչ ես այոյում, քեզի ի՞նչ արի, ա՛յ, աղան արծաթ կոպեկ տվեց, իսկ ես քեզի ի՞նչ արի։

— Դե՛, տվեց՝ դու էլ առ ու գրողի ծոցը կորի։

— Վերցրու ինձ քեզ հետ,— ավելացրեց աղջիկը, խըղճուկ նայելով ինձ,— դե վերցրու, էլի՛...

— Մոսկվայում փողով ցույց տալու համա՞ր, մթամ հրա՞շք է, ծովի փերի,— ասաց կառապանը,— հա՛յդա, ցա՛ծ իշի, շարժվում ենք։

Աղջիկը հեռանալու միտք չուներ և շարունակում էր աղերսալի նայել. ես կառապանին խնդրեցի չնեղացնել նրան, կառապանը հանգիստ խոտեց նրան ու գրեց գետնին։ Աղջիկը լաց եղավ, ե՛ս էլ էի պատրաստ նրա հետ լալու։

Ինչո՞ւ այս էակը ինձ հանդիպեց հենց այդ օրը, հենց Մոսկվա մտնելիս։ Ես հիշեցի Կոզլովի «Խելագարուհուն», նրան էլ էր նա հանդիպել Մոսկվայի մատույցներում։

Մենք գնացինք, օդը էլեկտրականացած էր, անախորժ ծանր ու տաք։ Կապույտ ամպը, որ գորշ քուլաներով գետին էր հասնում, դանդաղ քարշ էր գալիս դաշտերի վրայով,— և հանկարծ կայծակի զիգզագը շեղ հատեց ամպը, պայթեց որոտը, և անձրևը թափվեց հեղեղի նման։ Մենք Ռոգոժյան ուղեկալից մի տասը վերստ հեռու էինք, դեռ մի ժամ էլ պիտի Մոսկվայով գնայինք մինչև Դևիչիե դաշտը։ Ոտից-գլուխ թրջված՝ հասանք Աստրակովների տուն, ուր ինձ պիտի սպասեր Կետշերը։



Կետշերը չկար։ Նա Ե. Գ. Լևաշովայի՝* այդ մեռնող կնոջ մոտ էր։ Այդ կինը ռուսական կյանքի այն զարմանալի երևույթներից էր, որոնք հաշտեցնում են կյանքի հետ, որոնց ողջ գոյությունը սխրանք է, բարեկամների նեղ շրջանից բացի բոլորին անհայտ մի սխրանք։ Որքա՜ն արցունք է սրբել նա, որքա՜ն մխիթարություն բերել բազում փշրված հոգիների, որքա՜ն պատանի էակների է սատարել, և որքա՜ն ի՜նքը տառապել։ «Նա քամվեց սիրուց»,— ասաց ինձ Զաադաևը, մեկը նրա մերձավորագույն բարեկամներից, որ նրան էր նվիրել* Ռուսաստանի մասին իր հայտնի նամակը։

Կետշերը չէր կարող թողնել նրան և գրում էր, թե կգա ժամը ինձի մոտերքը։ Ինձ անհանգստացրեց այդ լուրը։ Բուռն կրքով տոգորված մարդը ահավոր մի եսամոլ է. Կետշերի բացակայությունն ինձ համար սոսկ ձգձգման իմաստ ուներ... Իսկ երբ խփեց ժամը ինը, հնչեց իրիկնային պատարագի զանգը և մի քառորդ ժամ էլ անցավ՝ ինձ համակեց տենդագին անհանգստությունն ու փոքրոգի հուսահատությունը... Ինն անց կեսն է, չէ՛, նա չի գա. հիվանդը երևի վատ է, ի՞նչ անեմ։ Մոսկվայում մնալ չեմ կարող, աղախնի, դայակի մի անզգույշ բառը իշխանուհու տան մեջ՝ ամեն ինչ կբացի։ Ետ գնալը հնարավոր էր, բայց ես զգում էի, որ ուժ չունեմ ետ գնալու։

Տասից քառորդ պակաս Կետշերը եկավ՝ ծղոտե գլխարկով, ողջ գիշերը չքնած մարդու հոգնատանջ դեմքով։ Ես նետվեցի ընդառաջ և, գրկելով նրան, սկսեցի կշտամբել։ Կետշերը, հոնքերը կիտելով, նայեց ինձ ու ասաց.

— Մի՞թե կես ժամը բավական չէ, որ Աստրակովների տնից Պովարսկայա հասնենք։ Մեկ է, մենք այստեղ պիտի քեզ հետ դատարկաբանենք մի ամբողջ ժամ, բայց ինչքան էլ դա հաճելի լիներ՝ ես չէի կարող ավելի շուտ թողնել մեռնող կնոջն ու գալ։ Լևաշովան,— ավելացրեց նա,— իր ողջույնը ուղարկեց ձեզ, նա հաջողության օրհնանք մաղթեց ինձ իր հանգչող ձեռքով ու տաք շալ տվեց՝ պի՞տք կգա։

Մեռնող կնոջ ողջույնը չափազանց թանկ էր ինձ համար։ Տաք շալը շատ պետք եկավ գիշերը, և ես չհասցրի շնորհակալություն հայտնել նրան, ոչ էլ սեղմել ձեռքը... Նա շուտով վախճանվեց։

Կետշերն ու Աստրակովը գնացին։ Կետշերը պիտի անցներ ուղեկալը Natalie-ի հետ. Աստրակովը ետ էր գալու, որ ինձ ասեր՝ արդյո՞ք ամեն ինչ հաջող է, և ես ի՞նչ պիտի անեմ։ Ես մնացի սպասելու՝ նրա հաճելի, գեղեցիկ կնոջ հետ. սա ինքն ամուսնացել էր վերջերս. բուռն, կրակոտ խառնվածքի տեր՝ նա ամենաջերմ մասնակցությունն էր ցուցաբերում մեր գործին. ջանում էր շինծու ուրախությամբ ինձ հավատացնել, թե ամեն ինչ հոյակապ կստացվի, իսկ ինքն այն աստիճան տանջվում էր անհանգստությունից, որ անընդհատ գույն էր տալիս, գույն առնում։ Միասին նստել էինք պատուհանի առաջ, զրույցը չէր ստացվում. մենք նման էինք հանցանքի համար դատարկ սենյակում փակված երեխաների։ Այդպես անցավ մի երկու ժամ։

Աշխարհում չկա ավելի կործանիչ ու անտանելի բան, քան անգործությունն ու սպասումը՝ նման պահերին։ Ընկերները մեծ սխալ են գործում՝ գլխավոր խնամարկյալի ուսերից վերցնելով ամբողջ բեռը։ Հարկավոր է զբաղմունք հորինել նրա համար, եթե չի ճարվում՝ հոգնեցնել ֆիզիկական աշխատանքով, մտքերը ցրել զբաղմունքով։

Վերջապես եկավ Աստրակովը, մենք նետվեցինք նրան ընդառաջ։

— Ամեն ինչ հրաշալի՞ է, նրանք իմ ներկայությամբ գնացին,— բղավեց նա բակից։— Հիմա գնա Ռոգոժյան ուղեկալից այն կողմ, կամրջակի մոտ ձիեր կտեսնես Պերովի պանդոկի կողքին։ Աստված քեզ հետ։ Հա՛, կես ճամփին կառապանին փոխիր, որ վերջինը չիմանա, թե որտեղից ես գալիս։

Ես ելացա ագեղից թռած նետի նման... Ահա Պերովի պանդոկի մոտի կամրջակը. ոչ մեկը չկա, մյուս կողմն էլ է կամրջակ՝ այդտեղ էլ մարդ չկա։ Հասա մինչև Իզմայլովյան գազանանոցը՝ ոչ ոք չկա. բաց թողի կառքն ու գնացի ոտքով։ Ետ ու առաջ անելով՝ վերջապես մյուս ճանապարհին մի կառք տեսա. կողքին կանգնած էր շահել, գեղեցիկ կառապանը։

— Այստեղով չի՞ անցել բարձրահասակ, ծղոտե գլխարկով աղա, հետն էլ մի օրիորդ,— հարցրի նրան։

— Ես ոչ ոքի չեմ տեսել,— չկամությամբ պատասխանեց կառապանը։

— Իսկ ո՞ւմ ես բերել։

— Աղաներին։

— Ովքե՞ր են նրանք։

— Ինչների՞դ է պետք։

— Էդ ի՞նչ տեսակ մարդ ես, ախպե՛ր, դե որ գործ չուներ՝ չէի հարցնի։

Կառապանը նայեց ինձ զննող հայացքով ու ժպտաց, իմ տեսքը, երևի, նրան տրամադրեց հօգուտ ինձ։

— Թե գործ կա՝ ուրեմն ինքներդ պիտի իմանաք ովքեր են։

— Ա՜յ թե պինդն ես, հա՛, ինձ պետք է Կետշեր անունով ազան։

Կառապանը նորից ժպտաց և, մատով ցույց տալով գեբեզմանոցը, ասաց.

— Ա՜յ, հեռվում, տեսնո՞ւմ եք, սևին է տալիս, հենց ինքն է որ կա, օրիորդն էլ հետն է, գլխարկն էլ մոռացել էր վերցնել, ու պարոն Կետշերն իրենք տվեց, լավ է, որ ծղոտե է։

Այս անգամ էլ էինք հանդիպում գեբեզմանոցո՞ւմ։

... Նա ճչաց ու վազեց ընկավ։

— Ընդմի՛շտ,— ասաց նա։

— Ընդմի՛շտ,— կրկնեցի ես։

Կետշերը հուզված էր, աչքերի մեջ թրթռում էր արցունքը, նա բռնեց մեր ձեռքերն ու դողացող ձայնով ասաց.

— Բարեկամնե՛րս, երջանի՛կ եղեք։

Մենք գրկեցինք նրան։ Դա մեր իսկական պսակադրությունն էր։

Մենք ժամից ավելի Պերովի պանդոկի հատուկ սենյակում էինք. Մատվեյն ու կառքը չկա՛ն ու չկան. Կետշերը մոռացվեց։ Մեր մտքովն էլ չէր անցնում դժբախտության հնարավորությունը, մեզ համար այնպե՛ս լավ էր այստեղ

երեքով, մենք մեզ տա՜նն էինք զգում, ասես միշտ միասին էինք եղել։ Պատուհանի դիմաց պուրակն էր, ներքևից լսվում էր երաժշտությունը և հնչում էր գնչուական խմբերգը. ամպրոպից հետո օրը չքնաղ էր։

Ոստիկանական հետապնդում իշխանուհու կողմից ես չէի սպասում՝ հակառակ Կետշերի. ես գիտեի, որ նա գոռոզությունից ոստիկանին չի խառնի ընտանեկան գործի մեջ։ Բացի այդ, նա ոչինչ չէր ձեռնարկում առանց Սենատորի, ոչ էլ Սենատորը՝ առանց իմ հոր. հայրս երբեք չէր համաձայնվի, որ ոստիկանությունը բռնի ինձ Մոսկվայում կամ Մոսկվայի մոտերքում, այսինքն՝ որ ինձ ուղարկեն Բորբույսկ կամ Սիբիր՝ բարձրագույն կամքը խախտելու համար։ Վտանգը կարող էր սպառնալ միայն գաղտնի ոստիկանության կողմից, բայց ամեն ինչ սիվեց այնպես արագ, որ սա գժվար թե իմանար. իսկ եթե որևէ բանի հոտ էլ առել էր՝ ո՞ւմ մտքով կանցներ, որ աքսորից գաղտնի եկած ու իր հարսնացուին փախցնող մարդը հանգիստ կնստի Պերովի պանդոկում, ուր առավոտից-իրիկուն լիքը մարդ կա։

Վերջապես հայտնվեց և Մատվեյը՝ կառքով։

— Մի բաժակ էլ՝ և բարի՜ ճանապարհ,— կարգադրեց Կետշերը։

Եվ ահա մենք մենակ, այսինքն՝ երկուսով սլանում ենք Վլադիմիրյան ճանապարհով։

Բունկովում, մինչ փոխում էին ձիերը, մտանք իշևանատուն։ Պառավ տիրուհին եկավ հարցնելու, թե ինչ մատուցի և, բարեսրտորեն նայելով մեզ, ասաց.

— Ի՞նչ էլ ջահել ու սիրունիկ կին ունես, լա՜վ զույգ եք, աստվա՜ծ ձեզ հետ։

Մենք մինչև ականջներս կարմրեցինք, սիրտ չէինք անում իրար նայել ու մեր շփոթմունքը թաքցնելու համար՝ թեյ խնդրեցինք։ Հաջորդ օրը ժամը վեցին մոտ հասանք Վլադիմիր։ Չէր կարելի ժամանակ կորցնել. հարսնացուիս թողնելով մի ծեր ընտանիքավոր չինովնիկի մոտ, շտապեցի իմանալու՝ պատրաստ է, արդյոք, ամեն ինչ։ Բայց Վլադիմիրում ո՞վ պիտի պատրաստեր այդ ամեն ինչը։

Բարի մարդ ամենուրեք կա։ Վլադիմիրում այդ ժամանակ տեղավորված էր Սիբիրյան ուլանական գունդը։ Ես



սպաների հետ քիչ էի ծանոթ, բայց նրանցից մեկին հանդիպեցի հանրային գրադարանում՝ սկսեցի խախակի հանդիպելով հանրային գրադարանում՝ սկսեցի բարևել։ Նա շատ հարգալից էր ու սիրալիր։ Մի ամիս անց նա ինձ խոստովանեց, որ գիտեր ինձ ու 1834 թվականի իմ պատմությունը, ասաց, որ ինքն էլ Մոսկվայի համալսարանի ուսանողներից է։ Վլադիմիրից մեկնելիս, երբ մտածում էի, թե ո՞ւմ հանձնարարեմ զանազան հոգսերս՝ միտս եկավ այդ սպան, գնացի մոտը և ուղղակի պատմեցի գործի էությունը։ Նա, անկեղծորեն հուզված իմ վստահությունից, սեղմեց ձեռքս, ամեն ինչ խոստացավ և ամեն ինչ կատարեց։

Սպան սպասում էր ինձ լրիվ համազգեստով, սպիտակ օձիքով, զինվորական բարձրագիր գլխարկով, փամփշտակալը ուսին, ամեն տեսակի ծոպակապերով։ Նա ինձ հայտնեց, որ եպիսկոպոսը թույլատրել է քահանային պսակը կատարել, բայց կարգադրել է նախապես ներկայացնել ծննդյան վկայականը։ Ես սպային տվի վկայականը, իսկ ինքս գնացի մի այլ երիտասարդի մոտ՝ նույնպես Մոսկվայի համալսարանից։ Նա, ըստ նոր կանոնադրության, իր երկու նահանգային տարին էր ծառայում նահանգապետի գրասենյակում և ձանձրույթից մեռնում էր։

— Կուզե՞ք խաչեղբայր լինել։

— Ո՞ւմ։

— Իմ։

— Ո՞նց թե ձեր։

— Այո՛, այո՛, իմ։

— Շատ ուրախ եմ։ Ե՞րբ։

— Հիմա։

Նա կարծում էր, թե կատակում եմ, բայց երբ հապճեպ պատմեցի գործի էությունը՝ վեր թռավ ուրախությունից. խաչեղբա՜յր լինել գաղտնի հարսանիքում, ձեռ ու ո՜տ ընկնել, գուցեև հետաքննությա՜ն ենթարկվել, և այդ բոլորը՝ ամեն մի զվարճությունից զուրկ փոքրիկ քաղաքում։ Նա անմիջապես խոստացավ ինձ համար կառք ճարել, երկու զույգ ձի և նետվեց դեպի պահարանը՝ մաքուր սպիտակ ժիլետ կա՞։

Նրա մոտից գնալիս հանդիպեցի իմ ուլանին. սա կատ-

քով բերում էր քահանային։ Պատկերացրեք խայտաբղետ, զուգված սպային փոքրիկ կառքի մեջ, հաղթամարմին, փառահեղ մորուքով զարդարված տերտերը կողքին, որի մետաքսե փարաջան փաթ էր ընկնում ուլանական սպառազինության բոլոր ավելորդություններին։ Սոսկ այս պատկերն արդեն կկարողանար իր վրա հրավիրել ոչ միայն Վլադիմիրյան Ոսկե դարպասներից սկսվող փողոցի, այլև փարիզյան բուլվարների կամ հենց Ռեժենթ-սթրիթի ուշադրությունը։ Մինչդեռ ուլանի մտքովն էլ դա չէր անցնում, ասենք ես էլ այդ մասին հետո մտածեցի։ Քահանան տներն էր օրհնում,— Նիկոլի տոնն էր,— և իմ հեծյալը մի տեղ բռնացրել էր նրան ու բռնագրավել։ Մենք գնացինք եպիսկոպոսի մոտ։

Հասկանալի լինելու համար պատմեմ, թե ոնց եղավ, որ եպիսկոպոսը խառնվեց այդ գործին։ Մեկնելուցս մի օր առաջ քահանան, որ համաձայնվել էր պսակը կատարել, հանկարծ հայտարարեց, թե առանց եպիսկոպոսի թույլտվության չի պսակի, թե ինքն ինչ-որ բան է լսել ու վախենում է։ Ինչքան էլ ուլանի հետ ճարտասանություն բանեցրինք՝ քահանան համառեց ու իրենը պնդեց։ Ուլանն առաջարկեց փորձել իրենց գնդի տերտերին։ Թրաշված, խուզված, երկարափեշ սերթուկով, երկարաճիտ կոշիկը շալվարի վրա քաշած, խեղճ-խեղճ զինվորական ծխամորճը քաշող այս քահանան թեև զգացվեց մեր առաջարկության մի քանի մանրամասնություններից, բայց պսակը կատարելուց հրաժարվեց, ասելով, և այն էլ ինչ-որ լեհ-բելոռուսական բարբառով, թե իրենց խստագույնս արգելված է պսակել «քաղաքացիականներին»։

— Մեզ էլ, ավելի խստիվ, արգելված է վկա ու խաչեղբայր լինել՝ առանց թույլտվության,— ասաց նրան սպան,— բայց ես հո անո՞ւմ եմ։

— Ձերն ուրիշ է, իմս՝ Հիսուսի առաջ է մեղք։

— Խիզախի տերն ասված է,— ասացի ուլանին,— ես հիմա գնամ եպիսկոպոսի մոտ։ Հա՛, իսկ ինչո՞ւ թույլտվություն չեք վերցնում։

— Պետք չի։ Գնդապետը կնոջը կասի, սա էլ՝ սրանին։ Համ էլ, կարող է թույլ չտալ։



Վլադիմիրի եպիսկոպոս Պարֆենին խելացի, խիստ ու կոպիտ ծերուկ էր։ Վարշունակ և յուրատիպ՝ նա հավասարապես կարող էր լինել նահանգապետ կամ գեներալ, կարծում եմ, որ գեներալի տեղը նրան ավելի կսազեր, քան կրոնավորի, բայց այլ կերպ էր ստացվել, և նա առաջնորդում էր իր թեմը այնպես, ինչպես դիվիզիա կառաջնորդեր Կովկասում։ Ես առհասարակ նրա մեջ նկատում էի անհամեմատ ավելի շատ վարշարարի, քան կենդանի մեռյալի հատկանիշներ։ Նա, ի միջի այլոց, ավելի շատ վճռական մարդ էր, քան շար. բոլոր գործնական մարդկանց նման հարցերն ըմբռնում էր արագ, մեկեն ու կատաղում էր, երբ տխմար բան էին ասում կամ չէին հասկանում իրեն։ Այդպիսի մարդկանց հետ առհասարակ բացատրվելն ավելի հեշտ է, քան մեղմ, բայց թույլ ու անվճռական մարդկանց հետ։ Ըստ բոլոր նահանգական քաղաքների սովորության՝ Վլադիմիր գալով, մի անգամ, պատարագից հետո, մտա եպիսկոպոսի մոտ։ Նա սրտալի ընդունեց ինձ, օրհնեց ու պատվեց սաղմոնով. ապա հրավիրեց մի երեկո գալ դրուցելու, ասելով, որ աչքերը տկարանում են ու երեկոներբը կարդալ չի կարողանում։ Ես երկու-երեք անգամ գնացի։ Նա խոսում էր գրականությունից, գիտեր բոլոր ռուսերեն նոր գրքերը, կարդում էր հանդեսները, այսպիսով մենք իրար հետ շատ լավ էինք։ Այդուհանդերձ, ես ոչ առանց երկյուղի թակեցի նրա հովվապետական դուռը։

Շոգ օր էր։ Սրբազան Պարֆենին ինձ ընդունեց այգում։ Նա նստած էր ստվերախիտ մեծ լորենու տակ, վեղարը հանած ու ճերմակ մազերը սփռած։ Նրա առաջ գլխաբաց, հենց արևի տակ, կանգնած էր պարթևահասակ ճաղատ ավագերեցն ու բարձրաձայն ինչ-որ թուղթ էր կարդում։ Նրա դեմքը կարմրատակած էր, և քրտինքի խոշոր կաթիլները պատել էին ճակատը, աչքերը կկոցում էր արևով լուսավորված թղթի կուրացուցիչ ճերմակությունից,— և ոչ ինքն էր սիրտ անում տեղը փոխել, ոչ էլ եպիսկոպոսն էր ասում, որ փոխի։

— Նստեցե՛ք,— ասաց նա ինձ՝ օրհնելով,— մենք հիմա դիվերսանենք, թեմական մանր գործեր են։ Կարդա՛,— դիմեցի

մեց նա ավագերեցին, և սա կապույտ թաշկինակով սրբեց քրտինքը, շրջվեց-հազաց ու նորից սկսեց կարդալ։

— Ի՞նչ նորություն կա,— հարցրեց ինձ Պարֆենին՝ գրիչը մեկնելով ավագերեցին՝ որն օգտվեց նրա ձեռքը համբուրելու այդ պատեհ առիթից։

Ես նրան ասացի քահանայի հրաժարվելու մասին

— Վկայականներ ունե՞ք։

Ես ցույց տվի նահանգապետի թույլտվությունը։

— Միայն սա՞ է։

— Միայն։

Պարֆենին ժպտաց։

— Իսկ հարսնացուի՞ համար։

— Կա ծննդյան վկայականը, հարսանիքի օրը կբերեն։

— Հարսանիքը ե՞րբ է։

— Երկու օրից։

— Է՛, տուն գտա՞ք։

— Դեռ ոչ։

— Ա՛յ, տեսնո՞ւմ եք,— ասաց Պարֆենին, մատով բերանը ճոռթելով, որ նրա սիրած սովորությունն էր։— Դուք խելոք ու կարդացած մարդ եք, բայց փորձված ճնճղուկին մղեղով չե՞ք խաբի։ Էստեղ ինչ-որ բան տեղը չէ։ Դե որ արդեն բարեհաճել եք գալ՝ ավելի լավ է ճիշտը պատմեք, ոնց որ կխոստովանեիք։ Ես էլ ձեզ ուղղակի կասեմ, թե ի՛նչն է կարելի, ի՛նչը՝ ոչ, համենայն դեպս վատ խորհուրդ չեմտա։

Իմ գործն ինձ այնպես մաքուր ու արդար էր թվում, որ նրան ամեն ինչ պատմեցի, իհարկե, չմտնելով ավելորդ մանրամասնությունների մեջ։ Ծերուկն ուշադիր լսում էր և հաճախ նայում աչքերիս մեջ։ Պարզվեց, որ նա իշխանուհու վաղեմի ծանոթն է և մասամբ կարող էր հավատալ պատմածիս իսկությանը։

— Հասկանո՞ւմ եմ, հասկանո՛ւմ,— ասաց նա, երբ ես վերջացրի։— Եկեք իմ կողմից մի նամակ գրեմ իշխանուհուն։

— Հավատացած եղեք, որ բոլոր խաղաղ միջոցները ոչնչի չեն հանգեցնի, քմահաճույքները, կամակորությունը... այդ ամենը շատ է խորացել։ Ես ձերդ սրբությանը բոլորը պատմեցի՝ ինչպես ուզեցիք, հիմա կավելացնեմ՝ եթե դուք



ինձ չօգնեք, ես ստիպված կլինեմ թաքուն, գողավարի, փոխվել անել այն, որ այժմ անում եմ առանց աղմուկի, բայց վատակ ու անկեղծ։ Կարող եմ ձեզ հավաստիացնել մի՛ բանում, ո՛չ բանտը, ո՛չ նոր աքսորը ինձ ետ չեն պահի։

— Հլա տես ի՞նչ կտրիճն է,— ասաց Պարֆենին՝ վերկենալով ու ճմլկոտելով,— քեզ Պերմը քիչ է, հա՞, աքսորը խելքի չբերե՞ց։ Քեզ ի՞նչ ասի որ, հո չարգելեցի՞։ Հալալ լինի՝ պսակվիր, օրենքին հակառակ ոչ մի բան էլ չկա, բայց լավ կլիներ՝ հարգով-պատվով։ Մի ինձ մոտ ուղարկեք ձեր տերտերին, մի կերպ կհամոզեմ, բայց թե մի՛ բան չմոռանաք՝ առանց հարսնացուի փաստաթղթերի իսկի չփորձե՞ք էլ։ Ուրեմն՝ «ո՛չ բանտը, ո՛չ աքսորը». տե՛ս, է՛, թե մարդիկ հիմա ի՞նչ են դարձել։ Դե՛, աստված ձեզ հետ, հաջողությո՛ւն, բայց իշխանուհու հետ դուք ինձ կկովացնե՞ք։

Այսպես ուրեմն՝ մեր դավադրությանը, ուլանից բացի, մասնակից դարձավ գերապատիվ Պարֆենին, Վլադիմիրի և Սուզդալի եպիսկոպոսը։

Երբ նախապես նահանգապետից թույլտվություն էի խնդրում, բնավ էլ իմ ամուսնությունը չէի պատկերացնում գաղտնի, դա ամենաճիշտ ուղին էր՝ որպեսզի ոչ ոք չխոսեր, և էլ ի՞նչը կլիներ իմ հարսնացուի Վլադիմիր գալուց ավելի բնական, երբ ես զրկված էի քաղաքից դուրս ելնելու իրավունքից։ Նույնպես բնական էր, որ այս դեպքում մենք ցանկանում էինք պսակվել հնարավորին չափ համեստ կերպով։

Երբ մենք քահանայի հետ մայիսի 9-ին եկանք եպիսկոպոսի մոտ, մոնթը հայտնեց, որ նա առավոտվանից մեկնել է իր քաղաքամերձ տունը և մինչև գիշեր չի վերադառնա։ Արդեն երեկոյան ժամը ութն էր, տասից հետո պսակություն արգելված է, հաջորդ օրը շաբաթ էր։ Հիմա ի՞նչ անենք։ Քահանան վախենում էր։ Մենք մտանք աբեղայի՝ հոգևոր հոր մոտ. վանականը ոռմով թեյ էր խմում և ամենաբարեհոգի տրամադրության մեջ էր։ Ես նրան պատմեցի գործի էությունը, նա ինձ մի բաժակ թեյ լցրեց ու համառորեն պահանջում էր, որ մեջը ոռմ ավելացնեմ. ապա դրեց հսկայական արծաթե ակնոցը, ընթերցեց վկայականը, շուռ տվեց, նայեց մյուս կողմը, որտեղ ոչինչ գրված չէր, ծալեց

և, տալով քահանային, ասաց. «Ամենակատարելագույն վիճակում է»։ Քահանան դեռ շարունակում էր վարանել։ Ես հայր աբեղային ասացի, որ եթե այսօր չպսակվեմ՝ ինձ համար շատ վատ կլինի։

— Հետաձգելու բան չկա,— ասաց աբեղան,— ես կզեկուցեմ նորին սրբազնությանը։ Պսակեցե՛ք, հայր Յոհան, պսակեցեք հանուն հոր և որդու և սուրբ հոգու, ամեն։

Քահանային էլ անելու բան չէր մնում, նա գնաց թուղթը լրացնելու, ես սլացա Natalie-ի ետևից։

... Երբ մենք երկուսով, առանց կողմնակի մարդկանց, դուրս էինք գալիս Ոսկե դարպասներից՝ արեգակը, որ մինչ այդ ամպերի տակ էր, լուսավորեց մեզ վերջին վառկարմիր շողերով և այնպես հանդիսավոր ու խնդուն, որ մենք միաբերան ասացինք. «Ահա՛ մեր Հարսանյաց ուղեկիցները»։ Ես հիշում եմ, թե նա ինչպես ժպտաց այդ խոսքի վրա ու սեղմեց ձեռքս։

Քաղաքից մի երեք վերստ հեռու ընկած փոքրիկ եկեղեցին դատարկ էր, ոչ դպիրներ կային, ոչ վառված բուրվառներ։ Մի հինգ հոգի՝ շարքային ուլաններ, մտան ու դուրս եկան։ Մեր տիրացուն երգում էր մեղմ ու նվաղ ձայնով, Մատվեյը, ուրախության արցունքն աչքերին, նայում էր մեզ, չահել խաչեղբայրները կանգնած էին մեր ետևում՝ ծանր պսակներով, որոնցով պսակվել էին բոլոր վլադիմիրյան կառապանները։ Տիրացուն դողացող ձեռքով մեկնում էր միավորության արծաթե սկահակը... եկեղեցին մթնում էր, միայն մի քանի տեղական մոմ էր վառվում։ Այս ամենը արտասովոր գեղեցիկ էր հենց իր պարզության մեջ, թե՞ մե՞զ էր այդպես թվում։ Եպիսկոպոսը կառքով անցնում էր եկեղեցու մոտից և, տեսնելով բաց դռները, կանգ առավ ու մարդ ուղարկեց հարցնելու, թե ինչ է տեղի ունենում. քահանան, մի քիչ գույնը գցած, ինքը գնաց եպիսկոպոսի մոտ և մի րոպեից ետ եկավ ուրախ տեսքով ու մեզ ասաց.

— Գերագույնը հղում է ձեզ իր հովվապետական օրհնանքը և կարգադրեց ասել, որ ինքն աղոթում է ձեզ համար։

Երբ մենք տուն էինք դառնում, գաղտնի ամուսնության



լուրը տարածվել էր քաղաքով մեկ, տիկնայք սպասում էին պատշգամբներում, պատուհանները բաց էին, ես իշեցրի կառքի ապակիները և մի քիչ սրտնեղում էի, որ աղջամուղջ խանգարում էր ինձ՝ ցուցադրելու նորահարսին։

Տանը մենք խաչեղբայրների ու Մատվեյի հետ երկու լիլ գինի խմեցինք, խաչեղբայրները նստեցին մի քանի բոպե, և մենք մնացինք մենակ, և մեզ դարձյալ, ինչպես Պետրովում, դա թվում էր այնպես բնական, այնպես պարզ, ինքներս հասկանալի, որ մենք ամենևին չզարմացանք, իսկ հետո ամիսներով չէիք կարողանում զարմանք շապրել։

Մենք ունեինք երեք սենյակ, նստեցինք հյուրասենյակի փոքրիկ սեղանի առաջ ու, մոռանալով վերջին օրերի հոգնածությունը, գիշերվա կեսը զրույցով անցկացրինք...

Ծոտար ամբոխը հարսանյաց հանդեսում ինձ միշտ թվացել է կոպիտ, անպատշաճ, գրեթե ցինիկ մի բան. ինչի՞համար է սիրո քողի այդ անժամանակ բացումը, կողմնակի, սառնասիրտ մարդկանց այդ հաղորդակցությունը ընտանեկան գաղտնիքին։ Ինչպե՞ս պիտի վիրավորեին հրապարակավ որպես նարսնացու ցուցադրվող խեղճ աղջկան բոլոր այդ ծեծված ողջույնները, մաշված տափակությունները, բութ ակնարկները... Չի խնայվում ոչ մի նուրբ զգացմունք, ամուսնական մահճի պերճությունը, գիշերային հաստատ հմայքը ի ցույց են տրվում ոչ միայն ի զարմանս հյուրերի, այլև բոլոր դատարկաշրջիկների։ Իսկ հետո նոր կյանքի առաջին օրերը,— երբ թանկ է ամեն մի բոպեն, երբ պիտի փախչել հեռու մի տեղ, առանձնանալ— անց են կացվում անվերջ ճաշկերույթների, հոգնեցնող պարահանդեսների, ամբոխի մեջ՝ ասես ի ծաղր։

Հաջորդ առավոտ գահլիճում գտանք երկու վարդագույն ու վիթխարի մի փունջ։ Մեր սիրավեպին շեղմամբ նակցություն ցուցաբերած սիրելի, բարի Յուլիա Ֆյոդորովնան (նահանգապետի կինն) էր ուղարկել դրանք։ Ես գրկեցի ու համբուրեցի նահանգապետի սպասավորին, և հետո մենք ինքներս գնացինք նրա մոտ։ Քանի որ նորահարսի ծիրը բացակայած էր երկու զգեստից՝ մեկը ճամփորդական, մյուսը՝ հարսանեկան, նա էլ հագավ հարսանեկանը։

Յուլիա Ֆյոդորովնայի անից մենք գնացինք եպիսկո-

պոսի մոտ, ծերուկն ինքը մեզ տարավ այգի, ինքը վարդերի մի փունջ կտրեց, պատմեց Natalie-ին, թե ինչպես էի իրեն վախեցնում սեփական կործանումովս, և վերջում խորհուրդ տվեց տնտեսությամբ զբաղվել։

— Վարունգի թթու դնել գիտե՞ք,— հարցրեց նա Natalie-ին։

— Գիտեմ,— պատասխանեց նա ծիծաղելով։

— Հավատս չի գալիս։ Բայց դա անհրաժեշտ է։

Երեկոյան ես նամակ գրեցի Հորս։ Խնդրում էի չբարկանալ եղածի համար և, «քանզի Աստուած զուգեաց մեզ», ներել ինձ ու հղել իր օրհնանքը։ Հայրս սովորաբար ինձ շաբաթը մի քանի տող գրում էր, նա ոչ առաջ գցեց, ոչ էլ ուշացրեց պատասխանը, նույնիսկ նամակի սկիզբը նույնն էր։ «Մայիսի 10-ի նամակդ երեք օր առաջ ժամը հինգ անց կեսին ստացա և ոչ առանց տխրության իմացա, որ աստված քեզ միացրել է Նատաշայի հետ։ Ես աստծու կամքին ոչ մի բանում չեմ հակառակում և կուրորեն հնազանդվում եմ այն բոլոր փորձություններին, որ նա ուղարկում է ինձ։ Բայց քանի որ փողերն իմն են, իսկ դու հարկ չհամարեցիր հաշվի առնել իմ կամքը, ուրեմն և հայտնում եմ քեզ, որ քո առաջվա ստացածին՝ տարեկան հազար արծաթ ռուբլուն, ոչ մի կոպեկ չեմ հավելի»։

Ինչպե՞ս էինք. սրտանց ծիծաղում հոգևոր և աշխարհիկ իշխանության այդ տարբերակման վրա։

Բայց շա՜տ, շա՜տ էր պետք այդ հավելումը։ Փոխ վերցրած դրամս վերջանում էր։ Մենք, ախր, ոչինչ չունեինք՝ ո՛չ հագուստ, ո՛չ սպիտակեղեն, ո՛չ սպասք։ Բանտարկվածնստած էինք փոքրիկ բնակարանում, քանի որ դուրս ելնելու շոր չունեինք։ Մատվեյը, խնայողության նկատառումով, խոհարար դառնալու հուսահատ փորձ արեց, բայց բիֆշտեքսից ու կոտլետից զատ ոչինչ պատրաստել չէր կարողանում, և դրա համար էլ ավելի շատ զոռ էր տալիս պատրաստի ուտելիքին՝ վիշնա, ապխտած ձուկ, կաթ, ձու, պանիր և շոր ու քարթու ինչ-որ դաղձաբլիթներ։ Ճաշը մեզ համար ծիծաղի անսպառ աղբյուր էր, կաթը երբեմն մատուցվում էր սկզբում՝ դա սուպն էր, երբեմն բոլորից հետո՝ ազանդերի փոխարեն։ Այս սպարտական ճաշկերույթներին



ինք ժպտալով վերհիշում էինք ճաշասեղանի երկար արարության սրբազնագործությունը իշխանուհու և հորս ներանը, ուր կես դյուժին մատուցողներ վազվզում էին բաժակներն ու սկուտեղները ձեռքներին, հանդիսավոր mise en scène[1] քողարկելով ըստ էության շատ համեստ ճաշը։

Այդպես աղքատություն էինք քաշում շուրջ մի տարի։ Քիմիկոսն ուղարկեց տասը հազար ռուբլի, որից ավելի քան վեցը պիտի պարտք վերադարձնեինք, մնացածը մեծ օգնություն եղավ։ Վերջապես հորս էլ ձանձրացրեց մեզ քաղցրով ծնկի բերելը՝ ինչպես բերդն են գրավում. նա, չավելացնելով մեր հասանելիքը, սկսեց ուղարկել դրամական նվերներ, չնայած ես ոչ մի անգամ չէի ակնարկել փողի մասին՝ նրա նշանավոր distinguol[2]-ից հետո։

Սկսեցի փնտրել ուրիշ բնակարան։ Լիբեդից դուրս վարձով էր տրվում կալվածատիրական մի մեծ անխնամ տուն՝ այգու հետ միասին։ Տունը պատկանում էր Թղթախաղում սանկացած մի իշխանի այրուն և շատ էժան էր տրվում՝ քանի որ հեռու էր, անհարմար, իսկ գլխավորն այն պատճառով, որ տան ոչնչով չառանձնացված մի փոքրիկ մասը իշխանուհին կանխապայմանով վերցնում էր իր տասներեքամյա երես առած տղայի ու նրա սպասավորի համար։ Ոչ ոք չէր համաձայնվում այդ կիսատ-պռատ բնակությանը. ես խսկույն համաձայնվեցի, ինձ գրավեցին սենյակների բարձրությունը, պատուհանների մեծությունն ու ընդարձակ, սավերաշատ այգին։ Բայց հենց այդ բարձրությունն ու այդ մեծությունը ծիծաղելիորեն հակասում էին շարժական դույքի, առաջին անհրաժեշտության առարկաների իսպառ բացակայությանը։ Իշխանուհու տնտեսուհին, բարի մի պառավ, որ բնավ անտարբեր չէր Մատվեյի նկատմամբ, սեփական հանդգնությամբ մեկ սփռոց էր տալիս մեզ, մեկ՝ բաժակ, մեկ՝ սավան, մեկ՝ դանակ-պատառաքաղ։

Ի՜նչ լուսավոր, անխռով օրեր անցկացրինք մենք Ոսկե դարպասների մոտի երեք սենյականոց փոքրիկ բնակարանում և իշխանուհու հսկայական տան մեջ... Այդտեղ աղքա-

1 բեմադրությամբ (ֆրանս.)։

2 տարբերակում (լատ.)

տիկ կահավորված մի մեծ դահլիճ կար, մեկ-մեկ երեխայությունները բռնում էր, վազվզում էինք դահլիճում, ցատկոտում աթոռներին, վառում պատերին մեխված բոլոր աշտանակների մոմերը և, լուսավորելով դահլիճը a giorno[1], բանաստեղծություններ կարդում։ Մատվեյն ու սպասուհին, ջահել հույն աղջիկը, մասնակից էին այդ ամենին ու ոչ պակաս չարաճճիություններ էին անում։ Կարգուկանոնը «չէր իշխում» մեր տանը։

Եվ այդ ողջ երեխայությամբ հանդերձ մեր կյանքը լի էր խորին լրջությամբ։ Նետված հանգիստ ու խաղաղ փոքրիկ մի քաղաք՝ մենք լիովին տրված էինք մեկս մեկու։ Երբեմն լուր էր գալիս ընկերներից որևէ մեկի մասին, համակրանքի մի քանի ջերմ խոսք... և հետո նորից մենակ էինք, բոլորովին մենակ։ Բայց այդ մենության մեջ մեր սիրտը ներփակված չէր երջանկությամբ, այլ, ընդհակառակը, ավելի շատ, քան երբևէ, բաց էր բոլոր հետաքրքրությունների առաջ։ Այն ժամանակ մենք ապրում էինք լիաշունչ, մտորում ու կարդում, տրվում ամենայն ինչի ու նորից սնեռվում մեր սիրույն. մենք համեմատում էինք մեր խոհերն ու երազանքները և զարմանքով նկատում, թե ինչքա՜ն անհունորեն նման էր մեր զգացողությունը, թե ինչքա՜ն հարազատ ու համահնչյուն էր ամեն ինչ մեր զգացմունքների ու մտքերի, համակրանքների ու հակակրանքների բոլոր նրբագույն, հազիվ նշմարվող ելևէջներում ու ճյուղավորումների մեջ։ Տարբերությունը լոկ այն էր, որ Natalie-ն մեր միությանը հաղորդում էր խաղաղ, հեզ, նրբագեղ տարր, սիրող կնոջ ողջ պոեզիայով համակված ջահել աղջկա տարրը, իսկ ես՝ կենդանի գործունեություն, իմ semper in motu[2]-ը, անսահման սերն ու, դրանից բացի, լուրջ գաղափարների, կատակի, վառեզավոր մտքերի շփոթք և մի կույտ անիրագործելի ծրագրեր։

«... Իմ ցանկությունները գոհացան։ Այդքանն ինձ հերիք էր,— ես ապրում էի ներկայով, ոչինչ չէի սպասում վաղվա օրվանից, անհոգ հավատում էի, որ այդ օրը ինձանից ոչինչ չի խլի։ Անձնական կյանքը ավելին տալ չէր կարող, դա

1 ցերեկվա պես պայծառ (իտալ.)։
2 միշտ շարժման մեջ (լատ.)։



ամենաշատն էր. ամեն մի փոփոխություն պիտի որևէ կերպ դպչասեցներ եղածը։

Գարնանն իր աքսորավայրից մի քանի օրով եկավ Օգարյովը։ Նա այն ժամանակ իր ծաղկման մեջ էր. շուտով նրան էլ վիճակվեց տխուր փորձություն ապրել. որոշ պահերի նա ևս զգում էր դժբախտության մոտիկությունը, բայց դեռևս կարողանում էր աչք փակել դրա առաջ ու երազանքի տեղ ընդունել ճակատագրի բարձրացրած ձեռքը։ Ես ինքս էլ այն ժամանակ կարծում էի, թե այդ ամպերը կցրվեն. անհոգությունը հատուկ է ամեն մի երիտասարդ և ուժ ունեցող մարդու, դրա մեջ արտահայտվում է վստահությունը կյանքի հանդեպ, ի՛ր հանդեպ։ Սեփական ճակատագիրը լիովին անօրինելու զգացմունքը քնեցնում է մեզ... իսկ մութ ուժերը, իսկ շար մարդիկ, սուսուփուս, քաշում-տանում են անդունդի եզրը։

Եվ լավ է, որ մարդ կա՛մ չի կասկածում, կա՛մ կարողանում է չնկատել, մոռացության տալ։ Տագնապը սրտում՝ չկա՛ կատարյալ երջանկություն. կատարյալ երջանկությունը խաղաղ է, ինչպես ծովը ամռան անդորրին։ Տագնապը բերում է իր հիվանդագին, տենդոտ արբեցումը, որ դուրեկան է, ինչպես սպասումը լավ խաղաթղթի, բայց դա հեռու է ներդաշնակ, անհուն խաղաղության զգացումից։ Եվ դրա համար էլ, քանի թե արթմնի՝ ես շատ բարձր եմ գնահատում կյանքի հանդեպ այդ վստահությունը, քանի դեռ կյանքը չի սարսափեցրել դրան, չի սթափեցրել... չինացիք էլ են մեռնում ափիոնով թունդ արբենալուց...»։

Այսպես եմ վերջացրել ես այս գլուխը 1853 թվականին, այսպես էլ վերջացնեմ հիմա։

## ԳԼՈՒԽ XXIV

### 1839 թվականի հունիսի 13-ը

Մի անգամ, 1838-ի վերջին, ձմռան երկար մի երեկո, նստած էինք, ինչպես միշտ՝ մենակ, կարդում էինք, խոսում, լռում էինք ու լռելով էլ շարունակում խոսել։ Դրսում

ուժեղ սառնամանիք էր, ու սենյակն էլ այնքան տաք չէր։ Նատաշան վատ էր զգում, պառկել էր բազմոցին՝ թիկնոցը վրան, ես նստել էի մոտը՝ հատակին. ընթերցանությունը չէր ստացվում, նա ցրված էր, միտքն ուրիշ տեղ էր, նրան ինչ-որ բան էր անհանգստացնում, դեմքի արտահայտությունը փոփոխվում էր։

— Ալեքսանդր,— ասաց նա,— ես մի գաղտնիք ունեմ, մոտ եկ՝ ականջիդ ասեմ, չէ՛, չէ՛, ի՛նքդ գուշակիր։

Ես գուշակեցի, բայց պահանջեցի, որ ի՛նքն ասի գաղտնիքը, ես ուզում էի իրենից լսել այդ նորությունը, նա ասաց ինձ, և մենք իրար նայեցինք հուզմունքով ու արցունքն աչքերիս։

... Որքա՜ն հարուստ է մարդու սիրտը՝ երջանկություն, խինդ զգալու համար, միայն թե մարդիկ կարողանան տրվել այդ զգացմունքներին, չհրապուրվել փուչ բաներով։ Ներկային սովորաբար խանգարում են արտաքին տագնապը, սնամեջ հոգսերը, բորբոքված կամակորությունը,— այս ամբողջ աղբը, որ կյանքի կեսօրին բերում է մեզ ունայնություն ունայնությանց և կենցաղի հիմար մի կարգ։ Մենք անփույթ մսխում, աչքաթող ենք անում լավագույն պահերը, կարծես անսպառ են դրանց պաշարները։ Մենք սովորաբար մտածում ենք վաղվա օրվա, գալիք տարվա մասին, այն դեպքում, երբ հարկավոր է երկու ձեռքով պինդ բռնել լեփ-լեցուն բաժակը,— որ պարզում է ինքը՝ կյանքը, շնորհ անելով իր սովորական շռայլությամբ,— և խմե՛լ, խմե՛լ՝ քանի դեռ բաժակը չի անցել ուրիշի ձեռքը։ Բնությունը երկար հրամցնել ու առաջարկել չի՛ սիրում։

Թվում էր էլ ի՛նչ կարելի է ավելացնել մեր երջանկությանը, մինչդեռ ապագա մանկիկի ավետիսը բացեց մեր սրտի, արբեցումի, տագնապների և հույսերի նոր, մեզ բոլորովին անհայտ ասպարեզներ։

Մի քիչ վախվորած ու տագնապած սերը դառնում է ավելի քնքուշ, ավելի խնամքոտ ու հոգատար, երկուսի էգոիզմից այն փոխարկվում է ոչ միայն երեքի էգոիզմի, այլև երկուսի ինքնազոհության՝ հանուն երրորդի. ընտանիքն սկսվում է երեխաներից։ Նոր տարր է մտնում կյանքի մեջ, ինչ-որ խորհրդավոր մեկը թակում է կյանքի դուռը, մի



հյուր, որը և՛ կա, և՛ չկա, բայց որն արդեն անհրաժեշտ է, որին կրքոտ սպասում են։ Ո՞վ է նա։ Ոչ ոք չգիտի, բայց ով էլ լինի՝ նա երջանիկ անծանոթ է, ի՜նչ սիրով են դիմավորում նրան կյանքի շեմին։

Եվ՝ տանջալից անհանգստություն. կենդանի՞ կծնվի արդյոք։ Ինչքա՜ն դժբախտ դեպքեր են լինում։ Բժիշկը ժպիտով է պատասխանում հարցերին,— «նա ոչինչ չի հասկանում կամ չի ուզում ասել». ուրիշներին դեռ ոչինչ նկատելի չէ, մեկը չկա, որ հարցնես, ասենք՝ ամաչո՞ւմ էլ ես։

Բայց ահա մանկիկը կյանքի նշաններ է ցույց տալիս. ես չգիտեմ ավելի բարձր ու ավելի կրոնական մի զգացում, քան այն, որ լցնում է հոգիդ՝ գալիք կյանքի առաջին շարժումները շոշափելիս, կյանք, որ պոռթկում է դեպի դուրս, դեռ անկատար մկանները. դա առաջին ձեռնաշտկում դեռ անկատար մկանները. դա առաջին ձեռնադրումն է, որով հայրն օրհնում է ապագա եկվորի գոյությունը և նրան զիջում է իր կյանքի մի մասը։

«Իմ կինը,— մի անգամ ասաց ինձ ֆրանսիացի մի բուրժուա,— իմ կինը,— նա նայեց չորս կողմը և, տեսնելով, որ ոչ կանայք կան, ոչ էլ երեխաներ՝ կիսաձայն ավելացրեց,— հղի է»։

Իրոք, բարոյական բոլոր հասկացություններն այնպես են խճճված, որ հղիությունը համարվում է անվայելուչ մի բան. մարդուց պահանջելով անվերապահ հարգանք դեպի մայրը, ինչպիսին էլ որ նա լինի, ծննդյան գաղտնիքը վարագուրում են ոչ թե ելնելով հարգանքի, ներքին համեստության զգացումից, այլ պատշաճությունից։ Այդ ամենը իդեալական անառակություն է, վանական այլասերվածություն, մարմնի անիծյալ զոհաբերում. այդ ամենը խղճուկ դուալիզմ է, որով, մագդեբուրգյան կիսագնդերի նման, մեզ պոկում-բաժանում են երկու տարբեր մասերի։ Ժան Դերուանը, ընդունած իր սոցիալիզմին, Almanach des femmes[1]-ում ակնարկում է, թե կգա մի ժամանակ, երբ երեխաներն այլ կերպ կծնվեն։— Ո՞նց այլ կերպ։— Այնպես, ինչպես հրեշտակներն են ծնվում։— Դե՛, դա արդեն պա՛րզ է։

1 «Կանանց ալմանախ» (ֆրանս.)։

Փա՜ռք ու պատի՛վ մեր ուսուցչին, հին ռեալիստ Գյոթեին. նա համարձակվեց ռոմանտիզմի անմեղ կույսերի կողքին դնել հղի կնոջը և չվախեցավ իր զորեղ բանաստեղծությամբ քանդակել ապագա մոր փոխված ձևը, այն համեմատելով ապագա կնոջ ճկուն մարմնի հետ։

Իրոք, կինը,— որն անցյալ արբեցման հիշողության հետ մեկտեղ կրում է սիրո խաչը, սիրո ողջ լուծը, զոհաբերում է գեղեցկություն, ժամանակ, տառապանք, որը սնուցանում է իր կրծքով,— մեկն է ամենանրբագեղ ու ամենահուզիչ կերպարներից։

Հռոմեական էլեգիաներում, «Ջուլհակուհու» մեջ, Գրետխենի ու նրա հուսահատ աղոթքի մեջ Գյոթեն արտահայտել է ամենայն հանդիսավորը, որով բնությունը շրջապատում է հասունացող պտուղը, և այն ամբողջ տատասկը, որով հասարակությունը պսակում է ապագայի այդ անոթը։

Խե՜ղճ մայրեր, որ, իբրև խայտառակություն, թաքցնում են հետքերը սիրո, ինչքա՜ն կոպիտ ու անխիղճ հալածում է նրանց արար աշխարհը և հալածում հենց այն ժամանակ, երբ կինն այնպե՜ս կարիք ունի հանգստի ու բարության, վայրենաբար թունավորում է կատարելության նրա այն անփոխարինելի պահերը, երբ կյանքը, նվաղելով, ճկվում է երջանկության առատությունից...

... Սարսափով կամաց-կամաց բացվում է գաղտնիքը, դժբախտ մայրը նախ ջանում է համոզվել, թե իրեն միայն թվացել է, բայց շուտով կասկածը վերանում է. հուսահատությամբ ու արցունքով է ուղեկցում նա մանկիկի ամեն մի շարժումը, նա կուզենար կասեցնել կյանքի թաքուն աշխատանքը, ետ շրջել, նա սպասում է դժբախտության՝ որպես մի ողորմածություն, որպես թողություն, իսկ անկասելի բնությունն ընթանում է իր ճանապարհով. նա առո՜ղջ է, երիտասա՛րդ։

Ստիպել, որ մայրը ցանկա իր երեխայի մահը, իսկ երբեմն նաև ավելին՝ նրան վերածել իր երեխայի դահճի, և հետո նրան մահապատժի ենթարկել մեր դահճի ձեռքով կամ խայտառակ անել նրան՝ եթե կնոջ սիրտը հաղթող դուրս գա,— ի՜նչ խելացի և բարոյական հասարակություն։

Եվ ո՞վ է կշռել, ո՞վ է խորհել, թե ինչե՞ր են կատարվել



այդ սրտում, երբ մայրն անցնում էր սիրուց դեպի սարսափ, սարսափից՝ հուսահատություն, հուսահատությունից՝ հանցագործություն, խելագարություն տանող ահավոր կածանը, քանզի մանկասպանությունը ֆիզիոլոգիական անհեթեթություն է։ Չէ՞ որ նա՛ էլ ունեցել է մոռացումի պահեր, երբ կրքոտ սիրել է իր ապագա մանկիկին, առավել ևս, որ սրա՛ գոյությունը եղել է իրենց երկուսի գաղտնիքը. չէ՞ որ ժամանակ է եղել, երբ նա երազել է մանկան տոտիկի, նրա կաթնաբույր ժպիտի մասին, երազի մեջ համբուրել նրան, նմանեցրել այն մեկին, որն այնպես թա՜նկ է եղել իրեն...

«Բայց նրանք զգո՞ւմ են, արդյոք, դա. իհարկե, կան դժբախտ զոհեր... բայց... բայց մյուսնե՞րը, բայց առհասարա՞կ»։

Թվում է, անհնար է Լոնդոնի փողոցներում, գիշեր ժամանակ, մառախուղին ու ջրկացեխին վխտացող չղջիկներից, հետամնացության, աղքատության ու քաղցի այդ զոհերից ավելի՛ ընկած -լինել, զոհեր, որոնցով հասարակությունը պաշտպանում է ազնիվ կանանց՝. նրանց երկրպագուների ավելորդ կրքոտությունից... իհարկե, ամենադժվարը նրանց մեջ մայրական զգացմունքների հետքեր նշմարելն է։ Ճիշտ չէ՞։

Թույլ տվեք, ուրեմն, ձեզ պատմել ինձ պատահած փոքրիկ մի դեպք։ Մոտ երեք տարի առաջ հանդիպեցի գեղեցիկ ու ջահել մի աղջկա։ Նա պատկանում էր անառակության պատվավոր քաղաքացիությանը, այսինքն՝ դեմոկրատորեն «մայթ չէր մաշում», այլ բուրժուաբար ապրում էր մի վաճառականի հաշվին։ Հասարակական պարահանդես էր. բարեկամս, որ հետս էր, ճանաչում էր նրան ու հրավիրեց հետներս մի շիշ դինի խմել վերնասրահում։ Նա, իհարկե, հրավերքն ընդունեց։ Դա մի ուրախ, անհոգ էակ էր, որ երևի լսելով Մադրիդի ժամապահի «լո՛ւյս է» կանչը, Պուշկինի «Քարե հյուրի» Լաուրայի նման երբեք չէր մտահոգվում, թե այնտեղ՝ հեռվում, Փարիզում, ցուրտ է... Խմելով վերջին բաժակը, նա նորից նետվեց անգլիական պարերի ծանր շրջապտույտի մեջ, ու ես աչքիցս կորցրի նրան։

Այս ամեն, անձրև ու ցուրտ մի երեկո, փողոցով դժվարությամբ անցնում էի Փել-Մելի կամարաշարքի տակով՝

փախչելով ուժեղացող անձրևից. կամարի ետևում, լապտերի տակ, հավանորեն սպասելով որսի ու ցրտից դողալով՝ կանգնած էր աղքատիկ հագնված մի կին։ Դիմագծերը ծանոթ թվացին, նա նայեց ինձ, շրջվեց և ուզում էր թաքնվել, բայց ես հասցրի ճանաչել նրան։

— Էդ ի՞նչ եք դարձել,— հարցրեցի կարեկցանքով։

Նրա նիհարած այտերը վառ կարմիր էին, ամոթի՞ց էր, թե՞ թոքախտից՝ չգիտեմ, միայն թվում էր՝ դիմաներկից չէր. երկուսուկես տարվա մեջ նա ծերացել էր տասը տարով։

— Ես երկար հիվանդ էի և շատ դժբախտ եմ,— նա խորը դառնությամբ հայացքով ցույց տվեց իր մաշված հագուստը։

— Իսկ ո՞ւր է ձեր ընկերը։

— Սպանվել է Ղրիմում։

— Բայց, ախր, նա վաճառակա՞ն էր։

Նա շփոթվեց և, պատասխանի փոխարեն, ասաց.

— Ես հիմա էլ դեռ շատ հիվանդ եմ, համ էլ իսկի աշխատանք չկա։ Իսկ ի՞նչ է, ես շա՞տ եմ փոխվել,— հանկարծ հարցրեց նա՝ շվարած նայելով ինձ։

— Շա՞տ, այն ժամանակ դուք նման էիք աղջնակի, իսկ հիմա, գրա՞զ կգամ՝ երեխաներ ունեք։

Նա կաս-կարմիր կտրէց ու մի տխուր սարսափով հարցրեց.

— Ինչի՞ց իմացաք։

— Տեսնո՞ւմ եք՝ իմացա։ Դե՛, հիմա պատմեցեք, թե ձեզ իսկապես ի՞նչ է եղել։

— Բան չի եղել, բայց թե դուք ճիշտ եք, ես փոքրիկ ունեմ... որ իմանայիք ինչ լա՞վն է, ի՞նչ սիրունիկը,— և այս խոսքի վրա նրա դեմքն աշխուժացավ,— նույնիսկ հարևանները, բոլորը հիանում են նրանով։ Իսկ հայր կոչվածը ամուսնացավ մի հարուստ կնոջ հետ ու գնաց մայրցամաք։ Երեխան ծնվեց հետո։ Նա էլ հենց այս վիճակիս պատճառն է։ Սկզբում փող կար, ամեն ինչ առա նրա համար ամենամեծ խանութներից, բայց գնալով վիճակս վատացավ հա՛ վատացավ, ամեն ինչ գրավ դրի, ինձ խորհուրդ էին տալիս երեխային «պահ տալ» գյուղում, ճիշտ է, դա ավելի լավ կլիներ, բայց չեմ կարող. նայում եմ նրան, նայում՝ չէ՞,



ավելի լավ է միասին մեռնենք։ Ուզում էի աշխատանքի մտնել՝ երեխայով չեն վերցնում։ Մորս մոտ վերադարձա, նա, ոչինչ, բարի է. ներեց ինձ, սիրում է փոքրիկին. գուրգուրում. բայց արդեն հինգերորդ ամիսն է ոտքերը բռնվել են, եղած-չեղածը բժշկի ու դեղերի տվինք, հիմա էլ, գիտե՛ք, էս տարի ածուխը, հացը՝ ամեն բան թանկացել է. պիտի սովից մեռնենք։ Դե՛, ես,— նա կմկմաց,— լավն էն կլիներ Թեմզան նետվեի, քան... մենակ թե երեխան է մեղքս գալիս, ո՞ւմ հույսին թողնեմ, ախր շա՛տ, շա՛տ լավն է։

Ես նրան մանր փող տվի և, դրանից բացի, մի շիլլինգ հանեցի ու ասացի.

— Սրանով էլ մի բան առեք ձեր պստլիկին։

Նա ուրախությամբ վերցրեց դրամը, պահեց ձեռքում և, հանկարծ տխուր ժպիտով ետ մեկնելով՝ ասաց.

— Դե որ էդքան բարի եք՝ էստեղի խանութներից ինքներդ մի խաղալիք, մի բան առեք նրա համար, ախր խեղճ փոքրիկիս ծնված օրից ոչ ոք ոչինչ չի նվիրել։

Ես գորովալից նայեցի այդ կորած կնոջն ու բարեկամաբար սեղմեցի ձեռքը։

Բոլոր այդ քամելիազարդ ու մարգարտազարդ տիկինների պատիվը փրկելու սիրահարներն ավելի լավ կանեին, եթե հանգիստ թողնեին թավշապատ կահույքն ու ոսկոկո ոճի կահավորանքը և ավելի մոտիկից ուշադրություն դարձնեին դժբախտ, ցրտահար, սովյալ անառակությանը,— ճակատագրակա՛ն անառակությանը, որը զոռով տանում է իր զոհին դեպի կործանում և թույլ չի տալիս ոչ խելքի գալ, ոչ էլ զղջալ։ Հնահավաքները թանկարժեք քարեր ավելի հաճախ գտնում են փողոցի անկյուններում, քան թե փուչ պերճանքի փայլազարդեր հավաքելիս։

Այս հանդիպումն ինձ հիշեցրեց խելացի, խեղճ Ժերար դը Ներվալին, «Ֆաուստի» թարգմանչին, որն անցյալ տարի ինքնասպան եղավ։ Վերջին ժամանակները նա հինգ-վեց օրով տանը չէր լինում։ Վերջապես պարզեցին, որ ժամանակն անց է կացնում ուղեկալի մոտի ամենավատահամբավ Պոլ Նիկեի պես պանդոկներում, այնտեղ ընկերակցում է գողերի ու ամեն տեսակ սինլքորների հետ, խմեցնում է նրանց, հետները թուղթ խաղում ու երբեմն մնում-քնում

նրանց պաշտպանության ներքո։ Նախկին բարեկամներն սկսեցին հորդորել նրան, ամոթանք տալ։ Ներվալը, մեղմորեն պաշտպանվելով, մի անգամ նրանց ասաց. «Ախր, բարեկամնե՛րս, դուք սոսկալի նախապաշարմունքներ ունեք, հավատացնում եմ ձեզ, որ այդ մարդկանց հասարակությունն իսկի էլ վատը չէ բոլոր մյուսներից, ուր ես եղել եմ»։ Նրան կասկածում էին խելագարության մեջ. դրանից հետո, կարծում եմ, կասկածանքը վերածվեց համոզմունքի։

Ճակատագրական օրը մոտենում էր, սարսափը՝ գնալով աճում։ Ես ենթարկյալի հայացքով էի նայում բժշկին ու տատմոր խորհրդավոր դեմքին։ Ոչ Նատաշայի, ոչ իմ, ոչ մեր ջահել աղախնի խելքը ոչինչ չէր կտրում. բարեբախտաբար, հորս խնդրանքով, այդ ժամանակ Մոսկվայից մեզ մոտ եկավ տարեց մի տիկին՝ խելացի, գործունյա, ձեռներեց։ Պրասկովյա Անդրեևնան, տեսնելով մեր անօգնական վիճակը, ինքնիշխան կերպով իր ձեռքն առավ կառավարման ղեկը, ես նեգրի նման հնազանդվեցի։

Մի գիշեր մեկ էլ ինչ-որ ձեռք ինձ դիպավ, աչքերս բացի. առաջս կանգնած է Պրասկովյա Անդրեևնան՝ շորագլխարկով ու կոֆտայով, մոմը ձեռքին. կարգադրում է մարդ ուղարկել բժշկի ու տատմոր ետևից։ Ես քար կտրեցի, ասես այդ նորությունն ինձ համար լրիվ անսպասելի էր։ Ո՞նց կուզեի ափիոն խմել, շուռ գալ մյուս կողքիս ու քնել-անցկացնել վտանգը... բայց ճար չկար, դողացող ձեռքերով հագնվեցի ու թռա արթնացնելու Մատվեյին։

Տասն անգամ ննջասենյակից գավիթ էի վազում՝ լսելու կառքի ձայնը. ամեն ինչ խաղաղ էր, վաղորդյան քամին հաղիվ շրշում էր այգում, հունիսյան տաք օդում. թռչուններն սկսում էին երգել, բոսորագույն արշալույսը թեթևակի երանգավորում էր տերևները, ու ես նորից շտապում էի ննջարան, բարի Պրասկովյա Անդրեևնայի գլուխը տանում հիմար հարցերով, տենդագին սեղմում Նատաշայի ձեռքերը, չգիտեի ի՛նչ անեմ, դողում էի, տաքություն էր եկել վրաս... բայց ահա կառքը դղրդոցով անցավ Լիբեդի կամրջով,— փա՜ռք աստծո, ժամանակին եկավ։

Առավոտյան ժամը տասնմեկին ես ցնցվեցի, ինչպես



էլեկտրական ուժեղ հարվածից, նորածնի բարձր ճիչը հասավ ականջիս։ «Տղա՜»,— գոռաց ինձ Պրասկովյա Անդրեևնան՝ մոտենալով տաշտին. ուզում էի բարձի վրայից վերցնել երեխային, բայց չէի կարողանում՝ ձեռքերս այնպե՛ս դողում էին։ Վտանգի՝ սիրտս ճզմող վախը (վտանգ, որ հաճախ հենց այստեղ է սկսվում) միանգամից անցավ, հոգիս համակվեց բուռն խնդությամբ, ասես այնտեղ հնչում էին բոլոր զանգերը՝ տոների տո՜նն էր։ Նատաշան ժպտում էր ինձ, ժպտում երեխային, լալիս էր, ծիծաղում, և միայն ընդհատ, բռնվող շնչառությունը, նվաղած աչքերն ու մեռելային գունատությունն էին հիշեցնում անցած տանջանքն ու պայքարը։

Հետո ես հեռացա սենյակից, էլ չէի կարող դիմանալ, մտա իմ սենյակն ու նեռվեցի բազմոցին՝ լրիվ ուժասպառ, ու մի կես ժամ մնացի պառկած՝ առանց պարզորոշ խոհի, առանց պարզորոշ զգացումի, երջանկության ցավով բռնված։

Այդ տանջահար-խանդավառ դեմքը, սկսվող մահվանը խառնված այդ խինդը, որ թրթռում է ջահել ծննդկանի գլխավերևում, ես ճանաչեցի հետո, Կորսինիի հռոմեական պատկերասրահում, Վան Դեյկի* մադոննայի մեջ. մանուկը հենց նոր է ծնվել, նրան բերում են մորը, ուժասպառ, գունատ դեմքով, թուլացած ու քնքշանվաղ՝ նա ժպտում է և մանկանը հառում հոգնած ու անհուն սիրով լի հայացքը։

Պետք է խոստովանել՝ կույս-ծննդկանն ամենևին չի սազում քրիստոնեության ամուրի կրոնին։ Նրա հետ ակամա կյանք, սեր, մեղմություն է ներխուժում հավերժական թզումների, Ահեղ դատաստանի և եկեղեցական թեոդիցեայի՝ մյուս սարսափների մեջ։

Դրա համար էլ հենց բողոքականությունն իր ժամերգության մարագներից, աստծո խոսքի իր գործատներից հանեց միածին աստվածամորը։ Այդ կույս-ծննդկանն իրոք խանգարում է քրիստոնեական կարգին, նա չի կարող անջատվել իր երկրային բնույթից, նա ջերմացնում է պաղ եկեղեցին և. չնայած ամեն ինչին, մնում է կին, մնում է մայր։ Բնական

* Թեոդիցեա— չարի գոյության արդարացումը երկրի վրա։

ծննդաբերությամբ նա վրեժ է լուծում անբնական բեղմնավորության համար և օրհնություն է կորզում իր արգանդին՝ ամենայն մարմնականը նզովող վանական շուրթերից։

Բուոնարոտին* ու Ռաֆայելն այդ բոլորը վրձնով հասկացան։

Սիքստինյան կապելլայի «Ահեղ դատաստանում», էն աշխարհի այդ բարթուղոմեոսյան գիշերում, մենք տեսնում ենք մահապատիժները առաջնորդելու գնացող աստծո որդուն. նա արդեն բարձրացրել է ձեռքը... նա նշան կանի՝ և կսկսվեն տանջանքները, տառապանքները, կհնչի ահեղ փողը, կճարճատի համաշխարհային աուտոդաֆեն[1], բայց դողացող ու բոլորին ողբացող մայր-կինը սարսափահար կպել է նրան և աղերսում է հանուն մեղավորաց նայելով մայր-կնոջը, գուցե նա մեղմանա, մոռանա իր դաժան «Կի՛ն, ի՞նչ գործ ունես ինձ հետ»-ը և նշան չտա։

Սիքստինյան մադոննան—Միոնոնան է՝ ծննդաբերությունից հետո. նա վախեցած է աննախընթաց ճակատագրից, շվարած...

Was hat man dir, du armes kind, getan?[2]

Նրա ներաշխարհը խորտակված է, նրան հավատացրել են, որ իր որդին՝ որդին է աստծո, որ ինքն աստվածածին է. նա նայում է մի տեսակ ջղային խանդավառությամբ, հիպնոսային պարզատեսությամբ, նա կարծես ասում է. «Առե՛ք նրան, նա իմը չէ»։ Բայց միաժամանակ սեղմում է նրան իր կրծքին այնպես, որ, եթե հնարավոր լիներ՝ նրա հետ կփախչեր հեռու մի տեղ ու կփաղաքշեր, ծիծ կտար ոչ թե մարդկության փրկչին, այլ ի՛ր որդուն։ Եվ այդ ամենն այն պատճառով, որ նա կին է, մայր, այլ բնավ երբեք՝ քույրը բոլոր Իզիդաների*, Ռեյաների* ու կանացի սեռի մյուս աստվածների։

Դրա համար էլ նա այդպես հեշտ հաղթեց սառը Աֆրոդիտեին*, Ոլիմպոսի այդ Նինոն Լենկլոյին*, որի զավակների մասին ոչ ոք չի հոգում. երեխան գրկին, աչքերը հեգությամբ նրա վրա խոնարհած Մարիամը, իր կանացիությանն լուսապսակով ու մայրական կոչման սրբությամբ, ավելի մոտ է մեր սրտին, քան նրա ոսկեհեր ախոյանուհին։

Ինձ թվում է, թե Պիոս IX-ն ու կղերը շատ հետևողական էին, երբ հայտարարեցին, թե աստվածամոր հղիությունը անբնական է, կամ, ըստ իրենց՝ անարատ։ Մեզ ու ձեզ նման ծնված Մարիամը բնականորեն է պաշտպան կանգնում մարդկանց, կարեկցում մեզ. նրանից է կրոնին ներթափանցել մարմնի և հոգու հաշտեցումը։ Եթե նա էլ է ծնվել ոչ որպես մարդ, նրա ու մեր միջև չի կարող լինել ոչինչ ընդհանուր՝ նա մեզ չի խղճա, մարմինը դարձյալ անիծյալ է. եկեղեցին ավելի է պետք՝ հանուն փրկության։

Ափսոս, որ պապն ուշացել է մի հազար տարով, էդ էլ Պիոս IX-ի բախտից։ Troppo tardi, Santo Padre, siete sempre e sempre—troppo tardi[1]!

---

[1] այստեղ՝ ինկվիզիցիայի կողմից դատապարտված հերետիկոսների և հերետիկոսական գրքերի այրումը խարույկի վրա։

[2] Այդ ի՞նչ բերին գլխիդ. խե՛ղճ մանկիկ (հնար.), Կյոթե, «Միոնոնա»։

[1] Շատ ուշ է, հա՛յր սրբազան, դուք միշտ, մի՛շտ ուշանում եք (իտալ.)։

Երբ գրում էի «Եղելություն և խոհեր»-ի այս մասը, մոռաս չէր մեր նախկին նամակագրությունը։ Ես այն սառցա 1856 թվականին։ Կարդալով նամակները, հարկ եղավ երկու-երեք ուղղում անել, ո՛չ ավելի։ Հիշողությունս այստեղ ինձ չդավաճանեց։ Ես կուզենայի հավելել Natalie-ի մի քանի նամակները, բայց և ինչ-որ վախ կասեցնում է ինձ, և ես չվճռեցի՝ պե՞տք է, արդյոք, շարունակել բաց անել մեր կյանքը, և ինձ համար թանկ տողերը չե՞ն հարուցի, արդյոք, սառն ժպիտ։

Natalie-ի թղթերի մեջ ես գտա իմ երկտողերը՝ գրված մասամբ բանտից առաջ, մասամբ էլ Կրուտիցիից։ Դրանցից մի քանիսը կցում եմ գրքիս այս մասին[1]։ Գուցե դրանք ավելորդ չթվան այն մարդկանց, ովքեր սիրում են հետևել անձնական բախտի ծիլերին, գուցե նրանք կարդան այդ նամակները այն նյարդային հետաքրքրասիրությամբ, որով մենք մանրադիտակով նայում ենք օրգանիզմի կենդանի զարգացմանը։

1

15-ը օգոստոսի, 1832։

Ամենասիրելի Նատալյա Ալեքսանդրովնա.

Այսօր ձեր ծննդյան օրն է. գերագույն ցանկություն ունեմ ձեզ անձամբ շնորհավորելու, սակայն, աստվա՛ծ վկա, ոչ մի հնարավորություն չկա։ Մեղավոր եմ, որ վաղուց չեմ երևա-

[1] Այս երկտողերը պահպանվել էին Natalie-ի մոտ, շատերի վրա նա մի քանի բառ է գրել մատիտով։ Նրա բանտ գրած նամակներից ոչ մեկը չէր կարող պահպանվել ինձ մոտ։ Ես պարտավոր էի անմիջապես ոչնչացնել դրանք (ծանոթ՝ Ա. Ի. Գերցենի)։



ցել, բայց հանգամանքները բոլորովին թույլ չեն տվել տնօրինելու ժամանակս ըստ իմ ցանկության։ Հուսով եմ, որ դուք ինձ կներեք և լիակատար փիթում եմ մաղթում ձեր բոլոր ձիրքերին ու երջանկության ողջ պաշարին, որ ճակատագիրը պարգևում է մաքուր հոգիներին։

Ձեզ նվիրված՝ Ա. Գ.

2

5-ը կամ 6-ը հուլիսի, 1833։

Իզո՛ւր, իզո՛ւր եք մտածում, Նատալյա Ալեքսանդրովնա, թե ես կսահմանափակվեմ մի նամակով, ահա ձեզ և մյուսը։ Ցափազանց հաճելի է գրել այն անձանց, որոնց հնամակրում ես, այնքա՛ն, այնքա՛ն քիչ են նրանք, որ տարին մի քանիսը հինգ էլ թուղթ էլ չես ծախսի։

Ես թեկնածու եմ, դա ճիշտ է, բայց ոսկե մեդալը ի՛նձ չտվին։ Ինձ հասավ արծաթե մեդալ՝ երեքից մե՛կը։

Ա. Գ.

P. S. Այսօր հանդես է, բայց ես չգնացի, քանզի չեմ ուզում երկրորդը լինել պարգևն ստանալիս։

3

(1834-ի սկիզբը)

Nataliel Մենք անհամբեր սպասում ենք ձեզ։ Մայրիկս հուսով է, որ, չնայած Եգոր Իվանովիչի* Խրեկվա սպառնալիքներին, Էմիլիա Միխայլովնան* էլ հավանորեն կլինի մեզ մոտ։ Դե՛, ուրեմն՝ ցտեսություն։

Լրիվ-ձեր՝ Ա. Գ.

4

10-ը դեկտեմբերի, 1834, Կրուտիցիի զորանոց։

Իսկույն նամակ գրեցի գնդապետին*, ինձ համար թույլտվություն խնդրելով, պատասխանը դեռ չկա։ Այդտեղ ավելի դժվար կլինի այդ բանը գլուխ բերել, հույսս մայրիկս է։

Քո բախտը իմ հաշվով բերեց, դու վերջինն էիր իմ բարեկամներից, որին ես տեսա ձերբակալումից առաջ (մենք բաժանվեցինք՝ շուտով, ժամը տասին տեսնվելու հաստատ հույսով, իսկ ժամը երկուսին ես արդեն նստած էի ոստիկանատանը), և դու դարձյալ առաջինը կտեսնես ինձ։ Քեզ իմանալով, ես գիտեմ, որ դա հաճույք կպատճառի քեզ, վստահ եղիր՝ ի՞նձ էլ։ Դու ինձ համար հարազատ քույր ես։

Իմ մասին ասելու շատ բան չունեմ, ես հարմարվել եմ, վարժվել բանտարկյալի վիճակին. ինձ համար ամենաահավորը Օգարյովից բաժանված լինելն է, նա ինձ անհրաժեշտ է։ Ես նրան ոչ մի անգամ, այսինքն՝ մի կարգին չեմ տեսել. բայց մի օր մենակ նստած էի սենյակում (հանձնաժողովում), հարցաքննությունն ավարտվել էր, պատուհանից երևում էր լուսավորված նախասրահը։ Կառքը մոտեցավ, ես քնազդաբար նետվեցի դեպի պատուհանը, բաց արի օդանցքն ու տեսա, թե ինչպես պլաց-ադյուտանտը նստեց, Օգարյովն էլ հետը, կառքը շարժվեց, և նա չէր կարող ինձ նկատել։ Մի՞թե մեզ վիճակված է կործանում, անլուր, անհետ մի կործանում, որի մասին ոչ ոք չի իմանա։ Էլ ինչո՞ւ բնությունը մեզ պարգևեց գործունեության, փառքի ձգտող հոգի։ Մի՞թե սա մի ծաղր է։ Բայց ո՛չ, այստեղ՝ հոգուս մեջ վառվում է հավատը՝ ուժեղ, կենդանի։ Կա՛ նախախնամություն։ Ես հիացմունքով կարդում եմ Հայսմավուրքը,— ի՞նչ անձնազոհության օրինակներ, ի՞նչ մարդիկ էին։

Պատասխանն ստացա, ուրախացնող չի. այցելության թույլտվություն չեն տալիս։

Մնաս բարո՛վ, հիշի՛ր և սիրի՛ր քո եղբորը։

5

31-ը դեկտեմբերի, 1834։

Երբեք ես չեմ վերցնի այն պատասխանատվությունը, որ դնում ես վրաս, երբե՛ք։ Քո մեջ շատ է fo սեփականը, էլ ինչո՞ւ ես այդպես ենթարկվում իմ կամքին։ Ես ուզում եմ, որ ինքդ fեզ դարձնես այն, ինչ կարող ես դարձնել. իմ կողմից ես հանձն եմ առնում նպաստել այդ զարգացմանը, վերացնել խոչընդոտները։



Ինչ վերաբերում է քո վիճակին՝ այն այդքան էլ վատը չէ քո զարգացման համար, ինչպես դու ես պատկերացնում։ Դու մեծ առավելություն ունես շատերի նկատմամբ. երբ սկսեցիր ինքդ քեզ հասկանալ, դու քեզ գտար միայնակ, միայնակ՝ ողջ աշխարհում։ Ուրիշները տեսել էին հայրական սեր ու մայրական քնքշանք. դու զուրկ էիր դրանցից։ Ոչ ոք չուզեց զբաղվել քեզանով, դու պատկանում էիր ինքդ քեզ։ Էլ ի՞նչը կարող է ավելի լավ լինել զարգացման համար։ Շնորհակալ եղիր բախտիցդ, որ քեզանով ոչ ոք չի զբաղվել, նրանք քեզ կներարկեին ուրիշինը, նրանք կընկճեին մանկական հոգիդ,— հիմա արդեն ուշ է։

6

8-ը փետրվարի, 1835, Կրոնտիցիի զորանոց։

Դու, ասում են, միտք ունես վանք մտնելու. շնորհավորում եմ, թե պիտի ժպտամ, ես հասկանում եմ դա, բայց հարկավոր է շատ լավ կշռադատել։ Մի՞թե սիրո գաղափարը չի հուզել քո սիրտը։ Վանքը հուսահատություն է, աղոթքի վանքեր այժմ չկան։ Մի՞թե դու կասկածում ես, որ կհանդիպես մեկին, որը քեզ կսիրի և որին կսիրես դու։ Ես ուրախությամբ կսեղմեմ նրա ձեռքը և քո՛ ձեռքը։ Նա երջանիկ կլինի։ Իսկ եթե այդ նա-ն չհայտնվի՝ մտիր վանք, դա միլիոն անգամ լավ է ստոր ամուսնությունից։

Ես հասկանում եմ քո նամակների le ton d'exaltation[1]— դու սիրահարվա՞ծ ես։ Եթե ինձ գրես, որ սիրում ես լրջորեն՝ կլռեմ,— այստեղ վերջանում է եղբոր իշխանությունը։ Բայց ինձ հարկավոր է, որ դու ասե՛ս այդ բառերը։ Գիտե՞ս արդյոք, թե ինչ բան են սովորական մարդիկ։ Նրանք, ճիշտ է, կարող են ստեղծել երջանկություն, բայց արդյո՞ք քո երջանկությունը, Նատաշա՛։ Դու շատ քիչ ես գնահատում քեզ։ Ավելի լավ է վա՞նք, քան՝ ամբո՛խ։ Մի՛ բան հիշիր՝ ես սա ասում եմ, քանզի ես քո եղբայրն եմ, քանզի ես fեզ համար և fեզանով։

Օգարյովից մի նամակ էլ ստացա, ահա մի կտոր.

1 ոգեշունչ տոնը (ֆրանս.)։

«L'autre jour donc je repassais dans ma mémoire toute ma vie. Un bonheur qui ne m'a jamais trahi c'est ton amitié. De toutes mes passions une seule, qui est restée intacte, c'est mon amitié pour toi, car mon amitié est une passion»[1].

... Վերջում՝ ես մի խոսք։ Եթե նա քեզ սիրում է՝ այդտեղ ի՞նչ տարօրինակ բան կա որ։ Էլ ի՞նչ կլիներ նա, եթե չսիրեր՝ տեսնելով ուշադրության ստվերն անգամ։ Բայց ես ազաչում եմ՝ մի՛ ասա նրան քո սիրո մասին, երկա՞ր, երկա՞ր ժամանակ մի ասա։

Մնաս բարով, քո եղբայր՝ Ալեքսանդր։

7

<10-ը կամ 17-ը փետրվարի, 1835 թ.> Կրուտիցիի զորանոց։

Աշխարհում ի՞նչ հրաշք ասես չի լինում, Natalie։ Նախքան քո վերջին գրությունն ստանալս, պատասխանել եմ քո բոլոր հարցերին։ Լսել եմ, որ հիվանդ ես, տխուր։ Խնայիր քեզ, քաջությամբ խմիր ոչ այնքան դառն, որքան զզվելի բաժակը, որ քեզ համար լցնում են բարեբար մարդիկ։

Եվ դրանից հետո՝ մյուս թերթիկին.

<Մարտ, 1835 թ.>

Նատա՛շա, չարեկա՛մս, քո՛ւյր իմ, աստծո՛ւ սիրուն, մի՛ վհատվիր, արհամարհիր այդ նողկալի եսամոլներին, դու չափազանց ներողամիտ ես նրանց հանդեպ, արհամարհի՛ր նրանց բոլորին— նրանք սրիկանե՞ր են։ Ահավոր էր ինձ համար այն պահը, երբ կարդացի քո երկտողը Emilie-ին[2]։ Աստվա՛ծ իմ, ի՞նչ վիճակի մեջ եմ, ղե՛, ի՞նչ կարող եմ անել ես քեզ համար։

Երդվում եմ, որ ոչ մի եղբայր ավելի շատ չի սիրում քրոջը, քան ես՝ քեզ,— բայց ի՞նչ կարող եմ անել։

1 Օրերս մտքովս արագ անցկացրի իմ ողջ կյանքը։ Միակ երջանկությունը, որ ինձ երբեք չի խաբել՝ քո բարեկամությունն է։ Իմ բոլոր կրքերից միակ անփոփոխ մնացածը իմ բարեկամությունն է հանդեպ քեզ, քանզի իմ բարեկամությունը կիրք է (ֆրանս.)։

2 Էմիլիա (ֆրանս.)։



Ստացել եմ քո երկտողը և գոհ եմ քեզանից։ Մոռացի՛ր նրան՝ եթե այդպես է. դա մի փորձ էր, իսկ եթե իրո՛ք սեր լիներ՝ այդ ձևով չէր արտահայտվի։

8

2-ը ապրիլի <1835 թ.>, Կրուտիցիի զորանոց։

Սիրտս կտոր-կտոր է եղել. բանտարկության ողջ ընթացքում ես այնպես ընկճված, ճնշված չեմ եղել, ինչպես այժմ։ Աքսորը չէ դրա պատճառը։ Ինձ ի՞նչ՝ Պե՞րմ, թե՞ Մոսկվա, Մոսկվա՞ն էլ է Պերմ։ Լսիր ամեն ինչ՝ մինչև վերջ։

Մարտի 31-ին մեզ տարան վճիռը լսելու։ Հանդիսավոր, հուշալի օր։ Ժողովեցին քսան հոգի, որոնց հենց այդտեղից պիտի ցրեին. ոմանց՝ բերդերի խուցերը, մյուսներին՝ հեռավոր քաղաքներ։ Նրանք բոլորը ինն ամիս անց էին կացրել ազատազրկության մեջ։ Աղմկոտ, ուրախ նստել էին այդ մարդիկ մեծ դահլիճում։ Երբ ես եկա՝ Սոկոլովսկին, բեղ-մորուքով, վիզս նետվեց, մեկ էլ տեսնեմ՝ Սատինը. ինձանից շատ հետո բերեցին Օգարյովին, ամենքը դուրս թափվեցին նրան դիմավորելու։ Մենք արցունքով ու ժպիտով գրկախառնվեցինք։ Ամեն ինչ հարություն առավ հոգուս մեջ, ես նորից ապրում էի, ես նորից պատանի էի, ես սեղմում էի բոլորի ձեռքը,— մի խոսքով՝ դա մեկն էր կյանքիս ամենաերջանիկ պահերից՝ ո՛չ մի մռայլ միտք։ Վերջապես կարդացին դատավճիռը[1]։

... Ամեն ինչ լավ էր, բայց երեկվա օրը,— թող անիծյա՛լ լինի այդ օրը,— փշուր-փշուր արեց ինձ։ Ինձ հետ բանտարկված է Օբոլենսկին*։ Երբ կարդացին վճիռը, ես թույլտվություն խնդրեցի Ցինսկուց, որ մենք տեսնվենք. թույլատրեցին։ Վերադառնալով՝ գնացի Օբոլենսկու մոտ. մինչդեռ այդ թույլտվության մասին մոռացել էի ասել գնդապետին։ Հաջորդ օրը սրիկա սպա Ս-ն լուրը հասցրեց գնդապետին, և ես, այդպիսով, գործի մեջ քաշեցի երեք լավագույն սպաներ, որոնք աստված գիտե ինչքա՞ն զիջումներ էին արել ինձ. նրանք նկատողություն ստացան ու բոլորն էլ պատժվեցին և

1 Այն բաց եմ թողնում (ծանոթ.՝ Ա. Ի. Գերցենի)։

հիմա, առանց փոխվելու, երեք շաբաթ պիտի հերթապահեն (իսկ շուտով զատկի ավագ շաբաթն է)։ Վասիլևին (ժանդարմին) ճիպոտահարեցին,— և բոլորը իմ պատճառով։ Ես մատներս էի կրծոտում, լալիս էի, կատաղում, և առաջին միտքը, որ գլուխս եկավ՝ վրիժառությունն էր։ Ես այն սպայի մասին այնպիսի՛ բաներ պատմեցի, որոնք կարող՝ են նրան կործանել (նա մի բանտարկյալի հետ ինչ-որ տեղ էր այցելել), ու հիշեցի, որ նա խեղճ մարդ է և յոթ երեխաների հայր. բայց պե՞տք է արդյոք խնայել մատնիչին, մի՞թե նա խնայում էր ուրիշներին։

## 9

*10-ը ապրիլի, 1835, ժամը 9-ին։*

Մի քանի ժամից մեկնելու եմ, բայց ես դեռ նստած գրում եմ, և գրում եմ քեզ. քե՛զ է ուղղվում մեկնողի վերջին ձայնը։ Ծանր է զգացումը բաժանումի, ակամա՛ բաժանումի, բայց այդպիսին է ճակատագիրը, որին ես հանձնվել եմ. այն քաշում-տանում է ինձ, և ես հնազանդվում եմ։ Ե՞րբ կտեսնվենք։ Որտե՞ղ։ Այս բոլորը անհայտ խավար է, բայց պայծառ է հիշողությունը քո բարեկամության, աքսորականը երբե՛ք չի մոռանա իր սքանչելի քրոջը։

Թերևս... բայց վերջացնել հնարավոր չէ, իմ ետևից եկան. դե՛, մնաս բարով երկար ժամանակով, բայց, աստվա՛ծ վկա, ո՛չ ընդմիշտ, ես դա չեմ կարող պատկերացնել։

Այս ամենը գրված է ժանդարմների ներկայությամբ։

Այս երկտողի վրա նկատվում են արցունքի հետքեր, և «Թերևս» բառը երկու անգամ ընդգծված է նրա ձեռքով։ Natalie-ն այն մի քանի ամիս ման է ածել հետը։

# ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

## Ռուսիայի եղբայրներիս

Սույն տողերի տակ հանգչում է աճյունը քառասնամյա կյանքի, որ ավարտվել է մահից առաջ։ Եղբայրնե՛ր, հիշողությունն այդ կյանքի ընդունեցեք խաղաղությամբ։

Վերջապես ինձ շրջապատող խուճապն ու տագնապը, որ ինքս էի հարուցել, հանդարտվում են. կողքիս մարդիկ գնալով պակասում են, և քանի որ մեր ճամփաները տարբեր են՝ ես ավելի ու ավելի մենակ եմ մնում։

Ես չեմ մեկնում Լոնդոնից։ Ո՛ւր գնամ և ինչո՛ւ... Այստեղ բերեցին-գցեցին ալիքները, որ այդքան անողոք փշրեցին, տակնուվրա արին ինձ, ինձ հարազատ ամեն բան... Այստեղ էլ մի քիչ շունչ առնեմ և ուշքի գամ։

Չգիտեմ կհասցնե՞մ արդյոք, կկարողանա՞մ օգտվել այդ ժամանակից՝ պատմելու համար ձեզ կյանքիս վերջին տարիների ահավոր պատմությունը։ Փորձեմ։

Այդ ժամանակին վերաբերող ամեն մի խոսքը թաղման զանգի հատ-հատ ու թանձր զողանջների պես ուժգին ցնցում, ճզմում է հոգիս, և այդուհանդերձ՝ ես ուզում եմ խոսել այդ ժամանակվա մասին,— ոչ թե՝ որ թոթափեմ իմ անցյալը, փակեմ հաշիվները նրա հետ, ո՛չ, նրանից չեմ հրաժարվի ոչ մի գնով. ես ոչինչ չունեմ նրանից բացի։ Ես օրհնել եմ իմ տառապանքները, ես հաշտվել եմ դրանց հետ. և ես հաղթական դուրս կգայի մի շարք փորձություններից, այն էլ ոչ մենակս, եթե մահը չկտրեր ճանապարհս*։ Ես սեփական, անձնական ոչինչ չունեմ՝ անցյալից դուրս։ Ես ապրում եմ նրա մեջ, ես ապրում եմ մահով, անցած-դնացածով,— այդպես, ձեռնադրվելուց հետո, վանականներն էին կորցնում իրենց անհատականը և ապրում անցյալի հայեցողությամբ, կատարվածի խոստովանությամբ, աղոթքով՝ հանուն հանգուցյալների, հանուն նրանց լուսավոր հարության։ Անցածը կենդանի է իմ մեջ, ես այն շարունակում եմ, ես չեմ ուզում ամփոփել այդ անցածը, ուզում եմ խոսել, քանզի ե՛ս միայն կարող եմ վկայել նրա մասին։

Խոստովանությունն իմ ի՞նձ է պետք, պետք է ձե՛զ, այն պետք է հիշողությա՛նը,— որ սուրբ է ինձ համար ու հարազատ է ձեզ,— պետք է իմ զավակների՛ն։

Մենք բաժանվեցինք, սիրելի բարեկամնե՛ր, 1847 թվականի հունվարի 21-ին*։

Այն ժամանակ ես ուժերիս ծաղկման մեջ էի, անցած կյանքս տվել էր ինձ այնպիսի գրավականներ և այնպիսի փորձություններ, որ ես համարձակ հեռացա ձեզանից՝ թեթևամիտ ինքնավստահությամբ, կյանքի հանդեպ հանդուգն հավատով։ Ես շտապում էի կտրվել իրար շատ վարժված, իրար մերձեցած, խոր սիրով ու ընդհանուր վշտով շաղկապված մարդկանց փոքրիկ խմբակից։ Ինձ կանչում էր ուրիշ մի կյանք, ուրիշ հեռաստան, բացահայտ պայքարն ու ազատ խոսքը։ Անհանգիստ հոգիս փնտրում էր ասպարեզ, անկախություն. ես ուզում էի փորձել ուժերս ազատության մեջ, փշրելով բոլոր կապանքները, որ Ռուսիայում կաշկանդում են ամեն մի քայլ, յուրաքանչյուր շարժում։

Ես գտա այն ամենը, ինչ փնտրում էի,— և դրանից բացի՝ կործանում, բոլոր բարիքների ու բոլոր հույսերի կորուստ, հարվածներ՝ անկյուններից, նենգ դավաճանություն, ոչնչի առաջ կանգ չառնող, ամեն բան ոտնահարող սրբապղծություն, բարոյական ապականություն, որի մասին դուք պատկերացում չունեք...

Տասնհինգ տարի առաջ, աքսորում եղածս ժամանակ, կյանքիս ամենագեղեցիկ, ամենաբանաստեղծական շրջաններից մեկում, 1838 թվականի ձմռանը կամ գարնանը ես թեթև, աշխույժ, կատակի տալով գրեցի վաղ երիտասարդությանս հիշողությունները։ Գրաքննության կողմից ազավաղված երկու հատված տպագրվեց։ Մնացածը գնաց-կորավ. ձեռագրի մի մասն ինքս այրեցի երկրորդ աքսորից առաջ, վախենալով, որ կընկնի ոստիկանության ձեռքն ու հարվածի տակ կդնի ընկերներիս։

Այն գրառումների և այս տողերի արանքում եկավ-անցավ ամբողջ մի կյանք,— երկու կյանք՝ երջանկության ու դժբախտությունների վիթխարի մի հարստությամբ։ Այն ժամանակ ամեն ինչ շնչում էր հույսով, ամեն ինչ ձգտում էր



առաջ, այժմ՝ միայն հիշողություններ, միայն հետագարձ հայացք,— առաջ նայող հայացքն անցնում է կյանքի սահմանները, այն ուղղված է երեխաներին։ Ես գնում եմ աշքերս ետ, ինչպես շրջված գլուխներով այն դանթեական ստվերները, որոնց

Il veder dinanzi era tolto[1].

Տասնհինգ տարին բավական էր ոչ միայն ուժերը զարգացնելու, զարմանալի շռայլությամբ ու լիությամբ ամենահանդուգն երազանքներն ու ամենաանիրական հույսերն իրագործելու համար, այլև դրանք կործանելու համար՝ թղթե տանակի պես տապալելով ամեն բան... մասնավորն ու ընդհանուրը։

«Մի երիտասարդի հիշատարականը» շարունակել ես չեմ ուզում և եթե ուզենայի էլ՝ չեմ կարող։ Ժպիտն ու ավելորդ աշխույժը չեն պատշաճում թաղման արարողությանը։ Մարդիկ ակամա ցածրացնում են ձայնը և մտախոհ են դառնում այն սենյակում, որտեղ դրված է նույնիսկ իրենց անծանոթ հանգուցյալի դագաղ։

Ա. Գերցեն

2-ը նոյեմբերի, 1852, Լոնդոն։
2 Barrow Hill Place, Primrose Road.

## ԱՌԱՋԻՆ ՄԱՍԻ ՀԱՄԱՐ

[Նախաբան]

Այս տարվա հոկտեմբեր ամսին Հերստն ու Բլյակեթը հրատարակեցին իմ «Հուշերի» անգլերեն թարգմանությունը։ Հաջողությունը կատարյալ էր. ոչ միայն բոլոր ազատամիտ հանդեսներն ու շաբաթաթերթերը գետեղեցին ընդարձակ հատվածներ՝ ամենագովասանական գնահատականներով (հատուկ շնորհակալությամբ եմ վերհիշում «The Athenaeum»-ի, «The Critic»-ի և «Weekly Times»-ի հոդվածները), այլև նույնիսկ Պալմերստոնի ու Բոնապարտի միության դաղանհամատեղ օրգան «Morning Post»-ը կշտամբեց ինձ

1 վիճակված չէր առաջ նայել՝ (իտալ.)։

և խորհուրդ էր տալիս փակել ռուսական տպարանը, եթե ես ուզում եմ հարգանք վայելել (ո՞ւմ, նրա՞նց հարգանքը, բնա՛վ չեմ ուզում)։

Այս հաջողությունը, Նյու-յորքյան ու գերմանական հանդեսներում գերմաներեն թարգմանության վերլուծականների հետ մեկտեղ, փարատեց «Բանտ և աքսոր»-ին նախորդող մասը տպագրելու վերաբերյալ իմ տարակուսանքը։ Այդ մասի մեջ ավելի, քան տպագրվածներում, ինձ հարկ եղավ խոսել իմ մասին, և ոչ միայն իմ, այլև ընտանեկան գործերի մասին։ Դա դժվար բան է ոչ ինքնին, այլ՝ որովհետև ճանապարհին ակամա դեմ ես առնում ընտանեկան օջախը շրջափակող նախապաշարմունքների ցանկապատին։ Ես կոպիտ չեմ վերաբերվել ոչ մի հիշողության, չեմ վիրավորել ոչ մի անկեղծ զգացմունք, բայց չեմ ցանկացել ողջախոհ ստին ու նենգ սքողմանը զոհաբերել անկեղծորեն պատմված կյանքի շահը։

Չգիտեմ, արժե՞ արդյոք խոսել այն նողկալի հարձակումների մասին, որոնց ենթարկեց ինձ հրատարակիչների անզգույշ արարքը, բայց որպեսզի չմտածեն, թե ես լռության եմ մատնել դրանք՝ ասեմ մի քանի խոսք։ Թարգմանությունների հրատարակիչները, որ ոչ մի կապ չեն պահպանել ինձ հետ, «Սիբիր» բառը համարձակորեն դարձրել են խորագիր։ Ես բողոքեցի։ Դա չխանգարեց, որ հանդեսներից մեկը հարձակվի ինձ վրա։ Ես պատասխանեցի, պատմելով գործի էությունը։ Հանդեսը շարունակեց զրպարտությունը. ես չէի կարող իշնել նրան պատասխանելու մակարդակին։ Բարեբախտաբար, ես գիտեմ, որ Ռուսաստանում ոչ միայն մեր բարեկամների, այլև մեր թշնամիների մեջ չի գտնվի մեկը, որն ինձ կասկածի կանխամտածված խաբեության մեջ՝ à la Barnum կամ կարծի, թե բանտարգելության աքսորը[1] ինձ համար եղել է կամավոր մի ծառայություն։

Ի-ր։

---

1 Գերցենն ակնարկում է իր աշխատանքը Վյատկայի նահանգապետի գրասենյակում։





Հիշողություններ գրելու համար բնավ էլ հարկավոր չէ մեծ մարդ կամ շատ բան տեսած մի արկածախնդիր, փառաբաշված արվեստագետ կամ պետական գործիչ լինել։ Բավական է պարզապես պատմելու բան ունեցող մարդ լինել, որը կարող է և ուզում է այդ անել։

Սովորական մարդու կյանքը ևս կարող է հետաքրքրություն հարուցել, եթե ոչ անձնավորության տեսակետից, ապա երկրի ու դարաշրջանի առումով, ուր այդ անձնավորությունն ապրել է։ Մենք սիրում ենք թափանցել ուրիշի ներաշխարհը, մեզ դուր է գալիս դիպչել օտար սրտի ամենանազգայուն լարերին ու տեսնել այդ սրտի թաքուն սարսուռները, մենք ջանում ենք ճանաչել նրա նվիրական գաղտնիքները, որպեսզի համեմատենք, հավաստենք, արդարացնում, սփոփանք, նմանության ապացույց գտնենք։

Հուշագրությունները, իհարկե, կարող են լինել ձանձրալի, և դրանցում շարադրված կյանքը՝ աղքատիկ ու աննշան։ Ուրեմն մի՛ կարդացեք դրանք,— և դա գրքի ամենաահավոր դատավճիռը կլինի։ Եվ այստեղ հուշեր գրելու ոչ մի հատուկ ձեռնարկ չի կարող լինել։ Բենվենուտո Չելլինիի հուշագրությունները հետաքրքիր են ոչ թե այն բանի շնորհիվ, որ նա մեծ արվեստագետ էր, այլ որովհետև դրանց մեջ արծարծել է արտակարգ հետաքրքիր հարցեր։

«Այս կամ այն բանն ասելու իրավունք»,— սա հնացած արտահայտություն է, որ վերաբերում է ինտելեկտուալ կյանքի քայքայման դարաշրջանին, դափնեկիր-բանաստեղծների, թասակավոր դոկտորների, արտոնյալ փիլիսոփաների, արտոնագրված գիտնական այրերի ու ակադեմիական աշխարհի մյուս փարիսեցիների ժամանակներին։ Այն ժամանակներում դրողական արվեստը համարվում էր փոքրաթիվ ընտրյալներին մատչելի մի գաղտնիք։ «Պատոնական գրողը» ոչ միայն թղթի վրա, այլև կյանքում բանեցնում էր վերամբարձ ոճ, ընտրում ամենաանբնական դարձվածքներ և օգտվում ամենահազվադեպ գործածվող բառերից,— մի խոսքով՝ նա անվերջ խրատաբանում էր կամ ներբողում։

Ոչ վերաբերում է մեզ՝ մենք խոսում ենք միանգամայն

հասկանալի լեզվով։ Մենք գրողական արվեստը պատկերացնում ենք իբրև մի գործ, որով կարող է զբաղվել ուզածդ մարդը։ Դրա համար պետք չէ լինել պրոֆեսիոնալ, քանի որ դա ամենասովորական մի աշխատանք է։ Համենայն դեպս, այստեղ չի կարելի կասկածի ենթարկել «աշխատանքի իրավունքը»։

Իսկ որ ոչ ամեն ստեղծագործություն կարող է ընթերցող գտնել՝ այդ՞ այլ խնդիր է։

Մի տարի առաջ Լոնդոնում ռուսերեն հրատարակեցի հուշագրություններիս մի մասը՝ «Բանտ և աքսոր» խորագրով։ Այս գործը երևան եկավ այն ժամանակ, երբ պատերազմն արդեն սկսվել էր և կապը Ռուսաստանի հետ շատ ավելի դժվար դարձել։ Դրա համար էլ մեծ հաջողություն չէի ակնկալում։ Բայց այլ կերպ եղավ։ Սեպտեմբեր ամսին «Revue des Deux Mondes»-ը զետեղեց ընդարձակ հատվածներ գրքիցս՝ իմ մասին չափազանց գովասանական կարծիքով հանդերձ (թեև ես չեմ բաժանում գրախոսի տեսակետը)։ Հունվարին տպվեցին այլ հատվածներ Լոնդոնի «Athenaeum»-ում (համապատասխանաբար թարգմանված ռուսերենից)։ Այդ նույն ժամանակ Հոֆմանն ու Կամպեն Համբուրգում հրապարակեցին այդ երկի գերմաներեն թարգմանությունը։

Դա ինձ մղեց հրատարակելու ևս մի հատոր։

Մի այլ տեղ ես կասեմ, թե ինչ խոր հետաքրքրություն ունեն անձամբ ինձ համար այդ հուշագրությունները և թե ի՞նչ նպատակով սկսեցի գրել։ Այստեղ կբավարարվեմ լոկ այն փաստի Հավաստումով, որ ներկա ժամանակներում չկա այնպիսի մի երկիր, որտեղ հուշագրություններն ավելի օգտակար լիներին, քան Ռուսաստանը։ Մենք,— գրաքննությա՞ն շնորհիվ,— շատ քիչ ենք վարժված հրապարակայնության։ Հրապարակայնությունը վախեցնում, զարմացնում ու վիրավորում է մեզ։ Վերջապես ժամանակն է, որ Պետերբուրգի ոստիկանության կայսերական խեղկատակներն իմանան՝ իրենց արարքները,— որոնց գաղտնիքը այդքան լավ պահում են բանտերը, շղթաներն ու գերեզմանները,— վաղ թե ուշ հայտնի կդառնան ամենքին և իրենց խայտառակ գործերը կմերկացվեն ամբողջ աշխարհի առաջ։

## ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

5 Ն. Պ. Օգարյով (1813—1877)— բանաստեղծ, հրապարակախոս և հեղափոխական, Ա. Ի. Գերցենի ամենամերձավոր ընկերն ու զինակիցը։ Գերցենի հետ միասին 1856-ից գլխավորում էր ռուսական Ազատ տպարանը, խմբագրում էր «Պոլյարնայա զվեզդա» ալմանախը, «Կոլոկոլ» թերթը։

Մեկն արդեն չկա— Նատալյա Ալեքսանդրովնա Գերցեն (1817—1852), Գերցենի զարմուհին, ծնյալ Զախարինա, 1838-ից՝ նրա կինը։ Ն. Ա.-ի հայրը Գերցենի մեծ հորեղբայրն էր՝ Ա. Ա. Յակովլևը, մայրը՝ Կ. Ի. Զախարինան (հավանաբար՝ ճորտ գեղջկուհի)։

Իսկանդեր— Ալեքսանդր՝ արաբերեն։ Գերցենի ծածկանունը։

6 ... նամակներ՝ մաս տառերով գրված— Նկատի ունի Ն. Ա. Զախարինայի նամակները։

7 «Մի երիտասարդի հիշատակարանը»— Գերցենի ինքնակենսագրական վիպակի խորագիրը։ Վիպակը գրված է 1840—41 թթ.։

8 ... պատանեկության ընկերներից մեկը— Ն. Ա. Սատին (1814—1873), բանաստեղծ և թարգմանիչ, Գերցենի պատանեկան խմբակի անդամ։ Սատինի նամակագրությունը Վ. Ն. Սոկոլովսկու հետ առիթ ծառայեց Գերցենի և Օգարյովի ձերբակալության՝ 1834-ին։ Սատինը ոստիկանության հսկողության ներքո աքսորվեց Սիմբիրսկ։ Հետագայում հանդիպումներ էր ունենում աքսորյալ դեկաբրիստների հետ՝ Կովկասում, Վ. Գ. Բելինսկու հետ։ 1849-ին Օգարյովի հետ ձերբակալվել է «կոմունիստական աղանդին» պատկանելու մեղադրանքով։ 1860-ին, չնայած III բաժանմունքի արգելքին, Լոնդոնում այցելեց Գերցենին։

9 Գրյուտլի— հովիտ Շվեյցարիայի Ֆիրվալդշտետ լճի ափին։ Ըստ ավանդության՝ XIV դարի սկզբին այդտեղ Ուր, Շվից և Ունտերվալդեն կանտոնների ներկայացուցիչները երդում տվին՝ պայքարել հանուն հայրենիքի ազատագրության։

10 «Մեր գաշինքը մնաց միշտ այդպիսին»— Ն. Պ. Օգարյովի «Իսկանդերին» բանաստեղծության (1846) վերջին տողերը։

## Մասն առաջին

Գրված է 1852—53 թթ., առաջին անգամ նախնական խմբագրությամբ տպագրվել է «Գոլյարնայա զվեզդա» ալմանախում, 1856-ին։

11 Վերա Արտամոնովնա— Գերցենի դայակը, որին նա շատ էր սիրում և հետագայում, վտարանդի եղած ժամանակ, հոգացել է նրա մասին և օգնել։

12 Դե՛, ձեր նայրը...— Գերցենի հայրը՝ Ի. Ա. Յակովլևը (1767—1846), պատկանում էր այն հնագույն տոհմին, որն իր նախահայրն էր համարում Ալեքսանդր Նևսկու մոտ ծառայության մեջ եղած Ռաշին։ Պուշկինները նույնպես իրենց տոհմը հաշվում էին նրանից։ 1788-ից մինչև 1797-ը Ի. Ա. Յակովլևը ծառայել է Գվարդիայում, մասնակցել արշավանքներին։ Պաշտոնաթող լինելով՝ երկար տարիներ անց է կացրել արտասահմանում։

Իշխանադուստր— Ա. Բ. Մեշչերսկայա, Գերցենի հոր հորաքույրն ու դաստիարակուհին։ Մեշչերսկայայի տանը Գերցենը լինում էր նաև հետագա տարիներին. այստեղ նա հանդիպեց Նատալյա Ալեքսանդրովնա Զախարինային՝ իր ապագա կնոջը։

13 Ֆ. Վ. Ռոստոպչին— Մոսկվայի գեներալ նահանգապետը 1812—14 թթ.։

14 Նատալյա Կոնստանտինովնա («Կոստենկա»)— Գերցենի առաջին դայակը։

15 Հերցոգ Տրեիգիացի— Է. Ա. Մորտյե, մարշալ, Նապոլեոնը նրան նշանակել էր «մոսկովյան նահանգապետ»։

Բարոն Ֆեճի պատմությունը— Նապոլեոնի համհարզ Ժ. Ֆեճի «Manuscript de l'an 1812» խորագրով գիրքը՝ հրատարակված Փարիզում, 1827-ին։

Միխայլովսկի-Դանիլևսկու պատմությունը— գեներալ Ա. Ի. Միխայլովսկի-Դանիլևսկու «1812 թվականի Հայրենական պատերազմի նկարագրությունը» խորագրով գիրքը՝ հրատարակված Պետերբուրգում, 1839-ին։

16 Գեներալ-նահանգապետի շենքը— այժմ Մոսսովետի շենքը Գորկու փողոցում (վերակառուցված 1947-ին)։

17 Մ. Նեյ— Նապոլեոնի սիրված մարշալներից մեկը։ Լ. Նարբոն— Նապոլեոնի համհարզը 1812-ին։ Ա. Բերտյե— մարշալ, Նապոլեոնի շտաբի պետը 1812—14 թթ.։

Ժ.-Բ. Լեսեպս— ֆրանսիական դիվանագետ, Նապոլեոնի կողմից նշանակված էր Մոսկվայի ավագ ոստիկանապետ։

Մայրս— Հաագ Լուիզա Իվանովնա, ծնունդով Շտուտգարտից, որտեղ նրան հանդիպեց Գերցենի հայրը՝ Ի. Ա. Յակովլևը։ Իր որդու անունը Յակովլևը դրեց Գերցեն, գերմաներեն Herz (սիրտ) բառից։ Լուիզա Իվանովնան զոհվեց նավաբեկության ժամանակ 1851-ին, Գերցենի որդու՝ Կոլյայի հետ միասին։

18 Երկրորդ նահանգապետությունը— Գերցենը հեգնանքով ակնարկում է իր աքսորվելը Պերմ և Վյատկա 1835-ին։

Ա. Ա. Արակչեև— XVIII դ. վերջի— XIX դ. սկզբի ցարական ռեակցիոն գործիչ Պավել I-ի և Ալեքսանդր I-ի օրոք, նրա անվան հետ է կապված բիրտ զինվորականության և ոստիկանական կամայականության մի ողջ դարաշրջան («արակչեևշչինա»)։

Ա. Ս. (և ոչ թե Ս. Ս.) Շիշկով— պետական և գրական ռեակցիոն գործիչ, 1812—14 թթ. եղել է պետական քարտուղար, ապա, մինչև 1828-ը՝ լուսավորության մինիստր։

20 Հորեղբայրս— Լ. Ա. Յակովլև (1764—1839)։ Եղել է գեսպանորդ վեստֆալիայի թագավոր Իերոնիմ Բոնապարտի մոտ 1820-ից՝ սենատոր։

Ժ.-Բ. Բերնադոտ— ֆրանսիական մարշալ, եղել է Շվեդիայի թագավոր՝ Կարլոս XIV անունով։

21 Մ. Ա. Միլորադովիչ— 1818-ից՝ Պետերբուրգի գեներալ-նահանգապետ, Ա. Սուվորովի իտալական ու շվեյցարական արշավանքների և 1812 թ. պատերազմի մասնակից։

Կենսոնա— վտարանդի, բուրժուական հեղափոխության ժամանակ, 1792-ին տապալված Բուրբոնների դինաստիայի կողմնակից։ Նապոլեոնը, այս արիստոկրատի համոզմամբ, գահի հափշտակիչն էր։ Կենսոնան ծառայում էր ռուսական կայսեր՝ ցանկանալով վերականգնել «իր» թագավորի իշխանությունը։

23 Դմելինի և Պալանի նանապարհորդությունը— XVIII դարի երկու բնախույզներ, որոնք ուսումնասիրում էին Ռուսաստանի ծայրամասերը։

«Աշխարհի մարդիկ»— մանկական առաջին հանրագիտարաններից մեկը։

Ֆրիդրիխ II— պրուսական թագավոր, Ռուսաստանի, Ֆրանսիայի և Ավստրիայի դեմ մղել է Յոթնամյա պատերազմը, որն ավարտվեց ռուսական բանակի կողմից պրուսական զորքերի ջախջախումով։

24 Սենատորության և ընշանաղրության պալատը— գանգի վրայի պալարներով Գերցենի ժամանակ որոշում էին մարդու ընդունակությունները՝ ըստ այդ շրջանում մոդայիկ «գիտության», այսպես կոչված՝ ֆրենոլոգիայի (գանգագուշակության)։ Գերցենը միշտ էլ ծաղրանքով է վերաբերվել այդ կեղծ գիտությանը։

Երկուսից մեծ մի եղբայր— Գերցենը նկատի ունի Ալեքսանդր Ալեքսեևիչ Յակովլևին՝ սինոդի ավագ դատախազին (պաշտոնյա, որ կանգնած էր բարձրագույն եկեղեցական վարչության գլուխ)։ Նա Ալեքսեյ Յակովլևի («Քիմիկոս») և Նատալյա Ալեքսանդրովնայի՝ Գերցենի կնոջ հայրն էր։ Տվերյան բուլվարի նրա տանն էլ ծնվել է Ա. Ի. Գերցենը։

26 Ամատիների ջութակ— իտալական Կրեմոն քաղաքում ապրող Ամատի ընտանիքի պատրաստած ջութակներից մեկը։

29 Ս. Ռ. Վորոնցով— ռուսական դեսպան Անգլիայում 1784—1806 թթ.։

Վ. Գրենվիլ— XVIII դ. վերջի-XIX դ. առաջին քառորդի անգլիական քաղաքական գործիչ, եղել է արտաքին գործոց մինիստր և անգլիական կառավարության ղեկավար, հեղափոխական Ֆրանսիայի, ապա նաև Նապոլեոն I-ի կայսրության դեմ պայքարի կազմակերպիչներից մեկը։

«Ցար Երյոմա»—Ժերոմ (Իերոնիմ) Բոնապարտի՝ Նապոլեոն I-ի եղբոր

մակեռունը։ 1807-ին Նապոլեոն I-ը երան նշանակեց Վենսֆալիայի թագավոր։

34 Գ. Կ. Էսսեն— Գերցենի հոր պաշտոնակիցը Իզմայլովյան գնդից, գեներալ-մայոր։

Ա. Ն. Բախմետև— Գերցենի հոր ընկերը զինվորական ծառայության շրջանից։

35 Այդ ժամանակ ես արդեն տասներեք տարեկան էի— այն ժամանակ Գերցենն ութ տարեկան էր. խոսակցությունը տեղի է ունեցել 1820-ին։

38 Տասնչարտերազ դասից գաւս գանվող շինովնիկներ.— Ըստ 1722-ին Պետրոս I-ի մտցրած աստիճանացուցակի՝ շինովնիկները բաժանվեցին 14 կարգի։ Առաջին կարգերը բարձրագույններն էին, տասնչորսերորդը ցածրագույնն էր։ Գերցենը նկատի ունի իշխանության ամենաստորին ներկայացուցիչներին, որոնք աստիճանացուցակի մեջ չէին մտցված։

Գ. Ա. Կոչուբեյ— ռեակցիոն քաղաքական գործիչ, Նիկոլայ I-ի սիրելիներից մեկը, հաղորդակցության ճանապարհների մինիստր։

Ա. Խ. Բենկենդորֆ— ժանդարմական կորպուսի շեֆ և ցարական գրասենյակի III բաժանմունքի պետ, Նիկոլայ I-ի կամակատարներից մեկը, որ շահել էր նրա համակրանքը 1825 թ. դեկտեմբերի 14-ի ապստամբության ճնշման մեջ ունեցած իր մասնակցությամբ և ռուսական առաջավոր մտքի դաժան հալածանքներով, Ա. Ս. Պուշկինի սպանության մեղսակիցներից մեկը։

Պերեկուսիխինա— Եկատերինա II-ի մերձավորը։

39 Պոմպադուր— ֆրանսիական թագավոր Լյուդովիկոս XV-ի սիրուհին։

Մետյու— կաթոլիկ հոգևորական, ժուժկալության քարոզիչ։

40 Օ. Ի. Սենկովսկի— գրող, քննադատ, ժուռնալային գործիչ, որն աչքի էր ընկնում ծայրահեղ անսկզբունքայնությամբ։ Նրա դեմ հանդես էր գալիս Ա. Ս. Պուշկինը 1836-ին իր հիմնադրած «Սովրեմեննիկ» ժուռնալում։

52 «Ռեպերտուար»— ֆրանսիական թատերական հանդես։

«Թեատր»— «Ռոսիյսկի թեատր», գիտությունների ակադեմիայի հրատարակած պիեսների ժողովածու։

Ա. Լաֆոնտեն— XVIII դ. վերջի-XIX դ. սկզբի գերմանական գրող, մի շարք սենտիմենտալ վեպերի հեղինակ։

Կոցեբու (1761—1819)—գերմանական գրող։

53 Օֆրեն— ֆրանսիական դերասան, XVIII դ. վերջերին հանդես է եկել Ռուսաստանում և դրամատիկական արվեստի դասեր է տվել։

54 Ժորժ և Մարս— ֆրանսիական հայտնի դերասաններ։

58 Վաթերլոո— գյուղ Բելգիայում, այստեղ 1815 թ. հունիսի 18-ին տեղի ունեցած ճակատամարտում Նապոլեոնը պարտություն կրեց անգլո-գերմանական զորքերից։

Արթուր Վելինգտոն (1769—1852)— անգլիական բանակի գլխավոր հրամանատարը Նապոլեոնի դեմ մղված պատերազմում, փառաբանվեց Վաթերլոոյում ձեռք բերած հաղթանակով։



Գ.-Ժ. Բերանժե (1780—1757)— ֆրանսիական հեղափոխական բանաստեղծ, որն իր երգերից մեկում ծաղրել է Վելինգտոնին։

Գ.-Լ. Բյուլեր— ֆելդմարշալ, պրուսական բանակի հրամանատարը Վաթերլոոյի ճակատամարտում։

63 Ա. Ն. Գոլիցին— 1815-ից՝ սինոդի ավագ դատախազն է, 1817—1823 թթ. գլխավորել է այն մինիստրությունը, որի մեջ միավորված էին հոգևոր և լուսավորության գերատեսչությունները։ Նրա նախաձեռնությամբ ստեղծվել ռեակցիոն «Աստվածաշնչային ընկերությունը», որը տարածում էր սնահավատություն և միստիցիզմ։ Գերցենը բնութագրում է այս ընկերության հետ կապված ռեակցիան։ Լուսավորության ասպարեզում 1816—1823 թթ.։

64 Յա. Ի. դը Սանգլենը աչքի ընկնող դիրք ուներ Ալեքսանդր I-ի դաղտնի ոստիկանության մեջ, հեղինակ է նոթագրությունների։ Գերցենը նրան համեմատում է Ֆրանսիական գրող, Փարիզի բարձրաշխարհիկ կյանքից գրված ակնարկների հեղինակ Ժուիի հետ։

Մ. Ն. Զագոսկին (1789—1852)— գրող, դրամատուրգ, հեղինակ մի շարք պատմական վեպերի, որոնց բնորոշ է անցյալի իդեալականացումը։ 1837-ից մոսկովյան թատրոնների տնօրենն էր։

65 Գ. Յա. Չաադան (1794—1856)— փիլիսոփա, հրապարակախոս, Ա. Ս. Պուշկինի և դեկաբրիստների ընկերը, «Փիլիսոփայական նամակների» հեղինակը, որոնցից մեկի համար (հրատարակված 1836-ին) Նիկոլայ I-ի հրամանով հայտարարվեց խելագար։

Լ. Դեմուլեն— Կ. Դեմուլենի (տե՛ս 180-րդ էջի ծանոթագրությունը) կինը։ Գերցենը Լյուսիլ Դեմուլենին անվանել է Օֆելյա, քանի որ ամուսնու մահապատժից հետո նա թափառում էր ամենուրեք՝ որպես խելագար։ Մահապատժի է ենթարկվել ամուսնուց որոշ ժամանակ հետո։

Ժորժ Սանդ (1804—1876)— ֆրանսիական կին գրող Ավրորա Դյուդեն-Դյուդևանի կեղծանունը։ Հեղինակ բուրժուական հասարակության մեջ կնոջ վիճակը պատկերող մի շարք վեպերի։

Լ. Ալիբո— մահապատժի է ենթարկվել 1836-ին՝ Լուի-Ֆիլիպ թագավորի դեմ մահափորձ կատարելու համար։

Իվաշևի միակ որդին— Վ. Պ. Իվաշև (1797—1840), 1812 թ. Հայրենական պատերազմի մասնակից, երկրորդ բանակի գլխավոր հրամանատար Պ. Խ. Վիտգենշտեյնի համհարզը, հետագայում դեկաբրիստների Հարավային ընկերության անդամ, դատապարտվել է 15 տարվա տաժանակրության։ Նրա եռևից Սիբիր գնաց Կամիլա դը Դանտյուն, որի հետ ամուսնանալուն դրանից առաջ խոչընդոտում էին Իվաշևի հարազատները։

66 Նովոսիլցևի և Չերնովի մենամարտը.— Ֆիլիպ-ադյուտանտ, Պետերբուրգի վերնախավի ներկայացուցիչ Վ. Դ. Նովոսիլցևը հրապուրեց դատական պաշտոնյայի դուստր Ե. Պ. Չերնովային։ Նովոսիլցևի ազգականները խոչընդոտ հանդիսացան աղքատ ու ստորին խավի աղջկա հետ ամուսնությանը։ Չերնովայի եղբայրը՝ Կոնստանտին Պախոմովիչը, քրոջ պատիվը վիրավորողին կանչեց մենամարտի, հակառակորդները երկուսն էլ ծանր վիրավորվեցին։ Չերնովի մարտավարական դեկաբրիստ-բանաստեղծ

Կ. Ֆ. Ռիլեևն էր. նա գրեց «Ջերնովի մահվան հիշատակին» բանաստեղծությունը։

68 Վ. Յա. Միրովիչ— պորուչիկ, մահապատժի ենթարկվեց 1764-ին՝ տապալված կայսր Յոհան Անտոնովիչին Շլիսելբուրգի բերդից ազատելու փորձ կատարելու համար։ Եկատերինա II-ի գաղտնի հրահանգի համաձայն՝ պահակները բերդում առաջացած տագնապի պահին սպանեցին կալանավորին։

70 ... զան բարձրացնելու բազաձառանգին.— Նկատի ունի Կոնստանտինին՝ Պավելի որդուն, Նիկոլայ I-ի ավագ եղբորը, լեհաստանի փոխարքային։

71 1830 թ. նոյեմբերի 29-ը— լեհական ապստամբության սկիզբը. Կոնստանտինին հագիվ հաջողվեց թաքնվել «Մա՛հ բռնակալին» բացականչություններով փոխարքայի պալատը խուժած ապստամբներից։

Նա բաֆուն արտագրում էի դրանք.— Գերցենը նկատի ունի Պուշկինի արգելված ազատասիրական բանաստեղծությունները, որոնք Ռուսաստանում արտագրվում ու տարածվում էին ձեռագիր և առաջին անգամ տպագրվեցին ավելի ուշ՝ Գերցենի կողմից, «Պոլյարնայա զվեզդա» ալմանախում և Ազատ ռուսական տպարանի մյուս հրատարակություններում։

73 ... ավազ ճոբեղբաբս աղջիկ-թոռը.— Խոսքը Տ. Պ. Կուչինայի մասին է (ամուսնական ազգանունը՝ Պասեկ), որ «Եղելություն և խոհերում» անվանված է «կորչման զարմուհի». նա ապրում էր Կորչևում՝ Վոլգայի ափին ընկած փոքր քաղաքում։ Պասեկը գրել է «Անցյալ տարիներից» հուշերը, որոնցում մեծ տեղ է հատկացված Գերցենին։

74 Գնեդիչյան «Իլիականը»— Հոմերոսի պոեմի ռուսերեն թարգմանությունը, որ արել է բանաստեղծ Ն. Ի. Գնեդիչը՝ բնագրի տաղաչափությամբ։ Հրատարակվել է 1829-ին։

76 «Դեղին շալավոր սեմինարիստ»— արտահայտություն Պուշկինի «Եվգենի Օնեգինի» երրորդ գլխից. գիտնական կնոջ ծաղրական անվանում։

77 Լ.-Ֆ. Սեգյուր— XVIII դ. վերջի-XIX դ. սկզբի ֆրանսիական դիվանագետ և գրականագետ, հեղինակ մի շարք պատմական աշխատությունների, որոնք զուրկ են գիտական արժեքից։

Անաքրեսիս— սկյութացի, որը մ. թ. ա. VI դարում այցելել է Աթենք և Հելլադայի այլ քաղաքներ։ Գերցենը նկատի ունի XVIII դարի ֆրանսիական գրող Բարտելեմիի «Երիտասարդ Անաքրասիսի ճանապարհորդությունը Հունաստան» վեպի հերոսին։

Ի.-Գ. Ցոկկե— XVIII դ. սկզբի հանրաճանաչ գերմանական գրող, սենտիմենտալ վիպակների ու դրամաների հեղինակ։

78 «Բրուտոս կամ Ֆաբրիցիուս»— տող՝ պոետ-պարտիզան Դենիս Դավիդովի «Ժամանակակից երգ» բանաստեղծությունից։ Բրուտոս (I դ. մ. թ. ա.)—Հին Հռոմի քաղաքական գործիչ, Հուլիոս Կեսարի դեմ ուղղված հանրապետական դավադրության մասնակից։ Ֆաբրիցիուս (III դ. մ. թ. ա.)— Հին Հռոմի պետական գործիչ և զորահրամանատար, որ հայտնի էր իր ազնվությամբ ու անկաշառելիությամբ։



82 Դ. Վ. Գոլիցին— Մոսկվայի գեներալ-նահանգապետ՝ 1820—1844 թթ., այնքի էր ընկնում ինքնիշխանությամբ և կամայականությամբ։

84 Ֆրասկատիից Հռոմ գնալիս.— Գերցենը վերհիշում է իր ճանապարհորդությունը կնոջ հետ Իտալիայում՝ 1847-ի վերջին և 1848-ի սկզբին։

87 1833-ի նամակ.— Ն. Պ. Օգարյովի նամակը, որով նա խնդրում էր Գերցենին՝ նկարագրել իրենց երդումը Վորոբյովյան լեռներում։ Գերցենը մեջբերումն արել է ոչ այնքան էլ ճիշտ։

88 Հորս հեռավոր ազգականը— Պ. Բ. Օգարյով, Գերցենի ընկեր Ն. Պ. Օգարյովի հայրը։ Մոսկվայի Բոլշայա Նիկիտսկայա փողոցի նրա տանը (այժմ՝ Գերցենի փողոց, № 23) հետագայում հավաքներ էր անցկացնում Գերցենի և Օգարյովի խմբակը։

89 Մյորոս— հունական լեգենդար հերոս, պատկերված է Շիլլերի «Երաշխիք» բալլադայում։

Վիլհելմ Տել (XIV դ.)— ավստրիական կայսրերի լծից Շվեյցարիայի ազատագրման լեգենդար հերոս։ Նրան է նվիրված Շիլլերի համանուն դրաման, որի մասին էլ հենց խոսվում է այստեղ։

91 Է.-Ի. Բիրոն— կայսրուհի Աննա Իվանովնայի սիրեցյալը, որը նրա օրոք օգտվում էր անսահմանափակ իշխանությամբ և ստեղծել էր դաժան տեռորի վարչակարգ։ Աննա Իվանովնայի մահից քիչ անց աքսորվեց Սիբիր։

92 Ա. Լ. Վիտբերգ (1787—1855)— ճարտարապետ և նկարիչ, հեղինակը Վորոբյովյան լեռներում՝ 1812 թ. Հայրենական պատերազմին նվիրված հուշարձան-տաճարի նախագծի, որը չիրականացվեց։ Տաճարի հիմնադրումը կայացել է 1817-ի հոկտեմբերի 12-ին։ Վիտբերգը զրպարտվեց պալատական բանսարկությամբ և աքսորվեց Վյատկա, որտեղ ծանոթացավ աքսորյալ Գերցենի հետ։ Վիտբերգին է նվիրված «Եղելություն և խոհերի» XVI գլուխը։

93 Իոսիֆ II— ավստրիական կայսր՝ 1765—1790 թթ., երկու անգամ եղել է Ռուսաստանում, ուղեկցել է Եկատերինա II-ին՝. Նովոռոսիայում կատարած նրա ճանապարհորդության ժամանակ։

Նա գիշերը կովել էր աստծու հետ.— Նկատի ունի Աստվածաշնչի լեգենդը աստծու հետ Հակոբի կռվի մասին, որի ընթացքում Հակոբը վնասեց իր ոտքը։ Այս արտահայտության մեջ Գերցենը դրել է այն միտքը, թե ինքնակալական բռնապետության դեմ պայքարում պարտությո՛ւնն անգամ պատվաբեր է։

94 ... Նույնպես երկուսով, բայց հետիոտ Նիկը չէր.— Գերցենը իր պատանեկան երդման վայրը բերեց կնոջը՝ Նատալյա Ալեքսանդրովնային։ Այդ այցելությունը նա նկարագրել է Վիտբերգին գրած 1835 թ. օգոստոսի 10-ի նամակում։ Հավանաբար Գերցենը սխալվել է՝ այցելության թվականը նշելով 1842-ը։

... օտար մի կին— Ն. Պ. Օզարովի բարեկամը՝ կին գրող Եվգենիա Տուրը (ծածկանունը՝ Ե. Վ. Սալիաս)։

98 Աղաթոն— Ն. Մ. Կարամզինի «Մարիկ՝ իմ Աղաթոնի դպրոցին» քնարական հատվածի «անկեղծ բարեկամը»։

Իսաֆյիլ— Շիլլերի «Փիլիսոփայական նամակներին» հերոսը։

«Արդյո՞ք այդպիսին եմ եղել ես մատաղ նասակում»— մեջբերում Պուշկինի «Ծվզենի Օնեգինից» («Օնեգինի ճանապարհորդությունը»)։

99 Ֆոբլազ— թեթևսոլիկ արիստոկրատ, XVIII դարի ֆրանսիական գրող Լուվե դը Կուվրեի «Կավալեր Ֆոբլազի արկածները» վեպի հերոսը։

Մեզուլ— Հռոմեական զորավար (III դ. մ. թ. ա.), ազնվության և հերոսության տիպար։

Ն. Պ. Յուսուպով— Եկատերինա II-ի, Պավել I-ի և Ալեքսանդր I-ի ժամանակների մեծատոհմիկ, մերձմոսկովյան Արխանգելսկոյե կալվածքի սեփականատեր. այստեղ նա հավաքել էր մեծ թվով գեղարվեստական արժեքներ։

Ի. Գ. Մասալսկի— Մ. Մ. Սպերանսկու աշխատակիցներից։

Ա. Լ. Սանտի— գեներալ-լեյտենանտ, մի ժամանակ եղել է Կիևի նահանգապետ։

100 Դ. Կասատի (1729—1803)— իտալական բանաստեղծ, երգիծաբան։ 1772-ին այցելել է Ռուսաստան։

Գոնզագա— Գոնզագո, իտալական նկարիչ, զբոսայգիների նախագծման վարպետ, Արխանգելսկոյեի թատրոնի դեկորացիաների ստեղծողը։

105 Նիկիտա Անդրեևիչ— Գերցենի հոր սպասավորը։

106 Մ. Ֆ. Օրլով (1788—1842)— գեներալ, 1812 թ. Հայրենական պատերազմի մասնակից, Բարբրության ընկերության անդամ, դեկաբրիստների ճակատագրից խուսափեց իր եղբոր՝ Ա. Ֆ. Օրլովի (տե՛ս 206-րդ էջի ծանոթագրությունը) շնորհիվ։ 30-ական թվականներին Մ. Ֆ. Օրլովն ապրում էր Մոսկվայում՝ ոստիկանության հսկողության ներքո։ Նրա գրչին է պատկանում «Պետական վարկի մասին» աշխատությունը, որ լույս տեսավ 1833-ին, գրաքննչական կրճատումներով։

Աննա Ալեքսեևնա— Ա. Ա. Օրլովա-Չեսմենսկայա, Մ. Ֆ. Օրլովի զարմուհին, կեղծ-բարեպաշտ, գտնվում էր վանահայր Ֆոտիի ուժեղ ազդեցության ներքո։ Գերցենի հայրը Օրլովային ծաղրաբար անվանում է Նեկկեր (Ֆրանսիայի ֆինանսների մինիստր 1776 թվականից)։ Նեկկերը չանում էր կարգավորել ֆինանսական կառավարումը և որոշ խնայողություն մտցնել Լյուդովիկոս XVI-ի պալատի ծախսերի մեջ, բայց պալատական խարդավանքների հետևանքով ստիպված եղավ 1781-ին հրաժարական տալ։

Գրիգորի Իվանովիչ— Կլյուչարև, Ա. Ի. Գերցենի հավատարմատարը, վարում էր Ա. Ի. Գերցենի գույքային գործերը, երբ վերջինս 1847-ին գնաց արտասահման։

109 Լովլաս— XVIII դ. անգլիական գրող Ռիչարդսոնի «Կլարիսա Հարլոու» վեպի հերոսը, թեթևաբարո արիստոկրատի, կանանց շրջանում հաջողություն ունեցող տղամարդու տիպար։

115 Ժ.-Ֆ. Մարմոնտել և Ի.-Կ. Մարիվո— XVIII դ. ֆրանսիական գրող-



ներ, սենտիմենտալ-բարոյախոսական միջակ վեպերի հեղինակներ։ Գերցենը թվարկում է Ն. Մ. Կարամզինի գլխավորած գրական ուղղության ներկայացուցիչներին՝ Ի. Ի. Դմիտրիևին (1760—1837), առակագիր, պոետ, մի ժամանակ եղել է արգարադատության մինիստր. բանաստեղծ Վ. Լ. Պուշկինին՝ Ա. Ս. Պուշկինի հորեղբորը. գրականության հետ առնչվող չինովնիկներին՝ Ն. Պ. Արապովին, Վ. Ի. Պանաևին, Դ. Ի. Ֆիմենովին և ժուռնալիստ, իշխան Պ. Ի. Շալիկովին (1768—1852)— «Կանանց հանդեսի» հրատարակիչ, պոետ, Կարամզինի էպիգոն։

Ֆ. դը Լառոշֆուկո— ֆրանսիական հերցոգ, XVII դ. քաղաքական գործիչ, «Աֆորիզմների» հեղինակը։

120 Լ.-Ա. Բուրյենն— Նապոլեոնի մերձավորներից, հեղինակ Նապոլեոնի, դիրեկտորիայի, կոնսուլության, կայսրության և ռեստավրացիայի վերաբերյալ հիշողությունների։

«Mémorial de s-te Hélène»— «Հուշագրություններ սուրբ Հեղինեի մասին», գրել է Լաս-Կազը։

122 Կաղ գեներալ— Ա. Ն. Բախմետև (նրա մասին տե՛ս «Ծղելություն և խոհերի» II գլխի սկզբում)։

Կրեմլի էքսպեդիցիան. որտեղ ծառայության էր գրանցվել Գերցենը, ստեղծվել էր Կրեմլի վերականգնման համար՝ 1812 թ. հրդեհից հետո։

123 ... Կավդյան կիրճեր— այստեղ հռոմեացիները պլխովին ջախջախվեցին սամնիտների կողմից մ. թ. ա. IV դարում։

124 Երկնագույն Բենկենդորֆ.— ժանդարմները հագնում էին երկնագույն համազգեստ։ Ճերմակ գոտի.— Զինվորները կապում էին ճերմակ գոտի. այստեղ՝ զինվորության ուղարկելու իմաստով։

Ա. Ի. Պոլեժաև (1804—1838)— բանաստեղծ և թարգմանիչ։ «Սաշկա» սատիրական պոեմի համար Նիկոլայ I-ի հրամանով տրվեց զինվորության, սկզբում ենթասպայի աստիճանով ծառայեց գնդում, հետո աստիճանազրկվեց և իբրև զինվոր ուղարկվեց կովկասյան գործող բանակ։ Մարտական ծառայությունները նրան չօգնեցին՝ ազատագրվելու զինվորությունից։ Պոլեժաևի պոեզիան արտացոլում էր նրա ողբերգական ճակատագիրը, այնտեղ հնչում են բողոքը ինքնակալական կամայականության դեմ և ազատության տենչը։

Ա. Ա. Պիսարև— գեներալ, Մոսկվայի համալսարանի հոգաբարձու 1825-ից, կապված էր գրականության հետ։

Կրիտսկիներ— երեք եղբայրներ՝ Վասիլին, Միխայիլը և Պյոտրը։ Մեծը չինովնիկ էր, երկու կրտսերները՝ Մոսկվայի համալսարանի ուսանող։ Վասիլի Կրիտսկին կազմակերպեց մի խմբակ, որն իր առաջ խնդիր էր դրել շարունակել դեկաբրիստների գործը։ Խմբակում ներգրավված էին կրտսեր Կրիտսկիների համալսարանական ընկերները։ 1827-ին խմբակի բոլոր անդամները դատապարտվեցին «բունտ նախապատրաստելու» մեղադրանքով և աքսորվեցին։

Կ.-Ա. Սենտ-Սիմոն (1760—1825)— ուտոպիստական ուսմունքի հիմնադիր։ Համաձայն այդ ուսմունքի՝ հասարակությունը պիտի հիմնվին վերակառուցվի աշխատանքի և արժեքների արտադրության հիման վրա, նոր

սկզբունքներով պիտի կազմակերպվի «ամենաբազմաթիվ, բայց միաժամանակ և ամենաաղքատ դասակարգը»։ Սեն-Սիմոնի ուսմունքը նախամարքսյան սոցիալիստական ուսմունքներից մեկն էր։

Ս. Մ. Գոլիցին— հարուստ կալվածատեր, ուներ 25 հազար ճորտ։ 1830-ից՝ Մոսկվայի համալսարանի հոգաբարձու։ 1834-ին եղել է Գերցենի և նրա ընկերների գործի հեղաքննիչ հանձնաժողովի նախագահը։

130 Դ. Ն. Սվերբեևը սլավոնաֆիլ էր։ Տվերյան բուլվարի նրա տանը տաք վեճեր էին տեղի ունենում Գերցենի, նրա համախոհների և սլավոնաֆիլների միջև։ Սվերբեևը բարձր է գնահատել Գերցենին և այցելել է նրան Փարիզում։

Պանսլավիզմ— ցարական Ռուսաստանի հովանու ներքո համասլավոնական միավորման գաղափար, որ պաշտպանում էին սլավոնաֆիլները։ Դա ռեակցիոն գաղափար էր և հակադրվում էր սլավոնական ազատ ժողովուրդների եղբայրական միության հեղափոխական գաղափարին։

Ա. Ս. Խոմյակով— բանաստեղծ, սլավոնաֆիլության գաղափարախոսներից մեկը։

131 Քիմիկոսի մատերիալիզմը.— Ա. Ա. Յակովլևը («Քիմիկոսը») իր փիլիսոփայական հայացքներով XVIII դ. ֆրանսիական մատերիալիզմի կողմնակիցն էր, մատերիալիզմ, որի սահմանափակությունը Գերցենն ըմբռնում էր արդեն այդ տարիներին։ «նատուրալիստների»՝ գերմանական իդեալիստական փիլիսոփայության հետևորդների կծու քննադատությունը «Քիմիկոսի» կողմից մեկն էր այն պատճառներից, որոնք Գերցենին մղեցին ուսումնասիրելու բնական գիտությունները։

Ժ.-Ժ. Լալանդ (1732—1807)— ֆրանսիական աստղագետ և մաթեմատիկոս։

132 Ժ.-Է. Սենտ-Իլեր— XVIII դ. վերջի—XIX դ. սկզբի ֆրանսիական կենդանաբան։

Լ. Օկեն (1779—1851)— գերմանական բնախույզ և բնափիլիսոփա։

137 Մալովյան պատմություն.— Ուսանողների ցույցը իրավաբանության պրոֆեսոր Մ. Յա. Մալովի վիրավորական վարքագծի դեմ տեղի է ունեցել 1831-ի մարտի 16-ին։ Ցույցը կազմակերպել էր ուսանող Յա. Ի. Կոստենեցկին, որ հետագայում դատապարտվեց Սունգուրովի խմբակի գործով։ Ցույցին մասնակցել է նաև Մ. Յու. Լերմոնտովը։

139 Օստզեյան բարոններ— Օստզեյան երկրամաս անվանում էին Մերձբալթիկան։ Լատվիացիների և էստոնացիների հողերը պատկանում էին գերմանական, այսպես կոչված՝ օստզեյան բարոններին, որոնք անխնա շահագործում էին իրենց ենթակա տեղական ազգաբնակչությանը։

141 Ա. Ֆ. Մերզլյակով (1778—1830)— բանաստեղծ և քնադատ, ռուսական բանահյուսության պրոֆեսոր Մոսկվայի համալսարանում 1804 թվականից։

Գյոտինգեն— համալսարանական քաղաք Գերմանիայում։

142 Աբենսերազներ— հին մավրիտանական տոհմ Գրենադայում (Իսպանիա), վերացել է միջին դարերում։

Գերցենը թվարկում է XVIII դ. գրողներին՝ Վ. Կ. Տրեդյակովսկուն—



տանաստեղծ, բանասեր և թարգմանիչ, Ե. Ի. Կոստրովին— Հոմերոսի «Իլիադայի» առաջին ռուսերեն թարգմանիչը, փքուն ներբողների հեղինակ. Մ. Մ. Խերասկովին—էպիկական պոեմների, վեպերի և ողբերգությունների հեղինակ. Յա. Բ. Կնյաժնինին— բանաստեղծ և դրամատուրգ։

144 Մ. Գ. Պավլով (1793—1840)— ֆիզիկայի, հանքաբանության և գյուղատնտեսության պրոֆեսոր Մոսկվայի համալսարանում, «Աթենեյ» հանդեսի խմբագիր։

Մ. Տ. Կաչենովսկի— XIX դ. առաջին կեսի ռեակցիոն ժուռնալիստ, պատմության պրոֆեսոր Մոսկվայի համալսարանում։

Կ. Դ. Կավելին (1818—1885)— լիբերալ պատմաբան և հրապարակախոս։ Գյուղացիական ռեֆորմի նախապատրաստման շրջանում աշխատակցել է «Կոլոկոլին»։ 60-ական թվականներին հանդես եկավ Գերցենի հեղափոխական պրոպագանդայի դեմ և հեռացավ նրանից։

Ն. Ի. Պիրոգով (1810—1881)— ռազմական վիրաբուժության հիմնադիր, հասարակական գործիչ և մանկավարժ։

145 Ա. Հումբոլդտ (1769—1859)— գերմանական բնախույզ, երկրաբան, գիտական հայրենագրության հիմնադիրներից մեկը։ 1829-ին, ցարական կառավարության հրավերով, միջին Ուրալի վրայով ճանապարհորդություն կատարեց դեպի Ալթայ և Կասպից ծով։ Ետդարձի ճանապարհին այցելեց Մոսկվայի համալսարան։

Ս. Ս. Ուվարով— լուսավորության մինիստր 1833—1849 թթ., ռեակցիոն գործիչ, առաջ է քաշել «ռուսական ֆորմուլան». ուղղափառություն, ինքնակալություն և ժողովրդայնություն։ Վ. Գ. Բելինսկին նրան անվանել է «ժողովրդական կրթության մարման և մթագնման» մինիստր։

Նիմբարազ (Զիմբորասս)— լեռնագագաթ Հարավային Ամերիկայում։

Սան-Սուսի— Բեռլինի արվարձան, Ֆրիդրիխ II-ի աթոռանիստ վայրը, որտեղ որոշ ժամանակ ապրել է Հումբոլդտը։

146 Դ.-Գ. Դյուրամ (Դերգեմ)— անգլիական դիվանագետ, մի ժամանակ գեսպան է եղել Ռուսաստանում, հարել է վիգերին (լիբերալ կուսակցություն Անգլիայում)։

148 Ֆ. Լիստ (1811—1886)— հայտնի կոմպոզիտոր և դաշնակահար, ծագումով հունգարացի, կյանքի մեծ մասն ապրել է Ֆրանսիայում և Գերմանիայում։ 1843-ին հյուրախաղերի է եկել Մոսկվա։ Այդ թվականի իր օրագրում Գերցենը գրել է նրա «զարմանալի տաղանդի» մասին։ Լիստը հետագայում էլ է եկել Ռուսաստան։

Լ. Կոշուտ (1802—1894)— 1848—1849 թթ. հունգարական հեղափոխության առաջնորդ։

Ջ. Գարիբալդի (1807—1882)— Իտալիայի ազգային-ազատագրական շարժման հերոս։

149 Պիկ դե լա Միրանդոլ— XV դ. իտալական գիտնական, որն ալքի էր ընկնում գիտական հետաքրքրությունների բազմակողմանիությամբ։ Ուվարովը նրա հետ համեմատված է, իհարկե, ծաղրաբար։

«Ո՞ւր է մեր ծերուկ Լանժերոնը»— Գերցենը ծաղրանքով մեջբերում է

անում Վ. Ա. Ժուկովսկու «Բորոդինյան տարեդարձ» բանաստեղծությունից։

Լանժերոն— ֆրանսիացի վտարանդի, XVIII դ. տիպիկ արիստոկրատ, մի ժամանակ եղել է Օդեսայի քաղաքագլուխ։ Բենիգսոն (Լ. Լ. Բենիգսեն)— ռուսական ծառայության գեներալ, վարել է մի շարք հրամանատարական պաշտոններ 1812 թ. Հայրենական պատերազմում։

151 Մեմնոն— այստեղ նկատի ունի «Մեմնոնի կոթողը», եգիպտական փարավոն Ամենհոտեպ III-ի արձանը։ Օզիրիս— հին Եգիպտոսի աստվածություն, ընդերկրյա աշխարհի թագավորը։

Կ. Յա. Տյուֆյակ— Վյատկայի նահանգապետը 1834—37 թթ., նրա ղեկավարության ներքո ծառայել է աքսորյալ Գերցենը։ Տյուֆյակը նկարագրված է «Եղելություն և խոհերի» XIV—XVI գլուխներում։

152 Ա.-Օ. Լեգրյու-Ռոլեն (1808—1874)— ֆրանսիական քաղաքական գործիչ, մանրբուրժուական դեմոկրատների ներկայացուցիչը, որը մշանակալից դեր է խաղացել 1848 թ. հեղափոխության մեջ, հեղափոխությունից հետո՝ Ֆրանսիայի ներքին գործոց մինիստր։ Գերցենը նրա հետ հանդիպել է Լոնդոնում։

154 Լակորդեր— XIX դ. կեսերի ֆրանսիական եկեղեցական քարոզիչ, որը ձգտում էր կաթոլիկության շահերին ծառայեցնել իր ժամանակաշրջանի լիբերալ ուսմունքները։

157 ...իր ամուսնու արյունով բաթախված կնոջը.— Ըստ ֆրանսիական դեսպանի հաղորդագրության՝ թագադրության համար Եկատերինա II-ի Մոսկվա գալու ժամանակ (1762-ի աշնանը) ամբոխի միջից լսվեցին բացականչություններ՝ «Կեցցե՞ Պյոտր III-ը», որով ակնարկվում էր Եկատերինայի մասնակցությունը ամուսնու դեմ կազմակերպված դավադրությանը. նա գահից գցեց իր ամուսնուն և շատ չանցած սպանել տվեց։

Գերցենը Եկատերինա II-ին համեմատում է լեդի Մակբեթի՝ Շեքսպիրի համանուն ողբերգության հերոսուհու, և Լուկրեցիա Բորջիայի՝ Ալեքսանդր VI պապի (XV դ. վերջ—XVI դ. սկիզբ) աղջկա հետ, որի անվան հետ են կապված մի շարք արյունոտ հանցագործություններ։

«Բայց Մոսկվան իմ ընդառաջ չգնաց...»— Պուշկինի մոտ այսպես է՝ «Ո՛չ, Մոսկվան իմ ընդառաջ չգնաց... («Եվգենի Օնեգին», գլ. VII, տուն XXXVII)։

Ռադկլիֆյան ամրոց— այսինքն՝ նման այն հին ամրոցներին, որ նկարագրված են XVIII դ. վերջի—XIX դ. սկզբի անգլիական վիպասանուհի Աննա Ռադկլիֆի «գաղտնիք ու սարսափ» պատկերող վեպերում։

158 Հոլիրուդ— 1830 թ. հեղափոխությամբ («Հուլիսյան հեղափոխություն») Ֆրանսիայից վտարված Կարլոս X թագավորն ապրում էր Էդինբուրգի Հոլիրուդ ամրոցում։

Քաղաքացի-թագավոր— Լուի Ֆիլիպը (Օրլեանցի), որը Կարլոս X-ից հետո տիրացավ գահին և 1848-ին վտարվեց Ֆրանսիայից։

Ի. Ի. Դիբիչ— գեներալ, XIX դ. առաջին քառորդի ազնվականական-հորատատիրական ռեակցիայի ներկայացուցիչներից մեկը, գեկաբրիստների թշնամին; 1830—31 թթ. լեհական ապստամբության ճնշման գլխավորը։



Ո՛չ, սիե եռազանգ չէ այդ— Գյոթեի «Hoffnung» («Հույս») բանաստեղծությունից։

159 Ա. Պ. Երմոլով (1772—1861)— ռուսական բանակի գեներալ, եղել է Կովկասյան կորպուսի հրամանատար և Վրաստանի գլխավոր կառավարիչը։ Նիկոլայ I-ի կողմից հանվելով պաշտոնից՝ 1827-ից անցավ ազնվականական «անգործունյա օպոզիցիայի» շարքը, առաջադեմ հասարակական շրջաններում ձեռք բերելով ցարական կառավարության նկատմամբ ժխտողական վերաբերմունք ունեցող մարդու համբավ։

160 ...գիշերը բռնել են մի քանի ուսանողների.— 1831-ի հունիսի 20-ի լույս 21-ի գիշերը ձերբակալվեցին Ն. Պ. Սունգուրովի գաղտնի խմբակի անդամները՝ խմբակի կազմակերպչի գլխավորությամբ։ Այդ խմբակի մասնակիցների մեջ էին Մոսկվայի համալսարանի՝ Գերցենի հիշատակած ուսանողները։ Նրանք իրենց համարում էին գեկաբրիստների գործի շարունակողներ, մտադրվել էին նախապատրաստել զինված ապստամբություն՝ ընդդեմ ինքնակալական-ճորտատիրական կարգերի։ Սունգուրովն իր եղբոր հետ աքսորվեց տաժանակրության, խմբակի մյուս անդամները իրենց զինվոր ուղարկվեցին Կովկաս՝ գործող բանակ, կամ դրվեցին ոստիկանության հսկողության ներքո։

161 ... Մենք ճիշգ էիք.— Դրանք էին՝ Ա. Ի. Գերցենը, Ն. Պ. Օգարյովը, Ն. Ի. Սազոնովը, Ն. Մ. Սատինը, Ա. Ն. Սավիչը։

Պասեկ Վադիմ Վասիլևիչ (1807—1842)— Գերցենի համալսարանական ընկերը, պատմաբան և ազգագրագետ, հետագայում հարեց սլավոնաֆիլներին։

162 Ն. Խ. Կետչեր (1809—1886)— բժիշկ՝ կրթությամբ, բանաստեղծ, Շիլլերի և Շեքսպիրի թարգմանիչ։ Գերցենի մոտիկ ծանոթն էր. բայց արդեն 40-ական թվականներին մի կողմից՝ Կետչերի ու Կորշի և մյուս կողմից՝ Գերցենի միջև ծագեցին սկզբունքային, գաղափարական լուրջ տարաձայնություններ։

166 Երիտասարդ գեներալ— Դիմիտրի Վասիլևիչ Պասեկը, Վադիմ Վասիլևիչ Պասեկի եղբայրը, Կովկասյան կորպուսի զորքերի գեներալ-մայոր, սպանվել է 1845-ին, Դարգոյի՝ Շամիլի գլխավոր կայանի գրավման մարտերում, Հաջի Մուրադի հետ ընդհարման ժամանակ։

168 Պոլեժաևի ծոպերիզավոր ուսանողը.— Ա. Ի. Պոլեժաևը զինվորից սպա դարձվեց մահվանից երեք շաբաթ առաջ։

Յու. Պ. Կոլրեյֆ— Մոսկվայի համալսարանի ուսանող, որը Սունգուրովի գործով Նիկոլայ I-ի կողմից զինվորության էր ուղարկվել և վերադարձվել էր 1842-ին, մահվանից քիչ առաջ։

170 Դ. Վ. Վենևիտինով— տաղանդավոր պոետ, իդեալիստ-փիլիսոփաների Մոսկվայի խմբակի ղեկավարը, մեռել է 1827-ին։ Գերցենը «Հեղափոխական գաղափարների զարգացումը Ռուսաստանում» գրքում նրան անվանել է «մաքուր պոետական հոգի, որը քսաներկու տարեկանում խեղդվեց ռուսական կյանքի կոպիտ ճիրաններում»։ Բերված քաղվածքը Դ. Վ. Վենևիտինովի «Պոետն ու ընկերը» բանաստեղծությունից է։

171 Պետերբուրգեր— XIX դ. 40-ական թվականներին Պետերբուր-

գում գործող հեղափոխականորեն տրամադրված խմբակի անդամները, խմբակ, որի կազմակերպիչն ու ղեկավարն էր Մ. Վ. Պետրաշևսկին (1821—1886)։ Պետրաշևսկին և իր 38 ընկերները 1849-ի ապրիլին ձերբակալվեցին և ուղարկվեցին տաժանակրության ու աքսորարանակության։

172 Ի. Վ. Կիրեևսկի (1806—1856)— քննադատ և հրապարակախոս, սլավոնաֆիլության գաղափարախոսներից մեկը։

173 Ցազելոնները— լեհ-լիտվական թագավորների դինաստիա XIV—XVI դարերում։

174 Կարլ Զանդ— ուսանող, որը 1819-ին սպանեց գերմանական ռեակցիոն գրող Կոցեբուին։

Եռագույն շարֆ.— Սպիտակ, կապույտ և կարմիր՝ 1789 թ. ֆրանսիական բուրժուական հեղափոխության դրոշի գույները։

Ա. Ա. Բեստուժև (1797—1837)— դեկաբրիստ, Հյուսիսային ընկերության անդամ։ Հրատարակել է «Պոլյարնայա զվեզդա» ալմանախը (1823—1825), քննադատ և գրող, որ հայտնի էր «Մարլինսկիի» կեղծանունով։ Սիբիր աքսորվելուց հետո, 1829-ին, իբրև շարքային ուղարկվեց Կովկասյան բանակ, զոհվեց Ադլերի մոտ տեղի ունեցած ճակատամարտում։

177 Ասատրաշխական դիսերտացիա— Գերցենի դիսերտացիան՝ «Կոպերնիկոսի արեգակնային սիստեմի վերլուծական շարադրանքը»։ Դիսերտացիան թվագրված է՝ 28-ը մայիսի 1833 թ.։

Դ. Մ Պերևոշչիկով— մաթեմատիկոս և աստղագետ, Մոսկվայի համալսարանի պրոֆեսոր 1819—1851 թթ.։

178 Թոշունի լեզու... Միներվայի թոշունի.— Նկատի ունի գիտական տերմինաբանությամբ ծանրաբեռնված լեզուն. անտիկ դիցաբանության մեջ իմաստության աստվածուհի Միներվան սովորաբար պատկերվում էր բուի՝ իմաստության խորհրդանիշի հետ։

180 Բոլոր այդ...— Գերցենը թվարկում է XVIII դ. վերջի ֆրանսիական բուրժուական հեղափոխության գործիչներին.

Լ. Սեն-Ժյուստ (1767—1794)— յակոբինականների առաջնորդներից, Ռոբեսպիերի գինակիցը։

Լ. Գոշ (1768—1797)— հեղափոխական բանակի գեներալ։ Ենթասպա էր՝ անցավ ժողովրդի կողմը, մասնակցեց Բաստիլիայի գրավմանը, քսան տարեկանում նշանակվեց բանակի հրամանատար։ 1796-ին նրա զորքերը ճնշեցին Վանդեայի հակահեղափոխական խռովությունը, որը վտանգ էր սպառնում հանրապետությանը։

Ֆ. Մարսո (1769—1796)— հեղափոխական բանակի գեներալ, մասնակցել է Բաստիլիայի գրավմանը։ Այդ ժամանակ եղել է սերժանտ։ 24 տարեկանում ստանձնեց բանակի հրամանատարությունը։

Կ. Դեմուլեն— ժուռնալիստ, ֆրանսիական բուրժուական հեղափոխության քաղաքական գործիչ, Դանտոնի կողմնակից, որի ղեկավարած խումբը 1793-ի վերջերին դարձավ խոշոր սեփականատերերի շահերի արտահայտիչ։ Դանտոնի կողմնակիցները, նրանց թվում և Դեմուլենը, մահապատժի ենթարկվեցին 1794-ի ապրիլի 5-ին։

Ժան-ժակի պոեզիան— նկատի ունի ֆրանսիական մտածող Ժան-



Ժակ Ռուսոյի (1712—1778) ուսմունքը, որը մեծ ազդեցություն ունեցավ ֆրանսիական դեմոկրատական մտքի զարգացման, բուրժուական հեղափոխության առաջնորդների, հատկապես Ռոբեսպիերի վրա, որն իրեն անվանում էր Ռուսոյի աշակերտ։

Ժ.-Ժ. Դանտոն (1759—1794)— հեղափոխության փայլուն հռետորներից մեկը։ Հետագայում գիլիոտինի ենթարկվեց որպես հակահեղափոխական դավադրության ղեկավար։

Մ. Ռոբեսպիեր (1758—1794)— մասնագիտությամբ փաստաբան, ֆրանսիական բուրժուական հեղափոխության խոշոր քաղաքական գործիչ, յակոբինականների առաջնորդը։

Ֆալանգա— այստեղ՝ ֆրանսիական ուտոպիստ-սոցիալիստ Շ. Ֆուրյեի (1772—1837) հետևորդներ։ Նրա ուսմունքի մեջ համայնքը կոչվում էր ֆալանգա։

Դեկու և Լեբրա.— Ոչ թե Դեկու (Գերցենը սխալվել է), այլ Վ. Էսկյուս և Օ. Լեբրա— ֆրանսիական ռոմանտիկ գրողներ։ Միասին ինքնասպանություն գործեցին 1832-ին, համատեղ գրած «Ռայմոնդ» դրամայի ձախողումից հետո։

182 Ն. Ի. Սաֆոնով (1815—1862)— Գերցենի ընկերը Մոսկվայի համալսարանից, նրա հեղափոխական խմբակի մասնակից։ 40-ական թվականներին մեկնեց արտասահման, ուր մասնակցեց 1848—1849 թթ. իրադարձություններին, ակտիվորեն հանդես էր գալիս մամուլում։ Նիկոլայ I-ի կառավարությունը, տեղեկանալով Սաֆոնովի հեղափոխական կապերի մասին, 1850-ին բռնագրավեց նրա ունեցվածքը և հայտարարեց, որ նրան վտարում է Ռուսաստանից։

183 Վ. Ի. Սոկոլովսկի— պոետ, 1832-ից ապրում էր Մոսկվայում և մտերմացել էր Սատինի, Գերցենի և Օգարյովի հետ։

Ն. Ա. Պոլևոյ (1796—1846)— գրող, հրապարակախոս, պատմաբան, առաջադիմական «Մոսկովսկի տելեգրաֆ» (1825—1837) հանդեսի հրատարակիչ։ Կառավարության հետապնդումներից ընկճված՝ սկսեց աշխատակցել ռեակցիոն մամուլին և գրեց մի շարք հետադիմական վիպակներ և դրամաներ («Սիբիրուհի Գարաշան» և այլն)։

Մ. Ա. Մաքսիմովիչ— բնական գիտությունների պրոֆեսոր Մոսկվայի համալսարանում՝ մինչև 1834 թվականը, հետագայում զբաղվել է ուկրաինական ազգագրությամբ ու բանահյուսությամբ։

Ա. Ֆ. Գոլիցին 1834 թ. եղել է Գերցենի և նրա ընկերների գործը հետաքննող հանձնաժողովի անդամ. 1862-ին նշանակվեց Չերնիշևսկու գործը հետաքննող հանձնաժողովի նախագահ։

187 Մինոնա— Գյոթեի «Վիլհելմ Մեյստերի ուսումնառության ու տարիների տարիները» վեպի հերոսներից։

192 Ենֆանտեն— Բ. Գ. Անֆանտեն (1796—1864), սոցիալիստ-ուտոպիստ, Սեն-Սիմոնի մերձավորագույն աշակերտներից, սեն-սիմոնական համայքի հիմնադիրը Փարիզի մերձակայքում։

Օդեանյան կրոն— Գերցենը ծաղրանքով այդպես է անվանում Ֆրան-

սիայում Լուի-Ֆիլիպի (Օրլեանցու) օրոք ձևավորված պաշտոնական տեսակետների համակարգը։

194 Պ.-Ժ. Պրուդոն (1809—1865)— քաղաքական գործիչ, մանրբուրժուական սոցիալիստ և անարխիստ։ «Փիլիսոփայության աղքատությունը» աշխատության մեջ Կ. Մարքսը խստորեն քննադատել է Պրուդոնի ուսմունքը, մերկացնելով դրա մանրբուրժուական էությունն ու թշնամանքը պրոլետարական-սոցիալիզմի հանդեպ։

196 Պիոս IX— Հռոմի պապ 1846—1878 թթ.։ Սկզբնական շրջանում ստիպված էր զիջումներ անել հասարակական շարժմանը, սակայն վախենալով հեղափոխական շարժման վերելքից՝ մինչև կյանքի վերջը վարեց ռեակցիոն քաղաքականություն։

Ռոբեսպիերը իր Fête-Dieu-ից հետո.— Ռոբեսպիերը, պայքարելով մի կողմից կաթոլիկության և մյուս կողմից կոմունայի (քաղաքային ինքնավարության) կուսակցության աթեիզմի դեմ՝ մտցրեց «բարձրագույն գոյության» պաշտամունքը։ Գերցենը նկատի ունի նոր աստվածության պատվին 1794 թ. Փարիզում կայացած տոնակատարությունը, որից հետո ստորագրվեց հանրապետության ներքին թշնամիների դեմ տեռորն ուժեղացնելու վերաբերյալ օրենքը։

199 «Ես մեռնում էի անմխիթար...»— հիշողությամբ բերված քաղվածք Ա. Ի. Պոլեժաևի «Նախախնամություն» (1828) բանաստեղծությունից։

## Մասն երկրորդ

Գրված է 1853 թվականին, 1854-ին լույս է տեսել առանձին գրքով՝ «Բանտ և աքսոր (Իսկանդերի հուշերից)» խորագրով։

202 «Իրանի մեռա՞ծ լիներ...»— Կորնելի «Հորացիոս» (1640) ողբերգության ծերուկ հերոսի խոսքերը, որին հայտնել էին կռվի դաշտից նրա որդու կեղծ փախուստի մասին։ Այս խոսքերը սովորաբար վկայակոչվում էին կլասիցիզմի տեսաբանների կողմից՝ իբրև «վսեմության» օրինակ. հայրենիքի հանդեպ պարտքի զգացումը հաղթում է հայրական սիրո զգացմունքին։

203 Ֆ. Մորզեն և Մ. Լամարկ— ֆրանսիական լիբերալ-բուրժուական քաղաքական գործիչներ։ Լամարկը հանդես էր գալիս Կարլոս X-ի և Լուի-Ֆիլիպի դեմ՝ հանուն բուրժուական-հանրապետական կարգի, Մորզենը պատրաստ էր գործարքի մեջ մտնել Հուլիսյան միապետության հետ։

204 Դ. Հեմպդեն— XVII դ. առաջին կեսի անգլիական քաղաքական գործիչ, «երկարակյաց պառլամենտի» ղեկավարներից։ Լայնորեն հայտնի դարձավ շնչին մի հարկի վճարումից նրա հրաժարվելը՝ իբրև բողոք ապօրինի հարկադրման դեմ։ Ժ.-Ս. Բայի— XVIII դ. վերջի ֆրանսիական աստղագետ և քաղաքական գործիչ։ Նրա նախագահությամբ Ազգային ժողովը 1789 թ. հունիսի 20-ին իբրև հայտարարեց Օրենսդիր ժողով։ Հետագայում մահապատժի ենթարկվեց իբրև հանրապետության թշնամի։ Ֆիեսկո Ջիովանի— Ջենովայի արիստոկրատների դեմ ուղղված դավադրության ղեկավար XVI դարում։ Կարել Աբման (1800—1836)— փետրվարյան հեղափոխության օրերին Ֆրանսիայի ժամանակավոր կառավարության ստեղծման գործում նշանակալից դեր խաղացած «National» օպոզիցիոն թերթի կազմակերպիչ։



205 Լեֆորտովո— Մոսկվայի շրջաններից մեկը։

206 ... եղբոր.— Ա. Ֆ. Օրլով, 1825 թ. դեկտեմբերի 14-ի ապստամբության ճնշման մասնակից, Նիկոլայ I-ի վստահելի անձանցից մեկը, Բենկենդորֆի մահից հետո՝ ժանդարմերիայի շեֆ և III բաժանմունքի պետ։

208 Ռեգուլյան տեսակետ— Գերցենն այդպես է անվանում ավելորդ խստապահանջությունն իր նկատմամբ (Ռեգուլի մասին տե՛ս էջ 99-ի ծանոթագրությունը)։

209 Որդին նշանավոր Ն. Ն. Ռևևսկու— խոսքը 1812 թ. Հայրենական պատերազմի հերոս գեներալ Ն. Ն. Ռևևսկու և նրա կրտսեր որդի, Պուշկինի և մի շարք դեկաբրիստների բարեկամ, նույնպես գեներալ Ն. Ն. Ռևևսկու մասին է (Պուշկինը նրան է նվիրել «Կովկասի գերին» պոեմը)։ Ռևևսկի-կրտսերը կյանքի վերջին պարիսներին եղել է պաշտոնաթող գեներալ։

223 Կապիտան Կոպեյկին— Ն. Վ. Գոգոլի «Մեռած հոգիների» առաջին հատորի X գլխի «Պատմվածք կապիտան Կոպեյկինի մասին» հատվածի հերոսը։

235 Ֆ. Վուվերման— XVII դ. ֆլամանդական նկարիչ, որը գերազանցապես պատկերել է ռազմաձիեր և ռազմամամբարային տեսարաններ։

Ժ. Կալո— XVII դ. ֆրանսիական նկարիչ-փորագրող, հիմնականում նկարել է պատկերներ աղքատների, զինվորների, մուրացկանների կյանքից, հայտնի է նաև որպես «Պատերազմի սարսափները» պատկերաշարքի հեղինակ։

237 Ի. Ռիխտեր (1763—1825)— ռոմանտիկական դպրոցի գերմանացի գրող և երգիծաբան, հանդես է եկել Ժան-Պոլ կեղծանունով։

242 Հերցոգ Սեն-Սիմոնի նոթագրությունները— Լ. Սեն-Սիմոն, XVII դ. վերջի—XVIII դ. առաջին կեսի ֆրանսիական պետական գործիչ, եղել է Լյուդովիկոս XIV-ի և Լյուդովիկոս XV-ի դեմ ուղղված արիստոկրատական օպոզիցիայի շարքերում։ Նրա 21 հատորանոց հուշագրությունները հրատարակվեցին 1829—1830 թվականներին։

243 «Սա է, չէ՞, Պետրոս I-ի մասին գրել...».— Ս. Մ. Գոլիցինը նկատի ունի Գերցենի «Հունվարի 28-ը» հոդվածը՝ նվիրված Վադիմ Պասեկի եղբայր Դիմիդին։ Հոդվածում ապացուցվում էր «Պետրոս Մեծի հանդես գալու անհրաժեշտությունը XVIII դ. սկզբի Ռուսաստանում», այսինքն՝ նրա ռեֆորմների պատմականորեն պատճառաբանված լինելը։

«Այս ինչքա՞ն են հեղափոխական գրքերը...».— Իր տգիտության պատճառով ոստիկանապետը հեղափոխական գրքերի տեղ էր ընդունել հեղափոխության անհաշտ թշնամի, ֆրանսիական պետական գործիչ և բուրժուական պատմաբան Ա. Թիերի (1797—1877) բազմահատոր աշխատությունը։ Կյուվեի «Երկրագնդի կատաստրոֆների մասին» աշխատությունը նույնպես ֆրանսերեն «révolutions» (հեղափոխություններ, կատաստրոֆներ) բառի պատճառով ոստիկանապետն ընդունել էր հեղափոխական գրքի տեղ։

245 **Փականագործի կնոջ՝ Պոշլեպկինայի պատմությունը.**— *Պոշլեպկինայի ամուսինը քաղաքագլխի կողմից զինվոր ուղարկվեց այն հիման վրա, թե նա «գող է. թեկուզ նա հիմա չի գողացել, բայց մեկ է՝ կգողանա» (Ն. Վ. Գոգոլ, «Ռևիզոր», գործողություն չորրորդ, տեսարան XI)։*

260 **Մ. Ս. Շչեպկին** *(1788—1863)— ռուս մեծ դերասան, ռեալիզմի հիմնադիրը ռուսական բեմում։ 1839-ին ծանոթանալով Գերցենի հետ, մտերմացել է և մասնակցել նրա խմբակի հավաքներին։*

262 **«Ի՞նչ ես վախենում։ Դու տանում ես Կեսարին»**— *Հռոմեական զորավար և քաղաքական գործիչ Հուլիոս Կեսարի (I դ. մ. թ. ա) բացականչությունը փոթորկի ժամանակ գետն անցնելիս, երբ նավավարը, վախենալով, ուզեց նավը ետ շրջել։*

267 *Մեջբերում Ա. Ս. Պուշկինի «Բախչիսարայի շատրվանը» պոեմից։*

268 **Պ. Ցեխանովիչ**— *լեհ հայրենասեր, 1833-ին ձերբակալվել էր Վիլնոյի նահանգում և մեղադրվել ցարական կառավարության դեմ զինված պայքարը վերսկսելու փորձ անելու մեջ. աքսորվել էր Պերմի նահանգ։*

269 **Մ. Ն. Մուրավյով («կախաղ»)**— *ռեակցիոն քաղաքական գործիչ, որ ճնշեց 1863 թվականի լեհական ապստամբությունը։*

270 **1812 թվականի զորավարների պատկերասրահ**— *Պետերբուրգի Ձմեռային պալատի՝ 1826-ին բացված հատուկ պատկերասրահը, որտեղ ցուցադրված էին 1812 թ. Հայրենական պատերազմին մասնակցած ավելի քան երեք հարյուր գեներալների դիմանկարները։ Պատկերասրահն այժմ հանձնված է Էրմիտաժին, նրանում վերականգնված են դեկաբրիստների դիմանկարները, որոնք հանել էր Նիկոլայ I-ը։*

278 **Ժ.-Բ. Կարյե**— *XVIII դ. ֆրանսիական բուրժուական հեղափոխության գործիչ։ Կոնվենտի կոմիսարներից, որը հայտնի էր հեղափոխության թշնամիների հանդեպ իր անողոքությամբ։*

284 **Լ. Դ. Իզմայլով և Ե. Ա. Գրուզինսկի**— *իրենց քմահաճույքներով ժամանակին հայտնի դարձած դաժան ճորտատերեր։*

285 **Սուվորովի աֆորականը.**— *Ռուս մեծ զորավար Սուվորովը սիրում էր տագնապի մատնել բարձրամիտ պալատականներին անակնկալ արարքներով, օրինակ՝ աքաղաղի նման կանչեր արձակելով։*

**Մամոնով**— *Մ. Ա. Դմիտրև-Մամոնով, Եկատերինա II-ի սիրեցյալի որդին, որը վիթխարի հարստություն էր ժառանգել հորից։ Եղել է արիստոկրատական-ազնվականական սահմանադրության նախագծի հեղինակներից մեկը (Մ. Ֆ. Օրլովի հետ միասին)։—1817-ից սկսել է վարել ճգնավորական կյանք և համարվել է հոգեկան հիվանդ։*

**Ֆ. Ի. Տոլստոյը** *1805 թ. մասնակցել է ռուսական առաջին շուրջերկրյա նավարկությանը և եղել Ալեուտյան կղզիներում. այստեղից էլ նրա «Ամերիկացիս» մականունը։*

287 **Ն. Ֆ. Պավլովը** *30-ական թվականներին հանդես եկավ վիպակներով, որոնք արժանացան Վ. Գ. Բելինսկու բարձր գնահատականին։*

**Ա. Գ. Շչերբատով**— *Մոսկվայի գեներալ-նահանգապետը՝ 1844—1848 թթ.։*

292 **Լյուդովիկոս-Ֆիլիպի օրոք ընտրական իրավունք էին ուզում տալ.**—



*Գերցենը նկատի ունի այն ռեֆորմի նախագիծը, որով ընտրական իրավունքը տարածվում էր գիտական աստիճան ունեցող անձանց վրա։*

**Յուշնևսկայա Մարիա Կազիմիրովնա**— *քսանամյա տաժանակրության դատապարտված դեկաբրիստ Ա. Պ. Յուշնևսկու կինը. ամուսնու ետևից գնացել է Սիբիր։ Ամուսնու մահից (1844 թ.) հետո տաս տարի ցարական կառավարությունը նրան թույլ չէր տալիս վերադառնալ տուն։*

**Բ.-Ե. Մինիխ**— *գեներալ-ֆելդմարշալ, սպայի աստիճանով ծառայության է մտել ռուսական բանակ Պետրոսի I-ի օրոք և առաջ է քաշվել նրա ժառանգորդների կողմից։ Պալատական հեղաշրջումից հետո, երբ գահ բարձրացավ Ելիզավետան (1741 թ.), աքսորվեց Պելիմ (Սիբիր), ուր մնաց քսան տարի։*

293 **Յու. Պոնյատովսկի**— *լեհ արիստոկրատ, 1792 թ. ապստամբության ժամանակ եղել է լեհական բանակի հրամանատարը։ 1794-ին ծառայել է Կոստյուշկոյի մոտ։ Մասնակցել է Ռուսաստանի դեմ Նապոլեոն I-ի արշավանքին։ Պոնյատովսկին, ինչպես և լեհական շատ կալվածատերեր, ռուսական կառավարության հանդեպ ունեցած իր ատելությունը տարածում էր բոլոր ռուսների վրա։ Գերցենը, համակրելով լեհերին, հաստատում էր, որ Լեհաստանի իսկական ազատագրումը հնարավոր է միայն առաջավոր դեմոկրատական Ռուսաստանի հետ դաշինքի միջոցով։*

**Ս. Կոնարսկի**— *1830 թ. լեհական ապստամբության մասնակից, «Երիտասարդ Եվրոպա» միության կազմակերպիչներից, միություն, որը նպատակ էր դրել միավորել Եվրոպայի բոլոր առաջադիմական ուժերը՝ բռնակալության լծից ժողովուրդներին ազատագրելու համար։*

296 **Դ. Ն. Բլուդովը** *երիտասարդ ժամանակ հայտնի էր իր լիբերալ հայացքներով, ծանոթություն էր պահպանում մի շարք դեկաբրիստների հետ։ Հետագայում դարձավ Նիկոլայևյան ռեակցիայի «սյուներից» մեկը։ 1832—1837 թթ. ներքին գործոց մինիստրն էր։*

298 **Մ. Մ. Սպերանսկի**— *պետական գործիչ. Ալեքսանդր I-ը նրան հանձնարարեց մշակել պետական վերափոխումների ընդհանուր պլան, կազմել նոր օրենսգիրք։ Սպերանսկու նախագծերը հարուցեցին պահպանողական ազնվականության և պաշտոնյաների համառ դիմադրությունը։ Նա զինծու կերպով մեղադրվեց Նապոլեոնի հետ կապեր ունենալու մեջ և 1812-ին ուղարկվեց աքսոր։ 1816-ին նրան նշանակեցին նահանգապետ Պենզայում, իսկ 1819-ին՝ գեներալ-նահանգապետ Սիբիրում։ 1821-ին նրան թույլատրվեց վերադառնալ Պետերբուրգ։*

300 **Ակեն**— *գերմանական քաղաք։ Վերոնա*— *իտալական քաղաք։ 1818 և 1822 թվականներին այդ քաղաքներում տեղի ունեցան ռեակցիոն «Սրբազան միության» մասնակիցների կոնգրեսներ, որոնցում մշակվեցին եվրոպական երկրներում հեղափոխական շարժումների դեմ պայքարելու միջոցառումներ։*

303 **Սեբաստիանի և Ֆիգներ**— *գեներալներ, 1812 թ. Հայրենական պատերազմի ժամանակվա պարտիզանական շոկատների փառաբանված հրամանատարներ, որոնց սխրանքների մասին լեգենդներ էին հյուսել։*

Իսկը մի Սուվարով՝ ավստրիական կայսեր մոտ.— Նկատի ունի առաջ մեծ զորավար Ա. Վ. Սուվորովի անկախ գործելակերպը 1799 թ. Ֆրանսիայի դեմ մղված պատերազմի ժամանակ։ Սուվորովը մերժեց տեսական պատերազմ մղելու ավստրիական անմիտ պլանը և առաջարկեց իր պլանը, որը հնարավորություն տվեց վեց շաբաթում գրավել գրեթե ողջ հյուսիսային Իտալիան և հայտնվել Ֆրանսիայի սահմանից ընդամենը հարյուր վերստ հեռավորության վրա։

312 Մուկիոս Սկևոլա— Հին Հռոմի լեգենդար հերոս։ Նրան սպասվում էր դաժան դատավճիռ՝ էտրուսական թագավորի դեմ մահափորձ կատարելու համար. ցանկանալով ցուցադրել իր անվեհերությունը՝ նա զոհասեղանի կրակի վրա այրեց իր ձեռքը։ Մուկիոսն ստացավ «Սկևոլա» մականունը, որ նշանակում է «Ձախլիկ»։ Համեմատությունը Մուկիոս Սկևոլայի հետ Գերցենը կատարում է, իհարկե, ծաղրաբար։

314 Կիրիլ և Մեթոդի— IX դարի հույն միսիոներներ, որոնք քրիստոնեություն էին քարոզում սլավոնների մեջ։

320 Կիսելյով Պավել Դմիտրիևիչ— պետական գույքերի մինիստր՝ 1837—1856 թթ.։

321 Ռ.-Ժ. Տյուրգո— Ֆրանսիայի ֆինանսների մինիստր 1774—1776 թթ., փորձում էր մի շարք ռեֆորմների օգնությամբ փրկել միապետությունը վերահաս հեղափոխությունից։

322 Նաբուգոդոնոսորյան կարգադրություն— համեմատություն իր բռնակալությամբ հայտնի Բաբելոնի թագավոր Նաբուգոդոնոսորի (VII—VI դդ. մ. թ. ա.) դաժան կարգադրությունների հետ։

335 Մ. Ա. Մագնիցկի և Դ. Լ. Ռունիչ— ռեակցիոներներ, որոնց «գործունեությունը» XIX դ. 20-ական թվականներին, լուսավորության ասպարեզում, հարուցեց ողջ առաջադիմական հասարակայնության վրդովմունքը։ Մագնիցկին Կազանի համալսարանի և ուսումնական շրջանի հոգաբարձուն էր, Ռունիչը՝ Պետերբուրգի ուսումնական շրջանի հոգաբարձուն։

338 Ս. Ս. Սուրեկալով— գեներալ-ադյուտանտ, որը 1827-ին գործ հարուցեց տաճարի կառուցման հանձնաժողովի վերաբերյալ. նրա ամբաստանության հետևանքով հանձնաժողովի անդամները դատի տրվեցին, այդ թվում և Վիտբերգը, որն անմեղսունակ էր, և որին դատեցին։

339 Ա. Ֆ. Լվով (1798—1870)— XIX դ. երկրորդ քառորդի չուրթակահար և կոմպոզիտոր, ցարական հիմնի երաժշտության հեղինակը. երիտասարդ տարիներին ծառայել է Արակչեևի մոտ. ֆլիգել-ադյուտանտ, ապա՝ պալատական երգչախմբի ղեկավար. հայտնի էր իր ռեակցիոն հայացքներով։

340 Շվեդենբորգ (Սվեդենբորգ)— XVIII դ. շվեդացի միստիկ։

341 Գիեռ Լեռու (1797—1871)— ֆրանսիական հրապարակախոս, սոցիալիստ-ուտոպիստ, որը կյանքի վերջին տարիներին ընկավ միստիցիզմի մեջ։

Մ. Գ. Պոգոդին— պատմաբան, հրապարակախոս, գրող, մի շարք կեղծ-ժողովրդական վիպակների ու դրամաների հեղինակ, 40-ական թվականներին՝ «Մոսկվիտյանին» հանդեսի հրատարակիչ։ Ս. Պ. Շևիրյովի հետ միասին ներկայացնում էր սլավոնաֆիլների ծայրահեղ աջ թևը։

346 Բնության երեք թագավորություններ— երկրի ընդերքը, բուսական և կենդանական աշխարհը։

347 Տոխտամիշ (Թողթամիշ) (XIV դ.)— Ոսկե Հորդայի խան։

350 Պուշկինի ընկերը— Ա. Ա. Կորնիլով (1801—1856), Վյատկայի նահանգապետ, աջակցել է Գերցենի Վլադիմիր փոխադրվելուն։

Տոկվիլի գիրքը— նկատի է առնված Ֆրանսիացի պատմաբան Ա.-Շ. Տոկվիլի (1805—1859) «Դեմոկրատիան Ամերիկայում» երկը, որը լիբերալ բուրժուաների սեղանի գիրքն էր։

355 Լ. Ա. Պերովսկի— ներքին գործոց մինիստր՝ 1841—1852 թթ.։

357 «Տարանտաս»— Վ. Ա. Սոլոգուբի վիպակը, որի առաջին գլուխները տպագրվեցին 1840-ին։ Վիպակում նկարագրված է երկու կալվածատերերի ճանապարհորդությունը Ռուսաստանում։ Պատմելով Վլադիմիրում կատարած կանգառի մասին, հեղինակը մանրամասնորեն նկարագրել է կայարանում ճանապարհորդների պատվիրած ճաշը։

359 «Արզամասյան սագեր».— Այստեղ՝ «Արզամաս» գրական ընկերության նախկին անդամների ծաղրական անվանումը։ Բլուդովի «Տեսիլք ինչ-որ խանդակում՝ հրատարակված գիտնական այրերի կողմից» պամֆլետում, որն ուղղված էր «Ռուսաց լեզուն սիրողների» գրական ընկերության դեմ, պատկերված էր մի «տեսիլք»՝ նվիրված Արզամաս քաղաքի պանդոկում սագ ուտող ճանապարհորդին։ Բլուդովի «Տեսիլքի» առիթով «Արզամաս» անվանված գրական ընկերության հավաքներում սովորաբար ուտում էին սագ, մի հանգամանք, որին տրվել էր ծաղրական արարողության նշանակություն։



## Մասն երրորդ

Գրված է հիմնականում 1855 թվականին, նախնական տեսքով հրատարակվել է 1857-ին, «Պոլյարնայա զվեզդա» ալմանախում։

365 Բնաբանը վերցված է «Եղելություն և խոհերի» 1854 թ. հրատարակության երկրորդ մասի վերջից՝ մի փոքր փոփոխված։

372 Ա. Կաունից (1711—1794)— ավստրիական դիվանագետ։

377 Մեջբերում բանաստեղծ և թարգմանիչ Ի. Ի. Կոզլովի (1799—1840) «Վանականը» պոեմից։

388 Ա. Գ. Ստրոգանով— Մոսկվայի ուսումնական շրջանի հոգաբարձու՝ 1835-ից։ Ցարական Ռուսաստանի խոշորագույն կալվածատերերից, գյուղացիական ռեֆորմի նախապատրաստման շրջանում ռեակցիոն թևի աջքի ընկնող դեմքերից մեկն էր։

Յա. Ի. Ռոստովցև— Նիկոլայ I-ի գեներալ-համհարզը, առաջ էր քաշվել դեկաբրիստներին մատնելու շնորհիվ։

389 Ջահեղ մի աղջիկ— Լ. Վ. Դասեկը, Գերցենը նրան է նվիրել Վորոբյովյան լեռների մասին իր ակնարկը։

391 Մեջբերում Ա. Ս. Պուշկինի «Եվգենի Օնեգինի» VII գլխից։

407 ... Բ դիմանկարը.— Խոսքը Ա. Ի. Գերցենի դիմանկարի մասին

է, որ նկարել էր Ա. Լ. Վիտբերգը 1836 թ. սեպտեմբերի վերջին-նոյեմբերի սկզբին։ Դիմանկարը պատվիրել էր Գերցենը՝ Ն. Ա. Զախարինայի ծննդյան օրվա առթիվ, այն Զախարինային էր հանձնել Գերցենի հայրը 1836 թ. հոկտեմբերի 22-ին։

409 ... Ֆիլարետների գործով.— Խոսքը Վիլնյուսի համալսարանի լեհ ուսանողների գաղտնի ընկերության անդամների մասին է, որոնք ձերբակալվեցին 1822—1823 թթ., շատերը բանտ նետվեցին, աքսորվեցին, տարվեցին զինվորության։

413 Վիպակը չստացվեց.— Խոսքը «Ելենա» անավարտ վիպակի մասին է, որը Գերցենը գրում էր 1836—1838 թթ.։

422 Բաստիլիա— ամրոց Փարիզում, վերածվել էր քաղաքական բանտի. 1789 թ. հուլիսի 14-ին ապստամբած ժողովուրդը գրավեց այդ ամրոցը։

423 Ֆ.-Լ. Ֆիզո— Ֆրանսիական պետական գործիչ և լիբերալ-բուրժուական պատմաբան. Լուի-Ֆիլիպի օրոք լինելով կառավարության գլխավորը՝ արտահայտվում էր եվրոպական գործերին շմիջամտելու օգտին։

Թող իր համար...— մեջբերում Մ. Յու. Լերմոնտովի «Կտակ» (1840) բանաստեղծությունից։

425 Ժ.-Պ. Մարատ (1243—1793)— XVIII դ. վերջի ֆրանսիական հեղափոխության ականավոր գործիչ, սպանվեց ժիրոնդիստների կողմից ուղարկված ծպտյալ Շարլոտա Կորդեի ձեռքով։

Պատֆայնդեր— Ֆ. Կուպերի «Հետախույզը» վեպի հերոսը, որն աչքի էր ընկնում անկախ ու շիտակ բնավորությամբ։

431 Ընկերներից մեկը— Ն. Ի. Աստրակով, մաթեմատիկայի ուսուցիչ։ Նրա կինը՝ Տատյանա Ալեքսեևնան գրող էր։ Հետագայում Աստրակովները կապ էին պահպանում Գերցեն-վտարանդու հետ։

433 Ե. Գ. Լևաշովա— դեկաբրիստ Ի. Դ. Յակուշկինի զարմուհին, մահացել է 1839-ին։

... Նրան էր նվիրել...— Պ. Յա. Չաադաևն իր «Փիլիսոփայական նամակը» նվիրել էր ոչ թե Լևաշովային, այլ՝ Ս. Դ. Պանովային։

455 Ա. Վան Դեյկ (1599—1641)— ֆլամանդական նկարիչ։

456 Բուոնարոտի Միքելանջելո (1475—1564)— իտալական մեծ նկարիչ, քանդակագործ, պոետ, ճարտարապետ։

Թվիդա— լուսնի և պտղավորության աստվածուհի՝ հին Եգիպտոսում։

Ռեյա— Հին Հունաստանի աստվածուհի, Զևսի մայրը։

Աֆրոդիտե— սիրո և գեղեցկության աստվածուհի՝ հին հունական առասպելներում։

Նինոն Լենկլո— ֆրանսիական գեղեցկուհի. նրա սալոնում հավաքվում էին XVII դարի ականավոր գործիչներ։

459 Եգոր Իվանովիչ— Գերցենի ավագ եղբայրը՝ հոր կողմից։

Էմիլիա Միխայլովնա— Ակսերգ, Ն. Ա. Զախարինայի տնային դաստիարակչուհին։

Գենդպեար— Ի. Ս. Սեմյոնով, Կրուտիցիի զորանոցում տեղավորված ժանդարմական գիվիզիոնի հրամանատար, տաղանդավոր դերասանուհի Ե. Ս. Սեմյոնովայի եղբայրը։

463 Ի. Ա. Օբոլենսկին Գերցենի հետ սովորել է Մոսկվայի համալսարանում, «մալովյան պատմության» մասնակից. դատի է տրվել նույն գործով, ինչով բռնվել էր Գերցենը, և ուղարկվել է աքսոր։



## Ռուսիայի եղբայրներիս

«Ռուսիայի եղբայրներիս»-ը «Եղելություն և խոհերի» հետ առնչվող մեզ հայտնի ամենավաղ տեքստն է, գրվել է իբրև հուշագրությունների նախաբան։ Հետագայում Գերցենը հրաժարվեց իր մտադրությունից, և այս տեքստը նրա կենդանության օրոք չտպագրվեց։

465 ... եթե մահը՝ չկտրեր ճանապարհս.— Նկատի ունի իր կնոջ՝ Ն. Ա. Գերցենի մահը։

466 Մենք բաժանվեցինք... 1847 թվականի հունվարի 21-ին.— Գերցենն ընտանիքով արտասահման մեկնեց 1847-ի հունվարի 19-ին։

467 ոչ ճշգրիտ մեջբերում Դանտեի «Աստվածային կատակերգությունից» («Դժոխք», երգ XX)։

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ


[Նախաբան] . . . . . 5

### ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

Մանկասենյակ և համալսարան (1812—1834)

Գլուխ I. Իմ դայակը և La grande armée։ Մոսկվայի հրդեհը։ Հայրս՝ Նապոլեոնի մոտ։ Գեներալ Իլովայսկին։ Ուղևորություն ֆրանսիական գերիների հետ։ Հայրենասիրություն։ Կ. Կալոն։ Կալվածքի ընդհանուր կառավարումը։ Բաժանություն։ Սենատորը . . . . . 11

Գլուխ II. Դայակների խոսակցությունը և գեներալների զրույցը։ Կեղծ վիճակ։ Ռուս էնցիկլոպեդիստները։ Ջանձրույթ։ Սպասուհիների կացարանը և նախասենյակը։ Երկու գերմանացիներ։ Ուսումնառություն և ընթերցանություն։ Կատեխիզիս և Ավետարան . . . . . 32

Գլուխ III. Ալեքսանդր I-ի մահը և դեկտեմբերի 14-ը։ Բարոյական զարթոնք։ Տեսորիստ Բուշոն։ Կորչեցի զարմուհիս . 61

Գլուխ IV. Նիկը և Վորոբյովյան լեռները . . . . . 87

Գլուխ V. Տնային կյանքի մանրամասները։ XVIII դարի մարդիկ Ռուսաստանում։ Մեր տան մի օրը։ Հյուրեր և habitués։ Զոնենբերգը։ Սենեկապանը և այլք . . . . . 98

Գլուխ VI. Կրեմլի էքսպեդիցիան։ Մոսկվայի համալսարանը։ Քիմիկոսը։ Մենք։ Մալովյան պատմությունը։ Խոլերան։ Ֆիլարետը։ Սունգուրովի գործը։ Վ. Պասեկը։ Գեներալ Լեսովսկին . 122

Գլուխ VII. Դասընթացի ավարտը։ Շիլլերյան շրջան։ Վաղ պատանեկություն և արտիստական կյանք։ Սեն-սիմոնիզմը և Ն. Պոլևոյը . . . . . 177

Հավելում. Ա. Պոլեժաև . . . . . 196

### ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ

Բանտ և աքսոր (1834—1838)

Գլուխ VIII. Մարգարեություն։ Օգարյովի ձերբակալությունը։ Հրդեհ։ Մոսկովյան լիբերալը։ Մ. Ֆ. Օրլովը։ Գերեզմանոց . . 201

Գլուխ IX. Ձերբակալություն։ Բարեխիղճը։ Պրեչիստենի ոստիկանատան գրասենյակը։ Նահապետական դատը . . . . . 211

Գլուխ X. Դիտանոցի տակ։ Լիսաբոնյան ոստիկանը։ Հրկիզողները . . . . . 217

Գլուխ XI. Կրուտիցիի զորանոցները։ Ժանդարմական պատմությունները։ Սպաները . . . . . 223

Գլուխ XII. Հետաքննություն։ Գոլիցին sen-ը։ Գոլիցին jun.-ը։ Գեներալ Ստաալը։ Խրատաբանություն։ Սոկոլովսկին . . 238

Գլուխ XIII. Աքսորը։ Քաղաքագլուխը։ Վոլգան։ Պերմը . . 256

Գլուխ XIV. Վյատկա։ Նորին գերազանցության գրասենյակն ու ճաշասենյակը։ Կ. Յա. Տյուֆյաևը . . . . . 271

Գլուխ XV. Ջինովնիկներ։ Սիբիրի գեներալ-նահանգապետները։ Գիշատիչ ոստիկանապետը։ Ջեռնասուն դատավորը։ Տապակած խոպրավնիկը։ Առաքյալակերպ թաթարը։ Իգական սեռի տղան։ Կարտոֆիլային տեսորը և այլն . . . . . 296

Գլուխ XVI. Ալեքսանդր Լավրենտիևիչ Վիտբերգը . . . 327

Գլուխ XVII. Թագաժառանգը Վյատկայում։ Տյուֆյաևի անկումը։ Վլադիմիր փոխագրվելու Իսպրավնիկը հետաքննության ժամանակ . . . . . 344

Գլուխ XVIII. Վլադիմիրյան կյանքի սկիզբը . . . . 355

### ՄԱՍՆ ԵՐՐՈՐԴ

Կյոզմայի Վլադիմիրը (1838—1939)

Գլուխ XIX. Իշխանուհին և իշխանադուստրը . . . . 365

Գլուխ XX. Որբը . . . . . 374

Գլուխ XXI. Բաժանում . . . . . 392

Գլուխ XXII. Մոսկվայում՝ առանց ինձ . . . . . 414

Գլուխ XXIII. 1838 թվականի մարտի երեքը և մայիսի ինը . 426

Գլուխ XXIV. 1839 թվականի հունիսի 13-ը . . . . . 447

Հավելվածներ . . . . . 465

Ծանոթագրություններ . . . . . 471

ԳԵՐՑԵՆ ԱԼԵՔՍԱՆԴՐ ԻՎԱՆՈՎԻՉ
Եղելություն և խոհեր

ГЕРЦЕН АЛЕКСАНДР ИВАНОВИЧ
БЫЛОЕ И ДУМЫ
(На армянском языке)
Издательство «Советакан грох»
Ереван—1981

Խմբագիր՝ Գ. Պ. Սարգսյան
Նկարիչ՝ Ռ. Ս. Ջավիակյան
Գեղ. խմբագիր՝ Վ. Ա. Հարությունյան
Տեխ. խմբագիր՝ Ա. Յ. Կովկասյան
Վերատեսող սրբագրիչ՝ Օ. Ղ. Թեզյան

ИБ № 3116
Հանձնված է շարվածքի 27. 01. 81։
Ստորագրված է տպագրության 10. 04. 81։
Չափսը 84×108 1/32։ Թուղթ տպագրական № 1։ Տառատեսակ՝ «Գրքի սովորական»։ Տպագրություն՝ բարձր։ 23,2 հրատ. մամ., 26,04 պայմ. տպ. մամ.։ Տպաքանակ՝ 50000։ Պատվեր՝ 3468։ Գինը՝ 2 ռ. 20 կ.։
«Սովետական գրող» հրատարակչություն, Երևան-9, Տերյան 91։
Издательство «Советакан грох», Ереван-9, ул. Теряна, 91.
ՀՍՍՀ Մինիստրների խորհրդի հրատարակչությունների, պոլիգրաֆիայի և գրքի առևտրի գործերի պետական կոմիտեի № 1 տպարան, Երևան, Ալավերդյան 65։
Типография № 1 Госкомитета по делам издательств, полиграфии и книжной торговли Арм. ССР. Ереван, ул. Алавердяна, 65.